
ԱՐՎԱՆ ՇԱՀԻՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

II

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՅՈՓ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՎԵՊԵՐ

Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2008

ՀՏԴ 891.981-31 Շանթ
ԳՄԴ 84 Հ-44
Շ 301

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա
**Ա. Եղիազարյան, Վ. Կիրակոսյան, Ս. Մարգարյան,
Ա. Մանուկյան, Ս. Սարինյան**

Հատորի խմբագիր՝ **Ս. Սարինյան**
Բնագրերը պատրաստեց և ծանոթագրեց **Մ.Սարինյանը**

Շանթ Լևոն
Շ 301 **Երկերի ժողովածու: II հատոր:** /Վեպեր/ – Եր.: «Գիտություն» հրատ., 2008. 400 էջ:

ԳՄԴ 84Հ-44

ISBN 978-5-8080-0716-1
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008

ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

ՎԵՊ

ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

ՎԵՊ

Ա

Սեպտեմբերի վերջը տաք իրիկուն մը, հազար ուժը հարյուր իննսունին:

Ահագին իրարանցում Պոլսի մեծ կամուրջին վրա: Կապոցներով, պայուսակներով բեռնավորված ընտանիքի հայրեր, խանութպան պատանիներ ու Բերայի վաճառանոցներուն մեջ ուշացած կիներ կչտապեն իրենց վերջին չոգենավին: Առատ հոսանք մը կամուրջի երկու ծայրերեն, որոնք դեմ դեմի կուգան ու անդադար իրարու կհյուսվին: Կամուրջին վրա ձիերու դոփյուն, կառքերու դղրդոց: Կամուրջի երկու կողմեն ժամանող ու մեկնող չոգենավերուն սուլյն ու չունչը: Կամուրջին տակ «ճանճերուն» ճիչը և մակուկավարներուն հայհոյանքը:

Այս բոլոր աղմուկին անուադրեր երիտասարդ մը Ոսկեջյուրի կողմի վանդակներու քովեն դեպի Ղալաթիա կդիմեր արագ քայլերով:

Մաքուր ու կոկիկ հագված, միջահասակ, քսանհինգի չուրջ տղա մըն էր ան, նուրբ ու ազնիվ դիմագծերով, բարակ ընչանյք մը, փոքրիկ մորուք ու սև խոշոր աչքեր, որոնք այդ վայրկյանին հառած էին Ոսկեջյուրի կոհակներուն:

Արևի մայր մտնող ճառագայթները վերջին անգամ մը կզգվեին հեռուհետե նեղցող ջրին այդ չերտը ու ոսկեթել շղարշ մը կնետեին վրան:

– Ճիշտ որ ոսկի-եղջյուր,– եզրակացուց երիտասարդը:

Բայց հազիվ իր եզրակացութիւնը հանած՝ ուսին ամուր հարված մը կերավ հովանոցի, և ետևեն ալ հազիվ լսելի մարած ձայն մը.

– Ես քու խե՛րդ անիծեմ:

Երիտասարդը բնազդորեն սեղմեց ձեռքի գավազանին կոթը ու խոժոռած ետին դարձավ, սակայն իսկույն ժպիտ մը բացվեցավ դեմքին, ու բացականչեց զվարթ.

– Բարև՛, Վասա՛կ, աս ուրկե՞:

Իսկ խեղճ Վասակը, որ կարճահասակ, մորվեղ ու թուխ երիտասարդ մըն էր, ձախ ձեռքով իր հինկեկ հովանոցին հենած, աջով կուրծքը կսեղմեր չնչառութիւնը կանոնավորելու համար:

Երբ քիչ մը ուժը ամփոփեց, լայնեզր գլխարկին տակեն սև ու խոշոր ակնոցներուն մեջեն սուր նայվածք մը նետելով դիմացինին, կրկնեց.

– Ես քու խերդ անիծեմ, հինգ վայրկյան է ետևեդ կվազեմ, սիրտս, թոքերս բոլոր իրար անցան: Ինչ կչտապես այդպես, ետևեդ մա՞րդ է ինկեր:

– Հապա՛, դո՛ւն:

Վասակի դեմքեն ժպիտի նման բան մը անցավ, խորունկ չունչ մը քաշեց, պինդ բռնեց ընկերոջը թևեն, ու սկսան միասին քալել:

– Գիտե՞ս, Բագրա՛տ, Թիֆլիսեն նոր նամակ առի:

– Ես դեռ կսպասեմ: Է՛, ինչ նորություն:

– Նորություն ոչինչ, բայց աղտոտություն, հիմարություն, ստորնություն ու անամոթություն լեցուն:

– Այդքան աղվոր բաները միասի՞ն,– հարցուց Բագրատ կատարյալ լրջությամբ:

– Քեզի համար հարցուցեր էին, թե ինչ բանի ես,– չարունակեց Վասակ:

– Եվ ինչ պատասխանեցիր:

– Ինչ պիտի պատասխանեմ, գրեցի, որ Կովկասեն գալեդ ի վեր կա՛մ Պոլսի ղպրոցները կպտտիս, կա՛մ վերին իդեալական գավառները, գրեցի, որ արդեն եկած ատենդ խենթ էիր, հիմա Պոլսի օդն ալ որ ծծեցիր՝ դարձար կատարյալ քամի:

– Այդ որքա՜ն ազնիվ ես գտնվեր, շատ չնորհակալ եմ:

Եվ կամուրջին գլուխը խռնված բազմությունը ճեղքելով՝ սկսան Ղալաթիայի սանդղավոր զառիվերը բարձրանալ:

Վասակ իր ծոցի ու գրպանների թղթերը խառնելեն ու որոնելեն ետքը վերջապես գտավ նամակը, բացավ ու կարդաց: Եվ Կովկասի ու նամակին չուրջը խոսակցելով՝ երկու բարեկամները բավական վեր ելած էին արդեն, երբ Վասակ նամակը նորեն գրպաններեն մեկուն մեջ տեղավորելով.

– Իսկ դուն դեռ նույն հյուրանո՞ցն ես,– հարցուց:

– Ո՛չ, այս երկու օր է՝ ֆրանսացի ընտանիքի մը մեջ սենյակ մը վարձեցինք Գևորգի հետ:

– Ո՞ր Գևորգը:

– Հայրենակիցս:

– Հա՛, սա կարնեցին: Ինչ տեսակ տեղ է, գո՞հ ես:

– Շնորհքով Փրանսուհի մըն է տանտիկինը, պալատական տիկիններու հագուստեղենը կկարուի հոն, երկու աղջիկ ունի, հատ մըն ալ հոգեզավակի պես Հույնուհի մը: Սենյակը հոս մոտերն է, եկո՛ւր անգամ մը տե՛ս: Արդին Գևորգն ալ եկած կըլլա հիմա:

Մտան կողմնակի փողոց մը և մեկ-երկու պտույտներե վերջ՝ սկսան վեր ելլել ափարթմանի մը մաքուր ու լայն քարե սանդուղներեն:

Վերջապես Բագրատ երրորդ հարկի աջ դռան պանդը քաշեց:

Ներսեն աղջիկներու աղմուկ մը լսվեցավ:

Գեղեցիկ, վայելչակազմ ու դեղձան մազերով հասուն աղջիկ մը դուռը բացավ: Ուրիշ տաս-տասնմեկ տարեկան աղջնակ մը դիմավորելով նորեկները՝ Բագրատի հետ սկսավ Փրանսերեն չաղակրատել: Սենյակի դռան մոտ երրորդ աղջիկ մը դուրս եկավ՝ արդուկված քանի մը հերմակեղեն թևին վրա:

Վերջինս Բագրատի բարևը առավ, հետաքրքիր աչքերով դիտեց պահ մը Վասակը ու քրքջալով խոհանոց փախավ: Իսկ Վասակ ակնթարթ մը կանգ առավ տղոց սենյակի սեմին վրա, ներս ակնարկ մը նետեց ու ժպտուն դարձավ Բագրատին:

– Փառավոր սենյակ մը, վրան ալ երեք հատ փառավոր աղջիկ. վա՛յ ես ձեր...

Մտավ սենյակ և, չիտակ դիմելով Գևորգի կողմը, որ կանաչ քանափեին վրա երկնցած՝ լրագիր մը կդարձներ, ավելցուց.

– Նայե՛, ինչպե՛ս փռվեր է. ծո՛, քու Կարինդ այդ տեսակ բան չա՞տ էիր տեսած:

– Նախ բարև՛ տուր, մա՛րդ աստծու,– ընդհատեց Գևորգ հանգիստ լրջութեյամբ:

Թուխ դեմքով, խաժ աչքերով, սուր-մորուք, ջղուտ, նիհար դեմքով տղա մըն էր. մեկ նայվածքով կհասկնայիր, որ գավառացի էր:

Վասակ սենյակին ճիշտ մեջտեղը կեցած իր առանցքին վրա կդառնար՝ ոսկի դունդերով մահճակալները, հաշակավոր սեղանն ու պահարանները, պանապան ձևերով ու դիրքերով հայելիներն ու պատկերները պննելով:

Երբ քննութիւնը ավարտեց, դեռ գլխարկը գլխուն, հինկեկ Հովանոցը դեռ թևին տակ, ձեռքերը ետևը կապած, եկավ կեցավ երկու կարնեցիներուն դեմը և հեգնական չեչտով մը արտասանեց.

– Եվ կըսեք, թե ժողովուրդի մեջ պիտի երթաք ու ժողովուրդի համար պիտի աշխատի՞ք, հա՞:

– Եղբա՛յր, չտեսութիւնը մեկդի դի՛ր,– ըսավ Բապրատ դեմքը ծամածռելով՝ ժպիտի փոխարեն:– Գլխարկդ հանե՛, եկո՛ւր, նստե՛ քովս մարդավարի, ու ես քեզի հասկցնեմ, որ Հարմար, կոկիկ ու գեղապիտական պահանջներուն բավականութիւն տվող շրջապատի մը մեջ սպրիլը ո՛չ միայն իմ իդեալներուս չի հակառակիլ, այլ կամբողջացնե:

– Հասկցո՛ւր, նայինք,– ըսավ Վասակ բազկաթոռին մեջ նետվելով:– Ինչ ալ փափուկ է չունչանորդին: Հիմա այս փափուկ աթոռներուն մեջ պիտի նստիս իդեալներդ ամբողջացնելու համար, այնպես չէ՞, և գործը բոլորովին իդեալեցնելու կամ իդիլլիացնելու համար աղջիկներեն մեկը մեկ քովդ պիտի նստեցնես, երկրորդը՝ մյուս քովդ և երրորդն ալ... Հա՛, հա՛, հա՛, հա՛...

Ու կխնդար ամբողջ մարմնով:

– Կատակդ թեև տգեղ, բայց բոլորովին սխալ չէ: Սիրելի՛ս, կնոջ ազդեցութիւնը մարդուս հոգեկան զարգացման վրա ահագին է: Կոճղի մը պես սեղյակի մը անկյունը մեծնալը ուրիշ է, կանանց շրջանին մեջ, փափուկ ու հոգածու ձեռքի մը խնամքներուն տակ ապրիլը ուրիշ է. զգացումներու նրբացում և ազնվացում ըսել է: Մինակ մտածող գլուխ մը ունեցող մարդը ինծի համար մարդու իդեալը չէ: Մարդ տրամաբանական մեքենա մը չէ. զգացում պետք է մեզի: Նայե՛ չորսդիդ, ինչ կոչտութիւն է, ինչ եսականութիւն և ինչ անճաշակութիւն: Պետք է կռվիլ ատոնց դեմ ալ: Մի՛ մոռնար, որ սերը դեռ ամոթի կարգն է մեր հասարակութեան մեջ – սերը, որ կյանքի բարձրագույն Հպարտութիւնն է:

– Տղա՛, գլխուս քարոզ մի՛ կարդար: Ես բնավ չեմ զարմանար, որ ինկեր եք այս բույնը: Իրա՛վ է, այս ճոխ ու փափուկ բաներեն շատ համ չեմ առներ, բայց ուրիշ հարց են աղջիկները: Երիտասարդ արյան բոց ատենը, իրավունք ունիք, ձեզի մեղադրողը ո՞վ է: Միայն մարսել չեմ կրնար, երբ գործը զգացական, ճաշակակրթական ու չգիտեմ ալ ինչական

ցնդի-փնդի նրբութիւններով վերարկվել կուզես, երբ պարզ իրողութիւնը կեղծել կուզես:

– Հերի՛ք է,– ընդհատեց Բագրատ ձեռքի հպարտ շարժումով մը:– Ես քու առջևդ կեղծելու բնավ կարիք չունիմ, ես միշտ կըսեմ՝ ինչ որ կմտածեմ:

Վաստակ Թերահավատ շարժումով մը դարձավ Գևորգին.

– Է՞յ, դո՞ւն ալ զգացումներ նրբացնելու համար եկար, թե՞ քսակդ. երևի հոգաբարձուները ամսականդ ավելցուցեր են:

– Քեզի՞ ինչ. ես չիտակը չափազանց ուրախ եմ:

– Անտարակույս. փափուկ աթոռ, երեք աղջիկ:

– Հերիք միևնույն բանը կրկնես, երե՛ք աղջիկ, մեկը դեռ տասնմեկ տարու չկա, մյուսը այնքան հպարտ, որ մարդ աչքերուն նայելու կվախնա:

– Եվ վախնալու ալ իրավունք ունի. այդ տեսակներեն վախնալու է:

– Այնպես որ,– շարունակեց Գևորգ,– միայն հույնուհին է քիչ մը բաց, խոսող, խնդացող, բանի մը նման:

– Տեսա՞ր, Բագրա՛տ, ինչ կուզես ըսե՝ Գևորգը արդեն իրենը ընտրեր է:

– Քու ըսա՞ծդ ինչ է հիմա,– վրա նետվեցավ Գևորգ տաքցած:– Այո՛, եկեր ենք ուտենք, խմենք ու աղջիկներուն հետ քեֆ ընենք: Ըսե՛ տեսնեմ՝ մեր ի՞նչը կպակսի:

– Պակսի՞, ո՞վ ըսավ տակիկա, ընդհակառակը՝ կավելնա, ան ալ սիրուն, փափուկ, նուրբ ու քնքուշ էակներ... Բագրատի ճաշակը նրբացնելու համար:

Երկուքը սկսան կոկորդալիր խնդալ: Բագրատ ինքզինքը զսպել ուզեց՝ չհաջողեցավ, ու ինքն ալ խնդալ սկսավ:

Բ

Դեռ ծիծաղը բոլորովին չէր մարած, որ դուրսը զանգը զարնվեցավ, ու պահ մը վերջը դեռ տան դռան մեջեն լսվեցավ հնչուն առնական ձայն մը, որ բարձր քրքիջի մը ընդհատվող հեղեղին մեջեն բարևեց դուռը

բացողը ու սկսավ ֆրանսերեն խոսակցիլ, մեկ կողմեն ալ մեջեմեջ իր բոլոր ուժովը.

– Գևո՛,– կպոռար:

– Սարգիսն է,– ըսավ Գևորգ ու գնաց դեմը:

– Ինչ, ա՞ն ալ ձեզի հետ է,– հարցուց Վասակ տարակուսանքով:

– Ո՛չ, բայց գիշեր մը մեզի պիտի անցընե. առտուները այս կողմերը գործ ունի:

Այդ միջոցին սենյակի դուռը կռնակի վրա ետ հրվեցավ, և սեմի շրջանակին մեջ երևցավ միջահասակ, գիրուկ, գեղեցիկ մարդ մը՝ կլոր ու կարճ մորուքով, ոսկի ակնոցները քիթը, թևին տակ փաթթոց մը թուղթ: Իր մեկ ոտքը թեև սենյակին ներս, բայց դեռ ետին դարձած կխոսեր աղջկան հետ ու կխնդար իր լեցուն ու ամուր խնդուքովը: Խնդալով ալ վերջապես այս կողմ դարձավ ու Վասակ նշմարելով՝ բացականչեց.

– Հա՛, աղեկ եք իրար գտեր. խուփը պզորավ, պտուկը գտավ: Գևո՛, ըսե՝ կուժ մը պաղ ջուր բերեն, փո՛ւ, ինչ տաք է այսօր:

Ծեսը հանեց գլխեն, նետեց սեղանի վրա ձեռքի թղթերուն հետ, ինկավ մոտի բազկաթոռին մեջ, գլուխը հենեց թիկունքին, աչքերը գոցեց ու անշարժ մնաց:

– Ատ ինչպե՛ս հոգներ ես, քա՞ր ես քաշեր, ինչ է,– հարցուց Բագրատ:

Սարգիս նորեն սկսավ խնդալ՝ ցնցելով ամբողջ մարմինը և մարմնին հետ ալ ամբողջ բազկաթոռը:

Հույնուհին լվացվելու թարմ ջուր բերավ:

Սարգիս ելավ ոտքի, հանեց ժաքեթը, բաճկոնը, չապիկին օձիքն ու թևերը ետ ծալլեց՝ միևնույն ժամանակ անդադար տրտնջալով տաքեն, ճամփի զառիվերեն, տղոց բնակարանի երկար սանդուղեն, գրաշարներու ապուշութենեն ու իր նոր կոշիկի նեղութենեն:

Գևորգ ջուր կլեցներ, Սարգիս կլվացվեր ահագին աղմուկով ու մեկ կողմեն ալ կպատմեր նորեն խմբագրին հետ ունեցած «խայտառակ» վեճը:

Հազիվ երկար սրբիչը երեսին էր նետեր, որ չորցվի, երբ հանկարծական շարժումով մը սրբիչը հեռացուց ու դարձավ Բագրատին.

– Տե՛ս, Ը՛, ինչպես ալ մոռցա: Աչքդ լույս, Բագրա՛տ, գործդ կար-

պին է, այսօր տեսնվեր եմ Հոգևարարձության նախագահին հետ, լարեր եմ ինչպես պետք է: Վերջացած հարց է, կիլոակի կերթաս, կներկայանաս Հոգաբարձության ժողովին...

– Ինչ ըսելով ներկայանամ ժողովին. ինծի ո՛չ հրավեր է եկած, ո՛չ բան:

– Տղա՛, դեռ խելքդ գլուխդ չեկավ, մոռցի՛ր այդ բաները, հոս այդ ապրանքը չի քշվիր, վերջապես կըսես, որ ե՛ս ղրկեցի քեզի:

– Ես այդ տեսակ պարապ խոսքեր չեմ հասկնար, եթե իրենց տեսուչ է պետք, թող երկու տող դրեն ինծի. ինչ, երթամ մուրա՞մ պիտի, «էֆենտի՛մ»:

– Վասա՛կ, դուն գոնե այս խելոքին խոսք հասկցո՛ւր, նայե՛ ինչ պաշտոնական բաներ:

– Ո՛չ, պաշտոնականութեան ինքս հակառակ եմ, բայց այդ մարդիկը սովոր են ուսուցչի հետ ծառայի պես վարվելու, պետք է հասկցնել իրենց չափը: Մինչև կարգին հրավեր մը չստանամ, ես անոնց ներկայացողը չեմ:

– Այն առեն Քրիստոսի մինչև երկրորդ գալուստը պաշտոնի սպասե: Դուն միտքդ դրեր ես գո՞րծ տեսնես, թե՞ գործ փչացնես: Տե՛ս, է՛, հիմարին, այնքան աշխատած ու կարգի բերած գործս ավրե պիտի: Ջես երթար՝ մեծ բան կընես, կարծես անոնց հոգն է. ձին չեղավ՝ էշը կկապեն ու կելլեն մեկդի, և իրենց էշը արղեն պատրաստ է, դիտցա՛ծ եղիր:

Բագրատ գլուխը կախ՝ թողվեցավ մտքերուն մեջ:

– Սիրելի՛ս, խենթութիւն պետք չէ,– չարունակեց Սարգիս հաշտարար ու փաղաքշող ձայնով մը ու իր սրբվիլը ավարտելով:– Գիտեմ՝ իրավունք ունիս, բայց առնելիք չունիս. գործ տեսնող մարդը այդ կարգի մանր բաներու առջև կանգ չառներ:

– Մահնր բաներ, այո՛, երկու ամիս չեղավ Պոլիս ոտք դնելս՝ քանի այդ տեսակ մանր բաներ ծալեցինք ու դրինք մեկդի: Ինչ, կտարակուսի՞ս, վերջը-վերջը անշուշտ ատ ալ ծալեմ պիտի:

Եվ ասիկա ըսված էր չատ դառն շեշտով մը և կարծես ինքն իր հետ խոսելով:

– Ինչ ընենք, պետք է հարմարվես տեղին ու ժամանակին:

– Ուրիշ խոսքով՝ թափես մեջեդ, ինչ որ բարձր է ու չիտակ, նետես մեկիկ-մեկիկ սկզբունքներդ: Ճկվիլ, խոնարհվիլ ու հավասարիլ, դառնալ նման ամենուն, ո՛չ խլուրդի մը չափ կամք, ո՛չ մուկի մը չափ սկզբունք:

– Մուկի մը չափ, իրավ ես, կատարյալ մուկի մը չափ,– կրկնեց Վասակ կեղծ հուսահատ ձայնով մը, բայց խնդուքը բռնել չկրցավ ու սկսավ փռնգտալ:

Եվ ամենուն ուշադրությունը դարձավ դեպի դուռը, ուրկե հույնուհին հանդիսավոր կերպով ներս կբերեր եռացող փառավոր սամավար մը:

Գևորգ սեղանին վրա տեղ բացավ, օգնեց աղջկան, որ սեղավորե, միևնույն ժամանակ սկսավ երգել.

Սամավարի կանթն է ոսկի,
չայ բերողը չի գար խոսքի.
իր մեկ պաչը հազար ոսկի:

Գևորգին միացան Վասակն ու Սարգիսն ալ, ու կազմվեցավ հիանալի երեք մը. ամեն մեկը իր կողմը կքաշեր, իսկ աղջիկը խնդալեն կը մարեր:

Բագրատ մոտեցեր էր լուսամուտին, ճակատը հեներ էր եղերքին ու աչքերը հառած դուրսի կես-մուխին՝ կմտածեր: Երբ երգը վերջացավ, Վասակ մոտեցավ Բագրատին, քաշեց թևեն ու կատակ մը ընել կուզեր, բայց տեսնելով անոր դեմքին տխուր ու ցրված արտահայտությունը՝ կատակը լուրջի վերածեց.

– Իդեալիստ ըսածդ միշտ ալ հիմար մըն է, իսկ դուն խորանարդ հիմար ես. հիմարություն մը՝ իդեալ ունենալը, հիմարության երկրորդ աստիճանը՝ այդ իդեալը կորսցնելեն վախնալը: Իսկ հիմարության երրորդ աստիճանը՝ երբ կողբաս կորուստ մը, ուր դեռ ոչինչ կորսված չկա: Երանի չէ՞ր, որ գլխուդ մեջի բոլոր ցնդաբանությունները մեկեն կորավեին, ու ազատվեիր դո՛ւն ալ, մե՛նք ալ:

– Վե՛րջ տուր, անհամ ես,– ըսավ Բագրատ կտրուկ ու հրամայական չեշտով մը ու մոտեցավ սեղանին, որուն չուրջը նստեր էին մյուսները, և որուն վրա սամավարը հաղթական կֆշար:

– Ուրեմն, Բագրա՛տ, վերջացած նկատեցի՛ք,– ըսավ Գևորգ ուրախությամբ:– Գիտե՞ս՝ հիանալի դպրոց մը պիտի ունենանք. ամեն բան մեր ձեռքը ու համեմատաբար շատ անկախ, նյութապես ալ ավելի կարող: Հոգաբարձուները լավ են տրամադրված, կարծես թե լուրջ գործ մը տեսնել կուզեն: Շենքն ալ նոր, հարմար, ծովուն դեմ: Այսքան առավելություններ ուրիշ տեղ ճարելը դժվար է:

– Այո՛, ես ալ կմտածեմ այդ բոլորը: Եվ կենդանի աշխատանք կա կատարելու. աշակերտներուն պետք է ոգի տալ, տրամադրությունը բարձրացնել, պետք է կազմակերպել ընթերցանությունը և ուսուցիչները պետք է ոգևորել, անոնց ուղին պետք է գծել ու դրդել ինքնաշխատության: Պետք է մշակվի գործնական ծրագիր մը և փորձնական դասեր: Այո՛, այո՛, ընելու շատ բան կա,– բացականչեց Բագրատ, որ հետզհետե սկսեր էր ոգևորվիլ:

– Քիչ մը առաջվան տակնուվրայությունդ ըսե՞մ, թե՞ հիմակվան ոգևորությունդ,– թեթև մը հեղնեց Սարգիս:

– Նախ ուսուցիչներեն պետք է սկսիլ. գործին արմատը հոն է: Այս գիշեր նստիմ՝ ուսուցչական մեկ-երկու հիմնական դասախոսություններու հատակագիծ մը պատրաստեմ,– շարունակեց Բագրատ՝ կարծես նորեն ինքն իրեն հետ խոսելով:

– Տղա՛, քիթդ քիչ մը ամոնիա՛կ քաշե, որ խելքդ գլուխդ գա,– ընդհատեց Վասակ:– Խե՛ղճ Գևորգ, ես միայն քեզի կմեղքնամ: Երեք չէ, տասը աղջիկ ալ որ ըլլա տան մը մեջ, նորեն ապրիլ կարելի չէ այս տեսակ խելագարի մը հետ:

Բագրատ կարծես չլսեց անգամ. կերթևեկեր սենյակին երկայնքովը՝ իր մտածումներուն մեջ թաղված, մինչ մյուսները սեղանին շուրջ թեյով և ուտելիքներով էին զբաղված:

Գ.

Քանի մը շաբաթներ անցեր էին այդ իրիկվընե, և Ղալաթիայի Հայտնի ափարթմանի երրորդ հարկի սենյակին մեջ կյանքը կատարյալ զեղման մեջ էր: Կյանքը մը, որուն եռումը ամենեն առաջ և ամենեն ավելի Գևորգի համար էր զգալի:

Գևորգ Կարնի ազգային վարժարանը հազիվ էր ավարտած, որ ինկավ իր ժամանակի շարժումներուն մեջ իր տարեկիցներու շրջանակին հետ և վերջին խռովություններուատեն բանտարկվեցավ իբրև «ժողովրդական անդորրությունը վրդովող»: Իր հարուստ ազգականները թեև կերպ մը տղան բանտեն հանելու հաջողեցան, բայց համենայն դեպս լավ համարեցին, որ ժամանակ մը աչքե հեռու մնա: Եվ հազիվ քսան տարեկան՝ Գևորգ եկավ Պոլիս: Նախ կմտածեր դպրոց մը մտնե իր ուսումը շարունակելու, բայց իր հասուն տարիքը ու անբավարար պատրաստությունը արգելք եղան: Ուստի մտածեց նորեն դպրոց մտնե, միայն այս անգամ ո՛չ թե սորվելու, այլ սորվեցնելու համար: Վճռեց ուսուցիչ դառնալ և մասնավորաբար Սարգիսի ազդեցության տակ:

Սարգիս, որ գրեթե նույն ու նման պայմաններու մեջ Վանեն Պոլիս էր եկած և ուսուցչության սկսած, քանի մը տարվան մեջ հաջողած էր իր ինքնազարգացումը աչքի իյնող չափերով բարձրացնելու: Միևնույն ժամանակ սկսած էր գրականությամբ զբաղվել դյուրավորապես գավառի կամ գավառցիներու կյանքը պատկերելով, այնպես ուրթը-ինը տարվան ընթացքին Պոլսի օրագրության մեջ որոշ դիրք մը գրաված էր և անուն մըն էր: Վերջին երկու տարին բոլորովին ձեռք քաշելով ուսուցչությենեն՝ ամբողջապես նվիրվեր էր հրապարակախոսության: Սարգիս Պոլսի մեջ շատ բան էր դիտեր, տաչվեր էր ու փոխվեր, բայց իր սիրտը միշտ կապված էր ջերմորեն իր հայրենիքին, որ կարոտով ու շարունակ կհիշեր: Եվ կարծես կերպ մը իր պանդխտությունը մոռնալու համար ինքզինքը կչրջապատեր գավառացիներով. իր մեկ ոտքը Պոլսի խաներուն մեջն էր, ուր դրամ շահելու սին հույսերով Պոլիս եկող գավառացիները կապրեին:

Եվ հոն էր, որ հանդիպեցավ Գևորգին և առաջին տեսությենեն իր խնամքին տակը առավ, իսկ Սարգիսի խնամքը Գևորգի համար շատ թանկագին էր, որովհետև գրեթե բոլոր ազգային չոլերուն հետ հարաբերության մեջ էր, բոլոր գրագետներն ու քիչ թե շատ ազդեցություն ունեցող մարդիկը կճանչնար, ոչ միայն կճանչնար, այլև տեսակ մը հմայք էր ձեռք բերեր անոնց հանդեպ իր անկախ, չիտակ ու հանդուգն բնավորությամբ:

Գևորգ նախ չէր համարձակած Պոլսի պես քաղաքի մը մեջ ուսուցչական պաշտոն հանձն առնել, բայց իր ղեկավարի համոզումներուն

ենթարկված՝ վերջապես վախվխելով դպրոց մը մտավ իբրև մնայուն ուսուցիչ «վարի» կարգերուն: Սակայն որքան եղավ զարմանքը, երբ շատ չուտով նկատեց, որ ամբողջ դպրոցին մեջ գրավեր էր բացառիկ դիրք մը: Ո՛չ միայն փոքրիկներեն, այլև բարձրագույն կարգերու աշակերտներեն սկսավ սիրվիլ. պարզ էր, ոգևորված ու անկեղծորեն անձնվեր: Մեծ տղաքը զբոսանքներուատեն չարունակ իր շուրջն էին, որոնց հետ տղու մը պես կխաղար, որոնց կպատմեր գավառի կյանքեն ու չարժումներեն: Մյուս կողմեն ալ իսկույն ըմբռնեց, որ իր պաշտոնին համար ո՛չ միայն անկարող մը չէր, այլև Պոլսի մեջ եղած բոլոր իր նմաններեն բարձր էր. դոնե բարեխիղճ կերպով նախօրոք բոլոր դասերը կպատրաստեր, իր բոլոր ըրածին ու ընելիքին վրա չարունակ կմտածեր, կհետաքրքրվեր, կհարցներ և ամեն կերպ կաշխատեր տղոց օգուտ տալու: Ինքը ճարպիկ տղա՝ սկսավ դպրոցները հոս ու հոն այցելել, դիտել մյուսները և հետզհետե ինքզինքը սրբագրել: Սորվեցավ քանի մը մանկական խաղեր, երգեր: Կովկասեն մեկ-երկու մանկավարժական դրքեր բերել տվավ, իրեն համար դասավանդման եղանակ մը հարմարցուց, և այս ամենուն հետևանքը այն եղավ, որ տարին չլրացած՝ թաղին մեջ հայտնի էր իբրև լավ դաստիարակ-ուսուցիչ, որ «նոր մեթոդներով» մանուկները կկրթե: Եվ դպրոցին մեջ արդեն ձայն ուներ, տնտեսեն բռնած մինչև հոգաբարձուները կհարգեին անոր խոսքը և խաթրեն չէին ելլեր: Աշակերտներուն սիրելին էր:

Դպրոցին դուրս միայն մեկ-երկու ուսուցչին հետ մոտիկ ծանոթություն ուներ. կպտեր անոնց հետ չրջակայքը կամ սրճարանը նարտ կխաղար, որուն մեջ անպարտելի էր ճանչցված: Իսկ քիչ մը ավելի ազատ ժամանակ գտածին պես չունչը խաները կառներ, հայրենակիցներուն ու համալներուն քովը, որոնց հետ կխոսեր, կվիճեր, կկարդար, կերգեր ու չափազանց կաղդեր, և խանի անունը դրեր էր «Համալսարան»:

Գիշերները կպառկեր դպրոցը՝ վերի հարկը մասնավոր սենյակի մը մեջ՝ կատարելապես չոր պանդուխտի կյանք մը վարելով: Այսպես անցավ երկու-երեք տարի: Թեև այդ միջոցին զանազան պատճառներով երկու անգամ դպրոց փոխեց, բայց իր վարած կյանքը այդ պատճառով բնավ չփոխվեցավ:

Օգոստոսի սկիզբները Թարմ ու տվայտ առտու մըն էր, դպրոցական

տարվան վերջին օրերեն մեկը, երբ դպրոցին տնօրենը Գևորգի դասարանը մտցուց վայելուչ արտաքինով երիտասարդ մը, որուն արտասանած առաջին խոսքերեն կմտնվեր Կովկասեն ըլլալը: Երիտասարդը ներկա եղավ Գևորգի դասին, վերջը դուրսը համակրական քանի մը խոսքեր ըսավ, իր ուրախությունը հայտնեց անոր սրտալի ու մտածված աշխատանքին համար, այլև մեկ-երկու մանկավարժական նկատողություն ըրավ կատարյալ պարզմտությամբ:

Գևորգի վրա մեծ տպավորություն ըրավ երիտասարդի այդ պարզ ու անկեղծ վարմունքն ու հասկացողությունը, և անոր համեստությենեն ավելի գրավված՝ սկսավ ավելի մոտեն հարցեր տալ, ուրկե դուրս եկավ, որ պարոնը իր բարձրագույն ուսումը Ռուսաստան էր ավարտած, եկած էր Պոլիս ժամանակ մը հոն ուսուցչություն ընելու, կրթական կյանքին ու գործերին նախապես կեդրոնին մեջ ծանոթանալու, ուրկե անցնելու էր իր ծննդավայրը՝ Կարին: Կարի՞ն... Գևորգը ոտքը գետնեն կտրեցավ: Հաջորդեցին նոր հարցեր արդեն բոլորովին նոր չեշտով, և այդ վայրկյաններն Գևորգն ու Բագրատ իրարմե անբաժան էին:

Բագրատ Գևորգի համար ղարձավ հեղինակություն մը գիտական ու մանկավարժական ամեն խնդիրներու մեջ: Գևորգ Բագրատին համար թարմ ու առողջ ուժ մըն էր, մչակման ու գործադրության մեծ կարելիություններով օժտված, իսկ երկուքը իրարու համար՝ բախտակից հայրենակիցներ և նպատակակից ընկերներ:

Բագրատ առաջին իսկ օրերեն սկսավ դրդել, որ Գևորգ թողնե իր մինակուվ անկյունը և դպրոցին փոշիները և չնորհքով տեղ մը ընտանիքի մը մեջ ապրի: Իսկ երբ վերջնականապես իր Պոլիս մնալը որոշվեցավ, ինքը սկսավ աշխատիլ, որ միասին դպրոցի մը մեջ ըլլան: Եվ Սարգիսի թանկագին օժանդակությամբ գտան այդ դպրոցը: Եվ երբ փոխադարձ համաձայնությունը արդեն գրեթե կայացած էր Հոգաբարձության ու Սարգիսի միջև, Բագրատ եկավ վարձեց Ղալաթիայի ծանոթ սենյակը և Գևորգն ալ քովը քաշեց:

Եվ այդ օրեն անոնց սենյակը դարձավ կեդրոնատեղին խումբ մը գավառացի մտավորականներու, մեծ մասով ուսուցիչներ: Շաբաթը մեկ կամ երկու գիշեր կհավաքվեին հոն, որ սովորաբար «դուրսեցիներուն սենյակ» կանվանեին՝ հարմարվելով պոլսեցիներու արտահայտության

եղանակին. կես մը պարզորեն, կես մը հեգնութեամբ պոլսեցին «դուրսեցի» կըսեր դավառացիին:

Լուրջ ու կատակ, ծիծաղ ու արցունք իրար կխառնվեին այդ հավաքոյթներուն: Մեյ մըն ալ տեսար կբռնկեր վեճը. դպրոց, դրականութիւն, լրագիր, ընկերական-հանրային հարցեր ու ցավեր, ո՛չ մեկը դուրսը չէր մնար: Վեճերուն ավելի կրակ կուտար քոնյակով թեյը: Իսկ թեյի դոլորշիներուն հետ կբարձրանային երգեր, վշտի, հայրենի կարոտի ու հալածանքի տխուր ու դառն երգեր, ճզմված ժողովրդի մը ճմռթած կյանքին մելամաղձիկ բողոքը: Եվ տղաքը ալ հանգիստ նստիլ չէին կրնար, սենյակին մեջ ո՛չ մեկ իր իրեն տեղը չէր մնար, ու սենյակը նեղ կուգար: Կեսպիչերվան մտաերը միայն կենդանի աղմուկը ափարթմանի տանդուղներեն կիջներ վողոց: Սենյակը կլռեր, կբանար դուռ ու պատուհան բոլոր հովերուն, մինչև որ ճրագը մարեր:

Դ.

Այս բոլորը տարօրինակ տպավորութիւն մը կըներ սկիզբները Ֆրանսացի ընտանիքին վրա, բայց չուտով վարժվեցան այդ «տաքարյուն» հայերուն, ինչպես կըսեին, և սկսան ավելի մտերիմ հարաբերութիւններ:

Բագրատ իր լուրջ պարզութեամբ, Գևորգ իր միամիտ պարզութեամբ սիրելի դարձան: Տանտիկինը իր զավակներուն պես կվարվեր անոնց հետ և ամեն կերպ պահացնելու կաշխատեր: Իսկ աղջիկները տղոց հետ կարծես մեկ ընտանիք ըլլային: Գիշեր-ցերեկ բաց էր տղոց սենյակը, և գլխոց, դարան, ամեն բան աղջիկներուն իմամքին տակ, գլխավորապես Էլենիի:

Տանտիկնոջ մեծ աղջիկը՝ Լուիզ, ավելի ինքնամփոփ էր ու լուրջ. արդեն ժամանակին մեծագույն մասը նվիրած էր իր դաշնակին, որ գրեթե միշտ կհնչեր անոր սենյակեն և կհյուսվեր տղոց աշխատանքին ու խոսակցութեան: Բանը անց, երկար ու առատ շաքանակապույն մազերով, մուխ աչքերով, մաքուր-ճերմակ դեմք մը: Մնոտին արտասովոր գեղեցիկ կորութիւնը և չրթունքներուն փոքր ու բարակ գիծը մանավոր հմայքով մը կգգվեին նայողին հայացքը:

Ինքը բացառապես ֆրանսերեն կխոսեր ու շատ կիրթ ֆրանսերեն մը, մինչդեռ մյուսները հաճախ տաճկերեն ալ կխառնեին, մանավանդ սկիզբները, երբ Գևորգ դեռ բնավ չէր հասկնար: Եվ տղոց հետ թեև առօրյա պարզ չփման մեջ, սակայն միշտ որոշ հեռավորություն պահել գիտեր:

Բազրատ իբրև ավելի հասուն ու աշխարհ տեսած՝ բնականորեն ավելի մոտ էր աղջկան և հաճախ անոր օգնությամբ կդիմեր իր ֆրանսերեն ընթերցանության խրթին կետերուն: Մեջեմեջ իրիկունները միասին կկարդային ու այդ առթիվ կխոսեին, այնպե՛ս, «լեզվի վարժության համար», ինչպես Սարգիս կըսեր կատակելով:

Էլենին՝ հույնուհին, որը աղջիկ մըն էր, որ մանկութենեն ինկած էր սիկնոջ ձեռքը և անոր քով մեծցած էր անոր երկու հարազատ զավակներուն հետ ու հավասար: Տասնյոթը-տասնուվեցը տարեկան, սև աչքերով, սև մազերով, կենսուրախ բնավորությամբ աղջիկ մը:

Առտվնե մինչև իրիկուն ոտքի վրա էր, խոսուն, ծիծաղկոտ, աղմկասեր արարած մը: Լեցուն, հորդած կյանք մը, որ կարծես իր սմանին մեջ չէր տղմեր: Աչքերուն մեջ միշտ կրակոտ արտահայտություն, հասո շրթունքները միշտ կիսաբաց:

Շարունակ գործի վրա էր. ամբողջ տան տնտեսությունը ինքը կդարձներ: Տիկինը հաճախ դուրսն էր, Լուիզ շատ քիչ կմասնակցեր տան գործերուն, մեկ-երկու տեղ դաշնակի դասեր կուտար: Եվ այդ պատճառով ալ Էլենին մասնավոր հեղինակություն մը ուներ կարծես տան մեջ և կտրուկ վարք ու խոսվածք մը:

Տղոց այդ տունը մոտած օրեն շարունակ անոնց շուրջը կդառնար. կմտներ, կելլեր և անդադար կչաղակրատեր, իր չարժումներն ալ, իր խոսվածքին պես, առատ ու անփույթ:

Էլենին ու Գևորգ շատ չուտով բարեկամացան իրարու, առաջին իսկ օրեն: Խեղճ տղան իր տնտեսի ընկերակցությենեն հանկարծ նետված էր այդ աղջիկներուն չրջանը՝ Էլենիի պես աղջկան մը ձեռքը: Էլենիի համար ալ գրավիչ էր Գևորգի խոչոր, խաժ աչքերը և անոր պարզունակ վերաբերումը:

Շաբաթը չէր լրացած, որ երկուքը իրարու «դուն» կըսեին արդեն: Իրիկունները միասին սամավարը կպատրաստեին և հաճախ խոհանոցը

երկար խոսքի կբռնվեին: Ալ ամեն իրիկուն սովորութիւն եղավ օրվան բոլոր դէպքերու մասին իրարու պատմելը, կատակելն ու խնդալը: Կամաց-կամաց իրարու խոսք նետել սկսան, իրար հեգնել. իսկ հոգվե քայլ մըն էր միայն ձեռքի կատակին անցնելու համար: Իրարու ձեռքե բան կխլեին, կզարնեին իրարու, կվազեին իրար ետևե ահագին աղմուկով, մանաւորապես ուրկնոջ տունը չեղած ժամերուն: Այս քաջագործութիւններուն կմասնակցեր հաճախ և փոքրիկ Օկյուստան՝ ուրկնոջ փոքր աղջիկը, և կարելի է երևակայել, թե ինչ իրարանցում կբարձրանար. դուռները թափով կբացվեին, կգոցվեին:

Եվ երբ երբեմն Գևորգ աղջիկներեն փախչելով կմտներ իրենց սենյակը և խնդալով սենյակին դուռը կկողպեր, Բագրատ կպոռար անոր երեսին՝ գրիչ պահ մը ձեռքին վար դնելով.

– Վա՜հ, չե՞ս ամչնար, ահագին մարդ այդ երեխաներուն հետ:

– Ո՞վ է երեխան, Էլենի՞ն,– կհարցներ տղան տարօրինակ սիրուն ժպիտով մը:

Այս բոլորը պատճառ մը չէր սակայն, որ Էլենին բավականանար միայն Գևորգի բարեկամութեամբ: Իր խոսքովը, իր շարժումներովը և իր հմայքով ան չատ էր առատ ու բազմակողմանի աւտով գոհանալ կարողանալու համար:

Ան կդառնար նաև Սարգիսի չուրջը՝ Սարգիսը տան պտնեն ներս մտնելուն պես: Եվ հաճախ կլսկնած էր Գևորգին, որ չատ կսիրեր Սարգիսի շենչող բնավորութիւնը, անոր բաց ու չիտակ խոսելու եղանակը և անոր տաք ու արտանց խնդուքը: Եվ Սարգիսի երեսին ալ չիփ-չիտակ կհայտներ իր զգացումը:

Էլենին միայն Բագրատի համար չատ բան չէր խոսեր և կարծես անկե կքաշվեր, թեև անոր հասցեին ալ մեջնմեջ կատակ մը կամ խոսք մը կնետեր Գևորգին: Բագրատ տունը չարունակ զբաղված էր. կա՛մ կգրեր, կա՛մ կկարդար, և աղջկան հետ ալ միշտ ընտանի ու բնական վարմունք ու խոսվածք ուներ թեև, բայց Էլենին կպիտակցեր, որ ան ուրիշ տեսակի էր:

Եվ ամեն անգամ, երբ Բագրատի հոն եղած միջոցին անոնց սենյակը կմտներ, իր նայվածքը ակամա տղուն կողմը կերթար, հո՛ն, լուսամփոփի լույսին մեջ ճերմակ թուլթին վրայեն վազող գրչին, կամ լուսա-

մուսին քովը աթոռի մը ինկած՝ լրագիր մը կամ գիրք մը ձեռքը: Երբ ուրիշներուն հետ կխոսեր ու կկատակեր, աչքերը հաճախ կփնտրեին Բագրատին աչքերը:

Եվ Բագրատ աղոտ կերպով կզգար նայվածքներու այդ հետապնդումը և իր մտքի մեկ խուլ անկյունեն կգիտակցեր, որ սարդի ոստայն մը նետված էր իր ու աղջկան հոգիին միջև: Անշուշտ լուրջ բան մը չէր, և կարևորություն ալ տալ չէր ուզեր եղածին, իբրև խաղ մը, իբրև քմայք մը աղջկան կողմեն, բայց և այնպես դժգոհ չէր. ախորժելի էր այն զգացումը, որ բարակ ու ծածուկ կապ մը կար իրենց մեջ, մանավանդ որ բոլոր գացող-եկող ընկերները թուլություն մը ունեին այդ աղջկան համար:

Բայց և այնպես իր չիտակ ու պարկեշտ բնավորությունը չէր ներեր որևէ կերպով քաջալերանք մը տալ աղջկան. ինքզինքը միշտ պարզ կպահեր, առանց պաղության և անոր տևական հետապնդումը չտեսնելու կզարներ:

Ե

Շաբաթները կանցնեին իրարու ետևե զարմանալի արագությամբ:

Հով ու ցուրտ օրեր էին, և երիտասարդները, ջուլհակի մաքոքին պես, առտու-իրիկուն վերարկուներուն օձիքները բարձրացուցած՝ տուն-նեն դպրոց կչտապեին և դպրոցեն՝ տուն:

Եվ տունն ալ, դպրոցն ալ վառարանը կճարճատեր:

Երիտասարդներուն գործերը իրենց կատարյալ ընթացքին մեջն էին:

Եվ «իրենց» դպրոցը՝ Բագրատի ոգևորության և գործունեության այդ հնոցը, օր օրի կառաջանար: Ուսուցիչներեն մեկ-երկու Հատը բոլորովին կապվեր էին Բագրատին ու նվիրվեր էին գործին: Մյուսներն ալ կամա-ակամա կաշխատեին լարված տեսչի օրինակին, աչքին ու խորհուրդներուն տակ: Աչակերտներուն դեմքեն փախեր էր սովորական եղող դպրոցական թմրություն: Հետաքրքրություն ու կենդանություն կզգար ու կտեսներ այդ աղմկոտ չենքեն ներս մտնողը. խաղ կամ աշխատանք:

Բագրատ զբաղված էր հիմա դպրոցական մատենադարանի

ինդրով թե՛ աշակերտական և թե՛ ուսուցչական կրկին բաժինով, արդեն քանի մը անհրաժեշտ գիրքեր ու թերթեր կատացվեին, բայց այդքանը հերիք չէր:

Ուսուցչական մարմնի ճիգերն ու աշխատանքը չէր վրիպեր հոգաբարձուներու աչքին, և ընդհանրապես գոհ էին: Թաղականներն էին միայն, որոնք շատ հաշտ աչքով չէին նայեր այդ նորելուկ հոգաբարձուներու նորելուկ վարժապետներուն: Մանավանդ շատ դժգոհ էին Բագրատի գրեթե բոլի բերել տված քանի մը ֆիզիկական ու քիմիական գործիքներեն, մոդելներեն ու նկարներեն, որոնք «եկեղեցիին անտուկը ծանրաբեռներ էին», ինչպես թաղականները կըսեին:

Բագրատ պահանջած էր նաև դպրոցին մեջ չենքի քանի մը լրացումներ ու փոփոխութիւններ տղոց առողջապահական տեսակետեն, բայց անկարելի էր եղած:

Իսկ դպրոցեն դուրս Բագրատ ինկած էր մանկական-պատանեկան ամսագրի մը հրատարակութեան գաղափարին ետևեն: Կուզեր հոգեբանական-մանկավարժական արժեքով, գեղեցիկ արտաքինով, պատկերներով ու բազմատեսակ խաղերով լուրջ գործ մը:

Բոլոր մանրամասնութիւնները ծրագրած էր: Իր մտքին մեջ բաժնած էր ամբողջ աշխատանքը իր ու իր ընկերներուն վրա, աչքի առաջ ուներ աշխատակցութիւնը քանի մը ծանոթներու և ուսուցիչներու, և արդեն սկսած էր նշել գրքերուն, թերթերուն և ամսագրերուն մեջեն օգտվելու, թարգմանելու, հետևելու կամ նմանվելու հետաքրքիր ու արժեքավոր նյութերը:

Հաշվեր էր և բոլոր ծախքերը, և որովհետև կուզեր լուրջ ու աղվոր գործ մը և կուզեր անպատճառ հեղինակներն ու աշխատակիցները վարձատրել, պետք կար անմիջական կորիկ գումարի մը, ինչքան ալ որ այդ վարձատրութիւնը համեստ կհաշվեր:

Սարգիսի հետ խոսած էր անգամ մը: Սարգիս նայեր էր երկար իր ոսկի ակնոցներուն մեջեն և պատասխանած էր պատգամախոսի մը պես կտրուկ ու անառարկելի.

– Եթե հեղինակները վարձատրելն ձեռք վերցնես, եթե բոլոր խմբագրական աշխատանքները քու վրադ առնես, եթե քու ամբողջ տեսչական ուշիկդ այդ գործին վրա դնես և եթե ամեն ամիս շատ պարզուկ

ու սակավապատկեր թերթով մը գոհանաս, քու մտածածդ կարելի է, և աղվոր բան է:

Բագրատ ոչինչ չպատասխանեց ընկերոջը այս պատգամին, բայց որոշեց մեծ անակնկալ մը պատճառել անոր:

Կիրակի առտու մը մասնավոր նամակներով դպրոցը «կարևոր խորհրդակցութեան» մը հրավիրեց քանի մը անհատ ու հասկցող մարդիկ, որոնց մասին առաջվնե հարցուփորձ էր ըրեր և եկեր էր այն եզրակացութեան, որ իր ուզած ձեռնարկով կրնան հետաքրքրվիլ: Հրավիրվածներուն մեջն էր նաև դպրոցին հոգաբարձութիւնը:

Եկեր էին բոլոր հրավիրվածներն ալ. բան մը, որ առաջին վայրկյանեն վստահութիւն ներշնչեց Բագրատին:

Բագրատ երկար-բարակ բացատրեց իր նպատակը, մանկական թերթին կարևորութիւնը, իր ըմբռնած բաժինները, գործի կազմակերպութեան ձևն ու բոլոր ծախքերը և առաջարկեց, որ միանան, կազմեն ընկերութեան նման բան մը և մեջտեղ բերեն այդ չատ կարևոր մանկավարժական գործը գլուխ հանելու համար անհրաժեշտ հզոր դրամագլուխը: Ուրկե եաքը խոսքը տվավ ներկաներուն:

Առաջին ու ճնշող լռութենե մը եաքը ներկաներեն մեկը պարզապես հայտներ էր, որ ինքը այդ տեսակի գործերեն ոչինչ չհասկնար և իր չհասկցած գործերուն մեջ մտնել չի կրնար:

Ուրիշ մը գովեր էր Բագրատի մշակած ծրագիրը և գաղափարը չատ հետաքրքիր էր գտած և ցանկացեր էր հաջողութիւն, թեև ինքը անձամբ իր մասնակցութիւնը բերել չէր կրնար:

Երրորդը ըսած էր, որ հրատարակչական և պարբերական գործը պետք է կարողանա ինքնզինքը ապրեցնել և իր բաժանորդագրութիւնեմբ իր ծախքերը գոցել, թե չէ առողջ գործ չըլլար:

Մյուսներն ալ զանազան բառերով ու երանգներով, բայց ըստ էութեան այս երեք պատճառաբանութիւններու զանազան տարբերակներն էին ներկայացուցեր: Եվ վերջապես բոլորն ալ, դրվատելով պարոն տեսչի եռանդն ու հմտութիւնը, հաջողութիւն էին մաղթեր ձեռնարկին ու մեկներ էին ամեն մեկը իր սովորական սրճարանը:

Մնացեր էին երկու հոգի՝ Թորոսյանը, որ Բագրատի հոգաբարձուներեն էր և իր հոգիին մեջ խոր կզնահատեր տեսչի ձգտումները, և

ուրիշ շատ թարմ երիտասարդ մը, որ իր համամտութիւն ու պատրաստակամութիւնն էր հայտնած Բագրատին, սակայն ավելցուցած էր, որ դրամապես դժբախտաբար օգնել չի կրնար, Հորը ձեռքն է բոլոր գործը, և ինքը Հորը քով պաշտոնյայի պես է:

Իսկ Թորոսյանը խորհուրդ էր տվեր առայժմ հետաձգել այդ ծրագիրը, բայց խոստացեր էր, որ «ինքը այդ մասին դեռ կմտածե»:

2

Բագրատ շատ կոտրված ու հիասթափ տուն կվերադառնար ծանր հոգիով: Կքալեր տեսակ մը մեքենական քալվածքով, ձեռքերը գրպանը դրած և մտքին մեջեն կրկնելով բոլոր իր հրավիրյալներուն ըսածներն ու առարկութիւնները բառ առ բառ, կարծես զոց ընել կուզեր:

«Եվ Թորոսյանը խոսք տվավ, որ այդ մասին դեռ կմտածե», – ըսավ Բագրատ մտքին մեջեն խորին հեգնութիւնեմբ, երբ իրենց ափարթմանին լայն մուտքեն ներս կմտներ:

«Ահա՛ միակ արդյունքը իմ այնքան աշխատանքին և այսօրվան մեր խորհրդակցութեան»,– եզրակացուց քարն սանդուղներեն վեր ելլելով:

«Աղեկ, ուրեմն, պարոն Թորոսյանը դեռ թող մտածե», – ըսավ բարկութիւնեմբ և բոլոր ուժովը քաշեց իրենց բնակարանին զանգը:

Ներսը վազող ոտքի ձայներ լսվեցան, դուռը ուժով բացվեցավ, և Բագրատ երես-երեսի գտնվեցավ Էլենիին ու Լուիզին հետ, որոնք զարմանքով իրեն կնայեին:

– Վախցար նք,– ըսավ վերջապես Էլենին,– այնպես ամուր զարկիք:

– Իրա՞վ, ներո՛ղ եղեք, մտածումներու մեջ էի և մեքենաբար եմ քաշեր:

– Ոչինչ, ոչինչ, կարևորութիւն չունի,– մեղմացնել ուզեց Էլենին:

Լուիզ ոչինչ չըսավ, բայց տարօրինակ կարեկցոտ նայվածքով մը տղու դեմքին նայեցավ:

Բագրատ անցավ իր սենյակը և հապիվ էր վերարկուն հանած, որ սենյակին դուռը զարկին:

– Մտե՛ք:

Մտավ Լուիզ:

– Ձեր լրագիրներն են,– ըսավ՝ երկու տեղական թերթ և ֆրանսերեն չաբաթաթերթ մը սեղանին վրա դնելով:

– Շատ չնորհակալ եմ, օրիո՛րդ,– պատասխանեց տղան:

Աղջիկը դարձավ դեպի դուռը, վարանոտ քայլ մը առավ, կեցավ ու դարձավ երիտասարդին.

– Դուք կիրակի օրե՞րն ալ դպրոց կընեք:

– Ո՛չ, – պատասխանեց Բադրատ զարմանքով:

– Հապա պարոն Գևորգը ըսեր է, որ դասեր կուտաք կիրակի օրերը:

– Շիտակ է,– ժպտեցավ տղան,– բայց մեր դպրոցի աշակերտները չեն, այսինքն կիրակնօրյա դպրոց է:

– Կհասկնամ, մասնավոր դասեր:

– Հա՛, ատոր պես բան մը:

– Գիտե՞ք, պարո՛ն Բադրատ, անցած իրիկուն մայրս կըսեր Ձեզի համար, որ շատ լարված կաշխատիք և չուտով հարստանալ կուզեք:

– Հարստանա՞լ,– խնդաց տղան: – Դուք կկարծեք՝ այդ դասերը կուտամ դրամով:

– Հապա՞:

– Խեղճ մարդիկ են, քանի մը արհեստավոր երիտասարդներ, դպրոց չեն եղած: Քիչ մը հաշիվ կսորվեցնենք, քիչ մը կարդալ և քիչ մըն ալ գիտական տեղեկութիւններ: Անոնք ալ կցանկան ընդհանուր զարգացման կապվին:

– Եվ առա՞նց դրամի:

– Ի՞նչ դրամ, օրիո՛րդ, կիրակի օրերու ազատ դպրոց է, առտուն մեկ-երկու ժամ:

– Բայց գիտե՞ք, պարո՛ն Բադրատ, Դուք Ձեր ուժերը չարաչար կգործածեք:

– Ինչպե՞ս,– ըսավ տղան՝ իր շատ զարմացած աչքերը աղջկա աչքերուն գամելով:

– Քիչ մը առաջ, որ ներս մտաք, այնպես տառապած դեմք ունեիք և այնպես հոգնած: Ընդհանրապես Ձեր միտքը միշտ զբաղված է:

– Բայց կարծեմ Դուք ալ աշխատանքի անսովոր մեկը չեք:

– Իմ աշխատանքս ուրիշ է և անհամեմատ ավելի նվաստ, քան Ձերը, և ես կաշխատիմ հնչուն վճարած դրամով:

– Գիտե՞ք, օրիո՛րդ, հատկապես այսօր, իրա՛վ է, ես ալ կուզեի, որ դրամի տեր ըլլամ:

– Դրամի պե՞տք ունիք, ատ՞որ համար այդպես հուզված եք,– խնդաց աղջիկը և համեստ ժպիտի մը մեջեն ավելցուց,– չատ չէ, բայց քանի մը ոսկի ունիմ և կրնամ Ձեզի փոխ տալ, եթե պետք ունիք. մայրս իմ դրամներուս վրա իրավունք չունի:

Բագրատ իր մեջը տարօրինակ անախորժ զգացում մը ունեցավ, վիրավորանքի պես բան մը և իսկույն կատուի կերպով պատասխանեց հնար եղածին չափ մեղմ ու քաղաքավարի շեշտով մը, որ իր ունեցած պիշ զգացումը չմատնի.

– Անչափ շնորհակալ եմ, օրիո՛րդ Լուիզ, Ձեր այդ սիրալիր պատրաստակամութենեն, բայց ես դրամի պետք չունիմ: Ես սկզբունքով միայն այսօր հարուստ ըլլալ ուզեցի, որ ցույց տամ, թե հարստությունը ինչպես կգործադրեն:

– Այո՛, Ձեր ամեն բաները սկզբունքով են, գիտե՛մ,– իսկույն աղջիկը կես կատակով ու կես դառնությամբ:

Վերցուց սեղանին վրայեն դեռ առումնե հոն մնացած սուրճի ափսեն ու եկավ դուրս:

Բագրատ իր կեցած տեղեն անշարժ դիտեց աղջկան ծանր քայլերով հեռանալը և սենյակի դուռն գոցվելեն ետքն ալ դեռ բավական ատեն այդպես քարացած մնաց աչքերը դուռն հառած: Ետքը ինքն ալ դանդաղ քայլերով գնաց դեպի պատին վառարանը, նստեցավ դեմը բազկաթոռին մեջ, գլուխը հենեց թիկունքին և աչքերը գամած մոխիրներուն տակեն դուրս ցցված կրակի վերջին մնացորդներուն՝ սկսավ մտքին մեջ ակամա համեմատել առավոտ մեծապատիվները և այս օտար աղջիկը:

Այն մեծապատիվներն ալ, այս աղջիկն ալ վերջը-վերջը կհեգնեին իր սկզբունքները: Տղան ատիկա պարզ կատեսներ: Ալբեն ամենքը կհեգնեին իր սկզբունքները, գիտեր ու արդեն վարժվեր էր: Միայն թե մեծապատիվներուն խոսքերուն տակը ծաղր կար և դժվար ծածկվող չարակամություն մը, մինչդեռ այդ աղջկան խոսքերուն տակը կարեկից հեգ-

նուիրյուն մըն էր եղածը և զարմանալի զառնուիրյուն մը: Տղան չատ պարզ կզգար այդ զառնուիրյունը անոր խոսքերուն մեջեն:

«Աբուսաւոր աղջիկ է,– մտածեց,– և երևի ո՛չ բախտավոր: Իր հայրենիքեն հեռու, մեծցած օտար միջավայրի մեջ, զուրկ հոր մը ինամքեն ու հայրայրած հարմարուիրյուններեն, մայրն ալ չարունակ դուրսերը: Հավանորեն միևնակ է իր հոգին ու ցաված: Իր միակ մտերիմը՝ դաշնակը, և ատոր համար է անշուշտ, որ դիշեր-ցերեկ այդպես համառ ու տաք-տաք կնվագե՝ առանց արվեստագետ մը ըլլալու»:

Աղջիկը ինքն էր ըսեր Բագրատին կատարյալ սրտբացուիրյամբ, թե ինքը արվեստագետ մը չէր, այլ պարզ ու հասկցող նվագող մը և գուցե ճիշտ ատոր համար ալ հարմարուիրյուն ուներ ուրիշներուն սորվեցնելու: Սիրված ու գովված էր ընտանիքե ընտանիք իբրև հաջող վարժուհի դաշնակի:

Բագրատի մտածումները ընդհատեցին դուրսի աղմուկն ու սենյակի դռան թափով մը բացվիլը:

Գևորգ ու Սարգիս աղմուկով ալ ներս եկան: Սարգիս կեցավ չիտակ Բագրատին դեմը և խորհրդավոր կերպով, ակնոցներուն մեջեն Բագրատի դեմքը դիտելով՝ հարցուց.

– Է, ի՞նչ եղավ քու գաղտնի խորհրդակցուիրյանդ արդյունքը:

– Ուրկե՞ իմացար արդեն, անպիտա՜ն:

– Դե՛, մյուս անգամ քու ընկերոջդ դեմ դավեր չլարես, ինծմե ծածուկ գո՞րծ բռնել կուզես, հա՞:– Եվ հանկարծ խիստ լուրջ չեչտով մը չարունակեց,– տո՛, հիմա՛ր, ուրիշներու գրպանեն այդպես առանց այլևայլուիրյան կարելի՞ է դրամ դուրս քաշել, դրամ է ասիկա, հոգի չէ, որ հանեն ու տան: Դրամ քաշելու համար ալ արվեստ պետք է, չնորհք պետք է, ձևը պիտի պիտնալ. մանավանդ մեր պոլսեցի ունևորներեն, որոնք դեռ բոլորովին անվարժ են դրամի հանրային գործածուիրյան: Կովկասի մեջ քիչ մը տարբեր է կարծեմ:

– Իրավունքը քուկդ է, հաղթեցի՛ր,– ըսավ Բագրատ անձնատուր եղողի մը չեչտով ու բաղուկները բանալով:

– Լավ է, մի՛ վշտանար, կեցի՛ր նայինք, բան մը կընենք, դուն դեռ մի՛ հուսահատիր քու մանկական ամսագրեն:

– Հուսահատի՞մ, ե՞ս, ո՞վ ըսավ քեզի: Այդ թերթը ուշ կամ կանուխ

ես հրատարակեմ պիտի, ատիկա վեճին դուրս է, այս անգամ չհաջողեցա, կորսնցուցի տարի մը, ահա՛ իրողությունը:

– Ելի՛ր, ելի՛ր, քանի որ այդպես է, երթանք ճաշարան, արդեն ուշ է, թե չէ մեր ճաշն ալ կկորսնցնենք,– ըսավ Գևորգ Բագրատի թևեն կամաց մը քաշելով:– Ես չատ հոգնած եմ ու անոթի. այսօր չատ խոսեցա մեր մորուքավոր աշակերտներուն հետ:

– Ելի՛ր, երթանք, աղվոր գինի մը խմենք քու այդ կորսնցուցած տարվան մը կենացը,– խնդաց Սարգիս ամբողջ կրծքովը՝ վերարկուին կոճակները չատ ծանր շարժումով մը վերեն վար կոճկելով:

I

Մութ ու մառախուղ օր մըն էր:

Թեև հալիվ էր արևը մայր մտեր, բայց շուրջը կես գիշերվան պես խավար էր արդեն:

Բերայի կողմնակի նեղ ու տղմոտ քանի մը փողոցներ անցնելե վերջ՝ Բագրատ զարկավ բարձր տան մը թակիչը: Դուռը բացվելու կուշանար: Տղան անհամբերութենեն ոտքը վեռին կդռփեր ձիու պես: Վերջապես ճռվող թեվի մը ձայնը լսվեցավ, ու դուռը բացվեցավ: Կին մըն էր թեյը քաշողը սանդուղին վրայեն:

Բագրատ արագ բարևեց և սկսավ բարձրանալ ոտորուն սանդուղեն: Այս վերելքը բավական երկար տևեց, ընչաստպառ ու հոգնած կանգ առավ վերջապես պատի մը առջև, կամաց մը հրեց ու ներս մտավ:

Փոքրիկ սենյակ մը, անկողինը ճմռթած, աթոռները խառնակ ու ամենուն վրա հագուստի կտոր մը, թերթեր, ափսե մը, վառարանին մոտիկ սեղան մը՝ պղպեղու ու հին լամպիրներու կույտի մը տակ թաղված, և այդ ամենուն վրա ինկած երկտասարդ մը, որ կկարդար՝ լայն վերարկուին մեջ պինդ մը փաթթված:

Դռան թեթև ճռինչը կարդացողի ուշադրությունը գրավեց: Ետ դարձավ կամաց մը ու երկու թևերը պարզեց, կարծես նորեկը գրկել կուզեր, բայց իսկույն բացավ բերանն ալ, խորունկ մը հորանջեց, ամուր մը կոտրտվեցավ և հանկարծ մեկ ոստյունով ցատկեց ոտքի ու կեցավ այցելուին առջևը, որ դռան մոտ կեցած կժպտեր:

– Աս ո՞ւր ես, մեջտեղ չկաս,– հարցուց Բագրատ:

– Մեջտեղ ըլլամ թե չըլլամ՝ ինչ տարբերություն,– պատասխանեց Վասակ,– բայց աղեկ ըրիր, որ եկար, սիրտս սկսեր էր նեղանալ, այսօր տունեն դուրս եկած չունիմ, մինչև հիմա կկարդայի:

– Կարդացածդ ինչ է:

– Վերին աստիճանի հետաքրքիր: «Կենդանիներու հասարակական կյանքը». չունչանորդի՛, կենդանիներ կան, որ մեզմե շատ ավելի խելացի հիմքերու վրա են դրած իրենց ընկերական հարաբերությունները չենքը:

– Գնա՛ անոնց հասարակության մեջ մտիր:

– Հապա ինչ գիտցար, և՛ ես, և՛ դուն, և՛ ամենքս հոդ պիտի մտնենք օր մը:

– Չէ՛, ինծի ձգե՛, քեզի «բարի ճանապարհ»:

– Մեր մարդկային ընկերության արած ամեն մեկ քայլը սխալ է, սխալ, մեր վարչական ու պետական հարաբերությունները, մեր տնտեսական կազմակերպությունը, մեր ընտանեկան նիստուկացը, մեր...

– Հոգիդ սիրես, Վասա՛կ, քեզի եկա՝ քիչ մը բացվիմ, ըսի, գլխուս գայլի ավետարան մի՛ կարդար: Դպրոցը ինչ գլուխ կուտեցնենք, հերիք է:

– Տեղն է, քեզի ով ըսավ այդ տեսակի անմիտ գործերու մեջ մտնես: Դպրո՛ց, ինչ անխելք բան, բառ մը, որ բնության օրենքներուն դեմ կթքնե: Տղան բացը պիտի մեծնա բնության ու ընկերության մեջ, բոլորովին ազատ, իր անձնական փորձառությամբ, և պիտի մեծնա իր բնական հակումներուն ու չնորհքին ձգված, ո՛չ թե մեր նախագծած ծրագիրներուն և մեր ծթռած նախապաշարումներուն ենթարկվելով: Այս բոլորը գլուխդ կմտնե՞, պարո՛ն տեսուչ:

– Կեցցե՛ս: Այդչափ մանկավարժություն ալ կա եղեր գլխուդ մեջ: Ասիկա ինծի համար հաճելի անակնկալ մըն է,– նկատեց Բագրատ ժպտելով:

– Բագրա՛տ, եկուր ինծի՛ լսե, նետե՛ վրայեդ այդ բոլոր հնամաշ ցնցոտիները, և ես քեզի չնորհքով մարդ մկրտեմ:

– Մկրտե՛ նայինք,– ըսավ Բագրատ ներողամիտ:

Վասակ մոտեցավ ընկերոջը, խլեց գլխարկը ձեռքեն, նետեց ան-

կողնին մյուս ծայրը, դրեթե բոլի նստեցուց մեջտեղի աթոռին վրա և առանց անոր թևը բաց թողնելու չարունակեց.

– Դե, ըսե՛ ուրեմն ինծի հետ հրաժարիմքը: Ըսե՛. «Հրաժարիմ ի դալրոցէ և յամենայն հիմարութեանց նորա, հրաժարիմ յիտիալե և յամենայն գևգեկութեանց նորա, հրաժարիմ ի բանաստեղծական ցնդաբանութիւններէ, յօդուածներէ և ի ճառէ...»: Չըսե՞ս:

Բագրատ սկսավ ղայնորեն խնդալ:

– Մարդ դառնալիք չունիս,– եղրակացուց Վասակ:– Գլխուդ մեջ այնքան ավլուկ-թափուկ բաներ լեցուցեր են քու մպլուտած փլոփեսորներդ ու իրենց խունացած դրքերը, որ առողջ դաղափարներու այլևս տեղ չէ մնացեր:

– Իմ ազո՛ր Վասակ, իրա՛վ է, գլխուս մեջ քու առողջ դաղափարներուդ համար տեղ քիչ կա, բայց հավատա՛, որ ստամոքսիս մեջ ահագին տեղ կա քու ռուսական ընտիր թեյիդ ու խավիարիդ համար: Ես այդ հույսերով եմ քեզի եկեր, և դուն ալ չանք ըրե՛ այդ ուղղութեամբ:

Վասակ իսկույն ոգիի լամպը վառեց, թեյամանը դրավ վրան ջուր տաքցնելու: Եվ գնաց դեպի պատի մեջի պահարանը մյուս պատրաստութիւնները տեսնելու:

Վասակ ալ երկար ժամանակ չէ, որ Պոլիս էր: Տրապիզոնցի էր ինքը, շատ հայտնի ընտանիքի մը զավակը, տարածված ընտանիք մը, որուն մեծ եղբայրը, այսինքն՝ Վասակի հայրը, կմնար միշտ իր հայրենի քաղաքը և ընդարձակ ագարակ մը կդարձներ: Հաջորդ եղբայրը Պաթում կապրեր, երրորդ եղբայրը՝ Թիֆլիս, իսկ եղբոր որդին հաստատված էր Մըրիմ, իսկ Վասակի հորաքույրն ալ Հարս էր եկած Պոլիս: Պաշարեր էին ամբողջ Սև ծովը և բազմատեսակ գործառնութիւններ ունեին:

Վասակ տասը տարեկանեն սկսած փոխնիփոխը եղած էր այդ բոլոր աշխարհները, տարի մը հոս, երկու տարի հոն: Ուսման համար դրեր էին ամեն տեսակ դպրոցներ, որոնցմե և ոչ մեկուն մեջ մնացած չէր երկար: Տարիուկեսի չափ ալ եղած էր Թիֆլիսի Ներսեսյան վարժարանը: Վերջերը երկու կիսամյակի չափ ալ գացած էր Մոսկվա և հաճախած էր համալսարանի քանի մը դասախոսութիւններուն իբրև ազատ ունկնդիրի պես բան մը և հոգ էր, որ հանդիպած էր Բագրատին և ընկերացած:

Հայրը վերջապես կանչած էր տղան իր քովը իրեն օգնական:

Երկու տարիի չափ ալ հոր քովն էր ժամանակ անցուցած, և հայրը տեսնելով, որ ագարակի գործերուն հետ չէ տղուն խելքը, այլ շարունակ գրքերու հետ է, մտածեր էր նորեն Պոլիս ղրկել՝ հուսալով, որ այդ առևտրական և մտավոր ավելի բարձր կեդրոնին մեջ տղան ավելի չուտ իրեն հարմար գործ մը կճարե:

Ահա՛, վեց-յոթը ամիս էր արդեն, Վասակ կթափառեր Պոլսի բոլոր թաղերը, շրջակայքը, հեուռ ու մոտիկ, գիրք մը թևին տակ դրած կամ քովի գրպանը, մնացած ժամանակն ալ կքաշվեր իր փոքրիկ սենյակը, որ վարձեր էր հույն ընտանիքի մը մեջ, ու կկարդար, անվերջ կկարդար:

Հորաքույրը շատ ուզեց, որ իրենց տունը տանի, ամուսինն ալ ջանքեր ըրավ հալոզ գործի մը դնելու, բայց միշտ ալ առանց Հետևանքի: Վասակ «իր ազատությունը» ծախել չէր ուզեր և ո՛չ մեկ գնով: Հորը չեքերը ամսե ամիս կուգային Տրապիզոնեն, հետն ալ Հորը հորդորները և բացատրությունները, թե իր տարիքը արդեն լեցած է և նեցուկի պետք ունի: Բայց Վասակի նեցուկ մը դարձած ըլլալուն լուրը դեռ միշտ կուշանար Տրապիզոն հասնելու:

Երկու ընկերները նստած էին արդեն սեղանին երկու կողմը, լեցուն թեյի բաժակներուն առջևը. իսկ բաժակներուն շուրջը զանազան ձևի ու գույնի թղթերու մեջ զանազան ուտելիքներ, քանի մը աստիճանի չորությամբ հացի կտորներ և վերջապես Հատուկ թիթեղե տուփի մը մեջ Բագրատի ակնկալած խավիարը:

Ծամելիքները իրենց դերին մեջն էին և լրջությամբ. բավական երկար ժամանակ երկուքն ալ լուռ էին:

Վասակ Հանկարծ այդ լռությունը ընդհատեց.

– Շիտա՛կ ըսե, Բագրա՛տ, մինչև հիմա քանի՞ աղջիկ սիրած ես: Ո՞վ գիտե՝ գուցե սիրած ալ չես:

– Ի՞նչ հարցում է ատիկա: Քանի մը անգամ կարծեր եմ, թե կսիրեմ, սակայն երկար տևած չէ: Զգացումներու պատրանք մը: Խորունկ ու ամբողջական բունկումը դեռ ունեցած չեմ:

– Ատիկա չէ իմ հարցուցածս, քու հիվանդոտ զգայնություններուդ հետ ես գործ չունիմ, իմ հարցումս բնական ու առողջ ֆիզիկական սիրո մասին է: Շուտով քսանվեց թե քսանյոթը տարեկան պիտի ըլլաս և դեռ աղջիկ գուցե տեսած չես. հրեշություն է պարզապես:

Բագրատ թեթև մը կարմրեցավ ու չպատասխանեց:

– Ահա՛ այդպես եք դուք: Մարդիկ անոթի «հա՛ց, հա՛ց» կպոռան երեսնուդ, դուք բարոյական քարոզներով, կրոնական ու անտեսական հպատակութեան խրատներով ու պահանջներով կկերակրեք: Մարդիկ աման կողմ բնութենեն խթանված «սերե՛լ, սերե՛լ» կկրկնեն, դուք բնութեան ձայնը կծամածռեք, «սիրե՛լ, սիրե՛լ» կդարձնեք, զգացական նրբութիւններ կհնարեք, նախապաշարումներ կփաթթեք խեղճերուն վիզը և կրոնական արտառոց օրենքներ ալ կդնեք անոնց չալակը և առանց ամչնալու կերթաք ձեր պատմութիւններուն մեջ ապահարզանի մասին վիճելու:

– Փամփուշտ բառերը դի՛ր մեկդի: Ըսածեդ ի՞նչ դուրս եկավ: Ուրեմն քու կարծիքով սերը հանդիպած աղջկան պիրկը նեռվիլն է, առանց հակումի, առանց զգացումներու և մտերմական բնական զարգացման, առանց մտքի ու բնավորութեան փոխադարձ կապակցութեան: Ա՞ս է բնական սերը, հա՞, առո՞ղջը, մարդկային սեռի բարձրացման նպաստո՞ղը: Անասուններու համար՝ դո՛ւգեր, ան ալ դեռ կտարակուսիմ: Բայց երկարելու ախորժակ չունիմ, արդեն ժամանակ ալ չունիմ. բաժակ մը թեյ ալ լեցո՛ւր, տաք-տաք խմեմ ու ելլեմ:

Ընկերը թեյը լեցուց: Բագրատ խմեց, ելավ, հագավ ուսը նետած վերարկուն, և միասին սանդուղի պլուխը հլան:

Նույն միջոցին վերի հարկի սպասուհին արագ սահեցավ անոնց առջևեն ու վարեն դեպի վերի սանդուղը անցավ:

– Մարիանի՛,– կանչեց Վասակ:

Սպասուհին կեցավ ու ժպտեցավ:

Վասակ անոր մոտենալ կուզեր, որ աղջիկը կարծես միտքը հասկցավ ու վեր վազեց խնդալով: Վասակ ցատկեց եռևեն, բռնեց հագուստի փեշեն, պրկեց բռնութեամբ, պինդ մը համբուրեց երկու այտերեն ու վեր հրեց նորեն, մինչդեռ աղջիկը դեչ-դեչ կճվճվար:

Երբ տղան թևերեն ազատվեցավ, նախ բարկացած դեմք մը չինեց, նաքը մատը տղան վրա թափ տվավ ու վեր փախավ:

Բագրատ դեմքի տարօրինակ արտահայտութեամբ մը կեցած էր անշարժ:

– Ա՞ս է, հա՞, սերը:

Վասակ հաղթական ու նշանակալից շեշտով մը վրա բերավ.

– Աս է, հապա ի՞նչ գիտցար: Ասիկա սիրո Ծաղկազարդն է, Դռնբացեքը: Ճիշտ չաբաթն մը խթուն ալ կուգա, Զատիկը:

Եվ իր այլաբանութենեն կատարելապես գոհ՝ մտավ իր սենյակը՝ ըսելով.

– Է՛, կներե՛ս, հոս չատ ցուրտ է:

Ը

Բագրատ ճնշված սրտով, զգվանքը դեմքին դրոշմված, սկսավ իջնել ոլորուն սանդուղներեն: Շարունակ աչքերուն դեմն էր սպասուհին, որ անասունի պես կճվճվար Վասակի երկաթե ճմլումին տակ:

Երբ տան դռնեն դուրս ելավ, ու պաղ հովը զարկավ երեսին, սթափեցավ: Ձեռքի չարժում մը ըրավ, վանել ուզեց գլխեն այդ պատկերները ու ճամփա ելավ: Բայց մինչև տուն հասնիլը ուղեղը նույն նյութին չուրջը կդառնար:

«Ըլլա՞ թե իրա՛վ ես եմ սխալը, չըլլա՞ թե իրա՛վ որ ծուռ եմ կրթված, ինչպես որ այդ հիմարը կըսե, և ինչպես որ չուրջս չատերը կմտածեն: Գուցե իրավունք ունին. զգացումներ, նրբություններ գուցե իրավ որ մեր հնարած ավելորդ ու հավելված բաներ են: Գուցե իրավ որ անբնական բան է՝ մինչև հիմա ոչ մեկ աղջիկ սիրած չեմ, բայց որ սիրտս կպած չէ, ի՞նչ կրնամ ընել: Սակայն իրա՞վ է, որ սիրտս չէ կպած, թե արվեստական կերպով սիրտս հարկադրած եմ, որ չսիրե: Զանազան հասարակական ըմբռնումներ, վարք ու բարքի ազդեցություն, հասարակաց կարծիք, դիրք ու սովորություններ, ասոնք սանձեր են բոլոր, այլև ինքնահնար բարձր պահանջներ, օրինակ, ամբողջական-խորունկ սիրո մը որոնումը: Բայց ի՞նչ բան է այդ տևական, իսկական ըսված սերը. կա՞ այդ տեսակ աղջիկ մը, որ իմ բոլոր պահանջներուս, իմ բոլոր անրջանքներուս համապատասխանե, և եթե կա՝ մի՞թե ես արժանի եմ, որ ան ինծի կապվի, և միա՞յն ինծի, իմ ո՞ր առավելությանս համար»:

Գետրգ պառկած էր քանափեի երկարությամբ՝ ձեռքերը գլխուն տակը դրած, երբ Բագրատ իրենց սենյակեն ներս մտավ:

– Ուր էիր մինչև հիմա: Ճաշարանը երկար սպասեցինք քեզի ընթրիքի: Պարոն Մկրտիչն ալ հոն էր:

– Ի՞նչ Մկրտիչ:

– Հոգաբարձուին եղբայրը:

– Ա՞ն ինչ գործ ունի մեր ճաշարանը:

– Եկեր էր անապաշտոն կերպով մեզի հասկցնելու թաղական խորհուրդի «ընդհանուր» ցանկութիւնը, որ վերին կարգերուն մեջ կրոնադիտութիւն մտցնենք:

– Նորե՞ն այդ հին երգը: Չէ՞ որ այդ կարգերուն մեջ բարոյագիտութիւն ունինք և քաղաքացիական ուսմունք:

– Ըսի, սիրկա տարբեր բան է՝ կըսե, մենք եկեղեցական ժողովուրդ ենք՝ կըսե, մեր դպրոցն ալ եկեղեցիի մը կից է՝ կըսե, և վերջապես կրոնադիտութիւնը մեր ժողովուրդին պետք է՝ կըսե: Կրոնագիտութիւն է պետք, որ ժողովուրդը քիչ մը ավելի ջերմեռանդ դառնա, թե չէ այսպեսով մեր եկեղեցիին սնտուկը չատ խեղճ վիճակի կհասնի՝ կըսե:

Դևորգ լռեց և աչքերուն ծայրովը խորամանկութեամբ կդիտեր ընկերոջ դիմքը, թե իր խոսքերը ինչ տպավորութիւն պիտի ընեն վրան:

Բազրատ վերին աստիճանի հանդիստ՝ հանեց պչխարկը, վերարկուն ալ հանեց ու չատ մեղմ կերպով ըսավ.

– Զարմանալու բան չկա. այդ մարդոց աչ կողմը վաչխառու է, ձախը՝ սիրացու:

Եվ իր որակումը իրեն չատ հաչող թվեցավ ու զվարճալի: Սրտանց սկսավ խնդալ և ավելցուց.

– Ախ՛ղճ ժողովուրդ, աչքը բացած վայրկյանեն կրոնագիտութիւն են բացատրեր, և ինչո՞ւ համար, հոդ է փիլիսոփայութիւնը. որպեսզի եկեղեցիին սնտուկը խեղճ վերմակի մեջ չմնա: Եկեղեցիին սնտուկը, ահա՛ իսկական կրոնը: Ամենքը կրոնքի ու ջերմեռանդութեան մասին կխոսին, բայց կամաց մը անդին հրե բառերը, ու տակեն դուրս կուգա միշտ կա՛մ պնակ, կա՛մ դանձանակ, կա՛մ աջահամբույր, մեկ խոսքով՝ եկեղեցիին սնտուկը:

Վայրկյան մը կեցավ, մտածեց և հանկարծ դարձավ ընկերոջը.

– Դևո՛րգ, ի սեր աստծու, ուրիշ բան խոսինք, այսօր չափազանց հիմար տրամադրութեան մեջ եմ: Երեկ իրիկուն թատրոնն էիր. ինչպե՞ս

էր, ինչ կխաղային, հավնեցա՞ր, հա՛, օփերա էր կարծեմ, դեր ուներ նորեն անցած օրվան բասոն, անպիտանը ինչ հոգի բռնող թավ ձայն ունի: Տե՛ս, Ֆ՛, մոռցա, դեռ վաղվան պատրաստելու դաս ալ ունիմ: Ժամը քանիին է: Ես քեզի քանի անգամ ըսեր եմ, որ վառարանը այդքան փայտ չկոխես, բաղնիք ես չիներ:

Անցավ իր գրասեղանին գլուխը, քիչ մը կեցավ և սկսավ երգ մը մռմտալ, միշտ նույն անորոշ երգին մեկ կտորը, որ ան մեջեմեջ կմռմտար, և որ նշան էր տղու հուզված ըլլալուն: Գևորգ ժպտեցավ:

Բագրատ նախ գիրք մը վերցուց, քիչ մը թղթատեց ու տեղը դրավ, քաշեց թերթ մը թուղթ ու սկսավ գրել, այսինքն գրել ուզեց, բայց առաջին իսկ բառին դեմ առավ. ինչ գրեր, ինչէն էր իրավ, ինչը՝ սուտ ու ծուռ, գրելիք չուներ:

Գրիչը իրեն համար եռանկյունիներ, քառանկյունիներ և այլ երկրաչափական և ոչ երկրաչափական պատկերներ կգծեր մաքուր թղթին վրա:

Թ

Թեև դեռ հազիվ փետրվարի կեսին էին, սակայն արդեն սկսած էր գարունը տարօրինակես կանուխ:

Ասիկա այն կակուղ, տաքուկ, ցողոտ ու հեշտոտ գարուններու սկիզբներեն էր, որ հարավային ծովերը երբեմն կնվիրեն իրենց սիրած ցամաքներուն:

Դուբսեցիներուն սենյակը արտաքուստ ոչինչ փոխված չէր, եթե չհաշվենք վառարանը, որ այլևս չէր ճարճատեր: Բայց ասիկա դուրսն էր, ներսեն բաներ մը փոխված էին: Նախ աշխատությունը պակսած էր:

Գևորգ հիմա հաճախ ուշ տուն կուգար: Դպրոցեն ելլելուն պես կա՛մ խաներն էր, կա՛մ Բերայի փողոցները:

– Մինչև իրիկուն հոգինիս կելլե, իրիկուննները գոնե քիչ մը ազատ օդ ծծենք,– կկրկներ՝ «ազատ» բառը մասնավորապես ընդգծելով:

Եվ Բագրատ դժգոհ չէր: Տունը ուրեմն մինակ կմնար, որ իր աշխատության համար ավելի նպաստավոր էր: Այդ նպաստը հիմա անհրաժեշտ էր, որովհետև տղան սկսած էր նշմարել, որ իր կեդրոնացումը նվազած

էր աշխատութեան միջոցին, ամեն խոսքե ու աղմուկե կխանգարվեր, և ընդհանրապես կզգար, որ ցրիվ ու անորոշ վիճակ մը կար իր հոգիին մեջ:

Տղու այդ մինակութենեն կօգտվեր սակայն նաև հույնուհին: Էլենին հիմա սովորականեն հաճախ կկենար Բագրատի աշխատութեան սեղանին քով: Երկար ու անպետք հարցումներու չարքեր իրարու կհաջորդեին, և Բագրատ առանց ձանձրանալու կպատասխաներ՝ աչքերը պտտունի նետելով աղջկան կրծքի այն վերի բաց մասին, ուր խորհրդավոր ակոս մը իր հետաքրքրությունը կկարթեր:

Աղջիկը հազար դիրքեր, հազար ձևեր կառներ անոր դեմ, կխնդար՝ երկու ձեռքերովը պինդ իր մեջքը գրկած: Երբեմն կհենվեր գրասեղանին, Բագրատի գիրը հունարենի կնմանցներ ու հունարենով կարդալ կփորձեր, տարօրինակ ու անմիտ վանկեր դուրս կուգային: Կխնդար ինքը ամբողջ գրասեղանը իր լեցուն կրծքին հետ ցնցելով և այնքան դեպի տղան կհակեր, որ իր այտերուն տաքությունը տղու դեմքին կզարներ: Այդ վայրկյաններուն Բագրատին կթվեր, թե սենյակին օդը մեկենիմեկ կհատներ:

Անգամ մը աղջիկը մազերը արձակ, թևերը մինչև ուսերը վեր ժողված, չփակին կոճակները մասամբ միայն կոճկած, տղուն սենյակը մտավ ձեռքը սանր բռնած, խնդրելով, որ անոնց հայելիին մեջ սանրվի: Իրենցը սրբվելու համար վար էր առնված ու անհարմար էր, ինչպես ինքը կըսեր:

– Խնդրե՛մ, – ըսավ տղան:

Ու գրելը չարունակել ձևացուց, բայց չկրցավ: Գողունի ագահությամբ կնայեր այն լեցուն ողորկ թևերուն, որոնք առատ ու երկար մազերուն վրայեն կսահեին՝ մազի հեղեղատ մը թափելով ուսերուն: Եվ հանկարծ տեսավ, որ հայելիին մեջեն աղջիկը ժպտուն իրեն կնայեր: Բագրատ հանկարծ ամոթ զգաց, վերցուց քովեն բառարան մը և սկսավ երկար թղթատել: Ի՞նչ բառ կփնտրեր, ո՞վ կրնա ըսել, ո՛չ իսկ ինքը: Միայն թե այդ փնտրտուքը չատ երկար տևեց, մինչև որ Էլենին հաղթական ժպիտով ու աչքերը Բագրատին հառած՝ սենյակեն հեռացավ:

Տղան բառարանը վար դրավ ու իր մեջը նայեցավ. տեսավ, որ եղանակը պարզ չէ: Ան սովոր էր միշտ իր ներքին աշխարհը վերլուծելու

և այդ ներքին վիճակներու ինչուներն ու ինչպեսները ըմբռնելու: Բացի զարգացած միտք մը ըլլալեն, պաչտոնապես ալ հոգեբան մըն էր վերջապես:

«Ի՞նչ է հիմա իմ մեջ կատարվածը»,– հարց տվավ ինքն իրեն:

«Գարնան հովերուն վերադարձը», – եղավ ներքին պատասխանը:

«Քու մարմինդ ավելի խելացի է, քան քու խելապատակդ», – ավելցուց իր ուղեղի մեկ անկյունեն ծանոթ ձայն մը ծանոթ հեգնությամբ:

Իր ուղեղին մեջ Վասակը կխոսեր:

«Ահա՛ աս ան է, իմ միամի՛տ ու ողորմելի՛ բարեկամս, որ մեր աչխարհքը կանվանե սեր, որ ձեր բանաստեղծները կերգեն առտվնե մինչև իրիկուն սուտ ու պատիր խեղաթյուրումներով, որը սակայն ամեն մարդ ալ ու ամեն անասուն չարունակ կերգե շատ ավելի բնական ու գործնական եղանակով»:

Բագրատ, կեցած իր սենյակին մեջտեղը, մտիկ կըներ իր ուղեղին մեջեն Վասակի արտասանած ճառին և կզարմանար, թե ինչ պետք ուներ հարյուր անգամ լսած այդ անհամ ճառին:

Մերկ իրողությունը ան էր սակայն, որ իր գանգին տակ տիրաբար կեցած էր մեկ պատկեր մը՝ Էլենին: Բան մը, որ Բագրատ ո՛չ ժխտել կրնար, ո՛չ ուրանալ: Մինչև անգամ ստիպված էր խոստովանելու ինքն իրեն, թե անո՛ր համար էր, որ հիմա հաճախ ինքը տունը մինակ կմնար և ոչ թե աչխատելու համար:

Կմնար, որ հանե եզրակացությունը:

«Ուրեմն ես Էլենին կսիրե՞մ, Էլենի՞ն, ի՞նչ արտառոց գաղափար, Էլենին սիրահարվա՞ծ, ե՞ս, զարմանք: Ջէ՛, այդ մարդը իրավունք ունի, մենք բոլորովին ծռեր ենք»:

ժ

Երկու օր վերջն էր, չաբաթ իրիկուն մը: Դպրոցեն դարձին Բագրատ ելավ Շիչլի: Հիանալի օդ մը կար, գաղջ, գրգռող, անուչ:

Ահագին կենդանություն կտիրեր մեծ փողոցին վրա: Բագրատ ծանր կքալեր, կնայեր չուրջը, կդիտեր բազմությունը, մասնավորապես

կքաշեին իր ուշադրությունը այն անվերջ զույգերը, որոնք թև թևի, ծիծաղելով, խոսակցելով իր դեմը կուգային նեղ մայթին վրա:

Եվ հանկարծ նախանձ մը մտավ իր մեջը: Ամենքը կյանքը կվայելեին, զվարթ, գոհ, զույգ-զույգ, իսկ ինքը՞, ինչո՞ւ ինքն ալ չուներ ընկեր մը իր թևին, որ առներ տաներ դաշտերը գեղեցիկ վերջալույսին դեմ, իրիկվան անուշ օդին դեմ, կապույտ ու ծիծաղկոտ երկնքին դեմ: Այսպե՜ս, միշտ չորս, զուրկ ու մինակ:

Հոգին դառնությամբ ու անհանգստությամբ լեցուն վերջապես ուղղվեցավ դեպի տունն: Գիտեր, որ Սարգիսը գիշերը իրենց էր մնալու և հավանորեն արդեն եկած էր ըլլալու:

Տունն մտավ թե չէ, տեսավ, որ տիկինն էր տունը և Էլենին, և խակույն զգաց, որ անախորժ խոսակցություն էր դարձած երկուքին մեջը. երկուքի դեմքն ալ քինոտ էր ու դժգոհ:

– Խեր ըլլա, ի՞նչ է պատահեր,– հարցուց տղան մթնոլորտը թեթևացնելու շատ բարի ցանկությամբ մը:

– Ի՞նչ պիտի պատահի,– բարկացավ կինը,– ամենուն խելքը դուրան է, ոչ մեկը տունը պահել չեմ կրնար, ամենքը միայն մեկ բան մը կմտմտան՝ ձգեն ու երթան:

– Ինչո՞ւ այդպես կըսես, maman,– պատասխանեց աղջիկը տխուր ու լացակումած չեչտով մը,– դուն գիտե՛ս, թե ես ինչքան քիչ դուրս կելլեմ իմ հաճույքիս համար, բայց այսօր խորունկ պահանջ մը ունիմ բայց օդը ըլլալու, բնության հետ ըլլալու: Այնպես հոգիս ճնշում մը ունի, այնպե՜ս ինծի խռովված կզգամ:

Բազրատ զարմացած անոր նայեցավ, այնպես հստակ կըմբռներ աղջկան ըսածը, անոր ուզածը: Իր հոգիին մեջ հանկարծ բան մը տակնուվրա եղավ և ալ առանց երկար մտածելու զարձավ տանտիկնոջ.

– Արդյոք տիկինը առարկություն կունենա՞, եթե ես ու Էլենին երթանք Հիմա միասին պզտիկ պտույտ մը ընելու: Շատ չենք ուշանար, տիկի՛ն:

Լսված էր շատ քաղաքավարի և խնդրող, բայց և կտրուկ չեչտով մը, որուն դեմ մերժումը շատ էր դժվար:

– Ձեզի հետ միասին, պարո՛ն Բազրատ, անշուշտ ուրիշ է: Գնա հագնվե՛,– դարձավ Էլենիին:

Հարցի լուծումը Էլենիի ակնկալածեն և ուզածեն չափազանց դերազանց էր. ուրախութենեն ոտքը գետնեն կտրեցավ ու վազեց իր սենյակը:

– Շատ դժվար ու պատասխանատու բան է, պարոն Բագրատ, աղջիկ մեծցնելը,– ինքզինքը արդարացուց տիկինը:

Էլենին ինքն ալ չհասկցավ, թե ինչպես կրցավ հագվիլ և հագիվ գլխարկը դրած նետվեցավ սենյակեն դուրս՝ ձեռնոցները անցընելով:

Մեկ-երկու կատակի խոսքով բարևեցին տիկինը ու սանդուղներեն վար:

Հազիվ էին փողոց ելեր, որ աղջիկը առանց այլևայլումի կախվեցավ տղուն թևեն ու երկուքի համար ալ կարծես չատ բնական կերպով:

Բագրատ կտաներ անսովոր փողոցներով, որ այս դիրքով ծանոթներու չպատահին:

Եվ երկուքն ալ ուրախ էին: Խոսք, կատակ, ակնարկություններ անցորդներու հասցեին, ու կխնդային սրտանց ու բարձրաձայն, երկու երեխաներու պես:

Խոսելեն, քալելեն ու քրքջալեն հոգնած՝ մտան վերջապես այդ անծանոթ թաղին մեջ սրճարանի մը պարտեզը քիչ մը չունչ առնելու:

Մտան պարտեզ ու չուրջներնին նստելու հարմար տեղ մը կփնտրեին:

– Հոն, օրորանի կողմը, թե՛ ավելի չոր է և թե՛ ավելի առանձին,– օգնեց դեմ եկող սպասավորը խորամանկ ժպիտով մը:

Եվ Բագրատ առաջնորդեց աղջիկը դեպի մատնանիշ եղած կողմը, որ բաղեղներու դեռ անտերև թուփերովը կես մը զատված էր պարտեզի մնացած մասեն:

Բերել տվին գարեջուր: Էլենին ուզեց ձեռնոցը հանել ու դժվարացավ:

Բագրատ բռնեց ամուր աղջկան դաստակը և մեկիկ-մեկիկ բոլոր մատներեն քաշելով՝ հանեց երկու ձեռնոցներն ալ ու նետեց աղջկան գիրկը:

Արևը արդեն մայր էր մտած: Թանձր կապտություն մը արևելքեն պարտեզին վրա կթափվեր: Խոնավությունը սաստկացած էր, և պարտեզը եղողները՝ մեկ-երկու հոգի, սրահը կքաշվեին:

Հանկարծ աղջիկը ցատկեց ոտքի, քաշեց գլխեն գլխարկը.

– Ես օրրվիմ պիտի, եկե՛ք ինծի օրրեցեք,– խնդրեց ձայնի ու գլխու քծնող շարժումով մը:

Բագրատ լուռ հետևեցավ աղջկան: Էլենին նստեցավ օրրանին մեջ, և տղան դեմը կեցած օրրել սկսավ: Նախ նստարանի փայտեն կհրեր, բայց քանի օրրանը ուժ առնել սկսավ, տղան ստիպված էր աղջկան ոտքերեն հրելու, և ամեն անգամ, որ անոր կեսկոչիկներուն մեջեն դուրս սահող մանր ոլոքները կբռներ, ձեռքերը կդողային:

Օրրանի առաջացուցած հովը թեթև մը վեր կառներ աղջկան չրջազգեստը, որուն տակ սև, երկար դուլպաները ճերմակուքյան մը մեջ կկորսվեին:

Բագրատ հանկարծ օրրելը դադրեցուց:

– Օրրեցե՛ք,– պահանջեց աղջիկը:

– Կեցե՛ք, միասին օրրվինք:

– Հա՛, եկե՛ք,– և աչքերը սկսան տարօրինակ ցոլք մը արձակել:

Օրրանը կեցավ, աղջիկը մեկ կողմ քաշվեցավ, Բագրատ նստեցավ քովը ու բռնեց պարաններեն: Ոտքի մեկ-երկու հարվածով ուժ տվավ տղան, և երբ օրրանը նորեն թափ առնել սկսավ, էլենին ձգեց բռնած թելերը, երկու թևով փաթթվեցավ երիտասարդին ու գլուխը սեղմեց անոր կրծքին:

Բագրատ դողաց, ոտքը ուժով գետնին դեմ տվավ, և օրրանը ցնցումով կեցավ:

Աղջիկը զարմացած բարձրացուց գլուխը և միևնույն ատեն զգաց երիտասարդի պինդ թևերը, որ իր մեջքը կգրկեին, և երկուքի շրթունքները իրար գտան:

– Ես գիտեի, որ ինծի կսիրես,– կշշնձեր աղջիկը մարմրող ձայնով մը համբույրներուն մեջեն:

Երբ եկան օրրանին վրայեն, արդեն մութ էր չնորհքով: Կթոտ ոտքերով դարձան իրենց սեղանին քովը: Բագրատ կանչեց սպասավորը, վճարեց: Աղջիկը հագուստն ու մազերը կարգի բերավ, դրավ գլխարկը, ու եկան պարտեզեն:

Որքան որ աղմկոտ էր եղած իրենց գալը, այնքան լուռ եղավ հիմա իրենց վերադարձը:

Նորեն թև թևի, չատ ավելի սեղմված իրարու և երկուքի գլուխներն ալ տարօրինակ մշուշի մը մեջ:

– Հանրակառք վերցնենք, որ չուշանանք,– ըսավ Բագրատ:

– Այո՛, և հոգնեցանք,– վրա բերավ աղջիկը խնդալով:

Բարձրացան առաջին հանդիպած հանրակառքը, գացին վերին ծայրը, նստեցան իրարու կից, և աղջիկը իսկույն կես մը ծածուկ ուրիշներեն բռնեց տղուն ձեռքը:

Դեմերնին նստած էր տաճիկ ծերունի մը, որու բարի դեմքին վրա ներողամիտ ժպիտ մը կխաղար, ամեն անգամ, որ իր հայացքը իր կամքին հակառակ դիմացի իրար սեղմված ձեռքերուն կիյնար:

Երբ տուն հասան, աղջիկները արդեն տունն էին: Օկյուստան նետվեցավ Բագրատի վրա, թե ինչո՞ւ իրեն ալ հետը չտարավ. տղան խոստացավ ուրիշ անգամ մը: Իսկ Էլենին ներսը մեկ կողմեն հագուստները փոխելով և մյուս կողմեն իր սովորական աղմուկով, չափազանցնելով և մանրամասնություններ հոլինելով՝ կպատմեր, թե ճամփան ի՜նչ զարմանալի մարդիկներու էին հանդիպեր և թե ի՜նչ սրախոսություններ էին ըրեր անոնց հասցեին:

Բագրատ անգամ մը մտավ իրենց սենյակը, բայց նույնիսկ առանց լամպը վառելու նորեն դուրս եկավ իսկույն ճաշարան երթալու համար, ուր հավաքված էին հիմա անշուշտ իր ընկերները:

Երբ միջանցքին մեջ վերցուց իր հաստ վերարկուն և սկսավ ծանր-ծանր ու դժվարով թևերն անցընել, զգաց միևնույն ժամանակ, որ ծանր-ծանր ու դժվար բան մը կհագներ նաև իր հոգիին վրա:

Հիմա ինքը այլևս կապված մարդ մըն էր: Կապվա՞ծ: Անշո՛ւշտ: Կամ սրիկա մը:

Արագ դուրս սպրդեցավ բնակարանի դուռնեն, որ տնեցիներեն ուրիշ մարդու չպատահի, և իր այդ տեսակ մը բնազդական վարմունքեն չատ դժգոհ մնաց ու ամոթ զգաց:

«Ինչո՞ւ կխուսափեր, մի՞թե գեչ բան մըն էր ըրեր»:

Գե՞չ էր, թե՞ ոչ, և ի՞նչն էր գեչ՝ լավ չէր ըմբռներ, բայց փնտրել ու վիճելն ալ ավելորդ էր: Կզգար միայն, որ ինքն իր աչքին ինկած էր:

«Ինչպես ամենքը, ինչպես ուրիշները, ինչպես բոլորը», – կկրկներ

չարունակ տարբեր ձևերով, կես մը իբրև արդարացում, կես մը իբրև մեղադրանք:

Ճաշարանին մուտեցած էր, որ ձեռքի ժխտական չարժում մը ըրավ և ընդհատեց իր մտքերուն ընթացքը.

«Հերի՛ք է. ասոնք բոլորը պարապ բաներ են»:

Գևորգ ու Սարգիս ուրիշ մեկ-երկու ընկերներու հետ իրենց սովորական սեղանին չուրջը կխոսակցեին: Ընթրիքը ավարտած էին արդեն, դինիի ու սուրճի գավաթներն էին մնջտեղը:

Բագրատի ներս մտնելը տեսնելուն պես տեղ բացին, ու խոսակցությունը ավելի տաքցավ: Խնդիրը հրապարակի վրա երևցած նոր վեպի մը մասին էր: Բագրատ իր բոլոր թափովը մեջ նետվեցավ: Ամենեն չատ կխոսեր, կքննադատեր, կվերլուծեր թեր ու դեմ, և չատ խոր, և չատ սուբ, և իր ընկերներուն զարմանք պատճառելու աստիճան, որոնք սակայն վարժված էին անոր սրտանց ու խելացի խոսվածքին:

Շատ ուշ էր, որ տուն վերադարձան, գարեջուրեն թեթև մը ծանրացած էր Բագրատի գլուխը, և ծխախոտի մուխին մեջ երկար խոսելեն խանձեր էր կոկորդը:

Ժ Ա

Երբ աչքը բացավ, պայծառ առավոտ էր:

Գևորգ, հայելիին առջևը կեցած, երկու ձեռքով մազերը կարգի կբերեր: Երբ երկուքն ալ արդեն հագված էին, Գևորգ նախաճաշիկը խնդրեց: Եվ եկավ Էլենին կաթի ու սուրճի ափսեն ձեռքը:

– Բարի լո՛ւյս: Գիշերը ինչպե՞ս քնացաք,– հարցուց ընդհանուր կերպով, բայց ժպտուն աչքերը Բագրատին դամած:

– Ամենափառավոր կերպով,– պատասխանեց Գևորգ:– Իսկ դո՞ւն:

– Ա՜հ, ես ամբողջ գիշերը չկրցա քնանալ, կարելի՞ է քնանալ,– հարցուց հանկարծ:

– Ինչո՞ւ,– հարցուց Գևորգ անտարբեր օճիքը խոզանակելով:

– Ես լո՞չ գիտեմ:

Բագրատ նստած էր նախաճաշիկի սեղանին առջև, իսկ Էլենին դեմը կեցած սուրճը կլեցներ: Բագրատ ակամա սկսավ դիտել աղջկան

երկար և ո՛չ բոյորովին մաքուր եղունգները և հիշեց, որ նախորդ իրի-կունը այդ մատներն էր սեղմած այնպես պինդ-պինդ. զարմանալի անհա-ճո զգացում մը ունեցավ:

Իսկ Էլենին Գևորգի պահ մը սենյակեն հեռանալը օգտագործելով՝ մտերմաբար մոտեցավ Բագրատին և ծուեցավ վրան կարոտով.

– Ինչո՞ւ չես խոսիր, ինչո՞ւ այդպես լուրջ ես:

– Ի՞նչ խոսիմ,– պատասխանեց Բագրատ:

Եվ սկսավ անոր դեմքին գծերը դիտել, որ անակնկալ կերպով սովո-րական ու գրեհիկ կգտներ:

Բարեբախտաբար Գևորգ վերադարձավ, և աղջիկը քաշվեցավ սենյակեն:

Բագրատ աճապարանքով սուրճը խմեց, աճապարանքով հագավ վերարկուն, ըսավ, որ մեկուն հետ ժամադիր է եղած և խնդրեց Գևորգին, որ այսօր կիրակնօրյա վարժարանը իր փոխարեն ալ քիչ մը զբաղվի և առանց իսկ պատասխանի սպասելու դուրս նետվեցավ:

Պետք ուներ առանձին մնալու, ինչ գնով ալ ըլլար պետք ուներ հարթելու իր ներքին երկվությունը, ինքն իրեն հետ հաշտվել կուզեր:

Իջավ արագ դեպի մեծ կամուրջը և Վոսփոր մեկնող չոգենավերեն մեկը մտավ: Բարձրացավ վերի բաց հարկը, ընտրեց արևտո ու մեկուսի անկյուն մը ու նստավ՝ երեսը ծովուն:

Շոգենավը ճամփա ելավ, և Բագրատ աչքերը հառած այդ ետ-ետ փախչող և օրորուն կապույտին՝ սկսավ մտածել:

Ո՛չ, այս հիվանդագին հոգեկան վիճակը պետք է վերջանար, մեկ անգամեն և հիմնապես, և իր գործած մեծ սխալը պետք է սրբագրվեր, և արմատապես: Սխալ մըն էր, այո՛, կոպիտ ու աններելի սխալ մը առանց սիրո սիրել ուզելը: Աններելի սխալ մըն էր ատիկա իրեն համար, իր հոգեկան կազմին համար, իր խառնվածքին համար. ուրիշները թող վարվին, ինչպես իրենք կհասկնան: Իր երեկվան դժբախտ վարմունքը վարակում մըն էր ուրիշներու հոգեբանութենեն և որ թուլցուցած էր իր ներքին զսպիչ սանձերը: Իրեն վայել չէր ուրիշներուն պես ըլլալը, և չէր ալ կրնար: Ահա՛, ուրիշներուն այդ սերը կմարի գոնե հագենալեն ետքը, իրենը մարեր էր դեռ հազիվ վառած: Անբնականն ու անառողջը ասիկա էր ահա՛, իր ըմբռնումներուն ու իր էության հակառակ վարվիլը:

Շոգենաւը կհասնէր նաւամատոյցին նաւամատոյց՝ անգամ մը եվրոպական, անգամ մը ասիական եզերքը դիմելով: Երկու ժամեն վերադարձաւ նորեն կամուրջ: Բազրատ վճռական չարժումով մը ոտքի ցատկեց և շտապեց դուրս: Քալվածքը վստահ էր, դիմքը՝ հանդարտ: Իր որոշումը տված էր արդեն:

Շիտակ տուն: Դուռը բացողը Էլենին էր:

– Մեր սենեակը մարդ կա՞:

– Ո՛չ,

– Հետս եկէ՛ք:

Աղջիկը ուրախութեամբ ու վախով հետևեցաւ երիտասարդին:

– Էլենի՛, երեկ իրիկուն ըսիք կարծեմ, թե ես կսիրեմ Զեղի,– ըսաւ Բազրատ առանց հառաչաբանի,– ատիկա Դուք ըսիք, ես այդ տեսակ բան լսած չեմ Զեղի, որովհետև ատիկա ճիշտ չէ, թյուրիմացութիւն մըն է: Ես չեմ ցանկար Զեզի սխալեցնեմ և չեմ ուզեր, որ ինծի սխալ հասկնաք: Դուք շատ սիրելի ու շատ համակրելի աղջիկ մըն եք: Մենք միշտ բարեկամ ենք եղեր իրարու, և շատ կցանկամ, որ միշտ ալ բարեկամ մնանք իրարու:

– Բայց... բայց երեկ իրիկո՞ւն,– հարցուց աղջիկը հուզումեն դողացող և արցունքեն ուռած ձայնով մը:

– Երե՞կ. այո՛, իրաւունք ունիք, մեր սխալը երեկ էր: Զգիտեմ, ես ալ, Դուք ալ ուրիշ կերպ տրամադրված էինք: Խենթ բան մըն էր, ատիկա, թե ինչպե՞ս եղավ և ինչո՞ւ, չիտակը ես ալ աղեկ չգիտեմ: Այսքանը պարզ է, որ Համբուրվեցանք: Վնաս չունի, Դուք լավ աղջիկ մըն եք, եկէ՛ք նորեն Համբուրվինք ու միշտ մնանք բարեկամ:

Ըսավ, թեթև մը գրկեց, շրթունքներեն Համբուրեց, դրավ նորեն գլխարկը՝ ու արագ դուրս: Բայց և այնպես ժամանակ ունեցավ նշմարելու, որ աղջիկը կամաց մը սահեցավ ու նստած մնաց քովի աթոռին:

Սոսկալի խղճահարութիւն մը սիրտը խոցած: Անգամ մը մտածեց ետ դառնա ու կերպ մը անոր սիրտը առնէ, բայց ատոր փոխարեն գոցեց ետևեն տան դուռը:

«Խե՜ղճ աղջիկ», – կկրկներ ակռաներուն մեջեն՝ գրեթե վազելով իրենց փողոցն ի վար:

«Գուցե ան ինծի ավելի լուրջ զգացումով մը կապված էր. ինչ

իրավունքով խաղացի իր հոգիին հետ: Բայց լավ էր, որ կտրեցի: Պետք էր: Միայն շատ կոշտ եղավ, չափազանց վայրենի եղավ: Ինե՛ղճ, խեղճ Էլենի»:

Եվ ալ քանի մը շաբաթ հնար եղածին չափ կխուսափեր տունը ըլլալե: Առտուն շատ կանուխ կերթար, իրիկուններն ալ դպրոցը ավարտելեն ետքը դեռ երկար կմնար դպրոցը: Եվ ամբողջովին կլանված էր դպրոցի գործերով:

Կիրակի օրերն ալ ամեն ինչ մոռնալու աստիճան կնվիրվեր կիրակնօրյա վարժարանին, իր «պեխավոր աշակերտներուն», որոնց թիվը հասեր էր հետզհետե քսաներկուքի: Հին ու նորերը շատ անհավասար էին իրարու և ստիպվեր էին երկու խմբի բաժնելու, որ ավելի ալ աշխատանք կպահանջեր: Կաշխատեին երեք ուսուցիչ փոխնիփոխը: Ինքն էր, Գևորգը և ուրիշ վանցի մը՝ իհարկե Բագրատի ղեկավարությամբ:

Այս քանի մը ամիսներու փորձառության վրա հենված՝ սկսած էր ծրագիր մշակել, թե ինչ պետք էր սորվեցնել և ինչ եղանակով, և կզգար, որ շատ հետաքրքիր եզրակացություններու կհասներ կամաց-կամաց: Եվ ո՛չ միայն իբրև պարտավորություն, այլև սիրով ու նվիրումով կաշխատեր կիրակի առտուները:

Եվ սովորություն դարձուցին, որ դպրոցեն ալ երեք ուսուցիչները միասին կերթային տեղ մը պտույտի ու բնության մեջ ճաշելու Պոլսի բազմաթիվ արվարձաններեն մեկը, ուրկե երբեմն շատ ուշ գիշերով տուն կվերադառնային:

Տունը ամենքը սկսեր էին գանգատիլ:

– Աս ինչ է, ալ ձեր երեսը տեսնել անկարելի է,– կըսեին կես կատակ, կես լուրջ:

Փոքրիկ Օկյուստան ուղղակի կբողոքեր. չէ՞ որ Բագրատը խոստացեր էր պտույտի տանելու, ո՞ւր էր:

Բագրատն ու Էլենին կխուսափեին խրարու նայելե: Աս էր միակ մնայուն տարբերությունը, մյուս բոլոր հարաբերությունները մնացեր էին բոլորովին նույնը: Կխոսեին և՛ իրարու, և՛ մյուսներու հետ, կարծես իրավ որ ոչինչ չէր անցած իրենց մեջ, ոչինչ չէր պատահած:

Եվ աղջկա այդ լուռ համակերպումը և ինքզինքը պահել գիտնալը

Բագրատին իրապես սկսած էր հարգանք ներշնչել. ո՛չ մեկ գժգոհանք, ո՛չ մեկ խոսք, ո՛չ մեկ ցույց կամ քեն աղջկան կողմեն, կարծես իրոք որ ոչինչ չէր պատահած:

Տղան հարգանք ու երախտագիտություն կզգար հիմա Էլենիի հանդեպ, և այդ նոր զգացումը ինքնահատուկ քնքշություն մը ու մտերմություն մը կուտար ձայնին ու խոսքին, երբ Էլենիի հետ կխոսեր:

Միայն անոնց երկու զույգ աչքերն էին, որ համառ կերպով իրարու նայելե կխուսափեին:

ԺԲ

Կամուրջին վրա՝ Գաւոը-գյուղ տանող չոգենավերու նավամատույցին առջևը՝ կալինոյի բաց պատուհանին դեմը նստած՝ Վասակ քառտրդի մը չափ էր՝ մեյ մը աչ կդառնար, մեյ մը ձախ ու անհամբերութենեն ոսքերը կերերցներ:

Կիրակի էր ու կեսօրի մոտ, ապրիլի արևը վարը ծովուն հետ կխաղար:

Վասակ հորանջելով վերցուց սեղանին վրա ինկած հայերեն լրագիրներեն մեկը, աչքե անցուց ու նետեց անդին.

– Տորիչելյան դատարկություն,– մռլտալով:

Առավ փարիզյան պատկերազարդ թերթ մը: Առաջին երեսի գունավոր պատկերը ոճրագործի մը կալանավորումն էր, վերջին երեսինը՝ չոգենավի մը Ատլանտյանի ջրերուն մեջ ընկղմիլը:

Երկար ուշադրությամբ դիտեց բռնված ոճրագործի կատաղի դիմագծերը ու սկսավ համեմատել անդին խեղդվող աղջկան մը հուսահատ դիմագծերուն հետ:

«Իրոք նմանություն,– կմտածեր:– Աչքերուն բացվածքը, բերաններուն քովի ծալքը, ունդպերուն լայնացումը, բռունցքներուն գալարումը, նույնը երկուքն ալ: Ախ՛ղճ աղջիկ: Բայց ինչո՞ւ աղջիկը մեղքցա. ավանդական ու դասական արտահայտություն: Ո՛չ, ես ավելի ոճրագործը կմեղքամ: Մեկը մարդկային ծովուն մեջ խեղդվող մըն է, մյուսը՝ պարզ ջուրի: Մեկուն տանջանքը կես ժամ առաջ սկսավ ու քանի մը վայրկյաններն կվերջանա, իսկ մյուսին տանջանքը սկսած է գուցե ծնած

օրեն և դեռ, ո՞վ գիտե, որքան ալ տևելու է բանտերու ու չղթայակիր տաժանքներու մէջ»:

Նույն միջոցին գավազան մը երկնցավ պատուհանեն ներս ու լրագրին տակեն թեթև հարված մը տվավ:

Վաստակ գլուխը բարձրացուց:

– Բագրատը դեռ չեկա՞վ,– հարցուց եկողը:

– Հո՛ս եկուր, Գևո՛րգ, նայե՛ սա պատկերը, ի՞նչ բան է:

– Ոճրագործ մը, կարծեմ:

– Ոճրագո՞րծ, դդո՛ւմ գլուխ: Լոկոմոթիվը դրեր են երկու գծերու վրա, ուրկե դուրս ելլել չի կրնար: Մեջն ալ լեցուցեր են ջուր, տակն ալ անընդհատ քարածուխ կվառեն: Արդ՝ ի՞նչ պիտի ըլլա հետևանքը. ջուրը կգոլորշիանա, գոլորշին, որ բանտված է, ուզե-չուզե դարձնե պիտի չափված-ձևված ու տեղավորված անիվները, և լոկոմոթիվը առաջ կերթա իր գծերուն վրա:

– Ինծի մեքենաբանուԹյա՞ն դաս կուտաս:

– Հրամա՛նք ես: Ոճրագործ ըսածդ ահա՛ այդ լոկոմոթիվն է. մեր մարդկային սահմանափակ մտածումներով անոր համար տնտեսական գծեր ենք չիներ անվերջ ու անփոփոխ, ուրկե դուրս գալու հնարավորուԹյուն չունի: Խեղճին մեջը լեցուցեր ենք հարստանալու, տիրելու, կեղեքելու և ուրիշները չահագործելու սուր փափագը: Արդեն կրակը բնականեն մեջը կա՝ անոթուԹյունն ու սեռը: Խե՛ղճ մեքենա, ուզե-չուզե առաջ պիտի երթա: Ճամփուն վրա մարդ մըն է պառկած. կտրե պիտի մեջեն ու անցնի: Կրնա՞ չեղիլ մեր իսկ, լսե՛, մեր իսկ չինած, չտկած ու ամրացուցած երկաթի գծերեն: Ոճրագո՞րծ, խե՛ղճ մեքենա:

– Ես քու մեքենայիդ խերն անիծեմ, ոճրագործիդ ալ, քու ալ. անդին նետե սա լրագիրը:– Պոռաց Գևորգ զայրացած, խլեց ձեռքեն թերթը ու նետեց հեռավոր մարմարե սեղաններեն մեկուն վրա:

– Դուն ինծի ա՛ն ըսե՝ ժամը քանիի՞ է չոգենավը:

– Ջգիտեմ, հատ մը եկավ ու գնաց: Ջանձրացա սպասելեն: Արդեն ձեզի հետ ժամադիր ըլլալը խենԹուԹյուն է. ո՞ւր եք մինչև հիմա:

– Բարեկա՛մ, մենք քեզի պես հով կլլող չենք, գործի մարդ ենք, կպատահի կուշանանք:

– Գիտե՛մ, սարսափելի մեծ գործերու վրա եք:

– Բարև, Վասա՛կ,– լսվեցավ Բագրատի ձայնը:

Մոտեցավ անոնց ու ինկավ աթոռի մը վրա՝ ժպիտը շրթունքին, քիչ մը դունատ, հոգնած մարդու մը բոլոր արտաքին արտահայտութիւններով:

Բագրատի հետ էին վանցի ուսուցիչը, որ կիրակնօրյա վարժարանը կաշխատեր, այլև ուրիշ վանցի երիտասարդ մը: Բոլորն ալ հրավիրված էին Սարգիսի տունը ճաշի:

– Այսօր աչքիս ուրիշ տեսակ մը կերևաս,– ըսավ Վասակ Բագրատին թեթև հեգնութեյամբ մը:

– Կարծեմ քիչ մը տկար եմ և քեզի հետ պլուխ դնելու բնավ տրամադրութեյուն չունիմ:

– Բայց, սիրելի՛ս, գույնդ-մույնդ արդեն թռեր է, վաղը-մյուս օրը բժիշկները ավետելու են, որ թոքերուդ ճյուղիկներուն մեջ անկոչ մանրէները իրենց բույնը հյուսեր են, իսկ դուն քու ունեցած մեկ խղճով կիրակիդ ալ կերթաս նորին կգոցվիս այն անպիտան սենյակներուն մեջ ու ժամերով չունչ կհատցնես: Երկու խեղճուկ մարդու երկու պատառ խեղճուկ բան պիտի տրվեցնես եղեր: Այդ մարդիկն ալ այդ երկու կտորիկ բանը թող պակաս գիտնան, ի՞նչ վնաս, կամ մենք, որ այդ երկու խեղճ կտորիկը ավելի ենք գիտցեր, ի՞նչ խեր ենք տեսեր:

Բագրատ մեղմ ու անուշ կժպտեր, իսկ Վասակ չարունակեց.

– Բայց իհա՛րկե. անձնվիրութեյուն, ինքնազոհութեյուն, գերագույն առաքինութեյուն, բարոյական գազաթնակետ: Ո՛չ, կներես, պարզապես էշ-նահատակութեյուն:

– Սխալ ճամփու վրա ես, բարեկա՛մ,– նկատեց Բագրատ չատ մտերիմ:– Ես մինչև հիմա ինչ որ ըրեր եմ իմ կյանքիս մեջ և ինչ որ կընեմ, կընեմ միայն իմ հաճույքիս համար կամ գոնե գալիք հաճույքի մը հույսովը: Իմ ըրածս քեզի կամ ուրիշներուն կրնա անձնվիրութեյուն թվիլ, բայց ինծի համար պարզապես իմ էութեյանս ու կրթութեյանս պահանջն է: Ուրիշներուս բարձրացմանը նպաստել, մարդկային հասարակութեյան ասեղի խթան մըն ալ իմ կողմես տված ըլլալ, իմ ըմբռնածս իմ նմաններուս ալ հաղորդել և միշտ կենդանի գործ մը ու մաքառման մեջ գտնվիլ ինծի համար ներքին պետք մըն է և խոր հաճույք մը: Ուրիշ ոչինչ:

Վասակ չպատասխանեց, բան մը, որ խիստ բացառիկ էր: Եվ սկսավ դիտել Բագրատի դժգունած այտերը, ցոլուն աչքերը և տեսակ մը հուզում զգաց. կարծես կարեկցություն, կարծես պատկառանք, կարծես համբուրելու փափագ մը, կարծես նախանձ:

Շոգենավը եկած էր: Ամենքը ոտքի ելան:

Վասակ կքալեր խումբին ետևեն ու չոգենավ մտավ գլուխը կախ ու մտասույզ:

ԺԳ.

Սարգիսի տունը Գատը-գյուղի նավամատույցեն չատ հեռու չէր:

Հազիվ մանչ մը դուռը բացավ, որ Գևորգ Թոքերուն բոլոր ուժովը «Սերգո՛» պոռաց: Ու վերեն լսվեցավ Սարգիսի առողջ ձայնը.

- Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հագուցից զձեզ, զի գինին իմ քաղցր է և խոհարարս՝ մեծհոգի:

- Կեցցե՛ մեր տիրացուն,- պատասխանեց վարեն Վասակ:

- Ո՞ր ծակն ես մտեր,- կըսեր Բագրատ սանդուղներեն վեր բարձրանալով:

Եվ հինգը մեկեն մտան սենյակ մը, որ դուռը բացող մանչը խնդալով մատնանիշ ըրավ:

Անկյունը՝ պատուհանին մոտիկ՝ խոշոր գրադարանի մը առջևը, դեռ գիշերազգեստով, Սարգիս նստած կգրեր:

Երբ տղաքը միասին ներս խուժեցին, գլուխը քիչ մը ետ դարձուց ու ժպտելով ըսավ.

- Հա՛, վանդալնե՛ր, քիչ մը խելոք նստեցե՛ք, հիմա կվերջացնեմ, հիմա:

Ու չարունակեց սրբագրել գրվածքի մը վերջին տողերը: Բագրատ ծռեցավ ու գրողի ուսին վրայեն սկսավ գրածը կարդալ:

Մյուսները բազկաթոռներուն մեջ ինկած կսպասեին, իսկ Վասակ ձեռքերը ետին կապած՝ կեցած էր Սարգիսի գրադարանին առջևը ու գրքերուն կողերը կկարդար բարձրաձայն:

- Կիկերոնի «Ճառ Հաղագս բարեկամութեան». անթիքա՛: «Մխիթար Այրիվանցի». հը՛մ, հայրենակից է երևի, վանցի: «Հացի խնդիր».

լա՜վ: «Ռընան». ո՜ւհ, գործը մեծցավ: «Տնտեսագիտություն». այս մոլորված ոչխարը ինչ գործ ունի հոս: «Սպենսեր»: «Լաս-տի-վեր-ցի». խոսելացի ըլլալու է: «Ոգիսական»: Դուբյան: Շահազիզ: Զոլա: Բանաստեղծներուն կծիկը քակվեցավ: «Փիլիսոփայության պատմությունը մինչև...». հը՛մ: «Կրոնքներու ազդեցությունը ընկերական...», հը՛մ: «Ման-կա-վար-ժա-կա...». ա՜, ա՜, ա՜, ա՜:

Բացավ բերանը ու սկսավ խոշորաձայն հորանջել: Ամենքը միաբերան խնդալ սկսան:

Սարգիս արագ վերջակետ մը դրավ, գրիչը նետեց ու ցատկեց ոտքի:

– Տղա՛ք, կարդամ հոդվածս, լսեցե՛ք:

– Հոդվածդ մեր վորը չի կշտացներ, անոթի ենք մենք, բարեկա՛մ,– նկատեց Գևորգ:

– Ինչի՞ մասին է,– հարցուց Վասակ:– Նորեն կա՛մ վարդապետ, կա՛մ վարժապետ. պարզ բան:

– Ո՛չ: Քաղաքակրթության զարգացման վրա սկնարկ մըն է,– պատասխանեց Սարգիս:

– Կարդա՛, նայինք,– ըսավ Բագրատ:

– Վերջը՛, վերջը՛. վորերնիս անոթի է,– կրկնեց Գևորգ:

– Կեցե՛ք, սա վերջին էջը կարդամ, ամբողջի մասին գաղափար մը կկազմեք: Ուրտեղե՞ն էր, հա՛:

«Այսպիսով քաղաքակրթությունը ծլավ Ասիայի հողին վրա, հոն ուժ առավ, հոն ոտքի ելավ, հոն ըրավ իր առաջին քայլերը, և հոն հիմք դրին մեր արդի ընկերական ու քաղաքական հիմնական վիճակները: Երբ թագավորություն, պինվորական հաստատուն կազմակերպություն, արհեստ ու արվեստ, առուտուր, դիր ու դրականություն ուներ արդեն Ասիան, անդին Եվրոպան ճահիճներով ու անտառներով ծածկված վայրի բնություն մըն էր դեռ, ուր վայրի ցեղեր կթափառեին:

Բայց եկավ ժամանակը՝ Ասիան կատարած էր իր առաջին գործը, այ հողը հոգնած էր ու հանգստի պետք ուներ ուժերը վերստին ժողվելու համար: Եվ քաղաքակրթությունը անցավ Եվրոպայի սեմեն ներս, ու ծլավ Եվրոպան իր անտառներեն, մեծցավ, զորացավ ու հատավ իր արդի սիրող բարձրության: Եվ հիմա ալ ան իր կարգին հոգնած է ու հանգիստ

կպահանջե: Քաղաքակրթությունը նոր ու թարմ ուժերու պետք ունի, երկար դարեր հանգստացած կամ դեռ բոլորովին չգործածված հողի:

Եվ ահա քաղաքակրթությունը Եվրոպայեն ալ սկսավ չվել. մեկ կողմեն դեպի Նոր Աշխարհ, մյուս կողմեն դեպի իր հին Ասիան: Սիպիր, Կեդրոնական Ասիա, Հնդկաստան երկաթուղիներ կվագեն և երկաթուղիներուն հետ նոր գործիքներ, նոր ապրանքներ ու նոր գաղափարներ: Ջինաստանի դարավոր պարիսպները սկսած են կործանիլ: Ճապոն մը աշխարհ եկավ: Պարսկաստան չուտով պիտի ցնցվի, և քաղաքակրթությունը նորեն Ասիայինն է:

Եվ ասիական դեռ չատ մը ազգեր նոր պիտի սկսին իրենց գործունեությունը մարդկային զարգացման սանդուղքին վրա: Հարյուրավոր միլիոններ իրենց հերթին կսպասեն քաղաքակրթության համար քրտինք ու արյուն թափելու:

Եվ մյուսներուն հետ, այսքան դարեր համբերությամբ սպասող ու համառությամբ ոչնչացման դիմադրող մեր փոքրիկ ժողովուրդն ալ իր չղթայված ուժերուն գործադրությունը պիտի ստանա: Ան ալ պիտի թափե նորեն իր քրտինքն ու արյունը քաղաքակրթության համար»:

– Պրավո՛,– պոռաց Գևորգ:

– Շի՛ք է,– նկատեցին երկու երիտասարդները:

– Ի՛նկը լրագրի հոդված,– ժպտեցավ Վասակ:

– Բայց ես կուզեի, որ այդ նոր ասիական քաղաքակրթությունը գեթ մեկ-երկու բառով նկարագրեիր,– նկատեց Բագրատ մտածկոտ:

– Այսի՞նքն,– հարցուց Սարգիս:

Բագրատ քիչ մը ճակատը չփեց և սկսավ՝ նմանվելով Սարգիսի դրվածքի ատության ձևին.

«Եվ ես կերևակայեմ այդ գալիք քաղաքակրթությունը: Ասիայի մեջ ամեն բան խոշոր է, վեհ ու լայն, ընդարձակ: Հոն ա՛լ չեն ըլլալու եվրոպական քաղաքակրթության պզտիկ խնդիրները: Կռիվ ու ավերում նախապատմական բաներ պիտի դառնան, բոլոր ազգերը կապված իրարու ընդհանուր միության մը մեջ: Արդի տնտեսական անհավասարությունը, հարստության անհավասար բաշխումը, աշխատանքի ու վարձի անզուգակշռությունը ապագա պատմության ուսուցչապետեն ժամեր պիտի խլեն քիչ-չատ հասկնալի դառնալու համար: Մեր արդի

կրոնքը, մեր բարոյական ըմբռնումները, մեր ընտանեկան կազմը մանկական պիտի կոչվին, մեր գրականութիւնը՝ երեխայութիւն, իսկ մեր գիտութիւններն ու արհեստները՝ առաջին խարխափումներ, և նոր հնարված հաղորդակցութեան միջոցները «հեռու» բառին գաղափարը պիտի մթագնեն: Օդն ալ պիտի հնազանդի մարդու կամքին: Ստորջրեայ անտառները, ընդծովեայ բնութեան հիանալի տեսարանները գալիք ուղևորներու չատ հաճախված վայրերը պիտի ըլլան: Եվ ապագա գիտնականները նողկանքով պիտի կարդան մեր արդի դատարաններուն, պատիժներուն, բանտերուն ու դիւահատութիւններուն նկարագիրը: Ճիշտ այնպես, ինչպես մենք հիմա հավատաքննութեան էջերը կկարդանք: Եվ ապագա կինը իր կոչման ու զարգացման բարձունքեն «խաղալիք» պիտի անվանեն մեր արդի կինն ու աղջիկը: Եվ այս ամենը ա՛յն հողին վրա, ուր մենք հիմա կքաշքշվինք մեր անազատ, մեր հալածված, մեր զուրկ ու տգետ այս ողորմելի պայմաններուն մեջ»:

Լռեց: Լռած էին պահ մը մյուսներն ալ:

Սարգիս բերանը բացավ բան մը ըսելու համար, որ Վասակ կտրուկ մեջ նետվեցավ.

– Է՛, մենք հոս քարո՞զ մտիկ ընելու եկանք:

– Անոթի՛ ենք,– պոռացին Գևորգ և մյուս երկու վանցիները միաբերան Գևորգի տված նշանին վրա:

– Հիմա՛, հիմա՛, սովյալնե՛ր: Հայտնի է, որ վարժապետ եք, է՛,– պատասխանեց Սարգիս և «Դավո՛» ձայն տվավ սպասավորին ու վանեցու բարբառով քանի մը հրամաններ ավելցուց:

ԺԴ

Պզտիկ սենյակ մըն էր ճաշարանը:

Պզտիկ ալ սեղան մը, մաքուր սփռոցով ու սպասներով, որուն չուրջը չարվեցան մեր վեց դուբսեցիները:

Գյուղական սովորութեամբ ընտրեցին սեղանին պետ: Ձայներու ստվար մեծամասնութիւնը ինկավ Վասակի վրա, որ բաժակներու բախումով անցավ իր պաշտոնին կրկիսը:

Սկիպրը լուռ էին, բոլորն ալ ուտելով էին զբաղված: Բայց պետի

խիստ հրամանով իրար հաջորդող կենացները մթնոլորտը փոխեցին:

Կենացները սրտաբուխ դարձան և հայրենիքի կարոտով: Երգերը խորունկէն կուգային, ծափերը ուժովցան, և Գևորգ քանի մը գյուղական ձևեր սարեց:

Երբ Սարգիս իր գավառական Լեզեն կերգեր, Գևորգ հուզումեն կուլար: Վասակի դեմքին վրա արտասովոր վերացած բան մը կար և կարծես բոլորովին մոռցեր էր աշխարհը քննադատելը: Բագրատ պարզապես տխուր էր:

Երբ գինիին շիշերը պարպվեցան, երբ սրախոսություններու տոպրակին հատակը հասան, երբ ձայները խռպոտեցան, և երբ փոքրիկ սենյակին օդը նեղ գալ սկսավ ծանրացած գլուխնեղուն, Սարգիս առաջարկեց երթալ Մոտա ծովեզերը:

Ծովուն չունչը ամենքը կաղդուրեց. աղոտած նայվածքները պայծառացան, ու սովորաբար այդ տեսակ խենթ վայրկյաններուն հաջորդող ծիծաղելի լրջություն մը թառեցավ վրանին:

Գևորգ ազատության մասին կփիլիսոփայեր և հայ ժողովրդի դժբախտ ճակատագրի.

– Մինչև ե՞րբ ստրուկ ու հպատակ ժողովուրդներ, մինչև ե՞րբ այս պանդուխտի կես-փախստական կյանքը, մինչև ե՞րբ պատմության անիծքը հայու վզին:

Սարգիս դեռ իր հողվածի ազդեցության տակ վանցի ուսուցչին քովն ի վեր կտրամաբաններ մարդկային հառաջադիմության խոչընդոտ եղող պատճառներու մասին:

Բագրատ ինքզինքը հետզհետե ավելի ու ավելի անհանգիստ կզգար, թեև ձայն չէր հաներ:

Մինչ այս կամուրջ մեկնող վերջին չոգենավի ժամանակը մոտեցած էր: Եվ սկսան նավամատույց իջնել:

Սարգիս Բագրատի թևը մտավ, ու երկուքով մյուսներեն քանի մը քայլ ետ մնացին:

– Ինծի նայե՛, քանի միտքս է, չմոռնաս,– սկսավ Սարգիս: – Երեկ ձեր թաղականներեն Հաստափորը տեսա: Գանգատիլ սկսավ նորեն. «Քու մարդդ մեզի սուղի կնստի»,–կըսե: «Ինչ կա»,– ըսի: «Հինգ-

վեց ամսական մեջ երկու տարվան ծախք ընել ուզած», – կըսե: «Այս ճամփով գործի տակեն չելլվիր», – կըսե:

– Այդ պատմութիւնը կարծեմ նոր չէ: Հիմա քու ըսածդ ի՞նչ է:

– Այո՛, սիրելի՛ս, բայց այդպես անհոգ ըլլալն ալ կարելի չէ: Մարդիկը դժգոհ են, հասկցի՛ր, ճռալով, ճռճռալով ուզածիդ կհարմարին, բայց չաւիեն ավելի պրկել կարելի չէ, տեսար՝ կփրթի:

– Ամեն ինչ եղած է հոգաբարձուներու համամտութեամբ և որոշումով:

– Եվ ճիշտ ատոր համար պետք չէ դժվարացնես հոգաբարձուներու վիճակը: Գիտես որ հոգաբարձուներու և թաղականներու մեջեն սև կատու է անցած, վերջապես քեզի կանչողը և քու հենարանդ անոնք են:

– Շատ կզնահատեմ անշուշտ, այդ ինծի կանչողներն ու ինծի հենարան եղողները դուրսեն, բայց ես իմ մեջս ներսեն կանչողներ ալ ունիմ և ներքին հենարաններ. բարեխղճութիւն է ատոնց անունը և պարտականութեան գիտակցութիւն, ատոնք ալ պահանջներ ունին, ատոնց ալ պետք է ականջ դնեմ:

– Ա՛լ չգիտեմ, իմ պարտքս էր քեզի զգուշացնելը, ջանա՛, որ այդ մարդիկ գոհ մնան:

– Սվոր ըսե՝ հինեն ոչինչ չփոխես, եթե կարելի է՝ ոչինչ չընես և մանավանդ իրենցմե ոչինչ չուզես, ա՞ս է ինծմե պահանջվածը, որ գոհ մնան: Ո՛չ, ես ատոր համար չեմ եկած հոս:– Բացականչեց Բագրատ՝ զայրացկոտ կանգ առնելով փողոցին մեջտեղը, նավամատույցին ծայրը:

– Բալե՛, քալե՛, շոգենավը մեկնելու վրա է,– շտապեցուց Սարգիս թևեն քաշելով:

Բայց հազիվ հասած էին տոմսավաճառի պատուհանիկին, որ վեպի նավը առաջնորդող անցքը ցանցվեցավ, և շոգենավը բացվեցավ:

Բոլորը խմբվեցան և հիմար ու չվար հայացքներով իրարու կնայեին.

– Ինչո՞ւ այդպես իշացաք,– խնդաց Սարգիս ամբողջ կրծքով:– Գիշերը կմնաք ինծի, հրաշալի անակնկալ: Գնդրգը ծոցս կառնեմ, ուրիշ անկողին մըն ալ ունիմ, ան ալ Բագրատին: Մնացածներդ ալ բազմոցներուս վրա, կհարմարինք: Քալեցե՛ք:

Տղաքը նորեն իրար նայեցան ու Բագրատին: Բագրատ լուռ մեկնող չոգենավին կնայիր:

– Ան ա՛լ ետ չի դառնար, քալե՛,– ըսավ Սարգիս՝ նորեն բռնելով ընկերոջ թեւը:

– Ո՛չ, ես տուն պիտի երթամ. պիշերը պատրաստելու դաս ունիմ, վաղ առտու ալ շատ կանուխ դպրոցը պիտի գտնվիմ, հոգաբարձության նախագահը տեսնելու եմ, մեկ-երկու մանր կարգադրելու բաներ կան, որ մնա՝ ալ խերը տես:

– Վա՛ղ անցիր,– կկրկնեին մյուսները,– այսօր ալ թող ասանկ ըլլա:

– Ո՛չ, ես մակույկ մը կբռնեմ ու կերթամ:

– Խե՜ղճ ես, արդեն մթնելու վրա է, ծովն ալ անհանդարտ,– պընդեց Սարգիս:

– Ծովը ինծի չի բռներ, մութը ինձի՞ ինչ: Նավավա՞ր,– պոռաց ծովեզրը դառնալով:

– Ան որ գլուխը բան մը դրավ, ալ համոզել կարելի չէ, բայց հիմարություն է ըրածդ,– բացականչեց Գևորգ չարացած:

Նորեն քանի մը փորձեր ըրին համոզելու: Բագրատ չհամաձայնեցավ, թոթվեց ընկերներուն ձեռքը և մտավ մոտեցող մակույկը:

Ընկերները բավական երկար մնացին նավամատույցին վրա, կհետեւին մակույկին ու մեջեմեջ թաչկինակ կշարժեին:

– Երթա՛նք,– ըսավ վերջապես Սարգիս:

– Այդ տղուն գլուխը կա՛մ դղումի կուտով է լցված և կա՛մ... կամ ինքս ալ չգիտեմ ինչ ըսեմ,– մռմռաց Վասակ ճամփա ելլելով:

Եվ խումբը կռնակը դարձուց ծովուն, ուր կես-մութին մեջ հեռուն սևին կուտար Բագրատը տանող մակույկին փոքրիկ առագաստը:

ԺԵ

Մակույկը արդեն ծովուն բացերն էր: Հո՛ն, ուր Վոսփորի հոսանքը Մարմարայի ալիքներուն հետ կգրկվի:

Նավավարը թիերը թողած՝ առագաստը կղեկավարեր՝ իր պաշտոնը հանձնած Սև ծովեն փչող պաղ հովերուն:

Եվ մակույկը արագ կսուրար ջրի ծիծեռուն վրայեն, որոնց պտուվ-նիրեն կաթ-փլփուրը կծորիր:

Մակույկը կսուրար՝ թեքված դեպի ձախ: Երկու մատ միայն կզատեր ջուրը նավակին եզերքեն:

Բազրատ բնազդաբար աչ կողմը հենած կդողար Հովեն, զուր կծկտիլ կջանար իր վերարկուին ու պլսարկին եզերքներուն տակ:

Աչքերը չեչտ նավակի եզերքեն ետ-ետ վազող ջրին հառած՝ կմտածեր:

«Ահա՛ մատ մը միայն մահեն հեռու: Հովի քմահաճույքեն ավելի ուժգին չունչ մը, ավելի մեծկակ ու կամակոր ալիք մը, նավավարի կողմեն սխալ մը, և վերջացավ. վերջացավ այս կյանքը՝ իր երազներով, հույսերով ու ձգտումներով: Երկու ափ ջուր թոքերուն մեջ, փոքրիկ անկանոնություն մը մեր այս բարդ մեքենային մեջ, և այլևս դադրած է ան մեր կենդանական կարողություններըը արտադրելե, որ Հոգի կանվանենք: Ճիշտ էլեկտրական մարտկոցներու չղթայի մը պես, ուրկե էլեկտրականությունը կհոսի՝ մեր Հոգիին հարազատ քույրը: Ինչ խեղճ բան. և մենք որ այնքան հպարտ ենք մեր Հոգիով: Միծաղելի է. ստամոքսի, երակներու, ջիղերու և մկաններու հանդույցե կազմված էլեկտրական մեքենա մը, որ կհպարտանա»:

Վայրկյան մը գիտակցությունը դադրեցավ գործելե: Աչքերը անչարժ սևեռած մնացին ջրի այտուցքներուն վրա, մինչև նորեն չողաց մտածումը իր գանգին տակ:

«Ինչ հիմար բան է մահը, և ինչ հիմարաբար ալ կվախնանք անկե: Քիմիական պարզ տարբաղադրում մը, հին հյուլեներուն իր ատոմներուն վերածվիլը՝ այդ լուծված ատոմներեն նոր կազմության հյուլեներ վերարտադրելու համար: Գործողություն մը, որ ամեն վայրկյան մեր մեջ կկատարվի: Արտաշնչած օդի յուրաքանչյուր ումպը, քրտինքի ամեն մեկ կաթիլը միթե մեռած հյուլեի մը հուղարկավարություն չէ՞: Յուրաքանչյուր մտածում, յուրաքանչյուր չարժում միլիոնավոր մասնիկներու մահվան արդյունքը չէ՞: Եվ մենք կվախնանք այդ մահեն, որ կյանքի մյուս երեսն է, կյանքեն աչտապես անբաժան, կվախնանք քիմիական այդ փոփոխութենեն, որ փոխանակ փորձի սրվակին մեջ կատարվելու՝ մեր մարմնին մեջ կկատարվի:

Հետաքրքիր է, անշուշտ, մեր օրգանիզմի ամբողջության այդ քայքայումը: Ենթադրենք՝ չուրջս կաքավող այս ալիքներեն մեկը հանկարծ կրքոտեցավ ու մեր մակույկը գրկել ուզեց: Ի՞նչ կըլլամ «ես»: Երևի քիչ մը կտապլտիմ, ինքզինքս ազատել կփորձեմ ու կբռնեմ հատակի ճամփան, և լմնցավ, այլևս չկա իմ բարդ «ըսը»: Այդ խոշոր «եսեն» կանջատվին միլիարդներով շատ ավելի տարրական «եսեր», մեկ մեծ մասն ալ կերթան ուրիշ բաղադրյալ «եսերու» մեկ բաղադրիչ տարր դառնալու: Եվ կամ, ո՞վ գիտե, կխրիմ հանկարծ հարմար կավային տիղմի մը մեջ, և Հոն կմնա օդարգել երբեմն իմ «ես» կաղմող մարմինը, կմնա հող դարեր ու դարեր, մինչև որ օր մը մեր մարդկային սեռեն առաջացած ավելի գերագույն կենդանական տեսակի մը մեկ անհատը գտնե ինծի, Հանե ինծի տիղմեն գիտական բոլոր զգուշություններով ու տանի ցուցադրելու իրեններուն այն հնադարյան «մարդ» կոչվող կենդանիին մեկ նմուշը: Մե՛ղք, որ այն ատենը զգալ չի կրնար իմ «ես», թե չէ որքա՜ն նորաստեղծ ու հետաքրքիր բաներ տեսնել կրնայի:

Ինչպես տաք է սակայն, կարծես գլուխս կայրի, և, ո՞վ գիտե՝ ինչպես զով է հիմա ծովուն հատակը, և, ո՞վ գիտե՝ ինչ աղվոր կյանք կա հոն հիմա: Ի՞նչ սքանչելի բան կըլլար, եթե ես իբրև ձուկ մը աշխարհ եկած ըլլայի, ու իմ հայրենիքս գտնվեր երկու ընդծովյա քորալե ժայռերուն իրարու հենած հովիտը, ուր սեզերու անտառ մը ավազներեն դեպի լույսը կձգտի: Միայն թե ուժեղ ձուկ մը ըլլայի: Հոն ալ օրենքը նույն է, ուժեղինն է աշխարհքը: Կզարնեի ճկուն պոչս ջրի ծալերուն, կվազվզեի խիճերուն ու քորալներուն մեջ. վերեն իյնող արևի հատագայթ մը վրայիս թեփերը կփայլեցներ, և ես նազանքով կսլանայի էգերուն քովեն, հազար քծնանքով:

Բայց ինչո՞ւ համար է, Աստվա՛ծ իմ, այս հավիտենական ծագումն ու հավիտենական չքացումը, կյանքի ու մահվան այս հավիտենական խաղը, մեկ պարապ ամանեն մյուս պարապ ամանը: Ինչո՞ւ: Ա՛խ, այդ հիմար ինչուն: Եվ ի՞նչ հիմար արարածներ են իրենց հիմար հարցերով այդ մարդ ըսված կենդանիները, և ինչ բախտավոր եմ ես, որ ձուկ ծնած եմ»:

– Պարո՛ն, քիչ մը մեջտե՛ղը նստեցեք,– լսվեցավ նավավարին ձայնը:

Բագրատ երազն արթնցածի պես նայեցավ շուրջը և մեքենաբար կատարեց Հրամանը:

Հիմա այլևս չէր դողար, ընդհակառակը, արտասովոր տաքութիւն մը կզգար մարմնին վրա:

Մոտած էին Ոսկեղջյուրին բերանը. հովը թուլցած էր: Խոշոր շոգենավ մը հաղթ գնացքով անցավ քովերնուն՝ ետևեն լայն շերտ մը ալիք, փրփուր ու ջրի ակոսներ թողնելով:

Այդ ակոսներուն մեջեն Բագրատի նավակը անցավ չիտակ դիմացի եզերքը:

Բագրատ իսկույն դուրս ցատկեց ցամաք, բայց ոտքի վրա ազատ մնալ չկրցավ: Կոթնեցավ նավակը կապելու ցցին: Թեթև մը գլուխը կզառնար:

«Ջըլա՞ հիվանդ եմ,– անցավ մտքեն:– Հիվա՞նդ, բայց ո՞վ է առողջը, մենք մեր կյանքին մեջ ե՞րբ ենք առողջ: «Էսկուլապին աքաղաղ մը մոլթեցե՛ք». խե՛ղճ Սոկրատ, երևի ան ալ հիվանդ էր, որ կյանքը հիվանդութիւն անվանեց: Սակայն պետք է տուն հասնիլ»:

Կամքի ուժգին պրկումով մը ամփոփվեցավ և սկսավ քալել: Առաջին քայլերը կթոտ էին, հաջորդները ավելի ամրացան: Իր շարժումը հիմա ահագին աշխատանք մըն էր, իր ամբողջ մտածումը սևեռած էր քալելու բարդ գործողութիյան վրա:

Շուրջը բավական բազմութիյուն կար: Քանի մը խանութներե լամպերու լույսը լայն շերտերով սանդղավոր փողոցին վրա կփռվեր:

Բագրատ դյուցազնական, գերմարդկային գործ մը կատարողի վճռականութիյամբ կելլեր ելքի ամեն մեկ աստիճանեն վեր:

Իրենց փողոցի անկյունն էր հասած: Ժպտեցավ ու չունչ առավ: Եվ կարծես մեկենիմեկ թուլցավ: Գլուխը նորեն պտույտ գալ սկսավ:

«Ո՛չ, ես պետք է տուն հասնիմ», – վճռեց ու նորեն սկսավ քալել, նախ առանց ոչինչ տեսնելու, վերջը լարեց աչքերը և իրենց տան ճակտի լապտերը ճանչցավ...

Սկսավ վազել, գոնե այնպես կկարծեր, թե կվազե: Մտավ բաց դռնեն ներս: Սեմի վրա նստած դռնապանի բարևը չլսեց: Եզերքներեն բռնած՝ մագլցեցավ սանդուղներեն վեր: Ինքն ալ չգիտեր ինչպես, ճիշտ

իրենց դռան դիմացը կանգ առավ, քաշեց զանգակը, «Հասա» մրմնջեց, ուժերը սպառեցան, ձեռքը երկարեց դռան օղակին և...

Ժ Զ

...Եվ ճակտին վրա պաղ-թաց բանի մը շոշափումը զգաց ու կամաց մը թարթիչները իրարմե բաժնեց:

Խիստ աղոտ լուսավորության մը մեջ առաջին տեսածը կես-մերկ թև մըն էր իր դեմքին, իր լանջին բոլորովին մոտիկ: Զարմացավ: Բացավ աչքերը, թարթեց ու դիտեց:

Ճերմակ հագուստի մը թեթև ծալքերուն մեջ, մազերը ուսերեն լանջը սահած իր վրա էր հակած աղջիկ մը:

«Հրեշտա՞կ», – մտածեց:

Աղջիկը ժպտեցավ և հարցուց չատ մեղմ.

– Ինծի կճանչնա՞ք, ինչպե՞ս եք:

Ձայնը ծանոթ էր, ու դեմքը՝ ավելի ևս:

Բագրատ աքանչացումով սկսավ դիտել:

Աղջիկը լուռ ու գիծոտ արտահայտությամբ ծռած էր միչտ տղուն վրա՝ զույգ ձեռքերը անոր ճակտին, ուր պաղությունն մը կզգար Բագրատ, և ուրկե պզտիկ հոսանք մը աչքին քովեն առու եղեր, այտին վրա կվազեր:

Աղջիկը զգուշությամբ ձեռքի թաշկինակովը սրբեց այդ հոսանքը և կրկնեց տխրությամբ.

– Ինծի չե՞ք ճանչնար:

– Լո՛ւ-ի՛գ,– մրմնջեցին տղու շրթունքները:

Աղջկան դեմքին պայծառ ուրախություն մը բացվեցավ: Երկու ձեռքերը ճակտի դեղոտ լաթեն հեռացնելով՝ քնքշությամբ բռնեց տղու տաք այտերը՝ աչքերը միչտ անոր աչքերուն գամած:

– Անցա՛վ, անցա՛վ,– կկրկներ բերկրանքով:

Հիվանդին այրվող այտերը այդ թաց ու փափուկ շոշափումեն տարօրինակ հաճույք մը զգացին, և Բագրատ աչքերը գոցեց այդ հաճույքը երկար վայելելու համար:

Քիչ մը եռքը, երբ նորեն բացավ, նույն թեթև մը խառնակված մազերն էին իր դեմը, նույն կարեկից դեմքը ու նույն քնքուշ նայվածքը:

– Մնկ տեղերնիդ կցավի՞: Ո՞չ: Թուֆյլ ևք, Հա՞: Եթե պիտնաք՝ ոչնաի վախցուցիք մեզի, բայց ալ անցա՛վ, անցա՛վ:

Այդ խնամոտ վերաբերումին ու գուրգուրալից ձայնին դեմ տղան ուզեց չնորհակալության բառ մը ըսել.

– Լո՛ւ-ի՛գ,– մրմնջեցին նորեն շրթունքները երախտիքով:

Ագջիկը ժպտեցավ, քիչ մը ավելի մոտեցուց դեմքը և ըսավ.

– Բժիշկը ըսավ՝ եթե մինչև առտու տաքութիյունը իջնե, լուրջ բան մը չկա: Իսկ հիմա 39-ն է միայն,– ավելցուց թևին տակեն ջերմաչափը հանելեն ու նայելեն ետքը:

Տղան թևը ձգեց վերմակին, աչքերը գոցեց ու ալ չբացավ: Շնչառութիյունը հետզհետե ծանրացավ:

– Քնացավ,– ըսավ Լուիզ, կամաց մը ետ քաշվեցավ հիվանդի անկողնեն, գնաց պատուհանը, ճակատը դրավ ապակիին ու անշարժ մնաց: Ու իր կամքին հակառակ՝ մտքին մեջ կկրկնվեր տղու հուզումով արտասանած այն երկու վանկը, որ իր անունը կկազմեին:

Երբ քիչ մը ետքը կրկին մոտեցավ անկողնին՝ ճակտի լաթը փոխելու ու դիտեց ակնթարթ մը տղու հանգչող դեմքը, ամոթի նման զգացում մը ունեցավ: Իսկույն հեռացավ, նստավ գրասեղանին քովը, ուր լամպն էր դրված՝ լուսամփոփով պաշտպանված, առավ իր ձեռագործը սեղանին վրայեն ու կուզեր բանի, բայց հագիվ քանի մը թել նետեց, որ ձեռքերը ձեռագործին հետ դեպի ծունկերը սահեցան: Գլուխը հենեց բազկաթոռի թիկունքին ու աչքերը գոցեց:.

Արթուն էր, բայց մտածումներ չկային. ուշադրութիյունը տղու շնչառութիյունն էր:

Այդ գիշեր Լուիզ բավական ուշ վերադարձեր էր տուն իր մեկ մոտակա բարեկամուհիի քովեն ու տուն մտնելուն պես ամեն բան տակնուվրա էր գտեր: Բազրատ պառկած էր 40 աստիճանը անց տաքութիյան մեջ, ու բժիշկը՝ պէխուն մոտիկ:

Իրեն պատմեր էին, որ տղան դրան մեջ էին գտեր, գիտակցութենե զուրկ ու գառանցելով, չափազանց վախցեր էին: Կանչեր էին Հարևան պարոնը, որ իր տղուն հետ եկեր, հիվանդը փոխադրեր էին իր սենյակը, հանվեցուցեր ու անկողին դրեր: Եվ իսկույն վազեր էին բժիշկ կանչելու:

Բժիշկը հանգստացուցեր էր, թե արտասովոր բան մը չկա:

Ջանացեր էր տաքութիւնը պակսեցնելու քիչ մը, հայտներ էր, որ կոկորդն է բորբոքած, պատվիրեր էր՝ գիշերը հսկեն և իրեն իմաց տան, եթե տաքութիւնը բարձրանալու ըլլա, և մեկ-երկու դեղ էր գրեր հաջորդ օրվան համար:

Լուիզ ու Էլենի միասին հսկեր էին հիվանդը մինչև կեսգիշեր: Տաքութիւնը ըստ երևույթին սկսած էր նվազիլ, ու տղան միշտ կքնանար: Լուիզ ղրկած էր Էլենիին պառկելու՝ պայմանավորվելով, որ երկու ժամ ետքը արթնցնե Էլենիին, ու ինքը երթա պառկի:

Շատոնց անցեր էր պայմանին ժամը, բայց Լոփզ հիվանդի անկողնեն հեռանալ չէր ուզեր:

Հիվանդը թեթև մը հառաչեց: Աղջիկը թոթվեց իր կես թմիրը, մոտեցավ անկողնին. քրտինքի մանր կաթիլներ պատեր էին դեմքը:

Ուրախացած ու մեղմով սրբեց դեմքը, թաց լաթը ճակտեն անդին նետեց ու ալ նորը չդրավ:

Դուրսը լույսը բացվելու վրա էր: Արդեն բավական ատեն է՝ կլսվեր շրջակա բակերեն աքլորներուն կանչը:

Լամպը մարեց: Վարագույրներեն մեկը կիսովին բացավ, ուրկե լույսի վարանոտ շերտ մը ինկավ ներս:

ժԷ

– Դեռ չարթնցա՞վ,– հարցուց Էլենին անհանգիստ՝ տղոց սենյակը մտնելով:

– Անգամ մը աչքը բացավ ու ինծի ճանչցավ, հիմա քրտնած է,– հաչիվ տվավ ընկերուհին:

– Ինծի ինչո՞ւ չարթնցուցիր մինչև հիմա:

– Անուշ քունի մեջ էիր՝ սիրտ չըրի. իմ ալ քունս արդեն փախեր էր:

Քիչ մը վերջը արդեն ամենքը ոտքի վրա էին տան մեջ, ու սկսած էր օրվան կյանքը, և արևն ալ բավական բարձրացած էր, որ դուրը զարկին,

Վասակն ու Գևորգն էին: Առաջին չոգենավով իջած էին կամուրջ և հոնկե ալ տուն հանդիպած, ուր Գևորգ քանի մը գիրք, ցուցակ ու

թուղթեր ուներ առնելու: Անոնց հաշվով Բագրատ արդեն դպրոցն էր:

Դուռը բացավ Էլենին և անոնց աղմկոտ բարևին դեմ ցուցամատը դրաւ շրթունքին.

– Կամա՛ց, պարոն Բագրատը հիվանդ է:

– Իրա՞վ,– հարցուց Վասակ տարակուսյամբ:

– Սատկի՛ թող, այնքան ըսինք, որ գիշերը եա չդառնա,– բացականչեց Գևորգ ու խոշոր քայլերով սենյակ ուղղվեցաւ:

Բայց հազիվ ոտքը սեմեն ներս դրած, տեսաւ դեղերով շրջապատված անկողինը ու անկողնին մեջ հիվանդի դժգույն դեմքը, որ խենթի պես «Բագրա՛տ» պոռաց ու նետուեցաւ դեպի անկողինը:

– Կամա՛ց, ինչ կպոռաք, արթնցնեք պիտի,– ձեռքը դեմ տվաւ Լուիզ խստութեյամբ:

Գևորգ կանգ առաւ ու անգամ մըն ալ հիվանդը դիտեց:

– Ինչ տեսակ ընկեր եք դո՛ւք,– ըսաւ Լուիզ հանդիմանութեյամբ:– Եթե գիշերը մեռներ, տեղեկութեյուն անգամ պիտի չունենայիք:

Գևորգ փոխանակ պատասխանելու՝ գլուխը կոթնցուց մահճակալի երկաթին ու սկսաւ անձայն լալ:

– Ա՛ռ քեզի ապուշ մըն ալ,– մեջ նետվեցաւ Վասակ:

Եվ դառնալով աղջկան՝ սկսաւ ամեն ինչ հարցնել բժիշկի մը մանրամասնութեյամբ և երբ ամեն բան լսեց.

– Բան չկա, բան չկա,– եղրակացուց:– Արդեն քրտներ է. երկու օրեն ինծմե ալ, քեզմե ալ առողջ կըլլա:

Քիչ մը եաքը, երբ Բագրատ աչքերը բացավ, իր ընկերներն էին դիմացը, որ կկատակեին:

– Բաղնիքդ անուշ,– ըսաւ Վասակ:

– Անդիի աշխարհեն ինչ նորութեյուն,– ըսաւ Գևորգ և մեկեն «վա՛խ Բագրատս» պոռաց, փաթթվեցաւ վիզը ու սկսաւ համբուրել:

– Անդին կորսվի՛, խելա՛ռ,– կըսեր Վասակ:– Քու դպվանքներդ անոր քրտինքը չեն չորցներ, փոխնո՛րդ բեր:

Բագրատ ժպտեցաւ, քանի մը բան հարցուց, Գևորգին անմիջապես դպրոց երթալ ստիպեց ու քանի մը կարգադրութեյուններ ըրաւ: Եվ այդչափ խոսելեն հոգնած.

– Ա՜հ, գլուխս կցավի,– ավելցուց:

– Խոսե՛, քիչ մըն ալ խոսե՛, կանցնի,– հեգնեց Վասակ:– Իր վիճակին չնայիր, դպրոցը կմտմտա: Դպրոցը առանց քեզի ալ կքալե, մի՛ վախնար:

– Գևո՛րգ, այս մարդն ալ հետդ տա՛ր, թե չէ վրաս նորեն քրտինք կուգա,– ըսավ Բագրատ թույլ ձայնով մը ու թույլ ժպիտով:

Վասակ բարձրաձայն սկսավ խնդալ.

– Աղե՛կ, աղե՛կ, կերթամ, մի՛ վախնար, պայմանով, որ քնանաս: Իրիկվան դեմ նորեն կուգամ:

Ըսավ ու Գևորգի հետ դուրս եկավ սենյակեն:

Միջանցքին մեջ Գևորգ Էլենիին թևեն պինդ բռնելով.

– Ընկերս աղեկ նայե՛, թե չէ... – ըսավ սպառնալից մատը վրան թափ տալով:

– Դուք գացե՛ք ձեր քեֆին պտտեցեք, վերջն ալ եկեք հրամաններ տվեք: «Աղե՛կ նայե». քեզի՞ պես:

– Սա աղջիկներուն լեզուն նայե՛,– դարձավ Գևորգ Վասակին:

– Ձեռքերնին մանչ է ինկեր. թևերնուն տակը ալ ձմերուկ կսղմի,– եղավ պատասխանը:

Բագրատ երբ նորեն արթնցավ, կեսօրին մոտ էր:

Ավելի հանգիստ կզգար ու գլխու ցավը անցած, միայն ամեն շարժումե գլխու պտույտ կունենար:

Էլենին ու տիկինը չրջապատեցին անկողինը: Քիչ մը խոսեցավ, օ-դը–քոլոնով մաքրվեցավ, դեղ ու սնունդ առավ ու նորեն աչքերը գոցեց:

Բայց ալ չէր քնանար:

Կարգով սկսավ վերհիշել նախորդ օրը, նավակը, կամուրջեն տունդարձը, շատ ուզեց բան մը հիշե իր տենդի ատենեն՝ չհաջողեցավ: Բայց հիշեց իր զարթնումը, Լուիզի աղվոր աչքերը, հոգածու դեմքը, անոր խոսքերը:

«Ես ինչո՞ւ քույր մը չունիմ,– մտածեց հանկարծ:– Ինչպե՛ս պիտի սիրեի, ո՞վ գիտե՝ ի՞նչ բախտավոր են եղբայրները, օրինակ, Լուիզը ըլլար այդ քույրը, ի՛մ քույրս: Այո՛, Լուիզը...»:

Դռան առնիին թեթև ճռինչը Բագրատին աչքերը հանկարծ բանալ

ովին: Եվ պգաց, որ սիրտը ցավելու աստիճան սեղմվեցավ, և ամբողջ արյունը դեմքը գարկավ:

Դռան մեջ Լուիզն էր, որ դեռ պխարկը գլխուն, ձեռնոցներով, հովանոցը ձեռքը, թևին տակը մեկ-երկու նոթայի տետրակներ՝ սեմեն ներս էր ծռած ու տղուն կնայեր:

– Հա՛, արթո՛ւն եք,– բացականչեց ու մոտ եկավ:– Հանգի՞ստ եք հիմա, լավ քնացա՞ք: Բայց հոս ինչպես մռայլ է, վարագույրները ինչո՞ւ չեն բացեր, փո՛ւլ, անչնո՛րհք էլենի:

Ձեռքի եղածները աթոռին վրա նետեց, վազեց բոլոր վարագույրները բացավ, բացավ և անկյունի պատուհանը:

Սենյակը պայծառացավ:

Արագ եկավ նորեն Բագրատի քովը և սկսավ արագ ու աչխուժով խոսիլ:

– Դեղերնիդ առի՞ք, բժիչկը եկա՞վ, ի՞նչ ըսավ, և բան կերա՞ք, դեմքերնիդ ամենևին հիվանդի դեմքի չի նմանիր, քիչիկ մը դժգույն եք, լավ քնացա՞ք: Ա՛հ, Աստվա՛ծ իմ, աս ո՛վ է չակեր Ձեր բարձը, այսպես ծո՛ւռ:

Բագրատ ոչինչ չէր պատասխաներ: Սքանչացած կնայեր աղջկան մանկան մը նման, և անոր ձայնը անուշ երգի մը պես կուգար իրեն:

Մանկան մը պես ալ հեզ ու հլու ձգեց, որ իր բարձերը չոկե, կանոնավորե, մազերը թեթև մը կարգի բերե և ուսերը ծածկե: Եվ երբ այս հարդարանքը վերջացավ, և սև ձեռնոցով թաթիկը ետ քաշվիլ կուզեր.

– Անչա՛փ չնորհակալ եմ,– հծծեց տղան:

Եվ դեռ բաներ մը ավելցնել կուզեր, որ սև ձեռնոցով թաթիկը հկավ թաւեցավ երիտասարդի շրթունքներուն ու ձայնը արգիլեց: Վերջը այդ նույն թաթիկին յուցամատը բարձրացավ աղջկան շրթունքներուն:

– Սո՛ւս, խոսիլը հիմա Ձեզի արգիլված է, մանավանդ այդ տեսակ պարապ խոսքերը: Գիտե՛մ, սարսափելի արգելք, այնպես չէ՞, չխոսիլ, չվիճել, չշարժվիլ. ճիշտ Ձեր վրա չափած-ձևված բաներ: Դուք հիմա քիչ մը հանգիստ կեցեք, երթամ արագ պատառ մը բան ուտեմ ու գամ:

Ըսավ, ժպտեցավ ու դուրս նետվեցավ սենյակեն ուրախ զվարթ, և մյուս սենյակներեն դեռ կլսվեր իր ձայնը, ուր մորը բան մը կպատմեր:

Բագրատ աչքերը գոց պառկած էր անշարժ:

Իսկ իր աչքերուն դեմ կեցած էր միշտ աղջիկը չիկնած, աչխույժ, հարդէ գլխարկին տակէն մազերու փունջեր դեմքին թափած, և այն սև ձեռնոցով մատները, որոնք տղու մազերը կհարդարեին, լուրթյուն կհրամայեին, օդին մէջ կելևէջեին և տղու չրթունքներուն կթառեին:

ԺԸ

Բագրատ յոթը օր անկողին մնաց՝ շրջապատված իր ընկերներեն ու աղջիկներեն, ընկերները՝ իրիկունը, աղջիկները՝ ցերեկը:

Այդ օտար ընտանիքին ցույց տված խնամքն ու վարմունքը ուղղակի հարազատ ընտանիքի պատրանքը կուտար:

Բագրատի մահճակալին քովի աթոռը երբեք պարապ չէր մնար, երբ տղան արթուն էր: Կա՛մ Օկյուստան էր հոն, որ կչաղակրատեր, կխնդար, կխաղար, կա՛մ Էլենին էր, որ մեկ կողմեն իր կարը կկարեր և մյուս կողմեն անվերջ կխոսեր: Ամեն փոքրիկ դեպք ամբողջ պատմուրթյուն մը կդառնար՝ անոր համով ծիծաղովը համեմված, բայց համեմատաբար Էլենին քիչ կըլլար հոն՝ գրեթե միշտ զբաղված տանու գործերով:

Շատ ավելի հաճախ Լուիզի վրա կիյնար այդ պարտավորուրթյունը: Եվ միշտ լարված ու անհանգիստ բան մը կար հիվանդի ու հիվանդապահի հարաբերուրթյան մեջ, երբ աթոռին վրա Լուիզն էր նստած:

Իրողուրթյունը հետևյալն էր:

Այն առաջին կիրակի իրիկունը, երբ Բագրատ եկեր և իրենց սենյակը վարձեր էր, Լուիզ գոհ էր մնացած. «Շնորհքով տղա է», – մտածեր էր: Տղաքը եկեր էին, սկսած էր աղմկոտ կյանքը, և Բագրատի դեմքն ու նկարագիրը սկսած էր օր օրի աղջկան ավելի «շնորհքով» երևիլ: Երիտասարդի զվարթ լրջուրթյունը, անոր միամիտ ու միշտ մաքուր կատակները, անոր ոգևորուրթյունը, մտավոր բարձրուրթյունը և պարզ ու ընկերական վերաբերումը հետզհետե ավելի կգնահատեր աղջիկը:

Երբ միասին բան մը կարդային առանձին, այդ առանձնուրթենեն հաճույք կզգար Լուիզ, և անոր ֆրանսերեն ընթերցումը շատ կսիրեր: Երբ դաշնակի վրա Բագրատի ներկայուրթյան կտոր մը կնվագեր, ինքն ալ կզգար, որ իր զարնվածքը տարբեր թափ մը կառներ:

«Շնորհքով աղային» չուտով հայհոյուած էր «ազնիվ տղա է» ձեւակերպումը, և այդ «ազնիվ» բառը Լուիզի հոգիին մէջ թունաւոր նստած հասիլին կնճռներ, որու փետուրներուն ջերմութեան մէջ պահուած են ամեն տեսակի ընտիր հատկութիւններուն հավկիթները:

Հիմա, որ վեց ամիսը արդէն անցած էր, ալ դադրած էին համակրական ածականները, որու փոխարէն, սակայն, համակրանքը ինքը չափազանց աճած էր և հատկապես չեշտուած էր տղու հիւանդանալեն ի վեր: Հաւնելուն ու համակրանքին փաթթուելը էին գուլթի և նվիրման բուն կանացի զգացումները: Եվ հիմա աղջիկը պարզ կգիտակցեր, որ իր դաներեն մասնաւոր անհամբերութեամբ մը տուն կչտապեր՝ և չիտակ հիվանդին սենեակը:

Եվ անկողնի բարձերուն վրայեն անոնց մէջ դարձած խոսակցութիւնները ավելի ու ավելի անսովոր կղառնային, ավելի անձնական ու ավելի սրտակից: Կխոսակցեին այն տեսակ բաներու մասին, որ Բագրատ ո՛չ մեկուն ըսած չէր. կպատմեր իր մանկութենեն, իր դպրոցականի տպավորութիւններեն, իր պատանեկան զգացումներեն, կնկարագրեր իր մայրը, որ հազիվ պատանի կորանցուցեր էր, կխոսեր իր ճգտումներուն ու նեղքին հակումներուն վրա:

Աղջիկը կլսեր ականջ կտրած, ինքն ալ կհարցներ, ինքն ալ կպատմեր իր կյանքեն փոքրիկ դրվագներ: Կամ կբանար տղու ցանկացած գիտական գրքերեն ու հոլվածներեն մեկը ու կկարդար անոր համար և՛ հաճույքով, և՛ հետաքրքրութեամբ:

Իրիկուն մը մինակ էին նորեն: Գետրգ գործով տեղ էր գացած, և սկսած էր աղջամուղջը, և այդ կես-մութին մէջ կխոսեին երկուքով ու ցած ձայնով, և երկուքն էլ վոհ էին թե՛ այդ մութեն, թե՛ այդ փսիաքեն:

Բագրատ կխոսեր նորեն իր ընտանեկան պայմաններեն, երբ հանկարծ եղրակացուց.

– Բայց ամեն բանեն ավելի քրոջ մը պակասն է, որ ինծի միշտ զգալի է եղած: Սիրող, քնքուշ, խնդայի աղջիկ մը, բնութիւնը զլացած է ինծի ատիկա և ատով շատ բան է զլացած:

Բագրատ այս բառերը արտասանած էր սրտանց և հուզումով: Աղջիկը ըմբռնեց այդ բառերուն ետևի իմաստը և մութին մեջեն տղու

աղուտ երևցող դեմքին հառած պահ մը լռեց ու հանկարծ ինքն իր ձայնեն վախնալով րսաւ.

– Սակայն աշխարհիս վրա քիչ մը ուրիշ կերպի քուլլեր ալ կան, որոնք քրոջ մը պես ու քրոջ մը չափ կրնան սիրել: Եթե բնութիւնը պլացած է Զեզի հարազատ քույր մը, այս երկրորդ տեսակը ալ չկարծեմ, որ պլանա:

– Իրավո՛ւնք ունիք, այդ կողմեն գանգատելու տեղիք չունիմ, մանավանդ այս վայրկյանիս:– Պատասխանեց Բագրատ և շատ հանդիստ ու բնական շարժումով մը երկարեց թևը, բռնեց աղջկան ձեռքը ու կամաց մը սեղմեց:

Եվ այլևս ո՛չ մեկը ձգեց և ո՛չ մյուսը եւս քաշեց իր ձեռքը: Երկուքով մնացին իրիկվան մթնշաղին մեջ լուռ ու անշարժ, մեղմորեն իրարու ձեռք սեղմած:

– Օրիո՛րդ Լուիզ,– ընդհատեց վերջապես տղան լռութիւնը,– չգիտեմ ճշմարիտ՝ ինչպես հայտնեմ Զեզի իմ զգացումներս. Դուք անչափ բարի եղաք դեպի ինծի և անչափ ազնիվ:

– Բայց Ձեր այդ խոսքերը ինծի կվիրավորեն,– ընդհատեց աղջիկը երիտասարդին խոսքերը՝ միշտ անոր ձեռքը սեղմելով,– քիչ մը առաջ քրոջ մասին կխոսեիք:

Բագրատ ոչինչ չըսաւ, հանկարծ չարժում մը ըրաւ, քաշեց աղջկան բռնած ձեռքը քիչ մըն ալ վեր ու պինդ իր շրթունքներուն փակցուց:

– Ինչ կընեք, ինչ կընեք,– կկրկներ խեղճ աղջիկը հուզված և այլայլած փսփսուքով մը:

Ու քաշեց ձեռքը, ազատեց, ելավ ոտքի:

– Ալ երթա՛մ,

– Նեղացա՞ք, օրիո՛րդ:

– Նեղանա՞մ, ինչ պատճառով, ո՛չ, ամենևին, բայց ալ երթամ,– կմկմաց աղջիկը կցկտուր ու դողդոջ:

Ու դուրս ելավ:

Բագրատ պառկած էր անշարժ, թևը պարզած անկողինեն դուրս միշտ այն դիրքով, ինչ դիրքով որ աղջիկը իր ձեռքը ազատած էր:

Բագրատ երկու շաբաթվան չափ ստիպվեցավ տունը մնալու, թեև անկողնեն ելած էր արդեն: Մեկ-երկու անգամ ուզեց դպրոց երթալ՝ ընկերները չճգնեցին: Ինքն ալ համոզվեցավ, որ չէր կրնար, թուլլ էր դեռ:

Այդ միջոցին օգտվելով՝ կարդաց քանի մը ամիսներէ ի վեր դիզված մանկավարժական թերթերը, որոնց ամենեն աչքի իյնող հոդվածները միայն թղթատեր էր թեթևակի. ժամանակ չէր ունեցած:

Ընթերցումեն հոգնած ատենն ալ տնեցիներուն հետ ժամանակ կանցըներ: Կերթար Լուիզի սենյակը ու զաշնակ նվագել կուտար: Խոսքի կբռնվեր տիկնոջ հետ կամ կխաղար Օկյուստայի հետ: Եվ երբեմն այն աստիճան ամեն բան մոռցած խաղին կնվիրվեր, որ բոլոր տնեցիներու զարմանքն ու ծիծաղը կշարժեր միաժամանակ:

– Տարօրինակ մարդ է,– կըսեր տիկինը:

– Ինչպե՞ս կսիրեմ քեզի,– կկրկներ Օկյուստան՝ տղու հասակն ի վեր ցատկելով:

Որուն իբրև պատասխան տղան զգվանքը կըլլար կամ համբույրը:

– Բրոջս չատ երես կուտաք,– կնկատեր Լուիզ՝ ինքն ալ իր նկատողութենեն կարմրելով:

Վերջապես երկուշաբթի մըն էր, որ Բագրատ սրտի սեղմումով ոտքը դպրոցին ներս դրավ:

– Տեսուչը... – շշուկ մը անցավ դասարանեն դասարան: Մեծ ու պզտիկ ամենքը ժպիտ մը ունեին իրենց դեմքերուն վրա: Ամենքը շուրջը կդառնային, ավելի մեծերը շուրջը խմբված կխոսակցեին պատահական վստահ ու ջեմ չնչտերով:

Երբ իր սենյակը քաշվեցավ ու գլուխը վերցուց բան մը հուշագրելու, գրել չկրցավ: Ձախ ձեռքով գոգից դեմքը ու պահ մը անշարժ մնաց.

«Ինչ հաճույք այսքան թարմ ու մաքուր հոգիներն սիրվիլը, ատոնց ներշնչելը, ատոնցմե ներշնչվիլը: Մարդկութեյան մատաղաշ ու հատուկտոր մեկ խոտ մըն մը հոգին վոնջի մը պես մոքիդ թելովը կապած ձեռքդ ունենաս. ինչ գորով կզգա մարդ ու ինչ կորով»:

Մեկեն ցատկեց ոտքի. դասի զանգը տված էին:

– Ահագին ժամանակ կորավեցավ,– մրմնջեց ինքն իրեն: Քանի մը նկար, քարտեզ մը ու գիրք մը թևին տակ գարկած՝ դասարան վազեց,

ուր տեսչի դասերուն կարուտած վառվռուն աչքեր անհամբեր կսպասեին:

Երբ զանգը դասի վերջը ազդարարեց, Բագրատ հիշեց, որ դասարանն է: Խոսքը կտրեց, բարևեց ու դուրս ելավ: Ամբողջ դասարանը պահ մը լուռ էր բոլորովին: Ոմանք նույնիսկ բարևի համար ոտքի ելլելու մոռցան: Բագրատ ինքն ալ ինչ պատահածը չէր հասկնար, միայն կզգար, որ երբեք այդ աստիճանի սրտանց խոսած չէր, և մեծ հաճույք մը կծավալեր ջիղերուն մեջ:

«Այսօր գործ մը տեսա»,– մտածեց ինքնասիստահ և ուսուցիչներուն սենյակը մտավ: Հոն տաք խոսք էր բացված վարչական խնդրի մը վրա: Ուրքով-գլխով վեճին մեջ նետվեցավ: Եվ երբ քիչ մը վերջը ուսուցիչները ցրվեցան իրենց դասարաններուը, Բագրատ ուժասպառ ակնթարթ մը չունչ առնելու համար նստեցավ:

– Տե՛ս, նորեն բոլոր արյունդ գլուխդ է զարկեր,– ըսավ Գևորգ հանդիմանելով,– քիչ մը ուժերդ խնայե՛:

– Ժամանակ չկա,– պատասխանեց Բագրատ կարճ ու սանդուղներեն վար վազեց:

Եթե ամբողջ օրը Բագրատ ոգևորություն էր, ամբողջ իրիկունն ալ պայրույթի մարմնացումը եղավ:

Տղոց արձակման առենն էր, որ Թաղի եպիսկոպոսին քարտուղարը եկավ ու քանի մը չնչին պատճառներ մեջ բերելով՝ հայտնեց Թաղական խորհուրդի որոշումը, որով կիրակնօրյա վարժարանը այլևս դադրեցնել կպատվիրեր:

– Ինչպե՞ս, ինչո՞ւ,– պոռաց Բագրատ ու շունչը չիտակ եպիսկոպոսի բնակարանը առավ:

Եպիսկոպոսը մեծ քաղաքավարությամբ ընդունեց հյուրը, սկսավ խոսակցիլ հետը դպրոցի, օդի, ազգային խնդիրներու և եկեղեցիին մեջ կանանց հանած աղմուկի մասին, ուրկե չատ կդժգոհեր:

Բագրատ այդ բոլորեն համ չառնելով՝ խոսքը իրեն հետաքրքրող հարցին դարձուց:

Հոգևորականը երկար հառաչաքանով մը կիրակնօրյա վարժարանի մը պես ձեռնարկի մը ազնվությունը ապացուցանելեն և ինքը անձնապես այդ դործին հանդեպ ունեցած մեծ համակրանքը հայտնելեն ետքը ավելցուց, թե այդ դասերուն շարունակությունը առայժմ ընդհատելը

ավելի հարմար էր պատած թաղական մեծարգո ժողովը՝ ինչ-ինչ նկատումներ աչքի առաջ ունենալով: Իհարկե, ժամանակավոր բան մըն էր ասիկա:

Բագրատ իսկույն չանաց մեջ բերված չնչին պատճառները ջրել, իսկույն եպիսկոպոսը համոզել կուզեր, որ միջամտե ու թույլ չտա այդպես անմեղ գործի մը խանգարումը:

Սրբազանը երիտասարդի բոլոր ըսածները կընդուներ, մեջեմեջ չողոքրթիչ բառ մը կթուցներ տեսչի հասցեին, բայց և այնպես հաստատ կպնդեր, թե խնդիրը իրմեն անկախ էր, և պետք է ընդհատվեին կիրակնօրյա դասերը:

Բագրատ ոտքերապատույտ ճամփաներու անվարժ՝ սկսավ տաքնալ և ավելցուց.

– Սրբազան, ինծի կմնա միայն ենթադրել, որ այս ամենուն տակը պարզապես քմահաճույք մը կա, իսկ այս տեսակ գործերու մեջ անհատներու քմահաճույքը անարդ ու հանցավոր բան մըն է. հասարակական գործը քմահաճույք չի տանիր:

Սրբազանը երկար, գեղեցիկ մորուքը շոյեց և շատ խորհրդավոր շեշտով մը ըսավ.

– Կան բաներ, զավա՛կս, որոնց մասին պարզորեն խոսիլը անհարմար է, վնասակար: Ինչ կվերաբերի քմահաճույքին՝ այդ կողմեն սպասիր եղեք: Ո՞վ կհամարձակի իր անհատական քմահաճույքովը այս աստիճանի բարի ու անմեղ գործ մը խանգարելու, և միթե ես կթույլատրեի՞:

Բագրատ ելավ ոտքի:

– Աղե՛կ, սրբազան Հայր, մնաք բարո՛վ, բայց այս հանելուկը ես պիտի լուծեմ:

– Ինչ հանելուկ, որդյա՛կ, երթա՛ք բարով: Աստված օրհնե:

Բայց հապիվ երիտասարդը ոտքը սեմեն դուրս էր հանած, որ եպիսկոպոսի չրթունքներեն ժպիտը անհայտացավ ու բարկությամբ շարունակեց.

– Սա լակոտի լեզուն նայե՛. նոր հավեր են ելեր՝ երկաթե ձվեր կածեն: Ես քու ոտքդ հոսկե կկտրեմ: Ապերախտնե՛ր, եկեղեցիին ստակները կուտեն, եկեղեցականներու երեսեն քանի մը ոսկի կառնեն սմսական

և դեռ... ապերախտնե՜ր. «Էչ ծանեաւ գմսուր իւր, և Իսրայէլ զտէր իւր ոչ ծանեաւ», «Եւ ապերախտութիւն տանն Իսրայէլի կերաւ...»:

Հոս իր հատուածը ընդհատեց, երկու անգամ ամուր զարկավ իր առջևի սեղանին վրա դրված զանգը և բարկութեամբ ներս մտնող ծառայի երեսին պոռաց.

– Ինծի սուրճ մըն ալ:

Ի

Շաբաթները իրար ետևե կգլտորեին:

Եվ դպրոցին մեջ ամեն բան ըստ սովորականին առաջ կերթար կարծես, բայց ներքուստ փոխված բան մը կար, որ արագ կերպով կաճեր ու զգալի կդառնար ծածուկ հիվանդութեան մը պես:

Բագրատի բացառիկ դիրքեն ու անոր ինքն իր գլխուն վարմունքեն արդեն իսկ դժգոհ թաղականները եպիսկոպոսի հետզհետե չեչտվող ու ձև առնող ակնարկութիւններու ազդեցութեան տակ բոլորովին սկսան հակառակ խոսիլ Բագրատի դեմ:

Եպիսկոպոսին սենյակը, թաղային խորհրդարանին մեջ և այցելութիւններու միջոցին թաղի ջոջերուն տուները հիմա շատ կխոսվեր դպրոցի անկարգապահութեան, տղոց երես առնելուն, եկեղեցի քիչ հաճախելուն, ուսուցիչներու ամսականներուն չատութեան, դպրոցին մեջ կրոնական ուսումներու անկման, ջերմեռանդութեան, հնազանդութեան և խոնարհամտութեան պակսելուն վրա:

Թաղականներեն մեկը, որ պատահմամբ դպրոց էր մտեր ու տեսեր էր, թե ինչպես տղաքը կվազվզեին ազատ ու համարձակ, առանց մասնավոր ուշ դարձնելու ուսուցիչներու ներկայութեանը և մանավանդ իրեն՝ թաղականին ներկայութեանը, գացեր էր և ընկերներուն այսպես էր եղրակացուցած.

– Չէ՛, մեր դպրոցը ավրվեցավ: Ալ ո՛չ մեծի հարգանք է մնացեր, ո՛չ պզտիկի, ո՛չ ալ պարկեշտութեան: Տղաքը կաներեսնան ու կանատվածանան այդ չենքին մեջ: Ազգը մեզմե հաշիվ պիտի պահանջե վերջը: Այսպես չըլլար, մենք ենք պատասխանատուն:

Գալով հոգաբարձուներուն, որոնք սկիզբը մեծ ոգևորութեամբ

կալեր էին գործին, իսկապես դպրոցը նորել ու բարձրացնել էին ցանկացած և Բագրատին ամեն կերպով հենարան էին դարձած, իրենք ալ սկսեր էին քիչ-քիչ ենթարկվիլ քննադատութեան ու մեղադրանքի: Եվ Թուլցեր էին. մեկ մասը Թաղականներու կարծիքեն ըլլալ կխաղար և եղած դժգոհությունները իր վրայեն նեռել կջանար, մյուս մասն ալ, որ ավելի գործեն հասկցող մարդիկ էին, տեսնելով հովերուն փոխվիլը և մեծամասնության բռնած նոր ուղին, Թափ էին տվեր ձեռքերնին ու դացեր էին իրենց սեփական գործերուն՝ դանգատելով, Թե.

– Չարժե՛ր այս ժողովուրդին համար աշխատիլը. պարապ բան է, գործ առաջ չերթար:

Դպրոցին սեմին վրա խաղցված այս ողբերգական կատակերգությունը չուշացավ իր ազդեցությունը դպրոցի մեջն ալ ցույց տալու:

Ուսուցիչներեն ոմանք, հիներեն, որոնք վարժված էին իրենց դանդաղ, հնադարյան, միօրինակ աշխատանքին, շատ կնեղվեին դպրոցի արդի խիստ կարգուկանոնեն և լարված ու տեսչի կողմեն միշտ հսկվող և ստուգվող աշխատութեենեն, ինչպես և նյութի ու ավանդման նոր պահանջներեն: Բայց հացի խնդիր էր, կլռեին ու կհարմարվեին, քանի որ տեսչին պիրքը ուժեղ կենթադրեին:

Եվ հիմա անոնց քիթին շատ շուտով հասավ բարերար անհամեմատչության չունչը: Թեև մանր, բայց այն տեսակ դեպքեր պատահեցան դպրոցին մեջ, որ Բագրատ անսովոր անհանգստություն մը զգաց:

Մինչև որ օր մը եկավ Սարգիս ու այդ ձեռքի տակե խաղցված բոլոր աղտոտությունները Բագրատին առջևը մերկացուց: Երիտասարդը իր դեմ լարվող այդ գծուծ ու նենգ դարանները երբ լսեց, իր առաջին զգացումը զզվանք եղավ, և առաջին մտածումը՝ Թքնել վրանին ու հեռանալ: Բայց իսկույն դսպեց իր նողկանքը՝ ավելի հանգիստ մտածելով.

«Անոնք իրենց եղանակները ունին գործ տեսնելու և իրենց ըմբռնումները: Թքնելով բան չի փոխվիր, պետք է մաքառիլ, դիմադրել, ուժ կազմել ու հարկադրել»:

Իսկ Սարգիս կկրկներ, կարծես ընկերը բարկացնելու համար,

– Քեզի կըսեմ՝ գնա՛ տուներնին, խոսե՛, կատակե՛ կանամց հետ, սրճարանը նստե՛ հետերնին, օղի խմե՛ ու ազգային գործերեն խոսե՛,

մեջեմեջ ալ չողոքորթին՝ հարմար տեղը եկած ատեն, քիչիկ մը փեսացու խաղա՛, սանկ քիչիկ մը, անորոշ հույսեր մը տալու չափ, և պիտի տեսնես, որ գործերդ ոտքեր կառնեն ու կքալեն: Անոնք ալ մարդ են, դրամի տեր և թաղական, եթե հաջողիլ կուզես, պետք է չոյես անոնց թույլ կողմերը:

– Այդ աղվոր խրատներդ պահէ՛ քեզի: Կրնա օր մը պետքի գալ: Եվ քանի որ այդպես անոնց բոլոր բաները պիտես՝ բացատրէ՛ նայիմ՝ ինչո՞ւ արգիլեցին կիրակնօրյա դասերը:

– Տո՛, միամի՛տ, ատկե պարզ ի՞նչ կա՝ նախանձ: Եպիսկոպոսը ինքը անպետքին մեկն է, իսկ թաղին մեջ սկսեր էին խոսիլ քու եռանդիդ ու անձնվիրութեանդ վրա: Ահա՛ մեկ հրամանով մը ամեն ինչ փոխեց: Հիմա արդեն թաղին մեջ ամենքը գիտեն, որ քու ըրածդ ժողովուրդի աչքին փոշի փչելու համար էր միայն, և երբ տեսար, որ այդ թաղին ժողովուրդը քու կարծածիդ պես հիմար չէ ու չի խաբվիր, ձգեցի՛ր այդ պարապ ու չինծու դասերը ու հեռացար:

– Բայց չէ՞ որ իրենք դադրեցուցին:

– Դե՛, գնա՛ անոնց տունները մեկիկ-մեկիկ պտտե ու հասկցո՛ւր. տուները հերիք չէ, սրճարաններն ալ, չուկան ալ, ով գիտե՝ կարելի է խոսքիդ հավտացող մը գտնես:

Եվ Սարգիս սկսավ իր ամբողջ մարմնովը առատ-առատ ու համով խնդալ:

ԻԱ

Եվ այս անախորժ պայմաններուն մեջ Բագրատի հոգիին թարմութիւն ու զվարթութիւն տվողը Լուիզն էր: «Քո՛ւյրս», – կկրկներ հաճախ ինքնիրեն:

Անոնց մտերմութիւնը ո՛չ թե օրեօր, այլ ժամեժամ կաճեր, թեև արտաքուստ ոչ մեկ փոփոխութիւն մտած չէր իրենց հարաբերութեան մեջ: Տղու Հիվանդութենեն ետքը այդ ընտանիքի ու երիտասարդներու մեջ եղած կապն ու կյանքը այն աստիճան սերտացած էր, որ Բագրատի ու Լուիզի Հորդող մտերմութիւնը այնքան ալ աչքի չէր զարներ:

Մայիսի ու Հունիսի աղվոր օրերն էին:

Տղաքն ու աղջիկները միասին հաճախ պտույտի կելլեին իրիկուն-

նները: Ու կերթային բավական հեռուները՝ Շիշլիի վերերը, դաշտերը: Կվագեին, կխաղային, կատակ ու ծիծաղ և հոգնաբեկ կիյնային անկողին:

Երբեմն կիջնեին ծովեզերը, երբեմն ալ նավակ կնստեին լուսին պիշերները: Բագրատ ու Գևորգ կթիավարեին, կերգեին աղջիկները: Երգ ու հնչուն ծիծաղ, խոսքն ու թիերուն ճողփյունը կհյուսվեր իրար, և ճերմկոտած նավավարը իր նավակին քիթը նստած ինքն ալ կխնդար «ճահիլներուն» հետ:

Մեկ-երկու անգամ ավելի հեռավոր պտույտներու ալ գացին չոգենավով կիրակի օրերը, «կիրակնօրյա պեղչված դասերուն վրեժը առնելու», ինչպես կըսեր Գևորգ:

Իսկ Վարդավառի կիրակին մութուն, առաջին չոգենավով մեկնեցան Մնծ կղզին և անմոռանալի օր մը անցուցին. վա՛րը՝ ծովեզրյա ճաշարանին մեջ, վե՛րը՝ կղզիին գագաթը և չո՛ւրջը՝ ծոցերուն ու անտառակներուն մեջ:

Գինին ալըված, բնութենեն հրահրված, տրամադրությունները չատ բարձրացան. զվարթությունը խենթ ոգևորության մը դիմակը հագավ: Անտառին մեջ պահվռտուք խաղացին, բայց չուտով իրենց թաքստոցներուն մեջ անհամբեր դուրս թափեցան մեծ ճամփուն վրա ահագին աղմուկով: Էշեր վարձեցին, Փրինկիպոյի համբավավոր ճերմակ էշերը, և փառավոր իշարշավ մը կատարեցին՝ հանդիպող զբոսաշրջիկներուն ծիծաղ և Օկյուստային հրճվանք պատճառելով:

Բագրատ և Լուիզ, թեև մյուսներեն նկատելի չըլլալու համար միշտ զգույշ, բայց մեծ դժվարությամբ ծածկելու կհաջողեին իրենց հոգիին խայտանքը և այն անսահմանելի ձգողությունը, որ այդ երկու էակները դեպի իրար կքաշեր: Ամբողջ օրը իրարու չուրջ կդառնային, իրարու կից ըլլային թե իրարմե հեռու: Հոգիները միշտ իրարու հետ էին, իրար կհեռևեին ու իրար կզգային: Իրարմով կապրեին:

Վերադարձան վերջին չոգենավով, արդեն գիշերով: Երբ չոգենավեն ոտքերնին կամուրջ դրին, ամենքն ալ հափրած էին օրվան տպավորություններեն, բայց օդեն և ծովեն չունչեն, իսկ այն երկուքը երջանիկ էին:

Բագրատ ամբողջ գիշերը քնանալ չկրցավ: Կվերհիշեր իր ու Լուիզի մեջ անցած ամեն բան, իրենց մեջ զարձած ամեն խոսք ու ակնարկու-

թյուն, իրենց աչքերուն անվերջ իրար որոնումը: Իզուր քանի մը անգամ փորձեց ընդհատել, մոռնալ: Անկարելի էր. վայրկյան մը եւոքը նորեն հոն կզառնային մտքերը:

Եվ ճմլող կարոտ մը կզգար, գրկելու, գգվելու ու համբուրելու այլեւս անքողարկելի պահանջ մը: Գիտեր, որ այս ամենը լավ չէր հաշուվեր «քույր» ըմբռնումին, և որ իր զգացումները բոլորովին դուրս էին եղեր «քրոջ» մը գծած սահմաններեն: Բայց ի՞նչ կրնար ընել. իրողութեան դեմ աչքերը գոցելը ի՞նչ իմաստ ուներ:

«Ուրեմն դո՛ւն ալ աղջկան մը հետ մոտիկ ըլլալ չես կրնար, միայն իբրեւ ընկեր, իբրեւ մտերիմ», – դիմեց ինքն իր Հոգիին քանի մը անգամ կես մը մեղադրանքով ու հանդիմանութեամբ, կես մը ինքզինքը հեգնելով և իբրեւ անխուսափելի եզրակացութիւն, բայց ամեն պարագայի ո՛չ անախորժ:

Լուսյի մոտ էր, որ թմրեցավ և արթնցավ շատ ուշ:

Մեռելոցի երկուշաբթի էր, և դպրոցի գոց ըլլալեն օգտվելով՝ Գևորգ կանուխեն ելեր էր ու անցեր Ստամպոլի կողմը՝ խանները:

Բագրատ ծուլութեամբ ելավ, սեղանին վրա պաղած կաթով սուրճը խմեց և սկսավ երկար-բարակ և անսովոր խնամքով սանրվիլ, հարդարվիլ ու հագվիլ:

Ներս երթալ կուզեր ընդհանուր սրահը, բայց կսպասեր, որ նախ Լուիզի ձայնը լսե ու դիտնա, որ ան ելած է իր սենյակեն:

Պահ մը նստեցավ իր գրասեղանին առջևը, անորոշ ու անհանգիստ շարժումով իր թղթերը կխառներ, երբ լսեց ու ճանչցավ Լուիզի դռան բացվիլը, անոր մեղմաձայն խոսվածքը մորը հետ և թեթեւ քալվածքը:

Քայլերը սկսան մոտենալ. տղան նախ կարծեց դեպի բնակարանին դուռը և շատ կուտրվեցավ, բայց իսկույն սրտի սեղմումով զգաց, որ քայլերը մոտեցան իր դռան:

Մեղմորեն դուռը բախեցին:

– Մտե՛ք:

Դուռը բացվեցավ, և երևցավ Լուիզ բոլորովին հագված դուրսի հագուստով, հարդե լայնեզր գլխարկը գլխուն, մեկնելու պատրաստ: Սեմին վրայեն արագ, քննական ակնարկ մը պտտցուց սենյակին մեջ և

քայլ մը ըրավ դեպի տղան, որ տեղեն չերերաց, մնաց իր նստած տեղը, միայն կարասի ժպիտով մը իր երկու ձեռքերը երկարեց աղջկան:

– Ուզեցի բարի լույս ըսեմ ձեզի,– ըսավ Լուիզ խնդալով:

Բագրատ երկու ձեռքով սեղմեց աղջկան պարզած ձեռքը և պարզապես խոսովանեցավ.

– Իսկ ես ամբողջ գիշերը չեմ քնացած, ամբողջ գիշերը դուն էիր աչքերուս դիմը և հոգիիս մեջ:

Լուիզ քնքշանքով քիչ մըն ալ մոտեցավ, ազատ ձախ ձեռքը դրավ տղուս ուսին: Եվ աղջիկը վերեն իր լայն պխարկին տակեն, տղան վարեն իր նստած դիրքեն հարբած աչքերով իրար նայեցան վայրկյան մը:

Եվ տղան տեսավ, որ աղջկան դլուխը կամաց-կամաց վար խոնարհիլ սկսավ: Նախ անոր խոպոպիկները զգաց, որ պխարկին տակեն ինկան իր ճակտին, տեսավ աղջկան աչքերուն գոցվիլը, եաքը տաք շունչ մը վազեց ընչացքներուն մեջեն ու թավիշի մեղմ շոյանք մը քսվեցավ իր շրթունքին:

Երբ Բագրատ թևերը բարձրացուց, որ գրկե, աղջիկը արագ եաս քաշվեցավ, հեռացավ քայլ մը և իր սև ձեռնոցավոր թաթիկը դնելով շրթունքին՝ անշարժութիւն պատուիրեց:

– Դաս ունիմ,– ըսավ հուզումեն դողացող ցած ձայնով մը ու խելքե հանող ժպիտով մը:

Բայլ մըն ալ ըրավ եաս ու փախավ սենյակեն:

Եվ բնակարանին դուռն էր, որ բացվեցավ ու գոցվեցավ արագ:

Բագրատ անշարժ նստած էր միշտ, ինչպես որ այն հմայիչ սև թաթիկը պատուիրած էր, և կզիտակցեր, որ ապրիլ ըսվածը բախտավոր բան մըն է աշխարհիս երեսին:

ԻԲ

Օրվան պտույտը ավարտած էին, ու տղաքը՝ արձակված:

Բագրատ մինակ էր իր զբոսյին մեջ ու սենյակը քաշված՝ օրվան ցուցակները, հաշիվները, նկատողութիւնները աչքե կանցըներ:

Քանի մը տող ալ ինքը ավելցուց հոս ու հոն, մեկ-երկու թուղթ ստորագրեց: Հանեց ծոցեն փոքրիկ տետրակ մը, քանի մը տող ալ հոն

գրեց: Վերջը ժողվեց բոլոր տետրակներն ու թուղթերը, լեցուց գրպացը և կղպեց:

Երբ ոտքի ելավ և արդեն դուրս ելլել կուզեր, որ դուռը զարկին: Դպրոցին դռնապանն էր, որ ետ քաշվելով՝ ճամփա տվավ Վասակին:

– Խեր ըլլա. դուն ալ մեր դպրո՞ցը: Աս ի՞նչ բացառիկ պատիվ մըն է մեզի: Բայց ինչո՞ւ այդպես լուրջ:

– Լո՞ւրջ. ամենևին: Ընդհակառակը, եկեր եմ վրադ խնդալու համար: Դուն մտածումներդ և զգացումներդ կեղծել չգիտես, ատոր համար ալ սրտանց կարելի է խնդալ քու վրադ:

Այս խոսքերը սակայն այնքան լուրջ դեմքով ու տխուր ձայնով մըն էին ըսված, որ Բագրատ տեսակ մը վախ զգաց: Մոտեցավ անոր և մտերմորեն հարցուց.

– Ի՞նչ ունիս, Վասա՛կ, քեզի բան մը պատահեր է:

– Ինծի պես մարդուն բան չի պատահիր,– պատասխանեց ընկերը նմանապես շատ դառն չեշտով մը և իսկույն չպլուննակեց,– լսե՛, դուն աշխարհը կսիրես, չէ՞: Հիմա ես քեզի կըսեմ, որ աշխարհ ըսածդ անխորհուրդ ու ապուշ բան մըն է և անհրապույր: Նույնիսկ ամենեն ավելի ցանկացված բաներն անգամ ընդհանուր տաղտուկը ավելի չեշտելու կծառայեն: Եվ մեր ամենուս կյանքը և կյանքը ինքը ընդհանրապես աննպատակ և անպիտան ստեղծագործություն մըն է, որ բնությունը իր ձանձրույթի վայրկյանին է չաղվեր: Ուրախությո՞ւն կըսենք, երբ անհամաստություն ինքզինքը կմոռնա: Երջանկությո՞ւն կըսենք, երբ հոգին բոլորովին կապուշնա: Իսկ հոգի ըսածս ալ միլիոնավոր բջիջներու զանգված մըն է զարմանալի, որ միայն մեկ պաշտոն ունի. զգա՛լ, որ այս բոլորը, որ կա, բացարձակ պարապո՞ւթյուն մըն է: Լսեցի՞ր: Դե՛, ես քու ճառիդ նյութը տվի, հիմա դուն ըսածներս հերքել սկսե՛, ու ես ծիծաղիմ, չէ՞ որ լավատես մըն ես:

Բագրատ ձեռքերը ետև կապած և գլուխը թեթև մը հակած՝ քանի մը անգամ գնաց ու եկավ սենյակին երկայնքովը, ընկերոջը առջևեն և բոլորովին լուռ: Վերջը եկավ, կանգ առավ չիտակ Վասակի դիմացը և ծանր-ծանր ըսավ.

– Հերքելու ոչինչ չունիմ, բոլոր ըսածներդ կետ առ կետ գուտ ճշմարտություն է:

– Ինչ, ուրեմն դուն ալ այդ կարծիքին ես և այդպես հանդա՞ր,– պոռաց Վասակ՝ ընդոստ չարժումով մը ոտքի ցատկելով:

– Կեցի՛ր, նախ իրար հասկնանք: Դուն քու եղրակացութիւններդ հանելու ատեն բնականաբար քու սեփական կյանքդ ունիս աչքի առաջ և հանած եղրակացութիւններդ չիտակ են: Միայն թե քու կյանքդ ինքը ապրելու սխալ ձև մըն է: Ինչի՞ է նման կյանքը, երբ որոշ դեր մը չես խաղար, երբ կանոնաւոր ու պիտանի աշխատանք մը չունիս օրը օրին:

– Այո՛, բացիլ խնդալուն ծայրը: Ուրեմն կհրամայես, որ աշխատանք մը ունենամ: Բարի՛, օրինակ, ինչ աշխատանք կհրամայես, որ ունենամ: Կարծեմ ըսած եմ քեզի, որ լեզուներ սորվելու դյուրութիւն եմ ունեցած, և եղած է ժամանակ, որ մտածեր եմ լեզվաբեր դառնամ: Ինչ կըսես, համաձա՞յն ես:

– Քանի որ կըսես՝ հակում ու դյուրութիւն ունիս, փնտրե՛ քեզի աշխատանք մը ղիցուք այդ ճամփով:

– Տո, խելքի՛ տոպրակ, ես հիմա նստիմ զանազան լեզուներու ուսումնասիրութեան վրա, երբ գիտեմ, որ չատ չանցած այդ բոլոր տիմար լեզուները ջնջվին պիտի ընդհանուր համամարդկային լեզվի մը տեղի տալու համար: Ատեն մըն ալ ականջիս աղվոր կհնչեր իրավաբանութիւնը: Իրավաբա՞ն դառնայի, վա՛ռք Աստծու, քու բարի աչքերովդ կտեսնես, որ իրավունք ըսվածը հնարված է պարզապես բոլոր ապօրինութիւնները իր գիտական փեչերուն տակը պարտկելու: Ատ ինչ օրենք է և ինչ արդարութիւն, որ մեկուն վրա կվավերացնե հազարներով քառակուսի քիլոմեթր հողեր, իսկ մյուսին կաղամբ մը տնկելու տեղ ու իրավունք չի տար: Հապա անոր փեչերուն փաթթված փաստաբանութիւնը, որ միևնույն ժամանակ այո՛-ն ալ կսպասցուցանե, ո՛չ-ն ալ՝ նայելով, թե ո՞ր կողմեն դրամը ծանր կկշռե: Կուգե՞ս փաստաբան դառնամ:

Բագրատ սկսավ սրտանց խնդալ. Վասակ լիափ առած կշարունակեր:

– Կամ գուցե խորհուրդ կուտաս վեղարվեհաներով զբաղվիմ ու նստիմ քու պատկերդ քաշեմ կամ սիրային տափակութիւններ երգեմ, կամ քեզի պես վարժապետ դառնամ: Արհեստավո՞ր դառնամ. հետզհետե կատարելագործվող մեքենաները այլևս մեր ձեռքերուն ու ոտքերուն

պետք չունին, թե՞ վաճառականութիւն ընեմ. խաբեմ-խաբեսի այդ նշանաւոր կազմակերպութիւնը, որուն հոտն անգամ չէ՛ մնալու չուտով: Ուրիշ ի՞նչ մնաց, ըսէ՛, նայիմ:

– Վարդապետ դարձի՛ր: Ջէ՛, իրաւ կըսեմ, որովհետեւ աքանչելի քարոզ տալ կրնաս և աքանչելի կերպով ալ ճիշտն ու սխալը իրար խառնել պիտես կատարեալ վարպետութեամբ:

– Ինչո՞ւ չէ, խեղճ ժողովուրդիս համոզելու համար, որ իր մեղքերուն ու հանցանքներուն մաքրվելու չիտակ ճամփան սուրբերուն, ճգնաւորներուն և խոտաճարակներուն կաշառք տալն է, որ Աստծու առաջ բարեխոսեն. մանաւանդ խոտաճարակներուն սուրբ բարեխոսութիւնը աննման է:

Բագրատ ալեհոս մը վերցուց, տարաւ ընկերոջը քով, ծանր շարժումով մը նատեցաւ և ըսաւ մտածելով.

– Մեր հասարակութեան մեծագոյն մասը փալթիված է անցյալին, զատվիլ չի կրնար հինեն: Դուն ալ ճիշտ հակառակը՝ հոգով-մարմնով նետվեր ես ապագային գիրկը: Եվ այդ ապագան քու աչքիդ բնական է, առողջ, արդար և արդի ողորմելի անհեթեթութիւններեն զերծ, այնպես որ ո՛չ նվազ իղեալիստ մըն ես և դուն քու այդ համոզումներովդ: Սակայն այդ ապագայով այնքան տարվեր ես, որ ներկան, մեր խեղճ ներկան, այդ միշտ արհամարհվող ներկան դուն ալ մոռցեր ես կամ ոտքի տակ կուտաս: Քու ըսածներեդ չատ բան, գէթ մասով մը իմ երազներս ալ են: Բայց այդ երազները չեն իրականանար, եթե մենք հիմակվան համար չաշխատինք, միա՛յն հիմակվան համար, մեր ներկա պայմաններուն մեջ մեր ներկա միջոցներով: Այդ քու անրջած ապագա օրերուն մարդիկ ալ ուրիշ տեսակի մարդիկ պիտի ըլլան: Իսկ մենք, որ այս տեսակի մարդիկ ենք, դիցուք և չատ թերի, մենք ալ մեր այս թերի կյանքի մասին խորհինք, մեզի համար երբ հոգանք, արդեն ինքնին ապագայի համար աշխատած կըլլանք: Կուզե՞ս եզրակացութիւնս: Այդ բոլոր սիրուն փիլիսոփայութիւններդ գանգիդ մեկ անկյունը կավլես, մեկդի կդնես ինքդ պարապ նստած ուրիշներու ըրածն ու ուզածը քննադատելու տկարութիւնը և կենդանի ու կարողութիւններուդ հարմարվող գործի մը ձեռք կզարնես: Գործ մը, որուն չուրջը դառնան քու մտածումներդ,

ընթերցումդ, քննադատութիւնդ, որ կրնաք առանց ունենա: Քեզի միայն կեդրոնացումը կ'իրկէ:

Տիրեց երկար լռութիւն մը: Բազրատ պատրաստված էր ու կսպասէր նոր հնգնութեան մը պոռթկումին Վասակի կողմեն, ըստ սովորութեան, բայց մեծ եղաւ իր զարմանքը, երբ ընկերը վերջապես խզեց լռութիւնը բոլորովին ուրիշ տեսակի խոսված քով մը, խոստովանանքի եղանակով և արտասովոր կերպով լուրջ.

– Մինչև այսօր ես եմ քու վրադ խնդացեր, այսօր սակայն եկեր եմ քեզի, որ դուն իմ վրաս խնդաս: Այդպութիւնը այդպես կպահանջվի, որովհետև ճշմարտութիւնն այն է, որ արվեն ըսիր: Այո՛, ես ալ, որ վրադ կխնդամ, քեզմե մեծ տարբերութիւն մը չունիմ, ես իմ վրաս կխնդամ: Ես քու կարծածիդ պես ո՛չ անպիտան եմ, ո՛չ նյութապաշտ, ո՛չ ալ եսամոլ: Դեպքեր կան, որ իմ մեջս ալ զգացումները տիրելու կելլեն, և ժամեր կան, որ ես ալ պատրաստ եմ ամեն անձնազոհութեան:

– Կկարծես տակավ ընկերներդ չգիտե՞ն:

– Ամեն պարագայի համար թե պետնաս, որ ես երաժշտութիւնը սաստիկ կսիրեմ, ջիղերուս կպզմն է այդպես, ինչ կրնամ ընել: Կամչնամ քեզի խոստովանելու, որ նույնիսկ սիրո իդեալական պատկերի պես բան մըն ալ ունիմ գլխուս մեկ գաղտնի անկյունը: Ես ալ երբեմն կբաղձամ անմեղ աղջկան մը շիկնոտ նայվածքին և հոգեկան նվիրումին: Վերջապես ամենքս ալ «ներկայի» զավակ ենք և մեր հասակեն վեր թռչիլ չենք կրնար: Այս բոլորեն առաքը խոստովանիմ քեզի, որ աչխատանքի ու կեդրոնացման մասին ինչ որ բարեհաճեցար ըսելու, ըստ էութեան իմ ալ համոզումս նույնն է: Մանավանդ վերջերս. չգիտեմ, ձեր անպիտան օրինա՞կը ինծի վարակեց, թե՞ հորս վերջին նամակներն են վրաս չատ ազդած: Հայրս կգրե, որ ալ ծերացեր է և օգնականի պետք ունի: Մանավանդ գործն ալ մեծցուցեր է, Ռուսաստանեն 18 հատ ընտիր կովեր է բերել տվեր: «Ախո՛ն,– կգրե,– որ քովս վստահելի ու մասնագետ մեկը չունիմ, թե չէ չատ ընդարձակ և հրաչալի գործ կարելի է ստեղծել»,– կըսե: Բազրա՛տ, ինչ խորհուրդ կուտաս, մտածեցի՝ երթամ Ծրանաս 5-6 ամիս, տարի մը, օրինակելի ագարակներու մեջ գործնականապես աչխատիմ, տեսականորեն ալ հետևիմ և գործին մասնագիտորեն ծանոթացած՝ երթամ հորս քովը: Անասուններեը ես միշտ սիրեր եմ, և

ամեն պարագայի անոնց ընկերակցութիւնը չատ ավելի օգտակար է ու հետաքրքիր, քան մեր փտած մարդկային հասարակութիւնը: Քիմիան ալ չատ կսիրեմ գիտութիւններուն մեջ: Կըլլամ սպաս, ինքս իմ գլխուս և բնութեան մեջ: Ծնողքիս ալ օգնութիւն կըլլամ, քիչ մըն ալ կարծես մխիթարութիւն,– ավելցուց տարօրինակ քնքուշ ժպիտով մը:

– Եվ քու ժողովուրդիդ ալ մեծ բարիք կրնաս ընել, օրինակ դառնալ և չատ օգնել,– վրա բերավ Բագրատ:

– Կհուսամ,– պատասխանեց Վասակ Համեստորեն:

– Հորդ արդեն բան մը գրա՞ծ ես:

– Նախ գրել կուզեմ Ֆրանսա մեկ-երկու տեղ, հարկ եղած տեղեկութիւնները ու մանրամասնութիւնները ստանամ, ավելի կտրուկ և որոշ բան մը գրել կարողանալու համար հորս և ո՛չ թէ ընդհանուր ցանկութիւն:

– Այսօր դուն ինձի համար բոլորովին ուրիշ մարդ մըն ես, Վասա՛կ, և չգիտեմ՝ ինչպե՛ս արտահայտեմ քեզի իմ խոր ուրախութիւնս: Քալե՛, երթանք Գևորգը առնենք և աղմոր գարեջուր մը խմենք քու այդ նոր ու աղմոր ծրագրիդ հաջողութեան կենացը:

Եվ երկու ընկերները ավլվող դպրոցի թանձր փոշիներուն մեջեն սկսան վար իջնել սանդուղներեն:

Ի Գ

Եվ այդ օրեն նոր ու սերտ կապ մը ինկավ Վասակի ու «Վարդանանց» մէջև, ինչպես ըսեր էր անգամ մը վանցի ուսուցիչը կատակով, և բառը քաղաքացիութիւն էր ստացեր դուրսեցիներու սենյակին մեջ:

Վասակ հաջորդ քանի մը շաբաթները չատ հաճախ տղոց սենյակը կըլլար իրիկուննները: Սարգիս ալ ավելի չուտ-չուտ կուգար: Գևորգ ու Բագրատ ալ իրիկուննները տունը կմնային, և բոլորը միասին կընթրեին ուսանողավարի, որուն կմասնակցեին ընդհանրապես նաև աղջիկները: Կարծես բոլորը միասին խոսք մեկ էին ըրեր: Պարզ էր, որ գոհ էին իրարմե և կփնտրեին իրար:

Վասակ երագկոտ էր տեսակ մը. կուզար, բազկաթոռ մը կգրավեր և փիլիսոփայորեն, ժպիտը շրթունքին կդիտեր չուրջը և կլսեր տղոց ու աղջիկներու բարձրացյած խոսքն ու աղմուկը:

– Վասակը չխոսկան է գարձեր,– կըսեր Գևորգ:

– Նոր հարսերու օրենքով,– կավելցներ Սարգիս:

– Այնքան խոսեր է մինչև հիմա, որ ալ ամբողջ կյանքին համար հերիք է,– կըսացներ Բագրատ:

– Խեղճ՛ը, քնավ խոսած չունիք, քիչ մըն ալ դուք խոսեցեք,– կպատասխաներ Վասակ համակերպած ու ներողամիտ հեգնութեամբ մը:

Այս տեսակ մը ամփոփումին ու ազատ ժամերը միշտ իրարու հետ մնալուն մեկ գլխավոր պատճառն ալ, կես մը գիտակից, կես մը բնազդորեն, դպրոցի գործերուն քայքայվող վիճակն էր:

Ամենուն համար ալ պարզ էր, որ հաջորդ տարին նույն դպրոցը մնալը այլևս կարելի բան չէր: Նույնիսկ լսած էին, որ ձեռքի տակե նշանակված էր նոր տեսուչը՝ Թաղականներին մեկուն պաշտպանյալը և եպիսկոպոսի հին «մեկ գործակիցը»: Արդեն նախորդ տարին ան պետք է նշանակվեր, բայց այդ օրերուն նորընտիր հոգաբարձութիւնը ուզեցեր էր նոր գործ մը սեսնե և Թաղականները դրեր էր կատարված իրողութեան առջև, և հոգին ալ արդեն սկիզբ էր առած Թաղականներու և հոգաբարձութեան մեջ եղած խուլ դժգոհութիւնն ու ներհակութիւնը:

– Ափսո՛ս մեր այնքան աշխատանքը,– կկրկներ Գևորգ:

– Ափսո՛ս մեր տղաքը,– կսրբագրեր Բագրատ:

Մեկ խոսքով՝ փլուզում էր, որ կկատարվեր առայժմ քուլիսներուն ետևը և հոգիներուն մեջ: Արտաքուստ նույն դպրոցն էր, նույն աշխատանքը, նույն կանոնավորութեամբ: Տաս-տասնհինգ օր կար դեռ մինչև դասերուն ընդհատվիլը, և դպրոցին մեջ ամենքը լրիվ կկատարեին իրենց պարտավորութիւնը, ոմանք՝ դրդված բարեխղճութենե, մյուսները հաղթահանակող ինքնապահութեամբ, և ընդհանրապես ամենքը՝ ամառային արձակուրդներու չատ մխիթարիչ հեռանկարով:

Թեև ամենուն համար պարզ էր փլուզումը, և կարծես չատ չկուտրվելու համար այդպես ամփոփվեր էին իրենք իրենց վրա դուբսեցիները, բայց ընդհանրապես չատ քիչ կխոսեին դպրոցի ու դպրոցին կապված խնդիրներուն վրա: Հոգնած էին ու ձանձրացած բոլորեն, իսկ Բագրատ՝ նաև խորապես զգված:

Ուրիշ առեն Բագրատի գայրույթը «իզուր վատնած տարին» և այդ խոր զղվանքը անշուշտ չատ ավելի ուժեղ կերպով Բագրատի հոգիին

մեջ պետք է արձագանքեր: Բայց հիմա լեցուն էր տղու հոգին. ցերեկ թե գիշեր, տունը թե դպրոցը, մինակ թե բազմութեան մեջ Բագրատի հոգիին կամարներուն տակը Լուիզի անունը կհնչեր ցնծագին, և Լուիզ ինքն ալ ամբողջովին զգվանք էր ու քնքշութեան:

Ընկերներու և տնեցիներու ներկայութեան վերին աստիճանի զուսպ էին և զգաստ երկուքն ալ, թեև երկուքն ալ շատ մտերիմ ու սրտակից կխոսեին իրարու հետ բոլորի ներկայութեան:

Ամենքը պիտեին, որ երկուքը շատ բարեկամ էին իրարու, միայն ոչ մեկուն մտքեն անցնիլ չէր կրնար, թե ինչ խոր կապ ինկած էր այդ երկուքին միջև: Հոդ աչք կապող մեծ դեր կխաղար նաև տնեցիներու և ընկերներու ունեցած կարծիքը թե՛ Լուիզի և թե՛ Բագրատի վերաբերմամբ: Երկուքն ալ նկատած էին թեև շատ ազնիվ ու նրբազգաց մարդիկ, բայց սիրո և այդ կարգի խնդիրներու մեջ անընդունակ մարդիկ:

Աղջիկներու և տղոց այդ միասին ըլլալը, խոսիլն ու խնդալը հաճելի էր բոլորին համար և բնականաբար հաճելի էր մանավանդ Բագրատի և Լուիզի համար:

Եթե տնեցիներուն և ընկերներուն քովը այդպես զուսպ էին ու զգաստ, առանձին գտնվելուն պես անդիմադրելի կերպով կմոտենային իրարու, կնստեին ձեռք ձեռքի, և գգվանք էր ու սրտի գեղում:

Այսպես իրիկուն մը, այդ մենութեան բացառիկ վայրկյաններեն մեկը, մնացեր էին նորեն պլուխ պլխի: Մայրն էր միայն տունը, ան ալ գլխու ցավե գանգատելով՝ քաշված էր իր սենյակը: Ընդհանուր սրահը սկսվող մութին մեջ նստած էին իրարու սեղմված ու կխոսակցեին մտերիմ, երբ հանկարծ դուռը զարկին:

Լուիզ վազեց բանալու և իսկույն վերադարձավ փոքրիկ տոմսակ մը ձեռքը, որ տվավ տղուն.

– Քեզի համար է:

Տղան անտարբեր բացավ, կարդաց երկու տողը և խոժոռեցավ:

– Ի՞նչ բան է,– հարցուց աղջիկը:

– Ինձի տեղ կկանչեն,– պատասխանեց դժգոհ:

– Ո՛վ և ե՞րբ:

– Հիմա՛, անմիջապե՛ս. հայրենակից մըն է, չոր պատուի առտուր ունի:

– Քեզմե ի՞նչ կուզե:

– Ես գիտե՞մ: Հապիվ երկու անգամ եղած եմ իրենց տունը: Կուզե, որ հիմա անմիջապես երթամ իրենց տունը: Ընթրիքին ալ, կըսե, կմնաք մեզի:

– Պիտի երթա՞ս,– հարցուց աղջիկը:

– Շատ կարևոր խոսելիք ունիմ, կըսե: Ի՞նչ պիտի ունենա ինծի հետ այդպես կարևոր. կա՛մ դպրոցի մասին հիմար բան մը պիտի ըլլա, կա՛մ ով գիտե ի՞նչ դատարկ խոսակցություն:

– Մի՛ երթար, ուրեմն,– ըսավ աղջիկը շատ սրտանց:

– Կարելի՞ է. անշուշտ բան մը կա, գլեր է, որ երթամ անպատճառ, տակն ալ գիծ է քաշեր մարդը,– խնդաց Բագրատ:– Երթանք տեսնենք ի՞նչ է այդ շատ կարևոր բանը,– վճռեց տղան ոտքի ելլելով:

Համբուրեց Լուիզը, գլխարկը վերցուց և անցավ միջանցք դեպի դուռը:

Հապիվ ձեռքը երկարեր էր սողնակին, որ դուռը բանա.

– Կեցի՛ր,– ըսավ աղջիկը տարօրինակ ձայնով մը: Տղան զարմացած ետ նայեցավ:

– Գրկե՛ ինծի:

Բագրատ քնքշանքով առավ թևերուն մեջ, համբուրեց նորեն և քաշվիլ կուզեր, որ աղջիկը կրկնեց.

– Ո՛չ, գրկե՛ ինծի:

Տղան խնդաց, բոլոր ուժովը քաշեց աղջիկը կրծքին, և պինդ ու երկար համբույրի մը մեջ անշարժացան:

Երբ բաժնվեցան, ու դուռը բանալ կուզեր, հապիվ դանել կրցավ դռան սողնակը:

Եվ գիտնովի մը նման վար իջավ սանդուղներեն:

Ի Դ

Մանուկյաններուն դուռը բացվեցավ թե չէ, Բագրատը խորհրդավոր ժպիտով մը և շատ նեղ սանդուղով առաջնորդեցին վերի հարկը, որ հյուրերու էր հատկացված:

Սանդուղի գլխուն դեմ եկան չոր պոռւղի վաճառականը ինքը,

կինը, մեծ աղջիկը, բոլորն ալ սովորականեն ավելի ժպտուն բարևեցին հյուրը և առաջնորդեցին կից հյուրասենյակը:

Սենյակի սեմեն ներս մտնելուն աւեն Բագրատ տեսավ, որ հոն սեղանին առջևը, կռնակը իրենց դարձուցած նստած էր մեկը և բանով մը զբաղված կերևար:

– Խնդրեմ ծանոթանաք,– ըսավ տան տերը:

Նստած մարդը հանդարտ ոտքի ելավ և անտարբեր երևնալու ճիգով մը դարձավ Բագրատին.

– Արտաչե՛ս,– բացականչեց Բագրատ մեծ հուզմունքով ու ձեռքերը տարածելով:

Վազեցին իրարու դեմ ու գրկվեցան: Մյուսները կես մը հուզումով, կես մը զվարճանքով կնայեին ծիծաղալեմ:

– Ա՛ս ինչպե՞ս, ե՞րբ ես եկեր և ինչո՞ւ ես եկեր, ինչո՞ւ չիտակ ինծի չեկար, ինչո՞ւ առաջվնե իմաց չտվիր և ինչո՞ւ ամիսներով նամակներուա չէիր պատասխաներ,– հարցուց Բագրատ դողացող ձայնով, երբ իրարու գրկե բաժնվեցան:

Նորեկը, իբրև պատասխան այս բոլոր հարցերուն, սիրով լիքը նայվածքով մը կնայեր Բագրատին, աղվոր ժպիտ մը շրթունքին:

– Ջես փոխված, միայն ավելի առնացեր ես, լա՛վ է,– եզրակացուց նորեկը իբրև արդյունք իր ուսումնասիրության:

– Ես քեզի բան կհարցնեմ,– պնդեց ընկերը:

– Այդ ինչուներուն ես մեկ անգամեն ինչպե՞ս պատասխանեմ,– խնդաց Արտաչես հանգիստ ու ծանր խոսվածքով մը:– Նորե Ն հարցուր տեսնեմ մեկիկ-մեկիկ:

Եվ ամենքն ալ խնդացին:

– Ե՞րբ ես եկեր և ինչո՞ւ:

– Եկեր եմ այս առտու առևտրական գնումներու համար:

– Ինծի՞ ինչու չեկար չիտակ:

– Պարոն Մանուկյանի հետ գործեր ունեի, ժամանակս չատ քիչ է, ու զբաղումներս՝ չատ:

– Նամակներո՞ւա ինչու չէիր պատասխաներ. Նոր տարիեն ասդին քեզմե լուր չունիմ:

– Խանութի մարդը դժվար գրիչ կշարժե, և արչին չարժողն ալ

ըսելու բան քիչ կունենայ, դիտեմ՝ դուն ալ շատ դրաղված մարդ ես:

– Ասիկա նո՞ր միտքդ եկաւ, Նոր տարիեն առդին:

Նորեկի դէմքին բացվեցաւ նորեն իր անուշ ժպիտը, և քիչ մը ուշ պատասխանեց:

– Դիտեի, որ չուտով տեսնելու եմ քեզի:

– Դիտե՞ք ինչ,– մեջ մտաւ տան տերը,– լաւն ան է, երթանք չիտակ սեղանատուն՝ կերակուրները չպաղին, մնացածը հոն կխոսինք:

Եվ իրարու եւեւ նուչն նեղ սանդուղով իջան վարի հարկը:

Բագրատ ու Արտաշես մանկութեան ընկերներ էին, թաղի ու դպրոցի ընկերներ, միշտ իրարու հետ, իրարու տուն ու պարտեզ: Այս կենակցութիւնը հանկարծ կտրվեր էր, Բագրատը Կարինեն դրկեր էին Կովկաս, որ ուսում առնի: Մորը մահեն ետքը Բագրատ անգամ մը դարձեր էր հայրենիք մորեղբայրներուն կանչովը, մնացեր էր երեք ամիս, և այդ միջոցին երկու հին ընկերները թեև նորեն հանդիպեր էին իրար արդեն իբրև պատանի, բայց այն հին սրտակցութիւնը չէր եղած մեջերնին:

Արտաշես արդեն մտած էր իր եղբոր կտորեղենի խանութը, չարունակ մոտակա գիւղերը կերթար ու կուգար, և երկու հին ընկերներու համփոները բաժնված էին իրարմե:

Բայց տակի հինգ-վեց տարի ետքը, երբ իբրև կտորեղենի երիտասարդ վաճառական եկած էր Մոսկվա՝ իրենց խանութին համար ռուսական կտորներու նոր ընտրութիւն մը ընելու և նոր պատվերներ տալու, Արտաշես եկեր գտեր էր իր մանկութեան ընկերը՝ խնդրելով, որ դա իրեն օգնելու. ինքը ո՛չ լեզուն գիտեր և ո՛չ ռուսական բարքն ու պայմանները:

Եվ այս անգամ արդեն երկու հին ընկերները կտպվեր էին իրարու խոր ու շատ սրտանց: Շատ սիրեցին իրար և շատ ալ զաղափարակից գտան իրար: Երկուքն ալ հայ ժողովուրդի բարձրացման երագներով տարված, երկուքն ալ հայ ապագայի հույսերով լեցուն և ջերմ հավատացող, երկուքն ալ իրենց կարողութիւններն ու իրենց ազդեցութիւնը հայութեան քաղաքական ու բարոյական ազատութեանը նվիրելու տենչերով:

Արտաշես միշտ մատ էր ունեցած իր քաղաքի բոլոր վերջին

ցույցերուն ու չարժումներուն մէջ և երիտասարդութեան վրա ազդեցութիւն ձեռք բերած. մանավանդ արագ կերպով Հարստացեր էր, և իր խոսքը կշիռ ուներ: Շարունակ կկարդար տունն ու «խանութը», որ Հիմա արդեն մեծ վաճառանոց մըն էր, քաղաքի գրեթե առաջինը: Սքանչելի գրադարան մըն էր կազմած Պոլսեն, Վենետիկեն ու Թիֆլիսեն բերել տված գրքերով, գրեթե բոլոր մեր քիչ-չատ արժեքավոր գրքերը: Կկարդար ազատ նաև ֆրանսերեն: Այս ամենը կավելցնեին իր Հմայքը, և արդեն դառնալու վրա էր քաղաքին մէջ «ազդեցիկ դեմք մը»:

Մոսկվայի «ճերմակ գիշերները», ուր հազիվ վերջալույսը մարած՝ արշալույսը բացվիլ կսկսի, երկար ժամերով թափառեր էին ու խոսեր, ապագա միասին գործունեութեան ծրագիրներ էին կազմեր, թէ ինչպես կարողանան Հայութիւնը ցնցել: Բազրատ ծանոթացուցեր էր ընկերը Հայ ուսանողական շրջանակներուն, որոնք այդ միջոցին նույն ու նման գաղափարներով էին տարված:

Եվ այդ «ճերմակ գիշերներեն» սկսած, ինչպես իրենք կանվանեին ոգևորութեան, Հույսերու և մտերմութեան իրենց օրերը Մոսկվայի մէջ, անոնք մշտապես ու կանոնավոր թղթակցութեան մէջ էին եղած իրարու Հետ, Արտաշեսի Հայրենիք վերադառնալեն ետքը:

Եվ ահա՛ Հիմա Մանուկյանի սեղանին դեմ դեմի նստած, իրենց կարոտած աչքերը իրարմե չՀեռացնելով և Հայրենակից ընտանիքով մը շրջապատված՝ կՀիշեին իրենց մանկութեան տեղերը, դեպքերը, ծանոթները: Կհիշեին և Մոսկվան, Հազար մեծ ու փոքր բան, կհիշեին սիրով ու կխմեին այդ բոլոր քաղցր Հուշերուն կենացը:

Ի Ե

Ընթրիքեն ետքը վերադարձան նորեն Հյուրասենյակ, ուր սուրճ բերին: Սուրճեն ետքը ալ չերևցան Մանուկյանի աղջիկն ու տղան: Շուտով տիկինն ալ անՀայտացավ, քիչ մը ետքը քաշվեցավ նաև տան տերը:

Երբ երկու ընկեր բոլորովին մինակ մնացին, Արտաշես գնաց նստեցավ սենյակին խորքը բազկաթոռին մէջ և մատով նշան ըրավ, որ Բագրատն ալ գա իր քովի բազկաթոռը:

Վայրկյան մը նայեցան իրարու կես-Հարցական, կես-ժպտուն և սկսան մեկուսի խոսակցութիւն մը ցած ձայնով:

– Ես ապրանք տանելու եկած չեմ,– ըսավ Արտաշես խնդալով և առանց հառաջարանի,– ապրանքները առանց ինծի ալ կրնային գալ:

– Հապա՞:

– Եկած եմ քեզի տանելու:

– Ինծի՞, և ո՞ւր:

– Ջըլլա՞՝ չատ սիրեցիր Պոլիսը:

Բագրատ հանկարծ սուր ճմլում մը ղպաց մեջը և չատ լուրջ չեչտով մըն էր, դրեթե վախով, որ վրա բերավ.

– Լսե՛, տեսնեմ, մտքինդ ի՞նչ է:

– Մեր երազած ու ծրագրած չարժումը մարմին առնելու վրա է. այսինքն արդեն մարմին առած է: Լսենք՝ ատ ալ ճիշտ չէ. մեր հողին վրա արդեն քանի մը տասնյակ տարի է, որ ծայր է տված դիմադրության ու պայքարի ոգին: Միայն թե հիմա հասած է արդեն նոր երիտասարդության մը, որ ավելի խորեն կերթա և ավելի լուրջ կկազմակերպվի:

– Նոր բան ի՞նչ կա:

– Այս ձմեռ չատ աշխատանք թափեցինք: Ջատկին պաղտնի ժողով մը ունեցանք մեր ամենավստահելի գեմքերեն, մոտ հիսուն հոգի, թե՛ մեր մտաերեն և թե՛ ավելի հեռուներեն: Զարմանալի համամտություն կար: Հարցը հասունցած է ներսեն, և Կովկասեն ալ նույն չունչը կփչէ: Ի՞նչ երկնցնեմ, ընտրվեցավ չատ լայն իրավունքներով կեդրոնական վարիչ մարմին մը և որ հիմա չատ տաք կերպով կպած է գործին, մասնավորապես ինչ որ կվերաբերի մեր Կարնի շրջանին:

– Ուրուն մեջ անշուշտ կաս և դուն:

– Հիմա կուզենք առաջին հերթին լավ մը կազմակերպենք Մուշի ու Երզնկայի շրջանները: Երզնկայի համար ունինք պետք եղած կարող վստահելի մարդը: Իսկ Տարոնի համար մեր ընտրությունը կանգ առավ քու վրադ. չատ մը տեսակետներով ամենեն հարմարը դուն ես: Հոսկե հեռագրեմ թե չէ, Մուշի ազգային մարմիններու կողմե կհրավիրվիս ազգային վարժարանին տեսուչ: Կըլլաս «Պոլսեն եկած հայտնի մանկավարժ» և ոչ մեկ կերպով դպրոցե դուրս ոչ մեկ գործի չես մասնակցիր: Մասնավորապես հեղափոխական ամեն հարցի ու հավաքումի հետ ոչ մեկ կապ, ո՛չ ծածուկ, ո՛չ հայտնի: Մանկավարժական ու գիտական հարցերու շուրջ դասախոսե՛, վիճե՛, գրե՛ լրագիրներուն և ինչքան

այդ ուղղութեամբ համբաւ հանես, այնքան լաւ: Տեղին վրա դուն կապ կունենաս միայն մեկ կարևոր ու ազդեցիկ ընկերոջ մը հետ, որու միջոցով ձեռքդ կպահես թելերը, և առանց քու գիտութեանդ ու հրահանգիդ չի կատարվիր ոչինչ: Ուրիշ խոսքով՝ ամբողջ շրջանի կազմակերպութեան առանցքն ու ղեկավարը կըլլաս դուն՝ առանց երբեք մեջտեղ երևալու: Եվ կեդրոնական վարչութեանս հետ ալ հարաբերութիւն կպահես միմիայն անձնապես ինձի հետ և կըլլաս վարչութեանս լիազոր ներկայացուցիչը, գործադիր ձեռքը և խորհրդատուն: Ահա՛, սիրելի՛ս, ինչ որ եկած եմ քեզի առաջարկելու:

Բագրատ առանց չարժում մը ընելու, առանց որևէ համակրական կամ այլ նշանի, լուրջ ու կեդրոնացած մտիկ կըներ ընկերոջը փսփսուքը, քիչ մը ինքն իր վրա կքած, երկու արմուկները երկու ծունկերուն և երկու ձեռքերուն մատները իրարու հյուսած:

Արտաչես քիչ մը լուռ մնաց, կարծես սպասելով որևէ խոսքի, բայց դիմացինի անշարժութիւնը տեսնելով՝ շարունակեց.

– Իսկ իմ ու քու մեջ եղած կապն ալ կդնենք արտաքուստ զուտ առևտրական հողի վրա: Մինչև հիմա քեզի գրած բոլոր նամակներս գալեզ առաջ կփչացնես: Քու գրած աղվոր ու սրտալի նամակներդ ես պատռելու սիրտ չըրի, բայց անունները դարձուցի անընթեռնելի և կպահվին բոլորովին տարբեր մարդու քով ու ապահով: Իսկ ասկե ետքը մեր գիրով ու անունով ոչինչ չենք գրեր իրարու բացի առևտրական, գործի վերաբերյալ պաշտոնական թղթակցութենե: Մեր վաճառանոցին մեջ բացած եմ գրական պիտույքներու և դասագրքերու ճյուղ մը հատուկ այդ նպատակով, մեր առևտրական տունը կըլլա ձեր դպրոցին հայթայթիչը, որով հարմարութիւն կստեղծի իրար լուր տալու, իրար մարդիկ ղրկելու և Կարին եկած ատենները ալ շատ բնական կերպով ինձի հետ տեսակցելու: Բոլոր կարևոր հարցերը կենդանի շրթունքով: Կունենանք հատուկ ընկեր մը, որ գանազան պատրվակներով մեր մեջ կերկիւեկե: Ահա՛ ինչ որ անհրաժեշտ էր, որ առայժմ ըսեի: Մնացածը կուգաս ու տեղին վրա:

Տիրեց նորեն լռութիւն մը. Բագրատ միշտ նույն ծռած դիրքին մեջ, գլուխը կախ և մատները իրարու հյուսված:

– Չխոսի՞ս: Ըսի, կարծեմ, ինչ որ պետք էր: Ի՞նչ է հիմա քու պատասխանդ:

– Ի՞նչ պատասխան կուզես ինծմե,– ըսավ Բագրատ վերջապես՝ բազկաթոռին մեջ չակվելով: Ետքը ելավ, կեցավ, չակվեցավ ամբողջ հասակով և ավելցուց, – ահա՛ ես ամբողջովին պատրաստ ձեր հրամաններին, ուրիշ ի՞նչ պատասխան կրնամ տալ ձեր հրավերին:

– Ուրիշ պատասխանի չեմ սպասեր, միայն թե դիրքիդ, ձայնիդ ու բառերուդ տակ տարօրինակ բան մը կա, դառնությո՛ւն ըսեմ, դժգոհությո՛ւն ըսեմ:

– Այո՛, ականջդ չէ սխալած: Այս բոլոր պատմության մեջ դառնություն մը կա ինծի համար: Նախ և առաջ ձեր այդ բոլոր կազմակերպական աշխատանքներուն ես ալ մասնակից պետք է եղած ըլլայի և ոչ թե այսպես հեռուն հանգիստ նստած՝ ընկերներս ինծի պատրաստ հրամցնեին:

– Ավելորդ նրբազգացություն է. դուն հոս գործ ու դեր ունեիր:

– Երկրորդ դառնությունն ալ արդեն ճիշտ ատիկա է: Ես Պոլիս պետք չէ եկած ըլլայի, – ըսավ Բագրատ սրտի խորքեն ու ցավագին կծկումով մը: Այն աստիճան չեշտված, որ ընկերը ըմբռնել չկրցավ.

– Պոլիս եկած ըլլալուդ մեջ ես մեծ չարիք մը չեմ տեսներ, ընդհակառակը, իր առավելություններն ունի:

– Ալե՛կ, թողնենք հիմա ատիկա,– բացականչեց Բագրատ բան մը մեկդի նետելու բացահայտ ճիգով:– Ամեն պարագայի լսածներուս համար խորապես ուրախ եմ: Գիտես իմ կարծիքս: Մեր նոր սերունդի կրթությունը պիտի կատարվի նոր թափչք ունեցող դպրոցներով և կյանքի հեղափոխական դպրոցով:

– Ամենքը կարոտով կսպասեն քու գալուդ:

– Ուրիշ հանձնարարություն մը ունի՞ս,– հարցուց հանկարծ Բագրատ ընկերոջը խոսքը կտրելով:

– Ո՛չ: Անշուշտ մեր խոսակցությունը ինծմե ու քեզմե զատ ոչ ոք պետք չէ գիտնա:

– Կարծեմ,– պատասխանեց ընկերը անփույթ:– Իսկ ե՞րբ կմեկնիս:

– Երեքշաբթի օրվան ռուսական չոգենավով:

– Եվ մենք ուրեմն հոս այլևս իրար պետք չէ հանդիպինք:

– Լավը ատ է, կարիք չկա:

– Իսկ Մուշի պաշտոնական հրավերը մոտավորապես ե՞րբ կստանամ:

– Վաղը իրենց կարգախոսը կուտամ հեռագրով, տաս-տասնհինգ օրեն կստանաս հավանորեն հեռագիր: Դուն կամաց-կամաց պատրաստուվթյուններդ տե՛ս:

– Աղե՛կ, եկո՛ւր համբուրվինք ու վե՛ր կանչէ տանտերը, որ հրաժեշտ առնեմ:

Այն աստիճան կտրուկ ու անհամբեր չեչտ մը կար խոսվածքին մեջ, որ ընկերոջը զարմանք պատճառեց: Ջերմ համակրանքով նայեցավ վայրկյան մը անոր աչքերուն մեջ և թեթև մը հեգնեց խնդալով.

– Կեցի՛ր, նայինք, դեռ Մուշ չես հասած:

– Սրտագին բարևներս ընկերներուն,– եղավ պատասխանը:

Արտաշես ելավ ոտքի, և երկուքը փաթթվեցան իրարու ընկերական ջերմ ողջագուրանքով:

Եվ Արտաշես գնաց նեղ սանդուղին գլուխը և Մանուկյանը կանչեց վեր.

– Պարոն Բագրատը մեկնիլ կուզե:

ԻԶ

Երբ իր ետևեն գոցվեցավ Մանուկյաններուն դուռը, բացվեցավ անմիջապես իր հոգիին առջև ներքին անդունդը:

Քանի ներսն էր՝ պարտականութվյան ու պարտավորութվյան ձայնն էր, որ կհնչեր իր հոգիին մեջ: Հիմա, որ հարցի այդ կողմը բավարարված էր ու կարգադրված, կբացվեր տղուն դեմքը իր անձնական կյանքին ու բախտավորութվյան հուսահատ դրութվյունը իր բովանդակ խորութվյամբ:

Վայրկյան մը անգամ վարանում կամ զղջում չուներ իր ըրածին ու մտադրածին համար, բայց և ոչ մեկ կասկած կամ պատրանք չուներ, որ փչրված ու վերջացած էր իր անձնական բախտավորութվյունը:

Պարզ էր իրեն համար, որ ինչ ձևով ու միջոցներով ալ որ ճիգ թափեր, ճկվիլ ու ծռվիլ փորձեր, միևնույնն է, իր ու Լուիզի բախտավորութվյունը փրկել պիտի չկարողանար, կզգար ու կգիտակցեր շատ հստակ:

Մանուկյաններու փողոցին որ դուրս եկավ, բնազդորեն կանգ առավ ճամփուն մեջտեղը: Ուր՞ը հիմա, ատ՞ուն: Այլևս տունը քավարան մըն էր իրեն համար: «Այն տունը» այլևս չկար, այլևս պետք չէ, որ ըլլար:

Երիտասարդը սկսավ քալել հակառակ ուղղությամբ, իրարմե շատ հեռու-հեռու անկված լապտերներու աղոտ խավարին մեջեն: Եվ զգաց, որ Թանձր ու մածուցիկ գորշ բան մը սկսավ իջնել, ծալ-ծալ պիպվիլ ու ամեն ինչ թաղել իր տակը, իր հոգիին մեջ:

Սկսավ լալ: Արցունքները կզլաորեին աչքերեն այտերուն վրա և այտերեն ալ դեպի կուրծքն ու գետին: Տղան ո՛չ կսրբեր, ո՛չ ուշադրություն կըներ, ո՛չ ալ կամենար այդ արցունքներեն: Հուղարկավորի մը պես էր. չէ՞ որ հոգիին այդ Թանձր գորշություններուն տակ, ահա՛, ընդմիշտ իր սերը կթաղեր, պիտի թաղեր:

Իր առաջին, իսկական ու խորունկ սերը, որ, պիտեր, այլևս երբեք, երբեք կրկնվելու չէր, ինչ ալ որ բերելու ըլլար իրեն կյանքը:

«Երևի անհրաժեշտ էր այս սուրբ զոհողությունը իմ նոր հանճնառությանս, իմ նոր նվիրումիս արժանի ըլլալու համար: Պարապ ճեռքերով չէի կրնար ներկայանալ զոհի սեղանին, և ինչքան մեծ է պաշտամունքդ, այնքան ալ ավելի Թանկագին ու ազնիվ պիտի ըլլա քու բերած նվերդ զոհի սեղանին»:

Նման մտածումները պլխուն մեջ, մառախուղ մը հոգիին խորքը և արցունքը աչքերուն՝ կքալեր:

Բռնած ճամփան Թեքվելով ու իջնելով ելավ ծովեզերը, Ղալաթիայի մուտերը՝ քարափը: Նախ հոդ ալ կքալեր մեքենաբար, վերջը գնաց կանգնեցավ ծովու ճիշտ եզերքին, քարափին վրա ամրացած երկաթե հաստ կոճղերին մեկուն, որուն կամրացնեն շոգենավերը իրենց բանող պարանը: Իր հենած երկաթի կոճղին անցըված էր արտակարգ հաստ պարան մը, որը կիջներ ջուրը և կես մը ջուրին տակը, կես մը ջուրին երեսը կերթար հեռուն՝ միանալու ահագին ու անճոռնի ստվերային զանգվածի մը, որ շոգենավ մըն էր:

Աչքերը այդ անճոռնի ու ահագին ստվերին դամած՝ Բագրատ կմտածեր: Ալ իր մասին չէր մտածեր: Իր զգացումները պետք է չորնային, կրմբռներ, բայց Լուի՞զը , ան ինչ Հանցանք ուներ: Եվ ի՞նչ պիտի ըսեր

անոր, ինչպե՞ս հասկցներ, ինչպե՞ս վշտացներ, ինչպե՞ս փեթռտեր անոր նուրբ ու քնքուշ զգացումները:

Եվ սարսափով տեսավ, որ հարցի այս կողմը շատ ավելի դժվար որոշելու բան մըն էր:

Նախ մտածեց, որ պարտական է իսկույն երթա և որևէ պատճառանքով մը խզե իրենց բոլոր կապերը, բայց ի՞նչ պատճառանքով, և ինչպե՞ս կարելի է այդպես վարվիլ:

Ընդհակառակը, սկսավ մտածել, որ լավագույնն է կամաց-կամաց ետ քաշվի և աղջկան սիրտը կամաց-կամաց պաղիլ տա: Բայց իսկույն տեսավ, որ ինքը կարողություն չունի այդ տեսակի խաղերու: Եվ վերջապես կըմբռներ, որ այդ վայրկյանեն այլևս իրավունք չուներ աղջկան դպչելու:

Իրեն համար ամենեն բնականն ու ցանկալին աղջկան հետ ամեն ինչ պարզ ու չիտակ խոսիլն էր, որը սակայն կարելի չէր, պետք է լռեր: Իսկ սուտ խոսիլ ու սուտերով խաբել այդ հրաշալի, նվիրվող աղջիկը, ո՛չ, ինքը կարող չէր:

Թեր ու դեմ մտածումները կուգային ու կերթային, և տղան միշտ կեցած էր անշարժ, առանց որոշման մը հանգիլ կարողանալու: Հենած միշտ երկաթե կոճղին՝ երկաթե կոճղ մըն ալ ինքը:

Անցուդարձը, որ արդեն սակավ է գիշերները այդ քարափին վրա, հիմա բոլորովին դադրած էր: Եվ քարափի պահակը բավական ժամանակ է՝ հեռուեն կղփտեր ստվերին մեջ կեցած այդ անշարժ ստվերը և աչքեն չէր փախցներ: Ինչ կըներ հոն այդ մարդը, ի՞նչ կուզեր գիշերվան այդ լուռ պահուն:

Անոր համառ անշարժութենեն հուսահատած՝ ինքը կամաց-կամաց մոտեցավ անոր, աջեն դիտեց, ձախեն դիտեց և վերջապես դպավ ուսին: Բազրատ արտասովոր ուժեղ ցնցումով մը դարձավ ետին, քունե հանկարծ արթնցողի մը պես:

– Ի՞նչ կըներես հոս,– հարցուց պահակը:

Բազրատ չգիտցավ՝ ինչ պատասխանել և վերջապես ըսավ.

– Ծովը կդիտեմ:

– Այսքան երկա՞ր: Ո՛չ: Հոսկե այդպես երկար ծովը դիտելը արգիլված է,– ըսավ պահակը:

Եվ չատ դժվար էր հասկնալը՝ լո՞ւրջ էր իր խոսվածքը, թե՞ պիմացինի վրա կխնդար:

Բագրատ առանց ոչինչ ըսելու բաժնվեցավ իր կոճղեն և արդեն առանց ոչինչ մտածելու բռնեց իրենց տան ճամփան:

Միտքը թմրեր էր, և մեքենականութիւն մը կտիրեր հոգիին մեջ: Տեսնելով, որ ինքը անկարող էր իրերու ընթացքին ուղղութիւն տալու, հիմա թողեր էր ինքզինքը իրերու բնական ընթացքին:

Եվ քանի որ ամեն ինչ պիտի պատռվեր, քանի որ ամեն ինչ պետք է փեթռտեր, միևնույն չէ՞ր՝ ա՞յս ձևով, թե՞ այն ձևով:

«Թող գա, ինչ որ գալու է»,- եզրակացուց գրեթե լսելի, երբ պրպանի բանալին տան կողպեքին անցընելու կաշխատեր:

Դուռը գոցվելուն պես նայվածքը բնազդորեն ուղղվեցավ Լուիզի սենյակին կողմը. արդեն սովորութիւն էր դարձած: Բայց իսկույն հանցավորի մը պես անլին դարձուց աչքերը և մտավ իրենց սենյակը:

Գետրդ լամպը կիսավառ էր թողեր, և անպիտան հոտ մը լեցուցեր էր սենյակը, թեև բաց էր լուսամուտներեն մեկը: Բացավ կամաց մը մյուսն ալ, որու հանած թեթև աղմուկեն ընկերը արթնցավ:

– Եկա՞ր: Ինչ պատմութիւն էր: Ինչ կուզեր այդ Մանուկյանը:

– Հիմար հյուրասիրութիւն: Ցերեկները աւուծախ, պիչերները ժամանց, պարապ մարդ է իրեն պետք, որ հետը ժամանակ անցնե: Եվ երևի արդեն ինծի ալ սկսեր է պարապ մարդու տեղ դնել: Գիչե՛ր բարի:

Եվ լույսը մարեց:

Իէ

Հաջորդ օրերը Բագրատ բոլորովին փոխված էր, չափազանց նեղսիրտ, ցրված ու անհամբեր: Հետը խոսիլ չէր ըլլար, բոլոր խոսակցութիւնները կկտրեր կամ ներհակ պատասխաններ կուտար:

Ընկերները կխորհեին, որ դպրոցը ձգելու զայրույթեն է, ու մեջ-մեջ սիրտ տալու նմանող խոսքեր կըսեին, որուն Բագրատ արհամարհոտ շեշտով մը կպատասխաներ:

– Ինքզինքնիդ մխիթարեցե՛ք:

Գիչերները սկսավ ուշ տուն գալ, առաուները չատ կանուխ տունեն

կհեռանար: Տունը եղած ատենն ալ բոլորի հետ չոր հարաբերություն մը ուներ ու քաշված էր ինքն իր մեջ և միշտ կարծես աշխատանքի ու հաշիվներու վրա էր: Եվ մանավանդ ամեն կերպ կջանար Լուիզին քիչ հանդիպի, ան ալ միշտ ուրիշներու ներկայության:

Օր մը, երբ անակնկալ կերպով վայրկյան մը առանձին մնացին, Լուիզ հարցուց վշտահար ձայնով մը.

– Ինչ ունիս ինծի դեմ, ինչո՞ւ զայրացած ես:

– Գլուխս շատ խառն է,– եղավ խուսափող պատասխանը, և ավելցուց հուզումը զսպելու անկարող:– Դուն ինծի ու իմ ըրածիս շատ կարևորություն մի՛ տար, ո՛չ ալ մինչև հիմա ըսածներուս:

– Ատ ինչ խոսք է:

– Ինչ գիտնամ:

– Եթե դպրոցիդ համար ես նեղացած, Պոլիս դպրո՞ց կպակսի, քեզի պես աշխատող տղան անգործ չի մնար:

– Իմ մտածմունքս իմ մասին չէ:

– Հապա՞:

– Քո՛ւ:

– Ե՞ս:

– Հապա ուրիշ ո՞վ կուզես, որ ըլլա:

Ներս էին եկած ուրիշները, և ընդհատված էր այս տարօրինակ հարց ու պատասխանը: Արդեն քանի մը օրե ի վեր Լուիզի զգացած տարտամ վախը սաստկացավ, բայց ինչ ուղղությամբ ալ որ կմտածեր, բանավոր բացատրություն մը գտնել չէր կրնար:

Գիտեր, որ քանի մը օրեն տղան հրաժարականը պիտի տար դպրոցեն, և չաթաթը չկրացած՝ դասերը պիտի դադրեին: Հույս ուներ, որ տղան երբ ազատվի, ավելի տունը կըլլա, ջղայնոտությունը կմեղմի, և այս անբնական մեկուսացումը կանցնի:

Եվ հասավ վերջապես դպրոցական վերջին օրը: Դասերը կանոնավոր տեղի ունեցան, և Բագրատ սովորականեն ավելի զբաղված էր, բայց շատ հանգիստ: Իրիկունը, երբ տղաքը կարճակվեին, եկան շատերը մնաք-բարով ըսելու, ոմանք նոր տարեշրջանի մասին բաներ կհարցնեին: Բագրատ ամենուն ալ պատասխանեց խուսափողական ձևով մը. գիտեր,

որ անշուշտ բաներ մը լսած պիտի ըլլային: Ուսուցիչներն ալ բարևեցին ու ցրվեցան, ու դպրոցը դատարկվեցավ:

Բագրատ մտավ իր սենյակը, ժողվեց բոլոր գրքերն ու թղթերը, որոնք անձնական իրեն կվերաբերեին, փաթթեց ու կապեց ու պրավ մեկ կողմ: Դպրոցի բոլոր պաշտոնական մատյաններն ու գրութիւնները ալ պրավ պահարանը և ուշադրութեամբ կղպեց:

Դպրոցեն Հանեց նամակի պաշտոնական թուղթ մը և գրեց իր ու Գևորգի հրաժարականը՝ հայտնելով պարզապես, որ պատճառը եպիսկոպոսի լսած մթնոլորտն է, թաղականներուն անհասկացողութիւնը իրենց վրան գործին և հոգաբարձուներուն համակերպութիւնը:

Կանչեց Գևորգը, կարդաց, ստորագրել տվավ և ավելցուց.

– Տնտեսին հետ այս նամակը հիմա հոգաբարձուներուն ատենապետին կղրկես, իր գրասենյակը: Այս գրքերու կապոցն ալ տո՛ւր ծառային, որ տանի տուն. ինքդ ալ եւևեն գնա՛, մարդուն ձեռքը ճերմակ մը դի՛ր և եկո՛ւր Ալիատիի հաշարանը, ծովեզերքը: Կսպասեմ քեզի, որ միասին ընթրենք:

Ինքն ալ պրավ գլխարկը և պարմանալի անփութի հոգիբանութեամբ մը իջավ վերջին անգամ դպրոցի սանդուղներեն և ելավ այն սեմեն, ուր մտած էր այնքան աղվոր հույսերով ու ծրագիրներով և ուր այնքան աշխատանք էր թափած և ուժ էր վատնած:

Հանդիստ քայլերով կերթար հաշարան: Ծովեզերքը մեկ-երկու տնտ կանգ առավ: Ցրված կերպով դիտեց նավավարներու ազմուկն ու իրարանցումը: Եվ արդեն մթնելու վրա էր, որ մտավ հաշարան: Գնաց չիտակ ծովուն մեջ ցիցերու վրա շինված բաժինը և նստեցավ ամենեն քաշված անկյունը՝ բաղեղներով հյուսված վանդակին մոտիկ:

Լիալուսին պիչեր մըն էր, և քանի մութը կթանձրանար, ծովը այնքան կկենդանանար ու կխաղար լուսնի քամահաճույքեն իր դիրկը թափող արծաթի ղրսմներուն հետ: Մակերեսի թեթև տատանումը կքծներ պատշգամը պահող ցիցերուն: Երբեմն ալ մոտեն անցնող նավակի մը հանած չարժումեն փոքրիկ ճոպիկուններ կլսվեին պատշգամին տակ:

Բագրատ աչքերը հառած ծովու արծաթի մակերեսին՝ կզգար անոր մեղմ ու հանգարտ տատանումը: Իր մտքին մեջն ալ մտածումները կար-

ծես մակերես մըն էին կազմած, որ նույնպես մեղմ ու հանդարտ կտատաներ:

Միշտ նույն ճիգն էր, անհույս ճիգը՝ իր հոգիին երկու անհաշտ հարցերը կերպով մը հաշտեցնելու: «Մի՞թե անկարելի էր, որ Լուիզը իր հետը տաներ»: Քանի՞երորդ անգամն էր, որ կկրկներ նույն հարցը ինքն իրեն, ծովու անվերջ տատանումին նման:

«Իրավունք չունի՛մ, իրավունք չունի՛մ. Լուիզը կդարձնեմ անբախտ, և կտուժե գործը: Իրավունք չունի՛մ. պետք է թևերս բոլորովին ազատ ըլլան, բոլոր հոգերս միայն մե՛կ ուղղությամբ, որ հայրողիմ: Երկու տիրոջ կարելի չէ ծառայել»:

«Բայց դժվար է, շատ է դժվար, և՛ անոր համար, և՛ ինծի, մեր չրթունքները հազիվ դպցուցած բախտավորության բաժակին»:

Առջևեն նավակ մը կանցներ: Սկսավ դիտել թևերուն կանոնավոր շարժումը ու թիերեն կաթկթող ջրի կաթիլներուն փայլփլուկը օդին մեջ:

Այդ միջոցին էր, որ եկավ Գևորգ: Ծեսն ու ձեռնափայտը նետեց քովի աթոռին վրա ու նստեցավ ընկերոջը դեմը, նմանապես բաղեղապատ վանդակին կից ու բացականչեց.

– Հոգնեցանք, վերջապես չունչ կառնենք:

– Հը՛մմ:

– Ի՞նչ ուտենք:

– Ապսպրե՛, ինչ որ կուզես երկուքնուս համար:

Ծառան սփռոցը բերավ, պնակներն ու սպասները և սկսավ շարել:

Գևորգ ճամփուն վրա պատահած երկրորդական դեպք մը կպատմեր: Ընկերը կլսեր առանց հետևելու և հանկարծ ընդհատեց.

– Դպրոցը ձգեցինք, հիմա ի՞նչ է մխտքդ, Գևո՛րգ:

Գևորգ պահ մը զարմացած նայեցավ ընկերոջը:

– Ա՞տ ինչ հարց է: Կերթանք ուրիշ մը: Ես արդեն Շահինյանի հետ խոսեր եմ: Սարգիսն ալ Ս. Թաղի հոգաբարձուներուն հետ տեսնվեր է: Խնդիրը նորեն ամբողջովին դպրոց մը մեր ձեռքը առնելն է, և կարծեմ շատ պիտի փնտրենք:

– Փնտրելու պետք չունես, ես արդեն գտած եմ:

Գևորգ այս անգամ արդեն ապշությամբ նայեցավ ընկերոջը:

– Նոր բա՛ն կա, ո՞ւր:

– Միայն քիչ մը հեռու է, թեև ճիշտ չէ ըսածս, մեզի շատ ավելի մոտիկ է, քան՝ հեռու:

– Հանելո՞ւկ կըսես, չեմ հասկնար:

Բագրատ հանգիստ չարժուռմով մը հանեց ծոցի թղթերուն մեջեն հեռագիր մը, որ երկու օր առաջ էր ստացած ու նետեց Գևորգի պնակին մեջ:

– Ա՛ռ, կարդա՛՝ կհասկնաս:

Գևորգ անհամբերութեյամբ վերցուց հեռագիրը, բայց բավական երկար տևեց, մինչև որ բանին էութեյունը հասկնալ կրցավ և ավելի ևս մեծ ապշու թեյամբ բացականչեց.

– Մո՞ւշ:

– Այո՛, Մո՛ւշ: Կկանչեն: Ես որոշեցի իսկույն մեկնիմ: Շատ ուրախ կըլլամ, որ նորեն միասին աշխատինք, բայց եթե կզերադասես Պոլիս մնալ...

– Բայց դո՛ւն էիր, որ գոնե տարի մըն ալ Պոլիս մնալ կուզեիր:

– Շիտա՛կ է, բայց այս հեռագիրը ամեն բան փոխեց,– պատասխանեց Բագրատ հեռագիրը նորեն ծոցը դնելով:

– Ուրեմն՝ Մո՞ւշ,– հարցուց Գևորգ թերահավատ:

– Հայրենի հողը կկանչէ մեզի, Գևո՛րգ,– ըսավ Բագրատ արտասովոր յուզի ու խորհրդավոր չեչոով մը:

Գևորգի ապշութեյունը գագաթնակետին հասավ: Եվ ավելի ինքն իրեն, քան ընկերոջն էր, որ ըսավ.

– Այո՛, այս հեռագիրը քեզի բոլորովին փոխեր է:

– Իսկ քեզի՞:

– Դուն ուր, ես ալ հոն: Ե՞րբ կմեկնվինք:

– Ես՝ քանի մը օրեն: Դուն դեռ ամիս-ամիսուկես կուշանաս, մինչև ես հասնիմ ու քեզի հրավիրել տամ:

– Լա՛ւ, բարի ճանապարհ,– բացականչեց Գևորգ բարձր տրամադրութեյամբ ու լեցուց գարեջուրին բաժակները մինչև չրթունքը:

Վերցուց իր բաժակը և հեռվհեռե ավելի ու ավելի ոգևորվելով ու հաւիշտակված վրա ավավ՝ չիւ-չիտակ նետած աֆռուին վրա.

– Ուրեմն՝ հայրենի՞ք, Բագրա՛տ: Ան իրենչ անսպասելի բան եղավ, ան իրենչ սպրող բան եղավ, ան իրենչ աքանչելի բան եղավ: Բնավ մոքես

չէր անցներ, ուրեմն չուտով՝ Կարի՜ն, Մո՞ւշ: Աս ինչ ուրախութիւն լեցվեցաւ Հոգիս, Բագրա՛տ:- Աչքերը լեցվեցան արցունքով և վերին աստիճանի համայված չեչտով մըն էր, որ կրկնեց,- այո՛, Հայրենի հողը կկանչէ, կզգամ հիմա ես ալ՝ Հայրենի հողը կկանչէ:

- Մեր դժբախտ Հայրենիքի ազատութեան կենացը, Գևո՛րգ:

- Ախ, պիտի գա՞ այդ օրը:

Բաժակները զարկին իրարու, խմեցին, դրին վար, և դեմ դեմի նստած էին երկու ընկերները ընթրիքի դեռ պարապ սեղանին երկու կողմը և լուռ էին բավական երկար, աչքերը ծովուն, մտքերը Հեռուն:

ԻԸ

Հաջորդ օրը տունը արդեն գիտեին Գևորգեն, որ շաբաթ մը ետքը Հինգշաբթի օրվան չոգենավով Բագրատ կմեկներ Տրապիզոն:

Նախ զարմացան ու հավատալ չուզեցին:

- Կատակ է,- ըսավ տիկինը:

Սակայն երբ Հարցը լրջացավ, բոլորն ալ դժգոհ մնացին:

- Անխելք բան է ատիկա, ինչ գործ ունի այդ վայրենի լեռներուն մեջ,- բացականչեց Էլենին:

- Պարզապես երիտասարդութիւն է, դեռ տղա եք,- բացատրեց տիկինը:- Ինչո՞ւ կճգե Պոլսի պես տեղը ու Հանգիստ կյանքը. և Հոս ատակ ալ կարելի է չահիլ:

Լուռ էին Օկյուստան ու Լուիզը:

Օկյուստան տխրեց ներսեն, բայց ոչինչ չըսավ և տեսակ մը զարմանքով կյսեր այդ անսպասելի լուրն ու դատումները:

Լուիզ առանց սրևէ նկատողութիւն ընելու սովորականին պես առանձնացավ իր սենյակը և սովորական աստենին նոթաներուն տետրակը թևին տակ ելավ գնաց իր դասին:

Զարմանալի Հանգիստ կերպով տվավ իր դասը, նույնիսկ իր սովորական ջղայնութիւնը պակսած էր այսօր կարծես. մեծ Համբերութեամբ կուղղեր իր աշակերտուհիին սխալները և կկրկներ արդեն քանի՜ քանի՜ անգամ կրկնածները:

Մտածել չէր ուզեր, կարծես բանի մը կսպասեր, կզգար միայն քարացած կծկում մը իր հոգիին մեջ:

Այդ քարացումով ալ դուրս եկավ իր դասեն և սկսավ իջնել սանդուղները, բայց հազիվ առաջը դուրս էր ղրկեր տան սեմեն, որ զգաց հանկարծ սրտին ուժեղ սեղմվիլը, և ոտյունը վիմքը զարկավ. քիչ էր մնացեր, որ վար իյնար, եթե դռան չկռթներ:

Դեմը՝ ցուցափեղկի մը առջև, կեցած էր Բագրատ: Պարզ էր, որ իրեն կսպասեր:

Մոտեցան իրարու ճիշտ փողոցին մեջտեղը:

– Հոսկե չաս մոտիկ է Պո-մոնտի կալինոն, որուն պարտեզը դուն կսիրես,– ըսավ Բագրատ իրրև հարցում:

– Կարգադրողը դուն ես, ինչպես որ կհաճիս,– պատասխանեց Լուիզ դառնությամբ:

Եվ լուռ քով քովի անցան փողոց մը և մտան պարտեզը, որ օրվան այդ աշխատանքի ժամին բոլորովին պարապ էր գրեթե:

Բագրատ առաջնորդեց աղջիկը ծաղկի թաղարներով և կանաչ ցանքով իրարմե անջատված բաժանմունքներեն մեկը, որ բարձրեն կնայեր ծովուն ու վիմի ասիական լեռներուն:

Լուռ նստած էին երկուքն ալ կանաչ ու կլոր սեղանի մը առջևը սեղմված կոկորդներով, մինչև որ սպասավորը խմիչքը բերավ ու հեռացավ:

– Զգիտեմ, Լուի՛զ, ինչպե՞ս լսեմ և ինչպե՞ս վարվիմ, որ հնար եղածին չափ նվազ ցավ պատճառեմ քու այդ խորունկ ու ազնիվ սրտիդ:

– Դուն հաճոյախոսասիրություններու բարեկամ չես եղած երբեք, այդպես ալ մնացի՛ր,– պատասխանեց աղջիկը կտրուկ:

– Հաճոյախոսություն չէ ըրածս: Սրտիս խորքեն կխոսիմ ու խորապես կոստապիմ:

– Ի՞նչ է պատահած քեզի, պիտի հասկնա՞մ վերջապես:

– Բանի մը օրեն պետք է հեռանամ Պոլսեն, կանչված եմ պաշտոնի:

– Ասիկա առտուն իմացանք Գևորգեն: Բայց ի՞նչ կարիք ունեիր այդքան հեռուները, հոս աշխատա՞նք է պակաս:

– Հայրենիքս է, պարտական եմ հոն աշխատելու. Պոլիսը օտար քաղաք մըն է վերջապես:

– Այո՛, կհասկնամ, ինչպես որ ես ալ օտար աղջիկ մը:

– Լուի՛զ,– բացականչեց տղան խորին ցավով. կարծես դպիր էին իր բաց վերքին:

– Խոստովանե՛, որ ինծմե կվախչիս,– ընդգծեց աղջիկը ներքին վստահութեամբ:

– Հոգիս միայն քեզի հետ ըլլալ կուզե:

– Բայց կին ունիս ուրիշ տեղ մը կամ նշանած:

– Ո՛չ մ եկը և ո՛չ մյուսը: Այդ տեսակ բան մը որ ըլլար, առաջին օրեն ըսած կըլլայի քեզի, դուն ինծի ինչի՞ տեղ կդնես: Իմ առաջին ու միակ սերս դուն ես եղած:

– Այնատեն... այն ատեն մի՛ դնար, մի գնա՛ր,– չընջացին շրթունքները, և Լուիզ բռնեց տղուն ձեռքը, սկսավ սեղմել, և աչքերը լեցվեցան իր կամքին հակառակ:

Տղան պատասխանեց թեթև մը ձեռքի սեղմումին և ըսավ խորին տխրութեամբ:

– Երթալս անխուսափելի է, և արդեն խոսք եմ տված ու պայմանավորված, և հիշտ ատոր համար է, որ այս երկու շաբաթը պատռած է հոգիս, և չգիտեմ ինչ ընեմ, որ քու հոգիդ ալ չփեթռտեմ:

– Երկու շաբա՞թ: Գիտե՛մ, այն իրիկունը, այն տոմսակը ստացած վայրկյանեդ. հոգիս զգաց իսկույն, բնազդա ըսավ, որ ձախ բան մը պատահի պիտի:

Տղան զարմանքով նայեցավ աղջկա աչքերուն և քիչ մը վերջը ավելցուց.

– Վե՛րջապես, անկարելին ուղղել չենք կրնար: Ահա՛ խորտակված սրտով բերեր եմ քեզի հոս քեզմե հրաժեշտ առնելու:

Աղջիկը հանկարծ նստած տեղը ետ քաշվեցավ, գլուխը բարձրացուց և ջղայնորեն սկսավ ձեռնոցները հանել: Բան մը ըսել կուզեր, որ լեզուն կդժվարանար արտահայտելու: Վերջապես հաղթեց կանացի լիզվին ու ըսավ.

– Ես կճանչնամ քեզի, կըսես անկարելի է, ուրեմն անկարելի է: Ադե՛կ, այն ատեն երթանք միասին, ինծի ալ հետդ տա՛ր:

Տղուն տիրեց սարսափելի հուզում մը. դեմքը կծկվեցավ ցավեն ու սկսավ դողալ:

Լուիզ վախով ու ապշած նայեցավ անոր.

– Բագրա՜տ, Բագրատ, ի՞նչ ունիս:

– Ոչի՛նչ, ոչի՛նչ: Այդ միևնույն մտածումը, այդ միևնույն ցանկությունը երկու չափսի է կպստուեցնեմ հոգիիս մեջ: Բայց Լուի՛զ, ատիկա բոլորովի՛ն անկարելի է:

– Եվ ինչու՞ համար:

– Նախ քեզի համար. մայրդ քեզմե բաժնվիլ չի կրնար, իսկ ան կապված է Պոլսին, և քեզի ալ վերջապես իրավունք չունիմ քաշելու դավառի մը մեկ խնդճ անկյունը և զրկել քեզի քու բոլոր կապերեդ, հարմարություններեդ ու արվեստիդ պահանջներեն: Բոլորովին օտար պայմաններու մեջ և օտար ժողովրդի. իրավունք չունիմ:

– Ալի՛ւ, ատիկա նախ, իսկ երկրո՞րդը:

– Երկրորդ... երկրորդն ալ ան, որ ես ամուսնանալ չեմ կրնար, կուզեմ ազատ մնալ:

– Մնացած բոլոր խոսածներդ ավելորդ էին. հոսկե պետք է սկսեիր,– ըսավ աղջիկը վճռապես:– Ո՛չ, դուն ինծի երբեք չես սիրած, վնասի քեզ ունեցած թուլութենես օգտվեցար ու հետս խաղացիր:

Բագրատ կախեց գլուխը, և իր տված պատասխանը հնչեց չատ խոնարհ և հուսահատ և աղերսական:

– Ջեմ զարմանար, դուն իրավունք ունիս սմեն մեղադրանքի. ես դուցե այսպես հախուռն վարվելու չէի, կարելի է տակար գտնվեցա քու հմայքիդ դեմը և հետուն չմտածեցի, մինչդեռ պետք է մտածած ըլլայի: Բայց, Լուի՛զ, ես վատ մը չեմ, ես սիրած եմ քեզի, ես կսիրեմ քեզի:

– Եթե կսիրես, մի՛ երթար,– առարկեց աղջիկը խիստ ու պահանջկոտ շեշտով մը:

– Ջեմ կրնար:

– Տա՛ր ինծի ալ քեզի հետ,– կրկնեց աղջիկը հրամայական:

– Ո՛չ,– ըսավ տղան նմանապես վճռական:

Եվ երկուքն ալ ըմբռնեցին, որ ամեն ինչ վերջացած է:

Աղջիկը զարմանալի հանգստությամբ մը ելավ ոտքի, վերցուց սեղանին նետած ձեռնոցը և ավելի ևս մեծ հանգստությամբ մը ըսավ.

– Դուն ո՛չ միայն վատ մը չես, այլ բացառիկ մաքուր ու չիտակ տղա մըն ես, և ես հպարտ եմ քեզի սիրած ըլլալուս համար: Երթաս

բարո՛վ, քանի որ երթալ կուզես և կուզես առանձին ըլլալ: Ներե՛ ինծի, որ քեզի իզուր վիրավորեցի և ներե՛ ինծի, որ հեռանամ:

Եվ դարձավ դեպի ելքը:

– Լուի՛զ, կեցի՛ր, ու՞ր կերթաս:

– Այլևս պետք չունիս ինծմով հետաքրքրվելու:

– Այո՛, բայց... կեցի՛ր, երթանք միասին:

– Ո՛չ: Ես կխնդրեմ՝ չհետևիս ինծի:

Ելավ կանաչ առանձնարանեն և սրճարանի սեղաններուն մեջեն արագ սպրդեցավ պարտեզեն դուրս:

Բագրատ աղջկա հրամանին հնազանդ՝ տեղեն չերերաց: Եվ ո՞ւր երթար, ինչո՞ւ երթար, ի՞նչ իմաստ: Վերջացած էր իրենց պատմությունը, և խզված էին կապող թելերը:

Թևերը դրավ սեղանին գարեջուրի ափսեին քովիկը, և գլուխը կամաց-կամաց իջավ թևերուն վրա:

Կարծես լալ կուզեր, բայց չուներ ո՛չ մեկ արցունք: Ջորցեր էր ինչպես հոգին, այնպես և արցունքը:

Քո՞ւն էր, թե՞ արթուն՝ ինքն ալ չէր գիտեր, և որքա՞ն տևեց այդ վիճակը՝ ան ալ չգիտեր: Հանկարծ կանաչ ցանկին ետևեն անցավ սրճարանի սպասավորը ձեռքի բաժակներուն ժխորովը: Բագրատ կիսաթափ բարձրացուց վերջապես գլուխը. ո՛չ մասնավոր հուզումը մը ուներ մեջը և ո՛չ ցավ, միայն կրծքին տակ սարսափելի պարապ մը կզգար: Կարծես պարպվեր էր ներքին բոլոր գործարաններեն:

Նայեցավ չուրջը. խմիչքի ափսեն երկու բաժակով և ձեռք չդպած շիշը մեջը, չուրջը կանաչ առանձնարանը, որու անցքեն կերևային սրճարանի քանի մը պարապ սեղանները: Այս բոլորը իրեն բան մը կհիշեցներ. ատոր նման տեղ մը եղած էր կարծես, նման վիճակով: Ո՞ւ ր էր ատիկա:

Եվ իր հիշողության դեմ, կարծես թանձր մշուշի մը մեջեն սկսավ կամաց-կամաց վեր բարձրանալ ու հստակիլ ամբողջ պատկեր մը. խոնավ գարնան իրիկուն մը, սրճարանի մը պարտեզը ավելի հինկեկ, անտերև թուփերու ետև անկյուն մը ու սեղան մը մեջտեղը, նորեն գարեջուրի շիշը և երկու բաժակ, և երկու հոգի գրկված, սեղմված իրարու՝ ինքը և Էլենին:

Նախ կարծես օտար պատկերի մը կնայեր, որուն իսկույն հաջորդեց

ուրիշ պատկեր մը՝ Լուիզը, ինչպես որ կնցած էր իր դեմը քիչ մը առաջ՝ ցասած, ցնցված, հպարտ ու պահանջկոտ: Զարմանք. երկուքն ալ կարծես պարզ նկարված պատկերներ ըլլային, որոնք սակայն շուտով սկսան իրար խառնվիլ, իրարու կապվիլ, և որոնց միացումեն տղու գլխուն մեջ ծագում առավ նախապաշարում մը.

«Այս մեկը իմ պատիժս է այն մյուսի հետ ունեցած վարմունքիս փոխարեն»:

Բայց իակոբն ինքն ալ ըմբոստացավ իր «անոտի» մտածումին դեմ: Ի՞նչ կապ այդ երկուքին մեջ: Բայց նմանութիւն մը կար. երկուքն ալ ընդհատված էին հպվիլ սկսած, երկուքն ալ վիշտ էին բերած ու զղջում:

«Սերը երևի ինծի համար չէ, ինչ ճևով ալ որ վերցնեմ»,- եզրակացուց վերջապես, ելավ ոտքի, չխմված գարեջուրին դինը նետեց ափսեի մեջ և դանդաղ քայլերով անցավ սեղաններուն մեջեն դեպի պարտեզին դուռը, ճիշտ նույն ուղեփածով, որով անցած էր Լուիզ իրմեն առաջ:

ԻԹ

Ո՛չ այդ իրիկունը և ո՛չ ալ հաջորդ երեք օրերը ալ Լուիզը չտեսավ:

Աղջիկը միշտ դուրսն էր: Տնեցիք ըսին, որ մեկ-երկու ընկերներու հետ դաշնակի փորձեր կըներ անոնցմե մեկուն տունը: Նվագահանդեսի մը պիտի մասնակցեին ու կպատրաստվեին: Գիշերները ալ սենյակեն դուրս չէր գար:

Բագրատ ինքն ալ տունեն խույս կուտար: Շատ պբաղված էր հարար բանով և տուն կվերադառնար շատ ուշ: Հաճախ Սարգիսի հետ: Գիշեր մը անոր տունը մնաց: Մինչև կեսգիշեր պրպտ գլխի կխոսեին ու կծրագրեին, որ բոլոր դուրսեցիները հետզհետե խմբվեին հայրենիք:

Պատկեցան միևնույն սենյակը և լույսը մարելեն վերջը անկողիններուն մեջ դեռ երկար-երկար կխոսեին ապագային, հայ ժողովուրդի սթափումեն, հեղափոխական շարժումներու ստանալիք անխուսափելի ընթացքեն:

Երեքշաբթի առտու Բագրատ գնաց իր չոգենավին տոմսակը: Երեք օրեն մեկնելու էր: Եվ ուղիղ չորս օր էր, որ Լուիզը չէր տեսած իրենց

սրճարանի բաժանումեն ի վեր, և սաստիկ կարոտ մը կհուզեր տղու հոգին իր բազմատեսակ զբաղումներուն ու մտածումներուն ընդմեջին:

Տոմսակը գնելեն ետքը գործերը դիտմամբ այնպես դասավորեց, որ իրիկվան դեմ կանուխ տուն գտնվի և Լուիզին անպատճառ հանդիպի:

Ինքն ալ գիտեր, որ ավելորդ ու անպատուղ բան մըն էր իր այդ բուռն ցանկությունը, որ իրենց հանդիպումը ո՛չ մեղմացում էր բերելու վերքերուն, ո՛չ ալ որևէ միսիթարանք, բայց և այնպես տեսնելու, նայելու, անոր ձայնը լսելու խորին պահանջ մը ուներ:

«Ջորս օր է՝ չեմ տեսած»,- կկրկներ մտովի, իբրև անառարկելի բացատրություն իր զգացած ծարավին:

Երբ իրենց տան դռան զանգը քաշեց, սիրտը կդողար: Դուռը բացվելու ուշացավ: Տղան արդեն բանալի հանել կուզեր, որ ներսեն քայլեր լսվեցան: Օկյուատայի արագ քալվածքն է՝ ճանչցավ:

- Լուիզը Ջեզի չատ-չատ բարև ըրավ, պարոն Բագրատ,- ըսավ պզտիկը դուռը գոցվելուն պես:

Տղան ցնցում մը ունեցավ:

Իսկույն դուրս եկան տիկինը և Էլենին:

Մայրը բացատրեց, որ առտուն եկեր էր Լուիզի մեկ մտերիմ ընկերուհին, որ Թարապիա կապրի, «ուր հրաշալի վիլլա մը ունին ծովուն վրա», և չատ խնդրել էր, որ երկու չաբաթ Լուիզը իրենց տունը տանի:

- Նախ դժվարացա համաձայնությունս տալու. չիտակը աղջիկներս միշտ քովս կուզեմ, բայց չատ խնդրեց, կըսեր, որ վաղը չէ մյուս օրը իր քսանհինգ տարին պիտի լրանա: Մտածեցի՝ վերջապես Լուիզն ալ մեզք է, այս ձմեռ չատ հոգնեցավ, թող քանի մը օր հանգստանա:

- Լուիզը չատ ինդրեց,- վրա բերավ Էլենին,- որ Ջեզի իր կողմեն երթաք բարով ըսեմ ու բարի ճանապարհ ցանկամ:

- Անշուշտ ներող կըլլաք, պարոն Բագրատ, որ ինքը անձամբ բարի ճանապարհ մաղթել չկրցավ,- ավելցուց տիկինը:

Բագրատ հասկցավ, որ Լուիզ փախեր էր և այլևս իր երեսը տեսնել չէր ուզեր:

Շատ անախորժ խայթ մը զգաց, վիրավորանքի, արհամարհանքի նման զգացում մը, թեև պատասխանեց չատ սիրալիր չեշտով մը.

- Անշուշտ, չատ կցավիմ, որ անձամբ հրաժեշտ առնել պիտի

չկրնամ օրիորդ Լուիզեն, բայց ներելու ոչինչ չկա, տիկիներ, ուրախ եմ, որ օրիորդը իր ընկերներուն հետ է ու կհանգստանա:

– Այո, այսպես պատահեցավ,– վրա բերավ տիկինը շատ անկեղծ դժգոհութեամբ մը,– ինծի որ մնար՝ չէի ուզեր: Լավ էր, որ Ձեր մեկնումին օրերը բոլորս միասին ըլլայինք:

– Շատ չնորհակալ եմ, տիկիներ, բայց խնդիրը չէ:

Երբ տղան մտավ իրենց սենյակը և դուռը եռանեն գոցեց, մեկ զգացում մը միայն գրկած էր իր ամբողջ էութիւնը. այլևս Լուիզը տեսնելու չէր, երբե՛ք, երբե՛ք:

Առաջին վայրկեանին անկարելի թվեցավ իրեն ատոր հնարավորութիւնը: Որոշեց հաջորդ առտուն կանուխ երթա Թարապիա: Սակայն ասիկա որոշում մըն էր, որոնք կծնին, կապրին ու կմեռնին հոգիներուն խորքը, բայց իրականութեան և կյանքի լույսին չեն դիմանար:

Ինչո՞ւ երթար, ի՞նչ լսելու և ի՞նչ իմանար: Չէ՞ որ ինքը երկու օրեն ձգեր, երթար պիտի, և ալ երբեք իրար չէին տեսնելու: Երկու օր ավելի ուշ թե երկու օր ավելի կանուխ՝ ի՞նչ կարևորութիւն ուներ:

Եվ կեցած իր պատուհանին առջևը, աչքերը հառած հեռավոր տան մը ծխնելույզեն բարձրացող բարակ մուխին՝ կամաց-կամաց եկավ այն համոզումին, որ Լուիզի վարմունքը ամենեն շիտակն էր, ամենեն առողջն ու կտրուկը, առանց որևէ ծեքծեքումի: Եվ շատ ավելի արժանավոր ու հարգելի, քան իր այրող կարոտը, քան իր այս բոլորովին արդեն ուշացած զգացումներն ու հուզումները անտեղի:

Այս եզրակացութեամբ հետ քաշվիլ կուզեր պատուհանեն, երբ տեսավ իր քովը, քիչ մը եռևոք կեցած էր Էլենին ու տարօրինակ ժպիտ մը շրթունքին՝ իրեն կնայեր:

Զարմանքի ու հարցումի նայվածք մը նետեց աղջկան աչքերուն:

– Ի՞նչ կխորհիք այդպես պատուհանին առջևը,– ըսավ աղջիկը տեսակ մը հաղթական չեչոտով:

– Ի՞նչ կուզես, Էլենի,– վրա բերավ տղան մտերիմ խոսվածքով մը:

– Ոչինչ չեմ ուզեր: Ես երկար ժամանակ այնպես էի համոզված, որ Դուք Լուիզը կսիրեիք, և ատոր համար ինծի հետ ուրիշ կերպ

վարվեցաք: Ես այդպես կկարծեի, բայց հիմա կտեսնեմ, որ սխալված եմ. Դուք Լուիզն ալ չեք սիրած, թեև Լուիզը կսիրե Ձեզի:

– Ինչե՞ր կխոսիս, աղջի՛կ, խելքի՞դ եկավ:

– Ո՛չ, ո՛չ, ես աչքեր ունիմ, կզգամ ու կտեսնեմ: Ատիկա դուն ես միայն, որ ո՛չ աչք ունիս, ո՛չ սիրտ. դեմդ ով կուզե ըլլա՝ ե՞ս, թե՞ ուրիշ մը: Եվ լավ է, այսպես ավելի լավ է ինծի համար: Ես Լուիզը շատ կսիրեմ, չէի ուզենար, որ ան վիշտ ունենար: Բայց ինչո՞ւ ծածկեմ քեզմե՝ այսօր ես ուրախ եմ: Գեչ աղջիկ եմ, չէ՞, ըսե՛ք, մի՛ քաշվիք, որ ես ալ ըսեմ Ձեզի, թե գեչ տղա եք:

Բագրատ բոլորովին չփոթված էր և չգիտեր ինչ պատասխան տար և իր չփոթությունը ծածկելու համար կատակի տվավ.

– Ա՛յ աղջիկ, գնա՛ գործիդ, թե չէ մազերեդ բռնածիս պես, տե՛ս, բերանը բաց պայուսակս կկոխեմ քեզի:

Եվ դեպի աղջիկը երթալով՝ ձեռքը դրավ անոր ուսին և կես մը կատակով, կես մտերիմ ավելցուց.

– Իմ լա՛վ աղջիկս, պարապ բաներ մի՛ խոսիր ու գնա՛ բանիդ:

– Կերթամ,– ըսավ աղջիկը ինքն իր համոզումին մեջ ամուր,– Հանգի՛ստ եղիր, մինչև հիմա ո՛չ քեզի և ո՛չ Լուիզին որևէ անախորժություն չեմ պատճառած կարծեմ:

Ու կատվի քայլերով քաշվեցավ սենյակեն:

Լ

Արևը Ղալաթիայի մինարեներուն ետևեն դեղնություն մը կթափեր Վոսփորի ջրերուն վրա, ուր չոգենավ, առագաստանավեր, նավ ու նավակներ, բոլորը խառնվեր էին իրար: Մեծ իրարանցում ու կյանք կար ծովուն վրա՝ Ոսկեղջյուրին բերանը:

Այդ միջոցին էր, որ մեծկակ մակույկ մը Ղալաթիայի մաքսատան առջևեն բաժնվելով՝ սկսավ բացվիլ:

Բագրատ նստած էր Էլենիի ու Օկյուտայիին մեջտեղը և վերջինի ձեռնոցապատ փոքրիկ թաթիկները իրեններուն մեջ կշոյեր ու հազիվ կպատասխաներ իրեն եղած հարցումներուն:

Բոլորովին դժգունած էր:

Ամենեն շատ խոսողը Սարգիսն էր, որ անդադար կկատակեր իր բարձր ու անհոգ ձեւուեբովը ու չէր թողներ այդ տեսակ վայրկյաններուն հասուկ եղող ծանր լռութեան մը տիրելուն:

– Վասակը դեռ չեկաւ,– նկատեց Գևորգ, որ նստած էր սիկնոջ հետ Բագրատին դիմաց:

– Երևի արդեն չոգենաւն է,– պատասխանեց Էլենին:

– Հիանալի օդ է, աղվոր ճամփորդութիւն մը պիտի ընեք,– ըսաւ սիկինը:

– Ես ալ հետերնիդ ըլլայի՛,– բացականչեց Օկյուստան:

– Մայրիկեդ Հրաման ա՛ռ, տանիմ,– ժպտեցաւ Բագրատ գրկելով:

Մակուկիը մոտեցաւ նոր ու մեծ չոգենաւի մը: Նաւավարը քիչ մը պոռաց ու հայհոյեց իր արհեստակիցներուն հետ ճամփա բանալու համար խռնված նաւակներուն մեջեն ու վերջապես մոտեցաւ չոգենաւի կողեն կախված նեղ սանդուղին:

Մեկիկ-մեկիկ սկսան վեր ելլել օրորվող սանդուղին հենարանեն պինդ բռնած:

Կիներեն վերջը առաջին բարձրացողը եղաւ Բագրատ: Հագիվ էր ոտքը սանդուղին պղպեջը դրեր, որ շրջապատվեցաւ խումբ մը հայրենակիցներով, որոնք ճամփու դնելու էին եկեր:

Առնցմե մեկը թուղթի կտոր մը դրաւ Բագրատին ձեռքը: Տղան ցրված հետաքրքրութեամբ մը բացաւ ծալծլված թուղթը և քիչ մը մարդոց հոսանքեն մեկդի քաշվելով՝ կարդաց մատիտով արագ գրված հետևյալ տողերը.

«Իմ հիմա՛ր, ապնի՛վ տղաս:

Դուն՝ արևելք, ես՝ արևմուտք: Այս առաու հոլմես ստացա սպասած նամակս և դրամ: Անչափ ուրախ է Ֆրանսա երթալուս: Այս պիչերվան ճեպընթացով կմեկնիմ Փարիզ, հոնկե ալ՝ ուր որ պետք է: Հիմա անցագրիս վավերացման խնդրուն եմ զբաղված. չոգենաւ դալ չեմ կրնար: Ուրեմն ցտեսութիւն իմ ազարակս ու իմ կովերուս քովը: Իր բոլոր ուժովը կգրկե քեզի՝ ուրիչ ապուշ մը»:

Բագրատ վայրկյան մը անշարժ մնաց՝ քարացած ժպիտ մը շրթունքին:

– Ինչ բան է,– հարցուցին ընկերները մոտենալով:

– Այս իրիկուն ճամփա դնելու մարդ մըն ալ ավելցավ ձեզի,– պատասխանեց Բագրատ խնդալով:

– Գրավ կուգամ, որ Վասակն է,– ըսավ Սարգիս:– Արդեն վերջին օրերը չատ էր խորհրդավոր:

Բագրատ նամակը տվավ անոր, որ կարդա, և ինքը կանանց եաևեին չտապեց վարի սրահն ու խցիկները:

Նավավարները արդեն փոխադրած էին տղու պայուսակներն ու մյուս իրերը անոր փոքրիկ, կոկիկ ու մաքուր խցիկը

Պատի նեղ սեղանին ու մահճակալին վրա շուտով դիզվեցան ընկերներու ու տնեցիներու կողմե բերված տուփերը, կողովիկ մը և զանազան գույնի ու ձևի թղթերու մեջ փաթթված բաներ:

– Է՛, անոթի չես մնար,– խնդաց Գևորգ:

Նեղ խցիկին մեջ ամենքը բան մը կընեին, խորհուրդ մը կուտային: Միայն Բագրատն էր, որ նստեր էր կրկին երկու աղջիկներուն մեջ և չարունակ Օկյուստային մազերը կշոյեր ակնհայտնի տխրությամբ:

– Ինչ աղջիկներուն փաթթվեր մնացեր ես,– ըսավ Սարգիս խնդալով՝ անոր տրամադրությունը փոխելու համար:– Ամբողջ տարին խելքդ ո՞ւր էր:

Բագրատ ցավագին ժպիտ մը միայն ունեցավ:

Շոգենավը սուլեց երկրորդ անգամ, ու ամենուն սիրտը ավելի արագ տրոփել սկսավ:

– Կարծեմ ալ վեր ելլենք,– ըսավ տիկինը հանդիսավոր:

Ելան ամենքը նավուն տախտակամածը:

Սոսկալի իրարանցում էր հոն. բեռ, ապրանք, մարդիկ՝ բոլորը իրար խառնված: Շատերը կբաժնվեին, կհամբուրվեին: Լաց, ծիծաղ, պատվերներ ու վերջին հանձնարարություններ:

Ահագին բազմություն սանդուղին գլուխը խռնված՝ իջնելու կարգին կսպասեին:

– Թող ես բանտամ պահիկներուն դուռը,– ըսավ Սարգիս ու. փաթթվեցավ Բագրատին:

– Ուրեմն, ցտեսություն՛ն,– ըսավ Գևորգ համբուրվելով:

Բագրատ մոտեցավ տիկնոջ, ծռեցավ ձեռքը համբուրելու չարժումով մը, բայց տիկինը ինքը գրկեց տղուն գլուխը ու համբուրեց:

– Քեզի կցանկամ բախտավորություն,– ըսավ Բագրատ Էլենիի ձեռքը իր երկու ձեռքերուն մեջ առնուր սեղմելով:

Օկյուստան կախվեցավ տղու վիզին և ալ ձգել չէր ուզեր. բռնի հեռացուցին, և աղջիկը սկսավ սոսկալի կերպով հեծկլտալ:

Տիկինն ալ վարակվեցավ և ըսավ աչքերը սրբելով.

– Այսպես է կյանքը. ծով մըն է, ալիքները կզարնեն ու կմոտեցնեն մարդիկը իրարու, կուգան նորեն ալիքները, կզարնեն ու կզատեն մարդիկները իրարմե:

Այս փիլիսոփայությամբ ալ ուղղվեցավ խումբը դեպի սանդուղին էջքը, մինչ Բագրատ հրաժեշտ կառներ իր մյուս բարեկամներեն ու հայրենակիցներեն:

Էլենին առջին-անջին դիտելով՝ քիչ-քիչ ետ մնաց և ձգեց, որ բոլոր ընկերներն ու իրենները իրմե առաջ անցնին:

Ու երբ վստահեցավ, որ ամենքը երկար ու նեղ չարժական սանդուղին վրան էին և իրենց բոլոր ճարպիկությունն ու զգուշությունը իրենց ձեռքերուն ու ոտքերուն վրա կեդրոնացուցած՝ անվտանգ վար իջնելու կաշխատեին, հանկարծ ետ դարձավ ու շիտակ մոտեցավ մեկուսի կեցած Բագրատին:

– Ես այս կերպով քեզմե բաժնվիլ չեմ կրնար,– ըսավ արագ ու սաստիկ հուզված ու արցունքոտ աչքերով,– ես քեզի սիրեր եմ միշտ և վերջապես իրավունք մը ունիմ կարծեմ,– ավելցուց արցունքներուն մեջեն ժպտելով:

Բագրատ այն զգացումը ունեցավ, որ կարծես իր հոգիին մեջ հանկարծ պատ մը փլավ: Դժվար զսպվող փղձուկ մը խեղդեց կոկորդը, և ցավի, կարոտի ու խղճահարության բուռն չարժումով մը և իր բոլոր ուժովը քաշեց աղջիկը կրծքին, և նույն հին, երկար համբույրովը շրթունքները նորեն գտան իրար:

Էլենին տղու թևերեն ազատվելուն պես նայեցավ չեչտակի անոր աչքերուն և արցունքի ու ծիծաղի մեջեն կրկնեց չտապով.

– Երթա՛ս բարով, երթա՛ս բարով, հիշե՛ երբեմն ինծի:

– Դո՛ւն ալ, դո՛ւն ալ,– կրկնեց Բագրատ մեծ հուզումով:

Էլենին վազեց սանդուղը, բազմության մեջեն վար չտապեց և ցատկեց մակույկին մեջ՝ դանդաղելով հրմշտուքեն:

Եվ մակույկը բացվեցավ:

Մեքենան սկսեր էր ահագին աղմուկով խարիսխը քաշելու:

Բագրատ սանդուղքեն ոչ շատ հեռու ինկավ նավու եզերքին վրա, և ծանր ու աղի արցունքները հոսիլ սկսան:

Ինքն ալ չգիտեր, թե ինչո՞ւ կուլար և ինչի՞ վրա: Իր հոգիին մեջ խորունկ ու ցավագին կարեկցություն մը միայն կզգար: Ո՞վ կմեղքնար. Էլենի՞ն, որ ահա՛, այն փոքրիկ մակույկին մեջեն Թաշկինակ կշարժեր իրեն, փոքրիկ Օկյուստային փոքրիկ սի՞րտը, որ չոգենավեն հեռանալ չէր ուզեր, իր ընկերնե՞րը, որոնց այնքան մոտ էր և որոնց ոչինչ չէր ըսած, թե ինչո՞ւ կերթար, թե՞ վերջապես կմեղքնար իր Լուիզը, որ ապաստանած օտար տուն մը՝ իրենց սրտերը իրարու զոդող այն նուրբ թելերը փեթռտել կջանար, թե՞ կմեղքնար ինքզինքը, իր ջարդված ու չարչարված հոգին:

Ալ մակույկին մեջ դեմքերը լավ չէր որոշեր. Թաշկինակներ կշարժեին, հովանոցներ, ինքն ալ մեքենաբար իր գլխարկը կերերցներ օդին մեջ՝ մեկ ձեռքով ամուր քովի պարաններեն մեկը բռնած:

Մակույկը մտավ հանկարծ կայմերու անտառի մը ետևը ու աներևույթ եղավ: Բագրատ քիչ մըն ալ փնտրեց աչքերով, կախեց գլուխը և աչքերը հառեց ջուրին, որ չոգենավին քովեն ետ-ետ կփախչեր:

Դրավ վերջապես գլխարկը և տատամսոտ քայլերը ուղղեց դեպի նավուն ելքը: Կռթնեցավ դրոշակի սյունին ու կսպասեր...

Կուգային ու կանցնեին հետզհետե Վոսփորի գեղեցիկ ափերը իրենց կանաչութեամբ, բարձունքներով, գյուղերով ու պալատներով, որ թանձրանալ սկսող մուրը հետզհետե իր մեջը կփաթթեր:

Վերջապես կմոտենային Թարապիային: Բագրատ խենթ հույսով մը ու աչքերը լարած կդիտեր, կփնտրեր ծովեզերքին չենքերը, վիլլաները, գուցե Լուիզը անգամ մըն ալ նշմարեր, Լուի՛զը...

Ո՛չ, ալ տեսնելու չէր: Փակված էջ մըն էր, ինչ որ անցեր էր:

Վոսփորի երկու եզերքները արդեն վայրենացան: Մուրին մեջեն միայն թնդանոթներու պահակներուն լույսերը կկայծկլտային, և նեղուցը կլայննար:

Բագրատ, երբ անգամ մըն ալ ուշքի եկավ, տեսավ՝ երկու կողմը

ալ ցամաք չկար: Ցամաքը միայն իր պիմացն էր, ուրկե զուգդ փարոսներուն լուսիերը խաւարին մեջեն իրեն կենայեին գայրացկոտ քթթումով մը:

Բագրատ հոս նայեցաւ նաւուն ուղղութեամբը: Սև ծովն էր, սեփսև մութին մեջեն: Եվ ջուրի այդ անեզը տարածութեան հանդեպ՝ երիտասարդը բնազդորեն խոր չունչ մը առաւ:

Շոգենաւն ալ կերթար հիմա ազատ, շոգիին բոլոր ուժովը և ուժեն կդողար: Դող մըն ալ անցաւ Բագրատի մարմնեն:

Ծով մըն էր մութ ու անեզր նաև այն ապագան, ուր հիմա կերթար: Ալեկոծութի՜ւն իր լուռ ու սև երեսին տակ, զսպված մռնչյո՜ւն, տաժանք ու պայքար, գուցե խորտակում ու քայքայում այն գործի, որու իրականացման համար հիմա ինքը կերթար...

Կյանքի նոր էջ մըն էր, որ կբացվեր իր առջևը:

Շոգենաւը կդողար:

ՎԵՐԺԻՆ

ՎԵՊ

– Մնկ խոսքով՝ չունինք. ո՛չ մեր դրականու թյան, ո՛չ մեր հանրա-
լին գործերուն մեջ ժամանակակից զարգացում ունեցող մարդ չունինք,–
եզրակացուց Արշակ:

Աթոռին վրա ջղուտ չարժում մը ըրավ, թևը հենեց պատշգամի վանդակին ու հայացքը սահեցուց խոսակցի դեմքեն, որ հավիվ կնշմար-վեր պատշգամը պրկող բաղեղներու թանձր ստվերին մեջեն:

Տիրան ոչինչ չառարկեց: Անշարժ նստած էր՝ աչքերը սևեռած Մարմարայի ծալերուն, որուն վրա լուսինը կեսը խածված, կեսը մնացած դունչովը կհորանջեր:

Եվ վայրկյան մը լռություն: Միայն ծովն էր, որ վարը՝ պարտեզի շրթունքի ավազուտին վրա, իր զվարթ ու օրորուն խլրտուքովը անվերջ կչուխեր:

Քսանհինգը անց միջահասակ, խարտյաշ մազերով, մաքուր ածիլված այտերով ջղուտ երիտասարդ մըն էր խոսողը:

Անոր պես ջղային, բայց կարծես քիչ մը ավելի դեռատի, քիչ մը ավելի չեկ ու զանգուր, երկար մազերով տղա մըն էր Տիրանը, որ լուռ ականջ կդներ ընկերոջ ճառին՝ պենսնեին մեջեն առագաստանավի մը ստվերագծերուն հետևելով. առագաստանավ մը, որ ոչ շատ հեռուն լուսնի ցոլացումներուն վրայեն հանդարտ կսահեր:

– Ինչ կարելի է պահանջել այդ մարդիկներեն,– շարունակեց Արշակ իր խոսքին թելը:– Բավական է անգամ մը պատկերացնես, թե որն է անոնց մտավոր պաշարը: Արտասահմանյան թելրթի մը հոդվածեն քաղված դիտողություն մը, եվրոպական գրախոսի մը մեկ թռուցիկ եզրակացությունը, ֆրանսական վեպի մը կամ բրոշյուրի մը դատողու-թյուններեն սեփականած տեսակետ մը ընկերական այս ու այն հարցի վրա, –ահա՛ բոլորը և ան ալ ամենեն լավ պարագային. պատահական ու ցան-ցիր կրթություն մը:

– Սիրելի՛ս, կարելի չէ՞ նյութերնիս փոխենք քիչ մը, – ընդհատեց վերջապես Տիրան ժպտուն դժգոհանքով մը:– Այս հիանալի բնության դիմաց թողնենք, որ քիչ մըն ալ զգայարանքները խոսին. նայէ՛, ինչ աքանչելի գիշեր է. երկի՛նքը, ծո՛վը, օ՛դը:

– Տեսա՛ր դուն այս աշխարհիս արդարութիւնը. ամբողջ օրը ոտանավորներով ու վեպերով ինծի չունչ առնել չես տվեր. հիմա ալ ելեր ես, ինծի կմեղադրես:

– Սակայն, հոպի՛ս, ընթրիքդեն անմիջապես առքը մարդու ստամոքսը կվտանգարի այդ պիտական ժժվարամարս պահանջներեն:

– Խե՛ղճ բանաստեղծիս ստամոքսը:

Եվ երկուքն ալ լռեցին:

Օգոստոսի բարակ հովիկը ծովուն վրայեն արագ վազեց, չոսպով մնաւ թաքնվեցավ պատշգամի սաղարթներուն դիրկը: Եվ անոր բերած չարաճճի լուրերեն ունայնամիտ իրարանցում մը ինկավ տերևներու խտութեան մեջ ու ծածուկ փախուստ մը:

Տիրան հափշտակված ականջ կդներ այդ գվարթ փախուստին և աչքերը գոցած՝ տերևներու ըսածին իմաստը ըմբռնելու ճիգեր կըներ, երբ տան վարի հարկեն լավոց աղմուկ մը իր աչքերը մեկեն բանալու ստիպեց:

Ու նույն վայրկյանին մութ նախասենյակեն գնդակի նման պատշգամ գլորեցավ Տիրանի փոքրիկ, գունդիկ-կլորիկ եղբայրը, որ նոր սանդուղներեն վեր էր վազեր շունչը կտրած.

– Բժիշկենք եկան, եղբայրի՛կ:

Ուրախ չարժումով մը Տիրան իսկույն վեր թռավ:

– Ո՞վ են,– Հարցուց Արշակ անտարբեր:

– Բժիշկ Պալիկյանները: Բժիշկը անշուշտ տեսած պիտի ըլլաս. քալե՛ վար, քեզի ծանոթացնեմ ընտանիքին:

– Չէ՛, ես տուն պիտի երթամ. ամբողջ օրը հոս էի. մանր-մունր գրելու բաներ ունիմ, երթամ այս գիշեր կարգի բերեմ: Յաւետութի՛ւն:

– Հիմարութի՛ւն: Տեղդ կեցի՛ր: Մեկ-երկու ժամ ուրախ ժամանակ կանցընենք, բժիշկը հետաքրքիր մարդ է:

– Դուցե ավելի ճիշտը՝ տարօրինակ, ինչպես լսած եմ:

– Քույրն ալ՝ կրթված աղջիկ:

– Գիտե՛մ, այդ Պոլսի կրթված աղջիկներն ալ պիտեմ: Յաւետութի՛ւն:

Տիրան կարծես վիրավորվեցավ ընկերոջ այդ արհամարհոտ վարմունքեն:

– Բայց կսխալիս, քու գիտցածներեդ չէ, – առարկեց լրջությամբ:

– Վա՛զ անցիր, եղբա՛յր:

– Ա՛յ, միշտ այդպես ես դուն, – տաքցավ Տիրան,– ուրիշի խոսքին բնավ կարևորություն չես տար: Եկո՛ւր, աչքերովդ տե՛ս, որ Հավտաս:

– Ցը՛:

– Արշա՛կ, ճշմարիտ կվշտանամ, եթե երթաս:

– Խե՜ղճ է:

– Ո՛չ, այսօր ալ իմ խոսքս պիտի ըլլա:

Արշակ զարմացած ու ժպտուն ակնթարթ մը նայեցավ լուռ ընկերոջը երեսին և ըսավ.

– Աղե՛կ, այսօր ալ քու խոսքդ թող ըլլա:

* * *

Տիրանի ծնողքը հազիվ հյուրերը դահլիճն էին առաջնորդեր ու դեռ նոր էին նստեր, որ երկու ընկերները երևցան դահլիճի դռան սեմին:

– Ահա՛ և մեր բանաստեղծը,– բացականչեց բժիշկը խոշորաձայն և մեծ ու ոսկի ակնոցներուն մեջեն հայացքը գամեց քովի անծանոթ դեմքին:

Իր ձայնին պես ինքն ալ հաստ մարդ մըն էր, կարծես իբրև ծաղր իր Պզտիկյան անունին:

Տիրան ծռեցավ և լուռ ընդհանուր բարև մը տվավ, չտկվեցավ և նոր միայն խոսք առավ.

– Թույլ տվեք ծանոթացնեմ ձեզի ընկերս: Արշակ Սմբատյան, որ գերմանական համալսարանները չափչփելե հոգնած՝ եկեր է այս ամառ հոս իր խիստ քննադատություններովը մեր համբերությունը չափելու. առաջվընե զգուշացնեմ:

– Հետաքրքիր է,– խնդաց բժիշկի բամբ ձայնը:

– Տիկին, օրիորդ և բժիշկ Պզտիկյաններ, – շարունակեց Տիրան ներկայացման արարողությունը:

– Ուրախ եմ ծանոթանալուս,– ըսավ Արշակ թեթև խոնարհությամբ մը:

– Ահա ասիկա այն օրիորդ Վերժինն է, որու մասին քիչ մը առաջ քեզի այնչափ վատ բաներ պատմեցի,– դիմեց Տիրան ընկերոջը:

– Կներեսայիմ ձեր շաղակրատելը,– պատասխանեց օրիորդը թեթեւ ժպիտով մը:

Փոքր, նուրբ, արձանի մը համաչափութեամբ կերտված, ճկուն ու տոկուն կերպարանք մըն էր Վերժին: Մինչեւ մեջքը հասնող շագանակի մազերը առանց հյուսքի, միայն ծոծրակին մոտիկ ժապավենով մը օղակված, ազատ փռված էին թիկունքին: Սուր ծնոտը, փոքրիկ, կծկված բերանը իր շարժուն ու խելացի աչքերուն հետ դեմքին արտահայտիչ ու քննող շեշտ մը կուտային:

Ամենքը նստեցան: Հաստակավորները՝ մեկ կողմ, իսկ երիտասարդները՝ սենյակին մեջտեղը դրված ճաճանչ սեղանին չուրջը, որուն վրա առատապեն կախված լամպը առատ լույս կթափեր:

– Հիմա ալ ես հաճոյախոսութիւններ ունիմ Ձեզի ընելու,– ըսավ օրիորդը Տիրանի դեմքին ժպտելով,– Ձեր տպած վերջին պատկերը շատ աղվոր էր:

– Մանաւանդ այն կտորը, ուր Ձեր խեղճ գյուղացին փիլիսոփայութիւն կընեն. շատ ինքնատիպ է, – մեջ ինկավ բժիշկը:

– Ինչպե՞ս, պարո՛ն բժիշկ, ուրեմն իմ պատկերս կարդալու այդ մեծ բացատրութի՞ւնն եք ըրեր. Դուք, որ ինչպես կըսեիք, Ձեր ախտաբանութեան երեք հատորներեն զատ երեք տարիե ի վեր Ձեր ձեռքը ուրիշ գիրք առած չունիք:

– Չէ՛, չիտակը խոսելով՝ ես անձամբ կարդացած չեմ Ձեր գրածը, բայց երեկ իրիկուն սեղանին վրա Վերժինը այնքան խոսեցավ այդ մասին, որ ակամա կարդացած եղա:

Արշակ խնդաց, իսկ Տիրան անախորժ զգացումի ծանածռութիւն մը ըրավ, բայց քովընտի երկար նայվածք մը գամեց աղջկա դեմքին. շոյող ու փափուկ նայվածք մը:

Մինչ աղջիկը գարձավ Արշակին.

– Իսկ Դո՛ւք, պարո՛ն, հապա պատմեցե՛ք մեզի Ձեր շրջած, տեսած տեղերուն, եվրոպական կյանքեն: Եղբայրս շատ ժլատ է այդ կողմեն և, ընդհակառակը, ինծի ալ այնպե՛ս կհետաքրքրե այդ բոլորը:

– Ի՞նչ կուզեք, որ պատմեմ, պատմելու մանաւոր բան մը չկա:

– Զարմա՜նք, ճիշտ եղբորս պատասխանը:

Բժիշկը հեգնոտ ժպիտով մը ծխախոտի ամբողջ ամպ մը արձակեց շրթունքներեն:

– Ա՛յ, օրինակ, պատմե՛,– մեջ ինկավ Տիրան,– արդյոք հո՞ն ալ աղջիկները մարդու հոգին կհանեն, մինչև բան մը երգել հանձն առնեն, թե՞ միայն հոս է այդպես:

– Լռեցե՛ք, – ձայնը երկընցուց Վերժին՝ ձեռքը թեթև մը սեղանին զարնելով Տիրանին առջևը, և նորեն խոսքը ուղղեց Արշակին, – հետաքրքիր է ինծի համար Ձեր տպավորությունը Եվրոպայի կանանց մասին: Մարդ ամեն կողմ կլսե եվրոպացի կնոջ մտավոր ու հոգեկան բարձրության վրա խոսվիլը, թեև որոշ զաղափար մը կազմել ես դեռ չեմ կրցած գլխուս մեջ:

– Եվրոպացի կրթված կինն ալ նույն մեր հասարակության մեջ Ձեր տեսած ու «զարգացած» կոչվող արարածն է, Ձեզի շատ լավ ծանոթ, գուցե քանի մը մանր տեղական արատաքին տարբերությունները:

– Նորեն քննադատություն: Ես ձեզի չըսի՞, – դիմեց Տիրան մյուսներուն:

– Մի՛ ընդհատեք,– բացականչեց Վերժին հրամայական կատակի շեշտով մը:

Տիրան ընդոստ չարժումով մը ձեռքը չրթունքներուն տարավ, խնդաց ու լռեց:

– Հապա այդ դրագիտուհիները, վարչական կինները, ուսանողուհիները, կանանց կոնգրեսները, որոնց մասին մեր թերթերուն մեջ հաճախ կգրեն:

– Հեռուեն, ինչպես Հայտնի է, թմբուկին ձայնը քաղցր կուգա,– եղավ պատասխանը, – մեր մեջ գովեստն ու պարսավը ինքնին արդեն աժան է, մտավոր խեղճության ծանոթ ախտանիշներեն մեկը:

– Երևի այդ ճանապարհով մեր կիներուն դրդիչ օրինակ մը տալ կուզեն, – նկատեց բժիշկը ճակտի կնճիռներն ու հոնքերը խաղցընելով:

Դիմացինի կարծիքը կփորձեր:

– Կարծեմ շատ ավելի օգտակար է ու կրթիչ ցույց տալ երևույթի մը իրական վիճակը ու պատմական պատճառները, քան հրապարակ դնել անճիշտ չափազանցումներ: Իրողությունը գոնե ան է, որ իրապես դեր

խաղացող ու Հանրային կամ գրական կյանքի մեջ լրջորեն բանի պետք եղող կինը Եվրոպայի մեջ ալ մատի վրա համրվելիք բացառութիւն մըն է:

– Ուրեմն հո՞ն ալ կնոջ կյանքը այսպես կաշկանդված է ու ապարդիւն, ինչպես հոս,– եզրակացուց աղջիկը տարօրինակ տխուր չեչտով մը ու մոլորուն խոսվածքով:

Արշակ քննող ուշադրութեամբ մը սկսավ դիտել իր աչքերուն օղակված աղջկան հայացքը: Վերժին բնազդորեն աչքերը փախցուց:

– Կցավիմ, օրիո՛րդ, որ պատասխանս Ձեր ուզածը չէր:

Տիրան, որ մոր կանչով վայրկյան մը սենյակեն ելած էր, ներս մտավ և դեռ սեմեն դիմեց օրիորդին.

– Է՛, այսօր մեզի բան մը պիտի չերգե՞ք:

– Թողե՛ք, խնդրեմ, հետաքրքիր խոսակցութեյան վրա ենք:

– Գիտե՛մ, գիտե՛մ, բայց Արշակին որ ձգեմ՝ քար քարի վրա չի մնար մեր ազգային ու Հանրային շենքեն, պետք է արգիլել այդ ավերումը աղվոր երգով մը:

– Կարծեմ, օրիո՛րդ, ազատում չունիք,– խնդաց Արշակ,– պետք է երգիք:

Աղջիկը դեռ կվարաններ:

– Ելե՛ք, ես ալ չուքակով Ձեզի կընկերակցիմ,– կրկնեց, Տիրան տեսակ մը պահանջկոտ և ընտանի խնդրանքով:

Չուքակի քանի մը նախնական հարդարումներե ու երգի ընտրութեյան վրա փոքրիկ վեճե մը ետքը՝ սկսան:

Տիրան դործիքը փոքրիկ, սուր մորուքին տակ սեղմած՝ կնվագեր լարումով, մազերը եկեր թափվեր էին ճակատին, իսկ աչքերը հառած էին չեչտ ձայնատեսերին:

Վերժին քայլ մը անկե հեռու, չիփ-չիտակ կեցած ու ձեռքերը ետին կապած՝ կերգեր՝ կայծկլտող աչքերը անհանդարտ ներկա եղողներուն վրա պտոցնելով:

Արշակ պլուխը հենած ձեռքին, արմունկն ալ սեղանին՝ անթարթ կնայեր անոր:

«Լավ աղջիկ է», – կկրկներ մտովի ամեն անգամ, որ անոր գրավիչ

ձայնին ալիքներուն մեջեն աղջկան վառ նայվածքը իր դեմքին վրայեն կսահեր:

* * *

Արշակ ու Տիրան հին ընկերներ էին, դպրոցի ընկերներ: Իրարու հանդիպեցան Ղալաթիա, Կեդրոնական վարժարանը:

Նույն տարիքի պատանիներ, նույն դասարանեն, երկուքն ալ բան մը դառնալու, գործ մը տեսնելու տենչովը բռնկած՝ չուտով հարեցան իրարու և մտերմացան:

Այդ մտերմությունը քանի մը տարվան մեջ սկսավ աճիլ դասարանե դասարան՝ հակառակ իրենց մշտական վեճերուն: Արշակ, ավելի ձեռներեց ու գործունյա, չարունակ կծաղրեր Տիրանի երազկոտ անհոգությունը ամեն բանի մեջ, Տիրան, ավելի դյուրագրգռ ու ինքնամփոփ, միշտ կհեգներ ընկերոջը կտրուկ վերաբերումը և ամեն գործի խառնվիլը:

Հազիվ ընչացքը սկսեր էր վերին չրթունքին վրա բծավորվիլ երկուքին ալ, որ իրարմե բաժնվեցան:

Արշակի մորեղբայրը Վիեննա կապրեր գործով: Տղան վարժարանի բարձր կարգերը ավարտելուն չհամբերեց, գնաց անոր քովը: Հոն տարվան մը չափ լեզվին վարժվելեն ու քիչ մըն ալ պատրաստվելեն ետքը անցավ ուղղակի համալսարան՝ առանց ականջ դնելու իր ազգականի հորդորներուն, որ տղան իր առևտրական գործերուն մեջ առնել կուզեր:

Ընտրեց ընկերական գիտությունները. կուզեր վերջը այն տեսակ գործի մը ձեռք զարնել, որ անմիջապես մեր հասարակության վրա ազդել կարողանա:

Երկու ամառ եկավ Պոլիս իր մորն ու քրոջը հետ լլալու. և ավելի հասուն, ավելի գիտակից կերպով սկսավ նայիլ շրջապատող կյանքին վրա, և ավելի՛ ալ տաքցավ անպատճառ կարևոր հանրային դեր մը խաղալու իր ձգտումը:

Հիմա ալ նորեն եկած էր Պոլիս մորը պահանջով՝ հոկտեմբերին նորեն վերադառնալու համար Վիեննա, վերջին անգամ. դեռ երեք կիսամյակի չափ աշխատանք ուներ ավարտական քննություններուն ներկայանալու համար:

Իսկ Տիրան մնաց Պոլիս իր վարժարանը: Ու քանի վերի կարգերը

բարձրանալ սկսավ, այնքան ավելի չնչավեցավ մեջը գրականութեան սերը: Եվրոպական գրեթէ բոլոր արժեքաւոր գրական երկերը կարդացած էր արդէն ու կկարդար, մանաւանդ ֆրանսականը, և՛ բուն երկերը, և՛ անոնց քննադատութիւնները ու վերլուծումները:

Մյուս կողմին ալ ինքը գրիչ չարժելու սկսավ. և փորձերը հաջողեցան: Ընկերներու դրդումով դէո դպրոցին քանի մը կտոր տավալ տպելու, մամուլի մեջ գովեստի ակնարկներ եղան, և այդ օրեն դարձավ ինքն ալ գրագետ:

Եվ ընկերոջը ուսանողական վիճակեն ավելի ևս դրդված, որուն հետ շարունակ թղթակցութեան մեջ էր, վճռեց ինքն ալ երթալ Եվրոպա՝ մեկ-երկու տարի բարձրագոյն գրական դասախոսութիւններուն հետևելու: Բայց իր Հայրը տղու գաղափարով չատ ոգևորված չէր և հարկ եղած ծախքերուն դիմանալու համար ալ բավական ուժ չուներ: Տիրան փորձեց հետևին քիչ մը ազգական եղող մեկ-երկու հարուստներե փոխ առնել, արդյունք չտավ: Ուրիշներեն հույսը կտրած՝ վճռեց ինքն իր աշխատանքովը հասնի իր նպատակին: Որոշեց մեկ-երկու տարի լեզվի ու գրականութեան դասեր տա և ատակ խնայե: Վստահ էր, որ պակասը Հայրը կերպ մը կգտներ:

Այդպես ալ ըրավ: Այս երկրորդ տարին էր, որ Պոլսի քանի մը դպրոցներուն մեջ գրականութեան ու աշխարհաբարի դասեր կավանդեր, ուներ նաևյնպես մեկ-երկու մասնավոր դասեր և հույս ուներ տարի մը վերջը աշնան Փարիզ ըլլալու:

Միևնույն ատեն Պոլսի գրական հրապարակին վրա որոշ դիրք մը գրաված էր արդեն: Անընդհատ կտպվեին իր փոքրիկ պատկերները, ուտանավորները, իր կարճ վիպակները ընթացիկ շաբաթաթերթերուն մեջ և ընդհանրապես ախորժով կկարդացվեին:

* * *

Վերջին տարին Տիրանի ծնողքը փոխադրվեր էին Մաքր-գյուղ, ուր էր Արշակենց տունը դեռ տղու մանկութենեն: Եվ հոդ էր, որ Տիրան ճանչցած էր Պզտիկյան ընտանիքը, և առաջին օրեն Վերժինը գրաված էր անոր մասնավոր ուշադրութեյունը:

*Վերժինի ու Տիրանի ծնողները սկսան իրարու հետ հարաբերութ-
թյան մտնել, ծուռ ու մուռ պիծով աղգականութիւն մը կար մեջերնին,
իսկ Տիրան առանձին շատ ավելի հաճախ կերթար անոնց տունը, մանա-
վանդ վերջին տեղերը:*

*Վերժին արդեն առաջուց լսած էր Տիրանի մասին և երիտասարդին
կվերաբերվեր մեծ հետաքրքրութեամբ ու համակրանքով: Ուշադիր
կերպով կհետևեր ընդհանրապես մեր ընթացիկ գրականութեան և
մասնավոր կերպով ալ Տիրանի գրածներուն: Տղուն համար չափազանց
շողոքորթիչ էր աղջկան այդ բացահայտ հետաքրքրութիւնը դեպի ինքը
և դեպի իր մտքին արտադրութիւնները: Վերջապես Վերժին սիրուն ալ
էր և գրավիչ իբրև անձ:*

*Տիրան գիտակից էր այս բոլորին և կզգար, որ սկսած էր տարվիլ:
Իր «բանաստեղծի» հոգին տակավին չատ կանուխեն ծարավ ուներ ու
որոնում: Եվ քանի-քանի անգամներ ունեցեր էր հոգեկան միամիտ խար-
խափումներ: Վերջերս միայն կարծես ավելի լուրջ զգացում մը ունեցած
էր , և ատիկա իր աշակերտուհիներեն մեկն էր՝ ընդունակ ու աղքատ
աղջիկ մը՝ խոշոր, սև աչքերով ու Տիրանի դասերեն անհուն ոգևորված
և դասերեն ավելի հավանորեն Տիրանով ոգևորված: Տղան կտեսներ,
կտեսներ նաև իր կրծքին տակ բարձրացող խլրտումը: Սակայն աղջիկը
հանկարծ հաներ էին դպրոցեն, և ձախորդ վեպը մեկ անգամեն
պատռվեր էր:*

*Եվ երբ հիմա ալ նչմարեց, որ Վերժինը սկսած էր բռնել իր սրտին
մեջ բաց մնացած զգացումները, որոնք հափշտակված ըլլալու խոր պա-
հանջովը կեռային, Տիրան ակամա հարց կուտար իրեն.*

*«Արդյոք աս ալ նախորդներեն չէ՞, հովի անուշ չունչ մը գարնան
տապ օրին. կշոյե ճակատդ ու կանցնի»:*

*Ու իր տարակույսները, հույսերը, վարանքն ու տենչանքը և
Վերժինի հոգին այնպես, ինչպես ինքը կըմբռներ, այդ բոլորը ան երգած
էր իր ոտանավորներուն մեջ: Բայց հպարտ ու ինքնամփոփ, դեռ ոչ մեկ
ակնարկով զգալ չէր տված աղջկան իր հոգիին մեջ դարձածը: Մանա-
վանդ աղջիկն ալ իր կողմեն իր բոլոր մտերմութեան հետ ինքզինքը միշտ
պարզ ու անտարբեր կպահեր: Ազգականի մը պես:*

«Ան ալ ինծի պես է, և՛ ինքն իր մեջ, և՛ հպարտ», – կմտածեր

Տիրան եսը չոյող բացատրութեամբ մը ու լուռ կապասեր, թե այս բոլորը ո՞ւր պիտի հանգի:

Ահա՛ այդ միջոցին էր, որ չաբաթ մը առաջ, առանց նախապես ոչինչ գրելու, ամուսն գվարթ առաու մը ներս մտաւ Արշակ Հանկարծ Տիրանի սենեակը ու կարասի համբոյրներով նետուեցաւ ընկերոջը վիզը:

Բ

Իրիկուն էր: Մաքր-գիւղի կայարանին առջև բազմութիւն կար: Ոմանք անհամբեր չարունակ պնացքի գալուն ուղղութեանը կնայեին, մյուսները կերթևեկեին պըտոյտի անտարբերութեամբ:

Աղմկող խումբերեն քանի մը քայլ անդին, Հարթակի ճիշտ եզերքին անփութի դիրքով մը կեցած էր Վերժին առանձին և ձեռքի՝ ծառի ճյուղ մը տաշտված բարակ գավազանին ծայրովը գետինը փռված ավազը կխառներ դանդաղ շարժումով:

Հարղն գլխարկին լայն եղերքը արևի հետզհետե դժգունող ճառագայթներեն կհովանաւորեր անոր դեմքը: Եվ քրեմ բարակ չրջազգեստին վրայեն մուխ-կապույտ թեթև ժաքեթ մը անոր մեջքն ու կուրծքը սեղմ կգրկեր՝ զովացող օդի իրկիվան քմահաճույքներեն պատսպարելով:

Գնացքին սուլյը Հանկարծ լսվեցաւ, որ օդին հանդարտութիւնը սուր զարկով մը ծակեց: Ու քիչ մը հետու ճիպ փռվեցաւ ճերմակ մսխին մեջեմեջ օդակվող ոլորումը, կծիկեն քակված թելի կտորի մը պես:

Վերժին բնազդորեն քայլ մը եաւ քաշվեցաւ. և կառախումբը հաղթական մոտեցաւ ու թափով կեցաւ: Աղջիկը որոնող հայացքով վագոններեն դուրս թափվող բազմութիւնը կդիտեր ուշադիր, երբ դեմ դեմի գտնվեցաւ վագոնեն իջնող Արշակին:

Ձեռք տվին իրարու, և Արշակ դարձաւ իր եւեւեն վագոնեն նոր իջած աղջկան:

– Մանկի՛կ, օրիորդի հետ ծանոթ չես կարծեմ:

– Պաշտոնապես ո՛չ, – եղաւ պատասխանը:

Տղան իր քույրն ու Վերժինը ներկայացուց:

– Շատոնց կցանկայի Ձեզի ծանոթանամ, – ըսաւ Վերժին՝ նոր բարեկամուհիին ձեռքը երկար ու ամուր սեղմելով:

– Ինչո՞վ եմ արժանացեր այդ պատվին:

– Ձեր ընտանիքի մասին մեր ծանոթներու շրջանին մէջ շատ է խոսք դարձած և մասնավորապես Ձեր մասին: Պարզ խոսելով՝ տիկին և օրիորդ քննադատներուն կարծիքը այնքան ալ նպաստավոր չէ Ձեր վերաբերմամբ: Աղջիկ մը, որ շարունակ մինակը մինչև Ղալաթիա կանցնի իր մասնավոր դասերը առնելու, որ իր պարտաճանաչ հյուրերու կանոնավոր այցելությունները ջերմեռանդությամբ չի վերադարձներ, որ իր...

Խոսքը կիսատ ձգեց, խնդաց ու ձեռքը կրկին անգամ անոր երկարելով՝ կցեց լրջորեն.

– Մենք լավ բարեկամուհիներ կըլլանք, չէ՞:

Եվ հանկարծ մոռցված բան մը հիշողի ընդոստ շարժումով դարձավ դեպի վագոնները.

– Եղբայրս իրիկունները սովորաբար այս գնացքով կուգար, եկա դիմավորելու:

Երեքն ալ պահ մը սպասեցին, մինչև աղջիկը համոզվեցավ, որ վագոններեն այլևս իջնող չկար:

– Եթե թույլ տաք, այս իրիկուն ալ մենք Ձեզի կընկերանանք մինչև տուն, – առաջարկեց Արշակ:

– Ուրախությամբ:

Եվ տղան երկուքին մեջը մտած՝ ելան կայարանեն:

Մանկիկ տասնվեցի մոտիկ աղջիկ մըն էր: Մեկ նայվածք մը հերիք էր անոր դեմքին վրա եղբորը արծվի քիթին ու խոհուն աչքերը ճանչնալու համար:

Երաժշտությամբ ոգևորված ու վարպետի հակումներով ամբողջովին նվիրված էր իր դաշնակի դասերուն, որուն կառաջնորդեր իտալացի երաժիշտ մը: Եվ քույր ու եղբայր արդեն չատոնց ծրագրած էին, որ Արշակի Եվրոպայեն դարձին անմիջապես աղջիկը պիտի մեկներ Միլան՝ իր ուսուցչին հայրենիքը: Մյուս կողմեն ալ եղբայրը թե՛ անձամբ, թե՛ նամակներով չարունակ կջանար հնար տալու քրոջը, որ իր մտավոր զարգացումը ավելի հիմնե ու ընդլայնե:

– Ըստ երևույթին, նորեն դասե կուգաք, – նկատեց Վերժին՝ աչքով Մանկիկի անուրթին տակի նոթերուն փաթույթը ցույց տալով:

– Այո՛, – ժպտեցավ Մաննիկ: – Ես՝ ուսուցչիս մոտեն, եղբայրս՝ խմբագրատունեն, Ղալաթիա իրարու հանդիպեցանք:

– Հա՛, իրա՛վ, ես Ձեր գաղտնիքը արդեն բացած եմ, – դարձավ հանկարծ Վերժին երիտասարդին:

– Ի՞նչ գաղտնիք, – հարցուց տղան կես մը զարմանքով, կես մը հետաքրքիր:

– Պարոն Տիրանը երեկ պիշեր մեզի էր և ամեն բան պատմեց և թե ո՞վ է «Սլաք» ծածկանունին տակ թաքնված հողվածներուն հեղինակը:

– Եթե ասիկա է բոլորը, խիստ չահեկան բան մը չէ Ձեր բացած գաղտնիքը:

– Սլաքի «Եվրոպական նամակները», ներեցե՛ք, ես ճանչած եմ իրենց հեղինակը ճանչնալես առաջ և միշտ սիրած եմ իրենց բաց, պարզ ու անկեղծ չեչոը: Թեև պիտի ըսեմ, որ Ձեր սպասումները մեր երիտասարդ սերունդեն չափազանց խոշոր է, մանավորապես ինչ որ կվերաբերի աղջիկներուն:

– Չափազա՞նց կզտնեք:

– Ի՞նչ կսպասեք Դուք մեզմե: Ոչ մեկ հասարակական խնդիր մեզի իսկապես չի հետաքրքրեր: Անշուշտ երբեմն կխոսինք ընկերական ու գրական այս ու այն հարցի մասին, բայց միայն չնորհքի համար. և ընդհանրապես կկրկնենք, ինչ որ մեծամասնութիւնը կպահանջե, ինչ սեփական համոզում կակնկալեք Դուք մեզմե:

Արշակ, որ հետզհետե քալվածքը ծանրացուցեր էր, վերջապես բոլորովին կանգ առավ փողոցին մեջտեղը:

– Ինչո՞ւ կեցաք. ճիշտ չե՞մ ըսեր, օրիո՛րդ Մաննիկ:

– Բացատրութիւնները մեկդի դրած, – պատասխանեց Մաննիկ:

Ու երեքը միասին նորեն առաջ շարժվեցին: Եվ Արշակ ակնթարթ մը վարանելեն ետքը իր մտածումը զսպել չկրցավ.

– Ներեցե՛ք համարձակութիւնս, օրիո՛րդ, բայց պիտե՞ք, այդ կերպով խոսող անհատե մը մարդ ակամա պահանջկոտ կդառնա, և ակամա հարց մը կուգա ինքվիս ծայրը...

Ու չգիտեր ինչ ձևով արտահայտե, որ քաղաքավարութեան սահմաններեն դուրս եկած չըլլա: Բայց աղջիկը ինկուզն ինքը եկավ օգնութեան.

– Թե ինչո՞ւ ես ինքս ալ նույն հոսանքով կքալեմ. ա՛ս ըսել կուզեք:

– Մոտավորապես:

– Ահավասի՛կ, ատոր համար է, որ կըսեմ, թէ չափազանց բաներ կսպասեք մեզմե: Հոս ատ խմորը չկա:

Եվ ձեռքի փայտին ծայրովը ուժով մը զարկավ ու մայթին վրա ինկած քարի կտոր մը նետեց փողոցին մեջտեղը:

Պահ մը քալեցին առանց խոսելու, մինչև Մաննիկ լռությունը խզեց՝ հայտնելով, որ լսած էր Վերժինի աղվոր ձայն ունենալը, և խոսքը դարձավ նորեն երաժշտության վրա:

Պզտիկյաններու դռան առջև կանգ առին. Վերժին զանգը քաշեց ու ըսավ.

– Պարապ ձևականություն մը ըրած չըլլալու համար ձակիր հիմա Զեզի ներս հրավիրել, թեև մայրս շատ կուրախանար, եթե ներս գայիք:

– Ո՛ւշ է, – առարկեց Մաննիկ:

– Ուրիշ անգամ մը, – վրա բերավ Արշակ:

– Ազե՛կ, բայց եկե՛ք, խնդրեմ. և ձևականություններու շատ չնայինք: Եղբայրս ալ խիստ գոհ կմնա: Ան արդեն Ձեր վրա հիացած է, – լրացուց խոսքը Արշակի դեմքին ժպտելով:

– Հիացա՞ծ:

– Այո՛, ուղղակի հիացած, – խնդաց աղջիկը՝ երկուքին ալ ձեռք տալով: – Ուրեմն կսպասե՞նք:

Յատկեց բացված դուռնեն ներս, անգամ մըն ալ գլխով ըրավ, ու դուռը գոցվեցավ:

* * *

– Ի՞նչ կըսես նոր բարեկամուհիդ, – հարցուց Արշակ ճանապարհին քրոջ թևը մտնելով:

– Շատ համակրելի ու սիրտ-բաց աղջիկ է. արդեն առաջվընե գիտեի:

– Անչո՛ւշտ, դուն որ ամեն բան գիտես,– հեգնեց եղբայրը:

– Այո՛, գիտեմ նաև, որ քու վերջին հոդվածդ մեծապատիվները զայրացուցեր է, մանավանդ այդ ստակ ուտելու խնդիրը:

– Ուրկե՞ իմացար:

– Արաքսին ըսաւ. կհիշե՞ս, ան, որ աղվոր կատվի կնմանի՝ կըսեիր: Անցած գիշեր անոնց տունն են եղեր բոլորը, այդ մասին խոսք է դարձեր, սաստիկ, գրգռված են եղեր, թե այդ հաշիվները ուրկե՞ ինկեր են քու ձեռքդ. և քեզի համար ալ ինչ կուզես՝ ըսեր են:

– Շատ չնորհակալ ենք,– պատասխանեց եղբայրը:

– Դեռ լսե՛,– չարունակեց քույրը հեգնոտ անտարբերութեամբ մը,– ազնիվ տիկին մըն ալ բարեհաճեր է հայտարարելու, որ իբրև թե ես բնմ ելլելու կպատրաստվիմ եղեր:

– Եթե չիտակ ալ ըլլա, ի՞նչ վնաս:

– Ես գիտե՞մ: Այս բոլորի մեջ իսկական հանցավորը մայրիկն է եղեր, որ մեզի փողոցներն է նետեր:

Տղան ոչինչ չպատասխանեց, դեմքը միայն մռայլեցավ, իսկ քույրը վրա տվավ ոգևորված չեչոով մը.

– Բայց դրամը իր հակառակ կողմն ալ ունի: Անցած օր Սիրքեճիի կայարանեն ներս պիտի մտնեի, դռան մեջ ուժը-ինը երիտասարդ տղաք էին կեցեր. դեռ բոլորովին չէի մոտեցեր, որ մեջերնին փսփսուք մը ինկավ: «Բույրը»՝ հասաւ ականջիս. և տեսնելու էիր՝ ի՜նչ համակրանքով կնայեին երեսիս և ի՜նչ հարգանքով ճամփա տվին ինծի: Ամրեցա ու հուզումես հագիվ ինքզինքս կայարանը նետեցի:

Եվ այս բոլորը ըսված էր այնպես միամիտ հպարտութեամբ մը, որ Արշակ խնդալը բռնել չկրցավ:

Մայրիկը տան դուռն էր, կսպասեր:

– Ինչո՞ւ այսչափ ուշացաք, պնացքին ատենը անցավ, վախցա, որ նորեն վերջին պնացքին կմնաք. ո՞ւր հանդիպեցաք իրարու,– հարցուց մայրը՝ իրեն մոտեցող ժպտուն զույգին վրա երջանիկ ու հպարտ նայվածք մը նետելով:

Հագիվ էին ներս մտեր, որ Մաննիկ մոր վիզը ցատկեց.

– Մայրի՛կ, տեսնելու էիր՝ նորեն ինչպես ոգևորված էր այսօր խոսելուս. ինչպես գովելը չգիտեր: Հապա երեկ դիշեր որ չնվագեի՞: «Հերիք է, հերիք է», – կըսեիր:

– Ալ առչափն ալ չեմ ուզեր,– առարկեց մայրը:– Մեյ մըն ալ անոր գովեստին չտա ականջ մի՛ պներ, իր աշակերտն ես՝ կգովե,– ավելցուց

անտարբեր չեչտով մը, թեև ինքը աղջիկեն ավելի կարևորություն կոտար ուսուցչի խոսքերուն և աղջիկեն ավելի ուրախ էր այդ վայրկյանին:

* * *

Պզտիկյաններուն պարտեզը, ծառերուն տակ փոքրիկ կլոր սեղան մը, վրան բարձրահասակ լամպ մը՝ լայն լուսամփոփով ծածկված, որուն եզերքներեն սակայն լույսին ճառագայթները փունջերով կսպրդեին շրջակա ծառերու և թուփերու թավուտին մեջ՝ լույսի ու ստվերներու չարժուն գրկախառնություն մը հորինելով:

Սեղանին վրա կիսախում գավաթներ և փոքրիկ զամբյուղով մը նարինջ: Իսկ սեղանին շուրջը Պզտիկյաններն ու Արշակ, Արշակի քույրը գալ չէր կրցած:

Կենդանի խոսակցություն մը կղառնար: Բժիշկն ու Արշակ իրար ընդհատելով, իրար լրացնելով, իրարու բերնե խոսքը խլելով կպատմեին ուսանողական կյանքե հուշեր:

Եվ բավական երկար ժամանակ. բժիշկի տրամադրված օրերեն էր: Վերժինն էր լուռը. ծանր-ծանր նարինջները կկեղևեր ու կհրամցներ հյուրին ու եղբորը և ուշադիր կհետևեր անոնց պատմություններուն:

Բժիշկը նորեն տաք-տաք բան մը պատմելու վրա էր, որ մայրը ներս մտավ ու հայտնեց, թե հիվանդի կկանչեին:

– Ահա՛ աս ալ ձեզի իմ արհեստս, – բացականչեց բժիշկը. կերպ մը պատմելիքը լրացուց ու ելավ ոտքի: – Կ'ուզեմ չուտ վերադառնամ, ամեն պարագայի մոտ օրերս կուզանք ձեզի, ես բժիշկ մարդ եմ ու վարժված եմ ամեն դուռ առջևս բաց տեսնելու:

– Բաց իր երկու փեղկերովը,– լրացուց Արշակ անոր խոսքը:– Ես ամբողջովին Ձեր տրամադրության տակ, թեև խելացի բան չէ ինքզինքը բժիշկի մը տրամադրության տակ դնելը:

Բժիշկը խնդաց մեծաձայն ու մորը հետ մտավ տուն:

–Մեր հիմար պատմություններով Ձեր գլուխը ցավցուցինք,– ըսավ Արշակ օրիորդին մինակ մնալնուն պես:

– Կհետևեի մեծ հետաքրքրությամբ,– պատասխանեց աղջիկը:–

Բայց չափազանց ուրախ եմ դիպվածին, որ եղբայրս կանչեցին: Երկու օր է, որ Զեզի անպատճառ տեսնել կուզեի և առանձին:

– Ինչո՞վ կրնամ Զեզի ծառայել:

– Նախ հարցում մը: Պարոն Տիլանի խոսքերեն լմացա, որ Ձեր ընկերները թաղի մը դպրոցը առած են իրենց ձեռքը: Այդպե՞ս է:

– Այո՛, երեք հոգի են, իմ ընկերներս, ի՞նչ կա որ:

– Եվ անոնք կփնտրեն երկու շնորհքով վարժուհի: Այդպե՞ս է:

– Անշո՛ւշտ, ահագին դպրոց է:

– Եվ դուո՞ծ են իրենց փնտրած վարժուհիները:

– Ձեմ կարծեր, այդ ապրանքը այդքան շուտով գտնվելիք բան չէ: Սակայն ինչո՞ւ կհարցնեք:

– Որովհետև ձեզի համար ես մեկը պտեր եմ:

– Իրա՞վ:

– Միայն առաջվընե ըսեմ, իրմե չատ խստապահանջ ըլլալու չեք: Օտար դպրոցի մեջ մինչնակարգ կրթուելյուն ստացած աղջիկ մըն է, բոլորովին անփորձ, այդ տեսակ գործերու մեջ բնավ չէ եղած, բայց սրտանց նվիրվիլ կուզե գործին ու կխոստանա բոլոր ճիգը թափե Ձեր ընկերները բավարարելու:

– Հրաշալի՛ է, ընկերներս չատ պիտի ուրախանան: Եվ ի՞նչ է այդ աղջկան անունը, դուցե ես ալ ճանչնամ:

– Ճանչնալը ճանչնաք պիտի անշուշտ, այն պարզ պատճառով, որ մարդս չի կրնար իր խոսակիցը չի ճանչնալ:

Արյակ վայրկյան մը լուռ ու անշարժ մնաց և վերջը դանդաղ ելավ ոտքի ու հարցուց մտածկոտ.

– Դուք կուզեք մտնեք ընկերներուս դպրոցը իբրև վարժուհի՞:

– Կարծես թե դժգոհ մնացիք առաջարկես:

– Դժգո՞հ, ո՛չ: Բայց կխորհիմ, որ պետք է նախապես գիտակ ըլլաք Ձեր դեմ գալիք դժվարուելյուններուն: Գիտե՞ք, որ Ձեր չուրջը բոլորը Ձեզի հակառակին պիտի՝ սկսելով ձեր մորմեն ու եղբորմեն: Պիտի կարողանաք դիմադրել:

– Գիտեմ: Կդիմադրեմ:

– Գիտե՞ք, թե մեր հասարակուելյունը ի՞նչ ստոր գաղափար ունի մեր վարժապետներու ու վարժուհիներու վրա: Պիտի կարողանաք տոկալ ու արհամարհել:

– Գիտե՛մ: Կատակամ:

– Գիտե՞ք, որ դպրոցն ու ուսուցչությունը ինքնին դյուրին գործ չէ, մանավանդ փոքրիկներու հետ դբաղվիլը և հատկապես առաջին տարիներուն: Կպահանջէ մեծ աշխատանք և ամբողջական նվիրում:

– Կենթադրեմ ու կլարեմ բոլոր ուժերս:

Արշակ հափշտակությամբ նորեն նայեցավ վայրկյան մը յուր աղջկան վճռական ու ոգևորված դիմագիծերուն և ըսավ հուզումով ու սրտանց.

– Իրավ որ սքանչելի աղջիկ մըն ես:

– Թողե՛ք ամեն գովեստը և այդ սքանչելի աղջիկը, գիտցե՛ք, որ իր հույսը դրած է մասնավորապես Ձեր վրա, եթե այս տեսակ քայլ մը առնել կուզե: Ես անտեղյակ եմ բոլորովին մեր դպրոցական ու վարժական պայմաններուն, Դուք պիտի խոսիք Ձեր ընկերներուն, որ ինծի միջոց ու դյուրություն տան, Դուք պետք է օգնեք ինծի, որոշ խորհուրդ ու գրքեր, որ գտնե քիչ մը պատրաստվիմ:

– Բնականաբար: Եվ խորապես ուրախ եմ, որ իմ վզիս եք դրեր այդ սարսափելի ծանր բեռը, – պատասխանեց տղան խնդալով:

Ներս եկավ մայրը, ու խոսակցությունը փոխվեցավ:

Քիչ մը ետքը մութ փողոցին մեջտեղեն Արշակ մին-մինակ կքալեր դեպի տուն: Ու կզգար զարմանալի ուրախություն մը հոգիին մեջ: Բնական էր ենթադրելը, որ այդ ուրախությունը կբխեր աղջկան տված աղվոր որոշումեն: Բայց տղան չուտով նկատեց, որ ճիշտ չէր այդ ենթադրությունը, իր ուրախությունը չատ ավելի կենդանի աղբյուրե մը կուգար: Կուգար աղջկան ոգևորված դիմագծերեն, անոր նուրբ ու թարմ շրթունքներուն չարժումեն, անոր չարաճճի ժպիտեն և մանավանդ առատ աղբյուրով կհոսեր աղջկան հմայիչ նայվածքեն, երբ անոնց երկու զույգ աչքերը իրարու կհառեին:

* * *

Պզտիկյաններուն հայրը գավառեն Պոլիս եկած, առողջ դատողության տեր, գործունյա ու ձեռներեց մարդ մըն էր: Փոքրեն սկսելով՝ կարճ ատենվան մեջ հասցուցած էր նյութական կարողություն ու հասարակական դիրք ձեռք բերելու:

Ուսումն գուրկ, բայց ումման ուժը գնահատող՝ ուզած էր զավակներուն լավ կրթություն տալ: Երբ Հակոբ Փրանսական վարժարանի մը մեջ իր միջնակարգ կրթությունը ավարտեց Պոլիս, Հայրը անմիջապես համոզեց Փարիզ՝ բժշկություն սորվելու:

Ազատ, ձեռքը բավական դրամ, մեծ քաղաքի մը հոսանքին մեջ ինկած, ալ ինչ քաջագործություններ ըսես չէին պատմեր ընկերակից ուսանողները անոր մասին: Բայց ընդունակ տղա՝ հաջողեցավ չորս-հինգ տարի եսքը իր վկայականը առանալու: Ու մտավ Հիվանդանոց մը իբրև բժիշկի օգնական: Տարիքը լեցած, շրջապատին վարժված և իր ուսուցչապետ բժիշկի ազդեցությանը ենթակա՝ սկսավ լուրջ աշխատանքի: Հետևանքը ան եղավ, որ երկու-երկք տարի ավելի ուշ, երբ Պոլիս վերադարձավ, ոչ միայն իր գործին տեղյակ բժիշկ մըն էր, այլև ընդհանրապես լայն մտքի հորիզոնով մարդ մը:

Ան դուցե դեռ երկար Ֆրանսա մնալ ուզեր, եթե հոր մահը իր դարձը չպարտադրեր:

Պոլիս սկիզբը շատ խորթ էր իրեն ամեն բան. ինքզինքը բոլորովին կտրված կզգար իր շրջապատեն: Իր ձեռք բերած սովորություններն ալ, սպրելու, մտածելու, զգալու եղանակն ալ դարձեր էին բոլորովին տարբեր, որքան «ասիական» էր դեռ իր շուրջը հոսող կյանքն ու հասարակություններ:

Նախ տեսակ մը բարձրեն ու արհամարհանքով սկսավ նայիլ, վերջը խղճալ սկսավ, երբեմն զայրույթ տածել իր չարունակ լսած տգիտ ու ողորմելի հայացքներուն դեմ: Բայց թույլ բնավորություն տեր և իր հանգիստը չափազանց սիրող՝ մտքեն անգամ չանցուց այդ հոսանքին դեմ քայլ մը առնել: Շուտով ձեռք վերցուց և ընթերցումն, բայլի փարիզյան մեկ-երկու ընթացիկ պարբերաթերթերէն դրեթե ոչինչ չէր կարդար լրջորեն: Աղբեն օրեօր աճող փրակտիկը կկլաներ իր ժամանակը. ազատ մնացած պահերն ալ բնականեն քիչ մը ծուլություն սիրող իր ջիղերուն համար հաղիվ հերիք էր հանգստանալու: Երբ տունն էր, կփռվեր սովորաբար բազկաթոռի մը գլխկը, ոտքերը կդներ դեմի աթոռին ու կթաղվեր ծխախոտի մուխին ու մտածումներուն մեջ:

Բժիշկի վերադարձին Վերժին տասերկու-տասերեք տարեկան աղջնակ մըն էր: Եվ հորը մահեն ի վեր քանի մը ամիս մայրը դաստիարա-

ցեր էր աղջիկը դպրոց ղրկելէ և նորեն ղրկելու ալ միտք չուներ. մինչ Վերժին սաստիկ կցանկար անպատճառ ամերիկյան գիշերօթիկ վարժարանը մտնե՝ մասնավորապես զրդված իր քանի մը նախկին ընկերուհիներեն, որոնք հիմա հոն էին արդեն և առասպելի գույներով կնկարեին այդ կյանքը: Մայրը սկիզբները ընդդիմացավ, տունը մինակ էր մնալու, բայց վերջը ստիպվեցավ զիջելու անոր անվերջ լացերուն ու թախանձանքին, մանավանդ երբ Հակոբն ալ զալուն պես քրոջը կողմը անցավ:

Վերժին շատ չուտով վարժվեցավ գիշերօթիկի իր նոր կյանքին: Խելացի ու համարձակ՝ սկսավ չուտով ամենուն ուշքը գրավել դպրոցին մեջ: Ընկերներու շրջանակին մեջ կարգադրողի դերն էր իր վրա. ամեն աշակերտական ձեռնարկներու կա՛մ պարագլուխն էր, կա՛մ դրդիչը և իր վարժուհիներու մչտական գլխու ցավը, բայց և այնպես բոլորն ալ կհամակրեին այդ աչքաբաց աղջիկը, որ իր աշխատութիւններուն մեջն ալ միշտ առաջիններեն էր:

Ինքը շատ լավ կզգար իր մասնավոր դիրքը թե՛ դեպի ամեն ազգե եկած ընկերուհիներուն հանդեպ և թե՛ դեպի իր ամերիկյան ուսուցչուհիները. և այդ ներքին գիտակցութիւնը իր շարժուձևերուն վրա հպարտութիւն մը դրոշմած էր, որ կփայլեր իր դեմքին:

Տարիները կսահեին աննկատելի կերպով: Վերժին ամեն շաբաթ իրիկուն, այլև բոլոր տոներուն տուն կերթար գիշերը: Թե՛ տունը և թե՛ դպրոցը բավական ազատ ժամանակ ուներ ընթերցանութեան: Կկարդար անհագ բոլոր ձեռքը ինկածը: Այդ ընթերցումը մասնավոր թափ և ուղղութիւն առավ, երբ Վերժինի ավարտելեն երկու տարի առաջ դպրոց եկավ նոր ուսուցչուհի մը՝ միսս Փեթըրս:

* * *

Երեսունի մոտիկ, նիհար, երկարահասակ, միշտ պարզ ու սևեր հագած աղջիկ մըն էր միսս Փեթըրս, Ամերիկայեն դեռ նոր եկած, որուն պատմութեան ու գրականութեան դասերը հանճնվեցան:

Բոլորն ալ իսկույն սիրեցին այդ ոգևորութեամբ պատմող ու ամենուն հետ վերին աստիճանի ընկերաբար վարվող նոր դեմքը: Նորեկը շատ չուտով ուշադրութիւն դարձուց և Վերժինի վրա, որ իր ընկերա-

կիցներեն աչքի իյնալու չափ առաջ էր անցած: Վերժին իսկույն նկատեց և կրկնակի ջանքով աշխատեցավ իր նոր համակրողը գոհացնելու. և հետևանքը այն եղավ, որ սկսավ մասնավոր կերպով հետաքրքրվիլ իր գլխական ու պատմական խնդիրներով:

Վերժին շարունակ անոր խորհուրդին կղզիմեր գրքերու ընտրութեան համար, անոր սեփական գրքերեն կվնդրեր կարդալու, իր մասնավոր մեկ-երկու աշխատութիւնները կուտար, որ աչքե անցընե ու իր գնահատանքը տա: Նման պատրվակներով հաճախ կերթար անոր մասնավոր սենեակը. պարտեզը հաճախ միասին կըլլային. և Վերժին հետզհետե կապվեցավ բոլորովին իր այդ հասուն ու բարի ընկերոջը, և այդ ընկեր-ուսուցիչն ալ իր կողմեն սիրեց ու կապվեցավ այդ թարմ ու խելացի աղջկան:

Միսս Փեթըրս դժբախտ մարդ մըն էր: Աղքատ հոր մը սիրելին, մայրը մանկութենե կորսնցուցած: Մինչնակարգ ուսումովը անբավական՝ աղջիկը անցած էր համալսարան, կես մը հորը, կես մը իր սեփական աշխատութեան գնով:

Ծածուկ գրկանքներու, լարված աշխատանքի օրերն էին ատոնք, բայց աննման օրեր: Նույն համալսարանը հանդիպած էր ուսանողի մը, և իսկույն հարեր էին իրարու: Տղան հաճախ իրիկուննները կուգար աղջկան փոքրիկ սենյակը միասին կարդալու. կարդա՞լ, ա՛, այն գիշերները: Երիտասարդը կենդանաբանութեան ուսանող էր և մեծ վստահութեյուն ուներ իր ապագային, և Փեթըրս հպարտութեյամբ կմտածեր, որ դառնալու էր հայտնի փրոֆեսորի մը կինը:

Բայց երազը ցնդեցավ: Մեծ օվկիանոսի հարավային կղզիներուն վրա գիտական արշավանքի մը ատեն նշանածը մեռավ դեղին տենդե: Ալ ամեն ինչ սև էր միսս Փեթըրսի համար: Մեռավ չուտով և հայրը: Երկար ատեն բոլորովին բեկված էր իր վշտին մեջ, դպրոցի մը մեջ դասեր ուներ իր վրան և կերպ մը կապրեր: Ժամանակի հետ, երբ քիչ մը ուշքի եկավ, մտածեց երթալ ուրիշ աշխարհ մը: Իր բարեկամները խորհուրդ տվին դիմել Մերձավոր Արևելքի Ամերիկյան ընկերութեյան: Հեռավոր ժողովուրդներու մեջ լույս ու գիտութեյուն տանելու, գոնե քաղաքակրթութեյան տարածմանը նվիրվելու գաղափարը սրտին մոտիկ

եկավ. և այդ նոր առաքելութեամբ ոգևորված՝ պայման կապեց, առավ իր երկու սնտուկ գրքերը ու դեպի Պոլիս:

Դպրոցական վերջին տարին Վերժինն ու վարժուհին ալ իրարմե անբաժան դարձան: Անոր չունչին տակն էր, որ Վերժինն սկսավ հետաքրքրվիլ նաև հայ գրականութեամբ, տունը կհետևեր հայերեն թերթերուն, ուշադրութեամբ կկարդար նոր գրական երկերը և հին հեղինակներուն ալ ծանոթանալու համար չարունակ գիրք կխնդրեր իր ծանոթ տղաներեն, որոնք աղջկան հաճոյանալու համար աներևակայելի անկյուններե գիրք կճարեին:

Եվ աղջկան մեջն ալ կինը սկսեր էր արագ հասուննալ: Գիշերային գաղտուկ, առանց պատճառի լացեր, անզուսպ ուրախութեան խենթ պոռթկումներ մեջեմեջ կկրկնվեին պարբերաբար: Իր այս կամ այն ավելի մոտիկ ընկերուհիին հետ ծառի մը տակ քաշված կես մը կարմրելով, կես մը համարձակ կխոսեին «կյանքի գաղտնիքներուն», «սիրո հուզումներուն» վրա կամ միասին ապագա երազներ կհյուսեին: Բայց և այնպես շատ քիչ կարևորութիւն կուտար ընդհանրապես իր շուրջը դարձող երիտասարդ դեմքերուն. որքա՜ն համեստ էին անոնք իր հոգիին համար: Ինքը հեռավոր տիպար դեմք մը ուներ իր գլխուն մեջ. կորովի քնավորութեամբ, գիտական խորութեամբ համարձակ ու ձեռներեց երիտասարդի մը տիպարը, միսս Փեթըրսի նշանածին եղբայրը:

Զգացումի ու մտքի այս կազմով, տասնինը տարիները լրացուցած աղջիկ մը՝ Վերժին դպրոցը ավարտեց: Ճերմակ զգեստներուն մեջ ստացավ վկայականը և իր Փեթըրսին չուտ-չուտ այցելել խոստանալով՝ մորն ու եղբորը հետ հեռացավ իր սիրած դպրոցին սեմեն:

Եվ ահա ճիշտ տարի մըն է՝ տունն էր:

Սկիզբը չատ ծանր եղավ դպրոցի աղմկոտ կյանքեն ետքը ընտանեկան այդ լուռ ու միայնակ անդորրութիւնը. միակերպ ու պարապ: Բան մը ընելու պահանջը սաստկացավ. կզայրանար մորն ու եղբորը դեմ, մանր ու անվերջ կռիվներ տան մեջ անպակաս էին, ինքն ալ չէր գիտեր իսկապես ինչո՞ւ, այնպես, պարզապես ձանձրույթեն և սկսավ քմահաճ դառնալ ու դյուրագրգիռ:

Զուր ինքզինքը կարդալու տվավ. ժամանակ մըն ալ տարվեցավ երգով, ամբողջ օրով դաշնակին առջևեն չէր հեռանար: Քանի մը անգամ,

մանաւորապես Տիրանի հետ ծանոթանալեն ետքը, փորձեց նույնիսկ պրելու, բան դուրս չեկաւ: Անպլերենե բան մը թարգմանել ուզեց Աքոթեն, անկե ալ հաճույք չառաւ: Ավելի չարժուն, ավելի խոր ու կենդանի պրապմունքի մը կտենչար: Իսկ Արշակին հանդիպելեն ի վեր կզգար, որ այդ տենչը հանկարծ սուր ու վճռական չեչա մը ստացաւ:

Ահա այդ ներքին հին խայթի և տղու խոսքերուն ու հոդվածներուն հյուսված ընդհանուր տպավորութեյան տակ էր, որ կանգ առաւ վարժուհի դառնալու եղրակացութեյան վրա:

* * *

Եղրակացութեյունն ու որոշումը կար, բայց գործադրումը սպասվածեն չատ ավելի կդանդաղեր:

Վերժին քանի մը անգամ արդեն հարցուցած էր Արշակին մեկուսի, թե ի՞նչ վիճակի մեջ էր գործը:

Արշակ առաջին երկու չաբաթները կուտար միևնույն պատասխանը, թե իր ընկերներու հաստատման ձևականութեյունները դեռ վերջացած չէին և օր օրի կձգձգվեին, ցրված էին հոգաբարձուները, և մինչև իր ընկերներու այդ դպրոցին մեջ հաստատվիլը վերջնական ու պաշտոնական ձև չստանար, վաղաժամ էր բնականաբար ուրիշ ուսուցիչներու մասին կարգադրութեյուններ ընելը:

Իսկ վերջին անգամ աղջկա տված նույն հարցին Արշակ տված էր նույն պատասխանը, բայց զարմանալի ժպիտով մը նաև ավելցուցած էր.

– Եվ գուցե ավելի լավ է այս որոշումը, օրիո՛րդ, մի՛ աճապարեք:

– Բայց ես կուզեի, որ չուտով կարգադրվի, – պնդած էր աղջիկը: – Եվ դիտե՞ք, մեկ-երկու անգամ մորս խոսք բացի, անշուշտ չատ զգույշ, իբրև նախապատրաստութեյուն:

– Ե՞վ, – հարցուց տղան ժպտուն:

– Լսել անգամ չուզեր, բացարձակապե՛ս:

Իսկ այդ միջոցին նոր բարեկամներուն մտերմութեյունը կաճեր սրադ ընթացքով: Արշակի առաջին այցեն հազիվ էր անցեր երեք չաբաթ, բայց այդ միջոցին անգամ մը քրոջը հետ, անգամ մըն ալ Տիրանի հետ նորեն եկած էր Պզտիկյաններուն, անոնք ալ քույր-եղբայր եկած էին

Արշակենց դեմ դիմաց: Հեղ մը բոլորը միասին հանդիպեր էին իրար Տիրանի տունը, անգամ մըն ալ խմբովին գացեր էին Սան Ստեֆանոյի ճամփուն վրա ինկած այդի մը զբոսնելու:

Անոնց այս խմբումները միշտ բաց և զվարթ չեչտ մը ուներ իր մեջը: Ամենքը կխոսեին իրենց գլխուն փչածը, կերգեին, վեճ, կատակ, նվագ ու աղմուկ:

Երկու աղջիկները իրարու դեմ էին եկած սրտագին համակրանքով.

«Որչա՜փ ուրախ եմ Զեզի ծանոթանալուս», – կըսեր Վերժին՝ երեխայի նման Մաննիկի հետ գրկվելով:

Բժիշկը կես կատակ, կես լուրջ մեջեմեջ կհեգներ Արշակի ոգևորութիւնն ու հույսերը ապագայով, կսիրեր Տիրանի հետ իյնալ, թեև սրտանց կհամակրեր ու «դեռ երեխա է» կըսեր Հոր մը ներողամիտ չեչտովը, երբ տունը խոսք դառնար անոր մասին:

Արշակ ալ փոխադարձաբար կհարձակվեր բժշկի ավելի կամ նվազ անտարբերութիւն բուրող հայացքներուն վրա. ընկերական արդի կազմի կեղծիքներուն ու ձևապաշտութեան վրա կհարձակվեր, կդատապարտեր մեր հասարակական «ողորմելի» գիտակցութիւնը և «կրեական» դանդաղկոտութիւնը. և այս բոլորը միշտ թեթև հումորով մը համեմած, որ բժշկին չատ դուր կուգար:

– Զէ՛, մենք իրար հասկընանք պիտի, – կըսեր մտերմորեն Արշակի ուսը ծեծելով: – Միայն թե ընկերական հարցերու վրա իզուր տեղը այդքան սիրտ կհատցընեք, հարցեր, որոնք ո՛չ Ձեր ձեռքեն, ո՛չ ալ Ձեր կամքեն կախում ունին, որոնք իրենց բնական ընթացքով առաջ պիտի երթան, ինչպես մինչև հիմա առաջ են եկեր: Դոն Քիխոտի պես հողմաղացներու վրա հարձակվելեն ի՞նչ կելլե:

– Բայց, պարո՛ն բժիշկ, կրնա՞ք հերքել, որ մարդկային ընկերական զարգացումը իր մտավոր զարգացման հետ զուգ կերթա, որ մեր բոլոր անգիտակից ու բնազդորեն կատարած գործերը քիչ-քիչ գիտակցական գործունեութեան կվերածվին, և մի՞թե բնական զարգացման ընթացքը ասիկա չէ:

– Անշուշտ որ ատոնք աղվոր խոսքեր են, ի՞նչ ըսել կուզե, – կխնդար բժիշկը:

Վերժին ուշադիր կհետևեր վեճերուն: Ինքը մասնակից կամ ոչ՝

միշտ Արշակի կողմն էր: Իրեն այնպես կթվեր, որ տղան կուտար միշտ այն պատասխանը, որ ինքը տալ կուզեր, միայն ավելի սուր և ավելի խոր արտահայտությամբ մը: Տղուն կարծիքներն ու համոզումը կարծես թե իր համոզումներն ու մտածումները ըլլային, կարծես ինքն ալ միշտ այդպես էր խորհած ու դատած՝ դուցե քիչ մը ավելի նվազ հստակությամբ, մշուշով:

Արշակ չէր կրնար չնկատել իր ու աղջկա հոգիներուն մեջ գործող այդ զուգահեռությունը, կտեսներ այդ բոլորը դգվող զգացումի մը ջերմության մեջեն:

Մեկ-երկու անգամ առանձին էին մնացեր քիչ մը ավելի երկար ուշադրությամբ: Եվ այդ բացառիկ պահերուն պահանջ մը կթառեր անոնց վրա ավելի՛ մտերմորեն, ավելի՛ արտաքայ իրար հետ խոսելու:

– Եթե գիտնաք՝ որչափ կցանկայի, որ անգամ մը նորեն Զեզի հետ առանձին ու երկար խոսիլ կարողանայի, – բացականչեց Վերժին այդ տեսակ մեկուսի վայրկյանի մը մեջ իր մտածումը զսպել չկարողանալով:

– Իսկ ես զուցե Զեզմէ ավելի, – եղավ տղուն կտրուկ պատասխանը:

– Այն առեն... այն առեն իրիկուն մը եկեք նորեն մեզի մինակ, – վրա բերավ աղջիկը վճռաբար:– Իրիկուննները, ընթրիքեն մեկ-երկու ժամ առաջ եղբայրս միշտ տունը չըլլար, իսկ մայրս՝ ընդհանրապես զբաղված. և ան մեզի չի խանգարեր:

Բայց Հանկարծ իր այդ սրտեն բխած խոսքերուն կարծես նոր անդրադառնալով՝ կարմրեցավ թեթև մը, նայվածքը դեւոին ձգեց ու ավելցուց.

– Ո՞վ գիտե՝ հիմա ինչ պիտի մտածեք իմ մասին:

* * *

Բայց Տիրան ալ սկսեր էր բաներ մը նկատել:

Վերջին օրերը կզգար, որ իրենց խմբումները հետզհետե նվազ զբավիչ կդառնային իրեն համար: Թեև ինքն ալ դեռ միշտ մանկակից երգին ու աղմուկին ընդհանուր հռանքովը կերթար, սակայն ներքուստ որդի պես բան մը սպրդեր էր կուրծքը ու գաղտուկ կկրծեր:

Վերժին հիմա ավելի լուրջ ու մտածկոտ կ'թվեր իր աչքին, տեսակ մը կեդրոնացած: Իր հայացքեն չէին վրիպեր անոր՝ Արշակին ուղղած փոքրիկ ժպիտ մը, ծածուկ նայվածք մը, որոշ մտերիմ վերաբերում. ինքնին այնքան չէին համակրանքի արտահայտություններ, որ ուրիշ ժամանակ երևի բնավ իր ուշադրությունը պիտի չգրավեին, բայց հիմա ինքն ալ չէր հասկնար ինչո՞ւ՝ իր աչքին կարևորություն կտանային: Ճիգ կ'ըներ կատակի տալու. իզուր, ընկերոջ ու աղջկան ներկայությենեն միշտ կ'հեռանար հոգեկան զսպված անհանգստությամբ մը:

«Սակայն ծիծաղելի է: Կնախանձի՞մ և ուրկե՞. Արշակե՞ն», – մտածեց անդամ մը որոշ կերպով, երբ գլուխը կախ կեսգիշերին տուն կվերադառնար:

Հանկարծ մտքեն անցան, թե ինչ լավ կըլլար, եթե Արշակ չուտով իր համալսարանը վերադառնար, որ այս հիմար պատմությունները մեջտեղեն վերնային: Բայց կայծի մը պես իր մտածումներուն մեջեն չողացող այս գաղափարը սաստիկ զարկավ իր ինքնասիրության: Ինչպե՞ս. ինքը ուրեմն բան մը չէ՞ր արժեր. այդքան դյուրի՞ն էր ուրեմն մեկ կողմ հրելը, որ ինքը հիմա իր ընկերոջ մեկնիլը կցանկա հին վիճակը պահել չկարողանալու համար:

Հին վիճակեն անշուշտ դեռ ոչինչ փոխված չէր ըստ էության, միայն պարզ էր, որ ընկերը սկսած էր ազդել Վերժինի վրա, և զարմանալու ալ բան չի կար. Եվրոպայեն նոր եկած, ուսանողի հրապույրով, ինքն ալ ընդունակ ու կենդանի խառնվածքով տղա մը, բնական է, որ ամենուն վրա ազդեցություն ըներ:

Տիրան վստահ էր բացարձակ, որ Արշակ անշուշտ ավելի զուսպ ու զգույշ կըլլար, եթե իրեն հայտնի ըլլար ընկերոջը զգացումները, բայց Տիրան մինչև այդ օրը ոչ մեկ խոսք չէր ըսած: Եվ հանկարծ մտածեց՝ արդյոք ավելի չիտակ վարված չէ՞ր ըլլար և ավելի ալ ընկերական, եթե թեթև մը զգուշացնե ընկերը և իր զգացումներու մասին ակնարկություն մը ընե:

Բայց ի՞նչը ակնարկե և ինչպե՞ս: Ըսե՞, որ այդ աղջկան հետ մի՛ խոսիր, մի՛ խնդար, որովհետև ինքը կնախանձի, հասկըցնե՞, թե հեռու կեցիր ու մի՛ գրավեր աղջիկը, որովհետև ինքը գրավել կուզե, այսինքն մուրա՞:

Տիրան այն աստիճան խոր պայրուքի մը զգաց ինքն իր սեփական մտածումին, որ անդին հրեց պլսեն բոլոր հուշերը և որոշեց ալ չի մտածել ո՛չ ընկերոջը մասին, ո՛չ այդ աղջկան և ո՛չ ալ անոնց ենթադրական կապին:

Եվ վերջապես իր ինչի՞ն էր պետք այդ տեսակի աղջիկը, եթե իրավ որ այդ աստիճանի թևթև ու փոփոխական էին անոր զգացումները:

* * *

Հաջորդ օրերը սկսավ Տիրան քիչ մը այլ կերպ դատել:

Զսփազանցութիւններու ի՞նչ կարիք կար: Միթե քիչե՞ր կան, որ մեղի կգրավեն իրենց այս կամ այն առավելութիւնովը, առկե ի՞նչ վնաս:

Բայց ամեն պարագայի կխոստովեր թե՛ Պզտիկյաններու և թե՛ ընկերոջը տուն երթալե: Եվ ինքզինքը զբաղման տալ կուզեր:

Ջուր քանի մը անգամ փորձեց գրելու. ցրված բան մը կար հոգիին մեջ և կարծես ծուլութիւն:

Այդ օրն ալ նորեն ամբողջ օրը տունն էր եղեր: Քիչ մը կարդացեր էր, քիչ մը իր հին տետրակներն էր աչքե անցուցեր և իրիկվան դեմ ամեն ինչե ձանձրացած՝ նստեր էր պատշգամը և ծովը կդիտեր, երբ հեռուն, Մարմարայեն Վոսփոր մտնող չոգենավի մը սուր սուլյը, որ ուժասպառ և հուսահատ մարդու մը ճիչը կհիշեցներ, հանկարծ ոտանավորի մը գաղափարը բերավ գլխուն մեջ:

Արագ մտավ սենյակ, անցավ գրասեղանին առջևը, քաշեց երես մը թուղթ ու սկսավ գրել: Սակայն հազիվ հինգ-վեց տող, որ գրիչը կանգ առավ, ո՛չ մտածումը, ո՛չ ալ հանգերը չէին ուզեր հնազանդիլ:

Նստած էր անշարժ, արմունկը սեղանին ու կնայեր հեռուն՝ ծովուն՝ առանց որոշ բան մը մտածելու, երբ նախասենյակը ոտքի ձայներ լսվեցան, և վրա ըրած դուռը կռնակի վրա բացվեցավ:

– Վախնամ մուսաղ եկեր է, կուզե՞ս հեռանամ, – բացականչեց Արշակ սեմին խնդալով և ետ դառնալու շարժում մը ըրավ:

– Եկո՛ւր, – պոռաց Տիրան ոտքի ցատկելով: – Փորձեցի գրեմ՝ բան դուրս չեկավ:

– Գրածդ ի՞նչ է:

– Պարապ բան: Լուրջ աշխատանքի տրամադրություն չկա: Ցրված եմ:

– Ես ալ ցրված եմ, կեդրոնանալ չեմ կրնար, բայց պարապ չեմ: Այսօր ամբողջ օրը ոտքի վրա էի, ուր ըսես եղեր եմ: Տեսակ մը չարժվելու, տպավորություններ կրելու, տպավորություններ փոխանակելու պահանջը ունիմ: Գիտե՞ս, Տիրան, Վերժինը կուզե վարժուհի դառնա:

Տիրան ամբողջ մարմնով ցնցվեցավ՝ ընկերոջը բերնեն այսպես հանկարծ առանց կապի Վերժինի անունը լսելով, բայց իսկույն ինքզինքը ժողվեց:

– Վարժուհի՞, ուրկե՞ ուր և ո՞վ ըսավ:

– Հին պատմություն է, բայց ինքը խնդրած էր, որ առայժմ ուրիշներուն չխոսիմ այս մասին: Բայց այսօր անսովոր հոգեկան վիճակի մը մեջ եմ, պահանջ ունիմ, ընդհակառակը, ըսելու, խոսելու: Ահա՛ ելա, եկա քեզի: Գիտե՞ս, Տիրան, այդ աղջիկը սովորական դեմք մը չէ մեր հասարակության մեջ: Անոր վարժուհի դառնալու այդ ցանկությունը իր առաջին ճիգն է անկախ թռիչքի: Վարժուհի կդառնա, թեև ուրիշ ինչ որ ուզենա, ատիկա չէ կարևորը: Ինծի հետաքրքրողը իր հոգիին չարժումն է, իր շրջապատի ծանծաղուտեն դուրս գալու ձգտումը, իր խոյանքը դեպի ավելի վեր:

– Ինչպես կտեսնեմ՝ այդ աղջկան գործը բոլորովին սրտիդ ես առեր, – ընդմիջեց Տիրան ձայնով մը, ուր բաց վերքին վրա չոշափում մը կրած հիվանդի չեչոը կար և հեգնության մը թափթփուկը:

– Է՛, եթե կուզես՝ այո՛, քեզմե ի՛նչ ծածկեմ: Առաջին տեսած օրես մեջս խոր համակրանք մը կա դեպի այդ աղջիկը:

Ու երկուքն ալ լռեցին:

Տիրան սոսկալի ճնշում մը ուներ կրծքին տակ. ու մեկ փափագ մը միայն, դո՛ւրս: Ձգել ու փախչիլ կուզեր, որ առանձին ըլլար, որ Արշակը իր դեմը չըլլար:

Եվ այդ ճնշման ու ցանկության տակ արձանի մը պես քարացեր մնացեր էր, երբ ընկերը մոտեցավ ու մտերմորեն բռնելով թևեն՝ չարուճակեց.

– Դուն անշուշտ այս տեսակ խոստովանանքի մը չէիր սպասեր

ինծմե այն իրիկունը, երբ գրեթե բռնի ինծի աղջկան կներկայացնեիր:

Տիրան հանկարծ սկսավ ծիծաղիլ, բարձրաձայն, չոր ու անսանձ, վայրենի ծիծաղ մը: Այն աստիճան արտասովոր ու անախորժ, որ ընկերը ձվից թևը և քայլ մը ետ քաշվեցավ.

– Ինչո՞ւ այդպես կ'ինդրաս:

Տիրան կամքի լարված ուժով խնդուքը կտրեց և զարմանալի հաշտ ու մեղմ ձայնով մը կցեց.

– Միամտությունդ ինծի տարօրինակ եկավ: Բայց պիտե՞ս ինչ կա. ընթրիքի ժամանակ է. ավելի երկար կխոսինք ուրիշ առեն. անցած օր քույրդ ինծի կմեղադրեր, որ իրիկուններդ քեզի երկար քովս կպահեմ ու առեր ընթրիքի սպասցնել կուտամ, ելի՛ր, գնա՛, որ նորեն հանդիմանություն չուտեմ:

– Երթա՛մ, քանի որ կվռնդես: Ես կթողնեմ քեզի մուսայիդ հետ առանձին, կարելի է որ հաշտվիք, փորձե՛:

Տիրան կեցած տեղը ակնթարթ մը անշարժ մնաց, մինակը. հանկարծ բուռն հեծկլտուք մը դուրս պոռթկաց կոկորդեն, ու թև ու կուրծքով ինկավ իր գրասեղանին վրա:

Արցունքները կկաթկթեին դեմքին տակը մնացած թուղթին վրա՝ կեսը գրված, կեսը թերի ոտանավորին գիրերը աղարտելով:

Երբ առաջին ուժգնությունը անցավ, տղան կամայ մը գլուխը բարձրացուց, հենց ձեռքին ու դառնությամբ սկսավ մտածել:

«Արժե՞ լալ աղջկան մը համար, որ ինծի հանդիպելուն պես ինծի սկսավ սեր կապել, ընկերոջս գալուն պես՝ նուչն իսալը սկսավ անոր հետ»:

«Բայց ո՛չ. չեմ ուզեր անիրավ ըլլամ. այդ աղջիկը գուցե և երբեք ինծմով հետաքրքրված չէ եղեր, ես եմ հյուսեր գլխուս մեջ այս ամբողջ երազանքը. հանցանքը իմ երևակայությանս է, որ ամեն բան ուրիշ պույնով կներկայացնի աչքերուս, թե՛ ընկերոջս ազատ վարմունքը, թե՛ աղջկան վերաբերմունքը: Ադե՛կ, ես սխալս սրբագրել ալ պիտեմ»:

Եվ վճռական ու արհամարհոտ չարժումով մը ելավ, լվացվեցավ:

Միայն ո՛չ մեկ կերպ ուսերեն թոթվել չէր կրնար այն նվաստություն ավող ծանրությունը, թե ինքը առանց այլևայլության մեկզի էր նետված ընկերոջը գալուն պես:

Ջուր ինքգինքը համոզել կուզեր, որ վերջապես ամենքեն փոխադարձություն պահանջել կարելի չէ: Չէ՞ որ ինքը դեռ ամենաթեթև ակնարկություն մը անգամ ըրած չէ աղջկան իր զգացումներու մասին: Գուցե աղջիկը իր անփույթ արտաքինեն խրտնեցավ: Եվ վերջապես ի՞նչ նվաստություն կամ վիրավորանք, քանի որ ո՛չ աղջիկը, ո՛չ ընկերը, ոչ մեկը ոչինչ չգիտե այդ բոլորեն:

Բայց այս դատողությունները չատ քիչ կօգնեին իր խայթված ինքնասիրությանը: Թող ըլլա պատահական, թող ըլլա անգիտակից կամ ծածուկ, բայց հարված մըն էր ատիկա իր հպարտությանը, իր եսի անդիմադրելիության վրա ունեցած իր մեծամտությանը:

Տիրան այդ զգացումը խեղդել չէր կրնար:

Դ

Պզտիկյաններուն հյուրասենյակը, որ պարտեզին վրա կնայեր, ողողված էր արևով: Իրիկվան արևը իր վերջին չարաճճի ճառագայթներով խաղի էր ելեր ճաչակով կահավորված սենյակի իրերուն հետ. հայելիները, նկարները, չրջանակները, ապակի ու մետաղե ամեն ձևի զարդերը բոլորն ալ կարծես կվառեին ու ամեն կողմ չողեր կարձակեին:

Եվ լայն բացված պատուհաններու ետ նետված ծանր վարագույրներուն մեջեն ամառ իրիկվան բույրերով ծանրաբեռնված հաճելի չունչ մը կխուժեր ներս, միջատներու իրարու հյուսված խուլ բզզյունի մը հետ:

Վերժինի ըսածին պես քանի մը վայրկյանի խոսակցութենե ետքը տիկին Պզտիկյան ելավ սենյակեն լռիկ՝ հյուրը թողնելով աղջկանը խնամքին:

Եվ աղջիկը անմիջապես աթոռը քիչ մը ավելի մոտեցուց դեպի տղան և հարցուց մտերիմ չեչտով մը.

– Ամենեն առաջ ըսե՛ք խնդրեմ՝ նոր լուր մը ունի՞ք Ձեր ընկերներու այդ նշանավոր դպրոցեն: Ե՞րբ պիտի վերջանան այդ սարսափելի պաշտոնական ձևակերպությունները. ամառը արդեն վերջանալու վրա է:

Տղան փոխանակ պատասխանի՝ երկար ժպիտ մը միայն տվավ աղջկան: Ետքը զգուշությամբ սրբեց ժպիտը իր դեմքեն, քիչ մը լուռ մնաց և վերջապես ըսավ հանգիստ ու մտածկոտ.

– Ներեցե՛ք, օրիո՛րդ Վերժին, որ ըսեմ Ձեզի իմ ամբողջ մտածումս: Հետզհետե սկսեր եմ քիչ մը ուրիշ կերպ մտածել: Ես չէի ուզեր, որ Դուք հիմա վարժուհի դառնաք, որովհետև ես չեմ ուզեր, որ Դուք սովորական վարժուհի մը դառնաք: Ես կցանկայի, որ Դուք ամեն գործ սկսելե առաջ նախ Ձեր զարգացումը լրացնեիք, խորացնեիք և մասնագիտորեն պատրաստվեիք Ձեր ձեռնարկել ուզած աշխատանքին համար:

Հեգնական ժպիտ մը խաղաց Վերժինի դէմքին, երբ պատասխանեց դառնութեամբ.

– Ասիկա ես ալ կզգամ, ես ալ կուզեմ, բայց ըսե՛ք խնդրեմ, ես հոս ո՞ւր կրնամ այդ Ձեր ըսած լայն ու խոր մասնագիտական պատրաստութիւնը ձեռք բերել, կկարծեք հոս Ձեր Եվրոպան է:

– Եթե հոս Եվրոպա չէ, գացե՛ք հոն, ուր Եվրոպա է:

Վերժին միայն երգիծանքով ժպտեցավ:

– Ինչո՞ւ կխնդաք. ես լուրջ կխոսիմ: Կերթաք քանի մը տարի համալսարան նախ Ձեր ընդհանուր կրթութիւնը կանոնավոր կերպով ամբողջացնելու, վերջն ալ մասնագիտորեն կուսումնասիրեք Ձեր սրտին ամենեն մոտիկ եկող աշխատանքը, օրինակ՝ Ձեր մանկավարժութիւնը: Կծանոթանաք մոտիկեն եվրոպական քաղաքակրթութեան, կապրիք արևմտյան ժողովուրդներու կյանքովը, կշրջիք, կտեսնեք ավելի զարգացած ազգերու արվեստին ու արհեստին արտադրութիւնները, ընկերական կազմը, ոլին: Մեկ խոսքով՝ կապասովիք այս նեղ կյանքի հորիզոնեն ու կյուրացնեք, ինչ որ օտարները մեզի տալ կրնան. և այդ գիտցածով և ինքնագլուխ գործելու կարողութեամբ կուգաք գործի ձեռնարկելու:

Արմատը քովի բազկաթոռի թիկունքին հենած ու երևան ալ ափին մեջ՝ Վերժին առանց չարժուած մը ընելու չեշտավի տղու աչքերուն կնայեր:

– Եվ պարզ է, որ այն ատեն Ձեր ձեռնարկած գործն ալ բոլորովին տարբեր հեռանկներ կստանա: Այն ատեն Դուք կհաջողիք ո՛չ միայն ինքզինքնիդ իբրև անհատ մը մեր հասարակութեան նվիրելու, այլ կրնաք Ձեզի պես շատ մը ուրիշ երիտասարդ ուժեր առաջացնել: Եվ օրինակը վարակիչ է. Ձեր քայլը կրնա հետևողներ ունենալ. ժամանակ է, որ մեր կանայք ալ բարձր կրթութեան հասնելու ձգտին:

Պահ մը չունչ առավ: Աղջկա կողմեն և ո՛չ մեկ չարժուած: Տղան չարունակեց նույն ջերմ շեշտովը.

– Բախտը տվեր է Ձեզի բոլոր հարմարութիւնները, Դուք պարտական եք օգտուելու: Մտացի և ընդունակ աղջիկ եք, ունիք ձեռներեցութիւն, Ձեր ամսական անհրաժեշտ ծախքերը Ձեր ընտանիքը չատ դիւրութեամբ կրնա հոգալ, ես հույս ունիմ պարոն բժիշկը ինքս համոզելու: Ուրիշ ի՞նչ է պակաս: Անմիջապես ճամփա իյնալ. հոդ անգամ դիւրութիւն ունիք. կերթանք միասին. ինքս անձամբ կհասցնեմ Ձեզի Զվիցերիա, օրինակ՝ Ցյուրիխ: Տաս-տասերկու օր կրնամ Ձեզի հետ մնալ անծանոթ կյանքի առաջին դժվարութիւններուն դեմ օգնելու համար, մինչև որ տեղական պայմաններուն տեր դառնաք: Եվ վերջապես չատ ալ Ձեզմե հեռու չեմ, այս ձմեռ ըլլալու եմ Մյունիխ, կանչելնուդ պես կհասնիմ: Է՛, այս սիրուն հատակագծիս ի՞նչ կըսեք:

Վերժին մտասույզ, ծանր չարժումով մը դեմքը ափեն հեռացուց, չտկվեցավ և առանց աչքերը տղու հայացքեն զատելու, արտաքուստ բացարձակ հանգիստ չեչտով մը ըսավ.

– Անցած ամառ գնչու կին մը ինծի գուշակեց, որ չատ բախտավոր եմ ըլլալու: Այն ժամանակ մեծ կարևորութիւն չտվի, բայց հիմա հետզհետե կարծես սկսեր եմ հավտալու: Գիտե՞ք ինչ, այս բոլորը... ինչպես ըսեմ, այս բոլորը...

Խոսքը կես ձգեց, ակնթարթ մը հափշտակված նայեցավ տղուն, հանկարծ մեկ ոստումնով ցատկեց վեր.

– Տվե՛ք, տվե՛ք Ձեր ձեռքը:

Խլեց տղուն ձեռքը, պինդ մը սեղմեց զույգ թաթիկներուն մեջ, իակույն ձգեց, քայլ մը ետ գնաց, ու ներքին զսպված հուզումեն աչքերը լեցան:

– Եկե՛ք, նստեցե՛ք, որ խոսինք, – առաջարկեց Արշակ:

Աղջիկը նորեն աթոռ մը առնել կուզեր:

– Ո՛չ, հոս, քովս, քանափեին վրա:

Վերժին առանց վարանելու նետվեցավ քանափեին մեջ, գլուխը թեք կռթնցուց թիկունքին և աղվոր ժպիտ մը նետելով իր աթոռակցին՝ հարցուց.

– Գո՞հ եք: Խոսեցե՛ք նայիմ:

Բայց երկուքն ալ լուռ էին. և երկա՛ր:

Արևը իր վերջին ճառագայթները քաշեր էր ետ Պզտիկյաններու աղվոր հյուրասենյակին, ստվերոտ անդորրություն մը փռեր էր իր փեշերը և՛ պատուհաններեն դուրս, և՛ պատուհաններեն ներս: Սովե՜ր, լուսթյուն ու մինակ:

Եվ այնպես լավ էր այդ ստվերոտ իրիկունը, այդ լուռ անդորրությունը և այդ երկուքով մենությունը, երկուքին համար ալ:

– Ուրեմն պնչուհին ըսավ, որ Դուք չատ բախտավոր եք ըլլալու, – խոսեցավ վերջապես Արշակ:

Աղջիկը ժպտուն՝ գլխով դրական փոքրիկ շարժում մը ըրավ:

– Ափսո՜ս, պնչուհին չկա, որ ես ալ իմ բախտս նայիլ տայի, – ըսավ տղան չինծու արտմուղիայմբ մը:

– Ե՛ս, – բացականչեց աղջիկը արտասովոր աշխուժով մը, – ես կըլլամ Ձեր պնչուհին, ես ձեռքի գծերը կարդալ գիտեմ. դալրոցը չատերուն ձեռքն եմ նայած: Եվ ըսածս կկատարվի, չե՞ք հավտար:

– Իրա՞վ: Հապա կարդացե՛ք նայիմ:

Ու ձեռքը պարզեց աղջկան. Վերժին առավ տղուն ձեռքը, քիչ մը դիտեց ափին մեջ և շարունակելով դիտելը՝ ըսավ կարծես իր մտածումներուն մեջեն.

– Հրաշալի գծեր ունիք:

– Եվ ի՞նչ կըսեն այդ հրաշալի գծերը:

– Կըսեն որ... կըսեն որ... ո՛չ չե՛մ ըսեր, անկարելի է, կըսեն որ...

Եվ առանց տղուն ձեռքը ձգելու, խանդակաթ նայվածքը նետեց տղու աչքերուն և սկսավ սրտին խորքեն բարձրաձայն քրքջալ:

Արշակ հուզումեն, դրեթե ակամա, զարձուց հանկարծ ձեռքը, բռնեց աղջկան դաստակը և բոլոր ուժովը սեղմեց:

Վերժինի ծիծաղը վայրկենապես կարեցավ, և անսովոր կերպով լրջացած՝ նայվածքը իջեցուց վար: Այնպես միամիտ ու ամոթխած խոստովանություն մը կար այդ հանկարծական փոփոխության մեջ, որ Արշակ կարծես իր ըրածեն ամչցած՝ անմիջապես ձգեց աղջկան դաստակը:

Վերժին իսկույն ելավ տոքի: Դուրսեն ալ լավեցավ քայլեր, ու մայրը մտավ սենյակ, եսևեն ալ սպասուհին, որ ափսեի մը մեջ խմիչք ու քաղցրեղեն կբերեր հյուրին:

* * *

Ճիշտ հաջորդ առտուն էր: Արշակենց փոքրիկ սեղանատանը դեմ դեմի նստած՝ կնախաճաշեին մայր ու տղա, երբ տիկինը հարցուց:

– Տիրանը ի՞նչ ունի այս վերջին օրերը: Տեսակ մըն է: Բան մը չգիտե՞ս:

– Ոչինչ ալ չկա. ի՞նչ պիտի ունենա:

–Ո՛չ, շատ է փոխված, այնպե՛ս մտածկոտ ու տխուր:

– Ինչո՞ւ պիտի ըլլա տխուր, երևի աշխատանքի մը վրա է:

– Ո՛չ, ես գիտեմ, Վերժինն է պատճառը:

Արշակ հանկարծական ցնցում մը ունեցավ, թեթև մը դժգունեցավ ու հարցական աչքերով նայեցավ մորը:

– Ինչո՞ւ զարմացար, – չարունակեց մայրը, – ժամանակ մը Տիրանի երկու խոսքեն մեկը Վերժինն էր. խնդալս կուգար, վերջերս անունն անգամ չի տար: Ունևոր տղա չէ, երևի կամաց մը դուրը գոցեցին երեսին. բժիշկենք հաշիվը գիտցող մարդիկ են, մայրը քաշեց երևի աղջկան փեչեն:

– Ինչե՛ր կխոսիս, մայրի՛կ, պարապ խոսքեր են առոնք:

– Խոսքերս ինչո՞ւ ըլլան պարապ, տղա՛ս: Ավելի աղեկ է, որ դուն անգամ մը Տիրանը խոսեցնես: Ան ալ զավկիս պես է ինծի համար. դուն երբ հոս չես ըլլար, քու կարոտդ անկե կառնեմ: Մեղք է տղան, անգամ մը որ ցավը սրտին առնե՝ գիշ է:

Տղան առանց մեկ խոսքի ելավ ոտքի, անձեռոցիկը դրավ սեղանին ու ծանր քայլերով բարձրացավ իր սենյակը: Նստեցավ անկյուն մը, ձեռքերով դեմքը գոցեց ու սկսավ մտածել:

«Ժամանակ մը երկու խոսքեն մեկը Վերժինն էր», – մորը ըսած այս բառերը կարծես գամվեր էին գլխուն մեջ: Միթե իրա՞վ էր: Գուցեև:

Սկսավ մտաբերել բժիշկենց հետ ծանոթանալեն մինչև վերջին տեսակցությունը իրենց խումբին մեջ անցած-դարձածը: Տիրանի իրավ որ ոգևորությունը աղջիկով, երկուքի փոխադարձ սիրալիր վերաբերմունքը, հիշեց շատ մը մանր ու երկրորդական դեպքեր, որոնք մինչև այդ վայրկյանը ո՛չ մեկ խորհուրդ չունեին, հիմա սկսան իմաստ հագնիլ: Կարծես թե իր աչքերուն առջևեն վարագույր մը ծանր-ծանր ետ կերթար:

Հիշեց Տիրանի վերջերը բռնած դիրքը և ճշմարիտ որ ախորժությունը: Ինչպե՞ս էր, որ ինքը այդ մասին բնավ չէր մտածած: Մոտաբերից վերջապես իր քանի մը օր առաջվան խոսակցությունը, երբ ակնարկած էր ընկերոջը իր զգացումները: Եվ պատկերացավ աչքերուն դիմ Տիրանի սեղմված-ճնշված դիրքը, դմբքը և այն սոսկալի ծիծաղը:

Ալյակի սիրտը սեղմվեցավ. երևակայությունը սկսավ գործել ու պատկերի թերի մնացած մասը լրացնել: Կմտածեր, թե վերջին քանի մը շաբաթներու ընթացքին ինչ դառն տանջանք կրած պիտի ըլլար ապուշ: Ալ չէր տարակուսեր, որ այդ երկուքը իրարու հետ կապեր ունեին, և որ ինքը այդպես բրտությամբ երկուքի մեջը կխրվեր:

«Բայց Վերժինը, – հարց տվավ հանկարծ, – հապա անոր բացահայտ համակրանքը դեպի ինծի»:

Համակրանք. պարզասիրտ աղջիկ է, հարցերով կհետաքրքրվի, կխոսի, կխնդա, ուրիշ իրենչ: Եվ որովհետև աղջիկ մը նման մտածելու ձևեր ունի ինծի հետ և որովհետև դաղափարակից մարդու մը բնական համակրությունը ունի ինծի դիմ, ահա՛ ես արդեն բռնկեր եմ, կերևակայեմ Աստված գիտե ինչ:

Եվ նորեն պատկերացավ աչքերուն դիմ նախորդ իրիկվան իրենց առանձին հանդիպումը, որ քանի՛-քանի անգամներ հիշեր էր դիշերը. մեայն թե հիմա բոլորովին տարբեր գունավորումով: Ուրիշ աչքերով կտեսներ հիմա ամեն ինչ. և՛ աղջկան հուզվիլը, և՛ ամոթը, և՛ հեռանալը: Իսկապես որ ինքը վարված էր վայրենի կերպով:

Այո՛, կապեր է իր աչքերը, որ ոչինչ չտեսնեն և կույր խաղալով՝ կուզե ընկերոջը ձեռքեն խլե աղջիկը: Տիրան այս բոլորը կզգա, գիտե: Ջէ՞ որ անցած օր ինքը գացեր էր մոտը և խոսեր էր աղջկա մասին այնքան ջերմորեն, իսկ ան՝ իր ընկերը, իր կապի ու զգացումներու մասին ակնարկություն մը անգամ ըրած չէր: Ահա՛ քեզի երկու ընկեր ու երկու կեցվածք:

Արշակ ժամերով կպատնար իր սենյակին մեջ, մինչև որ խնդիրը ամեն կողմեն մտածեց, ինչպես և հիմա իր վրա ինկած պարտավորությունը: Բիչ մը հանգստացավ միայն այն ժամանակ, երբ իր ընելիքը վերջապես վճռած էր:

Պարզ էր. պետք էր, որ ինքը հեռանա: Բայց իր Եվրոպա մեկնելուն

դեռ ամիս մը կար ու ավելի. պետք էր կարճել այդ ժամանակը և իրենց հանդիպումները արգիլել՝ առանց արտաքուստ բան մը զգալ տալու:

Երբ քիչ մը եռքը քույրը եկավ ու ճաշի կանչեց, Արշակ անփույթ դեմքով մը վար իջավ և նույն անտարբեր չեչոտվը ուտելու միջոցին ըսավ հանկարծ.

– Մայրի՛կ, որոշեր եմ ութը-տասը օր մը երթամ մորաքրոջս՝ Հալեքի: Քանի անգամ է կըսեն ու կըսեն. անցածները կամուրջին վրա նորեն Միհրանիկին հանդիպեցա. կըսեր՝ մայրս վրադ նեղացած է:

– Չէ իրՆչ, – մեջ նետվեցավ Մաննիկ: – Ամբողջ տարին հոս չես, հիմա ալ որ եկեր ես՝ չաբաթներով կղզի պիտի երթա եղեր: Մորաքրոջ երթալդ պետք է, գնա՛, դիշեր մը կեցի՛ր ու եկո՛ւր:

– Միտքս ուրիչ է, Մաննի՛կ: Մինչև Համալսարան վերադառնալս վերջացնելու գործ ունիմ ձեռքս. հոս լուրջ աշխատիլ կարելի չէ, Տիրանը հետս է, մյուս ընկերներս կխանգարեն, ծանոթ ու բարեկամ ամեն կողմեն. վերջապես կտեսնեմ՝ հոս դժվար է կեդրոնանալը, երթամ կղզի, չուտ մը գործս կարգի բերեմ ու գամ:

– Արդեն դուն այդպես ես. խելքդ դուրսն է. ինչ կուզես, ան ըրե՛, – պատասխանեց քույրը սաստիկ դժգոհ:

– Ե՞րբ երթալ կուզես, – հարցուց մայրը: – Երեք օր քեզի ժամանակ, ավելի չուշանաս:

– Կերթամ այսօր, չուտ երթամ, չուտ ալ դառնամ:

Մաննիկ նորեն տրտնջաց: Բայց տղան քույրը հանգստացնելը վերջին թողնելով՝ ճաշեն անմիջապես եռքը առավ գլխարկը ու չիտակ Տիրանենց տունը:

Փողոցը տեսակ մը ճնշում ուներ մեջը և վախի ու վարանումի նման զգացում մը, բայց երբ Տիրանենց դուռը զարկավ, անգամ մը թոթվվեցավ, իրանին ուղիղ դիրք տվավ, դեմքին ալ գվարթ արտահայտություն մը:

Դուռը բացվելուն պես ներս նետվեցավ, աղմուկով ու խնդալով բարևեց սրահը կեցած տիկինը, կատակ մը ըրավ Տիրանի փոքր եղբորը հետ և նույն աղմուկով վազեց սանդուղներեն վեր, ուժով մը ետ հրեց Տիրանի սենյակին դուռը և կես մը չնչատ՝ սեմին վրա կանգ առավ:

Տիրան տանու անփույթ հագուստներով կեցած էր պատուհանին

մոտիկ՝ ջութակը սեղմած ծնոտին տակ և աչքերը հառած լուսամուտին մեջ դրած ձայնատեսիլին՝ կնվագեր: Դուրսի դռան զարնվիլը, վարի սրճուկը և սանդուղներուն վրայի ոտնաձայնը ընդհատեր էին իր նվագը, բայց առանց իր դիրքը փոխելու կսպասեր, որ իմանա՝ ո՛վ էր եկողը:

Արշակ սկսավ բարձրաձայն ծիծաղիլ.

– Սա ի՞նչ չնորհք է, ի՞նչ վիճակ, ճաշը դեռ կոկորդիդ՝ գրկեր ես սիրուհիդ ու կճղճզայնես: Մա՛րդ, քիչ մը վա՛զ անցիր առ քու ջութակեդ ու ոտանավորներեդ, դուրս ելիր անգամ մը այս ծակուռեն, աքանչելի մեղմ օդ է այսօր. մեյ մը հագուստի՛դ նայե, մազերո՛ւդ, չնորհքի՛դ:

– Իմ սենյակս ալ գով է, – պատասխանեց Տիրան կարճ ու չոր:

– Ալե՛կ, եթե չատ ես հավներ սենյակիդ՝ բարով վայլես: Իսկ ես ո՛չ միայն տունը մնալ չեմ կրնար, այլ նույնիսկ մեր արվարձանը. բա՛ցը, բա՛ցը կուզե սիրտս, ազա՛տ. կհասկնա՞ս: Քանի մը օրով երթամ պիտի կզգի: Հակոբյաններուն. Հալքի եղա՞ծ ես, հիանալի է: Ա՛, ես կշտացա արդեն ձեր քաղաքին ալ, ձեր քաղաքացիներեն ալ. երթամ քիչ մը բնության ծոցը:

Տիրանի վրա այս բոլորը տարօրինակ տպավորություն կըներ:

– Բարի ճանապարհ, – ըսավ վերջապես, – հոս բնություն չկա՞, ի՞նչ է: Շիտակը լավ չեմ հասկնար ո՛չ ըսածդ, ո՛չ ուզածդ: Նախորդ օրը բունկեր էիր, թե սիրահարեր ես, թե չգիտեմ ինչ ես եղեր, այսօր ալ եկեր ես, թե՝ բնություն, ազատություն...

– Ո՞վ է սիրահարեր, – ընդհատեց Արշակ բոլորովին ապշած դեմք մը ընդունելով:

– Անցած իրիկուն դուն չէի՞ր ըսողը:

– Ա՛հա, Վերժինը:

Եվ սկսավ խնդալ բոլոր կրծքովը:

Տիրան մեծ զարմանքով ընկերոջը կնայեր:

– Դուն ուրեմն տեղավորեր ես գլխուդ մեջ, որ ես կսիրե՞մ Վերժինը: Այո՛, իրավ որ չատ լավ աղջիկ է, ու չատ կհավնիմ: Բայց սեր, ամուսնություն ու չգիտեմ ինչ, տատ տեսակ կապող-կաշկանդող բաները ինծի համար չեն. ազա՛տ, ազա՛տ. և վրաս ամենևին սիրահարվածի չոչորթ կա՞, – վերջացուց իսկական սրտագին ծիծաղով մը:

– Անցած օր կար, այսօր չկա, – խնդաց Տիրան իր հերթին:

– Ո՛չ անցած օր, ո՛չ ալ այսօր: Եվ ի՞նչ եմ ըսեր անցած օր այդպես երևելի, լավ չեմ հիշեր, և վերջապես ինչ ալ ըսած ըլլամ՝ աւտոր կըսեն՝ խենթը ըսավ, խելոքն հավտաց: Դուն ինծի ան ըսե՝ կղզի կուգա՞ս. քեզի կվսոստանամ էշերու վրա արշավանք մը կղզիին չուրջը. խելք ունիս՝ եկո՛ւր: Հատուկ եկեր եմ քեզի հրավիրելու, կես ժամեն կմեկնիմ: Աչխատե՛, որ գաս. աղվոր ժամանակ կանցընենք:

Երգ մը մռլտալով սլացավ սանդուղներեն վար, գոցեց ուժով մը տան դուռը ու փողոց:

* * *

Երբ վարը դռան գոցվելու ձայնը լսեց, Տիրան կամաց մը շտկվեցավ և սկսավ սենյակին երկայնքովը երթևեկել, ըստ երևույթին խոր մտածման մեջ թաղված, բայց էապես ոչինչ չէր մտածեր. տեսակ մը խառնակուԹյուն էր գլխուն մեջ, իրար չբռնող ենթադրուԹյուններու, հիշողուԹյուններու կտորներ, որոնք հորձանքի մեջ ինկած փայտի բեկորներու պես մեյ մը երեսը կելլեին, մեյ մը հատակը կիջնեին:

Հանկարծ կեցավ, արագ փոխեց հագուստը, առավ գլխարկն ու գավազան մը, լուռ, առանց ոչ ոքի ոչինչ ըսելու իջավ վար, դուռը գոցեց հանգիստ շարժումով մը և վարանոտ քայլերով ուղղվեցավ դեպի դաշտ:

Ցիր-ցան, բարակ ամպերուն մեջեն արևը իր շողերը վար կմաղեր:

Մաքուր օդը և ազատ շարժումը կարծես ընթացք տվին տղու մտքերուն: Սկսավ մտածումները իրարու կապել, հակասուԹյունները հարթելու ջանալ և եզրակացուԹյուն մը հանելու աչխատիլ:

«Խենթը ըսավ, խելոքն ալ հավտաց»: Տիրան փարեցավ ընկերոջը ըսած առածին: Եվ իրա՛վ, Արշակ խենթ մը չէ՞ր, իր գաղափարներով հափշտակված մեկը: Անշուշտ աւտ էր և անցած օրվան անոր տարօրինակ ոգևորուԹյան պատճառը: Վերժին ըսեր էր, որ վարժուհի է դառնալու, և Արշակ ուրախուԹենեն այլևս ինչ ըսելը չգիտեր: Եվ ինքը, որ հիմարի պես կարևորուԹյուն էր տված այդ փախուկի խուքերուն:

Թեև այս բացատրուԹյունը երևույթի բոլոր հակասուԹյունները լրիվ չէր գոցեր, բայց Տիրան ամենևին տրամադիր չէր կասկածելու: Վերջապես չէ՞ որ ընկերը ինքը ըսած էր քիչ մը առաջ, Թե իր հոգին

սիրո կաշկանդումներուն համար ստեղծված չէ, թե ինքը ապաստանը կգնահատեր: Գուցեև խելացին ան է:

Ինչ կվերաբերի Վերժինին՝ պարզապես ծիծաղելի էր. և Տիրան թեթև մը ժպտեցավ:

«Ինչ սարօրինակ է մարդկային միտքը. մեր զգայարանքները կզգան այնպես, ինչպես մենք ինքներս զգալ կուզենք: Մտածեցի, որ աղջիկը հակում մը ունի դեպի ընկերս, և ահա՛ իր ամբողջ վարմունքը ուրիշ գույն առավ: Եվ իսկապես ուրկե՞ հանեցի այդ անմիտ ենթադրությունը. ա՛ռ ալ վայրկյանի տրամադրություն. ամեն բան վայրկյան, վայրկյանի մը ծնունդ ու վայրկյանի մը համար»:

Հոս ալ տղու հուշերեն թեթևակի քանի մը դեպքեր անցան, որոնք քիչ մը ավելի կշիռ ունեին կարծես, բայց այդ կետերուն վրա այնչափ դյուրին աչք դոցեց, որչափ որ մտածման այս եղանակը իր ինքնասիրությունը կշոյեր:

Ուրեմն պարզ թյուրիմացություն մըն էր այս ամենը, կոպիտ թյուրիմացություն մը. ուրեմն ոչինչ չկար կոտրած, փոխված կամ կորսված:

Տիրան իր մեջը նայեցավ այդ մտքին թողած ուրախությունը վայելելու համար: Բայց որքա՜ն եղավ զարմանքը, երբ զգաց, որ իր կորուստ կարծածը կրկին իր ձեռքը ունենալը հպիվ թե հաճույք կպատճառեր սրտին: Եվ հոդ առաջին անգամ որոշ գիտակցեց, որ աղջիկը կորսընցընելու գաղափարը միայն չատ թեթև կերպով իր հոգին վշտացուցած էր, և որ իսկապես իրեն խայթողը ապտակված ինքնասիրությունն էր:

«Մի՞թե...»:

Ոտքի արահետը, որուն վրայեն մեքենաբար կքալեր, տարավ ծովուն բարձր ափին բուսած ծուռումուռ թզենիի մը տակ, որ իր արմատներով պինդ մը հողը գրկած՝ բունն ու ոստերը դատարկության վրա կկախեր:

Տիրան մտավ ծառի ստվերին մեջ ու աչ թևով բունը գրկած՝ ճակատը հենեց երկու հյուղերու միացման անկյունին. և այդպես կես մը հոգին, կես մը ծառին, կես մըն ալ օդին մեջ առկախ՝ անշարժ մնաց:

Վարը, ափին մոտիկ, ցիր ու ցան չհչոտ ժայռերու շրջանակի մը

մեջ ձկնորսի փոքրիկ նավակ մը կեցած էր: Տիրան անսովոր հետաքրքրութեամբ մը կլանված՝ իր բարձունքեն կդիտեր ձկնորսին գզգզված մորուքը, ճերմակ մազերը, այրված դեմքը, բաց, թավ կուրծքը, մինչև սրունքները բոպիկ ոսկրուտ ոտքերը, մաշված ու թաց շալվարին լայն ծալքերը ու կարկտված մինթանին գույնզգույն կտորները:

Ներուկը կծուեր, կչտկվեր. թեւի վարպետ շարժում մը և ուռկանը, բացվող հովահարի մը պես, կփռվեր օդին մեջ. չը՛ռափ. ու կապարե գնդակներու շրջանակը կանճրևեր ջուրին վրա՝ իրեն հետ ցանցը դեպի հատակը քաշելով:

Երբեմն պարապ կելլեր ուռկանը ծովեն, երբեմն քանի մը ձուկ, որ ճարպիկութեամբ կբռներ ալևորը ու կնետեր նավակին փորը, ուր ծովուն ջուրը ներս էր ծծվեր ու թեթև մը կօրորվեր:

Տիրան կհետևեր ուշադիր և ուրիշ ոչինչ մտածել չէր ուզեր: Մտածման այս արվեստական ոչնչացումեն այն աւտեն միայն սթափվեցավ, երբ ձկնորսը ուռկանը փռեց նավակին քիթը, թիերը ձեռքն առավ ու քանի մը վարժ շարժումով ժայռերուն մեջեն ելավ ու կորավեցավ փոքրիկ հրվանդանին ետևը: Տիրան նայեցավ չուրջը. արևը հորիզոնին կքսվեր: Ժամեր էին անցեր:

* * *

Հեռացավ իր թզենիեն ու հարմար տեղ մը, ուրիշներու ոտքի հետքերեն օգտվելով՝ բարձր ափեն իջավ ծովուն եզրը ավազին վրա, որ արդեն բոլորովին ստվերի մեջ էր: Եվ ժայռ ժայռ ցատկելով՝ առաջացավ քիչ մը ծովուն մեջ ու նստավ հարմար ժայռի մը եզերքին:

Արձանի պես անշարժ ու իր գավազանին վրա կքած՝ կդիտեր հեռուն, երբ իրմե քիչ մը հեռու ծովուն մեջ բան մը ճողփեց, և ջուրի կաթիլներու աղվոր մանյակ մը շարվեցավ իր կրծքին և ուսերուն վրա:

Տղան բնազդորեն ետ քաշվեցավ ցնցումով ու լսեց հնչուն քրքիջ մը, որ բարձրերեն կուգար: Թզենիին մոտիկ, ուր քառորդ ժամ մը առաջ ինքն էր կեցած, հիմա կեցած էր Վերժին եղբոր քովը ու կխնդար՝ ձեռքի փոշին մաքրելով:

– Բաղնիքն անո՛ւշ,– պոռաց բժիշկի զվարթ ձայնը:

– Կեցե՛ք, ես ալ իջնեմ, – ճչաց Վերժին և ցամաքի մեկ չեղ էջքեն վար վազեց՝ եռևեն հող ու քար գլտորելով:

Բժիշկը հետևցավ իր քրոջը, միայն ավելի զգուշությամբ: Տիրան ալ իր ժայռերեն ետ եկավ ափը:

– Այս ժայռերուն մեջ ի՞նչ կփնտրեք. ամոթ չըլլա հարցնելը, – կատակեց բժիշկը:

– Բանաստեղծության նյութ,– պատասխանեց Վերժին անմիջապես և շարունակեց՝ խոսքը ուղղակի Տիրանին ուղղելով: – Մեր բանաստեղծները հիմա այնքան քիչ բանաստեղծական բան կգտնեն ցամաքի վրա եղածներեն, որ ստիպված են ջուրերուն խորքը փնտրելու իրենց նյութը:

Տիրան, որ դեռ բոլորովին կապզուրված չէր այսպես անակնկալ կերպով աղջկան հետ հանդիպելեն, «ի՞նչ ըսել կուզե», –մտածեց ինքնին, և իրեն այնպես թվեցավ, որ այդ խոսքերը ակնարկ մըն էին: Ու աղջկան երեսը կնայեր քննող նայվածքով:

Նույն Վերժինն էր, նույն դիմագիծերը, նույն աչքերը, բայց զարմանալի կերպով բան մը պակսած էր կարծես: Տիրանի գլխուն մեջ Վերժինի պատկերը ուրիշ տեսակ էր. ավելի եթերային, ավելի խորհրդավոր, ավելի «բանաստեղծական». մինչդեռ իր դեմը հիմա միսե ու ոսկորե իրական դեմք մըն էր, մարմին ու արյուն. տգեղ կամ անախորժ չէր, ո՛չ, բնա՛վ. բայց ան հին հեքիաթական հրապույրը չկար. թռեր էր.

– Ինչո՞ւ այդպես զարմացած երեսս կնայիք,– հանկարծ հարցուց աղջիկը, բայց ինքն ալ իսկույն վրա բերավ.

– Ի՞նչ հիանալի ռեզոնանս ունի հոս:

Եվ անմիջապես սկսավ երգի կտոր մը, որ հաղիվ հաջորդ պարբերության հասած՝ ընդհատեց.

– Ջէ՛, առանց դաշնակի չեմ կրնար:

Աչխույժ պոռայտ մը ըրավ իր առանցքին վրա և հանկարծ վազեց գնպի ծովը երկարող ժայռի մը վերջին ծայրը ու ծռեցավ ինքն իր վրա.

– Պարո՛ն Տիրան, գալազանների՛դ, չո՛ւտ, չո՛ւտ:

Առավ տղուն ձեռնափայտը, կոխեց երկու ժայռերու ճեղքին մեջը

և ըստ երևույթին բան մը հալածելով, մերթ կծիծաղեր, ակնթարթ մը կլռեր ու նորեն կպոռար ոգևորված.

– Ինչ ճարպիկ է անպիտանը, չէ՛, չես փախչելու:

– Վերժին, կամաց, ջուրը կիյնաս, – պզտուշացուց եղբայրը:

Տիրան կնայեր աղջկան չարժումներուն, բացականչումյան, հուզումին ու պարապ ոգևորումյան և այդ ամենը սաստիկ երեխայական կզտներ:

Աստվա՛ծ իմ, ինչչն էր, որ մինչև հիմա իր աչքին ու իր մտքին այնպես աննման, այնպես հասուն, խելացի, այնպես կատարյալ ու անդիմադրելի կներկայացներ այդ աղջիկը:

«Պատրա՞նք ու ինքնաներշնչո՛ւմ», – տվավ ինքը իր հարցումին պատասխանը իր հոգիին մեջ:

Վերժին ծովեն գլուխը բարձրացուց, չտկվեցավ ամբողջ հասակով և կնայեր հմայված.

– Բայց տեսե՛ք, տեսե՛ք, ինչ սքանչելի երկինք է:

Արդեն մարը մտած արևի վերջին շողերը արևմուտքի լեռներուն ետևեն կարծես ծածուկ դուրս էին սպրդեր և դեղինի, կարմիրի ու նարինջի ցայտքեր կսրսկեին նուրբ ու ցրիվ ամպերու փերթերուն վրա, որոնց անջրային ձևերը դանդաղ կայլակերպեին դիտողի աչքերուն դիմաց:

– Բանաստեղծի մը գրչին կսպասե անմահանալու համար, – ակնարկեց բժիշկը՝ Տիրանի դեմքին ժպտելով:

– Անիկա այսօր ավելի հոռետես փիլիսոփայի մը կեցվածքը ունի, քան բանաստեղծի, – առարկեց Վերժին եղբորը:

– Եվ օրհորդը իրավունք ունի,– հաստատեց Տիրան:

– Մի՞թե. և ինչո՞ւ, – հարցուց բժիշկը:

– Կան վայրկյաններ, երբ մարդու գլխուն մեջ կասկածի հարցեր կծնին: Ըսե՛ք խնդրեմ. ինչո՞ւ համար է այս պոռոտ գույներով չպարված երկինքը. ինչի՞ կծառայե այս ծավի հարթուժյունը, երբ իր հայելին այդպես քծնանքով դեմ կբռնե քոքեթ ամպերու նազանքին. ինչ խորհուրդ ունի այդ դիմացի լեռներուն անվերջ գլուխ գլխի խորհրդակցուժյունը. ինչ նպատակ ունինք մենք, որ ժամ մը առաջ կուտեինք, հիմա կեցեր ենք հոս և վաղը, ո՞վ գիտե, կա՞նք, թե՞ ոչ. ինչո՞ւ համար է

մարդկությունը ընդհանրապես, մտերմությունը, սերը՝ իրենց ոգևորություններով, հիասթափումով ու պատրանքներով:

– Ատոնք գուցե բանաստեղծական, բայց հիմար հարցեր են. ներեցե՛ք արտահայտությունս, – առարկեց բժիշկը՝ քաղաքավարին ու անքաղաքավարը իրար խառնելով: – Բնական երևույթներու հանդեպ պտնի մենք՝ բժիշկներս, նպատակը չէ, որ կհարցնենք, այլ կփնտրենք պատճառները:

– Նպատակներն ալ Ձեզի ըլլան, պատճառներն ալ, – բացականչեց Վերժին: – Բնության գործեցկություններու, կյանքի և հոգեկան ապրումներու նման երևույթներու դիմաց ինծի հետաքրքրողը անոնց գոյությունն է, որ կան:

– Աոիկա ալ շատ խախուտ է, – պատասխանեց Տիրան խիստ կոտրված չեշտով մը: – Շատ մը դիտեցկություններ կան մեր շուրջը և շատ մը ապրումներ մեր մեջը, որոնց գոյության երկար ժամանակ որևէ տարակույս չունինք, բայց հանկարծ կուգա ակնթարթ մը, ու մենք կտեսնենք, որ այդ բոլորի գոյությունը միայն մեր երևակայության մեջն է եղած:

– Այսօր իրավ որ շատ ձախորդ եք տրամադրված, պարոն Տիրան, – բացականչեց աղջիկը հաշտարար ժպիտով մը: – Ավելի աղեկ է՝ եկեք երեքով բան մը երգենք, բայց այնպե՛ս կենդանի, զվարթ, ժիր բան մը. Ձեր հուեհասությունը կրնաք և վերջը շարունակել, եթե շատ կյանկաք:

Տղան իր մեջ պայքարի նման զգացումի մը խլրտիլը զգաց, բնազդական հակադրեցություն մը աղջկան գոհունակության ու զվարթության դեմ:

Բժիշկը իր բամբ ձայնովը սկսավ իր մեկ սիրած ուսանողական երգը, քույրը անմիջապես ձայնակցեց, և միևնույն ժամանակ ճանապարհ ինկան խիճերուն վրայեն:

Տիրան կքալեր լուռ, երբեմն քովընտի պաղտուկ նայվածք մը նետելով Վերժինի դեմքին. և երբեմն ատեն անոր ըրած բերնի ու դեմքի շարժումները այնքան ալ ախորժելի չէր գտներ:

Բնակությունններուն մոտիկ իրարու եռակի իրարու կապվող երփերը

ընդհատվեցան. կեցան և իրենք, իրարմե հրաժեշտ առին. փողոցները կքաժնվեին: Տիրան մինակ ու գլխահակ կերթար մտախոհ:

Դատարկություն մը կար կրծքին տակ: Այն հին ներքին պարապության ճնշող զգացումը, որ ժամանակ մը Վերժինով ոգևորվիլն էր լեցուցեր, այս վերջին օրերն ալ կասկածը, նախանձը, արհամարհված ըլլալու ճանկռտող զգացումը, ընկերոջը մեծ դիհաբերություն մը ըրած ըլլալու հպարտությունը: Եվ ահա հիմա առոնք ալ կցնդեին ոչինչին մեջ, աչքերուդ դեմ հալվող անհայտացող մուխի կտորի մը պես: Ջէ՞ որ այդ բոլորը երևակայություն էր միայն և թյուրիմացություն:

Պարապ էր հիմա հոն ներսը:

Ե

Առտու մը որքան մեծ եղավ Վերժինի ուրախությունը, երբ սպասավոր մը իր հասցեին նամակ բերավ, և նամակին վրա Վերժին իր Փեթըրսի գիրը ճանչցավ:

Միսս Փեթըրս, որ մայիսի վերջերը Ամերիկա էր գացած մեկ-երկու ամիսով, հիմա վերադարձեր էր նորեն դպրոց և Վերժինը գիշեր մը իր քովը կկանչեր, ինչպես քանի մը անգամ ըրած էր, երբ ինքը իր զբաղումներուն պատճառով այցելելու անկարող կըլլար: Վերժին անմիջապես մեկնեցավ և երկու ժամ չանցած՝ իր սիրած դպրոցի սեմին վրա նետվեցավ Փեթըրսի վիզը:

Ամբողջ իրիկունը զվարթ անցավ իր վարժուհիներու ու մեկ-երկու ծանոթ ընկերուհիներու չրջանին մեջ: Միսս պատմեց իր ճամփորդությունը, Ամերիկա անցուցած օրերուն ու տպավորություններուն հին ու նոր դեպքեր ու մանրամասնություններ: Եվ կեսգիշերվան մոտիկ էր արդեն, որ երկուքով առանձնացան իրենց սենյակը հանգստանալու:

Փոքրիկ սենյակ մըն էր միսսի ննջարանը, որ միևնույն ժամանակ իր աշխատանոցն էր և մասնավոր ընդունարան մտերիմներու համար:

Փոքր, կրկնահարկ թիկունքով գրասեղան մը՝ ամեն տեսակ զարդ իրերու, սուփերու, հախճապակիներու, ծաղիկներու և ալպոմներու տակ կորսված: Պատերեն գամված էին նկարներ հովահարներ, բանված գույնզգույն թուղթե գրպանակներ, ամեն գիրքի մեծ ու փոքր լուսա-

նկարներ. ճապոնական խոշոր կարմիր հովանոց մը առաւոտուղին մեջտեղեն կախված էր բաց. պատին տակ ճերմակ ու ցած մահճակալը. քիչ մը հեռուն՝ սենյակին կեդրոնը՝ սեղան մը, որուն վրա կանաչ լուսամփոփով լամպն էր դրված, իսկ սեղանին մոտիկ՝ չոլոն, որուն վրա այսօր Վերժինի համար անկողին էր պատրաստված:

Երբ երկու աղջիկները ներս մտան, Փեթըրս դուռը կղպեց:

– Վերջապես առանձին ենք, Թուլյո՛ւր հագուստներդ ու եկո՛ւր պլուխ գլխի քիչ մը խոսինք:

Օգնեց Վերժինին չփակը հանելու ու քորսեն, հանեց ինքն ալ. իր ճերմակ բլուզներեն մեկը տվավ հյուրին, որ հագնի. և երբ աղջիկը, հայելիին առջևը կեցած, մերկ թևերովը իր մազերը բռնող կեռիկները կհաներ, միաս Փեթըրս քայլ մը ետ կեցած՝ կդիտեր անոր կիսադեմը կես մը իրականին վրա, կես մը հայելիին մեջ, հետզհետե ուսերուն թափվող շագանակի մազերը և քորսեեն ազատված անոր իրանը:

– Բայց ինչպե՜ս աղվոյժեր ես, Վերժի՛ն, – բացականչեց հանկարծ:

Նայեցան իրարու, խնդացին ու գրկվեցան:

– Քանի մը ամսվան մեջ չատ ես փոխվեր, հասունցեր ես տեսակ մը:

– Իրա՞վ:

Ու դեմ դեմի նստեցան: Միաս՝ իր աշխատանքի սեղանին առջևը՝ աթոռին վրա, Վերժին ալ՝ հայելիին քովը՝ բազկաթոռին մեջ:

Միաս Փեթըրս վայրկյան մըն ալ նայեցավ հարազատի հպարտությամբ ու խանդաղաստանքով Վերժինին, որ անփույթ դիրքով մը ընկերուհիին բլուզը ուսերուն նետած՝ անոր դեմքին կժպտեր:

– Պատմի՛ տեսնենք դո՞ւն ինչ ըրիր այս ամառ, ինչպե՞ս անցուցիր, նորեն երգի դասերո՞վդ էիր պլաղված, – հարցուց միաս, արմունկը սեղանին հենեց, բռունցքը դրավ ատին ու ճկույթն ալ բերանը:

Վերժին պահ մը լռեց և հանկարծ ըսավ.

– Գիտե՞ս, կարելի է քանի մը շաբաթեն նորեն իրարմե բաժնվինք և երկար, երկար ժամանակվա համար:

– Այսի՞նքն թե, – բացականչեց խոսակիցը և անակնկալի պատճառած զարմանքեն բռունցքը դեմքեն հեռացուց:

– Շատ հավանական է՝ երթամ Եվրոպա:

– Ճամփորդութի՞ւն:

– Ուսումս շարունակելու:

– Համալսարա՞ն:

Ու աթոռին վրա չտկվեցավ:

– Այո՛, ի՞նչ խորհուրդ կուտաս:

– Բայց ինչպե՞ս եղավ և ի՞նչ ճյուղի հետևիլ է միտքդ:

– Ես ալ կուզեմ վարժուհի դառնամ, քեզի պես. բայց նախ պետք է նախապատրաստութիւն և համապատասխան կրթութիւն, քեզի պես:

– Շիտակ է ատիկա, բայց այդ տեսակ դիտավորութիւն մը ունենալուդ մասին ինծի բնավ ակնարկութիւն մը չես ըրած մինչև հիմա, ինծմե կծածկեի՞ր:

– Ես քեզմե բան ծածկել կրնա՞մ. այդ տեսակ դիտավորութիւն մը չունեի, որ քեզի հայտնեի:

– Ուրեմն համալսարան երթալուդ հարցը ինչպե՞ս ծագում առավ:

– Գաղափարը ինծի տվավ մեր ընտանիքի բարեկամներեն մեկը, որ ինքն ալ համալսարանական մըն է և ամռան արձակուրդը եկած է ծնողքին հետ անցնելու:

Եվ այս չափով այդ կնճռոտ խնդիրը գոցել կուզեր և ուրիշ խոսքի անցնիլ, բայց միսս Փեթըրս սկսավ քրքրել.

– Ի՞նչ կսորվի ինքը՝ այդ պարոնը:

– Ընկերական գիտութիւններ:

– Ատիկա շատ ընդհանուր անուն է. երևի՝ իրավաբանութիւն;

– Ո՛չ, անոր ուզածը հանրային գործունեութիւն է, ո՛չ անհատական: Ավարտելուն պես պիտի ձեռնարկե գրական ու գիտական լուրջ ու մեծ ամսագրի մը հրատարակութեան:

– Այդպե՞ս, – բացականչեց միսս Փեթըրս կարծես իր մտածումներուն մեջեն և հանկարծ հարցուց, – և ի՞նչ է այդ ձեր բարեկամին անունը:

– Սմբատյան, – պատասխանեց աղջիկը կարճ, կարծես վրայեն նեստելով:

– Իսկ իր փո՞քր անունը, – հարցուց միսս Փեթըրս անողոք հետապնդումով:

– Իր անունը Արշակ է, – պատասխանեց աղջիկը թեթև կարմրութեան մը մեջեն. կարծես իր արտասանած հնչյունները շրթունքները կայրեին:

– Եվ Եվրոպա ո՞ր երկիրը երթալ կուզես:

– Կարծեմ գերմանական Զվիցերիա կամ Գերմանիա, տեսնենք հարմարությունը:

– Իսկ այդ պարոն Ալշակը ո՞ր համալսարանն է:

– Վիեննայի համալսարանը, բայց կարծեմ ան ալ փոխելու է իր քաղաքը:

– Անշուշտ համակրելի, ազնիվ ու խելացի երիտասարդ մը, քանի որ այդ տեսակ բարձր խորհուրդ մըն է ուներ քեզի:

Վերժին պատց, որ այլևս չի կրնար իր խոսակցի աչքերուն նայիլ. աչքերը գոցե ձգեց, գլխով թեթևակի դրական նշան մը ըրավ և ջղաձգորեն սկսավ խաղալ ճերմակ բլուզի չկապված կապիչներուն հետ:

– Վե՛ր-ժին, – ըրավ վարժուհին՝ երկու վանկերն ալ խորհրդավոր շեշտով մը երկնցնելով:

Վերժին գլուխը ավելի կախեց և հանկարծ ցատկեց ոտքի, նետվեցավ իր մեծ քրոջը գիրկը ու դեմքը անոր կրծքին մեջ թաղեց: Վերջին կեռիկն ալ մազերուն մեջեն վար ինկավ, և հագիվ փունջի մը միացած վարսը, ազատվելով ամեն կապանքե, փուվեցավ աղջկան կես մը վար սահած բլուզին, մերկ ուսին, միսս Փեթըրսի թևերուն ու լանջին վրա:

– Ա՜խ, արդեն, արդեն, – հծծեց վարժուհին ու ժպտեցավ արտասուավոր դառն ու բարի ժպիտով մը:

– Հիմա կհասկնամ բոլոր ըսածներդ, – վրա բերավ իսկույն, ծռեցավ, գրկեց աղջկան գլուխը ու պագավ:

Վերժինի թևերը ավելի թուլցան, և մարմինը ավելի սահեցավ վար. ծունկերը դեմ առին գետինը փռված մորթի թավ մազերուն մեջ, կուրծքը ընկերուհիի ծունկերուն և թևերն ալ միշտ նետած թույլ կերպով մը անոր մեջքը:

Միսս Փեթըրս խնամոտ ձեռքով աղջկա գեմքը իրեն դարձուց քիչ մը դեպի վեր, ճակտին թափած մազերը քնքշությամբ հետացուց անոր երեսեն և գորովի նայվածքով նայիլ սկսավ անոր աչքերուն: Վերժին կժպտեր չկրնար, հուզված և հայացքին մեջ ուրախության շիթ մը ամոթխած արցունք՝ ո՛ր կողմ ինքզինքը ծածկելը չգիտեր:

– Եվ իրարու բացվա՞ծ ևք արդեն, – հարցուց միսս Փեթըրս:

Վերժին գլխով բացասական նշան ըրավ:

– Բայց ան ատեն վստա՞հ ես, որ ան ալ...

– Այո՛, պիտեմ, – խնդաց Վերժին չարաճճի ժպիտով մը:

– Անգամ մը անպատճառ կբերես ինծի, որ տեսնեմ:

– Մեծ սիրով, – պատասխանեց աղջիկը իր երջանիկ հուզման մեջեն:

– Բախտավոր եղե՛ք, – չեչտեց վարժուհին, – ա՛խ, գոնե դուք բախտավոր եղեք:

Վերջին նախադասությունը ավելի հառաչ մըն էր, քան խոսվածք: Վերժին խորունկ ցավ մը և կարծես ամոթ զգաց իր բախտավորութենեն և չգիտեր ինչ ընե, որ քիչ մը սիրտը առնե, մխիթարություն մը տա: Բայց ընկեր-վարժուհին իսկույն խոսակցությունը իր վրայեն անդին սահեցուց:

Եվ դեռ երկար, երկար կխոսեին երկուքով, մինչև որ պատին գամված փոքրիկ, կլոր ժամացույցը զիլ ու տևական հնչյունով մը երեք հատ զարկավ:

Ելան պառկելու:

Լույսը մարած էր չատոնց: Երկուքն ալ իրարու քունը խանգարելու վախով կլռեին և ո՛չ մեկ չարժում, բայց երկուքն ալ արթուն էին:

Վերժին՝ երազանքներու մեջ, միսս Փեթըրս՝ հուշերու:

Քիչ մը ետքը, սակայն, քունը երկուքեն ալ գողցավ անոնց մտածումներն ու հուզումները, բայց չհամարձակեցավ ո՛չ Վերժինի ղեմքին դրոշմված երջանիկ ժպիտը սրբելու, ո՛չ ալ միսս Փեթըրսի այտերուն թափված հուսաբեկի լեղի արցունքը չորցնելու:

* * *

Շաբաթվան մը չափ էր, որ Արշակ կղզին էր, բայց իրեն կթվեր, թե ամբողջ ամիսներ էին անցեր:

Հոդ արդեն քանի մը անգամ եղած էր նախորդ տարիները և իրեն համար չատ նորություն չուներ: Մորաքրոջ ամբողջ ընտանիքը չատ սիրելի, բայց բոլորն ալ հասակը առած մարդիկ էին կամ դեռ տղա:

Արշակ ինքզինքը տված աշխատանքի. առտուները մինչև կեսօր կզբաղվեր, իսկ ամբողջ ճաշեն վերջը կթափառեր կղզիին զանազան

մասերը սովորաբար իրենց դրացի հույն երիտասարդի մը հետ: Երբեմն ալ միասին նավարկելու կելլեին. հույնը իր սանդալը ուներ և հիանալի թիավարել գիտեր: Իսկ գիշերները նորեն կնստեր աշխատելու:

Բայց իսկապես ո՛չ իր աշխատանքին համ կառներ, ո՛չ իր զբոսանքին: Հոգվածը թեև կառաջանար, բայց ան չէր, ինչ ինքը կուզեր: Յամառ բան մը դուրս կուգար, առանց ներքին ջերմութեան, իզուր ամբողջովին կեդրոնանալու ջանքեր կըներ: Արդեն քանի մը անգամ անցած էր մտքեն ընդհատել, բայց կվախնար պարապ մնալե. և խմբագրատունն ալ խոստացած էր հաջորդ շաբաթվա թիվին համար:

Զբոսանքներն ալ մեծ հրապույր մը չունեին: Հույնն ու ան կշրջեին, կխոսեին, կկատակեին, բայց միայն Արշակի դեմքն էր, որ կխնդար: Վարը՝ նավամատույցը, ընկերը հաճախ խաղի կելլեր հույն ծանոթ աղջիկներու հետ, որոնցմե մեկը Արշակի վրա մասնավորապես ուշք էր դարձուցած: Սուր դիմագծերով, արևելքի խոշոր, սև աչքերով, թուխ, լայնսիակ մը, միշտ անուռոր հագուստներով, քալվածքն ալ հանդուգն, չարժուձևերն ալ, օրիժինալ դեմք մը:

Տղան ամեն դուրս ելլելուն գրեթե կհանդիպեր անոր կա՛մ փողոցը, կա՛մ նավամատույցը, կա՛մ անտառին եզրը, ու միշտ հրավիրող բան մը ուներ աղջիկը իր խոշոր աչքերուն նայվածքին մեջ:

Բայց շատ հեռու էր Արշակի հոգին այդ բոլորեն: Արշակի համար հիմա աշխարհիս երեսին միայն մեկ աղջիկ մը կար, և ճիշտ այդ մեկը պատկերն էր, որ ան ամեն կերպ մոռնալու կաշխատեր: Սակայն ինքնապիտակցութեան կամ կամքի թույլ վայրկյան մը և դեռ շատ թարմ հուշերը կիսուժեին իսկույն իր վրա: Եվ այդ վայրկյաններուն տղան կզայրանար ինքն իր դեմ ու անմիջապես կփրցներ մտածումներու այդ փաթթվող ու հմայող չղթան:

Անօգուտ տեղը իր հպարտութիւնը խթանել կուզեր. «Մի՞թե կարելի է այս աստիճան տկար ըլլալ և ան ալ աղջկան մը դեմ, որ արդեն կապված էր ուրիշի մը, իր մոտիկ ընկերոջը և որ պարզապես համակրելի բարեկամի մը պես կվարվի ինձի հետ»:

Սակայն ակամա կհիշեր իրենց հանդիպումներեն այս ու այն կետը, և հանկարծ կասկածը կվազեր իր հոգիին մեջեն. «Աստվա՜ծ իմ, մի՞թե այդ բոլորը պարզ ընկերական էր. այն չեչտերը, այն նայվածքը, այն հուզումը...»:

Եվ վերջապես բնազդ ըսած բան մը կա ամեն մարդու հոգիին մեջ, և այդ բնազդը կըսեր՝ ո՛չ: Տենդոտ չարժումով մը եա կվաներ այդ բնազդական բաները, որոնք նորեն խաբել կուզեին իր սիրտը և որոնք երազական պատրանք մը տվեր էին իր զգացումներուն ամբողջ չաբաթներ:

«Տիրա՜նը, ա՛յ բախտավո՛ր տղա. տաղանդ, գեղարվեստ, սեր, հաջողութիւն», – կկրկներ սանձված նախանձով մը, որ իզուր իր մեջեն արմատախիլ ընել կցաններ:

Շաբաթը դեռ չլրացած՝ Արշակ սկսավ անտանելի ձանձրանալ: Ինչ ճգնավորութիւն էր ասիկա, և ինչ էր իմաստը: Հոս ալ նույնչափ իր ուղեղը աղջիկով կզբաղվեր, որչափ և տունը զբաղվելու էր: Ալ օգուտ մը չէր սպասեր իր այս ավելորդ փախուստեն: Եվ վերջապես ավելի լավ չէ՞ր հետզհետե վարժվիլ՝ «անոնց» փոխադարձ կապը մոտեն տեսնելով:

Եվ վճռեց հաջորդ օրն իսկ վերադառնա տուն. արդեն անհարմար ալ էր իրեններուն հանդեպ ավելի երկար կղզին մնալը: Եվ կարոտեր էր իրենները:

«Եվ Վերժինը, որ նորեն պիտի տեսնես», – կկրկներ ուղեղին մեկ կողը գանգին անկյունեն: Արշակ նախ այդ անկյունեն ըսվածները չլսել ձևացուց, բայց ո՛չ երկար:

Եվ ինչ կարիք կար կեղծելու. անշուշտ որ ուրախ էր Վերժինը նորեն տեսնելուն. բայց ինքը գիտե սանձի տակ պահել իր զգացումներն ու իր վարմունքը: Վերժինի հետ առանձին չի մնալ երբեք. իրենց հանդիպումներու ատեն ալ զբաղվիլ միշտ ուրիշներով և ուրիշ բաներով, մինչև որ իր հոգին բոլորովին վարժվի, ու իր անտեղի զգացումը բթանա վերջնապես:

Ուրեմն ալ ինչ կար վարանելու:

* * *

Հաջորդ օրը կեսօրեն քիչ մը անց Արշակ կերթևեկեր Սիրքեճիի կայարանը Հարթակին վրա՝ զնացքի պատրաստվելուն սպասելով, չիտակ կղզիի չոգենավեն կուգար:

Կբերեին վագոնները, կկցեին իրարու ու կկապեին: Վայրկյան մը

կանգ առավ լոկոմոտիվին քովը ու գործավորին աշխատանքը կդիտեր, որ իր մերկ ու ջղուտ թևերովը ահագին թիին շարժելով՝ հնոցը հանքածուխ կնետեր վարժ ու թեթև ճիգով մը:

– Այո՛, մեքենան ալ պիտի ուտե, որ մեզի քաշել կարողանա, – հնչեց հուսկեն բժշկի բասը ձայնը: – Երևի կզպիեն կդառնաք:

– Այդպե՛ս է: Իսկ Դո՞ք ինչպես եք:

– Շատ դիշ: Նոր եմ ճաշեր, և տասը վայրկյան է, որ կվազեմ. ժամացույցս երեք վայրկյան առաջ է եղեր. Գում-Գաբու Հիվանդ ունիմ. ամբողջովին քրտինքի մեջ եմ ու հոգնած. եկե՛ք, մտնենք վագոն:

Մոտան առաջին հանդիպած բաժանմունքը, ուր խիստ բարակ ու խիստ երկար իրանով մարդ մը նստած էր չիփ-չիտակ, ձեռքերը կանոնավոր կերպով ծունկերուն դրած, եգիպտական արձաններուն պես և Սան Ստեֆանոյի տոմսակ մը նշանակի պես գլխարկին ճակատը անցուցած. ըստ երևույթին անպլիացի մը:

Երկու բարեկամները նստեցան իրարու դեմ: Բժիշկը գլխարկը նետեց դարակին ցանցը և ահագին թաշկինակովը սկսավ դեմքին քրտինքը սրբել՝ անտանելի տաքեն գանգատելով:

– Իսկ ինչպե՞ս են տիկինն ու օրիորդը, – հարցուց Արշակ քաղաքավարության իբրև տուրք:

– Շատ լավ: Կիրակի հյուրեր ունեինք, տոսկալի ադմուկ էր տունը. իսկ երեկ չէ նախորդ գիշերն ալ մենք էինք պարոն Տիրանենց տունը. ղվարթ ժամանակ անցավ: Գիտե՛ք, ա՛, քույրս զեղարվեստի սիրահար է:

«Գեղարվեստի ու զեղարվեստագետի», – մտածեց Արշակ: Անոնք անդին իրենց քեֆին կուրախանային, երբ ինքը կղզին ինքզինքին հետ կկռվեր:

Բարկություն մը, չարություն մը զգաց Հանկարծ այդ բոլորին դեմ. ընկերն ալ, աղջիկն ալ, բժիշկն ալ, կարծես ամենքն ալ իր քթին կխնդային:

Գնացքը թեթև մը ցնցվեցավ դեպի ետ և զգուշությամբ դուրս սողաց կայարանի երկաթե գծերու բարդ ցանցին մեջեն և ընթացք առավ:

Ընթացք առավ նաև բժիշկը: Ինչը տուիթ տվավ՝ Արշակ լավ մը չըմբռնեց, բայց բժիշկը սկսավ շատ դանդաղ խոսվածքով բուռն

հարձակում մը «հասարակութեան հիմար բարոյական հասկացողութիւններուն վրա». և ճիշտ ու անճիշտը իրար խառնելով՝ ընդհանրապես բարոյականութեան վրա:

– Ատեն մը մարդիկները սատանաներով կվախցնեին, ատիկա արդէն հինցած է ու մաշված. հիմա ալ բարոյականութեան անունով սարսափ տալ կուզեն: Բայց գիտե՞ք ինչ է իրենց բարոյական անվանածը, որով մեզի չարունակ կսպառնան: Այդ նշանավոր բարոյականութեան առնվազն կեսը արդեն ապացուցված անբարոյականութիւն է, իսկ մնացածի կեսն ալ դեռ չապացուցված անբարոյականութիւն է:

– Ուրեմն մնաց քառորդը, – ինդաց Արշակ:

Բժիշկը երկու ձեռքով լռել ու լսել հրամայեց ու շարունակեց: Իր այն տրամադրութիւններեն էր, երբ մասնավորապես բերնին կծիկը կքակվեր: Ատ ալ կպատահեր ընդհանրապես այն օրերը, երբ մեկ-երկու դավաթ ավելի կոնծած կըլլար: Այդ պայմաններուն տակ բժիշկը շատ կսիրեր «քիչ մը փիլիսոփայութիւն» ընել, ինչպես ինքը կըսեր: Եվ հիմա այդ «քիչ մը փիլիսոփայութեան» գավաթներուն թիվը լրացած էր արդեն ըստ երևույթին: Աչքերուն տեսակ մը արտահայտութիւնն ալ նույնը ենթադրել կուտար: Արդեն ըսեր էր, թե չիտակ ճաշարանեն կուգար:

– Ահա այդ տեսակ բորբոսնած ու քարացած բարոյական գաղափարներու վրա է հիմնված մեր այսօրվան տնտեսական կազմութիւնը իր կապիտալիստական, վաչխառուական ու պրոլետարական բոլոր բարդութիւններովը: Կամ առեք ամուսնութեան արդի կազմութիւնը իր հակահոգեբանական կենակցութիւններու, ընտանեկան կռվըտուքներու, սեռական չափազանցութիւններու և հասարակական անառակութեան համագումարին հետ: Ուրիշ օրինակ մը կուզե՞ք. ահա՛ կրթական գործը աշխարհի որ կողմն ալ որ կամենաք, իր կղերական կամ չոլենական ձգտումներովը և հոգևորականութեան աչքկապուկներովը, այնպես որ...

Արշակ, որ այս երկար մենախոսութեան միջոցին քանի մը անգամ ընդհատելու կամ խոսքը փոխելու ճիգեր էր ըրած և չարունակ բժիշկի կողմեն արգիլված էր, վերջապես ձանձրացավ, աչքերը հառեց վագոնի պատուհանեն ետ-ետ փախչող ծովուն, թաղվեցավ իր մտածումներուն

մեջ և ալ կարծես չէր լսեր խռռակցին ձայնը: Իսկ բժիշկը կխոսեր, անընդհատ կխոսեր իր դանդաղ ու կանոնավոր խռռածքովը:

9

Տիրան ընկերոջը կզգի մեկնելուն հաջորդ օրը կերպ մը ինքզինքը պրպտեցնելու և իր հոգեկան անբովանդակ վիճակին ապաւինելու համար երթալ իր հին պլրոցական ընկերը տեսնելու գնաց, որ հիմա նկարիչ էր և Յուկյուտար կբնակեր:

Երկաթուղիին ու շոգենաւին մեջ մտքերը ցրիվ, անորոշ ու բութ պատկերներով քաշվեր նստեր էր մեկ կողմ: Հոգեկան նույն կապ տրամադրութեամբ ալ հասաւ ընկերոջ տունը: Դուռը բացողը ընկերոջ մայրն էր, որ հայտնեց, թե տղան վերը՝ աշխատանոցն է:

Տիրան անակնկալ մը ընելու համար ուղքի մատներուն վրա կամաց-կամաց բարձրացաւ սանդուղներեն ու մոտեցաւ աշխատանոցի դռանը, որ կռնակի վրա բաց էր: Նմանապես բաց էին բոլոր պատուհանները, ուրկե առատ լոյս ու թարմութիւն ներս կթափվեր:

Տիրանի առաջին զգացումը ախորժ զովութիւն մը եղաւ, որ անդրադարձաւ իր հոգնած ու տաքցած դեմքին զարկաւ:

Ընկերը՝ երկարահասակ բարակ տղա մը, կեցած էր կես մը դեպի դուռը դարձած, ներկերով ըծավորված գորշ շապիկը վրան, երանգապնակը ձախ ձեռքի բութին, իսկ մյուս ձեռքը վրձինը, որով խորասուզված կաշխատեր:

Տիրան հաճույքով սկսաւ դիտել անոր դաստակին ու վրձինին վարժ ու ոստոստուն շարժուձևները և անոր սուր-մորուք կիսադեմը, որ վրձինին գոլընթաց ջղուտ կծկումներ կըներ:

Նկարիչը պահ մը կանգ առաւ, վրձինը բռնած ձեռքը դրաւ կուշտին, քայլ մը ետ գնաց, գլուխը նեռեց ետ ու սկսաւ պատկերին նայիլ:

Եվ Տիրան նկարը տեսաւ: Համայի մը պլուխն էր: Այրած առնական դեմք մը՝ խոր, անկրկնավոր դիմագծերով, արտահայտիչ ու մելամաղձոտ աչքեր, խոշոր սրծվի քիթ մը, ճակատը խռիվ մազերուն տակ կես մը ագռղված, քոլոզ մը գլուխը և թաւ, մազոտ, լայն կուրծքին վերին մեկ մասը, որ բաց մինթանին տակեն կերևար:

Այնքան բնական ու տպավորիչ էր նկարը, որ Տիրան չկրցավ զգայմունքը զսպել.

– Կ՚ընդհավորեմ, էդուա՛րդ, հիանալի է:

Էդուարդ ցնցվեցավ, դարձավ ետ և ուրախացած վազեց ընկերոջը վրան:

– Ա՜ս ինչ աղվոր բան. ես ալ առտուն քու մասիդ կմտածեի: Հա՞, կհավնի՞ս պատկերիս:

– Շա՛տ, կարծես կապրի:

– Առանց «կարծես»-ի, անշուշտ որ կապրի. իմ հոգիս է մեջը: Գրեթե վերջացած է արդեն. վիզը քիչիկ մը սրբագրել կուզե. ատ մեկերկու երակները ավելի դուրս ցատկեցնելու է: Ինչ հաճույք է, Տիրան, երբ մարդ գործ մը արտադրած է, բան մը ստեղծած և ինքը իր աչխատանքեն գոհ է: Ստեղծել. չէ՞ որ ատիկա է աստվածուԹյունը. այն Աստվածը, որ մարդկուԹյունը պաչտեր է միչտ. ստեղծող, արտադրող ուժը: Ստեղծելու հափշտակուԹյան հետ գուցե միայն սիրելու հափշտակուԹյունը չափվիլ կարողանա: Բայց կեցի՛ր...

Ձեռքը օդին մեջ պարզած, աչքերը մոլոր՝ վայրկյան մը մնաց անչարժ ու մտախոհ և հանկարծ ուժգին չարժումով մը ձեռքը իջավ ու զարկավ ճակտին:

– Չէ՞ որ սերն ալ ինքնին ստեղծել է. գիտակից Թե բնազդական՝ նույն է ատիկա. սերունդը, մարդու ստեղծագործուԹյուններեն ամենեն վեհը, իր նմանին ստեղծագործուԹյունը: Ինչպե՞ս է, որ մինչև հիմա չէի խորհած սիրո ու արվեստի մեջ եղած այդ ներքին խոր կապը:

Տիրան լուռ մտիկ կըներ դեռ ոտքի վրա : Էդուարդ չփեց անգամ մը իր սուր մորուքը և խնդալով քաչեց ընկերոջ Թևեն.

– Եկո՛ւր, եկուր նստե՛ ու պատմե՛ տեսնեմ՝ դո՞ւն ինչ վիճակի ես. նոր բան մը գրա՞ծ ես. վերջին ոտանավորեներդ ես չատ համ չառի չիտակը. մելամաղձոտ բան մը կա մեջը: Առո՛ղջ, ուժեղ բաներ գրե՛, հոգիդ սիրես. այդ սանտիմենտալ հիվանդները բանաստեղծուԹյունը հիվանդանոց դարձուցին:

– Առողջ բան գրելու համար առողջ հոգի ունենալու է, – պատասխանեց Տիրան տեսակ մը չարացած դառնուԹյամբ: – Երբ տրամադրուԹյունդ մոխրագույն է, գրածիդ գույները բնական կերպով կգորչանան:

Զգիտես՝ ի՜նչ անհատակ պարապուքիւն մը բացված է հոգիիս մեջ. և խոր դժդոհութիւն մը ինքս ինծմե, աշխարհքեն, ամենքեն:

– Որուն տակը անտարակոյս աղջկան մը պատմութիւնը կա:

Տիրան զարմանքով նայեցավ վայրկյան մը դիմացինի աչքերուն և պատասխանեց կարծես ինքնիրենը խոսելով:

– Պատմության նման բան մը կա. գոնե կկարծեի, թե կա. հանկարծ փլավ, չքացավ. մնայ մեջս տարօրինակ պաղութիւն մը:

– Ատոր կըսեն դյուրագրգիռ չիղեր, լեցվող տարիք, իբրև արվիեստավոր զեղեցիկի որոնում ու սիրելու պահանջ: Բայց եկուր տե՛ս, որ սերն ալ ներքին, արտաքին ու կողմնակի հազար պայմաններե կախուման ունեցող բան է: Եվ քանի որ իրական սերը կուշանա, ասպարեզը կմնա զգացմունքի խաղերուն: Բավական է քիչ-չատ գրավիչ աղջիկ մը, և անմիջապես գլխուդ մեջ պատրանքը իր ոստայնը հյուսելու կսկսի: Բանի մը հանդիպահաութիւն, մեկ-երկու նայվածք, ախորժելի կատակ մը և երևակայութիւնդ այդ չնչին ատաղձեն ահագին շենք մը կառուցած է արդեն: Միայն միշտ տարտամ վախով մը աղջկան շատ մոտեն նայելու: Դուն զգացումներուդ մասին բան մը հասկըցուցա՞ծ ես աղջկան:

– Ո՛չ մեկ բառ:

– Կտեսնե՞ս. երկյուղ ունիս, որ հանկարծ խաղի թուղթերե կառուցած շենքդ թեթև հովե կփլչի: Փոքրիկ ափիթ մը և դուն մեկ նայվածքով կըմբռնես, որ այդ բոլորը քու ուղեղիդ խաղն էր, որ այդ աղջիկը քեզի այնչափով հետաքրքրած է իրապես, որչափ քու ծանոթ ուրիշ շատերը:

– Շիտակ է:

– Եվ կսկսիս զայրույթ զգալ ինքդ քու երեխայությանդ դեմ, կմեղադրես քու երևակայութիւնդ. քեզի կանվանես զգայնոտ և անառողջ հոգիի տեր, և ներսը կգոյանա այն դատարկը, որ լեցվիլ կուզե բանով մը, և որ անպատճառ լեցնելու ես:

– Սակայն դուն ուրկե՞ գիտես իմ պատմությունս այդպես մանրամասն, – հարցուց Տիրան զարմացական ժպիտով մը:

Էդուարդ առանց պատասխանելու հեռացավ երկու քայլ և եռոտանիի մը վրա դրված պատկերին երեսեն ճերմակ պատառը անդին նետեց:

– Ինչ սիրուն աղջիկ է, ո՞վ է ատիկա, – հարցուց Տիրան՝ աչխույժ ոտքի ցատկելով:

– Ջե՞ս ճանչնար. քու սիրած աղջիկդ:

– Իմ սիրա՞ծ:

– Քո՛ւ կամ ի՛մ, միևնույն է. մենք նույն տարիքի, նույն միջավայրի, նույն կրթութեան ու նույն նկարագրի տղաք ենք: Աս ալ քու սիրուհիդ քույրն է. ան, որ ես ճիշտ քեզի պես սիրեր եմ երազանքի մեջ, և երբ ինծի տանջանքես արթնցուցեր են, տանջվեր եմ քեզի պես, պարապութեան, դժգոհութեան և անկումի զգացումներով, մինչև որ...

Խոսքը ընդհատեց, աչքերը նկարին, ժպիտը շրթունքին մնաց անշարժ:

– Մինչև որ... մինչև որ ի՞նչ, – հարցուց Տիրան լարված հետաքրքրութեամբ:

– Մինչև որ ինքզինքս համոզեցի, թե այդ իմ երևակայութեանս խաղն ալ կրնար բանի մը պետքի գալ, և թե այդ հոգեկան կեղեքումին սիրուն վերջակետ մը կարելի էր դնել:

Եվ էդուարդ ցուցամատով նկարը մատնանիշ ըրավ: Նույն վայրկյանին Տիրանի մտքեն կայծակի պես գաղափար մը սլացավ: Մինչ էդուարդ կշարունակեր.

– Գործե՛լ, արտադրե՛լ, ստեղծե՛լ. ատիկա է միայն, որ վիշտերը կամոքե, կսրբե ինքնամեղադրանքը ու կլեցնե դատարկութիւնները. հոգեկան ամենաբույժը: Իմ երազանքիս գեղեցկացուցած դեմքը առի կտավին, ու փոթորիկը հանդարտեցավ. վէնուսը ծնած էր ծովեն:

* * *

Շոգենավը աջ ու ձախ ջուրը ծեծելով կերթար արտորանքով, ուշացած հսկայի մը պես. ծովուն վրա գրեթե մութ էր արդեն:

Տիրան շոգենավին վերնահարկը քաշվեր էր անկյուն մը, երեսը դարձուցեր ծովուն և մեքենաներու հանած դղրդյունին ու ծովուն և ցայտքերուն չրփոցին տակ օրորուն՝ լարված մտքով կմտածեր: Կստեղծեր:

Վեպի մը ծրագիրը չաւտոնց կար գլխուն մեջ. հին ու նոր սերունդի

պաղափարներու ընդհարման պատկերացում մը. միայն նոր սերունդի ներկայացուցիչները ընտրելու կը ժվարանար. նո՛ր տիպարները և վիպական զոհվածքը, գեղարվեստորեն ամենադժվարը. և հիմա արդին ըլլեր էր պլուզը:

Երկու նոր դեմքեր իր աչքերուն դեմն էին իրենց ամբողջ թարմութեամբ. մեկը Էդուարդը՝ երիտասարդ ոգևորված նկարիչ մը՝ նոր զգացումներով ու ազատ գլխով, որու հոգին այնչափ նման էր իր հոգիին և նկարելու ոչ մեկ դժվարութիւն չուներ:

Եվ Էդուարդին քով Վերժինը, իր հոգիին մեջ այնքան փայփայած և իդեալացուցած Վերժինը՝ թարմ ձգտումներով, հասարակական գործունեութեամբ ոգևորված, բացառիկ կանացի գեղեցիկ դեմք մը:

Էդուարդ ու Վերժին դրավ Տիրան իրարու քով հին բարոյական կաշկանդումներու ու հնամենի հայացքներու դեմ, և վեպը պատրաստ էր իր դրամատիզմով:

Հրահրված երևակայութիւնը սկսավ խրիլ ու մխրճիլ մանրամասնութիւններուն մեջ. ծրագիր, դասավորութիւն, դեմքեր, դեպքեր, տեսարաններու կազմութիւն. միտքը այս պատկերեն այն պատկերը կթռչէր, հոգեկան մեկ վիճակի նկարագրեն դեպի մյուսը. գիտակցութիւնը հազիվ կհասներ իր ստեղծագործ մտքի ընթացքին: Եվ ի՜նչ առատ նյութ կա եղեր իր գլխուն մեջ, որ ինքը բնավ տեղեկութիւն չէ ունեցած, և ինչպե՜ս պատրաստ:

Ամենևին չգիտեր, թե ինչպես բազմութեան հետ ելավ շոգենավեն, անցավ կամուրջը, Սիրքեճիեն ինչպես մտավ երկաթուղիին գնացքը, ինչպես հասավ իր պլուզը, իր տունը, իր գրասեղանին առջևը, ուր նորեն ձեռքը դրած ճակտին՝ տարված ու սուզված կմտածեր:

Գիշերաշրջիկի մը կնմաներ. ոչինչ չէր լսեր իր շուրջեն. կապրեր ինքն իր ստեղծած աշխարհին մեջ, իր մտածած տիպարներուն հետ, որոնք արագ ավելի ու ավելի դուն ու ձև կառնեին և ավելի բնորոշ կդառնային:

* * *

Առկե քանի մը օր հետո Արշակ մտամոլոր կեցած էր իրենց տան դուռը. իրիկվան ստվերները սկսեր էին թանձրանալ: Հանկարծ քովի

վողոցեն դուրս ելավ Տիրան և ընկերը նշմարելով՝ ուրախությամբ վրան վազեց:

– Այս ե՞րբ ես վերադարձեր:

– Հազիվ քանի մը ժամ է. ընթրիքեն ետքը քեզի պիտի գայի:

– Երևի մինակությունն ու ազատությունն ալ մեկ շաբաթեն ավելի անտանելի է:

– Դո՞ւն ինչու օր մը չեկար:

– Ո՞ւր գայի. և ի՞նչ ընելու: Եթե գիտնաս՝ ի՞նչ փոփոխություններ է անցեր մեջս քու երթալեդ ի վեր. ուժ, եռանդ, ոգևորություն ու աչխատանք, բոլորը ղարձեր են նորեն ինծի:

Արշակ կամաց մը չրթունքը խածավ:

– Հիմա ես ամբողջ էլեկտրականացած եմ. ձեռք որ դպցնես, կայծ դուրս կուգա. բը՛ռռ:

Ու թեթև մը ընկերոջը թևեն քաշելով՝ սկսավ խնդալ:

– Սկսած եմ նոր վեպ մը: Ոչ միայն սկսած եմ, այլ երևակայե՛, չորս-հինգ օրվան մեջ տասը հատված բան եմ գրած, գրեթե քառորդը, խաղալիքի պես: Վաղը եկո՛ւր, քեզի կտոր մը կարդամ. վստահ եմ, որ շատ պիտի հավնիս. քու սիրած ժանրեդ դուրս եկավ. մանավանդ հերոսուհիին դեմքն ալ քեզի աղեկ ծանոթ է:

Արշակ նորեն չրթունքը խածավ:

– Հապա՛, գտի՛ր նայիմ: Բայց հիանալի տիպ է. քանի կգրեմ, այնքան կոգևորվիմ. անշուշտ գուշակեցիր:

– Չէ՛:

– Ուղեղդ շատ է բթացեր. երևի կղզիին օդը քեզի չեկավ: Վերժինը, Վերժինը:

Արշակ վայրկյան մը չպատասխանեց. կվախնար, որ ձայնը մատնե:

– Է՛, ի՞նչ կըսես, – հարցուց Տիրան անհամբեր:

– Հետաքրքիր է:

– Չէ՞: Քալե՛. քեզի հիմա մեկ-երկու կտոր կարդամ, – վրա բերավ տղան հետզհետե ավելի ոգևորվելով:

– Ո՛չ, հիմա գործ ունիմ ներսը, ուրիշ օր մը:

– Ափսո՛ս: Ուրեմն ես ալ երթամ, բայց նայե՛. որ առտուները ինծի չգաս, զբաղված եմ, եկո՛ւր միայն ճաշեն ետքը: Ցը՛:

– Ցը՛:

Եվ ձեռքի հասած գավազանը օդին մեջ խաղցնելով՝ անցավ դեմի փողոցը:

Արշակ կեցած տեղեն երկար ընկերոջը կհետեւեր, մինչեւ տուներու եզրին աներեւութանալ եղավ: Ակամա մտաբերեց իր մեկնելու օրը անոր խեղճ ու ճմլված վիճակը ու ներկայի հետ համեմատեց:

«Եթե պիտանա՝ ինչ փոփոխություններ են անցեր մեջս, – հնչեց պանդին տակ: – Երեւակայելը դժվար չէ. գործը վեպի հերոսուհուն է հասեր: Բանաստեղծ սիրահար ունենալը, անշուշտ, գիշ բան չէ. մարդս կանմահանա»:

Ու դեմքին հեգնուբյան ժպիտ մը՝ քաշվեցավ եւս, տան դուռը գոցեց ու մտավ իրենց նստելու սովորական սենյակը, ուր քույրը, պատուհանին տակ նստած, օրվան լույսի վերջին մնացորդները որսալով՝ ձեռքի կարը վերջացնելու կաշխատեր:

Գնաց շիտակ քրոջը քովը, նույն նեղ բազմոցին վրա ու նստեցավ լուռ եւ սկսավ չոյել անոր մազերը. պետք ուներ մտերիմ հոգիի մը մոտիկութեան:

Հաջորդ օրերը Արշակ շալուռնակ դուրան էր՝ կա՛մ Ստամպուլ, կա՛մ Ղալաթիա, ընկերներուն հետ. վերջին գնացքով պյուղ կուգար եւ տուներն ալ դուրս չէր գար պյուղը եղած ատենը. կ'ջանար զբաղվիլ կամ գոնե ուշադրութեյունը ցրվել:

Անգամ մը միայն գնաց Տիրանին, բայց անոր բոց, գոհ ու աշխույժ հոգեկան տրամադրութենեն այն տեսակ ճմլում մը զգաց իր հոգիին խորքը, որ պատրվակով մը իսկույն ետ դարձավ:

Բաղաքավարութեյան համար անգամ մը Պզտիկյաններուն երթալը անհրաժեշտ էր. քույրը հիշեցուց և մեկ-երկու անգամ աւաչարկեց, որ իրիկունը երթան, բայց տղան միշտ կա՛մ զբաղում, կա՛մ հոգնածութեյուն պատճառաբանելով՝ օր օրի կհետաձգեր:

Կիրակի օրը ճաշեն ետքը Տիրանը եկավ, և քույր ու եղբայր անոր հետ ելան պատյտի: Թե՛ Տիրան, թե՛ Մաննիկ շատ ուրախ տրամադրված էին, աքանչելի ալ եղանակ էր: Արշակ գնաց անոնց հոսանքով, կես մը անոնց տրամադրութեյունն ալ չփճացնելու համար, կես մըն ալ անոնց հետաքրքվելով: Վազեցին, երգեցին, ծովուն ափը քար նետելու փորձեր

ըրին ջուրին երեսովը, երկար քալեցին դեպի Սան Ստեֆանո և ախոր-ժակնին բաց վերադարձան տուն. ընթրիքին ալ Տիրանը իրենց պահեցին:

* * *

Հապիով էին սեղանեն ելեր, որ դուռը զարնվեցավ, և բացվելուն պես լսվեցավ բժիշկի հաստ ձայնը.

– Սա պարոն Արշակ մը կար, ո՞ւր է տեսնենք: Դուք Զեզի չատ սուղ սկսաք ծախել. գոնե անգամ մը գալու էիք, մեր կիսատ մնացած վեճը ավարտելու համար: Տեսե՛ք, նորեն ես չհամբերեցի:

– Եվ չատ ալ աղեկ ըրիք, պարո՛ն բժիշկ: Ներո՛ղ եղեք, վերջին օրերս չատ եմ զբաղված:

– Բա՛րև Զեզի, պարո՛ն Արշակ, բարի եք եկեր Ձեր կղզիեն, – ըսավ Վերժին առեղծվածային ձևով մը և ձեռքը տղուն մեկնելով:

Արշակ բարևեց, չնորհակալություն հայտնեց ու կմկմաց քանի մը քաղաքավարական նախադասություններ: Եվ բոլորը միասին դիմե-ցին վերին հարկը, ուր հյուրասրահն էր ու հյուրասենյակը:

– Օրիո՛րդ Մաննիկ, չատ ձախորդ ընկերուհի եք. այս չաքթու ամեն իրիկուն հույս ունեի, որ անպատճառ մեզի կուգաք, – կգանգատեր Վերժին՝ ընկերուհիի մեջքին փաթթված ոլորուն սանդուղեն վեր ելլելով:

– Ինծի մի՛ մեղադրեք, հանցանքը եղբորս է. քանի անգամ առա-ջարկեր եմ, անիկա վերջին ատենները մինամոլ է դարձեր, ուրբով-պվխով ինկեր է իր գործերուն ետևեն: Ինչևէ, տեղը կհանենք:

– Պարո՛ն Արշակ, Դուք հո՛ս հրամեցեք, – ըսավ բժիշկը՝ իրեն մոտիկ աթոռ մը մատնանիշ ընելով: – Եկե՛ք քիչ մը փիլիսոփայություն ընենք նորեն: Ի՞նչ կըսեք, պարո՛ն Տիրան, կընտրենք բանաստեղծական փիլիսոփայություն մը, չէի՞ք ուզեր մասնակցիլ:

– Շատ չնորհակալ եմ, պարո՛ն բժիշկ, Ձեր այդ չատ սիրելի հրա-վերին համար: Բայց ես կգերադասեմ զուտ բանաստեղծությունը առանց փիլիսոփայական խառնուրդի: Ներեցե՛ք, որ մնամ իմ սիրելի օրիորդ-ներուն հասարակության մեջ, եթե ազնիվ օրիորդները ինծի իրենց շրջանին մեջ առնելու հաճին:

– Ա՛հ, Դուք անուղղելի եք, – բացականչեց բժիշկը ծիծաղելով:

– Միայն թե իբրև մեր ընկերության մուտքի վճար հանպատրաստից զվարճալի բան մը պիտի պատմեք: Այնպես չէ՞, օրիո՛րդ Վերժին, – պայման դրավ Մաննիկ:

– Բնականաբար, – չհնչեց Վերժին:

– Կենթարկվիմ Ձեր հրամանին, – պատասխանեց Տիրան խորին լրջությամբ գլուխը խոնարհեցնելով:

– Կսպասենք:

Տիրան բազկաթոռի մը հակառակ մեջքին կռթնած, կռնակը բժիշկին ու ընկերոջ, վայրկյան մը ճակատը չփրեց ու սկսավ պատմել:

Մինչ անդին բժիշկը իր խոսքը պահելով՝ բանաստեղծության ու փիլիսոփայության իրարու հետ ունեցած ընդհանուր պիծերը սկսած էր վերլուծելու և այն եզրակացությունը հանելու կջանար, թե փիլիսոփայությունն ալ իսկապես տեսակ մը բանաստեղծություն է:

Արշակ արտաքուստ իր խոսակից հյուրի ըսածներուն հետևիլ կձևացներ իբրև քաղաքավարության պահանջ, մինչդեռ իր ամբողջ աչքը մյուս խումբի հետն էր:

Տիրան կպատմեր անասելի լրջությամբ, որ շատ կավելցներ իր պատմած կատակին ուժը: Աղջիկները կխնդային հնչուն ծիծաղով մը. կխնդար և Արշակի մայրը, որ նույնպես մոտիկ նստած էր և շատ դոհ կերևար Տիրանի զվարթ տրամադրությենեն:

Վերժին կես մը Մաննիկին հենած՝ կհետևեր պատմության՝ ծիծաղը միշտ շրթունքին, ձեռքին մեկը անփույթ մը քովի աթոռի թիկունքին նետած: Ինչպե՜ս սիրունցեր էր. Արշակ զգաց. կտեսներ միևնույն ժամանակ, թե ինչպես աղջիկը իր կողմն անգամ չէր նայեր՝ ամբողջովին Տիրանի դեմքին կախված:

Ու վայրի նախանձ մը հանկարծ մտավ մեջը. կուզեր վեր ցատկե, երթա ու կտրև անոր պատմությունը, կուզեր երթա ու... ինքն ալ չգիտեր, թե ի՞նչ կուզեր. և առանց դիտակցելու իր աթոռին հենարանը կսեղմեր բոլոր ուժով:

Իսկ բժիշկը կշարեր իր անվերջ դատողությունները, մեկը մյուսի ետևեն խորունկ եզրակացություններ կհաներ. և բերնեն փչող ալքոհոլին հոտը ենթադրել կուտար, որ այդ տրամաբանական գլգռված գործունեությունը այնչափ ալ շուտով վերջանալու դիտավորություն չուներ:

Քիչ մը վերջը խումբի առաջարկով Մաննիկ նստեցավ նվագելու: Տիրան ալ ջութակը ծնոտին տակ պատրաստ կեցած էր քովը: Նվագը սկսավ: Ամենքը լռեցին, բժիշկն ալ: Եվ Արշակ երջանիկ առիթեն օգտվելով՝ ելավ ու մտավ կից հյուրասենյակը, որուն դռները կռնակի վրա բաց էին, բայց ներսը լույս չէր վառած: Բաց պատուհաններեն լեցուն լուսնի տմուկն լույսը առատորեն կհոսեր կահերուն ու գետնի գորգին վրա:

Արշակ մոտեցավ պատուհանին, անշարժ կեցավ՝ հայացքը վեր՝ լուսնին նետած: Նախորդ զսպված կատաղի նախանձին հաջորդած էր կրծող թուլություն մը, լքված ու միայնակ ըլլալու ղգացում մը:

Դուրսը անոնք կխնդային, կնվագեին, կզվարճանային, իսկ ինքը հոս կտանջվեր. դուրսը որո՞ւ հոգն էր աւիկա, ո՞վ պիտի մտածեր իր մասին:

«Ինչ եսական են մարդիկ»:

– Պարո՛ն Արշակ, – լսվեցավ ետևեն ցած ձայն մը:

Եվ Արշակ ամբողջ մարմնովը դողաց:

– Ինչ կմտածեք հոս, այսպես առանձին, – հարցուց կամաց նույն կանացի ձայնը:

Տղան դողալով, իր դողը զսպել չանալով՝ զարմանքով ու հիացումով կնայեր աղջկան բոլորովին չվարած:

– Ինչո՞ւ այդպես ցրված եք:

– Հիանալի գիշեր է, պայծառ լուսին, – կմկմաց երիտասարդը՝ իր մտքերը ժողվել չանալով:

– Ես կհարցնեմ՝ ինչո՞ւ տխուր եք, – կրկնեց աղջիկը, մեջքով կռթնեցավ պատուհանի եզրին՝ աչքերը տղու կխտադեմին գամած:

– Տխո՞ւր. ե՞ս. ամենևին: – Ու բռնաբռոնիկ խնդուքով մը շարունակեց: – Ինչպե՞ս կարելի է տխուր ըլլալ, երբ Դուք մեր տունը հյուր եք, երբ Ձեր եղբայրը այնպես աքանչելի կերպով կխոսի գրավիչ ու վսեմ խնդիրներու վրա, և երբ դուրսը այդպես ուրախ-զվարթ կնվագեն, կխնդան: Այս տեսակ ընկերության մեջ կարելի՞ է տխուր ըլլալ:

– Բայց Դուք ձգեր եք այդ ընկերությունը և առանձնացեր եք հոս:

– Հոս ավելի պոմ է: Եվ վերջապես ի՞նչ կապ ունի, չէ՞ որ Դուք ալ հոս եք հիմա:

– Ես նկա Ձեզի փոքրիկ նկատողություն մը միայն ընելու:

– Նկատողությո՞ւն, ինծի՞, կլսե՛մ:

– Ես բնավ չէի կրնար մտածել, որ Դուք կրնաք խոսք տալ ու Ձեր խոսքը չպահել:

– Ինչպե՞ս. Ձեր հանդիպ ես ե՞րբ խոսքս չեմ պահած, – բացականչեց տղան մեծ հուզումով և ինքզինքը զսպելու անընդունակ:

– Կատակ է ըրածս, – կցեց աղջիկը՝ իսկույն ինքն ալ վախնալով իր խոսքերու թողած տպավորութենեն: – Ես ուզեցի միայն հիշեցնեմ, որ Դուք օր մը խոսեր եք ինծի հետ իմ համալսարան երթալու մասին. և ճիշտ այդ օրեն այլևս Ձեր երեսը տեսած չունիմ: Եվ հիմա ալ, որ կտեսնեմ, այնքան լուրջ ու մտածկոտ դեմք մըն եք չիներ, որ մարդ հետերնիդ խոսելու կվարանի:

– Համալսարա՞նը, իրա՛վ, ներեցի՛ք, – ըսավ Արշակ անկապ:

– Մոռցե՞ր էիք արդեն:

– Մոռցե՞ր:

Ու չգիտեր՝ ի՞նչ պատասխանեի: Վերմին պարզ ըմբռնեց, որ տղու հոգիին մեջ տարօրինակ բան մը կզառնար:

– Գոնե ասկե ետքը կրնա՞մ Ձեր վրա հույս դնել, – հարցուց աղջիկը ակնթարթ մը վերջը:

– Պատրաստ եմ, ինչով որ կրնամ:

– Ուրեմն վաղը կուգա՛ք մեզի այդ մասին խոսելու:

– Ձեր հրամանին:

– Ո՛չ հրաման. խնդիրք. ուրեմն վաղը կուգա՛ք, – չեչտեց աղջիկը կրկին:

– Կուգամ:

– Օրիո՛րդ Վերժին, ո՞ւր եք, – լսվեցավ սեմին վրայեն Մաննիկի ձայնը, որ նոր էր ձգեր դաշնակը:

– Հեռուեն նվագը ավելի ախորժելի է, – պատասխանեց Վերժին: – Ինչ ալ սիրուն գիշեր է: Տեսե՛ք, այդ ամպերու կույտին վրա սիրահարեր է Ձեր եղբայրը. աչքերը հոնկե հեռացնել չի կրնար:

– Ինչ բանի եք հոս, – հարցուց Տիրան՝ նույնպես ներս մտնելով:

– Պարո՞ն Արշակ, մեր վիճաբանութիւնը սակայն նորեն կեա մնաց,– թնդաց սրահեն բժիշկին ձայնը:

– Բժիշկը ձանձրացաւ, դո՛ւրս երթանք, – ըսաւ Մաննիկ:

Ու չորսը միասին ելան սրահ:

Է

Արթննալուն պես առաջին միտքը Վերժինին երթալը եղաւ, և ալ ամբողջ օրը այդ հեռանկարը գլխեն դուրս չէր ելլեր: Նորեն մեկ-երկու ժամ աղջկան հետ միասին:

Բայց չէ՞ որ վճռած էր կարելիին չափ հեռու պահել ինքզինքը. ա՞ս էր իր վճիռը. արդեն խոսք էր տված և ինչպես ալ ուրախ էր խոսք տված ըլլալուն: Բայց ի՞նչ կրնար ընել, ամեն ինչ կատարված էր անկախ իր կամքեն. խնդրողը ինքը աղջիկն էր, և Համալսարանի հարցը կար մեջտեղը. մի՞թե իր պարտքը չէ՞ր իրեն դիմող աղջկան մը առաջացմանը օգնել, ով ալ որ ըլլար:

Հեգնորեն ժպտեցաւ. կհասկնար, որ Համալսարանը աղվոր պատրվակ մըն էր միայն իրեն համար. կդիտակցեր, որ հիմա իր ըրածը պղտութեան պես բան մըն էր:

Գողութիւն թե պարտավորութիւն՝ իրիկվան դեմ ելավ գնաց արդեն հինեն դավադրված ժամուն, երբ ամենեն ավելի հավանականութիւն կար առանձին ըլլալու. չէ՞ որ առանձին խնդրի մասին պետք է խոսեին:

Եվ հաջողեցաւ: Մորը երեսը հազիվ տեսաւ. իսկ աղջիկը ժպտերես դեմ եկավ սպասված հյուրին և առաջարկեց ուղղակի պարտեզ իջնել:

– Հոն ավելի ազատ կխոսինք և հաճելի է:

Ավազե արահետներով առաջնորդեց իր հյուրը ծառերու ստվերին տակ պահվըտած փոքրիկ ավազանի մը քով, ուր ոստերե հյուսված նստարան մը կար և մոտն ալ նույնպես անտառ բուներեն շինված սեղան մը: Շոյող զովութիւն մը զարկավ Արշակ դեմքին:

Ծառերը նազանքով վար կկախեին իրենց ճյուղերը ավազանի ութանկյունի հայելիին վրա և պչրանքով կսարսռային՝ իրենց ձևերուն քիչ մը ծալծլված անդրադարձումը տեսնելով ջրին մեջ, ուր շատ փոքրիկ

կոհակները ժպտող և ժպիտը պապել ուզող շրթունքներու կծկումովը կզատզտդային:

Ձիու մը զարճուցած անիվավոր հորեն ջուրը անուշ խոխոջով կթափվեր ավազանը և հակառակ կողմեն խողովակներով ու առուներով կվազեր պարտեզին հետաւոր անկյուններըը ջրելու: Եվ հետուն, տանձենիներուն տակեն հուշն պարտիզպանին տխուր երգին միօրինակ ելևէջը կլսվեր:

– Ի՞նչ սիրուն է հոս, – բացականչեց տղան՝ ախորժանքով չուրջը դիտելով:

– Եթե այդ աստիճանի մեր տունեն չի փախչեիք, կարելի է դեռ ուրիշ սիրուն բաներ ալ կգտնեիք հոս, – պատասխանեց Վերժին կատակի ձևով:

– Դուրս է ամեն կասկածե, – վրա բերավ տղան անմիջապես չեչտով մը, որուն լուրջ թե հեղնոտ ըլլալը անկարելի էր որոշել:

– Ըսե՛ք ինծի պարզապես՝ ինչո՞ւ կփախչիք մեր տունեն:

– Բայց գիտեք, որ կղզին էի:

– Գրեթե շաբաթ մըն է Ձեր վերադարձը:

– Ես ու քույրս գալ կուզեինք չարունակ. մեր պարտքն է արդեն. մանր-մունր արգելքներ, որոնք...

– Թողե՛ք, խնդրե՛մ, այդ չոր քաղաքավարութիւնը մեկդի, – ընդհատեց աղջիկը պահանջկոտ շեչտով մը:

Սրշակ պարմանքի, համակրանքի ու չվարանքի խառն զգացումով մը անոր աչքերուն կնայեր, երբ Վերժին շարունակեց.

– Եվ վերջապես չիտակը ինծի հասկնալի չէ՝ մի՞թե այդ աստիճան հետաքրքիր էր Ձեզի համար Հալբին ու Ձեր մորաքրոջ ընտանիքը: Զիտեմ, բայց դուն ինծի այնպես կթվեր, որ հոս՝ Ձերիններուն քովը, Ձեզի համար ավելի գրավիչ պիտի ըլլար:

– Ձեռքս տպագրութեյան խոստացված աշխատութիւն ունեի. պահ մը առանձնանալը անհրաժեշտ էր:

– Աոիկա անշուշտ ուրիշ խնդիր է, բայց ինչո՞ւ ինծի նախապես չըսիք. ըսելու պարտավորութիւն մը չզգացի՞ք: Ամեն պարագայի չափեն ավելի է այդ աշխատանքը: Ամբողջ ձմեռը համալսարանն եք.

ամառվան այս երկու ամիսները կրնայիք քիչ մը ավելի ազատ անցընել: Գուցե կսխալիմ, բայց միշտ ուրիշներու և ընդհանրութեան մասին մտածելն ալ չափազանց կ'թվի ինծի:

Աղջակ հանկարծ բուռն ամոթ մը զգաց: Ինքը ինչպե՜ս բոլոր ժամանակը պարապ միայն իր եսովն էր զբաղված և ինչպե՜ս հիմա ինքզինքը աղջկան կներկայացներ, գործի նվիրված մարդու ձևեր ու անձնազոհութեան հովեր կառներ վրան: Եվ կեղծող, չպարվող մը ըլլալու գաղափարը այնպես զարկավ սրտին, որ ամեն հաշիվ մոռցած՝ ըսավ չիտակ.

– Կսխալի՛ք, օրիո՛րդ: Ես երբեք ո՛չ այդչափ աշխատասեր եղած եմ, ո՛չ ալ Ձեր ըսածին պես ինքզինքս մոռցող: Եվ հիմա ալ աշխատելու համար չէր, որ կղզի գացի. սո՛ւտ եմ. պատճառը բոլորովին տարբեր բան էր:

– Որը ինծի չեք կրնար հայտնել:

– Ձեզի համար բնավ հետաքրքիր չէ. ներո՛ղ եղեք:

Վերժին չեշտ տղու աչքերուն կնայեր: Անոր կիզող հայացքեն կերպ մը խուսյս տալու համար տղան ծռեցավ՝ գետնեն տերև մը վերցնելու:

– Բայց գուցե կրնաք հայտնել, թե ինչո՞ւ այդպես ցրված եք, մտածկոտ ու անբնական: Միևնույն բանը եղբայրս ալ նկատած է. երեկ իրիկուն Ձեր քույրն ալ նույնը ըսավ:

– Բայց ինչո՞ւ կզբաղեցնեն այս բոլոր ավելորդ բանները Ձեզի, – բացականչեց տղան հանկարծ հուսահատ ու նեղսրտած: – Ձերինին պես լեցուն և ուրախ հոգիներու համար այնքան հարցեր կան Ձեր շուրջը հետաքրքիր:

– Այդպե՛ս ուրեմն, հետաքրքրվիլս ավելորդ կգտնեք:

Վերժին գլուխը ետ նետեց, շունչը բռնեց վայրկյան մը, կարծես կմտածեր ըսելիքը. և շարունակեց խիստ վճռական խոսվածքով մը.

– Գուցե իրավունք ունիք, այդ բոլորը հարցնելը իմ կողմես անհամեստութիւն է: Միայն այս մեկը գոնե գիտնալը կարծեմ իմ իրավունքս է: Ինչո՞ւ համար դեպի ինծի հանկարծ այդպես վոխվեցաք: Ես գիտեմ առաջ որչափ հոժար կուգայիք ինծի և ինչպես սիրով հետս ըլլալ ու խոսիլ կուզեիք, ո՛չ թե այսպես ակամա ու բռնի: Ըսե՛ք, խնդրեմ, ի՞նչ ըրի ես Ձեզի. ամեն կողմեն մտածեր եմ, խելքս ոչինչ կարել չկրցավ. ինչո՞վ կրնամ ես Ձեզի վիրավորած ըլլալ: Զգիտեմ ի՞նչ հիման վրա,

բայց ինծի այնպես կթվի, որ Ձեր կողի երթալուն հետ անսովոր բան մը կապված է, որուն մէջ ես ալ դեր ունիմ:

Տղան լուռ գլուխը կախեց, իսկ աղջիկը չարունակեց կորսվ ամեն ինչ մեկ անգամին ըսելու, մեկ անգամին իր հոգին բանալու բացահայտ որոշումով:

– Ներեցե՛ք ինծի, ես կողմնակի համփռաներով քալելու անվարժ եմ. ես լսել չեմ ուզեր, ինչ որ սրտիս վրա ծանրացած է: Ձեր վերադարձեն ի վեր ես ամեն վայրկյան Ձեզի եմ սպասած. ամեն դուռը զարնվելուն ցատկեր եմ տեղես՝ կարծելով, թե Դուք եք ըլլալու: Երբ չատ ուշացաք, վշտացա, բայց նորեն չհամբերեցի. երեկ իրիկուն եղբայրս դրդողը ես էի՝ գանձ անգամ մը հետերնիդ խոսիլ կարողանալու համար. նախ մտադիր էի քիչ մը ինքզինքս սուղ ծախեմ, բայց Դուք այնպիսի ցրված դեմք մը չիներ էիք եղբորս դիմացը, որ չդիմացա ու եռևնուդ ներս սենյակ եկա. Դուք միայն պարապ քաղաքավարական երկու նախադասություն նետեցիք երեսիս: Եվ հիմա ալ, որ նորեն ես եմ Ձեզի մոտս բերեր գրեթե բանի և այս այլակերպության պատճառը վերջապես հասկնալ կուզեմ, Դուք պարզապես ինծի կըսեք, որ ավելորդ է Ձեր գործերով հետաքրքրվիլս: Շնորհակալ եմ, չա՛տ շնորհակալ. որչա՛փ աղնիվ եք, որ ինծի ավելորդ մտածումներ տալ չեք ուզեր:

Աղջկան ամեն մեկ նոր խոսքին Վերչակ կզգար, որ իր հասկացողության մեջ չինված ու բարձրացված շենքեն քարեր, սյուներ ու պատեր կթափեին, և տակնուվրա կրառնար հոն ամեն ինչ. երկրաշարժե առաջացած ավերակ մը և ինքը՝ չվարած մը: Բայց այդ ամեն խառնակության ու տակնուվրայության վրա կթագավորեր մեկ հատիկ հատակ ու պայծառ և ամբողջ մարմնին դող պատճառող դիտակցություն մը, որ Վերժինի հոգին կապված էր իր հոգիին:

Վերջին օրերու իր բոլոր դատումներն ու ըմբռնումը սխալ էին ու հիմար, և իր վարմունքը՝ հիմարություն. Վերժինը ի՛րն էր, իրը: Եվ մոխիրներու տակ խորունկ պահված սերը, այքան օրեր զսպված ու խեղդել, սանձել ջանացված զգացումները հանկարծ պայծառ բոցով մը վառիլ սկսան տղու նայվածքին, դեմքին ու ամբողջ արտահայտության վրա. իր ձեռքերը իր կամքեն անկախ դեպի աղջիկը կերակարեին:

– Վերժի՛ն... – կրցան արտասանել իր դողացող շրթունքները:

– Ավելո՞րդ, հա՞, ավելո՛րդ....– կշարունակեր աղջիկը՝ տղու այդ հուզված ու հափշտակված վիճակին դեմ ինքն ալ իր ինքնազսպումը պահելու անկարող, – բայց գիտե՞ք, որ Ձեր կղզին եղած ժամանակը իմ բոլոր ուշքս պատուհանիս նշմարվող այդ սև հողի կտորին վրա է եղած, և այդ բոլոր ժամանակը ես միայն Ձեզի եմ մտածեր ու Ձեզի հետ անցուցած պահերս:

Տղան բռնեց աղջկան երկու ձեռքերը միաժամանակ և սկսավ սեղմել: Վերժին լուեց. առանց ձեռքերը քաշելու աչքերը նախ ձգեց գոգը, վերջը քնքշանքով բարձրացուց, դամեց տղու վառվող հայացքին մեջ և հազիվ լսելի ձայնով մը իր շրթունքներուն մեջեն չշնջեց.

– Ինչ լրի ես Ձեզի:

Տղու գլուխը պտույտ եկավ, և թևերը սկսան կծկվիլ. ո՛չ մեկ դիմադրութիւն, մինչև որ Վերժինի գլուխը եկավ ու ինկավ տղու ուսին: Եվ համբույրներուն տարափը կանճրևեր աղջկա մազերուն, ճակտին, քունքին ու այտերուն, մինչ աղջկա կուրծքը բարձր ու անկանոն կելևէջեր տղու ամուր գրկած թևերուն մեջ:

Կամաց մը ետ քաշվեցավ Վերժին և անոր թևերեն կերպ մը ինքզինքը ազատեց:

– Ասիկա իրա՞վ է, թե՞ երազ, – եղավ Արշակի առաջին հարցը:

– Մի՛ խոսիր, – չշնջեց աղջիկը:

Երկու ձեռքով բռնեց տղու գլուխը, հոգնած հայացքը ձգեց անոր աչքերուն. կամաց մը մոտեցուց իր դեմքին և շրթունքներովը հարեցավ անոր զույգ շրթունքին:

Դեռ առաջին հուզումեն չկազդուրված, դեռ շնորհքով մտածելու, կապով խոսելու անկարող՝ նստած էին լուռ, ձեռք ձեռքի, ավազանին դեմ, երբ հեռուեն.

– Վերժի՛ն, – լսվեցավ:

– Եղբա՛յրս, – բացականչեց աղջիկը, ցատկեց ոտքի, բնազդաբար սկսավ մազերը շտկել ու դեպի ձայնի կողմը դառնալով՝ պոռաց.

– Հո՛ս ենք, հո՛ս:

Եվ բոլոր ուժովը վազեց եղբորը դեմ հնար եղածին չափ իր հուզումը սքողելու համար:

– Հանգի՛ստ, հանգի՛ստ, – պոռաց բժիշկը քույրը տեսնելով: –

Այդպես խենթ-խենթ չեն վազեր: Տե՛ս, չնչատեր ես բոլորովին: Պարոն Արշակը ինչո՞ւ մինակ ձգեցիր:

– Կարծեցի, թե ձայնս չլսեցիր, – պատասխանեց քույրը երկու ձեռքը կրծքին սեղմած, շնչառությունը կանոնավորել չանալով:

* * *

Բժիշկը եկավ, ուրախ-ուրախ Արշակը բարևեց:

– Մայրս ըսավ, որ պարտեզն եք:

– Եվ ինչ գեղեցիկ է եղած ձեր պարտեզին այս անկյունը... – նկատեց Արշակ բան մը ըսած ըլլալու համար:

– Այս վայրկյանիս ավելի գեղեցիկ կրնաս նա, վայրկյան մը միայն, ա՛յ, ալդեն եկավ:

Ու մատովը մոտեցող սպասուհին ցույց տվավ, որ ձեռքը ափսե մը դեպի ավազանը կուգար: Ափսեին մեջ չիշ մը օդի և աղանդեր:

Սպասուհին բերած բանները շարեց սեղանին վրա ու հեռացավ: Երեքն ալ նստեցան. բժիշկը երկու փոքրիկ գավաթիկները լեցնելով՝ դարձավ հյուրին.

– Է՛, բարով եկաք. Ձեր կենացը:

– Շատ չնորհակալ եմ, բայց ես օղի չեմ խմեր:

– Ա՛խ, անմիտ բաներ մի՛ ըսեք, գավաթ մը խմեցե՛ք:

– Ինչո՞ւ կսոխպես, Հակո՛բ, եթե սովոր չէ, – մեջ նետվեցավ քույրը չնչտով մը, ուր խանդաղատանքը կդղդար: – Պարոն Արշակ, մի՛ խմեք: Սպասեցե՛ք, ես ձեզի հիմա մատերա կբերեմ, թեթև, հրաշալի մատերա:

Եվ առանց տղու մերժումներուն ականջ դնելու՝ վազեց դեպի տուն: Արշակ վայրկյան մը մոռածկոտ մնաց և հանկարծ դարձավ սեղանակցին.

– Պարոն բժիշկ, Ձեր քույրը խելացի աղջիկ է և մինչնակարգ կրթություն ավարտած. ինչո՞ւ չեք ղրկեր Եվրոպա բարձր կրթություն առանալու: Գիտե՞ք մեր հասարակության մեջ ինչ ղեր կրնա խաղալ վերադարձին:

Բժիշկը նայեցավ խոսողի դեմքին և օղիին գավաթիկը բերանը տանելով՝ պատասխանեց քմծիծաղ.

– Այդչափ հեռուները երթալու բարեբախտաբար պետք չկա. քույրս մտադիր է անմիջապես գործի սկսելու. ան չուտով վարժուհի պիտի դառնա: Հապա՛. քանի մը շաբաթ մորը հոգին հանեց, թե վարժուհի պիտի դառնամ:

– Բայց Դո՞ւք, պարո՛ն բժիշկ, ավելի կարևոր չե՞ք գտներ, որ նախապես հարկ եղած պատրաստությունը ձեռք բերե:

– Վարժապետ դառնալու համար ի՞նչ նախապատրաստություն, – պատասխանեց բժիշկը կատարյալ անտարբերությամբ:

– Բայց Ձեր քույրը հայտնած է ինծի, որ Եվրոպա երթալու և ուսումը շարունակելու մեծ փափագ ունի:

Բժիշկը, որ վերջին ատենները վարժուհի դառնալու պատմությունը և իր մորը գանգատները իրենց տան մեջեն ընդհատված ըլլալուն մեկ կողմեն ուրախ էր, մյուս կողմեն՝ զարմացած, հանկարծ լույս առավ և ժպիտը շրթունքին դարձավ խոսակցին.

– Ուրիշ խոսքով՝ Ձեր մեջ հին ծրագիրը փոխված է արդեն:

Արշակ այդ անակնկալ նկատողությենեն վիրավորանքի պես բան մը զգաց:

– Ի՞նչ ըսել կուզեք:

– Ա՛խ, Դո՛ւք, տաքգլուխ բարեկա՛մս, – խնդաց բժիշկը՝ մատը ողուն դեմ թափ տալով:

– Բայց, պարո՛ն բժիշկ...

– Գիտե՞ք, սիրելի՛ս, քույրս վերին աստիճանի միամիտ ու անփորձ աղջիկ է և...

– Եվ հասկցող ու կամքի տեր, – ընդհատեց տղան կտրուկ:

– Հասկցող ու կամքի տեր, – կրկնեց բժիշկը հեգնորեն: – Կա՛մք. և մասնավորապես կանանց կամքը. այսօր կարելի է վարժուհի դարձնել և վաղը համալսարան ղրկել:

– Ներեցե՛ք, պարո՛ն բժիշկ, ո՛չ Ձեր քույրը այդ խաղալիքն է և ո՛չ ես...

– Իզո՛ւր, բարեկա՛մս, – ընդհատեց բժիշկը, – ես Ձեզի վիրավորելու համար չըսի: Եվ վերջապես, որ քույրս և՛ սիրուն, և՛ գրավիչ աղջիկ մըն է, ատոր կասկած չկա. արդեն մեր ցեղը գեղեցիկ է. զարմանալու պատճառ չունիմ քրոջս այդ ձգողական ուժին վրա շրջապատող

երիտասարդներուն հանդիպ: Առաջ պարոն Տիրանն էր, որ դեպի քրոջս սիրտը ճամփա բանալ կուզեր, միայն երևի բախտ չուներ, կամ հավանորեն դուք ավելի վարպետ եք այդ տեսակ գործերու մեջ:

– Բայց, պարո՛ն բժիշկ,– գոռաց Արշակ՝ սրտին ցավեն ուրիշ բառ չգտնելով:

– Ինչ վիրավորվելու բան է ըսածս, – բացականչեց բժիշկը լուրջի ու կատակի, համակրանքի ու հեգնության տարօրինակ խառնուրդով մը: – Կանանց սիրտը գրավել պիտնալն ալ արվեստ մըն է վերջապես. և Եվրոպա գացող երիտասարդ մը ուզե-չուզե աստ ալ պիտի ուսումնասիրե. մեր Արևմուտք երթալուն նպատակը եվրոպական քաղաքակրթությունը լուրացնելը չէ՞:

Եվ սկսավ ծիծաղել՝ օդին զավաթիկը ձեռքը:

Արշակ սոսկալի ճնշում կզգար: Պատկերացավ աչքին դեմ հազիվ քառորդ մը առաջ իրենց դիրքը Վերժինի հետ այդ նույն նստարանին վրա: Իսկ Տիրանի անունը մեջ գալը և այն դաղափարը, թե նույնիսկ օտարները կնկատեին իր ընկերոջը ձեռքեն Վերժինը խլելը, այնպես զարկավ խղճին, որ Արշակ բոլորովին հավասարակշռությունը կորնցուց:

Բժիշկը նշմարեց տղոս դրդված վիճակը և ուզեց հանգստացնել:

– Մի՛ հուզվիք, Դուք ալ երևի դեռ բավական միամիտ եք: Միայն իբրև փորձված մարդ, խորհուրդ կուտամ Զեզի, որ Ձեր համալսարանով ու վարժուհիներով մեր տան մեջ անհամություններ չմտցնեք: Մորը ավելորդ լացեր պատճառելեն ի՞նչ օգուտ:

Վերժին վազեվազ եկավ՝ ձեռքը չբացված ու դեռ կնքված չիչ մը պինդ ու խցահան, իսկ մեջքը նոր կապած ճերմակ գոգնոցին մեջ քանի մը տանձ ու սերկևիլ:

Գոգնոցին մեջինը սեղանին վրա թափելով՝ զվարթ դեմքով դարձավ երիտասարդին.

– Պարո՛ն Արշակ, հանեցե՛ք չիչին խիցը. և Զեզի հետ միասին ես ալ դավաթ մը պիտի խմեմ այսօր:

Բժիշկը գլուխը քիչ մը մեկ կողմ թեքած՝ կնայեր անոնց:

Արշակ սվրեց կնիքը, պատռեց կապար թերթը, քաշեց խիցը և լեցուց օրիորդին ու իրեն, տեսակ մը բոլորովին մեքենաբար:

Բժիշկն ալ իր օղին վերցուց, ու գավաթները զարկին իրարու:

– Է՛, բարի ճանապա՛րհ, Վերժի՛ն. լսեցի՝ շուտով Եվրոպա երթալու միտք ունիս եղեր. ինչո՞ւ մինչև հիմա ինծի ոչինչ չէիր ըսեր:

Աղջիկը ցնցվեցավ, զարմացավ ու նայեցավ Արշակի երեսը:

– Ուրեմն արդեն խոսե՞ր եք այդ մասին, – հարցուց հուզված, գավաթը ձեռքեն դրավ վար ու նետվեցավ եղբոր վիզը: – Իմ մեկ հատի՛կ եղբայրս, իմ անո՛ւշ եղբայրս, գիտեի որ պիտի օգնես ինծի. դուն բարի ես, շատ բարի. իմ մեկ հատի՛կ եղբայրս:

Բժիշկը միշտ ժպտուն, կամաց մը ազատեց ինքզինքը քրոջը թևերեն ու միևնույն ժամանակ կխոսեր.

– Անշո՛ւշտ, անշո՛ւշտ. կերթաս Եվրոպա, կտեսնես նոր քաղաքակրթությունն, նոր տեսակի կյանք, կհաճախես նշանավոր համալսարաններ և ավելի ևս նշանավոր գիտնականներու դասեր և այդ ամենը գլխուդ լեցուցած կվերադառնաս հոս մեր հասարակության առաջադիմությանը ծառայելու, նոր սերունդին նոր ուժ և ազատ գաղափարներ ներարկելու: Այս բոլորի մասին անշուշտ արդեն քեզի խոսած է պարոն Արշակը:

Եվ ասիկա ըսված էր այնպիսի լուրջ շեշտով մը, որ Վերժին զարմանքով կնայեր եղբորը՝ առանց ինչ մտածելը գիտնալու:

– Վերջապես, – շարունակեց եղբայրը՝ հյուրին գավաթը գինի լեցնելով, – վերջապես պարոն Արշակը այս քանի տարի է Եվրոպա կապրի, կճանչենա կյանքը, պայմաններուն ծանոթ է, կրնա քեզի ամեն կերպ օգտակար ըլլալ. այնպես չէ՞. վերցուցե՛ք սա ձեր նշանավոր գինին:

Եվ սկսավ սրտանց խնդալ: Աղջիկը ոչինչ չէր հասկընար ո՛չ այդ անտեղի ծիծաղեն, ո՛չ եղբորը արտասովոր լրջութենեն, ո՛չ ալ անոր անսպասելի համակերպումեն: Անգամ մը տղուն կնայեր, անգամ մը եղբորը, կես մը չվար, կես մը ուրախ:

Իսկ Արշակ այդ կատակերգությունը շարունակելու այլևս անկարող՝ ցատկեց ոտքի և խոսակցության հնար եղածին չափ դրական գույն մը տալու ջանքով՝ ըսավ.

– Հերի՛ք է, պարո՛ն բժիշկ: Մի՛ մոռնաք սակայն, որ Ձեր քրոջը տեսակ մը խոսք տված եք արդեն, և ատիկա իսկապես Ձեր պարտավորությունն էր: Փոխանակ կնոջ կամքը հեգնելու և անոր անկարողու-

թյուններուն վրա դատի նստելու՝ միջոց տանք մեզի մոտիկ եղող կիներուն, որ նեռվին հոսանքի մեջ: Կհուսամ՝ նորեն առիթ կունենանք այս նյութին շուրջը խոսելու, իսկ հիմա արդեն ուշ է, ներեցե՛ք, որ մեկնիմ:

– Իզուր կշտապիք, – նկատեց Վերժինն:

– Ոտքի վրա գավաթ մըն ալ չէի՞ք խմեր, – առաջարկեց բժիշկը իր տեւական ժպիտին մեջեն:

– Շնորհակալ եմ, ո՛չ:

– Խմեցե՛ք, այսօր թող բացառութիւն ըլլա, – ըսաւ աղջիկը՝ ինքը գավաթը տղուն ձեռքը դնելով:

– Քանի որ քուկիս կառաջարկե, ալ մերժել չեմ կրնար, չէ՞: Խմեցե՛ք: Եվ խմենք կեանքի հավիտյան կրկնվող կատակերգութեան հնոցը:

* * *

Բուլը ու եղբայրը ճամփու դրին հյուրը պարտեզի դռնեն:

Առանձին մնալուն պես բռնեց իրենց տան հակառակ ուղղութիւնը: Պետք ուներ չարժումի, պետք ուներ ամենեն առաջ իր հոգիին մեջ դարձածը պարզ ու հստակ դիտակցելու, որ իր ընելիքը դիտնար:

Բժիշկի հեղնութիւնը, բայց ու դոց ակնարկները, Վերժինի հետ իր ունեցած դիրքին հիմնական փոփոխումը, Տիրանի Հանդեպ ստեղծված նոր դրութիւնը, իր նախորդ որոշումները ոտքի տակ տված ըլլալու ներքին խայթը, աղջկան խոսքերուն ու դէմքին վերհուշը և խորեն եկող մտածում մը, որ իր վարմունքը ազնիվ չէր, և որ հիմա մեղք մը ուներ իր թևերուն ու իր չրթունքին վրա իր մոտ ու մտերիմ ընկերոջ հանդեպ, – այս բոլորը իրարմե հորձանքով պատւյտ կուգային իր խտված հոգիին մեջ: Կգիտակցեր, որ իր դատողութեան թելը ապուշ ու անբնական հանգույցներ կառներ ու կխառնվեր և հետզհետե ավելի կվհաճվեր կառվի մը թաթիկներուն տակ ինկած կծիկե մը քակվող թելին պես:

«Ես խելքե կհանեմ եղեր այդ անփորձ աղջիկը: Ե՞ս: Հապա ո՞վ: Ես ավելի վարժ եմ եղեր կանանց սրտերը գրավելու: Այդպես կպնդեր բժիշկը իր մեծ փորձառութեամբ»:

«Եվ իրողություն է. դեռ ժամ մը չկա, որ Թևերուս մեջն էր ան, իսկ Տիլանը՝ բոլորովին մոռցված: Տիլա՜նը, խե՛ղճ Տիրան. հիմա նուաճեր է անշուշտ ու աղջկան վրա ուռանավոր կհյուսե. խե՛ղճ ազնիվ տղա: Ջէ՛, պարապ բան է, աշխարհքը անազնիվներուն է»:

«Անցած օր գացի, կեղծեցի, վստահացուցի, թե ես ո՛չ աղջիկը սիրած եմ, ո՛չ ալ սիրելու ժամանակ ու տրամադրություն ունիմ: Թե՛ ուրիշները և թե՛ ինծի կատարելապես կուրացնելու համար քանի մը օր հեռացա, որպեսզի վերադառնալուս պես աղջկան գիրկը նետվիմ: Խաբեցի, և վարպետ կերպով, բժիշկը իրավունք ունի, թե՛ ինքզինքս, թե՛ աղջիկը, թե՛ ընկերս»:

«Գուցե իմ ամբողջ կյանքս այս ձևով խաբել ու կեղծել եղած է միշտ, ո՞վ գիտե: Աղվոր-աղվոր բառերով խաղալ, խոշոր սկզբունքներու անունով ճառել, անպայման ազնվություն, բարձր անձնազոհություն պահանջել ամեն տեղ. ու ամենեն. բայց ահա կյանքի իրական փորձ մը և ահա՛ արդեն կեցած է իր ամբողջ հասակով ներքին հզոր եսի իսկական տմարդի պատկերը»:

Պահ մը կարծես մտածումները ընդհատեցան: Մեքենաբար նայեցավ շուրջը. գյուղեն դուրս էր ելած արդեն ու կքալեր երկաթուղիի գծին կից գացող ոտքի ճամփով, որ եղերված էր Թուփերու ու չորցած խոտերու փոշեթաթավ ցանցով մը:

«Այո՛, պետք է դուրս գալ այս փուշերեն ու տատասկեն, պետք է դուրս գալ այս հոգեկան լաբիրինթոսեն: Պետք է բռնել իր հոգիի բնական ճամփան, եթե իրավ որ նենգ ու սրիկա մը չէր: Ճամփան մե՛կ էր. գիտեր. մեկ անգամ ընդմիշտ վերջ դնել իր ու աղջկան մեջ եղած կապին. փախչի՛լ, ինչպես ըրեր էր մինչև հիմա: Բայց ասկե ետքը միթե կարելի՞ բան էր ատիկա, ավազանին դեմի այսօրվան անցած-դարձածեն ետքը: Աստվա՛ծ իմ, հիմա գիտեր, որ կսիրվեր. դեռ կզգար շրթունքներուն վրա Վերժինի թաավիշե շոյանքը»:

«Գո՛ղ, գո՛ղ», – կհնչեր հոգիին մեջ: «Գող» կպոռային իր հոգիին բոլոր անկյուններեն:

«Ա՛խ, ի՞նչ սեր, ի՞նչ բախտավորություն կրնար բերել այս կապը իրեն, երբ ամեն վայրկյան Տիրանի անիրավված դեմքը պիտի կանգներ

իր աչքերուն դեմը, երբ չարունակ պիտի հիշեր, թէ ինչ գնով ձեռք էր բերեր այդ բախտավորութիւնը»:

«Սերը ավելի ուժեղ է, քան մահը. պիտեր, այդպես կըսեին. դիտեր, որ մարդիկ հաճախ ծնողք, մտերիմ ու բարեկամ և դիտ չատ ուրիչ բաներ ոտքի տակ կուտային իրենց սիրած էակին տիրանալու համար: Գիտեր, բայց կհաւակնար, որ ինքը այդ մարդոցմեն չէր: Իր հոգին, իր կազմը, իր ըմբռնումները թուլլ չէին տար իրեն, որ խլե իր ընկերոջը պնակեն, իր ընկերոջը բերանեն, անոր բաժինը կյանքի սեղանեն»:

«Մեկը պետք է զրկվեր, մեկը պետք է տառապեր. ինքը իր ձեռքով չէր կրնար այդ հարուածը իջեցնել Տիլանի կրծքին. կնախընտրեր իջեցնել իր կրծքին: Իսկ Վերժինը: Ա՜խ, Աստուա՛ծ իմ, երբ ինքը մեջտեղեն չքանար, հին առուն երևի իր ճամփան կգտնար: Ու կմոռցվեր իրենց մեջի այս միջանկյալ կարճուկ վեպը»:

Տղան կվախնար միայն, որ իր այս վճռական կեցվածքը ամեն վայրկյան պահել չկարողանար, մանաւանդ երբ Վերժինին նորեն հանդիպեր: Եվ որոշեց այն տեսակ քայլ մը առնել, որ անկարելի դառնա մեկ անգամեն թէ՛ ամեն հանդիպում և թե՛ նահանջի ամեն հնարաւորութիւն:

Կեցավ ճամփուն վրա վայրկյան մը. վճիռը տված էր. իսկույն դարձավ ետ ու սկսավ քալել դեպի պյուղ ու դեպի տուն: Ալ չէր մտածեր. ալ մտածելու ոչինչ չուներ. անձնասպանութիւն որոշողի պես էր. մեկ մտածում մը միայն ուներ՝ երթալ ու անմիջապես գործադրել իր որոշումը. ուրիչ ամեն մտածում ավելորդ էր:

Արագ ընթացքով հասավ տուն, վճռական քայլերով բարձրացավ իրենց սանդուղներեն, մտավ իր սենյակը, ինքը վառեց իր լամպը ու նամակի մը թուղթ քաշեց առջևը:

Ծովի սրահը քարայրը կնվագեր: Վայրկյան մը ձեռքը ճակտին ու աչքերը ճերմակ թուղթին հառած՝ իր մտքերը ամփոփեց և հանկարծ վերցուց գրիչը ու արագ սկսավ գրել.

«Ագնի՛վ օրիորդ, այս տողերը գրելը ինծի համար տանջանք է, բայց պարտական եմ գրելու:

Մեր փոխադարձ հարաբերութիւնը բոլորովին անսպասելի բարդութիւններ առավ, որուն մենք բնավ նախապատրաստված չէինք:

Ես այսօր վերջնապես համոզվեցի, որ Ձեր ձայնի ու հայացքի հրապուրքին դիմաց իմ կամքիս ուժը ինծի հերիք չէ, ու ես կրնամ աննե-րելի սխալներ գործել:

Ես իմ կողմես պիտի չանամ ասկե ետքը ավելի խիստ կերպով Ձեզմե հեռու մնալու, ինչպես ինքներդ շատ ճիշտ նկատեր էիք: Իսկ Դուք, սիրելի՛ օրիորդ, մոռցե՛ք մեր մեջ եղած պզտիկ անցյալը և ներեցե՛ք Ձեզի պատճառած այս անախորժութիւնս: Խորին հարգանքով՝ Արշակ»:

Կարդաց անգամ մը, քիչ մը մտածեց, թուղթին ճակատը հատիկ-հատիկ գրելով ավելցուց.

«Նամակիս հետ ուղարկած գիրքս պատրվակ մըն է թե՛ մեր և թե՛ Ձեր տունը ուշադրութիւն չգրավելու համար: Շարունակութիւնը կարդացե՛ք առանձին»:

Ծալլեց, արագ չարժումով մը դրավ ծրարի մը մեջ, գրեց Վերժինի հասցեն, գրքերուն մեջեն քաշեց Իլաենի մեկ հատորը, նամակը կիսովին դրավ մեջը ու իջավ վար:

– Մայրի՛կ, մանչը ո՞ւր է, այս գիրքն ու նամակը անմիջապես Պզտիկյաններուն տունը ղրկե՛. խոստացա տուն գալուս պես այս գիրքը իրենց հասցնեմ:

– Բայց, տղա՛ս, հիմա չուտով ընթրելու ենք, մանչը ձեռքը գործ ունի:

– Ձէ՛, մայրի՛կ, խնդրե՛մ, անմիջապե՛ս:

Մայրը վարանելով կանչեց սպասավորը ու հայտնեց տղուն պատվերը:

– Մենջի նամակը չմգե՛ս, Վարդա՛ն, – ըսավ Արշակ՝ գիրքը սպա-սավորին ձեռքը դնելով:

– Շուտով դարձի՛ր, – պատվիրեց մայրը:

Եվ երբ սպասավոր տղան իր ճերմակ գոգնոցը ժողվելով ու մեջքը փաթթելով դուռնեն դուրս ելավ՝ Արշակ ծանր-ծանր բարձրացավ իր սենյակը:

Ներսը քույրը հիմա վալս մը կնվագեր: Այդ գվարթ աղորդները իր սիրտը ավելի սեղմեցին:

«Վերջացավ», – մրմնջեց ակռաներուն մեջեն և զգաց, որ իր մեջի այն ամուր վճռակամութիւնը սկսավ արագ հալիլ: Իրեն այնպես թվեցավ,

որ այս բոլոր իրարանցումը արդեն չափազանց էր. այս աստիճան ինքն իր դեմ գայրանալու ու ինքզինքը մեղադրելու պետք չուներ: Մի՞թե ինքը այս բոլորը ուզելով էր կատարած. մի՞թե ինքը իր ընկերոջ զգացումներու մասին որևէ բան գիտեր, երբ աղջիկեն սկսավ հրապուրվիլ, ո՛չ թե հրապուրել: Եվ լո՜ւռ նեղսրտություն կամ անազնվություն, երբ ինքը իր զգացումները զսպել չկրցավ, երբ աղջիկը այնքան պարզ, ջերմ ու սրտագին կախված էր իր դեմքեն:

Ու նորեն կենդանացավ իր աչքերուն դեմ Վերժինի այն տաք ու միամիտ հանդիմանությունը, ամոթեն ու հաճույքեն գետին նետված հայացքը. վերջը իր թևերուն մեջ. այն թեթև ու անորոշ ծաղկի մը հոտը, որ հազուստին ծոցեն կուգար. այտերուն հուրը, որ իր դեմքը կայտեր. և շրթունքներուն քնքուշ կծկումը...

Ջի՛ մտածել, չի՛ մտածել. պետք էր մոռնալ, մոռնալ ընդմիշտ. վերջացած էր: Զսպված չունչով ու դղրդացող ճեռքերով նետվեցավ իր մահճակալին ոտքը փոքրիկ գորգին վրա, դեմքը թաղեց անկողնին մեջ ու մնաց անշարժ. ո՛չ մեկ ծպտուն: Ցովի սրահեն վալսին տաքտերը դեռ կկայլձռեին օդին մեջ զվարթ ու աշխույժ:

Ը

Սեղանատան դուռը կռնակի վրա բաց էր, և դուան զույգ վարագույներուն մեջեն լամպի լույսի դեղին խոշոր հավասարասրունք եռանկյունի մը ինկեր էր կից սենյակի հատակին վրա:

Սենյակի մնացած մասը մութ էր, և այդ մութին մեջ քանափեհին վրա ամբողջ հասակովը փռվեր էր Վերժին, երկու թևերը կլխուն տակ կապած, աչքերը կես մը գոց, կես մը դիմացի պատեն կախված նկարի մը փայլող մեկ կետին հառած՝ թաղվեր էր անրջանքի մեջ:

Հանկարծ շտապ ներս վազեց սպասուհին սեղանատուն, հոն մարդ չգտնելով՝ մտավ կից սենյակը, մութին մեջ կծկված աչքերով նշմարեց իր սիրուհին, մոտեցավ ու ճեռքի պիրքը անոր մեկնեց:

– Սմբատյաններուն մանչը բերավ, – ըսելով:

Եվ արագ վազեց իր գործին:

Վերժին զսպանակե նետվածի պես վեր թռաւ, գիրքը առաւ ու զարմացած չարժումով մը սեղանատան լամպին տակը չտապեց:

Իբսեն:

Ոչինչ չհասկնալով՝ արագ բացաւ նամակը: Առաջին արտահայտութիւնը ժպիտ մը եղաւ ձախ այտին, որ չուտով սկսաւ ավրվիլ՝ տեսակ մը լրջութեան տեղի տալով և հետզհետե բոլորովին կորսնցուց իր արտահայտութիւնը:

Նամակը ըստ երևոյթին ծանր կկարդացվեր: Երբ վերջացուց, աջ ձեռքը նամակին հետ սահեցաւ վար, ձախը մնաց սեղանին վրա պատառաքաղի մը կոթին հենած: Մոլոր աչքերով նայեցաւ անգամ մը շուրջը, վերցուց Իբսենը, նայեցաւ կազմին, դրաւ նորեն սեղանին վրա, զննեց անգամ մը հասցեն և նորեն աջ ձեռքը բարձրացնելով՝ սկսաւ վերստին կարդալ նամակը: Բայց հազիվ քանի մը տող, որ նամակը ձեռքեն սահեցաւ, ըրթունքներուն երկու ծայրերը դողացին, կուրծքը ուռեցաւ, և վայրենի հեծկլտուքով մը ինկաւ աթոռին վրա՝ միևնոյն ժամանակ ձայնը խեղդելու համար սեղանեն վերցուցած անձեռնոցը դեմքին սեղմած:

Դուրսը ոտքի ձայներ լսվեցաւ: Խենթի պես վեր ցատկեց, դողացող ձեռքերով վերցուց գիրքն ու նամակը և վազեց դեպի մութ սանդուղները, հոնկե վերի հարկը, չիտակ իր ննջարանը: Նամակն ու գիրքը առանց ձեռքեն ձգելու նետվեցաւ իր մահճակալին վրա ու դեմքը թաղեց բարձին մեջ. և վազքի ատեն զսպված լացը նորեն դուրս պոռթկաց բոլոր ուժով:

Գլխուն մեջ մե՛կ մտածում մը միայն մեխված էր, թե Արշակեն մերժված էր. սուր ու խայթող զգացում մը, որ քիչ-քիչ սակայն սկսաւ բթանալ: Ելաւ, նստաւ անկողնին վրա, անդին նետեց ձեռքի գիրքն ու նամակը և լալը կտրեց. կուրծքն ու ուսերը կցնցվեին մեջեմեջ, բայց այլևս արցունք չկար: Թուլլ մը հենած մեկ թևին, թաց թաչկինակին ծայրը ամուր խածած՝ մեռած հայացքով կնայեր մութին:

Քիչ մը ետքը ելաւ, վառեց մոմը, գտաւ նամակը, բերաւ լույսին մոտ ու նորեն կարդաց ծանր-ծանր, ուշադիր ու մտածկոտ. վերջը դանդաղ չարժումով մը թուղթը դրաւ քովի սեղանին ու ձեռքը մնաց թուղթին վրա: Ուժասպառ տխրություն մը տիրեր էր իր ամբողջ էությանն. և ուղեղին մեջ լայն ու անշարժ նստած էր միայն գիտակցություն մը, թե Արշակը ալ իրենը չէր և որ երբեք իրենը եղած չէր...

Եվ արցունքները նորեն սկսան խոշոր կաթիլներով հոսիլ աչքերեն, բայց առանց հուզման, առանց աղմուկի:

Վարեն լավեցավ մորը ձայնը. հացի կկանչեր: Իսկույն վեր թռավ, մարեց մոմը, սրբեց դեմքը մեքենաբար և սանդուղի պլխեն հնար եղածին չափ հաստատ ձայնով մը հայտնեց, որ քիչ մը գլուխը կցավի և բան ուտելու բնավ ախորժակ չունի:

Փոխանակ պատասխանի՝ մայրը եկավ վեր: Նախ նկատողություն ըրավ, թե ինչու մութի մեջ է նստած, և ինքը վառել ուզեց լամպը, բայց աղջիկը չի ձգեց: Մոտեցավ, որ ճակատը բռնե, աղջիկը հակառակեցավ. առաջարկեց օ-ը-քոլոն քսել, վերջին նորեն մերժեց. հորդորեց հիմարություն չընել, գալ ընթրելի, ելել մաքուր օդը. աղջիկը այդ ալ ժխտեց ու խնդրեց, որ իրեն հանգիստ թողնե: Մայրը տեսնելով, որ աղջկան քմահաճ ու կամակոր վայրկյաններեն է, ավելի ևս չդրդռելու համար դժգոհ իջավ վար՝ քթին տակին բաներ մը մռլտալով:

Վերժին ելավ, դուռը կղպեց, նետվեցավ անկողնին վրա ու մնաց պառկած անշարժ. իրիկ կմտածեր և ինչո՞ւ: Եղբը սկսավ չուտ-չուտ դառնալ մեկ կողքեն մյուսին վրա. որչափ ժամանակ՝ ոչինչ չէր գիտեր: Տունը, դուրսը դաղրած էր արդեն ամեն ձայն ու շարժում: Շատ-շատոնց էր, երբ ան լսեց, որ զգույշ քայլեր իր սենյակին մոտեցան, իմացավ դռան կանթին թեթև մը դարձվիլը. դուռը բանալու իզուր ճիգ մըն էր ատիկա. եղբը քայլերը նորեն կամաց մը հեռացեր էին դեպի դիմացի սենյակը, ուր մորը ննջարանն էր: Անկե եղբը ալ ոչինչ չէր լսած:

Հանկարծ պառկելեն հոգնությունն զգաց. ելավ ոտքի, սենյակի օդը կարծես քիչ կուզար, մոտեցավ լուսամուտին. դուրսը պայծառ ու աստղազարդ գիշեր մըն էր. տաքուկ ու մեղմ. թարմ օդին չոյանքը դեմքին ու կրծքին չատ հաճելի եկավ. և հանկարծ դուրսը, բացը ելել ուզեց բուռն պահանջով:

Եվ ալ առանց երկար մտածելու վառեց նորեն իր մոմը, կսկծացող աչքերով նայեցավ ժամը. երեքը անցած էր: Կամաց մը բացավ սենյակին դուռը, մոմկալը վերցուց և գողի մը պես զգույշ, առանց որևէ աղմուկի իր բարակ մաշիկներով իջավ սանդուղներեն և մեծ զգուշությամբ ետ հրեց իրենց պարտեզը հանող դռան ահագին նիգը. մոմը մարեց, դրավ գետին ու նետվեցավ դուրս:

* * *

Ծառերուն տակ անթափանց մութ էր. թեթև հովիկը կխոսեցներ ոստերուն յուրաքանչյուր տերևը: Այդ մութին մեջ, ծառերու այդ փայփայող շրշյունին տակ աղջիկը արագ կքալեր արահետե արահետ փափուկ սովագին վրայեն:

Մինչև հիմա իր ամբողջ հոգին կղառնար զույգ մը գաղափարի շուրջը, թե տղան երբեք դեպի ինքը զգացում մը ունեցած չէ, ինչպես ինքը թեթևամտորեն երևակայած էր, թե ինքը պարզապես խաբված ու հիմարացած էր: Եվ այդ անպատասխան մնացած սրտի կծու ցավին կմիանար մյուս կողմեն ամոթի խայթը, կանացի վիրավորված ամոթխածութիւն մը, որ այդպես անտեղի իր զգացումները մերկացուցեր էր տղու մը դիմաց ու գրեթե անոր վիզն էր նետվեր բռնի:

Հիմա դուրսի թարմությունն ու իր շարժումն ու վազքը նոր ընթացք տվին անոր մտածումներուն, և իր դատողությունը դուրս եկավ վերջապես այդ երկու սևեռուն գաղափարներու կախարդական շրջանակեն:

Ավազուղին անկյուն կուտար ավազանին քով. աղջիկը հազիվ էր հասեր այդ անկյունը, որ կանգ առավ հանկարծ. և գրեթե բռնի, իր կամքին հակառակ ու վարանոտ ոտքերով մտավ ծառերու այն խումբին տակ, ուր ավազանի հալած ձյուրեթե մակերեսը թեթև մը կցոլար:

Մութին գիրկեն նստարանը հազիվ կնշմարվեր. քայլ մը հեռու կեցյավ, արձանի մը պես անշարժ, թևերը ծալած կրծքին ու հայացքը համառ կետի մը հառած, ուր ցերեկը նստած էին իրենք երկուքով:

Հիշողության ծոցեն դուրս կողային թարմ պատկերներ, խոսքեր, շարժումներ, նայվածք ու զգվանք, կենդանի, բոլորովին կենդանի. ցավի ու հեչտանքի դող մը ցնցեց ամբողջ մարմինը. երազե արթնցածի մը պես, հուսահատ ու վայրի շարժումով մը մեկդի հրեց իր վրա խուժող այդ թմրում ու խայթող հուշերը ու դուրս ելավ ավազանի անկյունեն: Բայց դուրս ելավ բոլորովին տարբեր հոգեբանությամբ:

Տղան իր նամակով այն գաղափարը տալ կուզեր, թե այսօրվան իր վարմունքը սխալանք մրն էր, թե ինքը չէր սիրեր: Ո՛չ, հոն, այդ ծառերուն

տակ սխալմունք չկար. հոն ամեն ինչ ճշմարիտ էր ու անկեղծ. սխալն ու սուտը այդ նամակն էր, ո՛չ թե մինչև հիմա իրենց մեջ եղած ջերմ կապը, ո՛չ թե այս ծաւերուն տակի...

Ու չգիտեր ինչպես անվանել այն տեսարանը, որուն վրայեն գիշեր մը դեռ չէր անցեր, բայց որ արդեն այնքան հեռու էր, հեռու:

Այս նոր միտքը, թե տղան կատեր, թե դեպի ինքը անտարբեր եղած ըլլալ չէր կրնար, տեսակ մը հոգեկան բարձրացում հոսեցուց աղջկա զգայումներուն մեջ:

Անտարբե՞ր: Մի՞թե անտարբերը այդպես դողալ, այդպես գրկել ու գգվել գիտե. և այդպես երկյուղ ու փախուստ իրմեն, ինչպես ինքը կռնանար չաւոնց, և որ նամակը բացահայտ կխոստովանի: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ ուրեմն այդ փախուստն ու այդ նամակը:

Տղան կապված էր իրեն, այո՛, ու կսիրեր. դեռ ավելին, ան հմայված էր իրմեն ու սիրահարված, ինչպես նամակն ալ կըսե ալարզորեն, ինչպես և իր կզակի փախուստը կըսե, ինչպես և այսօրվան անոր գգվանքն ու հաւիշտակութիւնը նույն բանը կըսեն հստակորեն: Իբրև աղջիկ, իբրև կին խորապես սիրված էր ինքը Արշակեն. բայց այդքանը բավակա՞ն էր Արշակի համար:

Վերհիշեց անոր այնքան-այնքան անգամներ գծած պահանջները կնոջ մը զարգացման, դերի ու գործունեութեան մասին: Եթե ուրիշ կանանց վերաբերմամբ այդչափ պահանջոտ էր, որչափ ավելի ըլլալու էր իր զգայումներուն, իր կյանքի ու գործունեութեան ընկերուհիին համար:

Հիմա կհասկնար նաև նախորդ իրիկունը իր եղբոր խոսքերը, եղբորը խոսվածքը ընդհանրապես իր համալսարան երթալու մասին, լու րջ ու ծաղրի այն խառնուրդը, ուրկե աղջիկը ոչինչ էջը հասկցած և իսկույն ալ մոռցեր էր իր հավրեցնող զգայումներու հորդումին մեջ: Բայց հիմա կըմբռներ. անոնք խոսած էին իր մասին, և երկուքն ալ երևի մեծ վստահութեյուն մը չունեին իր վրա: Որ եղբայրը այդ կարծիքեն էր ըլլալու՝ զարմանալու բան մը չկար: Բայց Արշա՞կը. երևի՛. չէ՞ որ այնքան կընդդեր, որ ուսումը նախ լրացնե. ան ալ ուրեմն կտարակուսեր. հույս կամ վստահութեյուն չուներ արդյունքին վրա: Ե՛վ ան, և՛ եղբայրը, և՛ բոլոր շրջապատողները, ամենքը, ամենքը կարևորութեյուն չէին ուզեր տալ իրեն: Ինքը ի՞նչ էր որ. տունը նստած հասարակ աղջիկ մը...

Եվ մեկեն իղձ մը, պահանջ մը, վճիռ մը գամվեցավ գլխուն մեջ: Մե՛ծ, մե՛ծ կին մը դառնալ. բացառիկ ու կարևոր դեմք մը. բոլորի կալծիքին հակառակ:

Եվ այդ մտքեն աչքերը վառեցան. ղեմքը բոց առավ. ձեռքը ուժգին բաբախող սրտին սեղմած՝ խոր մը ներշնչեց առտվան դեմի մեղրածոր օդը. ճախ այտը խտիտ տվող գանգուր մը մեքենաբար ականջին ետևը անցուց և սկսավ նորեն քալել. բայց այս անգամ ավելի վազք էր, քան քալել: Ծառերը ետ-ետ կփախչեին երկու կողմեն, իսկ ան ոչինչ չէր տեսներ:

«Մե՛ծ, մեծ կին մը, լուրջ ու կարևոր դեր մը խաղալու, բոլոր ուժերը նվիրելու, կենդանի գործ մը ստեղծելու. հանրային մեծ դեմք մը, ծանոթ, հայտնի, հարգված կին մը ամենքեն. և «ան» ամեն կողմ իր անունին հանդիպի, տեսնե իր գործն ու արժեքը և հասկնա, թե ինչ սխալ ու ստոր է գնահատած իր ուժերն ու կարողությունը. և ինչպես չէ կրցած գնահատել նաև իր սերն ու զգացումները: Ստվերի մը պես հետևեն հետևի իրեն, աքանչանա, հափշտակվի. իսկ ինքը անտարբեր. երբեք անոր ցույց չտա իր հոգին, իր իսկական հոգին, ինչքան ալ որ հոն տիրողը միշտ ալ ըլլա «ան»:

Վրեժի, սիրո, ցավի, հին ու նոր հափշտակություններու այս թափին տակ ամբողջ մարմնով կդողար: Պառկելեն, վազվզելեն ու հովի չարաճճի չունչեն մազերը բոլորովին քրքրվեր ու խառնակ թափվեր էին ուսերուն: Շնչառությունը քիչ մը դյուրացնելու համար քակեց չփակին մեկ-երկու կոճակները, ուրկե ճերմակություն մը դուրս ցատկեց:

Ու կվազեր ծառերուն տակ, փափուկ ավազին վրա, կարծես անտառի հավերժահարս մը լուսադեմի մութերուն մեջ.

«Մե՛ծ, մե՛ծ կին մը»:

* * *

Եվ ա՛լ ատ էր միայն իր ամբողջ մտածումը, իր միակ մխիթարությունը և իրեն ուժ ներշնչողը: Մյուս բոլոր հիշողությունները, անցյալը, ներկան, սերը, Արշակի պատկերը, բոլորը այդ գաղափարի շուրջը կդառնային ու իր որոշումը ավելի կսրեին:

Եւ հաջորդ օրը, և՛ հետևյալ օրերը կառանձնանար ժամերով կա՛մ իր սենյակը, կա՛մ նուրեն պարտեզը ածուներուն մէջ՝ միշտ անտարբեր ու ցրված դեպի ուրիշները:

Մայրը հիմա բացարձակապես ոչինչ էր հասկնար աղջկա վարմունքեն. մինչմինչ զգուշութիւնը տրված հարցերուն անմիտ ու նեղսիրտ պատասխան մը կառանար սովորաբար ու կլուեր ավելի չզրգռելու համար: Բայց առտու փոխարեն քանի մը անգամ խոսեր էր տղուն հետ: Բժիշկը կրնանար լուրջի չառնել, որ մորը անհանգստութիւնը ավելի չմեծցնե, բայց ինքն ալ կզգար ու կտեսներ, որ քրոջը մեջ ծանր բան մը կղառնար. և պարզ էր իրեն, թե ինչ էր այդ ծանր բանը. պարզ չէր միայն, թե ինչ պետք էր ընել. կհասկնար սակայն, որ բան մը ընել պետք էր:

Իրիկուն մը, երբ առանձին էին, վերջապես որոշեց քայլ մը առնել ու դարձավ քրոջը կես լուրջ, կես կատակ չեշտով մը.

– Վերժին, ինչ է պատահեր քեզի. բոլորովին փոխված կերևիս աչքիս: Հիվանդ ես, ինչ է:

– Ինծի ոչինչ ալ չէ պատահած: Բայց ուրախ եմ, որ խոսք բացիր. հարցի մը վրա քեզի հետ խոսիլ կուզեի:

– Ամբողջովին տրամադրութեանդ տակն եմ, – վրա բերավ նկարչը պաշտոնական կերպով մը:

– Բայց ամենեն առաջ, խնդրեմ, այդ արհամարհական ձևերդ մեկ կո՛ղմ դիր, որոնք բոլորովին անտեղի են:

Բժիշկը ոչինչ չառարկեց:

– Լսե՛, Հակո՛բ. ես վերջնապես որոշած եմ. ինչ գնով ալ կուզե ըլլա, քանի մը տարի երթամ սիրտ Եվրոպա: Եվ ամեն բան հաշվեր եմ արդեն, մի զարմանար, ու ամենևին քու վրադ լեռ ըլլալու միտք չունիմ. բայց վերջապես ես ալ ունիմ ժառանգական իրավունքներ, որոնցմե պատրաստ եմ միանգամ ընդմիշտ հրաժարվելու, միայն թե հիմա ինծի ամսական չնորհքով գումար մը ուղարկես հինգ տարվան չափ: Կատակ չեմ ըներ, Հակո՛բ. այս գործը գլուխ պիտի գա անպատճառ:

Այնպիսի ամուր ու վճռական կամք մը կար այդ խոսքերուն տակ, որ բժիշկը զարմանքեն պահ մը լուռ քրոջը երկար նայեցավ և վերջը մտածկոտ ավելցուց.

– Ինծի նայե՛. հոս դրամականը չէ, որ միայն պետք է մտածվի. գուցե դրամը դեռ ամենեն ետքինն է:

– Ուրիշ մտածելիքները դուն ինծի՛ ձգե, – ընդհատեց աղջիկը:

Բժիշկի դեմքեն ցնցում մը անցավ:

– Վերժին, խենթությունները գլխեդ դո՛ւրս հանե. համոզվա՛ծ եղիր, որ մայրդ կմեռնի ու չի թողներ. և ճշմարիտ ես ալ չեմ ուզեր, որ օտար տղու մը հետ օտար երկիրներ քաշքշվիս:

– Ինչ օտար տղա, – հարցուց Վերժին չար շեշտով մը:

Եղբայրը նույնիսկ պատասխանելը ավելորդ համարեց, և հեգնական ժպիտը նորեն ծլեցավ շրթունքներուն ձախ անկյունը:

– Քու բոլոր հասկցածդ ահա այդչափ է, – պատասխանեց աղջիկը ինքնագիտակից ու գոռոզ կեցվածքով մը: – Դուն սկիզբեն մինչև հիմա գլուխդ խոթեր ես, որ ես Արշակի վրան խենթի պես սիրահարած եմ և բոլորը, ինչ որ կընեմ, միակ չարժառիթըատ է: Աղե՛կ, գիտցի՛ր ուրեմն, որ իմ ու այդ տղու մեջ եղած կապը նույնչափ է, որչափ որ է քու և անոր բարեկամությունը: Կասկած չկա, որ այդ տղան ինծի բավական դրդում տվավ ու աչքերս բացավ, որու համար անչափ շնորհակալ եմ իրեն. զարմանալու ինչ կա. մի՞թե ամենքը քեզի պես անտարբեր պիտի ըլլային: Իսկ ինչ կվերաբերի անոր հետ Եվրոպա երթալուն, այդ ձրի ենթադրություններդ աղեկ կընես, որ գլխեդ դուրս ընես. ես պիտի երթամ առանձին, բոլորովին առանձին, բոլորովին անկախ:

Բժիշկի դեմքեն ժպիտը սրբվեր էր: Փորձեց իր վերջին առարկությունը.

– Անկա՛խ, առանձի՛ն, սիրուն բառեր են. բայց գիտե՞ս՝ ինչ ըսել է եվրոպական քաղաքակրթության ու բաց կյանքին մեջ աղջիկ մը առանձին ինկած, ամեն հրապույրներու ու գայթակղության ենթակա. մանավանդ քեզի պես գեղեցիկ ու դյուրին հափշտակվող աղջիկ մը:

– Դուն իմ դյուրին հափշտակվող ըլլալս որտեղե՞ն գիտես: Ինծի՛ նայե. եթե ես հրապուրվիլ ու գայթակղվիլ ուզենայի, կկարծես հոս հարմարություն ու առիթ է պակաս: Թե՛ կերևակայես գուցե, որ քու ներկայությունդ ինծի արգելք պիտի ըլլա կամ եղեր է: Դուն իզուր տեղը ինքզինքդ ամենագետ ու ամեն բան տեսնող ու հասկցող կկարծես, սիրելի՛ս:

Եվ ասիկա ըսված էր այնպիսի զուտ կանացի, երկմիտ, հեգնոտ ու ժպտող չեշտով մը, որ բժիշկը ճշմարիտ որ խճճվեցավ: Իրենց տան մեջ բաներ մը դարձած ըլլալու էին, որուն ինքը բնավ տեղյակ չէր: Բայց անշուշտ ոչինչ չհարցուց, միայն հալցական նայեցավ քրոջը աչքերուն:

– Հակո՛բ, հասկցի՛ր, որ ես այլևս երեխա չեմ. իզուր դուռ այդ աչքով կնայիս վրաս, – ավելցուց Վերժին:

Բժիշկի գլխեն արդեն քանի մը անգամ վազեր էր միևնույն մտածումը այս խոսակցության մէջոցին: Եվ նորեն ոչինչ չպատասխանեց:

Թ

Արշակ չաթալ մըն էր՝ կորուսեր էր բոլորովին հանգիստն ու հաչիվը: Իր նամակը գրած օրեն աղջիկը չէր տեսած և անոր մասին ոչ մեկ լուր չուներ:

Նամակի հաջորդ առտուն Պզտիկյաններու սպասուհին ետ էր բերեր Իլանեի հատորը, որուն մեջ ծալված բաց թուղթի կտորի մը վրա մատիտով գրված էր.

«Բոլորի փոխարեն ընդունեցեք իմ խորին չնորհակալությունս. Վերժին»:

Այս երկտողը տղուն համար զարձավ հանելուկ մը, միտք չարչրկող ու չի լուծվող հանելուկ մը: Հեգնությո՞ւն էր, ծա՞ղր, թե՞ կսկիծի արդյունք: Ամենեն հավանականը կթվեր իրեն՝ ծածկել ցանկացված ցավի մը հեգնոտ արտահայտություն: Եվ այն զաղափարը, որ հիմա աղջիկը լուռ տառապանք կկրեր, տղուն սոսկալի ցավ ու խղճի խայթ կուտար:

Ինքը շատ բուռն ու կոպիտ էր վարված, գուցե նույնիսկ տմարդի: Եվ հիմարություն չէ՞ր արդյոք ընկերոջ մը համար իրենց մեջ եղած այն ջերմ ու սրտագին կապը բզկտելը, երբ երկուքն ալ փոխադարձաբար իրարու կձգտեին: Եվ մի՞թե խելքի մոտիկ բան է, որ աղջիկը ասկե ետքը Տիրանի զգացումներուն պատասխանել կարողանար:

Մտածման այս եղանակը իր անիմաստ վարված ըլլալու մասին ուղղակի տեսակ մը տանջող կասկածի վերածվեցավ Տիրանի հետ ունեցած իր մեկ-երկու տեսակցություններն ետքը, երբ խոսքը զգուշությամբ

միշտ Վերժինի վրա կծռեր: Տիրանի պատասխաններուն տակ անփութութիւն մը կար, առարկայական վերաբերում մը դեպի ապրիլիկը. անոր մասին կխոսեր, ինչպես նկարիչ մը իր մոդելի մասին: Արշակ ընկերոջ այդ վերաբերումը բացատրել կուզեր Տիրանի՝ իր նոր վեպովը կլանված ըլլալեն. բայց, Աստվա՛ծ իմ, միթե այդ կերպով կրնա՞ խոսիլ սիրով թրթռացող խորունկ սիրտ մը:

Մեյ մըն ալ կմտածեր, որ այդ հին սատանան էր իր մեջը խլրտողը, որ ինքը իր ներքին մաքառումեն կուրացած՝ ընկերոջը խոսքերուն ու վարմունքին մեջ անպատճառ պաղուիթյուն տեսնել կուզեր՝ իր ըրածին վրա զղջալու ու դեռ միշտ բոցավառ զգացումները արդարացնելու համար:

Վերջապես եղածը եղած էր: Հիմա կրնար ցրվե իր հոգին, իր ուշադրութիւնը. ամբողջ օրը հոս էր ու հոն. արդեն վերադարձին ալ հազիվ չաբաթ մըն էր մնացած, ու կարգադրելու ահագին գործ ուներ:

Բայց և այնպես դժոխային պահանջ մը կզգար Վերժինը գոնե տեսնելու, գոնե հեռուեն իր կարպարանքը նշմարելու: Գիշեր մը ուշ ատեն, իր կամքի ու արժանապատուիթյան բողոքներուն հակառակ, չկրցավ ինքզինքը զսպել և անգամ մը ծածուկ և զգույշ անոնց տան առջևեն անցավ. ներսը լուռ էր, թեև լույս կար: Ոչինչ տեսնել չկրցավ:

Այս անհաջող փորձի հետևյալ իրիկունն էր, որ բախտը ինքը օգնութիյան եկավ:

Արշակ երեկոյան Պոլսեն վերադարձին տեսավ դեռ բավական ժամանակ կար ընթրիքին. տուն ալ երթալու տրամադիր չէր. մտավ ծովանիստ սրճարանի մը սյարտեզը սուրճ մը խմելու:

Ժայռերու հսկա կուտակում մըն էր, որոնք չիտակ ծովուն գիրկը կիջնեին սեպ. և այդ ժայռերու ուսին նստած էր սրճարանին փոքրիկ շենքը. քովն ալ սիրուն ու պզտիկ պարտեզը՝ ծովուն կողմեն ժայռի ճիշտ եզերքին վանդակով մը շրջապատված, որուն հինցած կիսափուտ փայտերուն հետ իր հազարավոր կենսահորդ ոստիկներով պինդ կպրկվեր պատուտակը ու կմագլցեր վեր, պարտեզին վրա ցանցված քառակուսիներուն մեջ կոլորվեր:

Արշակ քաշվեցավ վանդակին մոտիկ ամենեն ծայրի սեղանը. ձեռնափայտն ու վերարկուն նետեց կից աթոռի կռնակին, ոտքը դրավ նույն

աթոռին նեցուկ ճողերուն և թևը հենած սեղանի եզրին՝ սկսավ դիտել ծովը: Ծովն ալ վարը քծնող ճողիկյունով մը կննտովեր ժայռի կուրծքն ի վեր, նորեն կսահեր վար, քիչ մը ետ-ետ կերթար և ուժ առնող բաշոտ կատվի մը ճարպկությամբ իր հարձակող ոստյունը կկրկներ:

Տղան խորասուզ կհետևեր ալիքներու այդ խաղին, երբ հոսհոսն մեկը ձայն տվավ.

– Պարոն Արշակ, Դուք դեռ Պոլի՞ս եք:

Արշակ ցնցումով պլուխը դարձուց ու ամուր զարկով մը սրտին կծկվիլը զգաց: Իր սեղանին կից կեցած էր բժիշկը, մինչ քիչ մը հեռուն իր վրա էին հառած մեկ անզամեն երեք կանանց աչքերը. անոնք նույնպես իր սեղանին կմոտենային. տիկին Պզտիկյանն էր Վերժինի ու անծանոթ ուրիշ օրիորդի մը հետ:

Տղան իր հուզումը զսպել չանալով՝ դուրս եկավ աթոռներուն մեջեն և եկողները հրամցուց: Թե ի՞նչ անցավ իր հոգիին մեջեն՝ ինքն ալ որոշ չդիտեր, երբ ամենքը բարևելու ժամանակ Վերժինի ձեռքին չոչափումը զգաց:

Մյուս օրիորդը ազգականուհի մըն էր, ներկայացուցին. երկու օրիորդները նստեցան իրարու քով՝ վանդակին առջևը, բժիշկն ու Արշակ՝ երկարավուն սեղանին մյուս ծայրը, իսկ տիկինը՝ երկու զույգին մեջտեղը:

– Ուրեմն Դուք Պոլիս եք դեռ, – կրկնեց բժիշկը, երբ տեղավորվեցան: – Այնքան երկար ատեն է չեք երևար, որ կարծեցի մեկնած կլլլաք:

– Առանց Ձեզմե հրաժեշտ առնելո՞ւ, – առարկեց տղան քաղաքավարությամբ: – Կմեկնիմ հինգշաբթի իրիկուն. բայց այնքան մանր-մունր գործեր ունիմ, որ...

– Բնական է, անշո՛ւշտ, – վրա բերավ բժիշկը հաշտարար շեշտով մը:

Տղուն մեջտեղ չերևալը բժիշկը իրենց վերջին տեսակցության կվերագրեր. կկարծեր, որ Արշակ քիչ մը վշտացած պիտի ըլլար, և միտքը դրեր էր իրենց վերստին հանդիպումին կերպ մը այդ տպավորությունը մեղմել: Այնպես որ չատ մտերիմ ու դեմ եկող զարկով մը սկսավ խոսիլ աջեն ու ձախեն:

Արշակ ալ հետզհետե սկսավ ինքզինքը գտնել. նույնիսկ երկու

անգամ աղջկան խոսք ուղղեց՝ աշխատելով իր ձայնին սովորական բարեկամական շեշտը տալ:

Արտասովոր լրջություն մը կար աղջկա դեմքին վրա, ու զարմանալի հանդիսավորություն մը՝ անոր ձայնին ու շարժուձևերուն մեջ. և իր նայվածքը գրեթե չէր հեռացներ ծովուն հետզհետե գորշացող մակերեսեն:

Եվ խոսակցությունը ամենուն կողմեն ալ սառն էր ու չինծու, Արշակ սկսավ նեղվիլ: Բարեբախտաբար երկար չտևեց: Քիչ մը ետքը տիկինը զով պատց, ու ամենքն ալ ելան մեկնելու:

Արդեն սկսած էր մթնել: Վերժին ձեռնոցները շտկելով՝ հովանոցը թևին տակ դեպի պարտեզին ելքը ուղղվեցավ, մինչդեռ մյուսները իրենց ժողովուրքով կառնտնային:

Արշակ նշմարելուն պես առաջ նետվեցավ:

– Օրիո՛րդ, Ձեզի ըսելիք երկու խոսք ունիմ. քիչ մը արա՛գ քալեցնեք,– կմկմաց իր հուզումին մեջեն, երբ Վերժինին հավասարեցավ:

Աղջիկը քովնտի նայվածք մը սահեցուց տղու դեմքեն և քայլերը արագացուց առանց ոչինչ ըսելու:

– Ես չգիտեմ ինչպես վարվիմ, – ըսավ տղան վճռաբար,– որ Ձեզի պատճառած անախորժ զգացումներս գոնե քիչ մը մեղմել կարողանամ: Խորապես կցավիմ...

– Ավելորդ աշխատանք է, – ընդհատեց աղջիկը հանկարծ հպարտ շեշտով մը: – Անցած անմտություններու մասին չեն խոսիր. և ցավելու ալ ոչինչ չկա. կյանք էր. բան մըն էր եկավ ու անցավ. մոռցե՛ք:

Կանգ առավ ու նայեցավ ետ, մինչև որ երկու քայլով մյուսները հասան իրենց:

Սրճարանի դռան դեմ Արշակ բարևեց խումբը ու բաժնվեցավ և պլուխը կախ կքալեր միս-մինակ իր շվար ու խառնակ մտածումներուն հետ:

Ուրեմն Վերժին այնքան ալ կոտրված չէր, ինչպես ինքը կերևակայեր: Բայց չէ՞ որ մինչև հիմա Արշակի ուզածն ալ աստիկա էր միայն. կտրել իրենց մեջ եղած կապը առանց աղջկան մեծ վիշտ մը պատճառելու:

Ո՛չ: Հիմա ան կզգար, որ իրեն համար մեծ մխիթարանք ու քաղցր էր եղած այն մտածումը, թե աղջիկը պիտի վշտանար, խոր ցավեր պիտի

պատահածին համար ու մոռնալ պիտի չկրնար: Հիմա տղան կզիտակցեր, որ իր վարմունքին մեջ նույնիսկ անպիտանություն ալ կար, կուզեր, որ աղջիկը նկատե ու հասկնա Արշակի ըրած հսկա զոհաբերությունը, և երկուքի համար ալ թանկագին հուշ մը ըլլա իրենց մեջ պատահածը: Բայց ահա՛ ինչ արդյունք էր ստացված. Վերժին ըստ երևույթին այնքան ալ ազդված չէր երևար իրենց մեջ եղած կապի խզումեն: Եվ այս մտածումը շատ ծանր ու դժվար կրելի բան մը ուներ իր վրա:

Մյուս կողմեն Վերժինի հպարտ կեցվածքը, հատու խոսվածքը և անոր նայվածքին ու շարժումներուն լուրջ հանդիստը ներքին առավելություն մը վստահություն կմատներ. և աղջկան ձայնը հիմա կարծես բարձրեն կուգար: Այս ամենը Վերժինի վրա նոր էր Արշակի համար. պատկառանքի պես բան մը կզգար. մինչև հիմա միայն համակրանք էր տեսեր, համակերպում ու ընդառաջում. մեկ կողմեն միայն տեսեր էր աղջկան հոգին:

Աղջիկը կբարձրանար ու կբարդանար իր աչքին, մինչ ինքը կպզտիկնար ու կխոնարհեր բոլոր իր զոհաբերություամբ, բոլոր իր ազնիվ վարվելու բծախնդրություններով: Այո՛, կիյնար ինքն իր աչքին. ի՞նչ մնծ ազնվություն ու քաջություն էր վերջապես ըրածը. իր ընկերը չհարվածելու համար հարվածել էր իր ընկերուհին:

* * *

Արշակենք դեռ ընթրիքի էին, որ եկավ Տիրան:

Ճաշի սեղանին մոտիկ աթոռի մը վրա ձիու պես հեծավ, սկսավ խոսիլ ու ձեռքի փայտին հետ խաղալ:

– Ինչո՞ւ այդպես քիթդ կախ է, – հարցուց ընկերոջը խոսքի ընթացքին:

– Հոգնած եմ:

– Գործերդ կարգադրեցի՞ր:

– Դեռ ո՛չ բոլորովին:

Հաղիվ էին սեղանեն ելեր, որ Արշակ առաջարկեց քրոջը դաշնակ նվագել, ինչպես միշտ կըներ, երբ տրամադրությունը տեղը չըլլար:

Ելան վերի հարկի սրահը. առանց լույս վառելու քույրը անցավ

նվագարանին առջևը, իսկ տղաքը մտան քովի հյուրասենյակը ու փռվեցան մեյ-մեկ բազկաթոռի մեջ իրարու քով:

Նվագը սկսավ: Անոնք երկուքով լուռ էին ու կլսեին: Բայց երկար չտևեց: Տիրան հանկարծ նորեն դարձավ ընկերոջը.

– Ուրեմն հինգշաբթի իրիկուն մեկնիլդ վերջնականապես հաստատ է:

– Տոմսակս առած եմ:

– Այսօր ի՞նչ է:

– Երկուշաբթի:

– Երանի՛ քեզի. նորեն կերթաս. մենք փտեցանք: Մեղքս ի՞նչ պահեմ՝ կնախանձիմ. չան բախտ ունիս: Եվ քեզի նախանձողը միայն ես չեմ. Վերժինի գլուխն ալ պտույտ ես տվեր. ան ալ հիմա իրար է անցեր համալսարան երթալու համար:

– Ո՞վ ըսավ քեզի:

– Անցած իրիկուն անոնց էի. չատոնց էր՝ չէի գացած, պետք էր անգամ մը երևալ: Բժիշկը հայտնեց ինծի կատակով, բայց քրոջը խոսվածքը այնքան ալ կատակի նմանութիւն չունի: Եվ ընդհանրապես, չե՞ս նկատած, այդ աղջիկը վերջին ժամանակները շատ է փոխվեր. տեսակ մը վեհափառութեան, վսեմութեան հովեր կփչեն վրայեն, պաղ հովեր. տեսակ մը այնպես լուրջ ըսեմ, մտազբաղ ըսեմ, քիթը բարձրացած ըսեմ. չիտակը չեմ ախորժիր:

– Այսինքն՝ իբրև թե:

– Ինչո՞ւ համար «իբրև թե». առանց «իբրև թե»-ի:

Արշակ բազկաթոռին մեջ հանկարծ չտկվեցավ, մուրին մեջեն նայեցավ ընկերոջը և կտրուկ չեչտով մը ըսավ.

– Սիրելի՛ս, այս կատակերգութեան պետք է վերջ մը դնե՞նք, թե չէ. չէ՞ որ երկուքս ալ իրար շատ աղեկ կհասկնանք;

– Ի՞նչ կատակերգութիւն, – հարցուց Տիրան հանկարծ բոլորովին լրջանալով:

– Հիմա դուն ինծի հավատացնել կուզես, որ այդ աղջիկեն ո՛չ հիացած ես եղեր, ո՛չ ալ կհիանաս, հա՞:

– Հիացա՞ծ: Որ ժամանակ մը իրմով քիչ մը հափշտակված էի՝ չիտակ է. երևի նկատեր ես. արդեն ծածկած ալ չունեի. բայց ատկե ի՞նչ

կելլե՞: Չէ՞ որ ատեն մը դուն ինքդ ալ հաւիշտակված էիր. կհիշե՞ս ան իրիկունը, ինչեր ըսես չէիր ըսեր, որ Վերժինը մեկ հատիկ է, ահագին ուժ կա իր մեջը և ալ ինչ գիտնամ: Վերժինի կրթութեան և բնաւորութեան աղջիկները այդպես են արդեն. ամեն հանդիպողի վրա տպաւորութիւն կընեն, և երևի ատոր համար ալ քիթերնին կմեծնա. միայն դժբախտութիւնը հոն է, որ այդ տպաւորութիւնը քանի մը շաբաթեն ավելի չի տևեր:

– Ատիկա իզուր կպնդես,– նկատեց ընկերը սանձված ձայնով մը:

– Ինչո՞ւ «իզուր». ահա՛ քեզի հետ ալ նույնը եղավ, ինծի հետ ալ:

Արշակ չարժուեմ մը ըրավ և անսովոր խորունկ ձայնով մը, որ կդղդար, կցնց.

– Տիրա՛ն, հերի՛ք իրարու խաբեցինք. ալ չարունակել չեմ կրնար և չեմ ուզեր այս ապուշ խաղը: Իբրև ընկերդ կպահանջեմ քեզմե կարճ ու հատակ՝ այս բոլոր ըսածդ քու անկեղծ զգացո՞ւմդ է:

– Անչո՛ւշտ, ատ ի՞նչ ավելորդ հարց է. և այդ հանդիսավոր խոսվածքդ ինչացո՞ւ է:

– Աղե՛կ, այն ատեն գիտցի՛ր, որ կսխալիս: Ես ինքս սիրած եմ այդ աղջիկը, լո՛ւրջ, և մինչև հիմա ալ կսիրեմ. ե՛ս. կհասկնա՛ս:

– Ա՛խ...– դուրս թռավ Տիրանի կրծքեն: Եվ մութին մեջ ընկերոջը դարձած ավելցուց վարանոտ, – բայց չէ՞ որ, կըսեիր...

– Թո՛ղ, եղբա՛յր, – ընդհատեց Արշակ, – հերիք է, թողնե՛նք այդ անիծած «կըսեի-կըսեի»-ները:

Տիրան վայրկենաբար հասկցավ ամեն բան, ընկերոջը մաքառումները, իր զգացումները զսպելը, կրած տանջանքը. չէ՞ որ ինքն ալ դեռ նոր էր անցեր այդ դպլոցեն: Եվ բառ մը, մեկ բառ մը միայն դուրս սայթաքեցավ իր ակռաններուն մեջեն:

– Ներ՛-ենթ:

Եվ այդ մեկ բառին մեջ որչափ կարեկցութիւն, սրտակցութիւն և դառնութիւն կար միևնույն ժամանակ:

Դուրսը նվագը կշարունակեր: Լուռ էին երկուքն ալ: Վերջը Արշակ պատմեց համառոտ այդքան ժամանակ իր սրտին վրա դիզվածը, միայն լռեց կղզիին դարձեն ի վեր պատահած դեպքերու մասին:

Տիրան թաղվեր էր իր բակաթոռին ու մտածումներուն մեջ: Նոր լուրի առաջին ազդեցութենեն կազդուրված՝ հիմա իր վրա տարօրինակ տպավորություն մը կըներ ընկերոջ խոստովանությունը: Եվ ինքը, որ այդ աղջկան մասին վառ զգացումներ ունենալե արդեն դադրած էր լոլորովին, հանկարծ նախանձի պես բան մը զգաց:

Եվ այդ ուշ մնացած զգացումը կատակի մը մեջ խեղդել ուզելով՝ դարձավ ընկերոջը.

– Է՛, սիրելի՛ս, ուրեմն բարի հաջողո՛ւմ: Իսկ եթե պատահի, որ գործին թուղդ պաշտոնական ձևեր տալու միտք ունենաս, չմոռնաս, որ ես մինչև հիմա ինչպես իր վիպահայրը եղա, կրնամ ասկե ետքն ալ իր կնքահայրը դառնալ:

– Հիմա՛ր, – ժպտեցավ Արշակ և նույն վայրկյանին որոշեց ինքն իր գլխուն մեջ, որ առտուն կանուխ կերթա ու ամեն ինչ բաց ու պարզ-սիրտ կհայտնե Վերժինին ու կսրբագրե այս տխմար թյուրիմացությունը:

* * *

Բայց երբ առանձին մնաց և երբ ամբողջ անքուն գիշեր մը ամեն ինչ ու ամեն կողմեն հիմնովին նորեն մտածեց, տեսավ, որ հարցը այդպես պարզ ալ չէր: Եվ որ իր սրտբաց խոստովանությունը աղջկան վրա, ընդհակառակը, ավելի գեչ տպավորություն պիտի ըներ: Չէ՞ որ խորքին մեջ աղջկա սերն ու սիրտն էր, որ ոտքի տակ էր տվեր ընկերոջ մը համար: Եվ հիմա ինքն ալ կդժվարանար հասկնալու, թե իրավ ինչպե՞ս կրցեր էր առնել այդ աստիճան անմիտ քայլ մը:

Մտքին մեջեն ամեն կերպ դարձուց ու դարձուց, թե ի՞նչ ըսե, ինչե՞ս ըսե, ի՞նչ բառերով, որ իր աններելի հանցանքը գոնե քիչ մը մեղմե: Այո՛, կզգար հիմա, կհասկնար, որ իր ընկերական պարտավորություն ու անձնազոհություն անվանածը պարզապես հանցանք մըն էր. հանցանք մը աղջկան դեմ, հանցանք մը իր դեմ, հանցանք մը կյանքի ու սիրո դեմ:

Աստվա՛ծ իմ, ներում ունենալ կրնա՞ այդ տեսակ հանցանք մը: Կարելի՞ բան էր, որ նորեն կարկտել կարողանար ինքն իր ձեռքով պատռտած ու փեթռտած այն նուրբ զգացումները: Կարելի՞ բան էր վերադարձը հին բախտավորության:

Բայց ինչ կուզե ըլլա, կզիտակցեր, որ իր պարտքն էր հայտնել Վերժինին ամեն ինչ առանց որևէ աքողումի ու վերապահութեան և անմիջապես: Եվ առաջ վրա էր նաև իր միակ հույսը. գո՛ւցե. ո՞վ պիտի: Իր բոլոր սխալներուն, իր բոլոր սուտ ու ծուռ վարմունքին մեջ կզգար, որ ուներ գոնե մեկ ճշմարիտ ու խոր առավելութիւն մը. ինքը սիրած էր միշտ խոր ու սրտագին ու ամբողջ ժամանակը տատապած էր ինքն ալ. և որ հիմա ալ կսիրեր խոր ու սրտագին, և իր իսկական բախտավորութիւնն էր կշտութի դրված. այդ կշտութի նժարին վրա այս ճշմարտութիւնը լուրջ արժեք մը կմնար դեռ միշտ:

Նախաճաշի ժամանակին քիչ մը եաքը Արշակ վճռական քալվածքով ուղղվեցավ դեպի Պզտիկյաններուն տունը, ու իր վճռականութիւնը տեսակ մը վստահութիւն ներշնչեց տղուն: Եվ ներքին զսպված լարումով մը քաշեց դրան զանգը:

Դուռը բացողը ինքը Վերժինն էր, որ զարմացած ու հարցական դէմքով մը տղուն կնայեր՝ ձեռքը ընազդորեն կրծքին դրած: Տանու պարզ շրջազգեստ մը հագած էր, սև գոգնոց մը վրայեն. մեջքը լայն կաշի գոտի և մազերը թույլ հյուսք մը ըրած՝ նեռած էր թիկունքին. կարծես դպրոցեն կուգար:

– Բարի եկա՛ք, խնդրե՛մ, – լսավ վերջապես լուրջ ու քաղաքավար բարևով մը և ավելցուց, – մայրս այսօր դժբախտաբար Պոլիս իջավ սպասուհիին հետ, իսկ եղբայրս կարծեմ դեռ նոր ելլելու վրա է անկողնեն. գիշերը հիվանդի էին կանչած: Հրամեցե՛ք ներս, մինչև եղբայրս գա:

Եվ առաջնորդեց կից սենյակը:

– Օրիո՛րդ Վերժին, ես եկած եմ Զեզի համար, – եղավ տղու առաջին արտասանած խոսքը, դեռ ոտքի վրա, սենյակ մտնելուն պես, – եկած եմ Զեզի շատ կարևոր երկու խոսք ըսելու:

Վերժին կանգ առավ դեմը ապաստղական:

– Ինչպես դիտեք, երկու օրեն մեկնելու եմ ես, – սկսավ տղան, – բայց չեմ կրնար մեր հարաբերութիւնները այսպես բզկտած ձգել ու երթալ. պարտք կզգամ բացատրելու Զեզի այս բոլոր անիմաստ անտեղութիւններուն իսկական պատճառը, որ ամեն ինչ պայթվի...

Վերժին հանկարծ բոլորովին գունատ մեկ ձեռքը հենց կից սեղանին և աչ ձեռքի կտրուկ շարժումովը ընդհատեց անոր խոսքը.

– Խնդրեմ, ո՛չ մեկ բացատրություն չեմ ուզեր ես Զեզմե. և ո՛չ մեկ բացատրություն պարտական չէք Դուք ինծի տալու: Կխնդրեմ ես Զեզմե միանգամ ընդմիշտ. այլևս ոչ մեկ խոսք այդ արդեն չատոնց մեկդի դրված անցյալի մասին:

Աբշակ քարացած նայեցավ աղջկա դիրքին, դեմքին ու խոսվածքին և անփոխարինելի կորուստի մը ճանկռտուքը զգաց սրտին վրա. բայց և այնպես հուսահատ ճիգ մը ըրավ.

– Թողե՛ք խոսիմ, գուցե...

– Խնդրե՛մ, ո՛չ մեկ խոսք, – կրկնեց աղջիկը հատու:

Այս անգամ արդեն տղու ինքնաիրավությանը դիպավ: Վերջացած էր ամեն ինչ. իր կողմեն որևէ նոր քայլ նվաստացում միայն պիտի ըլլար:

Ակնթարթ մը լուռ երկուքն ալ կնայեին իրարու:

Վերժին զգաց, որ իր վարմունքը չափեն ավելի խիստ եղավ, և կարծես տպավորությունը քիչ մը մեղմելու համար և քիչ մըն ալ տիրող անախորժ լռությունը պատռելու համար ըսավ կես քաղաքավար ու կես համառ կերպով մը.

– Ես միշտ խորապես չնորհակալ պիտի մնամ Զեզի, որ դրդում տվիք իմ համալսարան երթալուս:

– Թույլ կուտա՞ք ինծի, որ հետաքրքրվիմ. ի՞նչ վիճակի մեջ է հարցը:

– Մնծ դժվարությամբ, բայց եղբայրս վերջապես գրեց իր ընկեր գերմանացի բժիշկի մը, որ հիմա Հայդելբերգ ընտանիք ունի եղեր, խնդրելով, որ կա՛մ իր, կա՛մ իրեն մոտիկ ընտանիքի մը մեջ ինծի տեղավորել կարողանա:

– Անչա՛փ ուրախ եմ, օրիո՛րդ Վերժին,– բացականչեց տղան սրտին խորքեն. իր ամբողջ հուզումն ու բոլոր չըսված բաներն էին խտացած այդ բացականչության մեջ:

Աղջիկը ակամա թեթև մը պուխը թեքեց:

– Անշուշտ մեկնելես առաջ կուգամ Ձեր ընտանիքին հալգանքս հայտնելու: Թո՛ղ տվեք, որ Զեզի այլևս նեղություն չպատճառեմ:

Գլխով խոնարհություն մը ըրավ ու ելավ սրահը: Վերժին ընկերացավ մինչև տան դուռը, ուր երկուքն ալ նորեն անգամ մը պխով թեթև մը բարևեցին իրար առանց բառ մը արտասանելու, և դուռը գոցվեցավ:

Եվ միայն այդ ժամանակ Վերժին ազատ ընթացք տվավ իր կեղեքված հոգիի ամբողջ ցասմին: Քայլ մը ետ դնաց դուռնեն, ինկավ առաջին պատահած աթոռին վրա և հուսահատ սկսավ լալ առատ արցունքներով՝ իր ակռաներուն ու շրթներուն մեջ ամուր սեղմած այդ անպիտան տղուն անունը:

* * *

Սոսկալի իրարանցում էր Սիրքեճիի կայարանը. արևելյան ճեպընթացը մեկնելու վրա էր: Հրմշտուք, վազվզոց, պռատալ, ազմուկ, ծիծաղ, արցունք: Կույտ-կույտ խումբեր, վագոններուն պատուհաններուն առջևը կեցած, իրենց ճամփորդին վերջին կատակ մը, վերջին նվեր մը, վերջին ձեռքի սեղմում մը կուտային:

Հնչեց երրորդ զանգը:

– Արշա՛կ, ծուլություն չընե՛ս, հա՛. ամեն գլխավոր կայարանե բացիկիդ կպաս և մանրամասն, – կրկնեց անդամ մըն ալ Մաննիկ՝ աչքերովը եղբոր դեմքը գրկած:

– Վիեննա Լևանին անմիջապես կհանդիպիս. լսե՛, որ գրածս չուտով պրկի, – հանձնարարեց Տիրան:

– Զգո՛ւյշ եղիր, տղա՛ս, երկու պատուհաններուն մեջ մի՛ կենար, բայց պատուհանի տակ չքնանա՛ս, – կպատվիրեր մայրը աչքերը սրբելով:

– Բառարանը չմոռնա՛ս, բառարանը, – պոռաց անդիեն ուղարկ եկող ընկերներեն մեկը:

Գնացքը շարժվեցավ:

– Մնաք բարո՛վ, մնաք բարո՛վ, –բացականչեց Արշակ պատուհանեն կախված, հուզումեն դողացող ձայնով մը, նվաղկոտ ժպիտ մը շրթունքին:

Եվ պատուհանի եզրին հենած՝ կնայեր խումբին, որ կայարանի առաստաղեն հոսող լույսերուն տակ ողողուն, բարակ այտնի մը քով իրարու սեղմված՝ իրեն ձեռքով ու պմոով կընեին: Վերջին տեսածը մորը թաչկինակն էր ու քրոջը ձեռքը, որ օդի համբույր մը կպրկեր:

Ճեպընթացը կայարանի լույսերեն դուրս սողաց ու մեկեն խրխնջալ պիչերվան մուխին մեջ: Տղան ընդարմացած կեցած էր անշարժ՝ ճակատը պատուհանի եզրին: Իր աչքևեն ետ կահեին երբեմն երկար շարքերով

պարապ կեցած վագոններու ստվերագծեր, որոնց ապակիները, սակայն, իր վագոնի վառ լույսերուն մեջ կցոլցլային:

Բայց Արշակ ոչինչ չէր տեսներ, դեռ միշտ նույն պատկերն էր աչքերուն դեմը՝ սև գլխարկին տակեն մորը ճերմակ մազերն ու արցունքոտ աչքերը և ճերմակ գլխարկին տակեն քրոջը սև մազերն ու վառվող աչքերը:

«Բայց պատուհաններու մեջ չկենաս», – հնչեց հանկարծ մորը ձայնը ականջին: Արշակ նայեցավ ետին. կուպեի դուռը գոց էր, և ինքը մինակ էր իր բաժանմունքին մեջ: Նետվեցավ բազմոցին անկյունը, աչքերը գոցեց. սաստիկ հոգնած էր ամբողջ օրվան վազվզուքեն ու տպավորություններեն, որոնք հիմա խառն հոսանքով ու իրար ընդհատելով կանցնեին տղու հիշողության մեջեն:

Բայց բոլոր հուշերը իսկույն ետ քաշվեցան, երբ նորեն իր դեմն եկավ Վերժինի իրեն նետած վերջին հայացքը և այդ վերջին հայացքին հետ ցերեկվան մնաք-բարովի տեսարանը Պզտիկյաններուն տունը: Եվ տղան ավելի կենդանի ամեն ինչ պատկերացնելու համար երկու ձեռքով ալ ամուր սեղմեց իր գոց աչքերը:

Տիկինը, որ սենյակի դռան կռթնած, բարի ճանապարհ ու հաջողություն կցանկար և իր խոր կարեկցությունը կհայտներ Արշակի մոր համար՝ վստահացնելով, որ շատ աղեկ կհասկնար անոր այսօրվան հոգեկան վիճակը. «քաշողը դիտե»:

Բժիշկը կեցած էր սրահին մեջ ու ժպիտը շրթունքին խորհուրդ կուտար օգտվիլ ուսանողի տարիներեն, որոնք ալ երբեք ետ չեն դառնար. կպնդեր, որ անպատճառ գոնե ձմեռ մը Փարիզ երթա ու համառությամբ կհանձնարարեր հյուրանոց մը, որուն անունը արդեն թռեր էր տղու գլխեն:

Մինչ Վերժին ճիշտ իր դեմը և իրեն պես սենյակի դռան առջևը կեցած՝ առանց բառ մը ըսելու, ձեռքը դռան կանթին, շրթունքները պինդ կծկած, քանի մը ըմբոստ զանգուր ճակտին, որոնց տակեն այն զույգ մը հրաշալի ու խելացի սև աչքերը անթարթ իրեն կնայեին՝ չեչտակի, թափանցող, չոյող, սիրահորդ նայվածք մը: Ո՛չ, այդպես չի նայիր անդին նետված զգացումը: Այդպես կրնա նայիլ միայն խորունկ սերը:

Ամբողջ կես օր էր անցեր այդ վայրկյանեն և այդ կես օրը հուզում-

ներու կարավան մըն էր եղած, բայց այդ բոլոր ցնցումներուն ու տակնուվրայութեան մեջ այդ նայվածքը ա՛լ իր հոգիեն չէր բաժնվեր ու կխայթեր, չարունակ կխայթեր աղատ ակնթարթ մը գտածին պես. և՛ ցավցնող, և՛ անուշ խայթ մը:

«Ո՛չ, ո՛չ դեռ ոչինչ վերջացած չէ: Վերջացա՞ծ: Ալ վերջ չկա՛ մեր հոգիներու այս կապանքին», – բացականչեց Հանկարծ բարձր, բացավ աչքերը ու թռավ ոտքի:

Գնացքի երկու կողմեն առատ լույսեր ետ-ետ կփախչեին. դուրսեն բազմութեան, առուծախի խառն ու խուլ աղմուկ մը սլացող վագոնի պատուհանեն ներս կնետվեր:

Արշակ դուրս նայեցավ, Սամաթիայի մեջեն կանցնեին: Ջայները արագ մարեցան, հեռուհեռե և՛ լույսերը, և՛ մութը գրկեց նորեն շրջապատը: Քանի մը վայրկյան վերջ Մաքր-գյուղի առջևեն էին անցնելու: Տղան մնաց պատուհանը. և հովեն պատսպարվելու համար քիչ մը քաշվեցավ՝ դեպի իրենց գյուղին կողմը կնայեր, մինչ գլխուն մեջ մտածումները իրենց նոր ուտայնը կհյուսեին:

Հիմա տեղ հասնելուն պես կնստի ու կգրե: Ինչ. ո՛չ. գրել պետք չէ. անձա՛մբ, աչք-աչք. աղջիկը Հայդելբերգ հասնի թե չէ, կիմացնե ու կերթա ետևեն. հոն ամեն ինչ կխոսին, բաց, առանց զգացումները դիմակավորելու: Հավանորեն հաջորդ կիսամյակը, փոխանակ Մյունխենի, ինքն ալ կանցնի Հայդելբերգի համալսարանը կամ գուցե աղջիկը կբերե Մյունխեն, և ալ կաշխատին ձեռք ձեռքի. ինքը անձամբ կտանի դասախոսություններուն իր թևը առած, և ուսանողները սքանչացած աչքերով կդիտեն անցնելու ատեն «գեղեցիկ հայուհին»:

«Ինչ տարօրինակ են սա Արևելքի աղջիկները. իրենց համալսարանները թողած՝ այսչափ հեռուները եկել գալ՝ Աստված գիտե ո՛ր վիրտեսորը լսելու համար»:

Դուրսը՝ վագոնի նեղ միջանցքին մեջ, ուժով մը մեկ-երկու դուռ բացվեցան ու գոցվեցան: Տղան ցնցվեցավ, նայեցավ շուրջը, և իսկույն չքացան աչքերուն առջևեն Մյունխենի համալսարանին հին ու լայն կամարները պահոց հաստ սյուները, անոնց տակ խռնած ուսանողները՝ գույնզգույն գլխարկներով, անբաժանելի սև-կափարիչ տետրակները թևերուն տակ և «գեղեցիկ հայուհին» ալ իր թևին տակեն:

Վագոնին մեջն էր, միայնակ, իսկ «Հայուհին» հոն, իր դիմացը փայլփլող հրագներու խումբին մեջ, դեպի ուր ճեպընթացը կսլանար: Երևակայութենեն իրականին դառնալը սթափեցնող տպավորություն ըրավ տղու վրա, և նախորդ վայրկյանի զվարթ վստահության վրայեն երկմտության ամպը անցավ:

Այն վերջին նայվածքն ալ արդյոք պատրանք մը չէ՞ր, որուն վրա հիմա իր նոր վստահությունը կծլեր: Գնացքը կսուրար ծանոթ չենքերու քովեն: Արշակ աչքերը իրենց թաղի կողմերը նետեց:

Մայրն ու քույրը, գիտեր, որ դեռ տուն հասած չէին: Իսկ «ան», ո՞վ գիտե, նստած էր հիմա գուցե անպերեն գիրք մը ձեռքը, սեղանին ծայրը, լուսամփոփի լույսին տակ և արդեն մոռցված էր տղուն գոյությունը: «Մեկզի դրված անցյալ մը»:

Իրենց գյուղի լուսավորված փոքրիկ կայարանը ահագին չտապով ետ-ետ վազեց իր առջևեն:

«Մոռցվա՞ծ. իրա՞վ. միթե կարելի՞ բան է»:

Եթե միայն տեսնել կարողանար քանի մը քայլ իրմեն հեռու...

...Ուր կայարանի չենքեն քիչ մը վեր, լամպերեն հեռու, ցած ծառի մը տակ քաշված՝ կեցած էր աղջիկ մը քառորդե մը ի վեր՝ մինչև ոտքերը հասնող կրկնոցը վերեն վար կոճկած. գլխուն ձգած բարակ մետաքս շալը ետև էր գացեր, ու հովը ազատ կխաղար քունքերուն թափած մազերուն հետ: Աղջիկը ոչինչ չէր զգար իր դողացող անհամբերության մեջեն:

Ահա շողացին վարը մութին մեջ զույգ մը հեքիաթային աչքեր, որոնք կարծես չիտակ իր վրա կուգային: Սիրտը սկսավ տերևի պես դողդղալ:

Ուժգին հով մը փչեց հանկարծ դեմքին, գլխուն վրա մնացած շալը սահեցավ ուսին: Ու իրարու ետևե արագ իր աչքին առջևեն սլացան լուսավորված վագոնները: Եվ անցան: Հիմա կլոր կարմիր լույս մը միայն գնացքին ետևեն կնայեր. ուրիշ ոչինչ: Աղջիկը ուժասպառ մեկու մը պես կամաց մը կռթնեցավ ծառի բունին: Կարմիր լույսը կհեռանար, կպզտիկնար, կետ մը դարձավ ու մարեցավ:

«Գնա՛ց», – բացականչեց լսելի ծառին տակի ստվերը, արագ գլխուն քաշեց բարակ ծածկոցը և կայարանի քովեն փողոց անցավ:

Կայարանի մեջ աղմուկ կար, վողոցը՝ տեղ-տեղ երթևեկ, խանութի մը առջև առուտուր կընեին, տան մը բաց դռնեն բարձրաձայն ծիծաղ կլսվեր:

Վերժին տեսակ մը զարմանք զգաց. ինչպե՞ս կրնար այս կյանքը, այս չրջապատը մարդոց հաճույք տալ, զբաղում ու ծիծաղ. իրեն համար ալ ո՛չ մեկ հրապույր չկար հոդ, ո՛չ մեկ իմաստ:

«Շուտով, չուտով հոն, ուր մարդ իր ուժերուն տեր դառնալ կրնա. աշխատելու ու զարգացման. հոն, ուր է և «ան»:

Եվ գիխու ծածկոցին երկու ծայրերը ծնոտին տակ ավելի ու ավելի ամուր սեղմելով՝ մուխին մեջեն տուն կչտապեր վճռական քայլերով:

Շուտո՛վ, չուտո՛վ:

ԴԱՐՁ

Վեպ

Ա

Յորեկվան տաքը դեռ կոտրված չէր բոլորովին, ու ձին դժվար ու ծանր կքարձրանար:

Ճամփան պինդ փակած էր ձորի ճախ պատին ու պատին հետ միասին ինքն իր կողին վրա կծուվեր չերքեզի սուրին պես. ու միևնույն ժամանակ քիչ-քիչ վեր կսողար, միշտ վե՛ր, ձորի հատակեն դեպի խծկոնքի վանքը:

Մինչ ձիավորը քրտինքը սրբելով՝ ճամփու յուրաքանչյուր կոր տալուն ձիուն վրայեն դեպի առաջ կերկարեր կիսանդրին վանքին գմբեթները նշմարելու հույսով:

Ֆսան-քսանչորսի մեջ երիտասարդ մըն էր ան՝ ճերմակ տոքե պարզ հագուստ մը վրան. ճերմակ ալ քաղդրոք մը գլխուն, որուն տակեն դուրս կցայտեին գանգուրի մոտեցող սև, առատ մազերը, մորուքի սեղ փոքր, չեկ փունջ մը դունչին, ինքը միջահասակ ու նիհար, զույգ մը կենդանի, արտահայտիչ աչքերով, որոնք կսահեին հիմա ձորի երկու վայրի պատերն ի վեր, որոնց վրա երկնքի տաք-կապույտ կտոր մը եկեր, իր վրանն էր քաչեր:

Թեթև ոլոր մըն ալ, և վերջապես դեմն էր վանքը. հինգ մանրանկար եկեղեցիներ, գրեթե իրարու կից, իրարու թևի տակ, իրենցմե ամենեն մեծի չուրջը խռնված, և ատոնց փոքր ու փոքրիկ գմբեթներու ամբողջ երամը, չրջապատող ծառերուն մեջեն վիզերնին վեր երկնցուցած, հետաքրքիր նայվածքով եկվորը կդիտեին:

Կարծես լեռնական հսկա ուրուր մը իր ճագերուն հետ, որ ձորի ճախ կուրծքին, հո՛ն, դուրս ցցված ժայռտ հարթակին վրա դլեր էր իր ամեհի բույնը ծառերու տրցակին մեջ:

Ու չիտակ այդ ամեհի բույնը կմտներ հիմա ձիավորը՝ փնտրող նայվածքը իր չորս դին հածելով:

Եկեղեցիներուն ոտքը հին ու ցած պատ մը կերկննար, որուն դռան առջևը հազիվ էր հասած ձին, երբ գղգղված մազերով երկարահասակ, բորիկ և գլխաբաց պատանի մը սեմեն դուրս նետվեցավ:

– Բարև՛, հայր սուրբը վա՞նքն է:

– Հրամանք ես:

Ու մոտեցավ, առավ ձիուն սանձը:

Երիտասարդը ցասկեց թամբեն վար ու մոտավ արագ քակը, որու մեկ կողմը խումբի ավագ եկեղեցին էր, մյուս կողմն ալ մեկ-երկու հինգեկ հողե սենյակներ:

Եվ ճիշտ այդ սենյակներեն մեկու դուռն էր, որ ճռռաց հանկարծ իր սռնիներուն վրա, ու սեմի չրջանակին մեջ երևցավ պարթև հասակով թիկնեղ ծերուկ մը: Երբեմն սև, իսկ հիմա դեղինի ու կանաչի տարբեր աստիճանի բոլոր բաղադրիչ երանգները ներկայացնող կապա մը վրան, և խոշոր, կոշտ, գունավոր երեսսրբիչը ձեռքը, որով իր մինչև կուրծքը հասնող ալեխառն մորուքը կչորցներ:

Կեսօրվան քունեն նոր ելած ու դեռ բոլորովին չսթափած ուղեղով կլվացվեր մեքենաբար, երբ իր մենության վարժված ականջը դեռ հեռուեն սմբակներու տրոփը լսեց, և ուխտավորներու հաճելի գաղափարը իր գլուխը վերջնականապես թարմացուց:

Եվ հիմա գոհ ու բարյացակամ դեմքի արտահայտությունով մըն էր, որ իր խուցի սեմեն դուրս ելավ հյուրին դեմ, երբ իր անվան հարցվիլը լսեց.

– Աստված օգնական, հա՛յր սուրբ:

– Աստված օրհնե՛, որդի՛ս:

Երիտասարդը ծռեցավ, համբուրեց ծերուկի աջը ու գրպանեն մեծակակ նամակ մը հանելով՝ տվավ անոր:

Նամակը ըստ երևույթին ախորժելի տպավորություն չըրավ վարդապետին վրա. աչ ու ձախ դարձուց անգամ մը, դրավ մոտակա քարին ու ծանր չարժումով մը հանեց ծոցեն մաչված ու աղտոտ պատյան մը, որուն մեջեն ահագին ապակիներով հին ձևի ակնոցը դուրս քաշեց, ծանր-բարակ սկսավ ականջներուն անցընել:

– Ուրկե՞ կուգաս հրամանքդ,– հարցուց այդ բարդ ու դժվար աշխատանքի միջոցին:

– Էջմիածնեն, հա՛յր սուրբ, շատ բարևներ ունիմ ձեզի:

– Հը՛մ, չնորհակալ եմ. ղրկող, բերող ողջ ըլլան:

Ու դեմքը ավելի խոժոռեցավ. այդ նամակեն լավ հոտ չէր գար:

Վարժ ձեռքով դրված տողերը կարդալու քանի մը իզուր ջանքերե վերջը նամակը մեկնեց երիտասարդին.

– Մեկ հրամանքդ կարդաս, տեսնենք ինչ է գրած. ես ծերացեր եմ, աչքերս աղեկ չեն ջոկեր:

Տղան կարդաց. ընդամենը չորս-հինգ տող էր ու թուղթ պաշտոնական դարձվածքներով չարաղրված: Երեք վարդապետացուներ քանի մը օր խծկոնք էին մնալու, և Մայր Աթոռի վարչության անունով կհանձնարարվեր, որ հայր սուրբը անոնց ամեն կերպ լավ հյուրասիրության ցույց տա:

Ծերուկի դեմքը քիչ մը պարզվեցավ. չարիքը իր կարծածին չափ մեծ չէր:

– Ա՞տ է բոլորը,– հարցուց տարակուսանքով:

– Այո՛, հա՛յր սուրբ:

– Տիրացուներեն մեկը դո՞ւն ես:

– Այո՛, վարդապետացուներեն մեկը ես եմ,– սրբագրեց տղան «տիրացու» բառեն չատ չախորժելով:

– Իսկ մյուս տիրացուները ինչո՞ւ ետ մնացին,– չարունակեց վարդապետը կրկին իր ոճովը:

– Անոնք քանի մը օր ավելի ուշ պիտի գան: Խնդիրն այսպես է. անգամ մը Շիրակը միասին պտույտ տալ ու Անի երթալ էր միտքերնիս, անոնք որոշեցին Կողբի ու Երվանդակերտի վրայով Ախուրյանեն վեր ելլեն, բայց այդ կողմերը ես անգամ մը եղեր եմ, վճռեցինք, որ ես Ալեքսանդրապոլի վրայով հոս գամ ու սպասեմ, վերջը հոսկե միասին երթանք Անի ու Հառիճի վրայով անցնինք Ապարան:

– Բայց Շիրակը պտույտ տալու միտքերնիդ ի՞նչ է,– հարցուց վարդապետը կասկածամտությամբ:

– Այնպե՛ս, շրջիլ անգամ մը:

– Ջէ՛, երևի էջմիածնեն պաշտոն մը կունենաք, հէ՞,– ժպտեցավ ծերուկը ձախ աչքը կծկելով:

– Ի՞նչ պաշտոն, հա՛յր սուրբ, մենք դեռ միաբան ալ չենք, դեռ երկու ամիս վերջը պիտի ձեռնադրվինք: Իսկ Շիրակը պտտիլը, է՛, մեր հայրենիքի հին պատմական կեդրոններեն է, կուզենք ծանոթանանք:

– Հապա՛, նշանավոր վանքեր կան, մեր վանքն ալ շատ հին է ու շատ հայտնի: Որքա՜ն ժամանակ հոս մնալ է միտքերնիդ:

– Մինչև ընկերներս գան ու հանգստանան քիչ մը, մինչև հոս շուրջը պտտինք, երևի տասը օր կտևե:

– Լա՛վ,– ըրավ վարպապետը կտրած ձայնով մը:

Եվ ակնթարթ մը թաւ, ճերմակ ունքերը խաղցնելեն վերջը ավելցուց.

– Միայն թե, որդի՛ս, այս տարվան արուտները այնքան էլ աղեկ չեն հոս, անասուններն ալ տեսակ մը լինկած են, կաթերնիս ալ քիչ է, ասիկա աչքի առաջ ունեցեք, թեև իհարկե Աստծու տվածեն ինչ որ ունիմ, ձեզմեն չենմ խնայեր: Աս ալ կա, որ վգիս արդեն ամբողջ տուն մը հյուր ունիմ, անշուշտ իրենց ուտելիքը իրենք կեփեն, բայց վերջապես...

Եվ չգիտեր ինչպես վերջացնե իր կրած բեռի ծանրությունը հնար եղածին չափ խոշոր ցույց տալու համար, թեև այդ «իր վիզը» ունեցած տուննեն ամենեն ավելի ուրախ էր. նախ վստահ էր վերջը մեծակակ դրամական նվեր մը ստանալու, այլև հաճախ կստանար անոնց խոհանոցեն քաղքի կերակուրներ:

– Ինչ հյուրեր են,– հարցուց երիտասարդը:

– Ալեքսանդրապոլեն, ուսումնական մարդ է, ոտքի ցավ ունի, եկեր է ծծումբի ջուրը լողալու, սիրուն կնիկ մը ունի, շատ լավ մարդիկ են, շատ ալ երևելի, լեզուն բերնին մեջ կդառնա, բոլոր օրենքներուն խորը տեղյակ: Ան որ չըլլար, վերի դաշտի ալոտատեղին արդեն հիմա ձեռքես խլած կըլլային Սալոյի լամուկները. անցած աշնան էր, դատարանը վերջապես մեր վանքին վրա վավերացուց: Ջէ՛, շատ հայտնի մարդ է, կարելի է լսած ըլլաս՝ Նիկողոս Քանյան:

– Քանյա՞ն, էջմիածին ընկեր մը ունիմ Ալեքսանդրապոլեն՝ Քանյան, կարելի է անոնցմե է, վերջը երթամ տեսնեմ:

– Գնա՛, գնա՛, ուսումնական մարդ է,– վրա տվավ ծերուկը աչխույժ ու գոհ շեշտով մը:

Այս խոսքերուն հետ առաջնորդից տղան իր խուցին կից ցած տնակ մը ու դուռը հետ հրեց:

Փոքրիկ հողահատակ սենյակ մըն էր, ուր փայտե երկար թախտեն ու փորփրած հասարակ սեղանե մը զատ ոչինչ չկար:

– Ահա՛ աս ալ քեզի ձեր սենյակը. ես հիմա կերթամ մնացած պետք եղած բաները կուղարկեմ:

Երիտասարդը առանց ոչինչ ըսելու հայացք մը ձգեց իր շուրջը այդ վով, հող հոտող ու քիչ մըն ալ փլփլած խրճիթին մեջ և իսկույն մոտեցավ սենյակի միակ պատուհանը բանալու, որու ապակիին կեսը թուղթ էր փակցված:

Հազիվ պատուհանը բացած՝ կանգ առավ հափշտակված:

Սենյակը նստած էր սեպ ու ամեհի ապառաժի շրթունքին ու չիտակ ձորի դատարկութեան վրա կնայեր: Հանդիպակաց ձորափեն ժայռի ահագին բեկորներ իրենց խոտոչներեն դուրս կնետվեին հոխորտանքով՝ հարու տալու սպառնալիքով մը իրենց մամռոտ գլուխները քիչ մը վար հակած. մինչ այդ դատարկ սպառնալիքին արդեն չատոնց վարժված, նույն այդ ժայռերու ոտքին, ցիր-ցան ծառերու խումբ մը հանգիստ կօրօրեին իրենց վերին ճյուղերը՝ վերադարձող ստվերներու զովութեան մեջ խլրտուն: Ախորժ լռութիւն մը վերն ու շուրջը, որուն մեջեն ավելի թունդ ու ավելի հստակ չեչտերով կորոշվեր գետակի միապաղաղ ու ճոռոմ մենախոսութիւնը, որը երբեմն կսուլեին ծառերը անդիեն՝ ավելի ճանճրութեն, քան հեգնելու համար:

– Հավնեցա՞ր,– հարցուց վարդապետը ժպտուն:

– Հիանալի՛ է,– բացականչեց տղան աչխույժ՝ ետ դառնալով իր հյուրընկալին:– Այսպե՛ս ձորերուն մեջ, գետին վրա, ժայռերուն դեմ, ջրերու օրորին տակ. չէ՛, աս ալ ուրիշ բան է, ամբողջովին բնութեան պիրկը, ճշմարիտ, հա՛յր սուրբ, կնախանձիմ ձեր կյանքին:

– Հը՛մ,– ըրավ վարդապետը անտարբեր չեչտով մը:– Հիմա հանգստացիր քիչ մը, հոգնած կըլլաս, ես ալ անպամ մը ելլեմ վեր՝ արտը, տեսնեմ չան գյուղացիք ի՞նչ բանի են, մարդ որ աչքը վրանին չպահե՝ վանքը կկողպտեն ծույլ անպիտանները:

Եվ սեմեն ետ դառնալով՝ պոռաց.

– Գրիգո՛ր, տիրացուին իրեղեննները ձիու վրայեն նե՛րս բեր ու ձիուն առջևը դարմա՛ն նետե:

Ու իր բարձրագոչ հրամանին արձագանքը ձորի պատերուն մեջ դեռ չկտրված՝ մտավ իր խուցը:

Ասով ալ վերջացավ «տիրացու»-ի պաշտոնական ընդունելութիւնը:

Բ

Վանքեն դուրս, վանքեն քիչ մը ավելի բարձր և ըստ եբևույթին նոր շինված հյուրասենյակներեն երկու ամենալավերը հատկացված էր Քանյաններուն:

Անբիծ ճերմակ սփռոցով փոքր սեղանին մոտիկ դեմ դեմի նստած էին պարոն Նիկողոսն ու տիկինը ու պարոնի մոտն ալ՝ նորեկ վարդապետացուն:

Սամավարը ուրախ կչնչեր սեղանին մյուս անկյունը, ու չոգին բաժակներուն վրայեն թեթև-կոր գիծով մը դեպի բաց պատուհանը կծռեր:

Մութը սկսեր էր խտանալ, տիկինը լամպը վառեց:

Երեսունհինգի սահմաններուն վրա լայնաթիկունք, նիհար, երկար մարդ մըն էր պարոնը: Առաջ սև մորուքը վար կախված երկար բեղերուն հետ միասին դեմքին խիստ արտահայտություն մը կուտար, որուն տարօրինակ կերպով կհակասեին ժպտուն ու բարի աչքերը:

Հազիվ կես ժամ կար, որ ծանոթացեր էին իրարու, միայն պարոն Նիկողոսի վարմունքին ու ձայնին մեջ այնպես պարզ շեշտ մը կար, որ պաշտոնական հարաբերութեան անմիջական մահն է: Խոսեր էին վանքի կյանքի, դպրոցի ու իր եղբոր զավկի մասին, վարդապետացուի անցյալեն, ներկայեն ու անոր ապագայի դիտավորութիւններեն: Դուրս էր եկեր, որ պարոնը ծանոթ էր մեր արդի դրական-հասարակական կյանքին, եղած էր նաև շատ մը վանքեր ու անձամբ գործ էր ունեցած բազմաթիվ հոգևորականներու հետ և, ինչպես կերևար, այնքան ալ մեծ համակրանք չուներ դեպի այդ դասակարգը:

Խոսակցութեան տաք ատենն էր, որ դուրսեն կանացի սուր ձայն մը լսվեցավ, ձիգ երգող ձևով մը տիկնոջ անունը կկանչեր.

– Մա՛րի:

– Եկո՛ւր, եկո՛ւր, ո՞ւր մնացիր այսքան ուշ,– պոռաց տիկինը՝ դեպի պատուհանը դառնալով:

Երգ մը մղտալով՝ ստվեր մը անցավ արագ պատուհանին առջևեն,

և ակնթարթ մը վերջը սենյակ մտավ դեռատի աղջիկ մը իր երգին հետ միասին. նկատեց անծանոթը ու կանգ առավ իսկույն՝ առնական կեցվածքով մը:

Միջահասակ, լեցուն, առույգ մարմին մը, չափազանց տիկնոջ նմանող կլոր դեմքով, միայն ավելի թարմ ու ավելի հպարտ արտահայտութիւնով, առանց դիխարկի ու մանչու պես մազերը կարճ կտրած, մուխ գոյնի շրջազգեստ մը վրան ու մեջքը լայն կաշի գոտի:

– Եկուր ծանոթացնեմ, մեր Կարոյի ընկերն է,– դարձավ Քանյան օրիորդին:

– Պարոն Սիրաքյան, քենիս՝ Շուշանիկ Մելինյան:

Աղջիկը համարձակ չարժուձոով մը ձեռքը մեկնեց.

– Կարոյի ընկե՞րը, ուրեմն Դո՛ւք ալ այս տարվան ընթացավարտներն եք:

– Այո՛, օրիո՛րդ,– պատասխանեց տղան թեթեւ չփոթութիւնով մը:

– Եվ երևակայե՛, Շուշանի՛կ, երկու ամիսեն կուսակրոն պիտի ձեռնադրվի,– կցեց Քանյան մեղմ ժպիտով մը:

– Կուսակրո՞ն, իրա՞վ,– ըրավ աղջիկը ու ձեռքի գրքերը պատուհանին մեջ դնելով՝ մտավ քովի սենյակը:

Բայց նույն վայրկյանին իսկ ներսը իր աղմուկը լսվեցավ՝ մեկուն հետ կվիճեր և իսկույն ետ եկավ նորեն երկու տարեկանի մոտիկ երեխա մը պինդ գրկած, որ գրեթե մերկ էր:

– Այս կինը երեխան փչացնե պիտի, Մարի՛. անկանոն կվարժեցնեք, տե՛ս, ղեռ մինչև հիմա պառկեցուցած չէ, իսկ երեկ հինգին քնացուցեր էիք արդեն, այդպես անկարգ ու անչնորհք. խո՛ղճ թռչնիկս:

Եվ իբրև չոյանք երեխայի մերկ ազդրները ծեծելով՝ քանի մը ռուսերեն ու հայերեն փաղաքշական ածականներ իրարու խառնեց, «մեծերու քմահաճույքին զոհ» անվանելով չարունակ ու հնչուն-հնչուն համբուրելով անոր թևերը, վիզը, անրակը՝ մտավ կրկին կից սենյակը:

Երեխայի մայրն ալ գնաց քրոջը ետևեն. նախ ավելի սաստիկ իրարանցում մը բարձրացավ ներսը, բայց իսկույն բոլորովին լռեց:

– Իսկ մեր խոսքը ո՞ւր մնաց,– դարձավ Քանյան երիտասարդին:– Հա՛, Ձեր նոր ուղղութիւնը վարդապետներու մասին կպատմեի՛ք. ուրեմն կկարծեք, որ խնդիրը այդպես մեծ ծավա՞լ է առնելու:

– Շարժումը սկսված է, ես ու իմ ընկերներս բացառություն չենք, այլ ամբողջ խումբ մը, որ շուտով կրկնապատիկ պիտի դառնա:

– Եվ ի՞նչ է այդ խումբին դծած նպատակը:

– Օժտել մեր Հոգևորականությանը բարձր կրթության տեր անհատներով, նորոգել Հայ եկեղեցին ու ծառայել Հայ ժողովուրդին:

Քանյան մտածկոտ պլուխը կախեց:

Մինչ երիտասարդը տաքցած վրա տվավ՝ հետզհետե ավելի ոգևորվելով.

– Ա՛խ, չգիտեք, պարո՛ն, թե ինչ աստիճանի անսպառ է պարճած մեր Հոգևորականությունը ժողովուրդի պարգացման գործին համար: Անտարբե՛ր, չահամո՛ղ, եսակա՛ն, տգե՛տ. ո՛չ մեկ գաղափարական ձգտում, ո՛չ անձնազոհություն կամ գեթ մաքուր զգացում: Եվ չե՛ք կրնար երևակայել, թե ինչ հաճույք է մտածելը, որ այդ փտուած մարմինը պատուես պիտի, որ այդ ճահճացած կյանքին մեջ թարմ հոսանք, նոր ձգտումներ պիտի մտցնես, որ պիտի կռվիս, մաքառիս ու հալածվիս, բայց պիտանի և օգտակար ըլլաս:

Քանյան հափշտակված կնայեր տղու ոգևորութենեն կայծկլտող աչքերուն: Ու ակնթարթ մը լռութենե վերջը ըսավ տեսակ մը վարանումով.

– Քանի Ձեզի կլսեմ, այնքան ավելի ցավ կզգամ: Ձեր այդ ազնիվ ոգևորության համար ավելի արժանի նպատակ մը կցանկայի, քան Ձեր ընտրած Հոգևորականությունը:

– Ինչպե՞ս թե,– հարցուց տղան բոլորովին պաղած:

Ու Քանյան չարունակեց՝ ինքն ալ տեսակ մը պաղած ու տխուր խոսվածքով.

– Հոգևորականության դարերը անցած են, բարեկա՛մս: Եվ բնական մահվան դեմ բժշկություն չկա: Կընդունիմ, որ այս կամ այն անհատը իր բնածին տաղանդով կամ իր բնավորության բարձրությամբ օգուտ կրնա տալ նաև իբրև Հոգևորական, ինչպես նաև ուրիշ որևէ կոչման մեջ պիտի տար: Բայց այդ միշտ ալ բացառիկ անհատական ուժերը ինչ ալ որ ըլլան, Հոգևորականությունը իբրև ամբողջություն մը առած՝ ապրած է իր ժամանակը: Անիկա հիմա հետադիմական գործոն մըն է իր էությամբը, որ ո՛չ նորել կարելի է, ո՛չ բարձրացնել:

– Ինչո՞ւ այդպես կկարծեք,– հարցուց երիտասարդը բողոքի շեշտով մը:

Այդ միջոցին, արդեն երրորդ անգամ, աղջիկը մտավ սենյակ և սամավարեն իրեն բաժակ մը թեյ լեցնելով, առանց անոնց խոսակցությունը ընդհատելուն կարևորություն տալու՝ դարձավ Քանյանին.

– Լսեցի՞ր, Կո՛կա, Գայանեն ծներ է:

– Մի՞թե,– բացականչեց մարդը զարմացած:

– Մարին դեռ քեզի չըսա՞վ, քիչ մը առաջ սայլապանը նամակ բերավ: Եվ իհարկե նորեն մեռած: Ասկե ամիս ու կես առաջ, ես դեռ նոր էի եկեր Ալեքսանդրապոլ, որ քիչ էր մնացեր նորեն պիտի վիժեր, արդեն ո՛չ ինքը խելք ունի, ո՛չ մարդը, անոնք զավակ ունենալու չեն, պարապ բան է, թող քսան տարի սպասեն:

– Խե՛ղճ կին, ատ ալ անոր բախտը,– բացականչեց տիկինը ցավակցաբար:

– Բա՛խտ, ի՞նչ բախտ. ըսե՛ ապուշություն, ըսե՛ տգիտություն,– պատասխանեց Շուշանիկ բարկացած ու նստավ իր թեյի բաժակին առջևը:

Բացավ հետը բերած ռուսերեն ամսագրի մը համարը, դրավ սեղանին և սկսավ թերթել:

Վարդապետացուն տեսակ մը ամչցած ու անհարմար զգացումով կնայեր աղջկան:

«Սա ի՞նչ տեսակի մարդիկ էին»:

– Ի՞նչ կըսեի,– դարձավ Քանյան երիտասարդին:– Հա՛, ըսել կուզեի, որ մեր ժամանակի ձգտումն է արթնցնել մարդկությունը հանդերձյալ կյանքի տափակ երևակայություններեն, բարձրացնել մարդու իր անձին վրա ունեցած ինքնավստահությունը՝ մեկդի նետելով բոլոր գերբնական հավատալիքները, չար ու բարի ոգիները, արքայությունները, գիտակցություն ու հպարտություն ներշնչել մարդուն իր ուժերուն ու կարողության վրա, հասկցնել, որ բնությենեն դուրս ոչինչ կա, որ մարդն ու ընկերությունն ալ այդ բնության մեկ մասն է: Եվ հառաջադիմություն, քաղաքակրթություն ըսածն ալ ուրիշ բան չէ, եթե ոչ ուսումնասիրել ու իրեն օգտին ծառայեցնել բնությունը. բնությունը, որ մե՛ր մեջն է, բնությունը, որ մեր չո՛ւրջը: Արդ, բարեկա՛մս, եթե ձեր

Նոր խումբի քարոզածն ալ աս պիտի ըլլա, այլևս ի՞նչ հոգևորական, իսկ եթե նորեն հին սովանդական երգերը պիտի կրկնեք, այն ատեն դուք ալ խոչընդոտ մըն եք ժողովուրդի հաստնացման:

Սիրաքյան գլուխը կախ՝ թեյի գդալին հետ կխաղար: Տեսակ մը լարում զրոշմված էր իր դեմքին, ու գրավիչ, ազնվական բան մը կար դիմագծերու այդ կծկումին մեջ:

Օրիորդը, պիրքը թողած, ճակտին տակեն տղուն կնայեր չեշտակի, նախ անդիտակից ու մեքենական էր նայվածքը, բայց չուտով սկսավ ուշադրությամբ դիտել այդ նիհար, դժգույն դեմքը ու հանկարծ խղճաց:

«Խե՛ղճ տղա»,–մտածեց ինքնին ու նորեն կախեց գլուխը գրքին վրա:

– Կչափազանցեք,– ըսավ վերջապես տղան՝ թեթև մը դեմքը դեպի խոսակիցը դարձնելով:– Նախ կմոռնաք մեր արդի պատմական պայմանները. բազմաթիվ հասարակական գործեր կան, որոնք սերտ կապված են հոգևորականության հետ, երկրորդ ալ՝ Դուք շատ անիրավ կվարվիք, երբ մտավոր զարգացման սեր ու որոշ ձգտումներով նոր հոգևորականները հիներուն հետ միատեղ մեկ ջրով լվալ կուզեք:

– Ներեցե՛ք, երիտասա՛րդ բարեկամս, բայց եթե իմ անձնական զգացումս լսել կուզեք, ձեր այդ կրթված կլոնավորները իմ վրաս շատ ավելի անախորժ տպավորություն կընեն, քան գուցե հինները: Կրոնավորությունը հավատքի ու միամիտ զգացումներու վրա միայն կրնա հիմնված ըլլալ. բարձր ուսումնականությունը մեջ եկածին պես կա՛մ կքայքայվի, կա՛մ դեպի ճիզվիտություն կտանի: Ի դեպ, այդ ճիզվիտական գիծը արդեն սկսած է աչքի իյնալ ձեր կրթվածներուն մեջ. մեկ-երկուքը ես ալ կճանչնամ:

– Սակայն, Կո՛յա, ի՞նչ քաղաքավարություն է ասիկա,– նկատեց տիկինը:– Պարոնը մեզի հյուր է եկեր, դուն նստեր ես գլխուն գայլի ավետարան կկարդաս:

– Ոչինչ, տիկի՛ն՝, այդ բոլորը լսելը ինծի համար հետաքրքիր է,– պատասխանեց վարդապետացուն՝ հնար եղածին չափ ինքզինքը անփույթ ցույց տալու ճիգով մը:

– Վատը մեր վրա հովիվ պիտի դառնա, աղեկ է, որ այսօրվնե իր ոչխարներուն կարծիքը գիտնա,– ավելցուց պարոնը ծիծաղելով:

Ու կատակի շեշտով մը երիտասարդի ձեռքին զարկավ թեթև:

Վարդապետացուն լույսին հետ ելավ անկողնեն, իջավ դեպի ձորը, ուր գետակի քովեն սողոսկող նեղ արահետով սկսավ վեր քալել ծանր, հանդարտ ու տեսակ մը ցրված:

Մտածումները իր գլխուն մեջ մորացեր էին, կանգ առած ջուրի պես, ու տարտամ տխրություն մը ծանրացեր էր իր հոգիին վրա. նախորդ գիշերվան տպավորության տակն էր միշտ:

Արդեն գիշերն ալ չա՛տ ուշ և չա՛տ անհանգիստ էր քնացեր, թեև իսկապես լուրջ ոչինչ մտածած չէր: Քանյանի մեկ-երկու նախադասությունները կկրկնվեին շարունակ իր գանգին տակ և այն գաղափա՛րը, թե ինչպես մարդիկ չէին ուզեր հասկնալ իրենց նպատակներուն արժեքը, իրենց անձնազոհությունը, նույնիսկ այսպես կրթված մարդիկ: Մասնավորապես Քանյանի վստահ ու վճռական խոսվածքը, անոր տեսակ մը ցաված չեչոը տղու կոչման ու ապագայի վերաբերմամբ՝ կսեղմեր, կվրդովեր երիտասարդին սիրտը, մանավանդ կզգար, որ իսկապես անոր ըսածներու մեկ մասին դեմ ինքը հաղիվ առարկել կրնար. չէ՞ որ ինքն ալ երկար ժամանակ ատոնց նման հարցեր իր գլխուն մեջ շուռ էր տվեր դեռ վարդապետանալու վերջնական խոսքը տալեն առաջ:

Գետակը ժայռերուն մեջ ջրվեժ մը կազմեր էր, որ ահագին շառաչով կխուժեր վար ու իր մեջքի ճերմակ գոգնոցեն բուտով փրփուր կցանցներ չուրջը:

Տղան կեցավ ու պիշ նայվածքով սկսավ նայիլ. հանկարծ սթափեցավ, անդրադարձավ իր ցրված վիճակին վրա ու տեսակ մը զայրույթ զգաց իր այդ ընկճված տրամադրութենեն:

«Բավակա՛ն է, որ ես իմ ըրածս գիտեմ,– մտածեց,– բավակա՛ն է, որ ինքս գնահատեմ իմ վարմունքս, ինծի ի՞նչ ուրիշներուն դատողությունները, արդեն ո՞ր գործի վերաբերմամբ ժամանակակիցներուն կարծիքը չիտակ է եղեր, արժե՞ գլուխ ցավցնել»:

Եվ մտածումները բռնի ընդհատելով՝ վազեց ձորեն վեր, ելավ ոսքի նեղ ճամփան, որ ձորի լանջեն ժայռերու և ծառերու մեջեն ետ՝ դեպի վանք կտաներ:

Արևը արդեն եկեր էր ու ձորի աջ շրթունքեն ներս սահելով՝ ոլիմա-

ցի չհչոտ ու խոժոռ ժայռերու ճակտին իր բարիկույսի համբույրը կուտար:

Տղան վանքին մոտեցեր էր բոլորովին, երբ իր դեմը քանի մը տասնյակ քայլ հեռու նշմարեց օրիորդ Մելինյանը:

Աղջիկը նստած էր խոշոր քարի մը վրա՝ ոտքը ոտքին նետած, ճանապարհին դրեթե կից և իր քովի թեք ուքիչ մը ավելի բարձր ժայռին վրա պիրք մը դրած կկարդար: Այսինքն՝ գիրքը բաց էր իր առջևը, ու պիրք կարդացողի մը դիրքը ուներ ինքը, բայց աչքերը գրքին վրայեն սահեր ինկեր էին վարը գետի փրփրուն եռմանը, ուրկե ախորժ ժխոր մը անոր մտածումները կօրորեր:

Սիրաքյանի առաջին ըրածը ետ դառնալու չարժում մը եղավ. դժկամություն մը կզգար այլևս այդ մարդոց հանդիպելեն. ամենքն ալ կարեկցության ժպիտ մը ունեին կարծես իրենց շրթունքներուն ու տեսակ մը բարձրեն նայիլ մը:

Ինչ հիմար բան էր. ինքը եկեր էր այդ լեռներուն մեջ խոսքե ու աղմուկե կտրված քանի մը օր առանձին բնությունը վայելելու, և ահա՛ այդ անմեղ հաճույքն ալ չէին ուզեր իրեն տալ:

Բայց ետ դառնալը անհարմար էր. աղջիկը անշուշտ պիտի նկատեր, և վերջապես ուրիշ ճամփա ալ չկար, ձորի մեջեն նորեն երկար պտույտ ընելը անիմաստ էր:

«Բարև մը կուտամ ու կանցնիմ»,– վճռեց ու քայլերը արագացուց:

– Բարև՛ Ջեպի, օրիո՛րդ:

– Օ՛, բարև՛, Դո՞ւք եք, պարո՛ն: Ուրկե՞ կուգաք այսպես կանուխ:

Ու ելավ ոտքի:

– Ձորի մեջ փոքրիկ պտույտ մը. հիանալի թարմ օդ է, կազդուրիչ ու առողջարար:

– Աչխարհքը սկսեր է փոխվիլ,– ժպտեցավ աղջիկը՝ երկու ձեռքը կարճ մազերուն մեջ խրելով:– Հիմա հոգևորականները երևի ավելի առողջապահության մասին կմտածեն, քան աչխարհականներս:

– Ինչո՞ւ չէ,– պատասխանեց տղան չոր:

– Իսկ ես, տեսե՛ք, նստեր կաչխատիմ. այսինքն՝ պե՛տք է, որ աչխատիմ,– ավելցուց դժգոհությամբ:

– Այդչափ ստիպողակա՞ն. կարդացածնիդ ի՞նչ է որ:

– Խնդրե՛մ, եթե կհետաքրքրվիք:

Ու գիրքը տղուն մեկնեց:

Վարդապետացուն առավ գիրքը ու բացավ առաջին պատահած երեսը. ուշելիի նման երկար ու կեռ գործիքի մը նկարն էր, բան չհասկըցավ ու նոր երես մը դարձուց, բայց հազիվ պատկերը նշմարեր էր, որ ամբողջ դեմքով կարմրեցավ ու արագ թուղթը շուռ տվավ:

Աղջիկը ձեռքերը մեջքին կեցեր էր անշարժ ու ժպտուն:

Երիտասարդը նայեցավ գրքին ճակատը. «Մննդաբերական օգնութիւն»:

– Դուք բժշկութիւն կուսանի՞ք,– հարցուց վերջապես:

– Դժբախտաբար ո՛չ,– եղավ աղջկան հառաչի մը նմանող պատասխանը:– Մանկաբարձուհի եմ. այսինքն՝ կպատրաստվիմ քննութիւն տալու:

– Ո՞ւր:

– Թիֆլիս: Կզարմանաք, չէ՞, որ քսան-քսանմեկ տարեկան աղջիկ մը սիֆիլիսի նշաններով և չգիտեմ ինչերով իր ուղեղը կզբաղեցնե, այնպես չէ՞: Դուք միշտ զբաղված եք բարոյական, հոգեբանական ու աստվածաբանական բարձր պրոբլեմներով. մի՛շտ վերերը: Մե՛նք, կտեսնեք, համեստ ենք, մի՛շտ ցածր. հիվանդութիւններու, աղտոտութիւններու ու տառապանքներու մեջ:

Աղջիկը կքոքեթանար իր արվեստովը:

– Հապա՛, վարդապետութեան չի նմանիր. բուրվառ տալով ու աղոթք ընելով չի վերջանար, պետք է աշխատիլ ու չարչարվիլ,– վերջացուց հանկարծ լուրջ զարկով մը և բոլորովին անսպասելի կերպով ռուսերեն. կարծես դիմացինը բոլորովին չվարեցնելու համար:

Բայց տղան հանդարտ ու մաքուր զուտ ռուսական արտասանութեյամբ պատասխանեց ինքն ալ ռուսերեն.

– Կզարմանամ, օրիո՛րդ, ինչպե՞ս կրնաք այդպես արհամարհանքով խոսիլ ուրիշի մը գործի մասին, որ մանկաբարձուհիի մը համար միայն այնքան ծանոթ է, որքան վարդապետի մը համար «Մննդաբերութեյան օգնութիւնները»:

Այս համարձակ ու արդար բողոքը աղջկան վրա տարօրինակ տպա-

վորութիւն մը ըրաւ և մանաւանդ այդ վարժ ուսաերենը. տղան հանկարծ կարծես ուրիշ գոյն մը առաւ իր այդ ուսուերենովը:

Ու ալ խոսակցութիւնը չարունակվեցաւ ուսաերեն:

– Ձեր համեմատութիւնը չիտակ չէ,– պատասխանեց աղջիկը,– ես եկեղեցի ալ շատ եմ եղած, գոնե մանկութեանս, և վերջապես դուրսն ալ հովւապետականները միշտ կարելի է տեսնել ու անոնց մասին լսել: Մինչդեռ Դուք ոչ թե իմ արհեստիս, այլ նույնիսկ մարդու ու իր ֆիզիկական կազմի մասին չնորհքով տեղեկութիւն չեք կրնար ունենալ, երբ ամբողջ Ձեր կրթութիւնը տարիներով վերացական խնդիրներու ու կրոնական դասերու շուրջն է դարձեր:

– Կտեսնե՞ք, օրիո՛րդ, ի՞նչ ըսել է առանց դործին ծանոթ ըլլալու խոսիլը: Նախ դպրոցը կրոնի դասերը միայն քանի մը ժամ է և որոնք, վիակագծի մեջ ըսած, ինծի ո՛չ հետաքրքրած են, ո՛չ ալ մասնավորապես պատեհացուցած, իսկ ընդհակառակը, բնական գիտութիւնները ես միշտ սիրած եմ ու Ձեր կարծածեն ալ քիչ մը ավելի ծանո՛թ, մասնավորապես կենդանաբանութիւնը և բիոլոժին: Մի՛ կարծիք, թե միայն Ձեզի են ծանոթ Դարվինի, Սպենսերի ու Հյուքսլեյի երկերը:

Աղջիկը սեղմված շրթունքներով ու աչքերը լայն բացած՝ խոսակցին կնայեր բոլորովին զարմացած: Հյուքսլեյեն միայն փոքր գրքույկ մը կարդացած էր, Սպենսերի մեկ աշխատութեան բովանդակութիւնը լոկ հայտնի էր իրեն ամսագրի մը գրախոսութենեն, իսկ Դարվինի անունը, թեև շատ լավ գիտեր, բայց բնավ ծանոթ չէր մոտեն:

Ու կարճ լռութիւն մը, որ ընդհատողը աղջիկը եղավ.

– Այն ատեն ես բոլորովին կզարմանամ. ուրեմն ինչպե՞ս կրնաք Դուք այդ բոլորին հետ հաշտեցնել կրոնական մանր ու մեծ նախապաշարումները, սնոտիապաշտութիւնները, ծիսակատարութիւնները, պահքերը, վևերն ու սատանաները, ինչպե՞ս կրնաք հավատալ այդ բոլորին:

– Եվ Ձեզի ո՞վ ըսավ, որ ես կհավատամ այդ ամենուն:

– Բայց չէ՞ որ վարդապետ դառնալ կուզեք, չէ՞ որ ամեն օր պիտի կրկնեք նույն աղոթքները, նույն արարողութիւնները, նույն հավատալիքները, և ալ ի՞նչ գիտնամ:

Տղան թեթև մը գլուխը կսխեց. դիմացինը ամենևին հիվանդոտ տեղին վրա էր դրեր մատը:

Եվ պատասխանեց, կարծես տեսակ մը իր մտածումներուն մեջեն.

– Իրա՛վ է, ժամանակները իրենց հետ բերած են բավական բաներ, որոնք մեր արդի ըմբռնումներուն լավ չեն հարմարիր. պիտանին ու ավելորդը, գլխավորն ու երկրորդականը խառնված են սերտորեն կրոնական ըմբռնումներուն, այդ ամենը իրարմե զատել ու մաղել դեռ կարելի չէ, ժողովրդական մտքի հասունացում կպահանջե: Այնպես որ գործի բարձր ու կարևոր մասերու սիրուն ստիպված ենք հարմարվելու այդ հինցած ու անախորժ կողմերուն:

– Բայց, պարո՛ն,– առարկեց աղջիկը,– ամեն օր և ահագին բազմություններու առաջ ու կատարյալ հանդիսավորությամբ ըսել խոսքեր ու աղոթքներ, որոնց չեք հավտար, կատարել ծեսեր ու արարողություններ, որոնց կարևորություն չեք տար, չէ՞ որ ատիկա կդառնա խաբեության պես բան մը: Ազնիվ բան չէ Ձեր ընել ուզածը, սիրելի՛ պարոն:

– Դժբախտաբար իմ կամքես կախված չէ ուզած մասերս ընտրել և չուզած մասերս անդին նետել. անբաժան ամբողջություն մըն է, կա՛մ պիտի հանձն առնես ամբողջը, կա՛մ հեռանաս:

– Հեռացե՛ք, գո՞րծ է պակաս, ինչո՞ւ անպատճառ հոգևորական:

– Որովհետև ամենեն չիտակ ու ամենեն հարմար ճամփան է մեր ժողովուրդին ծառայելու, ժողովուրդին մեջ խրվելու, ազդելու, անոր վերքերը մոտեն չոշափելու և բուժելու համար:

– Ա՛յ եթե Ձեր միտքը ժողովուրդի վերքերը չոշափելն ու բուժելն է, ես Ձեզի ամենեն կարճ ճամփան ցույց տամ, ճամփա մը, որ գիտություններուն վրայեն կերթա և ոչ թե ժողովուրդի նախապաշարումներուն կոթնելով: Ըսիք, թե բնական գիտությունները մասնավորապես կսիրեք, վարժ ալ ռուսերեն կխոսիք, ահա՛, դարձե՛ք քանի մը տարի Ռուսաստան, սորվեցե՛ք բժշկություն, դարձե՛ք ձեր ժողովուրդին դիրկը և բժշկեցե՛ք, ինչքան վերքեր որ կուզեք:

– Իմ խոսքս հիվանդի վերքերու մասին չէր,– նկատեց տղան միամտորեն ժպտելով:

Ժպտեցավ և աղջիկը:

– Այդչափը կհասկնամ, բայց մի՞թե գե՞շ է Ձեր ըսած հիվանդու-

թյուններուն հետ նաև մարմնական հիվանդութիւնները բժշկելը. վերջապես բոլոր բարոյական հիվանդութիւնները ֆիզիկական ու տնտեսական հիվանդութիւններու զուգահեռներն են միայն: Եվ մի՛ մոռնաք, որ բժիշկը անխտիր ամեն տեղ հարդ ունի, մուտք ու դիրք և մանավանդ բացարձակապես անկախ է թե՛ բարոյական և թե՛ ղրամական տեսակետեն:

– Եթե այդչափ հափշտակված եք բժշկութեամբ, ինչո՞ւ ինքներդ ուղղակի բժշկութեան չեք հետևիր, կարծեմ այդ ասպարեզը շատ ավելի լայն պիտի ըլլա, քան Ձեր ընտրած մանկաբարձութիւնը,– հարցուց երիտասարդը դիտմամբ խոսքին ուղղութիւնը ծռելով:

– Ուրիշ են, պարո՛ն, իմ ընտանեկան պայմաններս, ինծմե փոքր չորս քույր ու եղբայր ունիմ, և երկու տարի կա՝ մեռավ հայրս, պետք է հնար եղածին չափ շուտով անկախ դառնամ մորս վրայեն բեռ մը պակսեցնելու համար, պետք է այդ փոքրիկները մեծցնել, կրթութեան տալ, դյուրին բան չէ: Ընդարձակ ծրագիրներու մասին մտածելու ո՛չ ժամանակ ունիմ, ո՛չ միջոց, թե չէ այդ ծրագիրները ես ալ եմ ունեցած, իմ բախտես է, հայրս մեռնելու չէր: Հապա՛ աշխարհի կյանքը վանքի չորս պատերուն չի նմանիր, հո՛ս ոչինչ չի կա պատրաստ ու ձրի, նույնիսկ ապրուստի տարրական պետքերուն համար պիտի կռվիս չարունակ՝ ծրագիրներ ու բաղձանքներ բոլորը մեկդի դնելով:

Տղան անթարթ խոսակցի չարժուն դիմագծերուն կնայեր, մինչդեռ տարօրինակ զգացում մը իր մեջն էր սպրդեր, կարծես սկսավ ամչնալ:

«Ահա՛ ուր է իսկական անձնազոհութիւնը», – կմտածեր ակամա:

– Բայց ըսե՛ք, խնդրեմ, ինչպե՞ս է, որ Դուք այդպես մաքուր ռուսերեն կխոսիք, կրոնավորներու մեջ խիստ հազվագյուտ բան է ատիկա,– հարցուց հանկարծ աղջիկը՝ իր հետաքրքրութիւնը այլևս զսպել չկարողանալով:

– Ես խրիմցի եմ, օրիո՛րդ, ատկե զատ դպրոցը ռուսերեն շատ եմ կարդացած, ռուսական գրականութեան գրեթե բոլոր հայտնի երկերը, և թարգմանութիւննե՛ր ինքնին հասկնալի է:

– Եվ բանաստեղծութիննե՞ր, և ռոմա՞ն,– հարցուց աղջիկը կանացի փորփրող հետաքրքրութեամբ:

– Այո՛, անոնք, որոնք գրական արժեք մը ունին:

– Կա՛մ վարդապետներու մասին ես չափազանց սխալ գաղափար ունիմ, կա՛մ Դուք չատ տարօրինակ վարդապետացու եք,– պատասխանեց աղջիկը վարանոտ շեշտով մը:

– Ձգիտեմ, ինչպես որ կուզեք:

Ու երիտասարդը գլխարկը ուղղեց ինքնաբավական, ակնթարթ մը լռութիւն, վերջը ավելցուց.

– Բայց ներեցե՛ք, Ձեր ընթերցումը խանգարեցի, ցտեսութի՛ւն:

– Ընդհակառա՛կը, ես չատ ուրախ եմ այդ խանգարումեն: Ցը՛:

Ու ձեռքը մեկնեց տղուն: Երիտասարդը թոթվեց ու դեպի վանք ուղղվեցավ:

Դ

Մութը սկսեր էր իր կծիկը ձորին վրա փաթթելու, որ Սիրաքյան ամբողջ օրվան թափառելեն հոգնած՝ վերադարձավ ետ ու շիտակ մտավ վանահոր սենյակը:

Նույն միջոցին տնտեսուհին՝ երեսունը անց տգեղ ու խոշոր կին մը՝ ամուր ու փայտե կազմվածքով, մեկ ծունկի վրա գետինը չոքած՝ սամավարեն ջուր քաշելով էր զբաղված, իսկ վարդապետը անոր գլխուն վրա ծռած, ձեռքը կնոջ թուշին, բան մը ըսելու վրա էր, որ սենյակին դուռը ետևեն ճռնչեց:

Հայր սուրբը իսկույն շտկվեցավ, արագ դուրս քաշեց գոտիեն ահագին կապույտ թաշկինակը ու սկսավ պինդ-պինդ հազալ, որքան իր թոքերը կներեին:

– Աստված օգնակա՛ն, Հա՛յր սուրբ,– բարևեց տղան՝ ոչինչ չտեսնել ձևացնելով:

– Դո՞ւ ես, տիրացո՛ւ, ո՞ւր էիր, տեսնե՛նք, ամբողջ օրը:

– Հա՛յր սուրբ, այնպես հոգնած եմ ու անոթի:

– Նստե՛, տղա՛ս, Հանգստացի՛ր: Եղսո՛, շուտով մեզի մեյմեկ բաժակ թե՛յ տուր ու տիրացուին գնա քիչ մը մածուն ու ձու բե՛ր:

Երկու ճաթռտած ու տարբեր ձևի բաժակներով թեյը արդեն փայտե

անծածկ սեղանին վրա էր: Վարդապետը նստեցավ լայն թախտի ծայրին, իսկ վարդապետացուն՝ դիմացը՝ կոչտ ու խոշոր աթոռի մը:

Խոսքը սկիզբը Խծկոնքի մասին էր, վերջը դարձավ Սիրաքյանի ու իր ընկերներուն վրա:

– Իհա՛րկե, այդպես չա՛տ լավ է՝ ուսում առած հոգևորականներ,– վրա բերավ վարդապետը՝ թեյի բաժակը շրթունքներեն չհեռացնելով:– Բայց գիտե՞ս՝ միայն ուսումը բանի պետք չէ, քիչ մը խորամանկությունն ունենալու է և մեծավորներուն կողքը մտնելու շնորհքը, թե չէ ոչինչ դուրս չի գար, տասը տարի սարկավագ կպահեն, վերջն ալ, երբ մազերդ ճերմկին, կշինեն վարդապետ ու կուղարկեն փլած վանք մը:

Վարդապետացուն ոչինչ չառարկեց:

– Ա՛յ, իմ ընկեր սարկավագները հիմա բոլորն ալ կա՛մ եպիսկոպոս են, կա՛մ առաջնորդ, մեկը նույնիսկ Սինոդի անդամ: Ինչո՞ւ, կկարծես ես ամենեն վա՞ռն էի մեջերնին, եթե գիտնաս՝ իմ չդդում գլուխներ էին, մանավա՛նդ մեկը, և ճիշտ այդ մեկը հիմա N թեմի առաջնորդն է, որուվհետև իր հաչիվը գիտցավ մարդը, իսկույն մտավ եպիսկոպոսի մը փեշերուն տակը, յուղոտ պաշտոններ ձեռք անցուց, առաջ մատանապետ էր, ետքը չգիտեմ ինչ կապալի գործերն էր իր վրան, վերջերն ալ կարծեմ հաչվի մասյաններուն մեջ մատ ուներ, կարճ խոսքով՝ քիչ-քիչ յուղոտեցավ, և անգամ մը որ ստակը կա՝ ալ ամեն բան կա: Հապա՛, միայն ես էի մեջերնին էշը, ո՞վ կըսեր ինծի ուրիշներու գործերուն խառնվիմ, չիտակ խոսողի գրպանը ծակ կըլլա, ինծի սկսան ետ-ետ ձգել, ես ալ եկա տեղեցա ու բերնիս կապը բոլորովին քակեցի, սկսա ամենքի երեսին ըսել, ինչ որ ճշմարիտ էր, թե անառակ, գող, կաշառակեր, լիրբ մարդիկ էին, եռևեն ինկա, մեկ-երկուքի գողությունը բռնեցի, Աբրահամ եպիսկոպոսի սենյակեն աղջիկը դուրս քաշեցինք, ահագին խայտառակություն դուրս եկավ, բայց այդ պատմությունը ինծի ալ սուղի նստեցավ, «գիժ սարկավագը» բռնեցին, չտալ չինեցին վարդապետ ու ղրկեցին Հոս, այս աշխարհքի անմարդ ծայրը, ղե՛հ, նստե՛ ու մեղքե՛րդ քավե: Հապա՛, տիրացո՛ւ ջան:

Երիտասարդը հետաքրքրությամբ կլսեր, թեև ինքնին այդ պատմությունը իրեն համար ոչինչ նորություն չուներ:

– Որդի՛ս, ականջիդ օ՛ղ չինե,– կխրատեր վանահայրը,– եթե առաջ երթալ կուզես, մեծավորներուդ խունկ ծխե՛, մեյ մըն ալ նայե՛ ինչ ճամփով կուզե ըլլա՝ չուտով գրպաններդ յուղոտես, այս չոլերուն մեջ ճերմկած մորուքս քեզի խրատ:

– Հա՛յր սուրբ, առաջ երթալու ավելի ազնիվ ճամփաներ ալ կան, անշուշտ խելացութիւն չէ մեծերու թշնամութիւնը ավելորդ տեղը գրգռելը, մենք՝ նորերս, կաշխատինք ավելի ազնիվ ըլլալու, ավելի գործունյա ու մաքուր. տասը-տասներկու տարիեն չէ՞ որ մեծավորները մենք ենք դառնալու:

– Կկարծե՞ս դուք եղածներեն աղեկ եք ըլլալու. երիտասարդութիւն է, որդի՛ս, ես ալ այդպես կմտածեի: Վանքի կյանքը իր առանձին ճամփան ունի, ամենքն ալ անպատճառ այդ ճամփով պիտի երթան, ով այդ ճամփեն ծռիլ ուզե, անոր բոլորը միասին աքացի կուտան ու մեկ կողմ կնետեն:

– Չէ՛, հա՛յր սուրբ, գիտե՞ք, ժամանակները սկսած են փոխվիլ, և հիմա կրթված կրոնավոր մը առանց այլևայլութեյան բռնել, մեկդի նետելը դժվար խնդիր է:

– Երեք ամիսի չափ առաջ Էջմիածին էի, որ Սիմոն վարդապետը խոր վիրապ աքսորեցին. ահա՛ քեզի ուսում առած վարդապետ: Իսկ անցած օր լսեցի, որ Աչոտ եպիսկոպոսն ալ Քիչնև են ուղարկեր, ձեր ամենեն ուսումնականը:

Երիտասարդի մեջեն տարօրինակ զգացում մը անցավ Հանկարծ, ետ քաշվեցավ սեղանեն ու մտասույզ կռթնեցավ իր աթոռի խարխուլ թիկունքին:

Այդ Սիմոնն ու Աչոտը գործերե հեռացնելու համար ամեն ճիգ թափողը բնավ հին գլխու մարդիկը չէին եղած, այլ իրենք, այսինքն կրթված նոր սերունդը, որոնց մեջ ինքն ալ չուտով մտնելու էր: Եվ չէ՞ որ ինքն ալ ուրախացեր էր այն ժամանակ «իրեններու» հաջողութեյանը, բայց ինչո՞ւ այդ հալածանքը:

Վարդապետացուի մտքին առջևեն կարծես սկսավ թանձր բան մը ետ-ետ քաշվիլ, ու երիտասարդը սկսավ անսովոր պայծառ գույնով մը եղելութիւնները տեսնել: Նախ անձնական մեկ-երկու հաշիվներ կային, որոնք ինքն ալ, իր ընկերներն ալ չատ աղեկ տեղյակ էին, երկրորդ, որ

այդ մարդիկը իրենց շրջապատողներուն մեջեն կամքի ու խելքի ուժովը աչքի կ'ինյային և իրենց ազդեցիկ դիրքին մեջ հպարտ՝ մյուսներուն չատ ականջ կախելու տրամադիր չէին:

«Վանքի կյանքը իր ճամփան ունի. ամենքն ալ անպատճառ այդ ճամփեն պիտի երթան»: Արդյոք ծերուկը իրավո՞ունք ուներ:

Տղուն մտածումները ընդհատեց տնտեսուհին, որ պղինձե ամանով մը մածունը բերավ, առջևը դրավ:

Վանահայրը կշարունակեր դեռ իր պատմություննները իր քաջագործություններեն, հայտնություններեն, այսինչ ու այնինչ եպիսկոպոսի կյանքեն:

Սենյակը թաղված էր արդեն խավարի մեջ. բաց պատուհաններեն ախորժ ճռինչ մը կլսվեր հեռուեն, ու գիտակին իրարանցումը՝ վարեն:

Երիտասարդը հագիվ էր իր ընթրիքեն եւո քաշված, որ վարդապետի ծառան, դպիրն ու ժամկոչը միանգամայն ներկայացնող տղան մտավ վանքի բակը և, մոտենալով ցած պատուհանին, հայտնեց, որ «մեծ աղան» պարոնը կկանչեր:

Վարդապետացուն անսովոր հուզում մը ունեցավ. տարօրինակ խառնուրդ մը դժգոհության ու տարտամ հաճույքի մը, դժգոհություն՝ երևի այդ մարդուն կրկին հանդիպելեն, բայց այդ ախորժի զգացումը ուրկե՞ էր:

Երբ Քանյաններու սեմեն ներս մտավ, գտավ նորեն նույն մաքուր, ճերմակ, փոքրիկ սեղանը սենյակին մեջտեղը ու նույն ցոլցլուն սամավարն ալ վրան և ընտանիքն ալ սեղանին չուրջը:

– Բարև՛ ձեզի,– ըսավ տղան ընդհանուր կերպով՝ ձեռքը իր դեմը եղող պարոն Քանյանին մեկնելով:

– Մենք կարծեցինք, որ ինքներդ պիտի գաք, սակայն տեսնելով, որ չատ ուշացաք, ծառան ղրկեցինք,– բացատրեց Քանյան սիրալիր տոնով մը:

– Շատ չնորհակալ եմ:

Ու երկու կիներուն ձեռք տվավ:

– Նստեցեք ՛ք, խնդրե ՛մ,– առաջարկեց տիկինը՝ մատնանիշ ընելով իր ամուսնու ու քրոջը մեջտեղի աթոռը:

– Նո՞ւ, ի՞նչ եզրակացութեան եկաք իմ այսօրվան առաջարկիս մասին,– հարցուց Շուշանիկ խնդալով:

– Ի՞նչ առաջարկ,– զարմացավ տղան բոլորովին չվարած:

– Ձեր մասնագիտութեան փոքրիկ փոփոխութեան մասին ինչ որ ըսի:

– Հա՛, այս առտու ամբողջ ժամ մը քենիս պրոպագանդ է ըրած Հօգուտ բժշկութեան, ինչպես լսեցի,– ավելցուց պարոնը:

– Եվ այնպես հաճող, որ եթե հոգևորական չըլլայի արդեն, անշուշտ բժիշկ դառնալ պիտի ցանկայի,– իր կողմեն կատակել ուզեց Սիրաքյան:

– Թեյը կաթո՞վ կխմեք, թե...

– Շատ չնորհակալ եմ, տիկի՛ն, ես խմած եմ արդեն հայր սուրբի մոտ:

– Չէ, ի՞նչ,– բացականչեց Քանյան դժգոհ և իսկույն ավելցուց,– և գիտե՛ք ինչ, տիկինս կխնդրե, որ քանի հոս եք՝ ամեն իրիկուն մեզի գաք թեյի, առանց ձևականութիւններու, անշուշտ չեք մերժեր:

– Սրտանց չնորհակալ եմ, ճշմարիտ...

Ու չգիտեր ինչ ըսե:

Այս բոլորը տղուն վրա քաշող, փայփայող ազդեցութիւն մը կրներ, կզգար, որ իր մասին խոսք էր դարձած տան մեջ, և որ անոնց վրա նպաստավոր տպավորութիւն ըրած էր:

– Ի՞նչ ըրիք, նայի՛նք, այսօր ամբողջ օրը:

– Շարունակ թափառեր եմ, ձորի մեջը, վրան, չուրջը, բոլորովին ուժասպառ էի, որ վերադարձա:

– Ես Ձեզի տեսա Հեռուեն,– մեջ նետվեցավ աղջիկը:– Կեսօրի մոտերն էր, վարը՝ գետի ափն էի, Դուք ժայռերուն մեջեն վեր կմագլցեիք:

– Այո՛, Ագարակ գյուղը գացի, անշուշտ եղած եք արդեն:

– Ա՛խ, ո՛չ,– տրտնջաց աղջիկը:– Դուք տեսե՛ք, օր մըն է հոս եք, արդեն ահագին տեղ չրջեցաք, մենք երկու չաբաթեն ավելի է՝ հոս նստեր ենք, ու դեպի վար չաղացեն անդին անցած չեմ դեռ, դեպի վեր ալ մինչև ծծումբի բաղնիքը, քույրս երեխայեն բաժնվիլ չի կրնար, իսկ Կոլյային արգիլված է շատ քալելը, մանավանդ այս դժոխքի ճամփաներուն մեջ:

– Տրտնջալդ ավելորդ է, ամբողջ օրը դուրան ես,– նկատեց քույրը:

– Դո՛ւրսը, այո՛, տան չորս կողմը: Եթե գիտնաք, պարո՛ն Սիրաք-

յան, ինչպես նախանձեցա այսօր Ձեզի, Ձեր գլխուն, ազատ, ժայռերուն մեջեն գավազաններդ քարերուն զարնելով կբարձրանայիք: Վերեն տեսարանն ալ շատ սիրուն ըլլալու է ձորի բերնեն:

– Այո՛, հիանալի է, մանավանդ իրիկվան դեմ:

– Եթե այդչափ կցանկաս, ելի՛ր անգամ մը պարոնի հետ միասին դնա՛,– նկատեց Քանյան:

Աղջիկը երիտասարդին նայեցավ:

Սիրաքյան չէր հասկնար, թե իրեն հետ ինչ կդառնար: Նախ թեթև մը կարմրեցավ և վերջը իբրև քաղաքավարության պարտք համարեց կրկնելը.

– Եթե կցանկաք, օրիո՛րդ, խնդրեմ:

– Շնորհակալ եմ, օ՛, շատ վալանտ վարդապետացու եք: Բայց մի՛ վախնաք, ես Ձեզի շատ նեղություն չեմ պատճառեր, քալելու ալ վարժված եմ, շատ ալ քնքուշ չեմ: Ուրեմն վաղը ճաշեն վերջը, այո՞: Ճաշեն առաջ չեմ կրնար, թե՛ կարդալու գործ ունիմ և թե՛ տունը՝ զբաղում:

– Ինչպես որ կկամենաք, օրիո՛րդ, ճաշեն վերջը կերթանք:

Խոսքը դարձավ պարոն Քանյանի զբաղումներուն վրա, ու դուրս եկավ, որ պարոնը իր այս պաշտոնե ազատ օրերեն օգտվելով՝ այժմ ձեռնարկած է երկար ժամանակե ի վեր արդեն մտադրված աշխատությանը, սկսած է թարգմանել ռուսաց օրինագրքի մասերը, որոնք անմիջապես կապ ունին ժողովուրդի առօրյա կյանքին հետ ու հանրամատչելի բացատրություններով տպագրության տալ կուզե: Եվ սկսավ երկար-բարակ պարզել այդ տեսակ գործի մը անհրաժեշտ պահանջը, թե ինչ աստիճան անտեղյակ է ժողովուրդը տիրող օրենքներուն, թե նույնիսկ ժողովուրդի զլուխ կեցած մարդիկը որոշ ու հաստատ չգիտեն: Եվ այս ամենը այնքան երկար ծամծմեց, որ Սիրաքյան սկսավ հոգնություն ու ձանձրույթ զգալ: Այնպես որ իսկապես սրտանց ուրախացավ, երբ տիկինը առաջարկեց քիչ մը թուղթ խաղալ ժամանակ անցընելու համար:

Երկար ընտրությենե վերջը կանգ առին պրեֆերանսի վրա. տղան ո՛չ մեկ խաղ չնորհքով չգիտեր, օրիորդը՝ նմանապես, բացի այս վերջին խաղեն:

– Սակայն, ճշմարիտ, ես պրեֆերանս ալ կարգին չդիտեմ, կճանճրանաք,– նկատեց երիտասարդը:

– Ոչի՛նչ, եկե՛ք, դուք խաղացեք երեքով, ես ալ կօգնեմ Զեզի,– վրա բերավ օրիորդ Շուշանիկ:

Այդպես ալ ըրին:

Երեքը տեղավորվեցան սեղանին երեք կողմը, աղջիկն ալ աթոռը քաշեց տղուն քովը մեկ ոտքը գետինը, մեկ ծունկը աթոռին՝ ամբողջ կուրծքովը ինկավ սեղանին վրա ու դեպի տղու բռնած թուղթերը հակած՝ սկսավ ցույց տալ, թե ո՞րը խաղալու էր և ինչո՞ւ:

Սիրաքյան սկսավ տանիլ, թուղթերը անսովոր կերպով հաջող կուգային, Քանյան հետզհետե ավելի կզայրանար, և ճիշտ ատ էր, որ ամենեն ավելի զվարճություն կպատճառեր մյուսներուն: Դժգոհութենե ու հաղթանակե ծնած սրախոսությունները իրարու կհաջորդեին, ու երիտասարդը կշահեր չարունակ: Երեք պարտի իրարու վրա: Ուշ էր արդեն, որ վերջ տվին:

– Ջէ՛, Զեզի հետ խաղալ կարելի չէ, բախտի սիրականն եք,– եզրակացուց Քանյան՝ ձեռքի թուղթերը թափելով:

– Հապա՛, ի՞նչ գիտցար,– պատասխանեց Շուշիկ:– Երբ վարդապետ ու մանկաբարձուհի գլուխ-գլխի տան, ալ անոնց հաղթելը քիչ մը դժվար խնդիր է:

Ու առտղջ ծիծաղ մը բարձրացավ:

Ջերմ զգացում մը երակներուն մեջ՝ տղան ուղղվեցավ դեպի իր խցիկը: Այնպես ախորժելի էր այն պայծառ լուսավորված փոքրիկ սենյակը, քառակուսի ճերմակ սեղանը մեջտեղը, մեկ անկյունը լամպը, և իրենք չորսը սեղանին չուրջը, ինչպե՛ս զվարթ ու ընտանի:

Անմիջապես հանվեցավ, սահեցավ անկողինը ու աչքերը պինդ գոցեց, բայց փոխանակ քնանալու՝ սկսավ այդ իրիկվան բոլոր մանրամունը դեպքերը իր հիշողութենեն անցընել: Կհիշեր՝ ինչպես օրիորդը չէր թողներ կոզր իջնելու, ինչպես անգամ մը ուժով բռնեց իր ձեռքեն՝ արգիլելով կարմիր բացվիլ, ինչպես իր ուսին ծռած՝ թուղթերը կարգով չարելու կօգներ, պահանջելով, որ անպատճառ իր ուզած ձևովը կարգի բերվին՝ նման դույները իրարու քով ու կարմիրները սևերեն վեր և ինչպե՛ս հնչուն-հնչուն կծիծաղեր Քանյանի անզոր զայրույթին վրա:

Ու կարծես աչքերուն դեմն էր դեռ, ինչպես ոգևորված վեր ցատկեց աղջիկը աթոռեն ու սկսավ ուրախութենեն ծափ տալ, երբ երկրորդ պարտին ալ իրենք էին չահել:

Բայց հանկարծ սթափեցավ ու մտաբերեց, որ քնանալու էր:

«Երևի թղթախաղը անվարժ ուղեղս գրգռեց», – մտածեց աղան. դարձավ կողքին վրա ու մտածումները մեկզի հրելով՝ փորձեց քնանալու:

Բայց իզուր էր այդ կռիվը. քունը գա՛լ չէր ուզեր, իսկ այդ պատկերները՝ երթա՛լ:

Ե

Ձորի վերի անկյունը գետը կնեղնար:

Եվ մեկ եզերքեն մյուսը անցնելու համար ծառի երկայն բուն մը ձգեր էին ափե ափ, իբրև կամուրջ, որ անմիջապես կհաներ փայտորմով պատած ծծումբի փոքրիկ ավազանը:

Եւռևի քարակույտեն վար ցատկոտող գետակը փայտորմին կռնակեն ոլոր կոտար, կսեղմվեր պահ մը ծառ-կամուրջին տակ ու անմիջապես կշտապեր ցան-ցիր լերկ ժայռերուն մեջ իր փրփուրե բանվածքը նորեն փռելու:

– Օրիո՛րդ, զգո՛ւշ,– ըսավ Սիրաքյան:– Կամուրջնիս քիչ մը նահապետական է:

– Ավելի՛ աղեկ,– լացականչեց աղջիկը, վազեց թաւիով բունին վրայեն ու բաղնիքին ոտքը կանգ առավ:

– Ուժերնիդ ժողվեցե՛ք, ալ բարձրանանք պիտի չարունակ,– նկատեց տղան՝ քարքարոտ ու բավական սեպ ելքը մատնանիշ ընելով: – Եվ դեռ ասիկա համեմատաբար հանդիստ մասն է: Ձեզի առաջվընե ըսեմ, որ այս ճամփան մեր երեկվան Տիկոր իջնելը չի նմանիր, քիչ մը ոստոստեք պիտի քարե քար:

– Դուք Ձեր քարերովը ինծի չեք վախցներ: Մա՛րշ,– եղավ պատասխանը:

Ու քով քովի սկսան բարձրանալ:

Կեսօրեն վերջն էր: Քանի մը ժամ է՝ արևը պինդ մտեր էր

ամպերու կարավանի մը ետևը և ոչ մեկ կերպ նորեն դուրս ելլելու տրամադրություն չէր ցույց տար: Որով ախորժելի թարմություն մը կարծես դեռ կրցեր էր պահվտիլ մամռոտ ժայռերուն մեջ:

Հսկա ու թզուկ ժայռերու ամբողջ ամբոխ մըն էր չուրջը, որոնք իրենց դիրքերուն մեջ անշարժ՝ իրարու ուսե ծամածուռ դեմքերով վար կնայեին լուռ՝ հո՞ն ձորին մեջի ալիքներուն կզվռտուքը դիտելու, որ ո՛չ վերջ ուներ, ո՛չ դադրում:

Եվ այդ խռնած հոծ բազմության մեջեն ուրքի նեղ արահետը դժվարով իրեն ճամփա կբանար՝ չարունակ ծռվելով, կտրվելով, կոր տալով ինքն իր վրա:

Այլևս զույգ երթալ հնար չէր: Հարմար ելքը ընկերուհիին թողած՝ տղան մեյ մը ետ կմնար, մեյ մը քովի քարերուն վրայեն կցատկեր:

Սկիզբները դեռ կխոսեին տաք-տաք, բայց վերելքի պատճառած չնչառության դժվարությունը չուտով կտրեց ամեն խոսակցություն. հազիվ մեջեմեջ չնչատ բառ մը կփոխանակեին իրարու հետ, անկապ ու փրթած կտոր մը իրենց մտածումներուն:

Այս երրորդ օրն էր, որ միասին պտույտի կելլեին: Առաջին անգամ ամբողջ ձորի երկայնքով չրջան մըն էին ըրած վանքի տակեն: Նախորդ օրն ալ եղած էին Տիկոր գյուղը, ուր օրիորդը անոթեցեր էր, տղան տունե մը ճարեր էր լավաչ ու պանիր ու պարտեզի պես տեղ մը ծառի մը տակ նստեր կերեր էին միասին, վերջը չրջեր էին գյուղը, ավերակ եկեղեցին և ուշ ատեն վերադարձեր տուն՝ հետերնին գյուղացիներեն գնած բավական հավկիթ ու երկու հավ բերելով ընտանիքին համար:

Այս բոլորը սկսած էր տեսակ մը ընտանեկան կապ առաջացնել տղու ու Քանյաններու միջև: Իրիկուննները արդեն միշտ անոնց էր թեյի, վերջի օրն ալ հրավիրեր էին ճաշի՝ միասին բերած հավը միասին ուտելու պատրվակով:

Սկիզբը տղան տեսակ մը քաշվեր էր ու վարաներ, երբ աղջկան հետ առանձին մտեր էին ձորը, անորոշ վախ մը անհարմար կամ անպատշաճ բան մը ընելու, ինքզինքը ինչպե՞ս պահե և ի՞նչ խոսի: Բայց Շուշիկի պարզ, կտրուկ և անհոգ վարմունքը չուտով փոխանցվեր էր և անոր, քիչ-քիչ սկսեր էր սիրտ առնել, մինչև որ հետզհետե բոլորովին ստացեր էր իր չարժումներուն ու լեզվին բնական ազատությունը:

Ալ կծիկը բացված էր. անցյալ, ներկա, տպավորություններ, գրականություն, դիտություն, հակումներ, բոլորը խառնվեր էին իրարու այդ երկու օրվան մեջ: Մեկ խոսքով՝ հիմա դարձեր էին արդեն «լավ բարեկամներ», ինչպես աղջիկը կըսեր:

Շուշիկ, ելքեն չնչասպառ, վերջապես նստեցավ քարի մը վրա:

Տղան մոտեցավ ու կեցավ դիմացը:

– Հոգնեցա՛ք: Ես Զեզի չըսի՞:

Օրիորդը խոր չունչ մը առավ ժպիտը շրթունքին և ձեռքը դրավ կուրծքին չնչառությունը կանոնավորելու համար:

Լեցուն ու թուխ դեմքը հաճելի կարմիր մըն էր առեր, ու պարզ հարդի գլխարկին տակեն ցոլուն սեպ-սև աչքերը ինկեր էին երիտասարդի նիհար դեմքին:

– Խծկոնքի օդը Զեզի աղեկ եկավ, պարո՞ն Սիրաքյան,– նկատեց աղջիկը հանկարծ:

– Ինչպե՞ս:

– Դեմքերնիդ սկսեր է արյուն շրջան առնել և կարծես լեցվիլ:

– Մի՞թե,– կմկմաց տղան ու իր դեմքեն քիչ մը ավելի ուժով սկսավ «արյուն շրջան առնել»:

– Կհավնի՞ք ձորերուս,– հարցուց տղան և դեռ պատասխան չառած ավելցուց,– եթե գիտնաք, օրիո՛րդ Մելինյան, թե ինչպե՜ս կսիրեմ այս բնությունը: Լեռները, ձորերը, այս չեչոտ ժայռերը, այս աղմկոտ խելագար գետակը, վերը՝ դաշտերուն հարթությունը, արտերուն ծածանուտ ծովը: Եվ իմ մխիթարությունս ու հաճույքս բնությունն է արդեն. երբ կուտրած է սիրտս, կերթամ անտառ ու ծառերու չչուկին տակ թասխառնում՝ կմոռնամ, կհանգստանամ կարծես, չատ կսիրեմ բնությունը:

– Բայց, գիտե՞ք, ատիկա քիչ մը վտանգավոր նշան է վարդապետացուի մը համար:

– Բնությունը սիրե՞լը:

– Այո՛, բնությունը սիրելը,– կրկնեց աղջիկը ժպտուն:– Զգիտեմ ուր լսած եմ, որ բնության այդ բուռն սերերուն կնոջ փոթորկոտ սերերը կհաջորդեն սովորաբար: Զգույշ եղե՛ք այդ նախերգեն:

– Է՛հ,– ըրավ տղան ուսը թոթվելով ու խեչափուռի պես կարմրեցավ:

– Իրա՞վ, պարո՛ն Սիրաքյան, ներեցեք հետաքրքրությանս, ամենևին սիրա՞ծ եք:

– Ո՛չ:

Ու գլուխը խոր վար կախած՝ սկսավ ձեռքի փայտովը երկու ժայռի ճեղքին մեջ գորգ կապած մամուռը ավրըշտել:

– Եվ սիրելու պետքը չե՞ք զգար:

Երիտասարդը քիչ մը մտածեց ու թեթև մը գլուխը բարձրացուց:

– Շիտակը չգիտեմ՝ ինչ պատասխան տամ: Նախ՝ վերջին քիչ-չատ հասուն տարիներս միշտ կանանց չրջանե հեռու եմ ապրած, որով արդեն ինքնին առիթ չկա այդ զգացումներուն: Երկրորդ ալ՝ երբ մարդ անգամ մը գլուխը դրեր է կուսակրոն դառնա, այլևս բնականաբար մեկ կողմ պիտի նետե այդ հարցերը, եթե նույնիսկ մեջեմեջ անորոշ բաներ մը իր մեջը դառնան:

– Բայց եթե այդ անորոշ բաները հանկարծ որոշնան, եթե, օրինակի համար, աղջկան մը սիրահարիք, ի՞նչ կընեք:

– Այդ մեկը անկարելի է:

– Ինչո՞ւ:

– Ջեմ թողներ, որ խնդիրը այդչափ հեռուները երթա: Այդ տեսակ զգացման մը արթննալը նշմարելուս պես ամեն կերպ կաշխատիմ առաջը առնեմ, կհեռանամ, ինքզինքս կզբաղեցնեմ. վերջապես կմոռնամ, կիսեղդեմ:

Աղջիկը դեմքի հեգնական ցնցում մը ըրավ:

– Կկարծե՞ք: Բայց ենթադրենք, որ այդ ամենուն հակառակ՝ չհաջողեցաք Ձեր զգացումները մարել:

– Ալ ի՞նչ գիտնամ. երևի ինքս իմ մեջս կտանջվիմ: Ինքնին հակաբնական ու անմիտ բան է կուսակրոնությունը անշուշտ, բայց ի՞նչ կարելի է ընել, եթե հանձն առիր, խաչդ պիտի կրես:

Շուշանիկ լուռ վայրկյան մը չեչո նայեցավ տղու գլխահակ դիրքին, ուր տեսակ մը համակերպություն, դժգոհություն ու վճռականություն իրարու էին փարած ու վերջապես ըսավ.

– Ուրիշ խոսքով՝ կնոջ մը սերը, կենակցությունը, ընտանիքի կյանքը ու իր մանր ու խոշոր բախտավորություննները Դուք կամքով կզոհեք ու Ձեզի կդատապարտեք մշտական մենակեցության, միևնույն ժամա-

նակ Համոզված Ձեր վարմունքի անխմաստ ու հակաբնական ըլլալուն: Եվ այս բոլորը միայն հասարակութեան ծառայել կարողանալու համար, չէ՞, մեկ բառով՝ կատարյալ անձնազոհութեուն:

– Անվանեցե՛ք, ինչպես որ կուզեք:

– Ձեր գիտակցութեան ու Ձեր գործունեութեան մեջ միշտ հակառակութեուն մը կա, որուն ես չեմ համակրիր, Ձեր ընել ուզածը և Ձեր համոզումները իրար չեն բռներ, չեն բխիր իրարմե, այդ ճամփան վար, շա՛տ վար կրնա տանիլ, բայց վե՞ր, օ՛, երբե՛ք, չեմ հավտար:

Բայց նկատելով, որ տղան միշտ գլուխը կախ իրեն ոչինչ չէր պատասխաններ, հանկարծ անդրադարձավ.

– Սակայն, պատրո՛ն Սիրաքյան, չըլլա թե խոսքերս իբրև վիրավորանք ընդունիք. դուցե կսխալիմ, միայն դժբախտութեուն մը ունիմ, որ իմ կարծիքս լռել չեմ կրնար:

– Եվ շատ աղեկ կընեք, օրիո՛րդ: Վիրավորվելու բնա՛վ միտք չունիմ, վստա՛հ եղեք,– պատասխանեց երիտասարդը լուրջ ու դառն ժպիտով մը:

Ու խոր չունչ մը առնելեն ետքը շարունակեց.

– Իսկ ինչ կվերաբերի Ձեր նկատողութեան, մեջը անշուշտ ճշմարտութեուն մը կա, բայց կա և կարծեմ քիչ մը անարդարութեուն ու երեսանց դատողութեուն, միայն անկեղծ խոսելով՝ ես ինքս ալ չեմ կրնար որոշել, թե ուր կվերջանա ճշմարտութեունը, և ուր կսկսի անարդարութեունը:

– Աղե՛կ: Հիմա որ փոխադարձաբար իրարու հայհոյեցինք ու կշտացանք՝ եկե՛ք հաշտվինք նորեն ու ճամփանիս չարունակենք. այո՞:

Նայեցան իրարու, ժպտեցան ու չարժվեցան առաջ:

Մուտեցեր էին արդեն ձորի բերնին, ուր արահետը հանկարծ սկսավ ավելի սեպանալ, ժայռերը խտացան՝ դիզված իրարու վրա տեսակ մը անտառ ու անկանոն սանդուղ կազմելով: Սանդուղ մը, որուն աստիճանները հետզհետե կխոշորանային՝ վերելքը դժվարացնելով:

Աղջկան շրջազգեստը ավելի ևս կխանգարեր աստիճանե աստիճան ոտք փոխելը:

– Ձեռքերնիդ տվե՛ք ինծի,– ըսավ տղան:

Յատկեց սանդուղի վերի ոտքը, բռնեց ամուր անոր մեկնած ձեռ-

քեն և քաշեց իր կեցած ժայռին վրա, ցատկեց ինքը հաջորդին վրա ու դարձավ իսկույն ընկերուհիին օգնելու:

– Ա՜հ, ինչ հանգիստ է այսպես,– բացականչեց աղջիկը՝ ուրքը ժայռի եզերքին հենած, կես մը օդին մեջ, կես մը տղու թևեն կախված:

– Եվ ինչպե՜ս ալ ուժով եք:

Երիտասարդը բուռն հաճույք մը զգաց հանկարծ այդ գովեստեն: Սիրտը սկսավ բաբախել, ու ալ ավելի պինդ բռնեց աղջկան մերկ դաստակեն:

Նո՛ր զգացում մը, կարծես անզուսպ հպարտության մը սկսեր էր չրջան առնել իր ջիղերուն մեջեն:

Հպարտություն մը իր առնական ուժին, հպարտություն մը իր այդ ուժերեն աղջիկ մը կախված ըլլալուն:

2

Գլխավոր ճամփուն մոտիկ՝ խոշոր սալորենիի մը ստվերին տակ՝ թավ խոտերուն մեջ, կռնակին վրա փռվեր էր վարդապետացուն: Երկու թևերը գլխուն տակը, բարակ ու երկար ճողուն մը ակռաներուն մեջ ու աչքերը հառած դիմացը:

Դիմացը՝ ձորի չեղ ելքին, ուր խիտ, չեչոտ ու փոքր ժայռերու ամբողջ հոտ մը արևի բարկ ճառագայթներուն տակ, տոթակեզ ոչխարներու նման, գլուխնին իրարու չուքին մեջ թաքցուցած՝ կարծես հիմա վար պիտի վազեին, վա՛ր՝ դեպի գետակը՝ իրենց տապն ու ծարավը մարելու:

Բայց բոլորովին ուրիշ պատկերներ էին երիտասարդի հառած աչքերուն դեմ. ան իր մեղկ ու ծույլ դիրքին մեջ անշարժ՝ ո՛չ թե կդիտեր, այլ կմտածեր: Երկա՛ր: Մինչև որ դանդաղ շարժումով մը հանեց գրպանեն ժամացույցը ու նայեցավ:

Շուտով կեսօր: Կամաց-կամաց երթալու էր վանք, պատառ մը բան ուտելու և անկե օրիորդ Մելինյանին: Այսօրվան պտույտին տեղը արդեն չատոնց ընտրած էր տղան: Ընտրած էր ձորի ամենեն ժայռոտ ու

ամենեն սեպ չավիղներեն մեկը, որ վերը՝ արտերը կ'հաներ. պետք էր, որ վերելքը դժվար ըլլար, ատիկա անհրաժեշտ էր:

Ու երիտասարդը ժպտեցավ ինքնաբավական ու նեղքին հուզված անհամբերութեանը ալ չդիմանալով՝ կռնակին վրայեն մեկ շարժումով դարձավ դեմքին վրա և հենվեցավ աջ արմուկին:

Նույն վայրկյանին էր, որ հետեւեն ճամփուն վրա սմբակներու տրոփ մը լսվեցավ, տղան մոացիր այն կողմ նայեցավ մեքենարար, բայց հանկարծ չոկվեցավ, կնճռոտեցավ ճակատը, ու դեմքին գծվեցավ մաղձոտ դժգոհութիւն մը, անախորժ անակնկալի մը ծանածռութիւնը:

Իսկույն ճանչցեր էր իր երկու ընկերը:

Կամաց մը եկավ ոտքի ու ծառերուն ետևեն դուրս եկավ ճամփուն վրա:

– Արտաչե՛ս,– պոռացին երկուքը միաբերան, ձիերը խթեցին ու ճիշտ անոր առջևը թամբերեն թռան վար:

– Հը՞, ինչպե՞ս ես, ի՞նչ ըրիր նայինք:

– Ավեքսանդրապոլ մերիններուն մարդ տեսա՞ր: Բագրատը ինչո՞ւ միասին չառիր, չէ՞ որ Անի գալ կուզեր:

– Վախնամ մեզի չա՛տ սպասեցիր:

– Վանահայրը ի՞նչ բանի է, հո՞ս է: Ջխոսի՞ս:

Վրա թափեցին Մինասն ու Սերոբ խառն ու արագ՝ երկու կողմեն տղու ձեռքերը պինդ թաւի տալով:

– Վանահա՞յրը, այո՛, հո՛ս է, այսինքն... չգիտեմ, այս առտու քիչ մը ուշ եմ ելեր քունես ու դեռ երեսը տեսած չեմ,– կմկմաց վերջապես:

– Ա՛խ, դուն ծո՛ւյլ,– բացականչեց Մինաս իր հասո ձայնովը:

Սա երկարահասակ, թիկնեղ, կարմիր ու այրած դեմքով, կլոր ու ցանցառ մորուքով, վոքր ու սուր աչքերով երիտասարդ մըն էր:

– Իսկ մենք ժամը հինգին ի վեր ապասդակներուն վրան ենք:– Վրա բերավ Սերոբ, որ նախորդի հակապատկերն էր. փոքրահասակ, թաւ մորուքով, ավելի նուրբ կազմով ու տեսակ մը մեղմ, մելամաղձոտ հայացքով, որ ակնոցներու ապակիին ետևեն ավելի տխուր ու ավելի միապաղաղ կղառնար:

Արտաչեսը մեջերնին առած, ձիերու սանձերեն քաշելով՝ երևքը միասին դեպի վանք դիմեցին:

– Ի՜նչ տեսակ մարդ է վանահայրը,– հարցուց կարճահասակը:

– Քիչ մը կծծի, քիչ մը չատախոս, քիչ մը խորամանկ, քիչ մըն ալ հանդուգն. ավերակի մը վանահա՛յր:

Տղու ձայնին մեջ արհամարհանքի ու հեգնելու այն աստիճան պարզ չեշտ մը կար, որ հրկու նորեկները անգամ մը ակամա իրարու նայեցան:

– Երևի նեղացուցեր է քեզի,– նկատեց երկարը:

– Ընդհակառա՛կը, մինչև անգամ ինծի սորվեցուց չուտով եպիսկոպոս դառնալու խորունկ գաղտնիքը:

– Վա՞յ, ո՞րն է տեսնենք այդ գաղտնիքը:

– Շիտակը հիմա տրամադիր չեմ: Ավելի աղեկ է նորեն իրեն կհարցնեք, իրիկո՛ւնը:

– Ինչո՞ւ անպատճառ իրիկունը:

– Ցորեկը սաստիկ զբաղված է, երկար պատմուճյուններու գլուխ չունի և լուրջ է զբաղված, պետք է վազել արտե արտ, պետք է գյուղացիները հսկել ու հայհոյել, պետք է մառանը լեցնել, մառա՛նը, կատակ չէ: Վանքի մառա՛նը:

– Այդ մարդը քեզի բան մը ըրեր է, ի՞նչ տարօրինակ խոսելու եղանակ է,– կրկնեց երկարահասակը խոժոռած դեմքով մը:

– Տարօրինա՞կ,– հարցուց Սիրաքյան անփույթ:

– Հա՛: Սմբատը քեզի բարև ըրավ,– ընդհատեց հանկարծ ակնոցավորը:

– Սմբա՞տը ով է:

– Քանի՞ Սմբատ կա մեր ընկերներուն մեջ,– պատասխանեց ընկերը տեսակ մը սրտնեղած:

– Ա՛խ, ա՛ն, նորեն նույն դատարկախո՞սն է:

– Դատարկախոսը դու ինքդ ես:

– Ատիկա արգելք մը չէ, որ ան ալ նույն արհեստը ունենա:

Եվ ասիկա ըսված էր այնպես լուրջ ու պարզ շեշտով մը, որ ընկերները չկրցան ծիծաղնին զսպել:

– Երևակայե՛, ան ալ վճռեր է չուտով սարկավագ ձեռնադրվի,– ավետեց Մինաս:

– Մի՞թե: Այդ մեծ զոհաբերությունը չիտակը անկե բնավ սպասելի չէր:

Ու «մեծ զոհաբերությունը» արտասանված էր ինքնահատուկ շեշտով մը:

– Ի՞նչ ըսել կուզես:

– Չէ՞ որ չարունակ կկրկներ, թե ինքը վանական կյանքի հարմարություն չունի, թե իր կոչումը...

– Կոչումը աղեկ, բայց քննությանը կտրվեր է:

– Հա՛, ատաՆկ ըսե. հիմա կհասկնամ, անշուշտ պյուղե պյուղ աննշան ու անոթի թափառելեն ավելի աղեկ է դյուցազնական անձնազոհություն մը ընելը:

– Իրավունք չունիս ուրիշները այդպես հեգնելու,– հանդիմանեց երկարահասակը վրդովված,– ան ինչո՞վ է մեզմե պակաս, որ քիչ մը պարզ ու միամիտ բնավորություն ունի, ուրիշ ոչինչ:.

– Ուրեմն մինչև անգամ մեզմե բանով մը ավելի է,– կցեց Սիրաքյան Հանդարտ:

Երկու ընկերները նորեն նայեցան իրարու ու լռեցին:

Կես ժամվան չափ վերջը վանահայրը դարձավ վանք:

Արտաչես իր երկու ընկերները ներկայացուց ու դարպասի սեմին վրա կեցած խոսակցելու վրա էին, որ ասդին Քանյաններու սենյակին առջևը երևցավ տիկինը դայակին հետ:

Սիրաքյան բարևեց հեռուեն:

– Ո՞վ են,– հարցուց Սերոբ:

– Քանյան Կարոյի հորեղբայրն է հոս իր ընտանիքին հետ. չատ համակրելի մարդիկ են, անկե՛ղծ, հյուրասե՛ր, իրիկունները թեյի հոն եմ սովորաբար, այս իրիկուն միասին կերթանք, չատ գոհ կմնան:

– Լա՛վ, իրկունը ժամերգութենեն վերջը երթանք,– համաձայնեցավ Մինաս:

– Ինչ ժամերգություն, հոս ամեն օր ժամերգություն կկա:

– Ինչո՞ւ,– պնդեց երկարահասակը:– Եկեղեցի կա, ահա՛ հայր սուրբը հոս է, մենք ալ դպիրները:– Եվ դիմեց ուղղակի վանահորը,– Հա՛յր սուրբ, փառավոր եկեղեցի մը ընենք, քանի օր է՝ սիրտս կարոտցեր է:

– Ինչ կարիք կա ուրբաթ իրիկունով,– մռմռաց Արտաշես դժգոհ:

– Ախորժակդ կիրակի առտվան պահե, որդի՛,– կցեց վարդապետը:

Ու արագ մեկ-երկու քայլ առաջ վազելով՝ վերցուց գետնեն քարի կտոր մը ու վարժ թափով մը նետեց դիմացի կանաչեղենի ածուներուն մեջ, ուր հավեր էին ներս մտեր.

– Ֆշշա՛, անիծածնե՛ր:

– Շիտակ է, Մինա՛ս, այսօր եկեղեցի ընելու ի՞նչ կարիք կա. միս-մինակ, մեջտեղ ո՛չ մարդ կա, ո՛չ ժողովուրդ,– ավելցուց իր կողմեն ակնո-ցավորը ու նստեցավ սեմին վրա:

– Եկեղեցական կարգերն ու պաշտամունքները ժողովուրդին ցույց ընելու համա՞ր են նշանակված:

– Ժողովուրդին ցույց ընելու համար չէ, տիրացո՛ւ ջան, բայց իհարկե ժողովուրդին համար է, ալ ի՞նչ ժամերգութիւն, եթե մեջտեղը ժողովուրդ չկա,– վճռեց հայր սուրբը հավերու արշավեն ետ դառնալով:

– Կարծեմ աղոթքն ու ժամերգութիւնը Աստված փառաբանելու համար է, հա՛յր սուրբ,– ըսավ երկարահասակը գեչ քողարկված կշտամ-բանքով մը:

– Ա՛, որդի՛, Աստված քու փառաբանութի՞ւդ է կարոտ: Եվ վեր-ջապես մինչև հիմա արդեն ձանձրացած կըլլա ամեն օր միևնույն բանը լսելեն,– կատակեց ծերուկը ճերմկած բեղերուն ու մորուքին մեջեն:

Մինաս բոլորովին կնճռեց ճակատն ու դեմքը:

– Ուրեմն ինչպե՞ս արտահայտենք մեր հավատքը, մեր կրոնական սուրբ զգացումները, չէ՞ որ ժամերգութիւնը մեր ներքին հուզումներու խոստովանութիւնն է տիրոջ խորանին առջև:

– Տիրացո՛ւ, հավատքը ուրիշ բան է, եկեղեցին ու ժամերգու-թիւնը՝ ուրիշ բան: Ներքին հավատքը, ինչպես որ կըսես, երկար-բարակ արտահայտութիւններու պետք չունի, իսկ եկեղեցական արարողու-թիւնները հնարված են ժողովուրդի սրտին համար. «ի սփոփանս և ի մխիթարութիւն հավատացելոց»:

Ու վերարկուին թևերը ետ նետելով՝ իր ամուր քալվածքովը մտավ վանքին բակը:

– Այսպես է, որ բոլորի սիրտը պաղեցուցեր են,– կանչեց Մինաս վարդապետի հեռանալուն պես՝ իր վրդովված հոգիին բովանդակ մաղ-

ձով: – Ո՛չ, մենք՝ նորերս, պարտական ենք նորեն հոգի ու ոգևորություն մտցնելու այդ սուրբ կարգերուն ու աղոթքներուն մեջ և բծախնդիր ճշտությամբամեն ինչ կատարելու:

Սերոբ ձեռքով ու դիմքով տատամսոտ ծամածռություն մը ըրավ ու կցկց խորհրդավոր ցած ձայնով մը.

– Սկզբունքով քեզի համաձայն եմ, սակայն ժամասացություն մը ավելի կամ պակաս, ատկն ի՞նչ վնաս: Եկեղեցին ու դավանանքը ինծի համար ամենեն առաջ վահան մըն է մեր ազգային գոյության:

– Սիրելի՛ս, քանի՞ ատակ արժես դուն ու քու վահանդ, երբ ժողովուրդը հետզհետե սառն ու անտարբեր կդառնա դեպի հոգևորականությունն ու կրոնը:

– Ցավալի է, հոգի՛ս, ցավալի, բայց ի՞նչ կրնանք ընել:

– Ի՞նչ, ա՛յ, ես քեզի ըսեմ: Եթե կուգես, որ ժողովուրդի մեջ նորեն ազդեցություն ձեռք բերես, պետք է ամենեն առաջ իր հավատքը, իր կրոնական զգացումները արծարծես: Եվ որպեսզի իր այդ զգացումները բորբոքելու հաջողիս, պետք է ինքդ ամենեն առաջ այդ ջերմ հավատքը քու մեջդ վառես. միայն ճշմարիտ ոգևորությենե ու խորին համոզումեն բխած խոսքը ժողովուրդի սրտին կազդե:

– Պայմանավ, որ այդ համոզումն ու ոգևորությունը բնածին ըլլան,– նկատեց Սերոբ իր մտածումներուն մեջեն:

– Բնածին թե ո՛չ բնածին՝ պիտի ունենաս: Հոգևորականներուս գոյության իմաստը, մեր ազգեցության աղբյուրը հավատքն է միայն: Հոգևորականությունը բարձրացնե՞լ կուզես՝ պետք է հարցի արմատին դիմես: Հավա՛տք քու պաշտոնիդ վրա վերո՛ւստ նշանակված ըլլալու, հավա՛տք մեր պապենական դոգմրիկ ծեսերուն ու աղոթքներուն և աստոնց սուրբ հոգիին չնորհքովը կարզադրված ըլլալուն, հավա՛տք հանդերձյալի արդար հատուցման հավիտենական գեհենին ու մշտնջենական երջանկության, որուն դեմ ի՞նչ է մեր երկրավոր վաղանցիկ կյանքը:

Այս իմաստի ճառեր Սիրաքյան հաճախ էր լսած Մինասի բերնեն, բայց կարևորություն չէր տված՝ «Մարդը հավատք ունի, ինչ ընենք» մտածելով, դեռ տեսակ մը պատկառանք ալ էր զգացած կարծես: Բայց այսօ՛ր ինքն ալ չէր գիտեր ինչպես, քանի աչքերը ընկերոջը դեմքին գամած, անոր խոսքերուն ականջ կդներ, այնքան ավելի ու ավելի անա-

խորժ, ճմլող բան մը ու վրդովմունք կզգար իր մեջը, ոչ մեկ կերպ ինքը-զինքը չէր կրնար ազատել այն զգացումեն, որ այդ ամբողջ ոգևորութիւնը չինծու, փքուն ու անիրական բան մը ուներ իր մեջը:

Եվ իր այդ տպավորութիւնը ընկերոջը երեսին նետելը չուտով պահանջ դարձավ իրեն համար, բայց ինքզինքը զսպել ուզեց, վիճել չէր ուզեր, «իրե՞ն ինչ ուրիշները»:

Արդեն ընկերը՝ Սերոբն ալ խոսքը դարձուց կատակի.

– Բայց քանի որ այս երկրավոր, վաղանցիկ կյանքին մեջն ենք դեռ, ավելի լավ է որոշենք, թե ո՞ր պիտի երթանք հացեն ետքը, պտտելու, և խոսքը Արտաշեսինն է:

– Հացեն ե՞տքը,– հարցուց Սիրաքյան ու ցնցվեցավ, այլևս ջուրն էր ինկած Շուշիկի հետ պտույտը:

– Այդչափ դժվար է ընտրե՞լը:

– Տեսնենք, երևի տեղ մը կերթանք,– պատասխանեց վերջապես դժկամ:

Է

Դուրսի նորածին լույսը եկեղեցիին նեղ ու երկար, փոքրիկ պատուհաններեն հազիվ ներս կսպրդեր. և թանձր խավար էր դիզվեր անկյունները, այուններուն ետևը ու գմբեթի փոսին մեջ:

Խորանին վրայի զույգ մը մոմերու ուժասպառ լույսերը վարդապետի արտասանած յուրաքանչյուր բառեն կարծես կսարսռային՝ տեսակ մը հիվանդոտ դեղնութիւն թափելով իրենց անմիջական մոտիկ փոքր տարածութեյան մը վրա, որ հետզհետե որքան հեռու, այնքան ավելի կգունաթափեր, կմարմրեր, մինչև որ մութի չերտերուն մեջ վերջնականապես խեղդվեր:

Վարդապետը այունին տակը արձանացած՝ իր աղոթքները կծամծմեր իրարու ետևե, դպիրը, աղոտոտ ու գորշ եկեղեցական շապիկը վրան, ժանգոտ ու ղողանջող բուրվառը ձեռքը սեղանին դեմ կեցած, վարդապետին արագութեյանը հասնելու կջանար, մինչ տիրացուները՝ նույնպես մոմոտ ու գորշ շապիկներու մեջ, գմբեթին ճիշտ տակը դիրք էին բռնած

գրակալին առջևը ու բարակ մոմերով շարականը լուսավորած՝ կերգեին իրենց կարգին՝ իրենց առավելութեան ու արվեստին գիտակից հաստատ ու լեցուն չեչտերով:

Երեքեն միայն Սիրաքյանն էր, որ կես քայլի մը չափ ետ քաշված, ձեռքերը ծալած կուրծքին ու պլուխը քիչ մը աջ ծռած անշարժացեր էր:

– Տղա՛, չերգե՞ս, – դարձավ Սերոբ Հանկարծ ընկերոջը դաղարի մը վայրկյանին:

– Գիտես, որ ո՛չ ձայն ունիմ, ո՛չ ալ եղանակներեն բան կհասկըննամ, – պատասխանեց տղան կարճ:

– Բայց վերջապես պիտի սորվի՞ս, թե՞ չէ, – վրա տվավ երկարահասակը շտապ ու սկսավ «ալելուիա»-ն:

«Սորվի՛լ...»;

Արտաշես, աչքերը խորանի մոմերեն մեկուն լույսին հառած, կմտածեր:

Ընկերը իրավունք ուներ. այդ բոլոր երգերը, սաղմոսները, մաղթանքները, աղոթքները չէ՞ որ այդ իր արհեստն էր դառնալու շուտով, իր արհեստը, գիտնալ այդ ամենը և ամեն օր կրկնել: Հանկարծ սկսավ հաշվել, թե տարեկան ընդամենը քանի՞ ժամ է իր այդ պարտականութիւնը: Առտուները մոտ երկու, ժամ մը իրիկունը, տոն օրերն ու պատարագը միասին առնելով՝ մինչին հաշիվ օրական չորս ժամ, ան ալ օրվան ու աշխատանքի ամենաթարմ ժամերեն: Ու մտքով սկսավ երկարբարակ 4-ը 365-ով բազմապատկել. ելավ 1460:

«Օրիորդ Մելինյանը գուցե իրավունք ունի. մեղք չէ՞ ձևական պարտականութեան մը համար սպանված այսչա՛փ ժամանակին»:

Տեսակ մը սրտնեղութիւն եկավ վրան, ու մտածումները ընդհատեց:

Մինաս անոր առջևը կեցած, աղոթքի խոսքերուն հետևելով՝ չուտչուտ կծռեր ու կխաչակնքեր երեսը. խոշոր, փառավոր ու ծանր խաչեր ամբողջ կուրծքին ու դեմքին վրա:

Արտաշես սկսավ դիտել, նախ շրթունքը խածավ միայն և ուզեց կարևորութիւն չտա, բայց շուտով սկսավ ջղային դառնալ ու զայրանալ:

Այդ միջոցին էր, որ ետևեն եկեղեցիին դռան թեթև ճռինչը լսվեցավ:

«Քանյաններն են», – անցավ տղու գլխեն, ամոթի պես բան մը վազեց մեջեն ու առանց ետ դառնալ Համարձակելու՝ ականջները սրեց:

Ներս մտնող չկար, գուցե հովն էր կամ դուռը ինքնին: Միայն տղուն մեջ ալ գամված մնաց այն Համոզումը, թե ուր որ է հիմա Քանյանները ներս պիտի մտնեն: Ընկերները նախորդ իրիկունը հայտնած էին անոնց այս առտու ժամասացություն ըլլալու մասին, և կիները շատ հավանական է, որ հետաքրքրվեին:

Դուրսեն լսվող ամեն ծպտուն տղու սիրտը նետել կուտար ու լսելիքը կպարեր:

Անգամ մը նայեցավ իր վրան. երկար շապիկը՝ մոմոտ ու աղտոտ, կախված էր ուսերեն, կուրծքի բացվածքեն իր հագուստները կերևային, յուրաքանչյուր թևին վրա փեթռտած ոսկեթելով բանված խաչ մը, նույն փեթռտած ոսկեթելը նաև վարը՝ շապիկին եզերքը, որուն տակեն տաբատին ոտքերը շատ ծիծաղելի կերպով դուրս կհետվեին: Նայեցավ երկար իրեն, վերջը փորձի Համար նայեցավ իր ընկերներուն վրա և հանկարծ չա՛տ, չա՛տ տարօրինակ թվեցավ իրեն այդ հագուստները, այդ դիրքը:

«Ո՞վ գիտե՝ որչա՛փ մեզի մեղքնան պիտի Քանյանները»,– անցավ մտքեն, ու ամոթեն ու զայրույթեն կարմրեցավ:

Ո՛չ, չէր ուզեր, որ իրեն այդ դիրքին մեջ տեսնեին, պե՛տք չէր:

– Ես կերթամ,– չընչեց կամաց մը ընկերներուն և առանց անոնց չվարած դեմքերուն ուշ դարձնելու՝ մտավ պահարան, հանեց շապիկը ու պատերուն տակեն արագ դուրս սպրդեցավ եկեղեցիեն:

Դուրսը պայծառ օր էր արդեն: Արևը ձորի ձախ շրթունքին վրձինի մեկ շարժումով ոսկիի գույն էր քսեր ու թա՛րմ, զո՛վ լեռնական օդ մը:

Բոլոր կրծքովը խոր չունչ մը առավ, վազեց իրենց սենյակեն վերցուց իր սրբիչը ու նետվեցավ վանքի դուռնեն դուրս, մինչ ձորի պատերուն մեջ վանքի զիլ փոքրիկ զանգակը սկսավ կատակասեր արձագանքներուն հետ խաղի ելլել՝ ժամասացության մեկ նոր բաժանումը ազդարարելով:

Քանյաններու բնակարանին դուռն ու պատուհանները բաց էին, թեև մեջտեղը ոչ ոք չկար:

Տղան չտապ ձորեն վար վազել կուզեր, որ եռևեն իր անունը տվին.

– Պարոն Սիրաքյան:

Քանյանն էր տան պատուհանին:

– Ո՞ւր կշտապեք այդպես առանձին:

Տղան դիմաց դնալի պատուհանը:

Օրիորդն ալ եկավ պատուհան.

– Բարի լո՛ւյս:

– Բա՛րև, կերթամ լողանալու:

– Մինա՞կ, ո՞ւր են Ձեր ընկերները,– հարցուց Քանյան:

– Անոնք եկեղեցին են:

– Եվ Դուք ո՞չ,– հարցուց աղջիկը զարմանքով:

– Ես ալ հոն էի, ներսի օդը քիչ մը շատ ճնշված էր, և սիրտս լողալ կուզե,– պատասխանեց երիտասարդը անսովոր համարձակ շեշտով մը ու տեսակ մը քմայնոտ:

– Իսկ մեր միասին պտույտները այլևս վերջացան իհարկե,– վրա բերավ Շուշիկ ժպիտը շրթունքին:

– Պարոնը չի կրնար ընկերները ձգել, պետք է անոնց հետ երթա, երևի գործ ալ կունենան միասին,– արտասանեց Քանյան:

– Չէ՛, այդ չէ պատճառը, բայց պարոն Սիրաքյանը անշուշտ ալ ինծի հետ ըլլալն կ'քաշվի:

– Ինչո՞ւ, օրիո՛րդ:

Ու չփոթումեն ձեռքերը ուր դնելը չէր գիտեր:

– Նո՛ւ, պարզ է. Ձեր ընկերներեն կակնածիք: Այրվեն երեկ իրիկուն նկատեցի, որ Ձեր շարժուձևերը բոլորովին ուրիշ էին ինծի հետ, տեսակ մը պաշտոնական: Եվ Ձեզի չեմ կրնար մեղադրել, կհասկնամ, որ ինծի մոտիկ ըլլալը Ձեր հարգը պիտի ձգե Ձեր պաշտոնակից ընկերներու աչքին:

Տղու աչքերը հանկարծ բոցավառեցան:

– Ձրի ենթադրութիւնները, հարգելի՛ օրիորդ, դրե՛ք մեկդի: Եվ պատրա՛ստ եղեք ճաշեն ետքը, որ երթանք պտույտի. և՛ այսօր, և՛ վաղը, և՛ ամեն օր, քանի որ ես հոս եմ, և՛ առանձին, առաջվան պես, ո՛ւր որ կուզեք, ինչպե՛ս որ կուզեք, ե՛րբ որ կուզեք:

Այդ ոգևորութեան ու տղու աչքերուն այդ կայծկլտումին դեմ՝

Շուշանիկի այտերը հանկարծ հուր արին, ու կուրծքը սկսավ թեթև մը պղպջալ:

– Շնորհակալ եմ,– ըսավ վերջապես աղջիկը՝ գլխու թեթև շարժումով մը ձեռքը պատուհանեն դուրս պարզելով:

Տղան բռնեց ու թոթվեց:

– Ուրեմն կսպասեմ, ժամը երկուքին:

– Ժամը երկուքի՛ն, օրիո՛րդ, ցտեսութիւն:

Ու գլխարկովը անոնց վերջին բարև մըն ալ տալով՝ դեպի ձորին էջքը վազեց:

Շուշիկ աչքերովը հետևեցավ տղուն մինչև անոր՝ ժայռերուն ու ծառերուն ետևը անհետանալ ըլլալը, վերջը ծանր ու հանդարտ քաշվեցավ քիչ մը ետ, վերցուց իր պատուհանին մեջ ձգած կարը, նստեցավ ու սկսավ արագ աշխատիլ, տեսակ մը տենդոտ շարժումներով, հազիվ կարելի էր ասեղը նշմարել:

– Մե՛ղք այդ տղաքը,– բացականչեց տիկինը սենյակին խորքեն,– խելքս չի հասնիր՝ ինչպես են հոգևորականութեյան այդպես սեր տվեր:

– Ինչ կա չհասկնալու,– պատասխանեց ամուսինը:– Երիտասարդ, հափշտակվող տղաք են, ամեն բան տակնուվրա ընելու, անուն, աղմուկ հանելու պահանջը մեջը կեռա իրենց թարմ արյունին հետ, ու դեռ չի գործածված ուժեր ունին իրենց ջիղերուն մեջ. ատոր կըսեն գործունեութեյան ծարավ: Վանքի մեջ ականջնին լեցուցեր են, թե գլխուն վեղարն ունեցողն է ազգին փրկիչը, խեղճ տղաքն ալ հավտացեր են:

Մինչ «խեղճ տղան» նույն թափովը կշտապեր ոտքի նեղ չավիղեն վար, որ նեղ ու երկար ժապավենի մը պես ինկեր էր ժայռերուն մեջ ծուռտումուռտ: Խիճ ու ավազ կգլտորեին անոր արագ քայլերուն տակեն, և հոս ու հոն այդ աղմուկեն խրտնած մեկ-երկու խլեզ ժայռերու մեջ ծերպ մը կաճապարեին՝ իրենց երկար պոչերը ետևնուն քարշ տալով:

Ժապավենը կերկարեր ու մյուս եզերքը անցնելու համար կմտներ նույնիսկ գետակին մեջ, ուր չուրեն դուրս ցցված քարերու շարք մը բզկտած ժապավենին փերթերը կներկայացնեին:

Ջուրին վրա տղան թողուց ժապավենը ու քարե քար ցատկելով՝ իջավ հոն, ուր սովորաբար լողալու կուգար: Ահագին ապառաժներուն գրկին մեջ սեղմված գետակի ամենեն խորունկ ու ամենեն ընդարձակ

տարածութիւնն էր, ուր մեկ կողմեն ջուրը բյուրեղ ջրվեժով ներս կը խուժեր Հանճնապաստան աղմուկով մը, մինչ մյուս կողմեն իր նախորդ ալիքներուն նման ինքն ալ Հանդարտած ու հիասթափ ճամփան կ'շարունակեր դժգոհութեան մրմունջը շրթունքներուն վրա:

Երիտասարդի Հանվիլն ու ջուրը նետվելը ակնթարթի մը գործը եղավ, վերին աստիճանի զվարթ ու կայտառ տրամադրութեամբ մը: Ջուրը սառն էր ու դանակի պես կկտրեր, և տղան կպուտար ցավեն ու հաճույքեն՝ անոր հետակ ու հեղուկ մկաններուն մեջ ճուկի մը պես գալարելով:

Երբ վանք դարձավ, ընկերները, եկեղեցիեն նոր ելած, նստեր էին իրենց սենյակը նախաճաշի լուրջ ու մտախոհ դեմքերով: Սենյակին դուռը կռնակին վրա բաց էր:

Սիրաքյան մեկ ոստումով ցատկեց ներս՝ թևթև ու աշխույժ:

– Բարի լո՛ւյս ձեղի:

– Աստծու բարին:

– Ո՞ւր էիր,– հարցուց երկարահասակը կարճ ու չոր:

– Լողալո՛ւ, այնպե՛ս հիանալի պաղ է ջուրը:

Թոթվեց երեսսրբիչը ու փռեց սենյակի դռան քովը՝ մամռոտ քարի մը վրա :

– Աւտո՞ր համար եկեղեցիեն ելար,– հարցուց նույն հանդարտ ու չոր ձայնը, որուն տակեն գալիք փոթորիկը իր գլուխը ցույց կուտար:

– Գրե՛թե, քիչ մը սիրտս նեղ էր ներսը:

– Ա՛հա, այդպես չըսե՛ս, մա՛րդ Աստծու,– մեջ նետվեցավ Սերոբ՝ ուրախ խնդիրի այդ հաշտարար ձևը առնելեն: – Երևի չնչառութեան դժվարութեուն. իսնաւ են հոս սենյակները:

– Իմ չնչառութեունս ոչ մեկ դժվարութեուն չունի,– պատասխանեց Սիրաքյան՝ ինքն ալ հետզհետե զրգռվելով այս հարցաքննութենեն:

– Այն ատե՞ն,– չեչտեց Մինաս խիստ:

– Այն ատեն անպատճառ իմանա՞լ կուզես, թե ինչու եկեղեցիեն ելա. իմացի՛ր, որովհետև ինծի անտանելի էին քու անվերջ խոչոր խաչերդ ու մեր միալար երգերուն հավիտենական կրկնութեունը, գո՞հ ես հիմա:

– Եվ դո՛ւն քանի մը շաբաթեն սարկավագ պիտի ձեռնադրվիս, հա՞:

– Սարկավա՞գ...

Կարծես այդ բառը կյանքին մեջ առաջին անգամը կլսեր:

Բավական վերջն էր, որ կոտրած չեչոտով մը ավելցուց.

– Համենայն դեպս ո՛չ տարին 1460 ժամ այդ մռայլ պատերուն տակ աղոթք մրմնջելու համար:

– Երանի՛ մեզի: Կլսե՞ս,– դարձավ Մինաս Սերոբին:

Իսկ Սերոբ անհրաժեշտ համարեց այս սուր խոսակցութեան վերջ դնել ու բացականչեց բարկացած չեչոտով,

– Ես հոս եկեր եմ թարմանալու ու պտտելու և ո՛չ թե ձեր տխմար վեճերը լսելու. հերի՛ք է վերջապես: Ինչ ենք ընելու ճաշեն ետքը, կուզեմ, որ բարձրանանք Ագարակ:

– Այո՛, արժե որ երթաք Ագարակ,– հաստատեց Սիրաքյան անտարբեր չեչոտով մը՝ ներքին անհանգստութիւնը հնար եղածին չափ քողարկել ջանալով,– թեև ես այսօր ձեզի հնտ գալ չեմ կրնար: Նախ որ վերը Ագարակի կողմերը ես արդեն եղած եմ քանի մը անգամ, և երկրորդ՝ օրիորդին խոստացեր եմ այսօր միասին Տիկոր երթալու:

– Որո՞ւն,– հարցուց Մինաս՝ կարծես ականջին չհավտալով:

– Օրիորդի՛ն, օրիորդ Մելինյանի՛ն:

Երկար ու կարճ ընկերները ակնթարթ մը չեչտ իրարու երես նայեցան:

Եվ ոչ ոք ոչինչ չպատասխանեց:

Ը

Արևը արևմուտքի ատամնավոր լեռներեն մեկուն ուսին հենած՝ խոշոր դէմքովը կծիծաղեր ընդարձակ լեռնադաշտի լայն մեջքին վրա, որուն մեկ կողմը ինկած էր Խծկոնքի ձորի երկար ու խոր ճեղքը. ճեղք մը կարծես նշդրակով բացված ծերուկ բարձրավանդակի թիկունքին՝ վիթխարի վիրաբույժի մը հսկա ձեռքին տակ, որուն արդյունքն էր բացվածքին ծուռտումուռ շրթունքը:

Շրթունքի այն մասին վրա, որուն տակ ձորին պատը սեպ վար կսահեր ղեպի անդունդը, վերը՝ ճեղքի ճի՛շտ եզերքին, գետինը, չորցած խոտերուն վրա ինկեր էին երկու վարդապետացուները:

Առաուն անոնք Արտաշեսի վարմունքեն վրդովված ու պայթացկոտ՝ նույնիսկ պատյան տրամադրությունը կորսնցուցեր էին: Իրիկվան դեմ միայն, «քիչ մը բացվելու համար», բարձրացեր էին ձորեն դուրս լեռնադաշտը: Այդ ելքը փոխեր էր, արդեն անոնց տրամադրությունը, և Արտաշեսն ու «իր հիմարությունները» վերջապես մեկ կողմ թողած՝ սկսեր էին կրկին իրենց սովորական խոսակցություններն ու ոգևորությունը, մինչև որ հոգնած նետվեր էին հոգ պահ մը հանգստանալու:

Մինաս ամբողջ երկայնքովը փռված կռնակին վրա, աչքերը երկնքի մանուշ կապույտին հառած՝ կմտածեր:

Կմտածեր և Սերոբ՝ նստած ոտքին մեկը դեպի կուրծքը ծալած, գեմքը դրած ծունկին ու հայացքը վարը ձորի մեջեն վեր սլաքվող դմբեթներու կույտին դամած:

Հանկարծ կես մը ընկերոջը դառնալով՝ բացականչեց.

– Ամեն, ամեն լեռան կողքին, ամեն ձորի մեջ հետք մը կա. կա մնացորդ մը ավերակ կամ չեն, որ կողմն ալ որ նայիս: Թագավորի մը հիշատակը, իշխանի մը նվերը իր ժողովրդին: Մարդ ամեն վայրկյան ակամա այդ բագրատունիներու սովերը իր չուրջը կզգա. այդ խելացի, խորամանկ ու հայրենասեր թագավոր-նախարարներու: Եվ գիտե՞ս, սարսռելիակ զգացում մըն է. կարծես հյուր եկած ըլլամ այդ իշխաններուն հողը, ամեն ավերակ, քար, բերդ կամ եկեղեցի պատմություններ կբանա իր ծոցեն: Ա՜խ, ինչե՜ր, ինչե՜ր պահված չեն այդ թափթփած սյուներուն ու քարերուն տակ և անոնց արձանագրություններուն մեջ: Եթե այդ բոլորը փորվեր, հետախուզվեր, որչափ թանկագին հնություններ դուրս պիտի գլխեին, ինչ պատմական դանձ:

Ու ոգևորված աչքերը հպարտությամբ փայլեցան: Ակնթարթ մը մտածեց ու կրկին վրա տվավ.

– Արդեն ինչ բանի վրա ուշք են դարձուցեր մեր հոգևորականները մինչև հիմա: Բոլո՛րը ծայրեն սկսելու է. ժողվե՛լ մեր հին գրականության փշրանքները, հանե՛լ մեր իշխաններու ու կաթողիկոսներու պատմությունը այդ հողուտած արձանագրություններեն, հետզհետե հավաքել այդ հնախոսական բեկորները, ձեռագիրները, էջմիածինը կարելի է առաջնակարգ կեդրոն մը դարձնել այդ ժողովածուներուն ու մեր պարծանքը:

– Կըլլա, կըլլա, – պատասխանեց Մինաս վստահ ու հավատքի խորին շեշտով մը՝ կռնակի վրայեն քիչ մը կողին դառնալով։– Արշալույսը ծագած է արդեն մեր կաթողիկե աթոռի միաբանութեան վրա։ Կարգապա՛հ, սրբակենցաղ հոգևորական միութի՛ւն մը նոր, բոլորս միաբան նվիրված մեր սրբութիւններուն, դարևոր ավանդութիւններուն ու պատմական բեկորներուն նախանձախնդիր պաշտպանութեանը։

– Անշուշտ։ Միաբանութիւն մը չա՛տ ավելի ազգային, քան Վիեննան ու Վենետիկը. ան ալ մեր բուն ժողովուրդին մեջ, մեր բուն հողին վրա ։

– Եվ մանավանդ մեր բուն առաքելական ու կաթողիկե սուրբ եկեղեցիին ծոցը։

Ակնթարթ մը լռութիւն տիրեց։

Մինաս հանկարծ ելավ նստեցավ ու մատը թափ տալով ընկերոջ վրա՝ բացականչեց.

– Պե՛տք է, պետք է հասկցնել այդ կաթոլիկներո՛ւն, բողոքականներո՛ւն, որ մեր եկեղեցին քրիստոնեական առաջին դարերու կազմակերպութեանամենեն անաղարտ նմուշն է, հիմնված երկու առաքյալներու ձեռքով, ամենազուտ, հերետիկոսութիւններե զերծ մնացած ամենահին եկեղեցին։ Մինչև հիմա ծռեր, խեղաթյուրեր են փաստերը, պատմութիւնը, աշխատեր են մուտք գործել մեր փարախը ու միամիտները գայթակղեցնել. իրենք խոսեր են չարունակ աստվածաբանական գիտութիւններու, ուսումնասիրութիւններու անունով, իսկ մերինները երեխայական բաներ են միայն պատասխաններ։ Բայց հիմա չգիտես ինչպե՛ս սիրտս կեռա անհամբերութենեն. վայրկյան մը առաջ ե՞րբ պիտի ինքզինքնիս Գերմանիա նետենք, աստվածաբանութիւնը հիմնապես յուրացուցած պատնանք ետ, ու իրենց զենքերը իրե՛նց դեմ։

– Ինծի ճշմարիտ կատակ կթվի, որ քանի մը ամիսեն արդեն հետ՛ւ, հետու պիտի ըլլանք մեր հայրենիքեն, մեր այս հողեն ու ջուրեն։ Օտարութիյա՛ն մեջ։ Ճիշտ Սահակ-Մեսրոպի ժամանակները. եբրայերենի, ասորերենի, հունարենի խորերը թաղված...

– Եվ մա՛նավանդ Աստվածաշունչի աղբյուրներու համեմատութեյան. էականը չմոռնանք։ Երբեմն պարզ «և» մը կամ «ուստի» մը ամբողջ դավանաբանական փաստ մը կրնա դառնալ և կրնա համառ

վիճաբանութիւններու լուսանցակ դէզ մը չախչախել: Կեցի՛ր դուն. այս երեք–չորս տարին ալ անշուշտ կանցնի, ու մենք նորեն Հո՛ս ենք՝ այս հողին վրա՝ զինված ու պատրաստ մեր հավատքի ու ազգի զարգացմանն ու բարգավաճմանը համար կռվելու: Ելի՛ր, ելի՛ր:

Ու ինքը ոտքի ցատկած՝ սկսավ ոտքովը ընկերը հրել:

Ելավ Սերոբ ալ, և ուղղվեցան դեպի ձոր:

Արևը արդեն «գիշեր բարին» ըսեր էր շատոնց, ու մութը խտանալու վրա էր, որ Հասան իրենց սենյակը:

– Արուաչեսը դեռ չէ եկած, – նկատեց Սերոբ:

– Եվ դուրսը արդեն մութ է,– չեշտեց ընկերը:

Ու վայրկյան մը վերջը ավելցուց.

– Ո՛չ, այս իրիկուն հետը լուրջ խոսելու է և այս անհամութիւններուն վերջ դնելու. ամեն բան իր չափը ո՛ւնի վերջապես ու իր սահմանը:

– Եղբա՛յր, այդչափ ալ եսասեր մի՛ իյնար, դիտես, որ բնաւորութիւնը քիչ մը համառ է, քիչ մըն ալ իր խելքովը ազատամտութիւն ծախել կուզե. այսինքն թե՝ ինչո՞ւ օրիորդի մը հետ չրջելու պիտի չերթա, ինչ վնաս, միթե վարդապետը մարդ չէ՞:

– Հիմարութիւն է անխորհուրդ տեղը իր վրա ամեն տեսակ բաներ խոսեցնել տալը,– պատասխանեց ընկերը խստորեն:– Հիմա ինչ ըսես չենք մտածեր, եթե հանկարծ լուրը էջմիածին հասնի, թե հո՛ս ձորերուն մէջ առանձին օրիորով աղջկան մը հետ կթափառի, ո՞վ պիտի համոզվի, որ այդ բոլորը մաքուր է ու թեթև ազատամտության հետևանք: Ազատամտությո՛ւն...

– Բայց խելացի ու ազնիվ տղա է, վերջիվերջո խելքի կուգա. թո՛ղ անդամ մը սարկավագ դառնա, քիչ մը տարիքն ալ լինա...

Դուրսը ոտքի ձայներ լսվեցան, Մինաս ձեռքով նշան մը ըրավ ընկերոջը, կարճահասակը խոսքը կտրեց:

Ներս մտավ Սիրաքյան հանդարտ քայլերով ու անտարբեր ըլլալ ուզող ձևով մը բարևեց:

– Ի՞նչ բանի եք այս նեղ սենյակին անկյունը:

– Տնտեսուհիին կսպասենք, որ սամավարը տանանք:

Պատասխանողը Սերոբն էր:

– Բայց չէ՞ որ Քանյանները երեկ գիշեր Հատուկ խնդրեցին, որ Թեյլի իրենց երթանք նորեն:

– Ինչ կարևորություն կա ամեն իրիկուն. երեկ գիշեր հոն էինք՝ հերիք է,– հակառակեցավ Մինաս:– Քանյանը կհրավիրե, իր հաշիվը ունի, իր փառած վլիուփայությունները դու րս սալու ու մատներուն մեջեն հեգնելու համար: Այդ մարդիկը այդպես են արդեն. իրենք պսակվեր, կնիկնին առեր նստեր են ու իրենց փորեն անդին չեն մտածեր, իսկ ով ալ որ քիչ մը ուրիշ կերպ մտածելու ու գործ տեսնելու միտք ունի, ան ալ կծաղրեն: Խեղճուկնե՛ր, ծաղրել գիտեն միայն:

– Ամեն մարդ իր համոզումը ունի,– նկատեց Սիրաքյան չոր: – Եվ ով որ իր համոզումը չի կեղծեր, ազնիվ մարդ է ան: Իսկ մասնավորապես Քանյանի մասին աղեկ կըլլա բոլորովին լռես. երանի ամենքը անոր կեսին չափ սրտաբաց ու կարեկից ըլլային, և քեզի ո՞վ ըսավ, որ ան գործ չի տեսներ, իսկ իր կին ունենալու մասին այդպես արհամարհանքով խոսիլդ ուղղակի տգեղ է:

– Դուն սիրահարեր ես երևի այդ ընտանիքին վրա:

– Սրտանց ուրախ եմ այդ ընտանիքին հետ ծանոթացած ըլլալուս: Դուք ալ որ քիչ մը մոտենաք, դուք ալ կհամակրիք: Անոնց պարզ խոսելեն պետք չէ, որ խրտնիս, մի՞թե քեզի համար ցանկալի է կեղծավոր ու խորամանկ մարդոց հետ գործ ունենալը: Քալեցե՛ք երթանք:

– Ո՛չ,– եղավ վճռական պատասխանը:

Արտաշես կռթնեցավ դռան սեմի շրջանակին ու աչքերը մուխին մեջեն ընկերոջը դեմքին չեչտեց:

– Ինծի՛ նայե, Արտաշե՛ս, դուն դեռ շատ պարզ սիրտ ու միամիտ ես և ըրածդ ինքդ ալ չես հասկնար. ես քեզի խորհուրդ կուտայի քիչ մը ավելի զգուշ ըլլայիր. առտուն չուզեցի խոսիմ՝ գրգռված էիր, հիմա կհուսամ ավելի պաղ մտածես:

– Եվ ի՞նչ է տեսնենք պաղ մտածելիքս,– հարցուց տղան ծաղրածու շեչտով մը, երկու ձեռքերը երկու կողմեն գրպանները դնելով:

– Երեխա չես վերջապես, պետք է հասկնաս, որ կրնան վրադ խոսիլ:

– Ի՞նչ կրնան վրաս խոսիլ:

– Սիրելի՛ս, մի՞թե աշդ աստիճան միամիտ ես, վարդապետացու

երիտասարդ տղա մը ու սիրուն աղջիկ մը չարունակ առանձին ձորի ժայռերուն մէջ:

– Է՜- է՞,– հարցուց տղան՝ հագիվ իր ուռած զայրույթը զսպելով:

– Ամեն բան կրնան եղբայացնել վերջապես:

– Եվ այդ կըցողը, այդ եղբայացնողը ո՞վ է,– կրկնեց տղան սեղմված ակռաներուն մեջեն դղրդյուն ձայնով մը:

– Վերջապէ՛ս, այս վանքին մարդիկը:

– Վանքի՛, հա՜-հա՜-հա՜-հա՜, հայր սուրբիկս ու տնտեսուհին, իհա՛րկե , իհա՛րկե, վա՛նքը:

– Հոս խնդալու բան չկա: Տնտեսուհին բավական ակնարկութիւններ ըրավ արդէն այսօր, երեսի ծամածռութիւնները տեսնելու էիր, առտուն ալ հայր սուրբը բաներ մը հասկցուց, որ քեզի քանի մը անգամ աղջկան հետ տեսեր է, մանավանդ մեր պալեն առաջ:

Տղան կարծես սկսաւ մտածել և վերջը վերին աստիճանի լրջութեամբ ըսաւ.

– Ուրեմն Բհատտատուր հայր սուրբ և Եղսո տնտեսուհին չեն բարեհաճիր, որ ես ալ իբրև մարդ իմ բարեկամներս ունենամ, տեսնվիմ, խոսիմ: Եվ երևի, Եղսո տնտեսուհիին այդ փատտաբանութիւնը դուն ես վրադ առեր, ոչի՞նչ: Սրտանց կշնորհավորեմ նոր պաշտոնդ:

– Ախտաչե՛ս, հոգի՛ս, այդպես թեթև կարելի չէ վերաբերվիլ,– մեջ նետվեցավ վերջապես Սերոբ, որ մինչև հիմա լուռ մտիկ կըներ միայն:– Չէ՞ որ այդ բոլորը էջմիածին կհասնի, և հոն արդեն առիթ կփնտրեն վրանիս հարձակվելու համար, այդ արտաքին ձևականութիւնները պետք է հաշվի առնել:

– Ձևականութի՛ւն ու ձևականութի՛ւն: Ձևականութեան համար առտու-իրիկուն ժամ երթամ, ձևի համար երգեմ, աղոթեմ, խաբեմ, ձևի համար պղտմ-պլուկ եպիսկոպոսի մը առջև խոնարհիմ, իմ կարծիքներս ծածկեմ, իմ համոզումներս ծռեմ ու կեղծեմ, ձևի համար հարաբերութիւնս կտրեմ մարդկութեան կեսին հետ. ձևի համար... Չէ՛, ինծի նայի՛, ես չնորհակալ եմ քու այդ ձևականութենեդ:

Եվ ընդոստ չարժումով մը դարձավ իր առանցքին վրա ու յանկերց սեմեն դուրս:

– Ո՞ւր կերթաս,– պոռաց եսևեն Մինաս:

– Հո՛ն, ուր ձևականութիւններ ընելու պետք չունիմ:

Ու վանքի դարպասին դուրս՝ ուղղվեցավ վիտակ Քանյաննեըուն բնակարանը:

Թ

Ամեհի ժայռը իր լերկ կռնակը արևին տված՝ նստեր էր գետի տաշտին մեջ լայն ու ծալապատիկ: Փոթորիկներեն խորշոմած ճակատը իր սեփական ստվերին մեջ կախած՝ թաղվեր էր խոր մտմտուքի մեջ ժայռերուն այդ վիթխարի ճգնավորը:

Եվ գետակին կենսուրախ կոհակները գլվարթ ու կայտառ երբ աղմուկով իրենք իրենց ու իրարու վրա գլտորելով այդ խոժոռ փիլիսոփային առջևը կհասնեին, ակնթարթ մը կանգ կառնեին զարմանքնուն. սակայն իսկո՛ւյն այդ իսոր լրջութեյան դիմաց ծիծաղնին զսպելու այլևս անկարող՝ անոր երկու կողմեն վար կցատկեին որքան կարելի է չոռտ, և իրենց չարամիտ ու հնչուն քրքիջը կլսվեր դեռ երկար, նույնիսկ վա՛րը՝ հեռուն:

– Նստի՛նք հոս:

Ու շրջազգեստը քիչ մը ժողվելով՝ ինկավ աղջիկը քարի մը վրա, փրլիսոփայութեյան ստվերին տակ, ջուրին ճիշտ եզերքը:

Արտաշես լուռ նստեցավ անկե քիչ մը վար, ուրիշ քարի մը վրա, հանեց պլխարկը ու նետեց քովը:

Երեկոյանալու մոտ էր. հոգնութենեն չիկնած արևը տեսակ մը նարինջի ճառագայթներ միայն կթափեր շեղակի ձորի բերնեն վար:

Հոգնած էր ղույգն ալ երկար քալելեն ու խոսելեն, հոգնա՜ծ ու հրահրա՜ծ:

– Օ՜վ, ինչպես գով է հոս, և ինչպես սիրուն, նայեցե՛ք անգամ մը վեր, պարո՛ն Սիրաքյան, չէ՞:

Պատասխանը ուշացավ:

– Ձե՞ք պատասխաներ:

– Օրիո՛րդ, ի՞նչ պատասխանեմ, այս ձորին մեջ ինծի համար ամեն բան գեղեցիկ է:

Ու գավազանը ջուրին մեջ կոխած՝ սկսավ խառնել:

– Ախ՛ղճ բարեկամս, Դուք դժգոհ եք Ձեր վանքի կյանքեն: Ձեր հրջապատը նեղ ու դաց կուգա Ձեզի, ինչպես կտեսնեմ:

– Գո՛ց, գո՛ց, այո՛, բաւի հիշտ պէտուն զարկիք, գո՛ց: Այդ զգացումը ես առաջ ալ տարտամ կերպով մեջս ունեցած եմ, բայց այս քանի օր է՝ որոշ կերպառակցեմ արդէն:

– Այս քանի օ՞րը. ինչո՞ւ ուղղակի այս քանի օրը:

Ու հակոին թափած կարճ մազերուն տակեն խորամանկ հայացքը գամեց խոսակցի դեմքին:

– Այս ձորին մեջ, ինչպես ըսի, ամեն բան այնպես սիրուն է ու այնպես մարդը մտածելու կտրամադրե,– եղաւ խուսափող ու ժպտուն պատասխանը:

– Այո՛, Ձեր մտածկոտ ըլլալը ես ալ նկատած եմ, մանաւանդ Ձեր ընկերներու գալեն ի վեր: Ի դեպ, ինչո՞ւ երեկ իրիկուն անոնք մեզի չեկան:

– Արդեն ըսի երեկ, հոգնած էին քիչ մը:

– Ատիկա քաղաքավարութեան պատասխանն էր. ինծի ճշմարիտ պատասխանը տվիք Դուք:

Տղան լուռ պլուխը կախեց:

– Կուգե՞ք ես Ձեզի ըսեմ:

– Հապա՛:

– Որովհետև Ձեր ընկերները զայրացած էին, որ ժամերով ինծի հետ էիք առանձին:

Տղան նորեն չպատասխանեց:

– Չէ՞,– պնդեց աղջիկը ինքնավստահ ժպիտով մը:

– Ենթադրե Ձեզ թե:

– Եվ այդ բոլորեն վերջը այսօր Դուք նորեն ինծի հետ եք:

– Ինչպես որ կտեսնեք:

– Ատիկա է, որ ինծի կզարմացնե:

– Ինչո՞ւ:

– Չէ՞ որ այս իրիկուն Ձեր վերադարձին նույն անհաճո տեսարանները պիտի ունենաք Ձեր ընկերներուն հետ:

– Ձեմ կարծեր, բայց և դիցուք: Ձեզի անցած օր ի՞նչ ըսի, օրիո՛րդ, իմ գլխուս տերը ե՛ս եմ:

– Եվ այս բոլոր գլխու ցավն ու տհաճութիւնները միայն ինծի համար, իմ պատճառովս: Գիտեմ, ճշմարիտ, ինչպես չնորհակալութիւն հայտնեմ Ձեզի կամ ինչպես վարվիմ, որ Ձեզի անախորժութիւն չպատճառեմ: Գուցե ավելի լավ է, որ վերջ տանք մեր պտույտներուն:

– Վերջ տանք մեր պտույտներո՞ւն,– կրկնեց տղան երազկոտ՝ անկարելի բաներու չեչտով մը և ավելցուց,– եթե գիտնայիք, օրիո՛րդ, թե՛ Դուք և թե՛ ընդհանրապես Ձեր ընտանիքը իմ վրաս ինչ տպավորութիւն կընե, այն ատեն այդ պարապ ու ավելորդ խոսքերը չէիք ըսեր:

– Ինչ տպավորութիւն:

– Ինչ կարիք կա ծածկելու,– բացականչեց տղան հանկարծ ջերմ ու կտրուկ չեչտով մը:– Իմ մինչև հիմա ճանչցած մարդիկներես ոչ ոք վրաս այն տաք ու հափշտակող ազդեցութիւնը ըրած չէ, ինչպես Ձեր քեռայրն ու Դուք: Պարոն Քանյանի ամբողջ խոսվածքին մեջ արդեն այնպես վստահութիւն ու անկեղծութիւն մը կա, որուն անկարելի է չհամակրիլ:

– Քեռայրս ալ Ձեզի չատ է համակրած. Ձեր սիրեն մեզմե մեկնելուն նույնը կկրկնե, թե Դուք չատ խելացի ու մաքուր բնավորութեան տեր տղա եք:

– Իրա՞վ, անչափ ուրախ եմ իր այդ կարծիքին համար: Ինչևէ: Կտեսնե՞ք, օրիո՛րդ, ինքս վարդապետացու մարդ՝ նստեր եմ Ձեր դեմը խոստովանանքի:

– Բայց ինծի համար ամենեն էականը չխոստովանեցաք դեռ:

– Այսի՞նքն:

– Թե ե՞ս ինչով Ձեր այս վստահութեանն ու համակրանքին արժանացա:

– Դո՞ւք, Դո՛ւք...– կմկմաց տղան բախտավոր ժպիտով մը: – Հոդ չատ բաներ կան իրարու խառնված:

– Օրինակի համար:

– Օրինա՛կ, Ձեր տեսակ մը բնական հպարտութիւնը ինծի չատ գրաված է, միևնույն ժամանակ և պարզութիւնը, վերջապես Ձեր մտածումներն ու հայացքները կյանքի մասին, Ձեր անկախութեան

ձգտումը, և այն, որ Ձեր մորն ու փոքր եղբայրներուն համար աշխատիլ կուզեք, և այլն, այսչափը հերիք չէ՞:

Ընդհատեց հանկարծ ու խնդաց:

– Ուրախ եմ անշուշտ, որ մեր միասին անցուցած ժամերը Ձեր վրա անհաճո տպավորութիւն չեն թողած:

– Մեր միասին անցուցած ժամերը, օրիո՛րդ Մելինյան, ես իմ ամբողջ կյանքիս մէջ ալ չեմ մոռնալու. ո՛չ այս ձորը, ո՛չ մեր թափառումները, ո՛չ խոսածնիս, ո՛չ իսկ Ձեր ձայնն ու շարժուձևները:

Աղջիկը պլուխը քիչ մը ալ ծռած՝ լուռ ու անթարթ կնայեր երիտասարդին:

Մինչ տղան կշարունակեր նույն տաք ու բաց չեշտովը:

– Անտարակո՛յս տարիքս ինքներդ ալ շատ աղեկ դիտեք, բայց կետ մը կա, որ չդիտեք և զուցե չեք ալ կրնար հասկնալ, թե ինչ աստիճան ինծի համար հիմա անհրաժեշտութիւն դարձած է Ձեր մտերմութիւնը, Ձեզի հետ խոսիլը, Ձեր առջև իմ մտածումներս ու տպավորութիւններս հայտնելը:

– Կկարծե՞ք ուրեմն, որ չեմ հասկնար:

– Այո, որովհետև Դուք իմ զգացումներս ալ Ձեր զգացումներուն վրա պիտի չափեք, իսկ իմ բարեկամութիւնս իմ՛ հետ մտանելու արժեք մը կրնա ունենալ Ձեզի համար: Պատահական հանդիպում մը, զուցե զվարճալի ժամանց մը այս ձորերուն մեջ, բան մը, որ վաղը մոռցած եք արդեն: Իզուր մեղմիլ մի՛ փորձեք, ես գիտեմ:

Աղջիկը կուրծքը չիտակ, համառ նայվածքը հառած երիտասարդին՝ վայրկյան մը լուռ մնաց, վերջն ալ սկսավ խոսիլ բարկացած չեշտով մը.

– Ուրեմն կկարծեք, որ առանց Ձեր մտերմութիւնը մանավորապես դնահատելու, առանց Ձեր կյանքով ու մտածումներով հետաքրքրված ըլլալու, առանց դեպի Ձեր ընկերութիւնը մանավոր հակում մը ունենալու, ես այսպես ժամերով ու օրերով կթափառիմ Ձեզի հետ առանձին այս ձորերուն մեջ ու այսպես սրտանց կլսեմ Ձեզի և կպատմեմ ամեն բան: Չէ՛, ճշմարիտ ինծի շատ աղեկ ճանչցեր եք ու քիչ մը առաջ կըսեիք, որ իմ հպարտութիւնս է Ձեզի մանավանդ դուր եկած:

Տղան կարծես երազի մեջ էր. չրջապատը մոռցած, մոռցած ինք-

պինքը՝ ամբողջ հավիտականութիւնը կնայեր Շուշիկի բոցոտ, բարկացած ու մագնիսացնող աչքերուն:

Աղջիկը ընդհատեց ու կարծես առարկութիւն կսպասեր:

– Շարունակեցե՛ք, օրիո՛րդ, չարունակեցե՛ք Ձեր այդ հանդիմանութիւնը, կաղաչե՛մ:

Եվ այնպես անսքող ուրախութիւն մը պրոշմվեցավ դեմքին, այնպես հմայված չեչո մը կդողար իր ձայնին մեջ, որ աղջիկը սոխպվեցավ ժպտելու ու ձեռքը տղուն մեկնեց.

– Եկե՛ք մնանք նորեն հին բարեկամներ, այո՞:

Երիտասարդը հավիտակեց այդ ձեռքը: Վայրկյան մը ձեռքերը իրար սեղմած մնացին ջերմ ու բաժնվեցան: Ու երկուքը քով քովի ճամփա ինկան նորեն գետակին քովեն դեպի ձորն ի վեր:

Նախ լուռ էին, ոչ մեկը խոսելու տրամադիր չէր, երկուքի մեջն ալ հուզում մը կար, ու իրարու նայելե կխուսափեին:

Վերջը սկսան խոսիլ հատկապես իրենց այդ անհարմար դիրքը կերպ մը սքողելու ջանքով ու հնար եղածին չափ անտարբեր նյութերու վրա:

Շուշիկ իր հիվանդանոցի կյանքեն բան մը պատմելու վրա էր, որ հանկարծ կանգ առավ ու հագուստին փեշերը ժողվեց:

Ձորի պատեն, ժայռերուն ծերպերեն հինգ-վեց տեղե ջուր վար կծորեր հանդարտ, մամռոտ կանաչութիւն մը մեջեն, և ձորի պատեն մինչև գետը եղած տարածութիւնը, որուն վրայեն ղուլդը կքալեր, քանի մը կանգուն երկարութիւնեմբ բոլորովին թաց էր ու ջուր:

Սիրաքյան նախ փայտը այդ ջուրը խրեց, վերջը փորձեց մեկ ոտքովը. խոր չէր:

– Հողը պինդ է ու քարոտ, քիչ մը պետք է կոշիկները թրջին, ուրիշ ոչինչ,– վստահութիւն ուզեց տալ ընկերոջ:

– Անշուշտ, եթե ես ալ Ձեր հաստ կաշիե կոշիկները ունենայի,– առարկեց աղջիկը ու մնաց անշարժ:

– Աղե՛կ, վերադառնանք:

– Ո՛չ, չարունակե՛նք, ձորի այս մասը մանավանդ դեռ չնորհքով չեմ եղած:

– Լա՛վ, հանեցե՛ք կոշիկները:

– Ո՛չ, երկար-բարակ պատմութիւն:

– Այնատեն, օրիորդ, եթէ կուզէք կարճ պատմութիւն...

Տղան ժպտեցաւ ու խոսքը կտրեց:

– Այն ատեն ի՞նչ:

– Այն ատեն... այն ատեն կ՚ինա, որ ես Ձեզի այդ կտորի վրայեն անցընեմ:

– Ինչպե՞ս կրնաք Դուք ինծի անցընել,– հարցուց աղջիկը զարմացած դէմք մը չինելով:

– Ինչո՞ւ չեմ կրնար, կ՚կարծեք Ձեզի բարձրացնելու չափ ուժ չունի՞մ:

– Ինծի դրկեք, տանի՞ք, Դո՞ւք, վարդապետ մարդ, է՛, Դուք դժոխք երթալե չե՞ք վախնար,– բացականչեց աղջիկը վերին աստիճանի դէմքի կոմիկ արտահայտութիւնմբ մը:

– Հապա ի՞նչ ընեմ, քանի որ ոտքերնիդ թրջել չեք ուզեր, կոշիկները հանել չեք ուզեր և ետ դառնալ չեք ուզեր,– կմկմաց տղան կես մը կատրված, կես մը վարանոտ:

Ու միևնոյն ժամանակ անոր աչքերուն մեջ այնպես պարզ կվառեր խնդի՛րք մը, աղաչա՛նք մը իրեն չհակառակելու:

Աղջիկը ակնթարթ մը չունչը բռնեց, հանկարծ քայլ մը ըրավ դեպի տղան ու վեր բարձրացնելով թևերը՝ ըսավ.

– Հապա՛, փորձեցե՛ք տեսնեմ, քանի որ այդչափ Ձեր ուժովը կհպարտանաք:

Վարդապետացուն երկրորդել չտվավ, ծռեցավ քիչ մը, գրկեց ու մեկ թափով բարձրացուց:

– Ա՜ւ,– պոռաց աղջիկը վախցած, երբ հանկարծ ոտքը գետնեն կտրվեցավ:

Ու երկու թևերը բնազդաբար նետեց տղուն վիզը:

Արտաչես իր դէմքին տակ աղջկան դողացող կուրծքը զգաց և անոր բազուկներուն մեջ իր գլխուն օդակվիլը:

Սիրտը թպրտաց, կորսնցուց ինքզինքը: Կքալեր:

Ո՞ւր, ո՞ր կողմ, ինչպե՞ս: Ոչինչ չէր տեսներ: Ոտքին տակ թաց քարերը կղլտորեին, ջուրը կցայտեր, թրջած խոտերը կճողփեին. ան ոչինչ չէր զգար:

Ու ջուրին մեջեն դուրս էին եկած արդեն, բայց ան կչարունակեր դեռ և դուցե դեռ շա՜տ երկար, եթե աղջկան հնչուն ծիծաղը չսթափեցներ:

Կանգ առավ ու աղջկան ոտքի դրավ դեմին:

– Տեսե՛ք, թաց տեղը ուր է մնացեր,– ժպտեցավ աղջիկը իր այլայլած դեմքովը՝ քանի մը քայլ անդին մատնանիշ ընելով:

– Է՛, ի՞նչ ընենք, ի՞նչ վնաս,– պատասխանեց տղան անտարբեր համարձակ չեչառով մը:

– Շնորհակալ եմ, երևի հոգնեցաք, ես բավական ծանր եմ,– ըսավ աղջիկը՝ խոսակցության լուրջ ձև տալով:

– Հոգնի՞լ, ես Ձեզի այդպես կրնամ տանիլ ամբողջ ժամերով, մինչև... մինչև ձորին ծայրը, մինչև ուր որ ուզեք:

Ու դեմքը նորեն հրահրեցավ:

– Եթե կրնայիք, ինչո՞ւ չտարիք,– Հարցուց Շուշիկ հանկարծ:

Տղան չգիտցավ՝ ինչ պատասխանե և չհասկցավ ալ իսկապես, թե աղջիկը ինչ ըսել կուզեր:

– Նո՛ւ, բարեկա՛մս,– ըսավ աղջիկը ծանր խոսվածքով ու արտասովոր արտահայտությամբ մը,– երբ նորեն Ձեր վանքը դառնաք, երբ առտուն կանուխ ժամերգությանատեն մուխ կամարներուն տակ ու Ձեր սև զգեստներուն մեջ վարդապետներուն չարքը կենաք, և երբ հոն սրտերնիդ նեղանալու սկսի, այն ատեն մտածեցե՛ք այս Հարցիս վրա, իսկ հիմա տո՛ւն երթանք, արդեն ուշ է:

Տղան բոլորովին լրջացավ:

– Բայց ի՞նչ ըսել կուզեք, օրիո՛րդ:

– Ինչ որ ըսի:

Եվ սկսավ խնդալ:

ժ

Աղջիկը հասիվ տուն ձգած՝ Արտաշես ծանր քայլերով ու տեսակ մը ակամա ուղղվեցավ ընկերներուն քովը:

Վանքի բակը քարի մը վրա նստեր էին երկուքն ալ քով քովի, լուռ ու լուրջ, ըստ երևույթին իրեն կսպասեին:

Մոտենալուն պես ելան ոտքի:

– Բայց, միասին քիչ մը դեպի վար երթանք, եթե չատ հոգնած չես,– լսած Մինաս վերջին նախադասութեան երկիծանքի շեշտ մը տալով:

– Երթանք,– եղաւ կարճ պատասխանը:

Դուրս ելան բակէն, լուռ ու հանդիսաւոր առաջ չարժուեցան:

«Ճիշտ Շուշիկի ըսածին պես», – մտածեց Սիրաքյան ու կամաց մը ժպտեցաւ քթին տակէն:

Երբ դարպասէն բաւական հեռացեր էին, վերջապես նորէն Մինաս խզեց լռութիւնը.

– Գիտե՞ս, Արտաշե՛ս, մենք որոշեր ենք վազը առաւս մութին ճամփա ելլենք դեպի Անի:

Ու բոլոր բաները հատիկ-հատիկ չեշտված էին:

Սիրաքյան շրթունքը խածաւ, քիչ մը մտածեց և իր անտարբեր շեշտը պահել ջանալով՝ պատասխանեց.

– Ադի՛կ, դուք մեկնեցե՛ք, երևի ումը-ինը օրեն ե՛ս ալ ձեր ետևեն կհասնիմ:

– Իՙնչ,– բացականչեց Սերոբ դող ելած:

– Ո՛չ, դո՛ւն ալ հիմա մեզի հետ պիտի գաս,– շեշտեց Մինաս պաշտօնական խոսվածքով մը:

Սիրաքյան ժպտեցաւ ու նայեցաւ անոր:

– Այո՛, ես ատիկա կպահանջեմ քեզմէ: Եվ ան իրաւունքով, որ քու վարմունքդ ու հիմնարկեցիդ ո՛չ միայն քեզի, այլ մեզի ալ հավատարուպես անպատուութիւն կբերեն, դուն քու անունիդ հետ մեր անունն ալ կիսպառնա: Գիտե՞ս, այս իրիկուն հայր սուրբը Իՙնչ ըսաւ. «Նոր սիրայուններդ մեր ժամանակվան աչքը գոց ոչխարներդը չեն, կըսե, դեռ վարպապետ կամ եպիսկոպոս դառնալու ալ չեն սպասեր. միայն ինծի կթվի, որ գործը քիչ մը չատ լուց կըտնեն», կըսե: Հիմա կհասկնա՞ս, թե ինչ իրաւունքով քեզմե կպահանջեմ. դուն իրաւունք չունե՞ս մեր վարկը, մեր դիրքը կոտրելու :

Սիրաքյան հանկարծ կանգ առաւ, դարձաւ խոսողին ու դալկած ձայնով մը ըսաւ.

– Ինծի նայե՛, ինծմե ո՛չ ոք ոչինչ պահանջելու իրաւունք չունի, իսկ ով կկարծե, թե իմ մերձաւորութիւնը իրեն անպատուութիւն կբերե,

կրնա անմիջապես հետանալ, արդեն մեկնիլ կուգեք. բարի ճանապա՛րհ:

– Ուրեմն այդպե՞ս, ազե՛կ, միայն գիտցի՛ր, որ այդ հեռացողները պարտական են բոլոր եղելութիւնը հանգամանորեն պատմելու, ուր որ հարկն է:

– Ամիկա հետաքրքիր չէ ինծի, պատմեցե՛ք, խոսեցե՛ք, ինչ և ուր որ կուզկք:

– Բայց հետաքրքիր:

– Ինչ հետաքրքիր:

– Պիտի հարկադրվին քեզի ձեռնադրվողներուն ցանկին դուրս ձգելու:

Սիրաքյան ամբողջ մարմնովը ցնցվեցավ. դեմքին վրայեն բան մը անցավ արագ և երկա՛ր, լո՛ւռ, թանձրացող մուխին մեջեն ընկերոջը հայացքին մեջը նայելեն վերջը պատասխանեց հատուկ դարկով մը.

– Եվ չա՛տ ալ խելացի բան կընեն:

– Ա՛խ,– հառաչեց Սերոբ ապշած ու նայեցավ երկարահասակին:

– Ուրեմն խնդիրը այս աստիճան հեռուները գացած է արդեն,– մրմնջեց վերջինս ակռաներուն մեջեն, գլուխը ցավակցաբար շարժելով:

– Այո՛, այո՛, այս վայրկյանիս ես պարզ, շատ պարզ կտեսնեմ, որ իրավունք ունիք: Ո՛չ, իմ բանս չէ, իմ բնավորութիւնս բանը չէ այդ չղմայված, ճմռթած կյանքը, այդ իր ներքին համոզումներուն, իր բնածին զգացումներուն դավաճանութիւնը, շատ խելացի բան կընեք, նետեցե՛ք ինծի ձեր ցանկեն դուրս:

– Չէ՛, բարեկա՛մ,– ընդմիջեց Մինաս խստորեն,– իմ կարծածես շատ ավելի խորն է թափանցեր մեզի թուլնը: Անկեղծ խոսելով՝ ես քու բնավորութիւնդ մասին շատ ավելի բարձր գաղափար ունեի: Բնավ չէի կրնար երևակայել, որ աղջկան մը կտորը քեզի այդպես անմիջապես խելքե հանել կրնա, այդպես բոլոր սրբութիւնները՝ ոտքի տակ տալ, տված խոստումդ արհամարհել, մինչև հիմա փայփայած ծրագիրներդ ուրանալ ու մեր բարձր նպատակները պատռել ու անդին նետել այդպես: Այդ աստիճանի ողորմելի, թուլլ ու զգայարանքներուդ գերի չէի երևա-կայեր ես քեզի: Ապուշի մը պես սիրահարեցար առաջին հանդիպած աղջկան. մանկապարծուհի մը, արհեստ ալ իրեն պես հիանալի, չնորհ-

քեն հայտնի է ինչ ըլլալը, խոսածքը, քալվածքը, մանչու մազերը, ո՛չ համեստութիւնն, ո՛չ պարկեշտութիւնն:

Սիրաքայան վերջին խոսքերը չլսեց անգամ:

«Սիրահարա՞ծ, – կմտածեր և ակամա ղլուխը քիչ մը վար թեքեցավ,– սիրահարա՞ծ, իրա՞վ»:

Տղու այդ կատաղած դիրքը ընկերներուն սիրտ ավավ, ու Մինաս ձայնը փոխեց.

– Կանանե՞ս, սիրելի՛ս, որ նորեն քու ընկերներդ քեզի ձեռք կուտան սատանայի փորձութեյան վայրկյանին : Այդ տեսակ փորձութեյան ենթարկվիլը, իհա՛րկե, հանցանք չէ, ոչ ալ մեղք, բայց էականը հաղթելն է, սակեն հաղթական ելլելը: Դուն ընկերներո՛ւդ ականջ դիր միայն, չև՛ս ղրկար: Ուրեմն վաղը առտու կանուխ կմեկնինք, տո՛ւր ձեռքդ:

Ու ձեռքը մեռերմորեն տղու դաստակին դպցուց:

Աբտաշես թոթվեցավ, թևը ետ քաշեց արագ ու դլուխը հպարտ վեր բարձրացնելով՝ ըսավ արհամարհոտ .

– Իմ ընկերս ան է, ով ինծի կհասկնա: Վաղը առտու կրնաս երթալ, ուր որ կուզես. ինծի հետ գործ չունիս::

Եվ առանց ընկերներուս քարացած դիրքին ուշք դարձնելու՝ արագ հեռացավ ու անյուսութեյամբ եղավ մոտակա ծառերուն ետևը:

Այս վերջին օրերը տղու մտքին արդեն քանի մը անգամ անցեր էր թեթև, թե ինքը իր ընտրած կոչումին հարմար չէ կարծես, թե ինքը իր սոմանին մեջը չէ ինկած, թե իր հակումները կրոնավորի պարտականութեյուններուն հետ զույգ չեն երթար: Բայց ատիկա տարտամ պզացում մըն էր եղած միայն. իր ձեռնադրութեյան վրա կնայեր իրրև կատարված արդ իրողութեյան վրա. արդեն խոսք տված, վերջացած բան էր, որու մասին այս կամ այն պատճառով դուցե կարելի էր քիչ մը ցավիլ, բայց մեյն այդչափ, ետ դառնալու գաղափարը անգամ դլուխը եկած չէր: Բայց գաղափարի փոխարեն ետ դառնալու ցանկութեյունը, առանց իր գիտակցութեյան, այն աստիճան զրնդացած ու հոդ էր գրաված իր մեջը, որ ընկերոջ կոչմեն թեթև ակնարկ մը ետ դառնալու հնարավորութեյան մասին, ու իր վարդապետանալու ամբողջ չինքը փլած էր մեկ անգամեն: Շենք մը, որուն հիմքերը առաջվընե խախտեր էին արդեն վերջին օրերս. խոսակցութեյուններդ, դեպքերը ու իր անվերջ առանձին մտածումները:

Ժայռի լերկ գանգ մը հողի ներքին չերտերեն հետաքրքրութեամբ դուրս էր երկնցուցեր իր վիզը մութին մեջ, ձորի պատարկութեան վրա. կարծես իր խավարի վարժված տեսողութեամբը դիտելու համար վարն ու չուրջը ու տեսնելու, թե գոնե հո՛ղ՝ մայր երկրի ծոցին վրա, գոյութիւնը որևէ խորհուրդ մը ունի՞, թե՞ հոգ ալ նո՛ւյն պարապոր օրենքներու միակերպ, անիմաստ ու դանդաղաշարժ կրկնութիւնն է, ինչ որ իսո րը՝ մայր երկրի ծոցին մեջ:

Եվ ճի՛շտ այդ դուրս երկնցած լայն ծոծրակի արմատին մոտիկ վեր կալանային երկու քույր նրբամեջ բարդի:

Հո՛ղ՝ ձորի ելքին, այդ զույգ բարդիներուն տակ Սիրաքյան նետվեցավ գետին՝ ժայռի լերկ ծոծրակին վրա: Տխուր էր ու դժգոհ: Ընկերներուն հետ ունեցած այդ առաջին բաց ընդհարումը անախորժ, ճնշող տպավորութիւն մը թողեր էր վրան, որուն կմիանար խառնակ ու իրար հակասող զգացումներու պատճառած անհանգստութիւնը:

Երկար մնաց ան նստած այդպես խոժոռ ու անշարժ, մինչև որ արտին մտաերը ուղղակի ցավի նման ճնշում մը ստիպեց պլուիը բարձրացնելու. խոր չունչ մը առավ ու հայացքը ինկավ դիմա՛ցը՝ վե՛ր: Հո՛ղ՝ ձորին բերանը, դոգավոր ժայռի մը եզերքին լույսի բարակ երիզ մը կցոլար, երիզը քիչ-քիչ լայնցավ, պայծառացավ, ու անոր հետևեն հանդարտ դուրս սահեցավ լրիվ լուսինը ու ակնթարթ մը կանգ առավ կարծես ժայռի այդ դոգավոր չրթունքին վրա՝ սկիհին վրա բռնված նշխարքի մը պես:

Եվ տղան Հանկարծ մտաբերեց, որ ինքը այլևս հոգևորական չէր. վեզարավոր ապագա՛ն, խուցի չոր կյա՛նքը, միայնա՛կ ու միակե՛րպ, եկեղեցական պաշտամունքները իրենց խունկերովն ու աղմոսներովր, այդ բոլո՛րը ալ երազ մրն էր իրեն համար, անցած երա՛զ մը, ուրկե հիմա կարթննար:

Եվ այդ մտածումը նախ ախորժ թեթևութիւն մը թափեց իր զգացումներուն վրա. Հանկարծ սիրտը ուժգին զարկավ, ու վայրի ուրախութիւն մը խուժեց իր կուրծքը. չէ՞ որ ալ ազա՛տ էր ինքը, ազա՛տ՝ իր Հանձն առած պաշտոնի անհաճո պարտականու թիւններեն ու անիմաստու թիւններեն, ազա՛տ՝ վանքի գոց ու ճնշող կյանքեն, ազա՛տ՝ իր զգացումն ու Հայացքները վարագուրելու անհրաժեշտու թենեն, ազա՛տ,

ինչպես դուբայի բնական մարդիկն էին: Դո՛ւրս, շո՛ւտ դուբայի աշխարհը, դուբայի կոմիսիոներն ու աղմուկին մեջ, դուբայի կյանքովն ու աշխատանքով, դուբոյինների հետ... ու դուբայի աղջկան:

Եվ հուզման նոթերին թռափին ցասկաց ուրքի, նայեցավ շուրջը:

Մութը վարագած էր: Լուսնի գունաթափ լույսին տակ ձորին բնակիչները մրցում մի էին ելել, թե ո՞վ իրենցին իր շուքը ամենին ավելի հեռուն, ամենին ավելի վար նետել կրնա, վա՛ր, մինչև հո՛ն, ուր գետակը արտորալով վնշելը ժոլված կվազեր, վնշելը իր ալծաթթել շղարշին, որ միայն լուսնի այցելությանը պահեստի անուտկին կհաներ:

Աչքերը այդ վայրկյում կլին՝ ապան ալ սկսավ դետակին հետ վար վազել վերի համեհուն վրայեն:

«Ուրեմն ինքը կսիրե՛ր այդ աղջիկը». իրեն այդպես էին ըսեր: Ինքը մինչև հիմա հավատած այն գաղափարին, թե կուսակրոն մըն է, առանց որոշ ոչինչ խորհելու՝ իր բոլոր պապայությունները վրա կնայեր իբրև պարզ բարեկամության, մտերմության վրա, թեև կզգար, որ շատ տարօրինակ ու խոսոտ սովոր թևերը կույին բարեկամության այդ հյուսվածքին մեջ, բայց չէ՞ որ արդեն ինքնին բացառիկ բան մըն էր այդ մտերմությունը, մտերմությո՛ւնը դետաւոի աղջկան մը հետ: Եվ հիմա մեկ անգամեն իր երեսին կըսեին, թե ինքը կսիրեր, թե իր վարմունքը ո՛չ այլ ինչ էր, եթե ոչ պարզ սեր, որու մասին այնչափ լսած էր ու կարդացած, սեր զեպի հակառակ մը: Եվ այդ նորությունը իսկապես քիչ զարմանք կպատճառեր հիմա իրեն. չէ՞ որ իրարությունը նույնն էր, ինչ որ առաջ, անունն էին վոխեր միայն, ձգտո՛ւմ մը դեպի աղջիկը, հավիշտակությո՛ւն մը, ոգևորությո՛ւն մը անոր մոտիկությենեն, պահանջ մը լսելու, խոսելու, իր մտածումներն ու ապրումները անոր հայտնելու, և այդ բոլորի պատմարը, որ մինչև հիմա «տարօրինակ բարեկամություն» էր, ուրիշները անվանեին «սեր». պիտո՛ւք, ինքը համաձայն էր և այդ նոր անվանակոչությանը:

«Անվանակոչությո՛ւն». իր մտածած բառը իրեն ալ տարօրինակ երևցավ. խնդաց: Ու մեկեն բուռն պե՛տք մը զգաց խոսակցելու, երթևեկելու, տրտկելու: Ինչ այդպես մի՛ս-մինակ կմոտեսներ լուսնին տակ, մի՛շտ մինակ, հեռիք չէ՞: Եվ հիշեց, որ Քանյաններըր հիմա թեյի վրա էին և անշուշտ կպատմանային իր ուշանալուն:

Ուժգին թափով մը դարձավ կրունկին վրա ու երգ մը սուլելով ետ չտապեց:

Ինքը աներևույթ եղավ շուտով ձորի պատին ձգած թանձր ստվերին մեջ, բայց իր սուր ու զվարթ սույլը կհնչեր դեռ երկար, և բարձր քարանձավներու խավար խոռոչներեն արձագանքները քնկոտ ձայնով մը իրենց նինջը խանդարողի սուր շեչտերը կկրկնեին, մե՛կը չարացած, մյո՛սը հեգնելով, ու բոլորն ալ՝ դժգոհ:

Ժ Ա

Երբ Սիրաքյան աչքը բացավ, պայծառ օր էր, սենյակը մարդ չկար: Սեմի վրա դեպի դուրս նստած էր Սերոբ և գլուխը դռան շրջանակին հենած՝ կնայեր հեռուն՝ մտքերու մեջ թաղված:

Երբ ներսը շարժում լսեց, զարձավ ետ:

– Արթնցա՞ր, ծո՛ւյլ Մարտիրոս,– ըսավ մեղմ ու կատակող շեշտով մը:

– Ի՞նչ կընես հոդ,– հարցուց տղու քնկոտ ձայնը:

– Կսպասեմ քեզի, որ ելլես, երթանք միասին լողալու:

– Մինասը ո՞ւր է:

– Զգիտեմ, դուրս ելավ:

Արտաշես ցատկեց անկողնեն, արագ հագվեցավ, զարկավ սրբիչը ուսը, որ ձորը իջնեն:

– Հապա այս առտու մեկնեի՞ք պիտի, ի՞նչ եղավ,– հարցուց, երբ վանքի բակեն կելլեին:

– Անխե՛լք, ըսածիդ ինքդ կհավատա՞ս, առանց քեզի ո՞ւր կրնանք մեկնիլ: Այդ տեսակ խոսքեր տաքցած աստեն կըսվին, բայց մի՞թե հնար է իրագործել:

– Ինչո՞ւ ո՛չ:

– Բնպի ձգենք՝ հեռանա՞նք. կվայլե՞ աստիկա պաշտոնակից, սրտակից ու նպաստակակից ընկերներու:

– Բայց մակդիրներեդ ոչ մեկ հատը այլևս իմ վերաբերմամբ ճիշտ չէ:

– Ինչպե՞ս թե:

– Չէ՞ որ ա՛լ ցուցակի դուրս նետված մարդ եմ ես:

– Դպո՛ւմ, կարծես Մինասի չափազանցությունները սիրող բնավորությունը չես դիտել, ան լսավ, դուն ալ սրտիդ առիր, երևի, հա՞:

– Ամենևին, լլլալիքը ատիկա է, այս ձևով թե այն ձևով:

– Վե՛րջ տուր, Արտաշե՛ս, այդ անհամ կատակին,– ըսավ Սերոբ տեսակ մը դժկամած:

– Հոս կատակ չկա. իմ վարդապետությունս այլևս ծալված ու դարակը դրված խնդիր է:

Սերոբ կանգ առավ դեպի ձորը վազող նեղ արահետին վրա ու կծկված դիմագծերով շնչտ ընկերոջը երեսը նայեցավ: Ու ակնթարթ մը լուռմնեն վերջ հպարտ ու հատակ շնչտով մը կցեց.

– Եթե քու անձնական երջանկությունդ մոռնալու չափ բարձր չէիր կրնար մնալ, եթե մեջդ ալ մարդկային դերազույն զոհաբերությունը ընելու չափ ուժ չէիր զգար, ինչո՞ւ խոսք տվիր կուսակրոնության :

– Զոհաբերությո՞ւն: Կարծես դուրսը քի՛չ կան այրիներ ու ամուրիներ: Սիրելի՛ս, չխաբենք ինքզինքնիս. Հիմա սկսած է ալ ամեն բան ինծի ուրիշ գույնով երևալ, այդ անձնազոհության ըսածնիս պարզապես խուսափում մըն է դուրսի կյանքի դժվարություններեն ու նյութական մաքառումներեն, ուրիշ ոչինչ:

– Անխիղճ կխոսիս, Արտաշե՛ս:

– Ճշմարտությունը կխոսիմ: Վրան ավելցո՛ւր նաև աժան փառասիրությունը. ո՛չ քու ուժերուդ առավելությենեն, ո՛չ քու սեփական արժանիքիդ օր մը կպառնաս եպիսկոպոս, գուցե և ավելի, ատորին պաշտոնները խառնկ կծխեն փիլոնիդ չուրջը, կվայլես մեծավորի անուն, կպառնաս մեծ մարդ:

– Բայց լռե՛, ամո՛թ է, ամո՛թ:

– Մի՛ վրդովվիր, սիրելի՛ս, իհարկե այս բոլորը մերկ կերպով ո՛չ դուն մտածած ես, ո՛չ ես, բայց կրնա՞ս ձեռքդ խղճիդ վրա ըսել, որ այս ամենը, անշուշտ ավելի անորոշ կերպով ու ավելի բանաստեղծական անուններու տակ, քեզի համար հրապուրիչ չէ եղեր ու քու վարդապետանալուդ վրա չէ ազդեր: Վերջին օրերս այս հարցերուն վրա ես չատ եմ խորհեր, խորհե՛ և դուն:

Սերոբ խոժոռ ու անթարթ ընկերոջը կնայեր:

Երկուքն ալ կեցեր էին դեմ դիմի երկու ժայռերուն մեջ ինկած նեղ անցքին վրա. Սերոբ՝ թեթեւ մը ժայռի մամռատ կողին հենած, Արտաշես՝ արահետին ճիշտ մեջտեղը՝ տաք ու կրքոտ խոսվածքով մը անդադար ձեռքի սրբիչը օդին մեջ չարժելով:

– Հիմա իմ տենչանքս է կռիվով, կյանքի՛ մեջ իմ սեփականն ուժերովս ինծի համար ճամփա բանամ: Կուսակրոնի այդ պատրաստ, յայն ու հանգիստ ճամփեն քալելը քաջութիւն չէ:

– Ուրեմն քեզի համար գոյութիւն չունի՞ն այլևս մեր հոգևորականութեան դերը, ժողովուրդին կարիքները:

– Կհիշե՛մ, մեր վերջնական խոսք տալու առեներն էր, թե ինչպես ուղեղս կչարչրկեի իրոք կենսական բաներ մը գտնելու համար, որոնք իմ հոգևորական դառնալս աչքիս անհրաժեշտ դարձնեին. պետք էր անպատճառ ինքզինքս համոզեի և ճարեցի իհարկե թուքով փակցուցած քանի մը բաներ, որոնք ահա՛ թուքի չորնալուն պես սկսավ վար թափիլ: Իրականութի՞ւնը կուզես. հոգևորականներու ձեռքը հիմա չա՛տ քիչ բան կա կենսական, այսինքն՝ իսկապես ժողովուրդի համար անհրաժեշտ:

Սերոբի դեմքը կարեկցոտ արտահայտութիւն մը հագավ. նույնիսկ չպատասխանեց:

Իսկ ընկերը շարունակեց.

– Մեր ոգևորութեան ու մեր ծրագիրներուն մեծագույն մասը, եկո՛ւր քեզի հետ անկեղծ խոստովանինք, որ միայն մե՛ր դյուրութեան համար է, մե՛ր օգտին, վեղարավորներուս. ավելորդ տեղը ժողովուրդի հաշվին չգրենք: Կալվածական բարեփոխումներ, տնտեսական կանոնավորութիւն, վարչական կեդրոնացում, փառավոր շենքեր, բարձրագույն ուսում, գրաքարան և ուժեղ միաբանութեան մը հիմնարկումը ասոնք չե՞ն:

– Է՛, այդ բոլորը ժողովուրդին համար չէ՞:

– Ո՛չ:

Երկուքն ալ պահ մը լուռ էին:

Սիրաքյան հանեց գլխարկը, մտոներովը մեկ-երկու անգամ անցուց մազերը, ծածկեց նորեն գլուխը ու կրկնեց.

– Ո՛չ, ժողովուրդը մեզմե խեր չունի. մենք կտրված ու կզգիացած

մարմին մըն ենք հասարակութենեն դուրս: Այդ կողմեն քահանան մեզմե ահագին առաւելութիւն ունի. մինչև վերջը դանե իր ժողովուրդին մեջն է. անոր նեղ ու լայն օրերուն, խինդ ու վշտին մասնակից: Իսկ մենք, տե՛ս, քահանայութիւնը չենք ընտրած:

– Ամեն մարդ իր տեղը. չա՛տ առացողեն չա՛տ կպահանջվի: Վերջապես ասիկա պատարկ պատճառաբանութիւն է. եթե ըսածներուդ համոզված ես, եղի՛ր տերտեր:

Սիրաքյան ծիծաղեցավ դառն ու հեգնոտ ծիծաղով մը:

– Ո՛չ, պատմության այդ պլուխը ինծի համար փակված է. ես կզանեմ ուրիշ ճամփա մը ժողովուրդի վարի խավերուն մեջ մանելու: Եվ առանց որևէ հոգևկան բանադատումի, առանց որևէ սուտի ու կեղծիքի:

Սերոբ ձեռքի կատարի շարժումով մը առաջ նետվեցավ զայրացկոտ:

– Ինչ բառի մը պոչեն բաներ կերթաս: Հոս ո՛չ խաբել կա, ո՛չ սուտ. ինչ կեղծիք: Կեղծե՛ր, մեր ըրածին կըսեն պարզապես ժողովուրդի ըմբռնումնեներուն հարմարում. կարելի չէ ամբոխին ամեն կարգի ճշմարտություններ ըսել, և վերջապես ան քու ճշմարտություններուդ պետք ալ չունի:

Սիրաքյան ակնթարթ մը ապշած կանգ առավ՝ աչքերը չեշտ ընկերոջը դեմքին հառած: Բայց մատներու ջղաձգական անընդհատ կծկումեն, որով սրբիչը կճմռթքեր, պարզ էր, որ ներսը իրարանցում կար:

Վերջապես ձայն հանեց, միայն անսպասելի կերպով հանգիստ ու մեղմ ձայնով մը.

– Այդպես, ուրեմն, ան պետք չունի իմ ճշմարտություններուս, ամբոխը պետք է պահել իր նախապաշարումներուն ցանցին մեջ պինդ սեղմած, չէ՞ որ Աստծու կամքով այդպես եկեր է ու այդպես ալ պիտի երթա, ինչ ամբոխի բանն է վիտալիզմն ու ճշմարտությունը, որը միայն մե՜նք հասկնալ կրնանք: Ահա՛, սիրելի՛ս, ժողովուրդի անունով մեր իրարու դլուխ ուռեցնելը արտաքին ծածկոցն է միայն, դարուս պահանջած վերարկուն, որ ամեն խոսող իր վրա պիտի նետե հարգանք ու անձնական հաջողության վաստկելու համար, բայց ներքնատ մեկի համար ան միշտ նույն ամբոխն է, որ ո՛չ բան հասկնալ կրնա, ո՛չ ալ հասկնալու պետք ունի:

– Ինձի սխալ հասկցար,– սրբագրեց Սերոբ իր ըսածը։– Ես միայն ըսել ուզեցի, որ մասսան կամաց-կամաց պետք է իր հասկացողութիւններուն դուրս քաշել, իսկ մինչ այդ ստիպված ենք հարմարվելու ու քողարկելու որոշ բաներ։

– Այդ տեսակ պարապ խոսքեր դլուխս չի մտներ,– բացականչեց Արտաշես տաքցած։– Ես հիմա բոլորովին ուրիշ կերպ կմտածեմ. ճշմարտութիւնը որքան պարզ ու բաց ըսվի, այնքան ավելի աղեկ, այս սերունդը չի հասկցավ՝ կհասկնա հաջորդը, իսկ այդ լռելու ու ստելու ծայրը ո՞ւր պիտի երթա։ Ո՛չ, ես այլևս ճակատս բաց կուզեմ, կուզեմ անկաշկանդ իմ համոզումներս ամենքին ըսեմ։ Այդ հավիտենական հարմարվելու ու քողարկվելու սկզբունքը վախկոտներու, զառամածներու և ետ մնացողներու քաղաքականութիւնն է։ Բա՛ց է, ով կուզե թող երթա այդ ճամփեն, իսկ ես այլևս ո՛չ վեղարին երկար ծածկույթը կուզեմ մտածումներուս վրա, ո՛չ ալ փիլոնին կաշկանդող փեչերը քայլերուս չուրջը։

Եվ ուժով մը քաշեց սրբիչը ձախ ուսեն ու զարկավ աջ ուսը։

Կարկամ արտահայտութիւն մը դրոշմված էր Սերոբի դեմքին, ու քարացած կեցեր էր քարին տակ։

– Դե՛, Սերո՛բ, ես իմ խոստովանութիւնս ու ապաշխարանքս վերջացուցի, քալե՛, երթանք մկրտվինք։

Ու թեթևցած աշխուժով մը արագ առաջ շարժվեցավ։

Բավական ցատկեր էր քարե քար, երբ նոր նչմարեց, որ ետևեն եկող չկար։ Նայեցավ ետ. ընկերը ծանր-ծանր կքարձրանար վեր, դեպի վանք, նույն արահետովը, որով իջեր էին։

«Իհա՛րկե, հեթանոսին հետ միևնույն ավազանը չի կրնար մտնել»,– մտածեց ինքնին՝ ժպտիլ ուզելով։ Բայց ժպիտը սառեցավ շրթունքին վրա, ու ցավ մը զգաց. տարիներով ընկեր էին եղած, և հին ճամփաները կքաժնվեին։

Սերոբ երբ սենյակ մտավ, ճակատ ճակատի գտնվեցավ Մինասի հետ, որ անհամբեր կերթևեկեր։

– Բան դուրս եկա՞վ,– եղավ առաջին հարցը։

– Ինչպե՞ս չէ. և տեսնելիք ինչ բաներ դուրս եկան։

– Խոսքը ետ առնելու մասին նորեն ակնարկութիւն ըրա՞վ։

– Ակնարկութի՞ւն, լմնցած-վերջացած խնդիր է: Աստվա՛ծ իմ: Ինչ խայտառակութիւն, ինչ տպավորութիւն պիտի ընե այս բոլորը վանքի ու ամենուն վրա. առաջին քայլին այսպես թեթեւ վերաբերմունք ու խոսքի դիժում, մարդիկ հիմա ինչ ըսես վրանիս մտածելու իրավունք ունին :

– Ո՛չ, անկարելի է, պարզապես չենք թողներ: Միայն ինչ գնով ալ որ ըլլա այդ տխմարը հոսկե հեռացնելու է, անմիջապե՛ս:

– Անօգուտ է, մեյ մը լսելու էիր, թե ինչեր կխոսեր, ալ զո՛ւր բան է:

– Կարծես անոր հիմար-հիմար խոսելը առաջին անգամը ըլլա. Թո՛ղ անգամ մը նորեն վանք տանինք՝ ես խելքի կբերեմ:

– Մի՛ հուսար: Եվ վերջապես հոսկե հեռացնելն ալ դյուրին խնդիր չէ, քանի որ աղջիկը հոս է, ան հոսկե չի հեռանար: Ինչ խայտառակութիւն, Աստվա՛ծ իմ, ինչ խայտառակութիւն:

– Մի՛ հուսահատիր, միայն պետք է քաղաքականութեամբ վարվիլ:

Ու այդ բառերուն մեջ վճիռը տված մարդու մը ինքնագիտակից շեշտը կար:

Սերոբ ակամա ընկերոջը երեսը նայեցավ հարցական:

ԺԲ

Մինաս ձեռքովը ուսի վոչին թափ տալով՝ վանքի դուռնեն դուրս ելավ, դեպի Քանյաննեերուն կողմը:

Նախ ծանր կքալեր՝ գլխուն մեջ բոլոր հնարավորութիւնները տակնուվրա ընելով, թե ինչ միջոցով աղջկան հետ վայրկյան մը առանձին մնալու հաջողի. վերջը քայլերը արագացուց, մտածելով, որ հոգին սուրբ անշուշտ կերպ մը կներշնչէ հարմար վայրկյանին հարմար ընելիքը:

Տանը քանի մը քայլ էր մնացեր, որ քիչ մը անդին, ծառի մը շուքին տակ նշմարեց օրիորդ Մելինյանը: Կարած կոճղի մը վրա նստած, հենած ծառի բունին, գլուխը կախ կկարդար, թիկունքը դեպի տպան:

Մինաս ուրախութենեն խոր չունչ մը առավ. «Աստված հետս է», – մրմնջեց ու չտապեց դեպի աղջիկը:

Մոտեցող ոտքի ձայնը Շուշիկի ընթերցումը ընդհատեց. և ան թեթև մը դարձավ ետին:

– Բարև՛ Զեղի, օրիո՛րդ Մելինյան:

– Օ, բարև՛, պարո՛ն, ի՞նչ կընեք, բնավ մեջտեղ չկաք, պարոն Սիրաքյանը ըսավ, որ շարունակ կշրջիք, հիմա ալ երևի նորեն շրջելու կերթաք:

Վրա տվավ աղջիկը աչխույժ՝ տղու անունը կուլ տալով, որը չէր հիշեր:

– Ո՛չ, օրիո՛րդ, պտույտի չեմ ելած, եկած եմ մասնավորապես Զեղի հետ խոսելու և բարեբախտաբար Զեղի ալ հոս առանձին կգտնեմ:

Աղջկան առաջին զգացումը վախի պես բան մը եղավ, անակնկալի մը անորոշ վախը: Բայց իսկույն գուշակեց, որ խնդիրը իր ու Արտաշեսի հարաբերութեան չուրջն էր դառնալու ու հետաքրքրություն մը հաջորդեց նախորդ տարտամ վախին:

– Ինծի՛, մասնավոր ըսելի՛ք մը և ան ալ առանձի՞ն,– հարցուց իրարու ետևե խորին զարմանքի արտահայտությամբ մը:

– Այո՛, օրիո՛րդ:

– Հապա՛, խնդրե՛մ:

Վարդապետացուն չգիտեր ինչպես սկսի: Մարմնին ծանրությունը մեկ ոտքեն մյուսին անցուց, վերջեն աջ ոտքին տվավ գերակշռությունը և հանկարծ ըսավ.

– Գիտե՛ք, օրիո՛րդ, վաղը Խծկոնքեն մեկնիլ կուզենք:

– Մի՞թե, արդեն կշտացա՛ք, ըսենք իրավունք ալ ունիք. մարդ եթե քանի մը օր այս ձորին մեջ կենա, ա՛լ տեսնելու բան չի մնար, հասկանալի է, որ մենք ալ չաբաթե մը մեկնինք:

Մինաս նորեն կանգ առավ, աղջիկը խոսակցությունը գիծեն հաներ էր: Ակնթարթ մը խառնեց մորուքը ու ավելցուց.

– Զո՛րը ոչինչ, բայց մենք ստիպված ենք վերադառնալու:

– Անշուշտ գործե՛ր ունիք վանքը: Այդչափ մի՛ շտապեք, պարո՛ն, քիչ մը ազատ օդ շնչեցե՛ք:

Շուշիկ խոսակցությունը կարծես դիտամբ կշեղեր, կարծես հաճույք զգալով դիմացինը նեղ դրության մեջ դնելեն:

– Աստծու աշխարհքին վրա օդը ամեն տեղ ազատ է,– պատասխանեց տղան լրջությամբ:

– Իրա՞վ,– ժպտեցավ աղջիկը տեսակ մը նուրբ երդիծանքով: – Այնատեն բարի ճանապարհ կցանկամ ձեզի և հաջողություն ձեր գործերուն:

– Շնորհակալ եմ: Միայն կետ մը կա և այդ կետի համար է, որ եկած եմ Ձեզի հետ խոսելու:

– Եվ այդ կե՞տն է:

– Որ մեզի օգնեք հոակե հեռանալու:

– Ձեզի օգնե՞մ, ե՞ս, չեմ հասկնար:

– Այս վայրկյանիս: Մեր դարձը իսկույն անհրաժեշտ է՝ ըսի, բայց խնդիրն ան է, որ Արտաշեսը համոզել չենք կրնար, անպատճառ դեռ մնալ կուզե: Մտածեցի դիմեմ Ձեզի, ան, ըստ երևույթին, Ձեզի կհարգե ու Ձեր խոսքին կարևորություն կուտա: Եթե Դուք անգամ մը անոր ըսեիք, որ անիմաստ համառություն չընե, հավանական է, որ համոզվի:

Պարզ էր այդ բառերուն տակի իմաստը: Բայց Շուշիկ ոչինչ չհասկնալ ձևացուց.

– Կներե՛ք սակայն, պարո՛ն, ինծի ի՛նչ կվերաբերի ուրիշի գործերուն մեջ խառնվիլ: Պարոն Սիրաքյանը երեխա չէ, եթե երթալ չուզեր, երևի իր պատճառներն ունի: Եվ վերջապես եթե իր մտերիմ ընկերներուն կհակառակի, ի՞նչ ըսելով օտար աղջկան մը խոսքին կարևորություն պիտի տա:

– Դուք անոր վրա ազդեցություն ունիք,– հնչեց տղու չոր ու կտրուկ պատասխանը:

Շուշիկ բռնադրոսիկ ծիծաղով մը սկսավ խնդալ բարձրաձայն:

– Ինչո՞ւ կխնդաք, օրիո՛րդ, ինքնե՛րդ ալ շատ լավ գիտեք, անշուշտ:

Ասիկա արդեն շատ նման էր հանդիմանության, ու աղջիկը լրջացավ:

– Ես ոչինչ չգիտեմ և ոչինչ ալ գիտնալ չեմ ուզեր Ձեզմե, ուրիշի գործերուն մեջ խառնվիլ չեմ սիրեր, վերջ տանք այս անհամ խոսակցության:

Ու նեղսրտած վերցուց գիրքը ծունկերուն վրայեն ու նետեց քովի բարին վրա:

Վարդապետացուն մտածեց վայրկյան մը և իր պարտականու-

թյունը կատարողի մը անողոք չնչոտվը ըսավ հատիկ-հատիկ.

– Այո՛, գործի մեջ չեք խառնվիր, երբ կատարված սխալ քայլը կերպ մը ուղղել պետք է, իսկ երբ այդ սխալ քայլը պիտի կատարվի, այն ատեն գործի մեջ կխառնվի՛ք, օրիո՛րդ:

Շուշիկ զայրույթեն ցատկեց ոտքի:

– Ի՞նչ ըսել կուզեք, պարո՛ն, և ո՞վ եք Դուք, ինչպե՞ս կհամարձակիք երեսիս գայլի ավետարան կարդալու:

– Ես Արտաշեսի պաշտոնակիցն եմ ու ընկերը,– եղավ սառն ու հանդարտ պատասխանը:

Աղջիկը կարծես տեսակ մը սթափեցավ ու հպարտ արհամարհանքով մը ավելցուց.

– Չի հետաքրքրեր ինծի, թե Դուք ինչ եք:

– Սակայն պետք է, որ հետաքրքրե: Միթե իրա՞վ չեք հասկնար, օրիո՛րդ, որ ընկերս Ձեր պատճառով միայն հոսկե հեռանալ չուզեր:

– Կհասկնա՞մ թե ո՛չ, Ձեր գիտնալու բանը չէ:

– Իմ գիտնալու բանը չէ՞, երբ ընկերս Ձեր պատճառով ամեն սրբություն ոտքի տակ տալ կուզե, իր տված խոսքը, իր ապագան, իր ծրագիրները, իր կոչումը, իր ընկերները:

– Ա՛խ,– թոռավ հանկարծ ակամա աղջկան դողդոջ շրթունքներեն:

Քայլ մը ետ գնաց ու կանգ առավ քարացած՝ ձեռքը ծառի բունին և խոշոր աչքերը լայն բացած՝ գամեր էր խոսակցի դեմքին:

Շուշիկ ամենևին չէր երևակայած, որ խնդիրը սրդեն այդ աստիճանի հեռուները հասած ըլլար: Իսկ վարդապետացուն սիրտ առավ ու մեղմացած ձայնով մը չարունակեց,

– Կտեսնե՞ք, օրիո՛րդ, վախցա՛ք, և ատիկա պատիվ կբերե Ձեզի: Ես արդեն կզգայի կարծես, որ այս բոլորի մեջ Դուք գիտակցաբար չէ, որ մեղսակից եք, ես արդեն կգուշակեի, որ Դուք ոչինչե տեղյակ չեք: Արտաշեսը քիչ մը դյուրագրգիռ ու չուտ գրավվող տղա է, այսօր այս բանով, վաղը մեկ ուրիշով, հանդիպեցավ Ձեզի, կրթված, պարկեշտ, համեստ աղջիկ մը ու սկսավ երևակայել, պետք է հեռացնել միայն, ու անմիջապես խելքը գլուխը կուգա: Ցավը հոն է, որ մենք հիմա անոր աչքին իր թշնամիներն ենք դարձեր. ինչ որ ըսենք՝ կհակառակի, կընդդիմախոսե, սակայն Ձեզի ու Ձեր խոսքին պիտի լսե անպատճառ:

Ահա, հիանալի առիթ մը, օրիո՛րդ. ցույց տվեք, Թե ինչպե՛ս կվարվի պարկեշտասուն Հայ օրիորդը:

Իսկ պարկեշտասուն Հայ օրիորդը Հայացքը ծառերուն մեջեն հեռուն փայլփլող կետի մը հառած՝ Թաղվեր էր ինքն իր մեջ, ոչինչ չէր տեսներ, չէր ալ լսեր ոչինչ, մինչ կրծքին տակ կեռար Հաճույքն ու Հպարտությունը:

Հպա՛րտ էր, բարձր կզգար ինքզինքը, չա՛տ բարձր այդ դիմացը կեցած «խեղճուկ» մարդեն, այդ խոշոր, Հսկա մարդը իր ցանցառ մորուքին ու բեղերուն մեջեն եկած էր անկե իր ընկերը մուրալու: Հաճելի պիտակցություն մը սկսավ ողողել Շուշիկի Հոգին, պիտակցություն մը, Թե իր Համբքին ու ազդեցությանը տակ տղան արդեն մեկզի նետել կուզեր այդ վարդապետությունը, որ այնքան անախորժ էր աղջկան: Այն զգացումն ուներ, որ ինքը մեծ կոչում մըն էր կատարած, որ փրկիչ մըն էր ինքը ու Հոգի մը ազատած. ազատա՛ծ «այդ կեղծիքի ու միջնադարյան շրջանեն», ազատա՛ծ «այդ խելացի, ազնիվ ու ձեռներեց տղան»:

Հաճույքն ու Հպարտությունը վառ կպոլար իր աչքերեն, ու կարմրակած այտին ծլեր էր անգիտակից ժպիտ մը:

Հանկարծ իր այդ ներքին Հուզման տակ ա՛լ Հանգիստ կենալու անկարող՝ սկսավ արագ երթևեկել վարդապետացուին դիմաց, որ իր խոսքը վերջացուցած՝ անՀամբեր պատասխանի կսպասեր և աղջկան դիմքի փոփոխություններուն ու Հուզումը որոշ չէր դիտեր ինչի՞ վերագրե:

Բիչ մը առեն երկուքն ալ լուռ էին:

– Ուրեմն, օրիո՛րդ, կրնա՞մ Ձեր օգնության վրա Հույս դնել:

Աղջիկը կարծես նոր արթնցավ, ձեռքերը եռեւեն խաչաձևեց մեջքին ու կուրծքը դուրս՝ կանգ առավ տղուն դեմ:

– Հիմա Դուք ի՞նչ կկամինաք ինծմե, պարո՛ն:

– Կինդրե՛մ, աշխատիք Արտաշեսը Համոզելու, որ Հնար եղածին չափ շուտ Հոսկե մեկնիլ կարողանանք:

– Այդչա՞փ:

– Այո՛, օրիո՛րդ:

Շուշիկ ակնթարթ մը չեզտ նայեցավ տղուն ու Հստակ ձայնով մը պատասխանեց Հաստատ.

– Վաղը առտու Ձեր ընկերը Ձեզի Հետ միասին Հոսկե կմեկնի:

– Ուրեմն կխոստանաք հասկցնելու, որ իր ըրածը անխելքություն է ու համոզելու...

– Վաղը առտու Ձեր ընկերը Ձեզի հետ հոսկե կմեկնի,– կրկնեց աղջիկը հրամայական ու արհամարհական շեշտով մը:

Տեսակ մը հարգանք ու ակնածում սպրդեցավ հանկարծ Մինասի հոգին դիմացինի այդ խրոխտ ու ինքնագիտակից խոսվածքին ու դիրքին դեմ:

– Սրտագին չնորհակալությունս, օրիո՛րդ Մելինյան, ես Ձեր այդ ազնիվ վարմունքը երբե՛ք...

– Թողե՛ք, խնդրե՛մ: Ուրիշ ըսելիք մը ունի՞ք:

– Ո՛չ, օրիո՛րդ:

– Այն առեն... ներեցե՛ք:

Ու վերցուց գիրքը քովի քարին վրայեն:

– Անշուշտ, Արտաշեսին ոչինչ չեք ըսեր մեր այս տեսակցության մասին, թե չէ գործը բոլորովին կծռի:

– Ապահո՛վ եղեք:

Ու սկսավ արագ գիրքը բանալ:

Վարդապետացուն ձեռք տալ կուզեր, բայց տեսնելով, որ աղջիկը իր կողմն անգամ չէր նայեր, գլխարկով թեթև մը բարևեց ու հեռացավ:

«Ալ շատ չեմ զարմանար,– կմտածեր,– թե ինչպես Արտաշեսը իսկույն խելքե ելավ, այս աղջիկը ամեն բան կրնա ընել, դև կա այդ աղջկան մեջ: Բայց... ի՛մ առջև, արդարամտության և ճշմարտության առջևն ա՛ն ալ այդպես կիսոնարհի»:

Ժ Գ

Քանյաններուն սենյակը նույն լամպի լույսին տակ, նույն մաքուր սեղանին չուրջը նստած էին պարոն Նիկողոսը և իր նույն երեք հյուրերը:

Առաւո կբարձրանային նոր լեցված թեյերուն գոլորշիները, և կհոսեր աչխույժ խոսակցություն մը: Կխոսեին ազգային ու քաղաքական հարցերու շուրջ, կարծես խոսք մեկ էին ըրած, ոչ մեկ ակնարկություն վանքի, կրոնի ու հոգևորականության մասին, որ նախորդ հանդիպումներու ժամանակ բնական կերպով խոսակցության առանցքը կկազմեր:

Խոսակցության մասնակից չէր միայն Արտաշես: Սեղանին մեկ անկյունը քաշված, պլուխը կախ, ումպ-ումպ իր թեյը կխմեր՝ նույնիսկ առանց անոնց խոսքին հետևելու: Տևական մը ցրված էր, նեղսիրտ և անպատասխան ոսքը կշարժեր:

Արդեն ամբողջ օրը անսովոր տրամադրության մը մեջ էր եղած:

Ցորեկը գացեր էր Շուշիկը պատրաստ սանելու, բայց փոխանակ սովորականին պես պլսաբերկին առեղը անցընելով աղջիկը իր ձեմը շտապելու, դուռը ելեր էր սիկլինը երեխան գրկած ու տատօրինակ ժպիտ մը շրթունքին հայտներ էր, թե քույրը այսօր քիչ մը անհանգիստ է ու պատվեր է կապդուրվելու:

Տղան պխտահակ դարձեր էր ետ ու ձորին մեկ խուլ անկյունը նետվեր էր գետին: Ալ ինչե՛ր ըսես չէր անցեր մտքեն, ենթադրություն ենթադրության վրա: Արդյոք Շուշիկը վշտացա՞ծ էր իրմեն, ինչո՞վ կրնար վիրավորած ըլլալ, գուցե երեկվան իր վարմունքը ձորին մեջ, բայց չէ՞ որ այնպես գլարթի ու կատակով բաժնվեր էին նախորդ գիշերը իրարմե:

Իրիկվան դեմ հազիվ մուքը գետինն առած՝ կիպիչ անհամբերությամբ Քանյաններուն երթալու կպատրաստվեր, երբ Մինաս հայտնեց, թե այս իրիկուն իրենք ալ միասին գալ կուզեն, թե ինքն ու Սերոբ վճռեր են արդեն հաջորդ առտու անպատճառ խծկոնքեն մեկնիլ, որով քիչ մը անբաղաքավարի կըլլար առանց մնաք-բարովի հեռանալը: Արտաշես զժգոհությենեն ակռանները սեղմած, առանց ոչինչ առարկելու միացավ ընկերներուն:

Եվ ահա կես ժամեն ավելի էր նստած էին հոն ու կխոսակցեին, և Արտաշես իզո՛ւր ամեն դուռը շարժվելուն այն կողմ կնայեր. Շուշիկ ներս չէր գար:

Երբ անգամ մը նորեն, իր ապատածին հակառակ, փոխանակ աղջկան կրկին սիկլինը սենյակ մտավ, տղան ալ համբերել չի կրցավ ու հարցուց.

– Օրիորդի անհանգստությունը դեռ չանցա՞վ, սիկլին:

– Իրա՛վ, Շուշիկը ո՞ւր է, մեջտեղ չկա,– հարցուց Քանյան իր կողմեն:

– Ներսը նստեր կկարդա,– պատասխանեց կինը:

– Է՛, ինչ կարդալու տառն է հիմա, ըսե՛ք գո՛ թեյը խմե:

– Կարծես անոր բնավորությունը չգիտես: Ըսի՝ չեկավ, ախորժակ չունիմ, կրսե: Պնդելը ավելորդ է, ան որ չէ ըսած, չէ պիտի ըլլա:

Ու Քանյան դժգոհ դեմքով մը դարձավ նորեն իր հյուրերուն:

Քիչ մը վերջը խոսակցության տաք միջոցին էր, որ տիկինը նորեն երևցավ միջանցքի դուռնեն ու կանչեց:

– Պարո՛ն Սիրաքյան, վայրկյան մը դուրս կուգա՞ք:

Տղուն սիրտը նետեց, արագ վար դրավ ձեռքեն դպլը, որով թեյին երեսի երկու-երեք փրփուրի հատիկներուն հետ կխաղար, ու ցատկեց դուրս:

– Ինչո՞ւ այդպես խոժոռ նստած եք և ոչինչ չեք խոսիր,– հարցուց տիկինը սենյակին դուռը կրկին գոցելի վերջը:

– Այսօր խոսողներ չա՛տ կան, խոսակցության նյութին ալ չատ մաչված է,– պատասխանեց տղան քմայնոտ:

– Եթե այդպես է, անցե՛ք դուրս, Շուշիկն ալ դուրսն է,– ըսավ տիկինը չատ մտնավոր ժպիտով մը:

– Դո՞ւրս,– բացականչեց տղան մատովը տան դուռը ցույց տալով:

– Այո՛,– գլխով ըրավ տիկինը:

Արտաշես երկու ոստյունով սեմեն դուրս նետվեցավ, բայց թափով կանգ առավ իսկույն:

Գիշերվան թարմ զովության մեջ, լեցուն լուանի ողողուն լույսին տակ կեցած էր աղջիկը՝ ժաքեթը ուսերուն, թևերը ծալած կրծքին, դիմաբաց ու աչքերը տղուն, արձանի դիրքով մը, ուրկե թունդ-սև ստվեր մը ինկեր էր գետին՝ լուանի թափած ճերմակության վրա:

Ծանր քայլերով մոտեցան իրարու ու ձեռք տվին:

– Այսօր Հիվանդ էի՞ք,– առաջինը տղան խզեց լռությունը ցած ու տխուր ձայնով մը:

– Իսկ Դո՞ւք ինչ ըրիք:

– Ի՞նչ պիտի ընեմ միս-մինակ, ձանձրացա:

– Մինա՞կ, ինչո՞ւ, Ձեր ընկերները Հոս չէի՞ն:

– Ես ընկեր չունիմ այլևս, ո՛չ ընկեր, ո՛չ բարեկամ, ես մինակ եմ, բոլորովին մինակ: Երեկ գոնե կկարծեի, թե ընկերուհի մը ունիմ, բայց այսօր համոզվեցա, որ չարաչար սխալած եմ, այդ իմ միակ ընկերուհիս ալ սուտ-հիվանդ կդառնա ու ինծմե խուսյս կուտա:

Ու սիրկա ըսված էր այնպիսի ուռած, քմայնոտ ու տրտունջի չեչոտով մը, որ Շուշիկ չի կրցավ ինքզինքը զսպել, խնդաց ու նորեն բռնեց տղուն ձեռքը: Եվ առանց բաց թողնելու՝ ըսավ տեսակ մը մայրական խոսվածքով.

– Ինծի նայեցի՛ք, պարո՛ն Սիրաքյան, որ այսօր սուտ-հիվանդ ձևացա՝ չիտակ է և. ամէն վերջն ալ չարունակ նույն սուտ-հիվանդը պիտի ձևանամ: Արդեն ատոր մասին խոսելու համար Զեզի դուրս կանչեցի: Մնկ խոսքով՝ մեր հարաբերութեյան պետք է վերջ դնել, կա՛րճ ու կտրո՛ւկ:

– Ինչ...

Ու անդամալույծ չարժումով մը ձեռքը աղջկան ձեռքեն հետ քաշեց:

– Ինչո՞ւ այդպես զարմացաք, բարեկա՛մս, չէ՞ որ մեր հարաբերութեյունը կարվի պիտի երկու օր ուշ կամ կանուխ: Վաղը կամ մյուս օրը Դուք պիտի երթաք ալ, ես՝ ձախ. որքան շուտ կտրենք, այնքան լավ: Վերջապես մտածեցե՛ք անգամ մը, ինչ տևական կապ կրնա գոյութեյուն ունենալ մեր մեջը, վարպապետի մը ու մանկաբարձուհիի՛ մը մեջ:

Ու վերջին երկու բառերը չեչովեցան մանավորապես պարզ:

– Ա՛խ, եթե ատ է բոլորը,– բացականչեց Արտաշես զվարթ գարկով մը:– Իմ վարդապետութեյունս, օրիո՛րդ, խծկոնք ուռք դրած օրս մեռավ, ու երեկ թաղեցի, մնացեր է հոգեհանգիստը միայն:

Շուշիկ հապիով կլսպեր խնդուքը:

– Ինչ ըսել կուզեք:

– Ձեր ցանկութեյունը կատարվեցավ, օրիո՛րդ: Այլևս ես ինքս ալ կրոնավոր ըլլալու մեջ հրապույր չեմ գտներ: Իմ կազմիս ու հակումներուս բանը չէ, վճռած եմ թողնել:

– Ա՛խ, ատոնք սիրուն խոսքեր են, որոնք չեն իրագործվիր:

– Ինչո՞ւ կկարծեք:

– Դուք խոսք եք տված, Ձեր զաղափարները ունիք և ժողովուրդին ծառայելու ծրագիրներ:

– Շատ բան է փոխված, օրիո՛րդ: Տված խոսքս արդեն կոտրած եմ, իմ գաղափարներս ունիմ միշտ, նետած եմ մեջես իմս չեղող գաղափարները, իսկ ժողովուրդիս ծառայելու կրնտրեմ նոր ճամիա:

– Այդպե՞ս, և ինչ ընել է հիմա Ձեր նպատակը, ինչ գործի կուզեք

ձեռնարկեք, դուրսր ոչինչ պատրաստ չեք գտներ, դուրսը պետք է հոգ տանիք ու մտածեք:

– Ես մտածած եմ արդեն ամեն բան. պիտի գրեմ մեծ եղբորս, որ ինծի քիչ մը օգնե, հոսկե կերթամ էջմիածին, վերջնականապես կմաքրեմ հաշիվներս ու կշտապեմ չիտակ Թիֆլիս:

– Ինչո՞ւ անպատճառ Թիֆլիս,– ընդհատեց աղջիկը խորամանկ նայվածքով մը:

– Նախ կկարծեմ հոն ինծի համար ավելի դյուրին կըլլա համապատասխան համար պատրաստվիլը և երկրորդ...– ու լուեց:

– Եվ երկրո՞րդ,– հարցուց աղջիկը:

– Եվ երկրորդ՝ մոտիկ կըլլամ իմ սուտ-հիվանդ եղող միակ բարեկամուհիս:

Շուչիկ ժպտեցավ:

– Խնդացե՛ք Դուք,– բացականչեց տղան մեծ ոգևորութեյամբ:– Իհա՛րկե, հիմա իրավունք ունիք վրաս արհամարհանքով նայելու, տղա՛ մը, որ այսօրվան պաշտպանածը վաղը կհերքե, երեկվան տված խոսքը այսօր ոտքի տակ կուտա, ես հիմա թեթևամիտ ու անպետք մեկն եմ Ձեր աչքին, չէ՞: Ադե՛կ, իսկ ես կըսեմ Ձեզի, որ ես երբեք այս աստիճանի վստահութեյուն զգացած չէի իմ մեջս՝ իմ սեփական ուժերուս վրա, ես հաստատ գիտեմ այս վայրկյանիս ու կրնամ Ձեզի խոսք տալ, որ ինծմե բան մը դուրս պիտի գա: Եթե կուզեք, նորեն խնդացեք Դուք, բայց ես տարակուսս չունիմ. չատ չանցած Ձեր սրտի հարգանքն ու մտերմութեյունը խլեմ պիտի ամբողջովին: Եվ երբ առկե տարի մը վերջը նորեն այսպես իրիկուն մը գամ Ձեզի մնաք-բարով բսելու, որ հաջորդ առտու մեկնիմ Մոսկվա բժշկական ֆաքյուլտեն, Դո՛ւք այլևս առանց վարանքի Ձեր ամբողջ սրտովը Ձեր ձեռքը մեկնեք պիտի ինծի:

– Ճի՛շտ, ինչպես այս վայրկյանիս,– կյտեց աղջիկը ջերմ ու սրտագին շեշտով մը՝ երկու ձեռքը տղուն մեկնելով:

Տղու թաւիր բևեռավ իսկույն, ակնթարթ մը վարանոտ նայեցավ չեչո աղջկա աչքերուն և հանկարծ անզուսպ ուրախութեյամբ մը խյեց անոր պարզած ձեռքերը ու սկսավ խենթի պես սեղմել:

Վայրկյան մը միայն:

Վերջը երկուքն ալ իրենց հայացքը ձգեցին գետին ու գլուխները

թեթեւ մը վար խոնարհեցան, բայց ձեռքերը դեռ ամուր բռնած էին իրար:

Առաջին աթաւոդը աղջիկը եղաւ, կամաց մը ազատեց ձեռքը ու մեղմ ձայնով մը հարցուց.

– Ուրեմն վաղը առաու կմեկնիք Էջմիածին:

– Վա՞ղը, երբե՛ք: Բանի Դուք հոս եք, հոս եմ և ես:

– Բայց որքան չուտ վանք վերադառնաք, այնքան ավելի չուտ կլլաք Թիֆլիս՝ Ձեր միակ բարեկամուհիին մոտ,– կրկնեց տղուն խոսքերը գրավիչ հեգնութեամբ մը:

Ժպտեցաւ Արտաշես ալ, մինչ աղջիկը ձայնի չափահաի խաղով մը ավելցուց.

– Հո՛ն, Դո՛ւք Ձեր համալսարանի պատրաստութեան, ե՛ս ալ իմ աշխատութիւններուս մէջ, վերջապես իրարու օգնել ալ կրնանք, հիմա մեր մասնաճիւղերը իրարմէ հեռու չեն, ինչպես առաջ:

– Այդ պայմանով ես կմեկնիմ այս վայրկեանիս,– բացականչեց տղան ձեռքի ուժգին ու աշխուժ շարժումով մը:

– Մինչեւ վաղը առաու կարելի է ուշացնել,– կատակեց աղջիկը,– բայց վաղը առտու անպատճառ, Ձեր ընկերներուն հետ միասին: Եվ մենք այլեւս հոս իրարու չենք հանդիպիր:

– Ուրեմն ցտեսութի՛ւն, Թիֆլի՛ս:

Նորեն սեղմեցին իրարու ձեռք, աղջիկը գլխով ըրավ և լուռնի առաու լուսին մեջեն իր սեփ-սև սավերին հետ մտաւ տուն:

Սիլաքյան դեռ վայրկյան մը քարացած մնաց իր կեցած տեղը՝ աչքերը հառած դռան, ուրկե Շուշիկ նետս էր անցեր:

Հանկարծ արթնցաւ կարծես ու խայտացող անհամբերութեամբ մը մտաւ սենյակ ու դարձաւ ընկերներուն.

– Բայց կարծեմ ժամանակ է պատկելու, քանի որ պետք է կանուխ ճամփա իյնանք, արեւը չելած:

– Ուրեմն հաստա՛տ կմեկնի՞ք վաղը,– հարցուց Հանյան մյուս երկուքին դիմելով:

– Այո՛,– պատասխանեց Արտաշես անոնցմե առաջ:

Երկու վարդապետացուները իրարու նայեցան:

Երկարահասակի դեմքին գոհունակութեան ժպիտ մը կխաղար:

Եվ աչքովը թեթեւ կծկում մը ըրավ ընկերոջը. «Տեսա՞ր»,– ըսել կուզեր կարծես:

Ելան ոտքի ու հրաժեշտ առնելու սկսան:

Քանյան ընկերացավ մինչեւ տան դուռը, հրավիրեց պարոնները անպատճառ իր տունը այցելել, երբ Ալեքսանդրապոլ գալու ըլլան:

Տղայքը վերջին անգամ մը ձեռք տվին, օրիորդին իրենց բարևը տալ խնդրեցին և ուղղվեցան դեպի իրենց սենյակը:

Երբ առանձին էին մնացեր, Մինաս տեսակ մը քնքշությամբ դարձավ ընկերոջը.

– Արտաշե՛ս, ես գիտեի, որ ընկերներուդ սիրտը պիտի չկոտրես ու միասին պիտի գաս, ես գիտեի, որ պիտի մտածես. դուն ազնիվ ու խելացի տղա ես: Ա՛լ օդին տանք մեր մեջ եղած բոլոր հիմար խոսակցությունները: Ուրեմն վաղը առտու կիջնենք Տիկոր, կվերցնենք ձիերը ու անմիջապես ճամփա կիյնանք:

– Այո՛,– ըրավ տղան կարճ:

– Ջեպի բան մը ըսեմ, ես այլևս հոգնեցա այս թափառելեն, մանավանդ Անին ու շրջակայքը ավելի երկար ժամանակ կպահանջե. հառաջիկա գարնան կուգանք, իսկ հիմա չիտակ երթանք Էջմիածին: Հե՞, ի՞նչ կըսես, Արտաշե՛ս,– հարցուց Սերոբ՝ Մինասի հետ կանխապես պատրաստած դերը վարպետությամբ կրկնելով:

– Այո՛, չիտա՛կ Էջմիածին:

Սերոբ հաջողությենեն չլացած՝ գաղտուկ մը Մինասի ձեռքը սեղմեց քովեն:

Երեքը միասին մտան վանք:

Արտաշես առջևեն մտածկոտ քայլերով, զույգն ալ անոր ետևեն:

Եվ երբ իրենց սենյակի սեմեն ներս պիտի մտնեին, Մինաս ծռեցավ կամաց մը ընկերոջը ականջին.

«Ապատեցինք»:

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

Վեպ

Ա

Պառավը մինակ էր սենյակին մեջ:

Փողոցին կողմը, նեղ պարտեզին մը վրա նայող պատուհանին քով կծկվելը էր բազմոցին անկյունը ու ձեռքի երկար դեղին սաթե համբույրը կդարձներ հատիկ-հատիկ. մինչ իր անմրմունջ ու անդադար երևցող շրթունքները իրենց առաջվան աղոթքը կկրկնեին մեքենական սրտագութեամբ:

Հարանջիները սկսան շուտ-շուտ իրարու հաջորդել. ուրեմն աղոթքը արդեն մոտ էր իր վերջին, երբ Հանկարծ ահագին դղրդումով կառք մը անցավ փողոցին վերեն ու նկավ չհասակ պարտեզին վանդակորմին առջևը ֆռափով կեցավ:

– Հա՛րս, նայե՛ ով է, – կանչեց պառավը ու չդադրեց իր աղոթքին վերջին տունելը Հնար եղածին չափ համառտատ ավարտելու:

Կից սենյակեն տիկինն ու սպասուհին միասին դուրս վազեցին սրահը, ուրկե սպասուհին աճապարեց պարտեզ՝ վանդակորմի դուռը բանալու:

Հարդի գլխարկի մը լայն եզերքին ու ճերմակ վուալին տակ կորսված դեմք մը կառքի պատուհանեն անհամբեր օդե համբույրներ կուղարկեր դեպի պատավին լուսամուտը:

Կառապանը կառքին դռնակը բանալուն պես, վանդակեն ապտակած թռչնակի նման, աղջիկ մը թռավ վար թեթև ու աշխույժ, կարմիր շրջապտույտին բարակ ծալքերը հովին տալով:

Թոթվեց արագ դեմ եկող տիկնոջ ձեռքը ուժով մը, բարևեց, ինդյաց ու պացավ ներս: Մինչ տիկինը կշտապեր դեպի դուռը՝ կառքեն իջնող անապատ ու սպիտակահեր կինը դիմավորելու:

Կինը իր այրի քույրն էր, իսկ երիտասարդուհին՝ ուրիշ, արդեն մեռած քրոջ մը աղջիկը, որ հիմա որբևայրիին քովը կապրեր:

– Իսկ կուգե՞նա. կուգենա տունը չէ՞, – Հարցուց աղջիկը խոժոռած, երբ սեմեն ներս նետվելով՝ սենյակին մեջ պատավեն պատ մարդ չտեսավ:

– Հո՛ս է, հո՛ս, խե՜ղճ: Անոր դարձը չդիտե՞ս. վերը՝ իր սաստանայի

խուցն է, նստեր կկարդա, – պատասխանեց պառավը կես դժգոհ, կես հպարտ շեշտով մը:

– Կարդա՛ ու կարդա՛. ես հիմա անոր կարդալ կսորվեցնեմ, – բացականչեց աղջիկը ու վազեց սանդուղներեն վեր:

«Սատանային խուցը» տան ետևի կողմեն պարտեզին վրա նայող լուռ, զով ու լուսավոր սենյակ մըն էր, որ հիմա առժամապես Հրանտի բնախոսական աշխատանոցը կներկայացներ:

Պատերեն կախված էին ուղեղի զանազան հատուածները պատկերացնող քարտեզներ, ջղային կեդրոնական թիւերու ահագին ձեռանկար մը: Պատին քով՝ քառակուսի անծածկ հաստարակ սեղանին տակ, նստած էր ամեհի շիշ մը, ուր լեցուն սպիրտին մեջ կնճռոտեր էր երկարբարակ մսի զանգված մը: Նույն սեղանին վրա ապակե նուրբ ամաններու մեջ քանի մը ծովային պոլիպներ, զանգակի կամ հովանոցի նմանող, որոնք իրենց մարմնի մեկ որոշ մասը չարունակ կբանային ու կգոցեին ջուրին մեջ: Քովը՝ էլեկտրական գործիքներ: Խիցի տափակ կտորի մը վրա գնդասեղներով պրկված էր խխունջի մը բացված մարմինը: Ու այս բոլորի վրան ու շուրջը՝ ծովային խեցիներ, ժժմակներ, սպունգներ, խառն, ցան ու ցիր: Պարզ էր, որ տղու ամեն պտույտե դարձին բան մը միասին էր եկած: Անդին ուրիշ սեղան մը, պատուհանին ճիշտ առջևը, որուն մեջտեղը մանրադիտակն էր դրած. ու բոլորտիքը անդամհատական ունելիներու, կեռներու, փորձի սրվակներու, ապակիներու, գույնզգույն փոքրիկ շիշերու սոսկալի խառնակուլիյուն մը: Աւտոնց քովն ալ քանի մը բաց ու գոց գրքեր, որոնցմե մեկուն բաց երեսին վրա ինկած էր նորածինի մը դեռ ամբողջովին չկազմակերպված գանկը՝ կեսը արդեն ոսկոր, կեսն ալ դեղնած մագաղաթի նման:

Կարճ խոսքով՝ «սատանայի խուցը», ուր տնեցիք բոլորն ալ տեսակ մը պատկառանքի ու վախի խառնուրդ զգացումով ներս կմտնեին: Իսկ պառավը բացարձակապես ո՛չ մեկ պայմանով ներս մտնելու չէր համաձայներ. և առջևեն անցնելու համար ալ ամեն սեռի ու աստիճանի սուրբերը օգնության կկանչվեին՝ չարին համփան դոցելու համար:

Ահա՛ այդ տակնուվրայության մեջ, տանու անփույթ հագուստներով, օրրան աթոռի մը մեջքին փռված էր Հրանտ:

Մարմնի լեցուն գծերով, վայելչակազմ երիտասարդ մը. դէմքը մաքուր ածիլած, մորուքի փունջ մը միայն ծնոտին ծայրը, արծվի քիթ ու խոշոր, թուխ, մտածող աչքեր:

Գլուքը ձեռքին հետ ծանկերուն դրած՝ զապված անհանգստութեամբ մը վարի աղմուկին կ'հետեւեր ժպիտը շրթունքին, երբ աղջիկը հովի մը պես սենեակեն ներս խոյացաւ:

Նետուեցաւ շիտակ տղուն վրա, խլեց գլուքը ձեռքեն, նետեց քովը աթոռին ու պայտացկոտ վրա տվաւ.

– Ելի՛ր, շո՛ւտ, ելիր ոտքի՛. դո՛ւն, անպե՛տք, անշնո՛րհք, փիլիսո՛փա՛: Ո՞ւր ես այս երկու շաբաթ է. ե՞ս պիտի պատիմ քու ետեւեդ. արդեն հետդ խոսիլը չարժեր: Ջալե՛ շուտ դո՛ւրս այս գարշելի Ցաուստի սենեակեդ:

Տղան կժպտեր միայն նույն գոհ ու հեգնոտ ժպիտովը: Եվ ձգեց, որ քաշե թևեն, հանե ոտքի. և առանց ոչինչ խոսելու թև թևի արագ պայթեցան սանդուղներեն վար:

– Տե՛ս, մորաքո՛ւյր, ինչպես խելոքցայ. կեցի՛ր, ես անոր կսորվեցնեմ, թե ինչ ըսել է չարունակ թաղվիլ բզկտած ուղեղներու ու գրքերու մեջ, և օրերով Դատը-գյուղ մեզի ոտք չդնել: Ինչ այդպես պապանձեցար, չխոսի՞ս, – դարձավ Հանկարծ երիտասարդին՝ վուալին տակ ամպված գլուքը անոր Համառ Հայացքին դեմ բռնելով:

– Երբ քու լեզուդ բացվի, ալ ուրիշներուն խոսելու կարգ կհասնի՞, – եղավ վերջապես Հրանտին Հանդարտ պատասխանը:

– Ադե՛կ. եթե խոսելու ժամանակ չկա, դռնե քիչ մը գործ տե՛ս, Հանե՛, նայիմ, սա վուալս: Վա՛յ, կամա՛յ, ասե՛ղը: Դեռ չվերջացա՞ր, ի՞նչ կմնանաս:

Բայց Հրանտ գլուխամբ սկսավ ալ ավելի ծանր շարժիլ:

Աղջիկը ցասկոտ ետ քաշեց գլուխը անոր ձեռքերուն մեջեն, նետեց վուալը սեղանին վրա, Հանեց իսկույն գլխարկն ալ ու անթիվ խոպոպիկներով գլուքին շուրջը Թափված մանչու կարճ մազերը, ատյուծի բաշին պես, Թափ տվավ:

Շարժուն գլուխագծով, փոքր, ամեն բանով Հետաքրքիր ու հետաքրքրվող միշտ ժպտուն գեմք մըն էր: Պզտիկ բերան մը՝ նուրբ ու սեղմ շրթունքներով: Կապտավուն ճերմակ փոնին մեջեն չագանակի

բիբեր, որոնք կարծես ամեն վայրկյան իրենց փայլը կփոխեին:

Ամառվան պարզ ու թեթև կարմիր շրջազգեստը ճաշակով գրկած էր ճկուն հասակը. ու վրայի բարակ ճերմակ ժաքեթին կոճակները բաց էր բոլոր:

– Եվ ինծի նայե՛, ես հոս տունը նստելու համար չեկա, – դարձավ նորեն երիտասարդին: – Գնա՛ չուտով հագուստներդ կարդի՛ բեր քիչ մը, անճոռնի գլխարկդ ալ դի՛ր, երթա՛նք փարոսը:

Ու մինչև արմուկը հասնող բարակ ձեռնոցները վարժ շարժումով մը ձեռքեն հանելով՝ զարկավ տղու դեմքին:

– Ատիկա ըսելո՞ւ համար ինծի վար քերիր, – հարցուց Հրանտ. ու հառաչանքի նմանող, կեղծ-հուսահատ, ծաղրաշարժ չեչոտով մը ավելցուց, – արդեն քու ձեռքդ իյնողը ազատում չունի:

Աղջիկը ակնթարթ մը նայեցավ անոր ետևեն՝ ժպիտը այտին. վարի շրթունքովը թեթև կծկում մը ըրավ. ու հանկարծ դարձավ, նետվեցավ անկյունը նստած պառավին գիրկը:

– Է՛, մայրի՛կ, ինչպե՞ս ես, աղե՞կ ես: Տղաքդ խելոք կկենա՞ն, թե՞ քեզի նորեն շատ կբարկացնեն. այդ քու խոշոր, մորուքավոր տղաքդ. հը՛րմ. քու տեղդ ե՛ս ըլլալու էի: Երևակայե՛, մայրի՛կ, այս առտու բիսքվիտի խանութը դեռ գոց էր, որ առջևեն անցանք. իսկ ես, գիտե՛ս, որ քեզի համար ուրիշ տեղե չեմ առներ. հոն միշտ թարմ է ու փափուկ. ճի՛շտ քու գոյությյուն չունեցող ակռաներուդ համար:

Ու կնոջ վրա հակած՝ անոր խորշոմած այտերը կշոյեր: Մինչ պառավը կլինդար ներողամիտ ու բարի խնդուքով մը, որ սիրած հահիլին ամեն կատակ ներելու պատրաստ է:

– Դո՛ւն ըսե, մայրի՛կ, ես աղեկ աղջիկ եմ, չէ՞, չա՛տ աղեկ:

– Աղե՛կ ալ, աղվո՛ր ալ, դեռ ավելի՛ն ալ, – պատասխանեց պառավը ծանր-ծանր: – Ու գիտե՞ս, Մինե՛, աննման, մեկ-հատիկ կըլլայիր, եթե...

– Նո՞ւ, եթե՞...

– Եթե այդ քու թատրոնը խաղալեդ ձեռք վերցնեիր:

– Ա՛ւա, այդ կետին չդպչիք, – բացականչեց Մինե, ցատկեց ոտքի ու վազեց դեպի սեղանատունն:

– Բայց, մորաքո՛ւյր, չկարծես, թե փորս կուշտ է:

Երկու քույրերը հոն էին արդեն:

Աղջիկը հագիվ սեղանին առջևն էր անցել, որ սեմին վրա երևցավ Հրանտ ու թևովը ձեռքի փոփոխ սև պխարկը մաքրելով՝ աղջկան խոնարհություն մը ըրավ.

– Եթե ապնվաշուք օրիորդը կբաւեհաճի...

Մինն արտորալով մեկ-երկու պատառ ալ կերավ ու թռավ ոտքի:

– Հապա անոթի էի՞ր, – նկատեց տանտիկինը:

– Ա՛խ, անոր անոթությունը, – պատասխանեց քույրը:

– Սա քու փրոֆեսորի խոշոր հովանոցդ նորեն հետդ ա՛ռ. պխարկ չեմ դնելու, – հրամայեց աղջիկը:

– Թալե՛ դուն. ես գիտեմ արդեն, որ առանց իմ հովանիիս վերջ ի վերջո քայլ մը ընել պիտի չկրնաս, – առարկեց տղան երկմիտ:

– Շատ չուշանա՛ք, Մինե՛, – պատվիրեց որբևայրին:

Պարտեզը Հրանտ բացավ հովանոցը: Աղջիկը մտավ անոր թևը. ու ելան փողոց:

Ճանապարհը բնակություններեն դուրս եկավ չուտով ու ծովի սիզուռտ ափերքին մտավ Ֆեներպահչեի կարճ թերակղզին, որուն ծայրը ճերմակ փարոսը կցցվեր վեր, կարծես ունգեղյուրի դունչը եղյուրը քթին:

– Ո՛ւր ես այս քանի տաեն է, ամոթ չըլլա հարցնելը, – բացավ Մինե խոսակցության ծայրը:

– Գիտե՛ս, սիրելի՛ս, իմ պբաղումներս:

– Ա՛, քու պբաղումնե՛րդ, իհա՛րկե:

– Աղե՛կ, դուն ի՞նքդ ուր ես, – նկատեց Հրանտ:

– Գիտե՛ս, սիրելի՛ս, իմ պբաղումներս, – պատասխանեց աղջիկը՝ հնար եղածին չափ տղու ձայնին ու չիչտին նմանցնելով:

Հրանտ խնդալու սոիպվեցավ:

– Ինչո՞ւ կխնդաս, եթե խնդիրը պբաղումին դա, ես քեզմե տասը անգամ ավելի ընելիք ունիմ վրաս. բայց տե՛ս, նորեն եկեր եմ: Ի՞նչ պբաղում. քու անշնորհքությունդ: Արդեն վերջին ժամանակները քանի կերթաս, այնքան եսական կդառնաս պիսաս: Էրիկ-մարդ ես վերջապես. ձեր ամենեն լավը իր տեղը կենա:

Ու ձեռքի արհամարհոտ շարժում մը ընելով՝ լռեց:

Թերակղզիին կեդրոնը ցած ու փոքր գեղջուկ սրճարանն էր

նստած՝ ծերունի ծառերու հովանիին տակ: Տարիքոտ թուրք մը երկար ավելը ձեռքին ահագին փոշի էր բարձրացուցեր դռան առջևը, ուր ցածլիկ սմբուակներու ամբողջ բլրակ մը կար իրարու վրա դիզված:

Ջույկը անխոս անցավ սրճարանին ետևեն ու անդին՝ փարոսի ճերմակ պատին տակ, կանգ առավ: Գետինը ամրացած էր հող ու մինչև ծովը հարթակ մը կկազմեր, որուն ոտքը ցիր-ցան ժայռերու խառնուկ ջրջանակի մը մեջ ծովուն մեկ կտորը բանտարկված՝ սրտնեղութենեն անդադար կերերար զայրույթի ճողփյունը չլթունքին: Մինչ հեռուն ընդարձակ ու ազատ կփռվեր ջուրի անդորը մակերևսը արևի ոսկեհոս հայացքին տակ:

Տղան դոց հովանոցին կռթնած, աղջիկ երկու ձեռքերը մեջքին՝ կնցած էին իրարու քով. երկուքի աչքերն ալ այդ անծալ տարածութեյան վրա սևեռուն:

Ջով, անուշ ու ծովուն չունչը զողցած հովիկ մը կուգար կամայ բացերեն՝ Մինեի ցրիվ գանգուրներուն ու տղու փողպատի թուլլ կապին հետ խաղալու :

– Գիտե՞ս, Հրաչնտ,– զարձավ հանկարծ աղջիկը: – Գալ ամիս նորեն հայերուն ներկայացում մը պիտի ունենանք. իրավունք գրեթե առնված է արդեն.

– Մի՞թե,– ըրավ երիտասարդը անտարբեր:

– Խաղն ալ մեր ժամանակակից կյանքեն. նոր գրագետի մը հոգեբանական ու արվեսական մեկ փորձը: Կհուսամ՝ սիրուն բան դուրս պիտի գա. հիանալի է մանավանդ իմ դերս: Կրնաս հասկնալ, թե մեր սովորական, օտար ու թափթփուկ, միշտ կրկնվող խաղերուն մեջ, որոնց մեծագույն մասը զառւսմ մելոդրամներ են միայն, հիմա ինծի որչա՛փ կոգևորե այս նոր, մե՛ր կյանքեն, թարմ հայացքներով հոգեբանական սլիեսը, ուրկե դերասանը իրական ու ապրված բան մը դուրս բերել կրնա: Ի՞նչ. եթե աոիկա չըլլար, դուն կկարծես քու այս երկու շաբաթվան աներևույթ թանալը այդպես սժան կներեի՞ քեզի:

Քայլ մըն ալ մոտեցավ տղուն, ձեռքը թեթև մը դրավ անոր ուսին. հանկարծ ետ քաշեց ու մտասույզ տարածեց դեսլի ծովը:

– Արդեն կերևակայեմ ինծի բեմին վրա. ա՜խ, ինչպես կարոտցեր եմ. այն տեսակ մը թատրոնին հատուկ մթնոլորտը, ինքս սուզված խաղիս

նրբութիւններուն մէջ ու այն անհանգիստ, բայց դուրեկան անուշ հուզումը կրծքին տակ...

Եվ կարծես այդ բոլորը ավելի խոր զգալու համար աչքերը գոցեց. ձեռքը դեռ միչտ պարզած ծովուն վրա, թեթև մը դժգունած և պինդ խածած ծնոտին ու կիսաբաց շրթունքներուն հեչտանքի արտահայտութիւնը ծեփված:

Հրանտ անթարթ կնայեր անոր տարօրինակ խոժոռ ու չոր նայվածքով մը: Վերջը խիստ գիտական ու պաղ շեչտով մը պատասխանեց.

– Թե մեզի հարմարվող ամեն աշխատանք ինքնին հաճույք մըն է, չատ ապեկ կհասկնամ. կհասկնամ նաև, որ մարդ ամբողջովին իր գործին վրա կեդրոնանա. բայց այդ աստիճան վերանալ, էքստազի հասցնել ինքզինքը, չէ՛, աոիկա արդեն պարզապես ջղային հիվանդութիւն է. քսան անգամ ըսեր եմ քեզի:

Մինե աչքերը բացավ ու ժպտեցավ հազիվ նշմարելի ժպիտով մը:

– Այդպես կիսոսիս, որովհետև չես ապրած այն ներքին դողն ու զգացումները, որոնք ոգևորված արվեստագետի մը հոգին կփոթորկեն:

– Ա՛խ, փոթորի՛կ, արտի՛ստ, ոգևորութի՛ւն, – բացականչեց տղան տաքցած ու կրքոտ: – Խոչոր-խոչոր, դաստարկ բառեր, որոնց տակը փոքրիկ զգացումներ են ծածկված միայն: Բնավ վերլուծե՞ր ես անգամ մը քու սեփական հուզումներդ, որ անուշ դող, արտիստի անհանգստութիւն, բնական տենդ և այլն կանվանես չարունակ: Մենք՝ գիտնականներս, ուրիշ անուններ ունինք այդ բոլորին համար, որոնք թեև այդքան բանաստեղծական չեն հնչեր դուցե, բայց ավելի որո՛շ ըլլալու առավելութիւնը ունին: Սխալ մը ընելու վա՛խ, ուրիշներուն հաճոյանալու ձգտո՛ւմ, գովասանք լսելու հաճո՛ւյք ու սովորական փառասիրութի՛ւն, ուրիշ ոչի՛նչ:

Ու ոտքովը ուժով զարկավ քարի փոքրիկ կտորի մը, որ հարթակին վրա գլորելով՝ ցատկեց ծովին դուրս ցցված ժայռի մը կուրծքը, հոնկե ալ ճողփեց ջուրին մեջ:

Մինե նույն հանդարտ դիմագծերով կնայեր տղուն. վերջը վայրկյան մը հայացքը ձգեց վար իր փոքրիկ կոշիկին ծայրը. և ուղղվելով սպատասխանեց.

– Շիտա՛կ է, քու ըսածներդ կան ու մեծ դեր կվսպան քուվիսներու կյանքին մեջ: Բայց այդ բոլորը, այսպես ըսած, առաջինն աստիճանն է միայն. աստրին աստիճանը, որուն վրա իհարկե կանգ կառնեն չա՛տ-չատերը: Սակայն կա և երկրո՛րդ աստիճանի զգացում մը. ան, որ իսկական ստեղծագործող ուժը կզանազանե գեղարվեստի սովորական պաշտոնյաներեն:

Աչքերը վառեցան, ակնթարթ մը չունչ առավ և հանկարծ արագ վրա տվավ ավելի ու ավելի կրքոտող շեշտով մը.

– Ինչ. երբ ես բեմին վրա դերիս մեջը խրած՝ իմ հուզումներուս և ուժերուս հետ կնկրտիմ, կկարծես մեջս վա՞խ կրնա առաջ գալ: Վա՞խ. ուրկե՞, այդ դիմացի բազմութենե՞ն. անկե՞ պիտի գովասանք մուրամ ինծի: Ա՛, եթե գիտնաս՝ երբեմն ինչպես սպաննիչ ու զայրացնող են այդ ծափահարություննները, որոնք ինծի իմ զգացումներուս բարձրութենեն վար, վար կքաշեն անխնա: Ո՞վ են աստոնք, այդ ծափողները, այդ իմ խաղալիքներս, այդ իմ խաղիս ստրուկները:

Ու արհամարհանքի ստորակետ մը պահ մը խոսվածքը կտրեց: Եվ բոլորովին փոխված, ավելի հանգիստ տոնով մըն էր, որ շարունակեց. մինչ աչքերուն բոցը ա՛լ ավելի վառիլ սկսավ:

– Իմ ճշմարիտ ոգևորված վայրկյաններուս մեկ զգացում մը միայն ծծված է ամբողջ կազմիս մեջ. կե՛ս գիտակից, կե՛ս բնազդորեն: Թե այդ բոլոր բազմության վրա հիմա տիրողը ե՛ս եմ, թե հարյուրավոր աչքեր կախված են իմ աչքերես, թե կուրծքես ցայտող ամեն մեկ ճիչը անոնց կուրծքը կխըրի սո՛ւր, թե դեմքիս թեթև մեկ շարժումը հույս, վախ, ատելանք ու սարսափ կթափե անոնց վրա: Դուն ինչ գիտես այն հուզումը, որ մարդուս ջիղերեն կվազե, երբ քեզի նման հարյուրավորներ քեզի հետ կշնչեն, քեզի հետ կտանջվին ու քեզի հետ կխնդան. անոնց հոգին դո՛ւն ես այդ վայրկյանին: Ագռե՛լ, ներշնչե՛լ, սիրե՛լ. տո՛ւր, ինչ անուն որ կուզես: Ուրիշները իր հոգեկան ուժին, իր ստեղծագործությունները ենթարկելուն մեջն է գեղարվեստի էական հաճույքը. և այդ իր ուժի գիտակցութենեն բխող հպարտությունն ալ իր գովասանքն է ու փառքը, որ բնավ կարիք չունի դուրսեն մուրալու:

Լուեց վերջապես ու մտածկոտ կեցավ քիչ մը. ետքը կամաց մը դարձավ երիտասարդին և նոր նշմարեց, որ Հրանտ դեմքի ցրված

ապահայուհիյամբ մը կոհակներեն դուրս ցցված ապառաժի մը կնայեր պիշ նայվածքով: Անտուոր կոտրված ու վշտոտ բան մը կար իր անշարժ դիրքին մեջ, որ աղջկան սիրտը խածավ:

Մոտեցավ կամաց մը անոր. ու տղան սթափեցավ իր կաշկանդումեն:

– Նո՛ւ, այդ ի՞նչ դիմք ես չինել: Երևի այս լսածներս ալ քեզի համար հիվանդութիյան նոր նշաններ են միայն: Հա՞, պարո՛ն դոքտոր փիլիսոփայութիյան ու բնախոստութիյան:

Եվ շրթունքներու կատակի ծամածռութիյամբ մը դեպի անոր դիմքը ծռեցավ:

– Ո՛չ: Տիրե՛լ և ո՛ւժ. երկու բառ, որ բոլոր բնագիտները իսկույն պինակիաի կբնեն: Բնութիյունը ուժ է միայն, բնութիյան երևույթներն ալ՝ տիրելու կռիվ. և դուն ալ՝ այդ առաղջ բնութիյան առաղջ զավակը. գնա՛ և տիրե՛:

Ան լսված էր տեսակ մը հանդիսավոր ձայնով. ու չեչառ՛վ մը, որ կարծես այդ խոսքերը արտասանելը ահագին ու վճռական զոհաբերութիյուն մը ըլլար արտասանողին համար:

Մինե չատ աղեկ հասկցավ այդ բոլորին ևուևի իմաստը:

Աչքերը երիտասարդի աչքերուն, երկու ձեռքերը կողքերուն դրած՝ համառ դիրքով մը կեցավ անոր դեմը. ու չարաճճի վտահ ժպիտով մը կցնց.

– Բայց ամենեն առաջ քեզի:

Բ

Հրանոտ կիրակի օրվան նոր պդեսաններով, արմուկը իր աշխատութիյան սեղանին հենած, ջղագիտական ամսաթերթի մը նախորդ իրիկունը ստացած վերջին համարը կթղթատեր. ձեռքի անփութիյի ու թափած չարժումով մը, կարծես բանով մը պրաղված ըլլալու համար միայն:

Հատորը վերջացավ:

Դոցեց, նետեց անդին՝ մյուս գրքերուն վրա, դրավ ալ արմուկն ալ սեղանին ու գլուխը առավ ափերուն մեջ: Բավական երկար մտքերեն

զանգուր մը կամաց մը անջատվելով իր ընկերներեն՝ գալարեցավ գետյդ՝ մանրադիտակի հպարտ ու փայլուն վզին:

Ու Հրանտ երկար մնաց այդպես անշարժ. մինչև որ Հանկարծ խիստ մոտիկեն հնչող սարյակի մը սուր ճիչը անոր պլուխը ակամա բարձրացնել տվավ:

Թռչունը պատուհանին մեջեն ցատկեց սեղանի գրքերուն վրա, հոնկե ալ նորեն պատուհանը. ուր գործի մարդու մի կատարյալ հապճեպով մաքրեց կտուցիկովը կուրծքի փետուրներեն մեկ-երկուքը, իսկույն նետվեցավ դատարկության մեջ ու թռավ դեպի դիմացի բարձր թիթենին՝ իր ազգայիններու փոքրիկ խումբին միանալու, որ հոն ճյուղքին մեջ սոսկալի աղմուկ էին բարձրացուցեր:

Հրանտ դեռ արմուկները սեղանին, աչքերը գոց, լարված ականջով կհետեվեր այդ ճվվլոցին:

«Սեռական ընտրություն, սե՛ր... նո՛ւյն բանը, ամեն տեղ, ամենքիս համար... և հավիտենական զգացում. միայն Հոն, մեր թիթենիին վրա առանց փիլիսոփայության...»:

Թը՛ռտ:

Ու փոքրիկ հույլը տերևներուն թավուտեն դուրս խոյացավ դեպի նոր ասպարեզ մը իրենց «սեռական ընտրության», իրենց «հավիտենական զարգացման»:

Երիտասարդը չոկվեցավ, գույգ ոտքերը պարզեց ճիգ առաջ, կռթնեցավ աթոռի թիկունքին ու ձեռքերը գլխուն ետևը կապած՝ հայացքը գամեց երկնքի տաք-կապույտ մեկ կտորին:

Ու պատկերացավ աչքերուն դեմ այն գով ու մամռոտ խոռոչը՝ ուր ուսի տված ամեհի ժայռերու հովանիին տակ, ուր ծովը, մաքրամոլ կատվի մը պես իր հսկայի լեզվովը անդադար կլիզեր գետինը փռված նուրբ ու փափուկ ավազն մորթիին եզերքը:

Եվ Հոն, խոռոչի պատը կազմող ապառաժի մեկ բեկվածքին վրա նստած իրե՛նք՝ ինքն ու Մինեն: Ինքը հենած պատին. իր ուսին աղջկա ձեռքը. այնպես պատահաբար խոսելու առեն դրված. ու աղջկա գլո՛ւխը. երևի տաքեն ու երկար քալելեն հոգնած: Թե ի՞նչ կխոսեին այդպես անվերջ, աղան այլևս չէր հիշեր բոլորովին. գիտեր սակայն, որ շատ երկրորդական բաներ էին: Միայն կզգար դեռ միշտ, ու ինչպես որոշ,

աղջկա անատակ դանգուրներեն այն ոլորուն վունջը, որ իր այտին ու շրթունքներուն վրա ինկած՝ Մինեի ամեն շունչ առնելուն իր դեմքին վրա կզալարեր, ու կզգար այն օրորող, զգացումները շոյող բույրը, որ այդ մազերու խտութենեն կհոսեր: Կզգար, կարծես վեռ հիմա, այն ախորժ ու փափուկ ջերմությունը իր ուսին ու թևին վրա՝ աղջկա լանջին, ձեռքին ու հետզհետե ծանրացող գլխուն տակ: Եվ կհիշեր իր զգացումներուն մեջ մտղված այն անհուն ձգտումը հնար եղածին չափ ավելի մո՛տ, ավելի սե՛ղմ մնալու այդ ջերմության, ավելի խո՛ր, ավելի պի՛նդ լծաղելու իր դեմքը մազերու այդ գգվանքին մեջ. միայն... առանց չատ նշմարել տալու:

Հրանտ Հանկարծ սթափեցավ ու ընդոստ չարժում մը ըրավ աթոռին վրա: Այս երկու օրը գուցե քանի անգամ մը բռնած կլլար ինքզինքը այդ նույն մտածումներու, այդ նույն պատկերի իր հուզումները որսացող ուռկանին մեջ:

Փարոսին տակի զաղարեն վերջն էր, որ անոնք նորեն անընդհատ խոսակցելով՝ չարունակեր էին իրենց պտույտը ծովին ափովը երկա՛ր, մինչև այդ հովասուն խոռոչը, որ հիմա տղուն համար ճակատագրական էր դարձեր ու անոր ուղեղեն ո՛չ մեկ կերպ գուրս գալ չէր ուզեր:

Ամոթեն ու զայրույթեն գարկավ բռունցքը սեղանին, ցատկեց աթոռեն վեր:

«Ինչ հիմար բան. աս ալ նո՞ր եղավ. օրե օր սկսա ավելի երեխա գառնալ»:

Ու արագ քայլերով ուղղվեցավ դեպի սանդուղը, վա՛րը, իրենենալուն քով՝ կերպ մը տրամադրությունը փոխելու:

* * *

Հրանտ երկու տարի առաջ մեծ հաջողությամբ տվեր էր իր փիլիսոփայի դոքտորության քննությունը Հալեի համալսարանին մեջ, ուր պարապած էր երկար տարեն և արդեն չատոնց գրաված ընտիտության ուսուցչապետի համակրանքը իր կանոնավոր ու լուրջ աշխատանքով, մասնավորապես ուղեղի վրա: Մեծ գովեստով էր ընդունված իր ավարտականի չարադրությունը, որը «մեծ ու փոքր ուղեղի պորչ կեղևները իրարու կապակցող թելերու մասին» մանրա-

դիտակի վրա ծռած երկարատև ուսումնասիրության արդյունք էր: Դեռ ավարտելեն վերջն ալ մնացեր էր ան նույն համալսարանը՝ ուսուցչապետի տված դյուրություններուն տակ իր փորձնական աշխատությունները շարունակելու. և նույն ուսուցչապետի դրդմամբ ալ շուտով հաջողեր էր հրապարակային մրցում բռնելու և ստացեր համալսարանին մեջ դասախոսելու իրավունք իբրև պրիվատ դոցենտ ջդային կեղրոնի մասնագիտության:

Այս գարնան եկեր էր Պոլիս մինչև ձմեռվան կիսամյակը մնալու դիտումով. մասամբ իր մորն ու եղբորը անվերջ կոչերուն բավարարություն տալու համար, մասամբ իր ծննդավայրին մեջ քիչ մը հանգստանալու, մասամբ ալ յոելենտերներու գանգլի-հանգույցներուն վրա գրած իր նոր աշխատության համար թարմ ու առատ փորձի նյութ ունենալու ծովուն մոտիկ: Եվ այս չորս ամիսեն ավելի էր, որ իրեններուն քովն էր արդեն:

Անկե քիչ մը միայն առաջ եկած էր Մինե Թիֆլիսեն, ուր նախորդ ձմեռը դերասանական խումբին մեջն էր եղած: Խումբին մեջ պառակտում էր ինկեր. դերասանները մեծ մասով ցրվեր էին գավառները. իսկ Մինե դժգոհ ձգեր եկեր էր Պոլիս՝ մտածելով կերպ մը միանալ Հոստեղի նոր ուժերուն ու հոս գործի կասվիլ:

Մինե որբ էր. մայրը կորուսեր էր դեռ իր մանկությանը իրենց Պոլիս ապրած ժամանակը. իսկ հայրը մեռեր էր քանի մը տարի առաջ Օդեսա, երբ ինքը Մոսկվա էր դեռ՝ դրամատիկ քուրսերուն հետևելու: Պոլսի մեջ իր ամենեն մտերիմ ազգականը իր ավագ մորաքույրն էր՝ որբևայրին, որը հիմա իր մեկ-հատիկ դեռ դպրոցական աղջկանը հետ Գասը-դյուղ կապրեր: Եվ արդեն անհրաժեշտ սովորություն մը դարձած էր, որ Մինե ամեն Պոլիս գալուն անպատճառ այդ մորաքրոջը մոտը իջնե, որը իրոք մոր մը պես քրոջը որբին վրա կգուրգուրար: Վերջին անգամ հինգ-վեց տարի առաջ եկած էր Մինե հորը հետ:

Եվ հիմա իր խոշոր ծրագիրներովը հագիվ ոտքը Պոլիս էր դրեր, որ սիրուն երագները ցնդեր էին իսկույն: Ո՛չ այն հասարակությունը, ո՛չ այն պայմանները, ո՛չ իր երևակայած դերասանները կային հոդ: Եղածներու ու քանի մը դրագետներու հետ մտեր էր կապակցության, և հագիվ հաջողեր էին հազար ու մեկ դժվարություններով վեց ամսվան

մեջ երկու հայերեն ներկայացում տալու «մանավոր թույլտվություն». խաղացողներու ալ մեկ խոշոր մասը սիրողներ: Թերթերուն մեջ քիչ մը գովեր ու խոսեր էին «տաղանդավոր, չնորհալի ու դեռատի դերասանուհի»-ի մասին, որ «ռուսական ատամնին մեջ իր կրթութիւնն ու արվեստը կատարելագործած՝ իջած էր այդ փշոտ ասպարեզը»: Ահա սա էր եղած իր բոլոր օգուտը, այլև քանի մը ոսկի գրպանի ծախք:

Մինե և Հրանտ շատ տարօրինակ կերպով իրարու դեմ էին եկեր: Հրանտի եղբայրը ամուսնացած էր տղու համալսարան եղած ժամանակը. իսկ մեկ-երկու տարի վերջը, երբ ամառ մը Հրանտ եկեր էր ու ծանոթացեր էր իր նոր ազգականներուն հետ, արդեն Մինե Հորը հետ նորեն վերադարձած էր Ռուսաստան. այնպես որ երկուքը դեռ բնավ իրար չէին տեսած: Ընտանիքին մեջ, սակայն, երկուքի մասին ալ բնականապես հաճախ կխոսվեր, և տեսակ մը սվանդական-առասպելական գույներով. Հարգանքի, խանդաղատանքի, սրտունչի ու զարմանքի խառն զգացումով մը:

Երբ առաջին անգամ երկուքը երես երեսի էին եկեր, երկուքն ալ ապշած դիտեր էին վայրկյան մը իրար:

– Բայց ես Զեզի բոլորովին ուրիշ տեսակ կերևակայեի, – եղեր էր աղջկան առաջին խոսքը: – Այնպե՜ս լուրջ, մռայլ, պիտնական. երկար, փառավոր մորուքով, ակնոցներով ու խոշոր, լայն ոսքերով:

Ու ծիծաղեր էին բոլորը միասին:

– Ուրեմն, ուրիշ խոսքով՝ Ձեր առաջին տպավորությունը հիասթափումն է:

– Այո՛, բացարձակապես:

Ու իր ձեռքը ջերմ շարժումով մը պարզեր էր տղուն:

– Համբուրվիլ, համբուրվիլ. և Դուք ու Զեզերը մեկդի, – հրամայեր էր Հրանտի եղբայրը:

Հրամանը կատարված էր անմիջապես, ու նույն վայրկյանին ալ սկսեր էր այն կես-լուրջ, կես-կատակ, հեգնոտ, իրար չսրչկող ու միևնույն ժամանակ իրարմով խենթ եղող մտերմությունը: Հրանտենց տունը ոսոք դնելուն պես Մինեի առաջին բառը «կուզենա» էր: Եվ միայն կուզենի տունը չէր որ անոնք իրարու կհանդիպեին. շարաթը մեկ-երկու անգամ միասին էին սովորաբար, երբ շրջակայքը կամ ծովուն վրա

պատուհի կեղեւին միասին: Ու ալ այնպես սկսեր էին սարվիլ իրարմով, որ հարսը սկսեր էր չնորհքով նախանձիլ.

– Ինչ է ատ. մինակ «կուգենս ու կուգենս», մենք ալ մարդ ենք հոս:

Պատասխանը ծավալ ծիծաղ մըն էր իհարկե:

Միայն վերջերը հետզհետե սկսած էր տեսակ մը պուսպ ու անքնական չեչտ մտնել անոնց փոխադարձ վարմունքին մեջ: Տղան կարծես ճնշող, կասեցնող կապ մը ուներ լեզվին վրա. ու պանապան պատրվակներով սկսեր էր խուսափիլ իրենց չատ շուտ-շուտ միասին ըլլալեն: Աղջիկը չատ լավ կզգար, բայց ոչինչ չնչմարելու կզարներ. մանավանդ նկատած էր, որ հիմա ինքն ալ երբեմն, իր բոլոր ճիգերուն հակառակ, անսովոր կերպով կըրջանար անոր քովը:

Իրիկուն մը թէև թեւի լեցուն լուանին սակ շրջած էին ամբողջ ժամ մը, գրեթէ առանց բառ մը իրարու հետ փոխանակելու. բայց երկուքն ալ գոհ, իրարու մոտիկ ըլլալու հեշտին զգացումով մը և բնավ այդ խոսակցութեան պակասը զգալու: Տուն մտնելուատեն միայն անդրադարձեր էին հանկարծ երկուքն ալ ու կանգ էին առեր իրարու ձեռք բռնած. մինչև որ աղջիկը սկսեր էր բարձրաձայն խնդալ՝ ինքզինքը հեգնելով.

– Զէ՛, Հրաշտ, հարս դառնալու հասունցեր եմ արդեն. արդեն սկսա չխոսկան դառնալ:

Այդ գիշերեն վերջն էր, որ դիտմամբ թէ պատահմամբ երկու շաբաթվան չափ իրար չէին տեսեր, մինչև փարոսի օրվան իրենց վերջին հանդիպումը:

* * *

«Հիմարութիւն է, – կկրկներ հիմա Հրանտ սանդուղներեն վար իջնելով: – Քանի օր է՝ գործիս վրա լուրջ կեդրոնացած չեմ՝ ատ է. պետք է գբաղվիլ»:

Ու մտավ սրահ:

Պարտեզի դռան զույգ փեղկերը բաց էին կռնակի վրա: Եվ քայլ մը միայն ատդին, խոպի կանաչ փոքր սեղանին երկու կողմը, դեմ դեմի

նստած էին երկու հոգի լուռ ու լուրջ, ամբողջովին խորասուզված իրենց քաշած ու նետած խաղի թուղթերու հաշվին մեջ:

Մնկը երիտասարդի եղբայրն էր՝ քառասունը անց, քիչ մը ճերմկած, բարևկամ ու դևպի գիլը հակվող մարդ մը:

Հյուրակից ալ ղրսցի մըն էր՝ իրենց գիմացի ամառանոցին ու Հրանտի եղբոր կիրակնօրյա մշտական ընկերը: Ծռավի աչքերով, չեկ, կարճահասակ, բավական տարիքոտ, բայց չիք հագված ու խուզված լլվանդին մը:

– Ահա՛, վերջապե՛ս. մեր խլուրդը դո՛ւրս է ելեր իր բունեն, – բացականչեց Օհաննես կոտրած փրանսերենով մը, երբ եղբայրը սրահ իջավ: – Դո՛ւք ըսեք, խնդրեմ, պարոն Ռենյակ, ինչի՞ է նման այս տղուն կյանքը. քաշվի՛ ծակի մը մեջ ու անվերջ կարդա՛ ու գծե՛:

– Բարև՛ Զեպի, պարոն, – դիմեց Հրանտ հյուրին՝ առանց եղբոր խոսքերուն չատ կարևորություն տալու:

Ծրանոացին իր բարակ ու ճերմակ ձեռքը ճկուն չարժումով մը տվավ երիտասարդին ու թեթև մը ունքերը ժողվելով կցեց.

– Ձեր եղբայրը իրավունք ունի, պարոն Ալիմյան: Հավատացե՛ք ինծի, տարիները կանցնին, ու Ձեր այդ գրքերեն ու մանրադիտակեն Զեպի ոչինչ իսկապես չի մնար: Եթե մարդուս ծերությանը արժեք ունեցող բան մը ետ կմնա, ան ալ ապրած կյանքին հիշատակներն են միայն. բայց ապրա՛ծ, ո՛չ թե կարդացած կամ գծած: Քիչ մըն ալ երիտասարդական հիմարություններ ընելու է. փորձված մարդու խորհուրդին ահաւնչ գրնք. երջանկությունը երիտասարդության մեջն է, երիտասարդությունն ալ՝ հիմարության:

Ու աչքերովը նշանակիչ կծկում մը ըրավ:

– Այո՛, արդեն խոշոր, անխմաստ հիմարություն մըն ալ կյանքը իմնքը, – նկատեց Հրանտ ժպտելով:

– Ա՛, ո՞վ ըսավ Զեպի այդ անմիտ փրապը: Ո՛չ. անխմաստ հիմարությունը ապրիլ չգիտնալն է միայն. և ամենախոշոր հիմարությունն ալ՝ հիմարություններ ընելե խուսափիլը:

– Նորեն իրավունք ունիք, – պատասխանեց տղան իրրև թե հեգնելու համար, բայց իր կամքին հակառակ պատասխանը պետք

եղածեն ավելի լուրջ հնչեց: Մտածկոտ հեռացավ խաղի սեղանեն ու ձեռքերը մեջքին կապած՝ իջավ պարտեզ:

«Փորձված մարդուն» խոսքերը տակնուվրա ու պարարտ հողի մեջ էր ինկած:

Ներսը քիչ մը աւտեն լուռ խաղը շարունակվեցավ նորեն, մինչև Օհաննես խոսք առավ հանկարծ՝ թուղթ մը ամուր սեղանին զարնելով.

– Հապա՛, պարո՛ն Ռենյակ: Մենք ղրկեցինք, որ մարդ դառնա, ան գնաց պխտունուս փիլիսոփա կտրեցավ. փիլիսոփա՛ – սո՛ւղ ապրանք. վրաս ամսական յոթը-ութը ոսկի է նստեր. չարունակ յոթեն ութը տարի. սուղ, սո՛ւղ ապրանք այդ փիլիսոփայությունը:

– Բայց ինչո՞ւ թուլլ տվիք. չէ՞ որ առաջ կարծեմ կըսեիք, թե բժիշկ է դառնալու:

– Բժիշկ չեղավ. ըսենք՝ հոս փողոցը թափած բժիշկներ լեցուն. հիմա բժշկութենեն ալ խեր չկա: Մեկ ալ՝ իմ լսածովս այդ փրոֆեսորները պէշ ամսական չեն ստանար. թող առաջ երթա, վերջապես մեր անունին ալ պատիվ մըն է:

– Այո՛, իհա՛րկե: Երկու հարյուր հիսուն, – կցեց ֆրանսացին անտարբեր՝ քանի մը թուղթ սեղանին թափելով:

– Արդեն, սկսեցի՞նք նորեն:

– Երկու հարյուր հիսուն, – կրկնեց մարդը ժպտուն՝ թուղթ մըն ալ նետելով:

Օհաննես խոժոռեցավ ու կեդրոնացավ խաղին վրա:

Գ.

Գառը-պյուղի չոգենավը նոր էր մոտեցեր Մեծ կամուրջին, և բազմությունը երփներանգ հոսանքով դուրս կհորդեր չոգենավի նեղ կամրջակեն:

Բազմութենեն քիչ մը հեռու, ծովուն ու նավին նայող վանդակին մոտիկ կեցած էր Մինե երիտասարդի մը հետ: Վերջինը փոքրահասակ, սև-գոռուզ մազերով, նուրբ ու քնքուշ կազմով, գրեթե կանացի գեղեցկության քսան-քսաներկու տարեկան տղա մըն էր՝ թեթև ու չարժուն:

– Խայտառակութիւն է, սակայն ճշմարիտ խայտառակութիւն, – կ'ըսէր տղան Հալվաջեան արագութեամբ մը: – Գաղափարը տափակ, հազար անգամ կրկնուած. իսկ ձեւն ու կազմը գողցած է, երեւակայեցէ՛ք, Ծրանուա Կոպենն. անշուշտ կարդացած եք Ծրանուա Կոպենն, չէ՞. կ'ամաչէք: Ինչպես ըսի, բացարձակ խայտառակութիւն. ո՛չ ճաշակ, ո՛չ հղացում: Վաղը լրագրին մէջ կ'արտագրէք քննադատութիւնը. բայց կեա՛ տու կեա՛ վերլուծած եմ. գլած՝ բամբակի պես: Սակայն մտածեցէ՛ք, այդ ուղղակի հասարակութեան քթին խնդալ ըսել է. անունն ալ դնել բանաստեղծութիւն, ան ալ քերթված. և անգամ մը իրարու վակցուցած անճոռնի հանգերը տեսնե՛ք, կուրի՛ոզ:

Ու ներքին նուացող հուզումին իր կեցած տեղը մնալու անկարող՝ սկսաւ երկու քայլ տեղ աղջկան դիմացը շատապ երթեւեկել՝ ձեռքերը գրպանները դրած:

Մինչ լուռ կ'հետեւեր խոսակցին՝ չոգենաւի նոր գնած տոմսակը մատներուն մէջ խաղցնելով:

– Եվ անկե վերջը. դէտ այդ բոլորը չէ...

Կռւերը չարտնակէ երիտասարդը, երբ Մինե հանկարծ անակնկալի գլխարկի «ա՛հ» մը ըրաւ ու նետվեցաւ դեպի տոմսավաճառի պատուհանիկին կողմը:

– Բարե՛ւ. այս ի՞նչ հրաշք. Պոլի՞ս ես իջեր:

Հրանտ ձեռքը մեկնեց աղջկան, ու ձեռք ձեռքի մուտեցան երիտասարդին:

– Իրարու ծանոթ չե՞ք, – հարցուց Մինե:

– Դժբախտաբար պատիվ չեմ ունեցած, – եղաւ երիտասարդի պատասխանը, պխտու թեթեւ խոնարհութեամբ մը:

– Կուզե՞ս՝ Հրանտ Ալիմյան, դռքտոր փիլիսոփոզ, – ներկայացուց աղջիկը: – Եվ պարոն Գրիգորիկ Տեսպյան. հրդեհի դեմ ապահովապրական ընկերութեան գործակատար, բանաստեղծ, հրապարակախոս, նկարիչ, քննադատ և պետք եղած ժամանակը դերասան, որոնց խաղացող դերասան:

– Օ՛, այդպես սիրուն բազմակողմանի, – նկատեց Հրանտ:

– Ա՛խ, պարո՛ն, օրիորդը կատակել կսիրե, – պատասխանեց Գրիգորիկ գլխի սիրուն ու հպարտ շարժումով մը:

– Եվ, հա՛, մոռցա՛, – ավելցուց Մինե, – իմ մասնավոր դրաքերս. Ռուսաստանեն նամակներս պարոնի Հասցեին կուգան:

– Իմ պաշտոններես ամենեն նախանձելին, – կցեց երիտասարդը:

– Իսկ դո՞ւն, – դարձավ աղջիկը Հրանտին: – Ինծի գալու ժամանակ չունիս, բայց այդպես գաղտուկ Պոլիս կիջնես. աղե՛կ: Երեկ իրիկուն անգամ մը միտքես անցավ ելլեմ Ֆեներպահչե գամ. ա՛հ, չերևակայես քեզի չատ կարոտցած ըլլալուս համար. սիրտս նավարկել կուզեր միայն, ուրիշ ոչինչ: Շատոնց է՝ նավարկած չեմ, ըսի նորեն անգամ մը միասին ծովուն վրա կքացվինք. թեև իհարկե ինքնին այդ չնորհին բնավ արժանի չես:

– Եթե այդչափ կցանկաս, կարելի է անգամ մը թիավարել նորեն մոտերս. միայն համենայն դեպս պայմանով մը:

– Ի՞նչ պայման:

– Որ ծովուն վրա խելոք պիտի կենաս և բացարձակ հնազանդիս պիտի իմ ծովակալի հրամաններուս:

– Հրամաններուդ... ես պայմանով գործ չեմ սիրեր. ան ալ քու ծովակալութիւնդ. կա՛մ մակույկը ժայռին կզարնես, կա՛մ ծանծաղը կնստեցնես, մեզի ալ ջուրը:

– Այո՛, այո՛, օրիորդը իրավունք ունի, – մեջ նետվեցավ երիտասարդը: – Կառավարութեյան ղեկը պետք է քիչ-քիչ կանանց ձեռքը տալ. ժամանակները սկսած են փոխվիլ. ապագան ամազոններուն է. և Ամազոնի ափերը արդեն իսկ մտած են կանայք իրենց այդ նոր դերին մեջ:

Ու ծիծաղեցավ՝ բառախաղեն կատարելապես գոհ:

– Կրնամ երևակայել, թե ինչ պիտի ըլլա կանանց կառավարած աշխարհքը, – հեգնեց Հրանտ: – Եվ եթե Ձեր մարգարեութեյունը չիտակ է, այն ատեն պետք է մասնավորապես փառք տանք բնութեյան, որ այդ քաոսի դարուն մեջ ծնած ըլլալու դժբախտութեյունը չունինք:

– Ինչպե՞ս. հապա կանանց ազատ ապագա՞ն, հապա անոնց վիճակված պատմական մեծ դե՞րը. ուրեմն պարոնը դեռ հին փիլիսոփայական ուղղութեյան կպատկանի. իսկ ես կսպասեի, որ իբրև դոքտոր... Պարոնը դոքտոր է՝ ըսիք, կարծեմ, չէ՞, օրիո՛րդ:

– Մասնագետ ֆիզիոլոգ, – բացատրեց Մինե:

– Ա՛խ, մանուկիս, ոչինչ, հետաքրքիր է: Ֆիզիոլոժի-գիտությունները մայրը. արյուն ու սիրտ, և որքան դրացի բանաստեղծութեան:

– Սակայն, դժբախտաբա՛ր, ես պէսաւորապես չիզերով կզբաղվիմ, – առարկեց տղան հպիվ նշմարելի ժպիտով մը:

– Ըհը՛, չիզե՛ր, դարավերջիկ է: Ջղային դար, ջղային. այո՛, իրավունք ունիք. ուսումնասիրելու ժամանակակից նյութ: «Ռըվիվ լիթերըր»-ի վերջին համարը կարդացա՞ծ եք. շատ սիրուն հոդված մը կա մեջը արդի գրական երկերու ջղայնոտութեան վրա. ա՛յ, օրինակ, բավական է միայն հիշել Վեռլեն, Իբսեն, Նիյչե, Դոստոևսկի. այո՛, այո՛, համաշխարհային հիվանդութիւն:

– Բայց երևակայեցի՛ք, կուզենա այդ Ձեր ըսած մեծ հիվանդութիւնը չէ, որ կհետաքրքրվի, այլ պարզապես ջղային կեդրոնի կազմութիւնը, – կցեց Մինե տեսակ մը դրդող-դրգռող շեշտով:

Կրակի վրա յուղ լեցնել կուզեր:

– Կըմբռնեմ. դուա բնապիտական տեսակետեն. խիստ օգտակար ուսումնասիրութիւն, իհա՛րկե: Միայն պիտնք, ապնի՛վ պարոն, կփափաքեի իմանամ... անշուշտ եթե անհամեստութիւն չէ հարցնելը, ինչպե՞ս է, որ այդ տեսակ աշխատութիւն մը Ձեզի ընտրած եք: Մարդ Եվրոպա երթալեն վերջը շատ ավելի... այսպես ըսած, դրավիչ նյութ մը կլինար ընտրել իր ուսումնասիրութեան:

– Ինչո՞ւ կկարծեք, թե ուղեղի ուսումնասիրութիւնը անգրավիչ է:

– Անգրավի՞չ, ո՛չ, ո՞վ ըսավ. քա՛վ լիցի: Միայն քիչ մը ինծի կթվի... շատ միակողմանի. տեսակ մը չոր ու պոեզիե զուրկ: Ա՛յ, բոլորովին ուրիշ բան է գրական կյանքի ուսումնասիրութիւնը, կամ բեմը, կամ փիլիսոփայական մտքի արտադրութիւնները. ինչ կյանք, ինչ պոեզի այդ բոլորին մեջ. այո՛, կյանքի պոեզին:

– Է՛, պարո՛ն, ինչ ընենք, ամենքին տված չէ կյանքի պոեզիով պաղվելու ընդունակութիւնը, – պատասխանեց Հրանտ՝ վերին աստիճանի ծիծաղաշարժ խոնարհ դեմք մը ընդունելով:

Շոգենավը սուլեց:

– Տաղա՛նդ՝ ըսել կուզեք. իհա՛րկե, սակավաթիվ են անոնք, որոնց

ճակտին վրա իր մատը դնելով կատեղծե Աստված, ինչպես կըսե անմահն Վիկտոր Հյուգո:

– Կատանե՞ք, բարեկա՛մս, անմահն Վիկտոր Հյուգոն ալ ինծի համակարծիք է եղեր:

Իր բառերու այդ չեշտված կրկնությունը Գրիգորիկին անախորժ եղավ, սակայն առանց ոչինչ նշմարել տալու, ժպիտով մը ու թեթև մը ծռելով՝ ձեռքը մեկնեց Մինեին:

– Օրիորդը կներե. այս իրիկուն ես Յուսկյուտար եմ անցնելու, ու չոգենավս արդեն մեկնելու տրամադրություններ ցույց կուտա. ստիպված եմ անջատվելու, թեև գիտեք, թե որքան ծանր է ինծի համար Ձեր ներկայութենեն զրկվիլս: Հույս ունիմ, որ Ձեր ըսած ներկայացումը վայելելու առիթնամեծ երջանկությունը պիտի ունենանք չուտով: Ահա՛, պարո՛ն, տեսե՛ք, որու ճակատին է Աստված իր մատը դրեր. կնախանձիմ Ձեզի ճշմարիտ, որ այսպես կուզին մը ունիք: Օրիո՛րդ, հափշտակությունն է՛րս: Պարո՛ն:

Ու մինչև մեջքը ճկվելով, լայնեզր փափուկ գլխարկը ճարպիկ շարժումով մը երերցուց օդին մեջ, անցուց նորեն գլուխ մագերուն ու արագ նետվեցավ դեպի մյուս չոգենավին կողմը:

Գաստը-գյուղի չոգենավը նորեն սուլեց:

– Տոմսակ ունի՞ս, – հարցուց Հրանտ:

– Այո՛:

Տղան չտապ գնեց իրեն համար ալ. միասին իջան չոգենավ ու մտան կողմնակի խցիկներեն մեկը, ուր միայն երկու գինվորական անկյունը քաշված՝ տաք-տաք կվիճեին՝ թուրքերեն թերթ մը ձեռք ձեռք անցրնելով:

Շոգենավը ճամփա ելավ:

Դուրսը սկսած էր գորշանալ: Ինչիկը մութ էր գրեթե:

Մինե ծնոտը ձեռքին հենած ու արմուկը փոքրիկ լուսամուտին՝ ծովուն կնայեր ուշադիր, ուր նավերու ու նավակներու ամբողջ ամբոխ մը իրարու գլխու էին խոներ: Եվ երբ վերջապես աղջիկը հայացքը ներս դարձուց, իր առաջին տեսածը տղու խոշոր աչքերը եղան, որոնք համառ իր դեմքին էին գամվեր: Մինե խնդաց.

– Նո՞ւ, երևի Աստծու մատին տեղը կփնտրես ճակտիս վրա:

– Գրեթե:

– Է՛, ինչ կըսես իմ դեռատիպ երկրագործիս դատողութիւններուն:

– Ոչինչ: Այդ դատողութիւնները միայն անորը չեն. ինծի համար ընտել նոյութիւն չէ լսելը, թէ պիտութիւնները մանր, չոր, մանաւոր, երկրորդական խնդիրներ են. գործաւորի սև աշխատանք, ուրկէ իհարկէ կարելի է օգտուիլ, բայց որուն մէջ ինքնին կեանք չկայ, «կեանքի պոեզին» չկայ, ինչպես քիչ մը առաջ այդ սիրուն երեխան կըսեր:

Պահ մը լռեց, ջղուտ ձեռքով ժամացոյցի շղթային հետ սկսաւ խաղալ ու հանկարծ կըքոտ շեշտով մը վրա տվաւ.

– Պոեզի՛: Եթէ վայրկեան մը միայն այդ մարդիկը կարողանային թափանցել քիմիագետի հոգին, երբ ան իր աշխատանոցի տակնուվրայութեան մէջ փորձի սրվակը ձեռքը փշուր մը մրուրի կամ գույնի ամենաչնչին փոփոխութեան մը մէջ իր հաշիւներուն ու ենթադրութիւններուն հաստատումը կորնկ. վայրկեան մը միայն, և որքան մեծ պիտի ըլլար իրենց զարմանքը, երբ այդ հոտերու, թուլներու ու գոլերու մէջ հափշտակութիւնն ու հաճոյքը, մաքի թռիչքն ու սրտի հուզումը իրարու ժամադիր եղած տեսնեն: Է՛, Մինե՛ս, եթէ պահ մը միայն զգայիր, թէ ինչ բերկրանք, ինչ հպարտութիւն ու ընկերական-հասարակային կեանքի ինչ ապագա հույսեր կթևածին գիտնականի մը զգացումներուն վրա, երբ ան իր ընկեր մանրադիտակին վրա ծռած՝ ուշեղի մանր կտորիկի մը միլիոնավոր բջիջներուն ու թելերուն քաոսին մէջեն քիչ-քիչ դուրս կկորզե անոնց հյուղավորման ու հաղորդակցութեան օրենքները, երբ դարերու «աննյութ ու անըմբռնելի» համարված հոգին իր աչքերուն տակ որո՛շ ձևի ու կազմի աքանչելի մեքենայի մը կվերածվի: Կամ ըսե՛, խնդրեմ, աշխարհի ո՞ր գեղարվեստական ստեղծագործութիւնը արտասրել կրնա գոնե քիչ-միչ նմանվող բան մը ա՛յն նկարին, որ մարդուս երևակայութեան դեմ կպարզվի, երբ օրգանական մարմնի միլիարդ-զարյան կյանքի ու զարգացման պատմութիւնը քնքի պատկերացնելու կփորձես. իր հավիտենական փոփոխութիւնովը, իր անհամար ձևակերպութիւններովը, աստիճանե աստիճան, իր միաբջիջ երեխայութենեն սկսած մինչև ողնաշարավորներուս այս բարդ ու կուտակ օրգանիզմը: Կյանքի ու զարգացման այդ հսկա պատմութեան դեմ ինչ բան է մեր հազիվ քանի մը հազար տարի հաշվող «մարդկային քաղաքակրթու-

թյան» ուռեցուցած պատմութիւնը-տրագիկոմիկ էպիզոդիկ մը միայն այդ անծիր ու խորունկ տիտան դրամային մէջ: Խեղճն՛ը, որ չգիտեն, թէ ո՞ւր է իսկապես կեանքի մեծ պոեզին...

Զինվորականներու վեճը խցիկին մէջ դադրած էր չատոնց. ու խցիկեն դուրս ուղևոր բազմութեան խուլ ժխորը միայն կլսվեր մեքենաներու խլացուցիչ թնդումին մէջեն, իսկ պատուհանիկին տակ՝ վայրագ ծեծկվուքը կամակոր ալիքներուն, որոնք իրենց զայրույթեն ուտած կրծքերովը դիմադրել կճգնեին չոգենավի պատռտող անիվներուն:

Այնպես հաճոյալուր էր այդ բզկտվող ջուրի չիթերուն ու փերթերուն չառաչը, որոնք նորեն ծովուն ծոցը կանձրևեին, այնպես օրորող՝ դուրսի ամբոխի անորոշ խժլտուքը, այնպես մեղկացուցիչ՝ չոգիի թաւիին տակ նավի հարատև թևթև դողը, այնպես ախորժ՝ կես-մութը, որ խցիկի անկյուններեն հետզհետե ավելի առատ վար կծորեր: Ու այդ զգացումներ չոյող չրջանակին մէջ Հրանտի՝ ոգևորութենեն կայծկլտող աչքերը, անոր ջերմ ու հուզումեն անդադար ելևէջող կիսաձայն խոսվածքը:

Անշարժ ու հափշտակված կլսեր աղջիկը: Ա՜հ, ինչ անուշ. հեքիաթի մը մէջ կարծես:

Հրանտ կտրեց վերջապես իր խոսքը. ինքն ալ աղջկան պես արմուկը դրաւ պատուհանիկին ու ներս ծծեց լիաթոք ծովի գով ու թարմ չունչը:

– Խոսե՛, Հրանտ, խոսե՛, – հծծեց Մինե իր զսպված հուզումին մէջեն. թարթիչները քիչ մը դոցեց, ազատ ձեռքովը խարխափելով գտավ տղուն ձեռքը ու բռնեց:

Հրանտ ժպտեցավ. ու լուռ էին երկուքն ալ:

Ուշ իրիկվան երկնքեն թուխ-ծավի լույս մը անոնց ծովուն դարձած կիսադեմը կլուսավորեր՝ դեմքին մյուս կեսը խիտ սուվերի մէջ պահելով:

Մինե հանկարծ ավելի մոտ ծռեցավ տղուն քնքշանքի թաւիով մր, ու իր կես-կատակ, կես-լուրջ ժպտուն փափուքը տղու դեմքին քսվեցավ:

– Կուզե՞նս, իմ մեկ հատի՛կ կուզենս. ինչո՞ւ քեզի այսչափ կսիրեմ, Հրանտ:

– Քոքեթութի՛ւն, – կատակեց տղան անտարբեր մնալ ուզող ձայնով մը:

Սակայն միևնույն ժամանակ անկարող եղավ իր մատները զսպելու,

որոնք երկաթի ճմլումով մը իր ափին մեջ հանդչող ձեռնոցավոր թաթիկին զալարեցան:

– Հանեմ պիտի ես քու աչքերդ, Հրաշտ. այդ քու հատակ, վստահ ու կաշառող աչքերդ, որոնք այդպես ոգևորվիլ գիտեն: Եթե տեսնեիր անգամ մը՝ ինչպես տարօրինակ կվառին, երբ դուն տաք-տաք խոսելու կսկսիս: Եվ գիտես ի՞նչ. ես կարծես տեսակ մը կնախանձիմ քու ունկնդիրներուդ, հո՛ն, համալսարանը, ամբիոնին վրայեն քու աչքերուդ, քու ձայնիդ դեմ: Ու քու դասախոսությունդ արդեն ինքնի՛ն. փա՛հ, չէ՛, ճշմարիտ, շատ հետաքրքիր է լսելու:

– Եթե այդչափ կհետաքրքրվիս, եկո՛ւր քեզի հետս տանիմ ու ներկա՛ եղիր, որչափ կուզես:

– Հը՛մ, տա՛ր, – ըսավ աղջիկը կարուկ շեշտով մը, աչքերը քթթելով ու պխտու դրական ուժգին ցնցումով մը:

– Հա՞, բայց մի՛ մոռնար, հո՛ն ո՛չ Թիֆլիս է, ո՛չ հայ դերասանական խումբ կա, ո՛չ քու սիրական պատռտած քուլիաներդ, ո՛չ ալ «վսեմ զգացումներուդ» արտահայտության վայր:

Իր ձայնին տակ կծան չարություն մը կար:

Մինչեւ թեթեւ մը ճակատը կնճռեց, մտածկոտ ու հարցական նայվածքը հառեց նորեն խոսակցին, որը իր կատակի շեշտը պահել չկանալով՝ ավելցուց խակուն.

– Բայց, իհա՛րկե, այդ բոլորը ի՞նչ նշանակություն կրնա ունենալ, քանի որ ինծի այդչափ կսիրես, ինչպես ինքդ կըսես:

– Լռի՛, – կցեց աղջիկը բռնաբռոսիկ հանդարտ ձայնով մը ու կամաց մը տղու ափեն ձեռքը ետ քաշեց:

– Տեսա՞ր քու անչա՛փ սերդ, – ծիծաղեցավ տղան:

Բայց ցավագար ու կարկամ բան մը կար այդ ծիծաղին մեջ, որ անոր դեմքեն անցավ:

Ու լսեցին նորեն երկուքն ալ. անհարմար ու լարված լռությամբ մը:

Շոգենավը կեցավ ու ուժով մը զարնվեցավ նավամատույցին:

Սպանները լրենց սուրերու շրինդին հետ ելան խցիկեն:

Ելավ և զույգը:

Բազմության հետ հրմշտվելով բարձրացան Գաղտ-պյուղի

նավամատույցը, հոնկն ալ՝ ծովեզրի առուծախ ընող աղմուկին մեջեն մտան կողմնակի մուտիկ, նեղ փողոց մը, ուր քանի մը քայլ անդին Մինեենց տունն էր:

– Հրաշնո, իմ արվեստիս ձեռք մի՛ տար. կխեղդեմ քեզի, ճչմարիտ կխեղդեմ, – ըսավ վերջապես Մինե հառաչ ու ամուր ձայնով մը, երբ իրենց տան մոտեցան:

– Է, ի՞նչ վնաս. վարագույրը իջնելուն պես կլուկին ոտքի կելնեմ, – ծաղրեց տղան:

– Գնա՛, գնա՛, հեռացի՛ր քովես, – բացականչեց աղջիկը զայրացկոտ և ուժով մը քաշեց դռան զանգը:

– Ձեռքդ չե՞ս տար, – հարցուց երիտասարդը մեղմ ու հաչտ շեշտով մը:

Ներսեն թելի մը ձգվելուն ձայնը լսվեցավ, ու դուռը կամաց մը բացվեցավ:

Մինե առանց ետևը նայելու դժգոհ անփութությամբ մը ձեռքը տղուն կողմը մեկնեց:

Հրանտ բռնեց, ծռեցավ ու թեթև մը սեղմեց շրթունքներուն:

– Է, թո՛ղ, թո՛ղ, հոգիդ սիրես, – բողոքեց աղջիկը կոտրված բարկությամբ մը. քաշեց ձեռքը, նետվեցավ իսկույն ներս ու դուռը գոցեց:

Գոցեց. ձեռքը դեռ դռան լեզվակին՝ անշարժ մնաց հոգնած դիրքով մը մուքին մեջ. միայն լսողությունը սուր լարած, մինչև որ դուրսը տղուն քայլերը հեռացան, թուլցան ու հալեցան:

Մինե չտկվեցավ ու բռունցքները գալարած՝ «Պիտի խեղդե՛մ, ճչմարիտ պիտի խեղդե՛մ ես այդ տղան», – փսփսաց նորեն սեղմած ակռաներուն մեջեն:

Բայց այս անգամ ո՛չ սպառնալիք էր, ո՛չ ալ գայրույթ, ալ իր տեսակի քնքշություն մը, փաղաքշանք մը:

Գ.

Բայց էր պատուհանը:

Հագիվ փողոցեն մեկուկես մարդաչափ բարձր՝ կնայեր քարափին ու ծովուն վրա, որուն կապույտ այտերը քնկոտ ու հոգնած դեղնություն մը առեր էին իրիկվան դալուկ երկնքեն:

Նուրբ շղարշն լայն վարագույրին եռևը քիչ մը ետ քաշված՝ պատուհանին մոտիկ նստած էր երիտասարդ աղջիկ մը՝ իրանը բարձր ու ևյուն, չափազանց առատ ու թուևդ-սև մազերը անկարգ ու ահագին շեղջով մը գագաթին դիպած, գլուխը կլոր, քիչ մը դեր ու դժգույն, որ պատուհանեն ներս հոսդող շրջապատի գևղինին մնջեն բոլորովին ճերմակ կթվեր. նուրբ ու թափանցիկ հարևմական ճերմակություն մը ու այդ փոնին վրա երկու խոշոր, արևելքի սև աչքեր:

Գլուխը կուրծքին ճգած՝ վարժ մատներով ճեռքի ժանյակը կհյուսեր, երբ Մարմարայեն Վոսիոր մանող շոգենավի մը խռպոտ սուլյը հանկարծ ժայթքեց ու ծանր տարածվեցավ ամբողջ ծովուն վրա:

Աղջիկը ակնարկը բարձրացուց ու նետեց խոշոր ճերմակ շոգենավին, որ հանդիստ ու մեծափառ կհառաջանար: Արմուկը պրավ թիկնաթոռի թևին, առավ գլուխը ափին մեջ, մինչ մյուս ձեռքը ժանյակին հետ միասին գետի գոգը սահեցավ: Ու մնաց անշարժ, ծուլ ու հառած վերացման մը մեջ, սուզված իր մտածումներուն խորը, որոնք ըստ երևույթին պիտույի շոգենավեն ալ դանդաղ կշարժեին իր գանգին տակ:

Բարակ հովանոցի մը սուր ծայրը կամաց մը վեր բարձրացավ պատուհանին տակեն ու քանի մը անգամ ամուր իրարու եռևե զարկավ եղևլքի տախտակին:

Աղջիկը կես մը վախցած, խոժոռ դևմքով նայեցավ վար, բայց իակույն ժպիտը ցամկեց դևմքը:

– Ա՜, Մինե՛:

Ու մեկ ոստումով սենյակեն դուրս նետվեցավ ուրախ՝ փողոցին դուռը բանալու:

Հապիվ դուռը դռցված՝ պինդ փաթթըվեցան իրարու վիզ՝ հնչուն-հնչուն համբուրվելով:

Իրենց մանկությանը անոնց առևները կից էր իրարու, ու գրեթե միշտ միասին էին եղած: Մինեի ամեն Պոլիս վերադարձին նորոդեր էին իրենց մտերմությանը, և իրենց երթևեկը մինչև հիմա ալ կշարունակվեր: Միայն հետզհետե չատ տարօրինակ դույն մը առեր էր այդ բարեկամությանը. նախ կարծես խույս կուտային իրարու հաճախ հանդիպելե, թեև երկուքն ալ միշտ կատարյալ համակրանքով ու սրտանց իրար կդիմավորեին, և այն հին ու ջերմ շեշտը մեջերնուն երբեք չէր վերցած:

Սրտերը նույնն էին մնացեր. կյանքի տված հետաքրքրությունն ու իրենց մտածման առարկաները էին փոխվեր միայն: Ատիկա կզգային երկուքն ալ, սակայն փոխադարձաբար ոչինչ չէին ըսեր իրարու:

– Մինա՞կ ես, – հարցուց Մինե:

– Այո՛, մայրս Հովակիմյաններուն գնաց. իսկ հայրս, գիտե՛ս, վերջին չոգենավով կուգա միշտ: Դուն ո՞ւր ես այս քանի տաեն է. ինչպե՞ս ես:

– Է՛, – ըրավ Մինե դժգոհ՝ ուսը ցնցելով:

– Հը՞, քեֆդ տեղը չէ՞:

– Այս վերջին օրերը տրամադրությունս ավրված է քիչ մը:

– Երևի դերասանական պլխացավանք նորեն:

Մինե ակնթարթ մը չպատասխանեց. վերջը մտածկոտ պլուխը շարժելով՝ ըսավ երկդիմի.

– Դերասանական գլխացավա՞նք, այո՛:

Բայց իսկույն բան մը մոռնալ ուզողի ձեռքի բացասական շարժում մը ըրավ ու ավելցուց.

– Ա՛ն ըսե դուն ինծի՝ ի՞նքդ ինչ բանի ես:

– Ի՞նչ բանի պիտի ըլլամ. չե՞ս տեսներ. քիչ մը կարե՛, քիչ մը կարդա՛ կամ թևդ դի՛ր պատուհանին ու դուրս նայե՛:

Եվ աթոռը ուժով մը քաշեց պատուհանին կից:

– Մա՛նավանդ այս պատուհանը. ա՛, եթե այս պատուհանը չունենայի: Այս պատուհանը իմ ամեն բանս է, իմ ամենաիրեական գիրքս, իմ թատրոնս, իմ պանորամաս, նույնիսկ իմ ժամացույցս. չե՞ս հավատար. ես դիտեմ, օրինակ, ժամը քանիին մեր դրացիին տղան դպրոցեն կդառնա, որոշ մանրավաճառներ ժամը քանիին կուգան և վերջապես չոգենավերուն կանոնավոր երթն ու եկը: Հապա. կնստիս, կդիտես անցորդները, անոնց դեմքերը, շարժումները, խոսակցության կտոր մը կուգա ականջիդ, մնացածը ինքդ երևակայությամբդ ամբողջացնելու կաշխատիս, կդիտես փոքրիկներուն կռիվը, որոնք քարափին վրա իրարու կհայհոյեն. նավակները, նավավարները, տեսնելու ես՝ ինչ առտողջ, կորովի մարդիկ կան մեջերնին. երիտասարդ քուրդ մը կա, երբեմն կանցնի իր նավակովը, տեսնես ի՛նչ գեղեցիկ, հուժկու տղա է:

– Հը՞մ. չեյլե՞ս վրան սիրահարիս, – կատակեց ընկերուհին:

– Ա՜խ, ո՞վ է տվեր ինծի այդչափ քաջութիւն: Միայն երբեմն, իրավ, բոլոր սրտովս կցանկայի, որ ես ալ իր քովը, իրեն պես, իր նավակին մէջ ըլլայի. ձկնորս մըն ալ ես: Ա՜հ, ինչ սիրուն կյանք. մինչև վերջը ծովուն վրա, մինչև վերջը ալիքներու, հովերու ու իրարանցման դեմ. շարունակ փոթորիկի ու աշխատութեան մէջ. այդ գեղեցիկ, ուժեղ տղան միշտ քովդ. ամբողջ կյանքդ կռիվ մը պատառ մը հացի համար...

– Է՛, արևլ սիրեմ, տառնք առնտիմենտալ անուրջներ են: Կկարծե՞ս լրջորեն, որ չափազանց դրամիչ բան է պատառ մը հացի համար ամբողջ կյանքդ ճանկռտովիլը:

– Չգիտեմ. այնքանը պարզ է ինծի համար, որ շատ անհամ, անբովանդակ բան մըն է իմ այս անհույզ ու անհոգ կյանքս: Հայրիկը չուկաեն պետք եղածը կուզարկե, մայրիկը կպատրաստե, դուն ալ նատե՛ ու կեր. ապրի՞լ է սիկա:

– Ագնկ որ ինքդ կըսես, – բացականչեց Մինե ոգևորված: – Տո՛ւր ինքդինքդ պրպտունքի մը, սկսե՛ բանով մը լուրջ աշխատիլ:

– Ա՜հ, դուն ալ, որ այդպես կխոսիս, – կցնց Արուսյակ ձեռքի արհամարհոտ շարժումով մը: – Լուրջ բանով մը պրպղվիլ. ի՞նչ բանով. տունը իմ աշխատանքիս պետք ունեցող չկա. մայրս հերիք է կատարելապես. արդեն չի ալ թողներ ձեռքս չուրի դպցնեմ. և եթե չխոսակը կուզես, ինքս ալ բնավ ո՛չ տրամադրութիւն ունիմ, ո՛չ ալ չնորհք անոյին գործերուս: Ա՜հ, Մինե՛, եթե գիտնաս՝ ինչպես քեզի նախանձիմ. գացիր դուբսերը, ուրիշ երկիրներ, ուրիշ մարդիկ. ազատ քեզի համար, ինքդ քու գլխուդ. կերթաս, ուր որ ուզես, կընես, ինչ որ ցանկաս՝ առանց կարևորութեան տալու, թե վրադ կխոսին, թե կրամբասեն, թե ի՞նչ:

– Ագե՛կ. քու թևդ բռնողը ո՞վ է. դուն ալ կարևորութեան մի՛ տար:

– Ե՞ս, – ժպտեցավ Արուսյակ տարտամ: – Ինչե՞ր կխոսիս: Ինծի պես պարկեշտ ու ամոթխած աղջիկ մը. եթե չես հավատար, բոլոր դրացիներուն ու ազգականներուս հարցո՛ւր. համեստ ու պարկեշտ. հապա՞:

– Ես քեզի չեմ հակնար, հոգի՛ս, ոչ ալ կրմբռնեմ քու այդ չենքչնորհք հարեմի կյանքդ: Երկու քայլ չես կրնար դնեն դուրս դնել առանց մայրիկի, ծանոթ երիտասարդի մը հետ տեղ մը երթալու չես համար-

ձակիր, նույնիսկ չես հանդգնիր փողոցը դեմդ ելլողին երեսը չիտակ նայելու: Ինչի՞ է նման ըրածդ, երբ ինքդ ծաղրանքով կխոսիս քու համեստութեանդ մասին: Ելի՛ր. ոտքի տա՛կ տուր այդ բոլոր հիմար կապերը. պատմներուդ «բարոյական» հայացքը, տարեկիցներուդ քսու նախանձը ու դրացիներուդ ապուշ բամբասանքը:

Արեւսյակ, հեգնոտ ժպիտ մը շրթունքին, պահ մը լռեց. ու հանկարծ չոր ու կտրուկ շեշտով մը ըսավ.

– Ինծի՛ նայե. դուն ալ եթե աչքդ բացած օրեն մորդ թևին տակեն դուրս չգայիր, դուն ալ եթե քեզի շրջապատողներու ըսածներեն ու սովորութիւններեն զատ բան չտեսնեիր, դուն ալ ինծի պես «Հարեմի կյանք» պիտի վարեիր, ինչպես որ կըսես. այդպես խոշոր-խոշոր մի՛ փրթեր: Դժգոհ ըլլալ, տրտնջալ, իհա՛րկե, ուրիշ ինդիր է, բայց իրապես մեզի շրջապատող կյանքեն դուրս գալ մեզմե ոչ ոք չի կրնար, ինչպե՞ս դուրս գա. և ինչո՞ւ, իրիչ ընելու համար. այդ բոլորի մասին ես շատ եմ մտածած: Քու վերադարձդեդ առաջ ալ, այս վերջին ամիսներն ալ այդ ամենը գլխես կանցնին հաճախ, երբ այսպես արմուկս պատուհանին, հեռուն՝ ծովուն կնայիմ, բայց այնպես միայն մտածելու, ժամանակ անցընելու համար: Ես ու դուն աշխարհքը չենք փոխեր. աս աստանկ եկեր է, աստանկ ալ պիտի երթա:

Մինե ոչինչ չառարկեց, քիչ մը ատեն երկուքն ալ լուռ նստած էին իրարու դիմաց հետզհետե գոլշացող երկնքին ու ծովուն դեմ:

Մինե, որ սկիզբը կարեկցութեամբ ընկերուհիին կհետեւեր, քիչ-քիչ սկսավ տարօրինակ զայրույթ մը զգալ իր մեջ, ինքն ալ որոշ չգիտեր ինչու. բայց այդ զգացումն ալ երկար չտևեց ու տեղի տվավ ներքին խլրտող հպարտութեան ու գոհունակութեան չոյող հուզումի մը, որ իր մտածումներուն վրա եկավ փովեցավ: Գոհունակութիւն մը իր անկախութենեն, իր ազատ ըլլալեն, հպարտութիւն մը իր առավելութեան, իր արվեստին:

Ու այդ զգացումներու թևին տակ իր խոստն տրամադրութիւնը դարձավ նորեն իրեն: Նախ իրենց միասին մանկութեան հիշատակներեն կշաղակրատեր. վերջը պատմեց իր Հոր հետ Օդեսա անցնելուն հանգամանքները, հոնկե ալ՝ Թիֆլիս, իր գիմնազ մտնելը ու պանսիոնի աշխույժ, սրտագոհոս ընկերական կյանքը: Եվ ոգևորվեցավ:

Կպատմեր ան երկար, պատմելու անհրաժեշտ պահանջով մը, թեև ըսածները ունկնդրին համար մեծ նորութիւններ չէին: Եվ մանավանդ իր ամենեն ավելի սիրած խնդրի մասին. իր հետզհետե բնմով հասիչսակ-վիլը, այն առաջին դալրոցական մեկ-երկու չնչին փորձերը, չրջապատողներուն գովասանքը, վերջը քանի մը անգամ սիրողներու խումբին մեջ, ու արդեն հռատնքը տարեր էր: Ա՛հ, այն լացերը, խնդրանքը, միջնորդութիւնները ու այն անթիվ մաքառումները, մինչև որ հայրը գրեթե բանի վերջապես տվեր էր իր համաձայնութիւնը:

Ու Մինե մեկ ոտումով ցատկեց Մոսկվայի կյանքին. իր առաջին ապահովութիւններուն, ոգևորութիւնը, դասերուն. այլև նոր միջավայրի անհանգստութիւնները, գավեշտանքը. լուրջ ու կատակ իրարու խառնված մեկ չունչով: Հանկարծ հիշեց հորը մահը ու իր աշխատութիւններուն ընդ հատիլը ամենատաք տեղը. տիպերը էր ձմեռվան կեսին թողնելու ամեն բան ու ետ դառնալու: Այն ի՞նչ բեկում. չէ՞ որ հակադրված էր ալ ձգելու իր սիրած գործին շարունակութիւնը. ուրկե՞ էր այլևս իր դրամական միջոցը: Ի՞նչ տանջանք էր փայփայած ծրագիրներեդ ձեռք վերցնելու երկաթե անհրաժեշտութիւնը, բայց և ի՞նչ անզուսպ բերկրանք, երբ ամիսներու վարանոտ հոգսերն ու չանքերն վերջ հաջողեր էր կրկին, ծանոթ սիկնոջ մը օժանդակութեամբ, ինքզինքը նորեն Ռուսաստան նետելու:

Շատ չանցած՝ Թիֆլիս էր վերադին, արդեն ավարտած դրամատիկ թատրերը, արդեն բեմի վրա: Միթե կարելի՞ է մոռնալ այդ առաջին քայլերը. կճոտ, հուսալից, երկչոտած, բայց և ինքնավստահից ու վառահ իր ընդունակութիւններուն: Այն տարափը համակրանքի ու հարձակումներու, այն իսան, ափմկոտ ու քաղցր մեկու կնս տարին, բայց և այնչափ հիասթափումներով ու դառն փորձերով լեցուն, որուն վերջին օղակը դերասաններու հիմնական պառակտումն էր եղած ու խմբի ցրվիլը:

Ալ կարդը եկավ ապագա ծրագիրներուն:

Պոլի՞ս. Է՛, Պոլիս գալը անմտութիւն էր արդեն: Նորեն որևէ տևտական աշխատանք Կովկաս միայն կարելի է գլուխ բերել առայժմ: Շատով վերադառնալու է Թիֆլիս. լսած է, որ հոն նոր չանքեր կըլլան թատրոնական գործը կրկին ոտքի հանելու. երևի, բան մը կհաջողի: Իսկ թե ոչ,

է՛, հայկական բիմեն խեր չկա. կ'ըսես ռուսական չնորհքով խումբի մը մեջ մտնելու. կղիմէ Մոսկվա իր սիրելի ուսուցչի օգնութեան, որ այնքան խոստումներ տված էր իրեն և որ այնչափ կապեր ու հեղինակութիւն ունի. հավանորեն բան մը գլուխ կուգա: Եվ ո՞վ գիտե, դուցե չատ չանցած՝ հաջողի մեծ բեմի մը վրա ոտք դնելու. դժվարը դժվար է, իհարկե, բոլորը խնամիական հաշիվներու կապված, և պետք է անպատճառ ազդեցիկ թևաւորկու մը ունենաս կամ բարձրաստիճան սիրեկան մը. մրցումն ալ մեծ, ամեն կողմ ինտրիգներ. բայց ո՞վ գիտե, եթե իրավ իր մեջը ուժ կա, եթե իրոք բանի մը պետք է: Ով ուժ ունի ու կամք, բախտը անոր հետ է:

Մընաց էր բոլորովին, երբ Արուսյակի մայրը եկավ ու փրցուց ոգևորութեան այդ չղթան: Մինե ելավ, հրաժեշտ առավ նախանձեն ու հիացումեն կաշկանդված ընկերուհիեն և իր հրահրած հույսերու ոսկի կայծերեն ինքը բռնկած՝ վառվող այտերով հասավ տուն:

– Ինչո՞ւ նորեն այսչափ ուշացար, – ըսավ մորաքույրը դուռը բանալուն պես: – Տե՛ս, Հրանտը հոս էր նորեն. ժամվան մը չափ կա. քիչ մը սպասեց, տեսավ որ մեջտեղ չգաս, ելավ գնաց:

Աղջիկը ամբողջ մարմնով ցնցվեցավ ու ակնթարթ մը սեմին վրա կանգ առավ ակամա:

«Հրանտը...»;

Եվ իսկույն արթնցավ կրծքին տակ վերի ոգևորութեան թափին մեջ առժամապես թմրած այն զգացումը, որ վերջին օրերը չարունակ, սարսի ոստայնի մը թելերուն պես բարակ ու կպչուն, գալարված էր իր բոլոր մտածումներուն շուրջը. տեսակ մը ախորժ հուզում ու անորոշ երկյուղի պես բան մը, խոխո տվող ու խրտնեցնող զգացում մը, որուն Մինե անուն տալ չէր կրնար և չէր ալ ուզեր տալ:

– Ինծի համալ բան չըսա՞վ, – հարցուց աղջիկը հանդարտութիւնը գտած ու կամաց մը տան դուռը գոցելով:

– Ի՞նչ պիտի ըսե: Հա՛, վերը սեղանին վրա քեզի քարտ մը ձգեց կոր, գնա՛ նայե:

Մինե չտալ վառեց ճրագ մը ու վազեց վեր:

Հյուրասենյակի ճիշտ կեդրոնը դրված կլոր սեղանին վրա ինկած էր տղու այցեքարտը:

«Բեզի տունը Հանդիպիլը հազվագյուտ բախտավորութիւններեն մեկն է արդեն, որ ամեն մահկանացուի չէ վիճակված: Եկա որ խելքովս քիչ մը պատւոյի նկենք միասին. ինչևէ: Վաղը ճաշեն վերջը տունը քեզի կտրատեմ. նավակնիս ալ պատրաստ կըլլա. մինչև անգամ բացառապես Համաձայնիմ այս անգամ ղեկավարութիւնդ ենթարկվելու: Կնոջ մը ղեկավարութիւնը ենթարկվիլ... Կրնաս երևակայել՝ ինչ սոսկալի Հանդգնութիւն ու անձնազոհութիւն է ատիկա իմ կողմես. ուրեմն պահս ու արտոնութիւնս գնահատել պիտի՛ր ու անպատճառ եկո՛ւր»:

Ժպիտը չրթունքին ավարտեց ընթերցումը, նստեցավ մոսի աթոռին, առավ քարտը չեղակի երկու տուր ծայրերեն մատնեմատին ու բութին մեջ, բռնեց իր դեմքին, սկսավ փչել ու դարձնել. արա՛գ, չունչի ներածին չափ արագ...

Ե

Պատավը, պարտեզի դռան սանդուղին վրա նստած, խոշոր սնակի մը մեջ դոդը դրած կանաչեղենի ահագին կույտը կտակեր ձեռքի փոքրիկ դանակովը: Լուռ, ծանր ու միակերպ:

Նույն միջոցին էր, որ պըռոնոզի հանդարտ քայլերով երևցավ Մինե ծառերուն ետևեն՝ հարդե գլխարկը բռնած ձեռքը ու ձեռքերը կապած ետին:

Նույն հանգիստ քայլերով ալ մոտեցավ պատավին ու դեմը կեցավ:

– Դեռ չեկա՞վ, – հարցուց վերջինը:

– Է՛, թող, մայրի՛կ, անոր հետ գործ բռնել չըլլար. անշնորհք տղա է:

– Քիչ մըն ալ համբերե՛, աղջի՛կս. երևի գործ մը պատահեր է. ինքը ինծի ըսավ, որ շուտով պիտի դառնա. ան ըսածը կպահե:

– Մայրի՛կ, չիտակ ըսե՛, չա՞ս կսիրես պզտիկ տղադ, – հարցուց Մինե հանկարծ:

Պատավը հայացքը կանաչեն բարձրացուց ու խոլչոնած այտերուն մեջենն այնպիսի ժպիտով մը նայեցավ աղջկան, որ այդ տեսակ հարց տալն անգամ ծիծաղելի կդտրձներ: Բայց իսկույն ա՛լ մը քաշեց թեթև, աչքերը ձգեց նորեն պնակին ու չարունակելով սոսկելը՝ ավելցուց.

– Մեղք որ հիմիկվան ճահիլները քիչ մը ուրիշ ձևի են. մարդուս խելքը բան չի կարեր: Խելացի, հասկցող տղա. փոխանակ չենք-չնորհք գործ մը բռնելու՝ լինկեր է այդ խենթ-մենթ գրքերուն ու պատկերներուն ետևեն: Խելքը-միտքն ալ չարունակ դուրսերը. երեք-չորս տարին հազիվ անգամ մը երեսը կտեսնենք քանի մը օր ու հա՛յդե, կճգի կերթա նորեն օտարներուն մեջ, խորթ մարդոց ձեռքը. ո՛չ մենք խնդալ կրնանք իր վրա, ո՛չ ալ ինքը հանգիստ ապրիլ. օտարին հո՞գն է: Մարդ միայն իրեններուն քովը ապրելու է:

– Է՛, մայրի՛կ, օտարներուն մեջն ալ աղեկ մարդիկ կան. ինչո՞ւ:

– Սո՛ւս, ծուռ մըն ալ դուն. այդ բաներուն որ խելքդ հասներ՝ դուն ալ ծանր պլուխ տունդ կնստեիր ու դուրսերը չէիր քաչքշվեր: Լեզուս բանալ մի՛ տար. դուն դեռ աղջիկ ալ ես. մինչև վերջը այդ անպիտան դերասաններուն ու կապը կտրած աղջիկներուն հետ:

– Ուրեմն ես հիմա կապը կտրա՞ծ աղջիկ եմ:

– Դո՞ւն, Աստված չընե. բայց անո՞նք: Դուն դեռ անփորձ ես միայն ու ըրածդ չգիտես. մեյ մըն ալ, որ պարապ ես: Հարսս, տղաս, ամենքը կդժգոհին քու խաղալեդ. բայց դժգոհելեն ի՞նչ կելլե: «Շնորհքով մարդ մը դտեք, կըսեմ, կարգեցե՛ք աղջիկը ու վերջացավ գնաց», բայց որո՞ւ կըսես: Հասած միս-մինակ աղջիկ մը, իհարկե սիրտդ կնեղանա. ամեն բան իր ժամանակը ունի. ամեն տարիք՝ իր պետքը. քու տարիքիդ ես վեց մանչ ունեի: Էրիկդ քովդ, տղաքդ փեչերուդ, ալ պարապ բաներու ո՛չ ժամանակ կմնա, ո՛չ ախորժակ:

Պառավի այս կայտառ ու վստահ չեչտով մը կարղացած խրատականը Մինեի վրա զվարթ տպավորություն մը կըներ: Մեկ ոստումով ցատկեց անոր քովը, նստեցավ սանդուղ ղին ուռքը՝ կնոջ կից, արմուկը դրած ծունկին ու գլուխն ալ ձեռքին հենելով՝ խորունկ չունչ մը առավ և հայացքը պառավին՝ ծիծաղելի լրջությամբ մը հառաչեց.

– Այո՛, այո՛, մայրի՛կ, քու ժամանակդ մարդիկ խելացի են եղեր:

– Ապրի՛ս, աղջի՛կս. դուն ալ ես խելացի. ակա՜նջ դիր ճերմկած կնկան խոսքերուն. թե չէ ինչի՞ է նման հասած աղջիկը առանց մարդու. հավտա՛ ինծի, գավակներուդ երեսեն միայն կխնդաս...

Քիչ մը հեռուն, տան կից, պարտեզի տախտակե դուռը հանկարծ ետ հրվեցավ, և Հրանտ արտորուն քայլերով դիմեց դեպի զուլգը:

– Հը՛, դո՞ւն ես, – բացականչեց պառաւը: – Ինչո՞ւ ուշացար, աղջկան սիրտը Հառաւ սպասելեն:

Մինչ առանց դիրքը փոխելու՝ ճակտին տակեն տղուն կնայեր:

Հրանտ լուռ մտաբացաւ ու ձեռքը անոր մեկնեց ժպտուն.

– Բարի իրիկո՛ւն. նորեն բարկացո՞ր ենք:

– Բարկանա՛լ. արդեն քու պարանովդ հորը իջնելը խենթութիւն է, – բացականչեց աղջիկը հեգ:

Ու հանկարծ ոտքի ցատկելով՝ ավելցուց.

– Չէ՞ որ պատրաստ պիտի ըլլայիր, նավակը ապսպրած. մինչդեռ հրամա՞նքդ. ելեր ես թափառելո՞ւ. ի՞նչ բանի էիր մինչեւ հիմա. քիչ մըն ալ որ ներեցակաս, արեւը մայր պիտի մտնե:

– Դրացի փլանասայինն մոտ էի. գործ ունեինք. խոսքս կես ձգել չէի կրնար. հրամաններդ բոլորը կկատարվին, նավակը ապսպրված է արդեն. քու սիրած ճերմակ մակոյկդ. ես ալ այս վայրկեանիս քու սրամտութեանդ տակը, ուր՞ մն:

Պատասխանեց Հրանտ կատը-կատը, կեղծված պաշտոնականութեամբ մը և հանկարծ ծիծաղելով՝ քաշեց ուժով մը աղջկան թեւեն ներս՝ վեպի տուն, ու հոնկե ալ քանի մը վայրկյան վերջը՝ վտղոց:

– Իսկ դուն չատո՞նց է, որ եկեր ես, – հարցուց ճամփին:

– Հրամե՛ր ես. ժամ մը կա, անշնո՛րհք մարդ:

– Խե՛ղճ Մինես, ձանձրացեր ես երեւի:

– Ճիշտը խոսելով՝ ո՛չ այնչափ. գոնե ժամանակս կարծածեդ ավելի օգտակար կերպով անցավ. նախ մտաքուլրս տրվեցուց ինծի վարուելքը թթու դնելու ամենալավ եղանակը, վերջն ալ մայրիկը տրվեցուց ինծի երջանիկ ըլլալու ամենաշխատակ ճամփան:

Պահ մը առանց պատասխանելու քալեց Մինես տղուն քովեն. հոգը թեթեւ մը ճակատը կնճռելով՝ ըսավ կես լուրջ, կես կատակ.

– Ահա՛ ա՛յս, որուն վրայեն մենք հիմա կքալենք:

– Վա՞յ:

Ու երկուքն ալ այս չափով հոս քաշվեցան վատնդավոր հարցեն:

Թուրք նավավարը, երբ իր սովորական հաճախորդի մտեննալը տեսավ, ճերմակ մակոյկը քաշեց նեղ ու փոքրիկ նավամատույցին և ինքը չոքելով նավամատույցի ծայր տախտակին վրա՝ բռնեց մակոյկին

եղերքին, որ զույգը դյուրությամբ մեջը իջնեն: Ետքն ալ գնաց կապը քակեց և նավակը քիթեն ուժով մը հրեց դեպի բացը. կեցավ չիփ-չիտակ ու հպարտությամբ կդիտեր երկար իր հեռացող աղվոր նավակը:

Մակուկիը արդեն չատոնց անցեր էր Ֆեներպահչե փարոսին տակեն ու քիթը չիտակ դեպի արևելքի ցամաքը ուղղած՝ առաջ կսահեր՝ միշտ կիսավայրի ափին զուգահեռ:

Իրիկվան արևը նարինջի կարմիր մը քսեր էր տեղ-տեղ ծովու անծուփ փայտին, որու չիկնոտ ցոլացումներուն տակ ողողված՝ Մինե մեղկ ու անփույթ դիրքով մը փռվեր էր դեկին անկյունը, փոքրիկ ու ցած նստարանի թիկունքին. մեկ ձեռքը գիրկը, դեկին թելերը բռնած, մինչ ձախը մինչև արմունկը մերկացուցած՝ մակուկիին եղերքեն ջուրին մեջն էր կոխեր ու աչքերը կես-գոց՝ կերզեր մեղմ ձայնով:

Ռուսերեն ռոմանս մը:

Եվ Հրանտ կծռեր ու կուղղվեր թիերուն հետ զուգընթաց. բոլորովին մեքենաբար, լուռ, տեսակ մը հմայված թիերու կանոնավոր ճողփյունեն ու ծլծլող կաթիլներու ախորժալուր դաշնակումեն: Ու այդ հոգեկան օրորման մեջեն անհագ աչքերով կգններ մաս-մաս իր դեմը փռված ընկերուհին, անոր ողորկ, նուրբ ու ճերմակ դաստակը, որ նավակի սուր եզերքին վրա թեթև մը ծալք էր տվեր, անոր քոքեթի մը սեղմված քորսեեն դուրս ցայտող բյուստը, որ իր երգին հետ կելևեջեր, անոր չրջազգեստին տակեն հետաքրքիր դուրս նայող, իրարու վրա ինկած փոքրիկ, անհանգիստ ոտքերը ու անոր չագանակի մազերուն կարճ գանգուրները, որոնք ամեն կապանքի անհնազանդ՝ հարդե լայնեզր գլխարկին տակեն ամեն ուղղությամբ քունքերուն ու ճակտին վրա կգալարեին:

– Նո՞ւ, ուսումնասիրությանդ արդյո՞ւնքը, – խնդաց աղջիկը՝ հանկարծ երգը կտրելով, երբ տղան վերջապես գլխու դանդաղ դարձումով մը հայացքը ծովուն ձգեց:

Հրանտ ժպտեցավ միայն:

– Ձգե՛ թիերդ ու եկո՛ւր քովս. մե՛ղք ես, արևը հոդ աչքերուդ մեջն է չարունակ. եկո՛ւր, քով քովի քիչ մը բանաստեղծությունն խաղանք նորեն. սա՛նկ գլուխս նորեն ուսիդ:

– Ո՛չ, ո՛չ, – պատասխանեց տղան իսկույն կտրուկ ու վախցած. և առանց պիտնալու ինչու՝ թիերուն չափը արագացուց:

– Այդպես լո՞ւրջ. հա՛, հա՛, հա՛, հա՛, – ծիծաղեցավ Մինե բարձր ու ամբողջ կրծքովը:

Ափի ժայռերն ու ծերպերը ձայնակցեցան աղջկան՝ անոր ծիծաղին ամեն մեկ չեչոը կրկնելով ու երկքնելով հավատարիմ:

Հրանտ ավելի լրջացավ:

– Ինծի նայե՛, Մինե՛, մեր ըրածը վտանգավոր խաղ է:

Ու ձայնը դողաց:

Աղջկան սիրտը սեղմվեցավ, բայց իր հուզումը ընկճելու ջանքով նորեն սկսավ անսանձ ծիծաղիլ: Այս ծիծաղը ալ առաջվանը չէր սակայն. արձագանքն անգամ չհնչեր:

– Ես լուրջ կխոսիմ, Մինե՛: Վերջապես պետք է մեր վիճակը հասկըննա՛նք, թե չէ՞. կեղծ քողարկութեան կարիք չկա. պա՛րզ է, որ մեր պգացումները չատոնց են սկսած բարդվիլ, ու մեր հարաբերութիւնը քանի կերթա, այնչափ տարօրինակ կդառնա. այդպես չէ՞:

– Ննթադրեե՛նք թե. վե՞րջը, – հարցուց աղջիկը աչքերը կծկելով:

– Վերջը ան՛, որ մեր վարմունքը բացարձակ անմտութիւն է: Միթե ինքդ հասոզված չե՞ս, որ ինծի հետևիլ չես կրնար, որ մենք չենք կրնար իրարու կապվիլ:

Աղջիկը գլուխը հակ՝ ջղուտ չարժումով մը ղեկին թելը մատին էր փաթթեր:

– Եվ ավելի՛ն կա: Ես քանի խորը կմտածեմ, այնքան ինծի կթվի, թե իսկապես մեր փոխադարձ զգացումներուն մեջ կեղծ բան մը կա. ճշմարիտ զգացումը ո՛չ այս տեսակ երկար-բարակ հաշիվներ ընել գիտե, ո՛չ ալ այդ հաշիվներուն դեմ կանգ կառնե: Մենք իրար չե՛նք սիրեր: Մինե՛. և եթե կուզես, ինծի համար չատ հասկնալի է, որ մենք իրար չենք ալ կրնար սիրել: Իմ խելքս իմ գործերուս է, քու բոլոր էութիւնդ դերասանութիւնդ է խլած. իմ զբաղումներս քեզի համար օտար է, քու ուղեղդ լարող աշխատութիւններն ալ՝ իմ չրջանակեն դուրս. մեկ խոսքով՝ ես պիտութեան մարդ եմ, դուն՝ արվեստի աղջիկ: Իսկ հիմա մեր մեջ գարձածը կես մը սիմպաթիա է, կես մը՝ զգացումի պատրանք. համաձայն չե՞ս:

– Կատարելապես, –եղավ աղջկան վերին աստիճանի հանդարտ ու հստակ պատասխանը:

– Ուրե՞մն...

– Ուրեմն... այդչափ արագ թիավարելու պե՛տք չկա:

Հրանտ նեղսրտած ուսը ցնցեց:

– Այսօր երևի ձախ կողմեդ ես անկողնեն ելեր: Ձգե՛ թիերդ՝ կըսևմ քեզի. ու քո՛վս եկուր: Այդպես ավելի հարմար կարելի է փիլիսոփայությյուններ ըսել ու լսել:

Ու նեղ նստարանին վրա մեկ կեղմ քաշվելով՝ տեղ բացավ:

Հրանտ իրավ թիերը ձգեց, բայց փոխանակ անոր նստարանը անցնելու՝ դժգոհ դեմքով մը նետվեցավ նավակին հատակը աղջկան մոտիկ, արմուկը հենեց միայն անոր նստարանին ու հայացքը հառեց ծովուն:

Տղու ընդոստ չարժումեն մակույկը ուժով ճոճվեցավ. ու բարակ կոհակներու երկար շարքեր, կարծես վախցած, սրարշավ սկսան փախչիլ նավակին երկու կողքերեն:

– Է՛, հիմա չարունակե՛ տեսնեմ, քու տափակ դատողությյուններըը, – ըսավ Մինե՝ ձեռքը կամաց մը անոր ուսին դնելով:

Հրանտ միշտ լուռ նստած էր անշարժ, դեմքը միշտ անդին դարձուցած. ու ճիգ մը միայն նկարված էր իր պինդ խածած ծնոտին, զսպված չնչառությյան ու բռունցքներու ամուր կծկումին վրա. ճիգ մը տեր մնալու իր ուռող զգացումներուն, որոնք դուրս հորդիլ կձգտեին:

– Նո՞ւ, ի՞նչ ես հանցավոր երեխայի պես աչքերդ վար կախեր. թե՞ խիղճդ մաքուր չէ գուցե. մեյ մը ինծի նայե՛, տեսնե՛մ. չիտա՛կ աչքերուս մեջ, այդ քու խելացի աչքերովդդ:

Կամաց մը բռնեց տղուն դունչը ու անոր դեմքը իրեն դարձուց:

Ինչ կար Մինեի հայացքին մեջ՝ տղան չհասկցավ. միայն հանկարծ ամեն մտածում թռավ գլխեն, բարձրացավ քիչ մը մակույկի հատակեն, քաշեց աղջիկը իրեն, թաղեց դեմքը անոր կրծքին վրա ու զույգ թևերուն բոլոր ուժովը անոր մարմնին գալարեցավ:

Մինե դիմադրությյան չնչին չարժում մը անգամ չըրավ. գլուխը ինկավ ետ, թարթիչներուն ճեղքը փոքրացավ, խածավ վարի շրթունքը ու դժգունեցավ:

– Ավելի աղեկ է՝ անցնինք նորեն փիլիսոփայությյանդ, – հծծեց

վերջապես անուժ ժպիտով մը՝ տղու ճմլումին մեջեն հաղիվ խոսիլ կարողանալով:

Եվ Հրանտ նույն բուռն թափովը, որով աղջկան էր փարեր, ետ քաշվեցավ նորեն ու ծունկերուն վրա նստած՝ կռթնեցավ նավակի կողքին:

– Կրեմնե՞ս Հիմա ինքդ, որ այլևս այսպես շարունակել անկարելի է: Ես ալ չեմ կրնար քեզի հետ կուզեն ու կուզին խաղալ. ալ չեմ կրնար խեղդիլ զգացումներս կատակի մը կամ սրախոսութեան մը մեջ, երբ ներս ամեն բան տակնուվրա կդառնա, երբ սիրտս խենթի պես մեջս կթփրտա:

– Ա՛վ, զգացումներու պատրանք:

– Մինե՛, ինծի նայե՛. Հավատա՛, որ այս քանի ատեն է՝ ո՛չ չնորհքով աշխատիլ կրնամ. ո՛չ ալ տեղ մը հանգիստ մնալ, ո՛չ ուզածս կհասկնամ, ո՛չ զգացումներս: Չէ՛, այս ապուշ վիճակը ես չարունակել չեմ կրնար, չեմ ուզեր:

– Սակայն ինչո՞ւ այդ լոլորը. չէ՞ որ մենք իրար չենք սիրեր. չէ՞ որ մենք իրար չենք կրնար սիրել, դուն՝ պիտութեան մարդ, ես՝ արվեստի աղջիկ:

Ու այս ըսած էր անշարժ պահված դիմագիծերուն մեջեն ներքին անդուլ հաղթական հեչտանքով մը:

– Չգիտեմ, Մինե՛, ինչ ըսելս ինքս ալ չգիտեմ. ցավն ալ հոդ է:

Պահ մը մնաց անշարժ, ապա հանգիստ, մեղմ ու անրջոտ ձայնով մը չարունակեց, կարծես իր մտածումներեն մեջեն.

– Բայց ինչ կյանք կըլլար, քու սրամիտ ու չարաճճի հոգիդ միշտ աշխատութեյանս սեղանին չուրջը, քու ժպիտդ ու քրքիջդ սենյակներուս մեջ. հոն՝ հվրոպական կյանքին մեջ, միշտ ձեռք ձեռքի...

Ու մեկեն կրքի բուռն զարկով մը զարձավ, խլեց աղջկան գույգ ձեռքերը և աչքերը անոր մոլոր հայացքին սևեռած՝ վրա տվավ խայտացող չեչտերով.

– Եկո՛ւր, Մինե՛, եկո՛ւր, թող ալ խաղն ու թատրոնը մեկդի. ինչի՞ղ ես պետք այդ լոլորը. իմ՛չ երջանկութեյուն կրնա բերել քեզի: Եկո՛ւր, Մինե՛. եսի՛ր կյանքիս ընկերուհին. եսի՛ր կյանքիս ժպիտը:

Աղջկան դեմքը տատրօրինակ ծամածռութեյուն մը հագեր էր:

Շնչառութիւնը քիչ մը կանոնաւորել չանաց նախ ու ձեռքերը կամաց մը տղու. ջղուտ սեղմումներն ազատելով՝

– Ե՛տ դառնանք, – հծծեց նվաղկոտ ձայնով:

Տղան թաւիլը կոտրած՝ ելավ Հանդարտ. առանց ոչինչ ըսելու անցաւ իր տեղը ու թիերը վերցուց:

Նավակը դանդաղ կիսաշրջան մը ըրաւ իր առանցքին վրա ու. ետ ճամփա ինկաւ:

Մինչ շրթունքները պինդ սեղմած, ձեռքերը գոգը նստեր էր իր անկյունը. տեսակ մը ամփոփված, կծկված դիրքով՝ կարծես հնար եղածին չափ քիչ տեղ բռնելու համար: Հայացքը սահեր, գամվեր էր հեռուն՝ Մարմարայի բացերը ցոլուն կետի մը վրա. կուրծքն էր միայն, որ դեռ միշտ անհանգարտ ու բարձր կշնչեր:

– Երբե՛ք, երբե՛ք, այդ գնով՝ երբե՛ք, – հնչեց վերջապես իր թույլ, դողդոջուն ու մտածումներու մեջ խեղդված ձայնը:

Հրանտ ոչինչ չառարկեց. ո՛չ իսկ դիմագծերու թեթեւ ցնցում մը. միայն թիերը փոխանակ իրենց կանոնաւոր զարկովը ջուրը պատռելու՝ հանկարծ հողփեցին՝ մակերևույթեն կաթիլներու ամբողջ բուռ մը նավակին վրա սրսկելով:

Չ

Դուռը բացվելու կուշանար:

Օհաննես նորեն քաշեց զանգը քիչ մը ավելի ուժգին և այդ սպասման ժամանակին օգտվելով՝ հովանոցը զարկավ անուշին տակ, ծոցի տուփեն պատրաստ սիկար մը հանեց, դրաւ ակռաներուն մեջ ու լուցկին բռնկցուցած վառելու վրա էր, որ դուռը բացին:

Բացողը ինքը որբևայրին էր:

– Բարև՛, Սուրբի՛կ:

– Օ՜, բարև՛:

– Շոգենավս փախցուցի, կես ժամվան չափ պետք է սպասել. ըսի՝ երթամ քենիիս, ինծի աղվոր սուրճ մը կեփե:

– Ուզածդ ատ ըլլա. քալե՛ ներս:

Ու դուռը գոցեց:

– Մինեն տունը չէ՞:

– Ա՛խ, տունն է, – պատասխանեց կինը ձայնով մը, որ ավելի հառաչ մըն էր, քան խոսվածք:

– Հը՞, ի՞նչ է պատահեր նորեն:

– Տո՛ւնն է, տունը, – կրկնեց կինը ցավակցոտ ու հուսահատ պխուռ չարժումով մը:

Եվ ավելցուց.

– Արդեն այս երկու օր է՝ բնավ դուրս ելած չունի. չպիտեմ նորեն ի՞նչ է տեսեր. գոցվեր է սենյակը, կա՛մ կկարդա, կա՛մ դերը կսորվի: Ա՛խ, ես ինչ ըսեմ անոր Հորը. առավ տարավ դուբսերը, ձգեց ինքն իր պվռուն, ամեն ուզածը կատարեց, ինչ է՝ աղջիկը ուսումնական դառնա. ահա քեզի ուսում. կարդա՛ ու կարդա՛ դեր ու դեր: Այսպես մեջեմեջ կփչէ խնկքին. ալ հետը խոսիլ չըլլար. իր տետրակներեն դատ աչքին բան չերևար: Բալե՛ վեր, ինքդ աչքերովդ տե՛ս:

Ու միասին սկսան սանդուղներեն բարձրանալ:

Սանդուղի պվսեն լսվեցավ Մինեի ձայնը:

Զգույշ քայլերով մոտեցան սենյակի կիսաբաց դուռը:

Գլխքերով ու թերթերով բեռնավոր սեղանի մը քով նստած էր որբևայրիի տաս-տասերկու տարեկան թուխ աղջիկը, որ տետրակ մը ձեռքը բռնած՝ հուշարարի պաշտոնը կկատարեր. մինչ Մինե կկրկներ բարձրաձայն նույնը՝ սենյակին մեջ անընդհատ երթևեկելով՝ ձեռքի ու վիմքի դերին պահանջած չարժումներովը.

– «...Ա՛ս դժոխք է արդեն, ի՞նչ կյանք: Ո՛չ, ես խոսիմ պիտի կապալառուին հետ»:

– «Հետևանքը ինծի՞ ինչ. թող ըլլա, ինչ որ կուզե. մի՞թե ուրիշները ինծի մոտածեցին, մի՞թե ուրիշները խնայեցին ինծի...»:

– Բայց դոնե դուն պետք է քեզի խնայես, – հնչեց դռան մեջեն Օհաննեսի խնդացող ձայնը:

Երկու աղջիկները մեկ անգամեն ետ նայեցան:

– Ա՛հ, քեռա՛յրս, – բացականչեց սևաչյա Հուշարարուհին՝ մարդուն դեմը վազելով:

– Քեզի խանգարեցի կարծեմ, – նկատեց վերջինը՝ պարզելով ձեռքը Մինեին:

– Փույթ չէ. ավելի աղեկ. արդեն պետք էր քիչ մը դադար առնեինք: Խե՛ղճ Արաքսիս, հոգնեցավ արդեն: Դե՛, աղվորի՛կս, գնա՛ քիչ մը չո՛ւնչ առ, իսկ առաջիկա ներկայացումեն ետքը ալ ինծի նայե՛:

Ու քմծիծաղ, մեկ ձեռքը աղլկա ուսին դրած՝ մյուսովը սկսավ անոր սև մազերը չոյել մելամաղձոտ քնքշությամբ մը:

– Իսկ դո՞ւն ինքդ, չե՞ս հոգնած, – հարցուց մարդը:

– Է՛, ե՛ս, – ըրավ Մինե՝ ձեռքը թաւի տալով:

Դեմքին տարտամ ժպիտ մը թռուցեցավ, ու պահ մը մտածելե վերջը տաք-տաք վրա տվավ.

– Հոգնիլ. ավելի աղեկ: Անվերջ սենյակիդ մեջ կերթաս ու կուգաս, կկրկնես խոսքերը, շարժումները. աւոկե որ ձանձրացար, կնստիս կարդալու. տե՛ս, հոս թափված են ամսագիրներս, թատրոնական թերթերս. պետք է հետևիլ շարունակ, թե դուրսերը մեծ բեմերուն վրա ի՞նչ կա, ինչե՞ր կդառնա, անոնց խաղերը, անոնց քննադատությունները, թե չէ մարդ իսկույն ետ կմնա, կկտրվի աշխարհքեն ու չորցած ընկույզի մը պես կկծկվի իր կեղևին տակ: Հապա՛, աշխատի՛լ, հոգնի՛լ, զբաղվի՛լ շարունակ. այդպես պետք է. թաղվիս քու արվեստիդ մեջ, ապրիս ու կեդրոնանաս միայն գործիդ վրա, որով ինքնին այլևս ժամանակ չի մնար ամեն տեսակ կողմնակի պահանջներով հոգիդ անհանգիստ ընելու. ո՛չ անխորհուրդ մտածումներ, ո՛չ այրող, անհետևանք զգացումներ... Դուն չգիտես. այսպես, այսպես աղե՛կ է:

Ու անփույթ, ուժասպառ չարժումով մը ինկավ քովնտի աթոռի մը վրա, թևերովը գրկեց աթոռին թիկունքը ու վերին ծնոտի ակռաները դրավ աթոռին ձողի սուր եզերքին:

– Բայց ինչո՞ւ համար, աղջի՛կ, – մեջ ինկավ տիկինը տեսակ մը խնդրող ու հանդիմանական ձայնով: – Ամեն բան իր չափը ունի. պետք է մարդ վերջապես ինքզինքն ալ մտածե ու իրեննները. այդ խենթի պես...

– Ա՛խ, մորաքո՛ւյր, ինծի հանգի՛ստ ձգե, գիտես, որ պարապ բան է, մենք իրար չենք հասկնար:

Ու անհամբեր թռավ ոտքի:

– Զգիտե՛մ չհասկնալու ի՞նչ կա. անգամ մը տարվեր ես այդ խելառ

գործովը. քեզի խելքեն Հաներ են, և ալ տուն, ընտանիք, քովիններդ, ոչինչ աչքիդ երևար: Օտարներու քեֆին համար կելլես բեմը, կխաղաս, հոգիդ կհանես, իսկ քեզի սիրողներուն վրա՞ հոգդ անգամ չէ: Գոնե այդքան տանջանքիդ փոխարեն մեջտեղը շահ մը ըլլար. առածդ ի՞նչ է. քանի մը փարա մեջեմեջ. ան ալ լոլորը այդ դուն-գուն թերթերուն ու խնամի ու խելառ հագուստներուն կերթա. մեղքը չե՞ս, երիտասարդությունդ մեղքը չէ՞:

– Մորաքո՛ւյր, հոգիդ սիրես, վե՛րջ տուր, – աղաչեց Մինե ձանձրացած՝ այդ քարոզներուն վարժված համակերպող շաշտով մը:

– Ի՞նչ վերջ տամ, երբ դուն ինքդ քու օգուտդ չես հասկնար: Ախչի՛կ, միշտ այդպես դեղեցիկ ու երիտասարդ չես մնար. վերջը չա՛տ կզղջաս, բայց ալ ձեռքդ չի՛նար: Նա՛, Օհաննե՛ս, Համբարձումյանին պատմությունը դիտես. ինչ չենքով-չնորհքով, հարուստ, պատվավոր, նամած մարդ. անխելք աղջիկը այսօր որ քիչ մը քիթը կոտրե, վաղը մարդը նշան պիտի բերե: Դուն անոր արտաքին անտաշությանը մի՛ նայիր. դուրսեցի է իրավ, քու վազեկներուդ չի նմանիր, բայց ոսկի սիրտ ունի:

– Եվ ոսկի ալ դրպան. ամենեն աղեկը, – կյսեց Օհաննես խնդալով:

– Որ քու վազեկներդ չունին, – ավելցուց որբևայրին: – Աչխարհքը հիմա ոսկիով կգառնա. խնդիր աղջիկ, քեզի քու թատրոնեդ ալ կպատահե, այս տանջանքներեն ալ. կապրիս ուզածիդ պես. հարո՛ւստ, փա՛ռք ու պսակ՛վ:

Մինե սկսավ ղղաձդորեն խնդալ. չնչաւոդ, բուռն, հեծկլտուքի քուլլը, հիվանդ ծիծաղով մը:

– Է՛, դուն որ քու աղեկդ ուզողը չես ճանչնար: Խնդա՛ դուն. օր մը այս խոսքերս միտքդ կուգան, բայց շա՛տ ուշ:

Ու մեջքը կապած դոկնոցին թելեն բանալիներուն արցակը ուժով մը դուրս քաշելով՝ սենյակեն ելավ:

– Ի՞նչ կըսես այս փոքրիկ կատակերգուհյան, – հարցուց վերջապես աղջիկը լռությունը խզելով:

– Անկեղծ խոսելով՝ մորաքրոջդ ըսածներուն մեջ չիսակ բաներ շատ կան. ա՛յ, օրինա՛վ, որ այդ արհեստը ոչ մեկ դրսկան չահ չի բերեր:

– Շա՛հ. իսկո՛ւյն Հայտնի է, որ բանքայի պաշտոնյա ես. իմ փնտրածս չահ չէ:

– Հապա՞, ևթե կարելի է հարցնել: Փա՞ռք գուցե: Է՛, արժե՞ այդ մանրադիտական փառքին ետևեն վազել մեր այս ողորմելի կյանքին մեջ, մեր խեղճ ու կրակ թատրոնին վրա, թե՛ Հոս և թե՛ Հոն՝ այդ քու Կովկասդ: Զէ՞, անցած օր դուն ինքդ կգանգատեիր. հիմա ելեր ես, այդ տեսակ հասարակութեան մեջ փա՞ռք կփնտրես:

Մինե գլուխը կրծքին ձգած՝ նստեր էր գրասեղանին առջևը ու ղլաձգորեն ծայրը կոտրած մատիտի մը հետ կխաղար:

Մինչ խոսակիցը գոհ իր խոսքերուն թողած տպավորութենեն՝ նույն շեշտով չարունակեց.

– Եվ վերջապես ի՞նչ կյանք է ինքնին այդ մեր Հայ թատրոնի գնչու գոյութիւնը. այսօր կա, վաղը չկա. անվերջ գրկանքներ, ներքին մահնր կռիվներ, աղտո՛տ անձնական հաշիվներ, նախանձ, իրար վնասելո՛ւ, իրար կոտրելո՛ւ զզվելի քողարկված ինտրիգներ, մեծամտութիւն, գեղարվեստի պակաս, բամբասանք. և ալ ի՞նչ գիտնամ. փա՛ռք Աստծու, այս բոլոր չարածս քու սեփական բառերդ են:

– Ամեն գործ իր անախորժ կողմը ունի: Այդ ըսածներդ ու իմ տրտունջներս ամեն ժողովուրդի ու ամեն ժամանակներու թատրոնական կյանքին անբաժան մասն է: Բայց իր կոչումովը ոգևորված մարդուն համար այդ անհաճո կողմերը ծանր չեն կշռեր:

– Կոչո՛ւմ. ինչ կուզես, ըսի՛ դուն, միայն գիտցի՛ր, որ իրավունքը մորաքոյրներուդ առտղջ քնազդինն է. պատռավոր ու նրբազգաց աղջկան մը չի հարմարիր դերասանի կյանքը, պարապ բան է: Ես ալ կգովեմ քեզի, քու կրթութիւնդ, քու ընդունակութիւններդ, բայց այդ չնորհքդ ու ուժդ, շիտակը, արժե, որ ավելի վսեմ, էական սուրբ բանի մը գործադրես:

– Վսե՛մ, սո՛ւրբ, – հեգնեց աղջիկը շրթունքներն ու վիզը ծռելով: – Երևի՛ կառաջարկես, որ Համբարձումյանի մը անկողնին բարձերը շակեմ, նարկիլիեին կրակը վառեմ ու անոր շապիկները կարկանեմ, Հա՞:

– Նայե՛, ընտանիքի մասին այդ լեզվով խոսիլդ անգամ անվայել է: Այնքանը պիտի հասկցված եղիր, որ կույս ալ որ դառնաս՝ կնոջ գործունեութիւնդ իսկական առանցքը ընտանիքն է: Տանը տիրուհին, իր

զավակներուն մա՛յրը, ամուսնին ուրախութի՛ւնը. սա է իր կոչումը, իր սո՛ւրբ, իր միա՛կ կոչումը:

Որվայրին փոքր ափսեի մը մեջ սուրճը բերաւ ու դրաւ խոստին առջևը և ինչպես որ խոժոռ դեմքով նեղս էր մտեր, այնպես ալ դուրս ելլեր կուզեր, բայց չդիմացաւ ու դռան մեջեն դարձաւ քրոջը մարդուն.

– Թո՛ղ. ավելորդ տեղը սիրտ կհատցնես: Ան ամեն լսածիդ գլուխ ամեն պարապ խոսքին կհավատա, մինակ իր աղգականներուն համար ականջ չունի. չէ՞ որ մենք իր դիէը կուզենք:

Ու սեմեն դուրս: Իսկ Մինե ըսաւ կարուկ.

– Ինծի՛ նայե. թե կնոջ կոչումը ընտանիքն է, թե ընտանիքը սուրբ է կամ վսեմ, ատոնք այն տեսակի հարցեր են, որոնց մասին հիմա քեզի հետ վիճելու բնաւ ախորժակ չունիմ. այսքանը միայն ըսեմ, որ ես իմ արվեստս սրտանց կսիրեմ, և որը ինծի համար շատ ու շատ ավելի սուրբ է ու վսեմ:

Օհաննես վայրկյան մը լուռ սկսաւ սուրճը խմել. կարծես ինչ պատասխանելիքը կորոներ: Վերջը դաւաթիկը դրաւ փոքրիկ պնակին մեջ ու կլսեց չոյող ձայնով մը.

– Քու հոգեպես բարձր կին մը ըլլալը, քու զուտ կանացիութիւնդ ալ ճիշտ այդ կետին մեջ պիտի երևա, որ ընտանեկան կյանքի սիրուն զոհես նույնիսկ քեզի համար ամենեն ավելի թանկ ու արժեքավոր երևցած բանը:

– Իսկ եթե չզոհե՞մ:

– Պարապ խոսք է. վերջիվերջո զոհես պիտի:

– Մի՞թե. ինչե՞ն պիտես:

– Որովհետև կին ես: Աբրեն ըսի. կնոջ մը համար իր բոլոր մտածումներն ու ձգտումները իր սիրած մարդուն ու տանը համար զոհելը իր կանացի բնութեան ամենեն զեղեցիկ պիծն է, կնոջական ամենագրավիչ հրապույրը, իր հոգիին մեծութիւնը: Կնոջ մեծութիւնը իր անձնազոհութեան մեջն է:

Մինե հանկարծ ցասկից ոտքի ու սկսաւ սենեակին մեջ վազվզել՝ բանի ու չոր խնդութքով մը:

– Հոս խնդալու ինչ կա, – հարցուց մարդը զարմացած:

– Հիանալի՛ է, ճիշտ այդ-մարդու զաւտողութիւն: Իհա՛րկե, ձեր

Հաշվին կուգա. դարերով կինը ձեր գերին եք դարձուցեր, ամեն իրավունք, ամեն ազատութիւն խլեր եք իր ձեռքեն, կապեր եք բերանը դնչկալով, ոտքերուն փաթթեր եք այս երկար փեշերը, և հիմա ալ որ քիչ մը սկսեր է աչքերնիս բացվիլ, քիչ մը շարժվելու կսկսինք, ահա ձեր այդ բարոյական փտտած իդեալներով դեմերնիս պատ քաշել կուգեք. կարծես անհամար ընկերական ու տնտեսական արգելքները հերիք չեն մեզի: Անձնազոհութի՜ւն. իհա՛րկե, ձեր Հաշվին կուգա, որ կինը չարուշնակ մինակ ձեր գլխուն չուրջը դառնա, միայն ձեր մասին մտածե, զոհե ձեզի համար ամեն բան՝ և՛ ազատութիւն, և՛ շարժում, և՛ զբաղում, և՛ կյանք: Իսկ դո՞ւք, ա՛, դուք տերերն եք, իհա՛րկե. դուք միայն պիտի պահանջեք, ու այդ բռնակալի կոպիտ պահանջին անունը դրեր եք կանացիութեյան գագաթնակետ, կնոջ մը ամենամեծ առաքինութիւնը. ինչպե՞ս չէ:

Մինչև հիմակվան խոսակցութիւնը երկուքի համար ալ մասնավոր նորութիւն մը չուներ. այդ ուղղութեյամբ հաճախ էր մեջերնին խոսք անցած, միայն խոսքի այս վերջին դարձվածքը նո՛ր էր բոլորովին, նոր նույնիսկ իրեն՝ աղջկան համար. ինքն ալ որոշ չգիտեր, թե այդ ինչպե՞ս իր սրտեն դուրս խուժեց: Իսկ Օհաննես բոլորովին չվարած, լայն բացած աչքերով կնայեր անոր:

– Մի՛շտ, մի՛շտ մենք ամեն զոհողութիւն. անգամ մը վարժվեր եք պահանջելու, մինչ ինքներդ ամենաչնչին զրկանք մը անգամ հանձն առնել չեք ուզեր: Ինչո՞ւ, ինչո՞ւ անպատճառ մենք: Ո՛չ:

Այլևս մորաքրոջը մարդուն հետ չէր, որ կխոսեր Մինե, այլ ինքն իրեն հետ. երկու օրե ի վեր շարունակ իր գլխուն մեջ դարձող հարցերուն ու վարանման պատասխանն էր, որ տալ կուգեր. պատասխանը Հրանտի առաջարկին, որ իր բոլոր ճիգերուն հակառակ՝ ո՛չ մոռնալ, անդին նետել կրնար, ո՛չ վճռել ու համակերպիլ:

– Մինե՛, այսօր քիչ մը չափեն ավելի տարօրինակ ես, – պատասխանեց վերջապես Օհաննես: – Իմչ զերութիւն, իմչ կապանք. գրքերե առնված, միակողմանի, թեթևամիտ բաներ են ատոնք, իսկ ու դեղե փչած բաներ: Արդեն քանի մը անգամ ըսեր եմ՝ քեզի խոսքով համոզելը դժվար է. կյանքը պիտի համոզե քեզի, ու այն ատեն ինքդ պիտի տեսնես, որ բոլոր ըսածներդ օդե խոսքեր են լոկ, իսկ ես մեր իրական աշխարհի

մասին կխոսիմ. անկե դուրս խելքս չատ հեռուն չի կարեր: Ինչևէ. ո՛ւհ, չոգենավիս ալ ճիշտ ժամանակն է. նորեն չփախցնեմ: Ըսածներուս վրա մտածե՛, կարելի է քիչ մը գոնե համոզվիս:

Ու ժամացույցը գրպանը կոխելով՝ սանդուղներեն վար չտապեց:

Մինե պահ մը քարացած կեցեր էր սենյակին մնջոեղը՝ մեկ ձեռքով մյուսի արմուկը գրկած ու մյուս ձեռքը դեմքին, մինչ հայացքը գամվեր էր գետին՝ գորգի չրջանակներեն մեկուն ճիշտ կեդրոնը:

Հանկարծ նետվեցավ դուրս, կանչեց շտապ Արաքսին, նստեցուց սեղանին առջևը ու վերակսավ տենդոտ աճապարանքով դերը սերտելու:

Բայց հազիվ էր քանի մը նախադասություն արտասաներ, որ կանգ առավ պատուհանին տակ ու աչքերը երկնքի մաքուր կապույտին մեջ սուզած՝ առանց նկատելու կարեց դերին թելը:

Հուշարարուհին օգնեց, կրկնեց անգամ մըն ալ, ապասեց քիչ մը, բայց Մինե կանգնած էր անշարժ, պատուհանին հեց, կռնակը աղջկան, անձայն, անծպտուն:

– Է՛, չըսե՞ս, – բողոքեց Արաքսի համբերութենե ելած:

Մինե քունեն բռնի արթնցողի մը ընդոստ շարժումովը դարձավ ետ, նայեցավ շուրջը, աղջկան ու կոտրած մոլորուն ձայնով մը հձձեց.

– Գնա՛, Արաքսի՛, գնա՛. ալ հերիք է այսօր:

Աղջիկը կես-ապշած, կես-ուրախ հեռացավ:

Իսկ Մինե պլուխը կախած կրծքին, ձեռքերը մեջքին կապած, անվերջ կղաւնար փոքրիկ սենյակին շուրջը. իր բոլոր մտածումներն ալ՝ պաղատարի մը շուրջը.

«Ինչո՞ւ, ինչո՞ւ անպատճառ մենք...»:

Ը

Հեռո՛ւն՝ պիմա՛ցը, ծովուն մեջ խրված ցամաքի խոշոր կտոր մը, որուն վրա Ստամբուլը մինարեներու սավար սրցակ մը վեր կյցե նիզակներու խուրձի մը պես: Եվ ատոնց եւևեն ավելի հեռուն դժգույն այտերը հոգնած արևին, որ ալ չի պաշտպաններ իր մյուսյումանի դեմքը նայող աչքերին. սիրուն թրքուհիներեն սորված, երևի, որոնք նույնպես

իրիկվան դեմ այնքան խիստ չեն իրենց նամեհրամը պահելու, մանավանդ մենավոր փողոցի մի անկյունը պարտեզի մը վանդակին ետևէն, երբ երիտասարդ պյավուրի մը մոլոր աչքերը դուրսեն իրենց կհառին:

Ճիշտ այնպես, ինչպես Հրանտի աչքերն էր հիմա հառած մինարեներու ցիցերուն ետևէն նազ ընող արևին:

Մոտայի բարձր ծովափին, ուր ցամաքը սեպ վար կիջնե ջրերուն վիրկը, եզերքեն քայլ մը միայն հեռու, սրճարանի աթոռներեն մեկուն վրա նստած էր տղան անհանգիստ, թևը հենած քովի սեղանին, բռնած գավազանին կոթը շրթունքներուն ու ոտքը նետած ոտքին վրա, որը անհամբեր կերերցներ:

Մինեեն առտուն երկտող մըն էր ստացեր, որ Հո՛ս այս ժամին իրար հանդիպելու ժամադիր էր եղած: Ու հիմա անոր կսպասեր:

Կսպասեր ու կզգար, որ այս իրիկուն վճռական բան մը պատահելու էր արդեն: Վերջին երկու օրը գրեթե ամեն ժամ հուսացեր էր Մինեի դարձին. չատ աղեկ կհասկնար, որ աղջիկը իր վերջին խոսքը դեռ չէր ըսած:

Ետևը՝ գետինը ցանված խիճերուն վրա լսվող ամեն ոտնաձայն ողուն գլուխը ետ նայելու կստիպեր: Երբ այդպես անգամ մըն ալ ետ դարձավ, զգաց, որ սիրտը բոլոր ուժովը սեղմվեցավ:

Մինե դեռ հեռուեն սեղաններուն չուրջը հայացք մը նետելով՝ նշմարած էր երիտասարդը և աթոռներուն մեջեն դեպի ան կչտապեր:

Մութ-կանաչ ու բծավոր շրջազգեստ մը հագած էր, մոտավորապես նույն գույնի հովանոցը անութին տակ. գլուխն ալ ճերմակ բերետ մը պանդուրներուն վրա ճմռթած:

Սովորական ժպիտը շրթունքին մոտ եկավ. միայն դեմքը չատ դժգունած թվեցավ տղուն:

Հրանտ առանց տեղեն ելլելու ձեռքը մեկնեց ընտանեբար:

– Տե՛ս, այսօր ալ դուն ուշացար: Նստե՛:

Ու դեմի աթոռը մատնանիշ ըրավ:

– Չէ՛, ավելի աղեկ է՝ ելի՛ր, երթանք շրջելու, – պատասխանեց Մինե՝ մոտակա սեղանին չուրջը չարված խումբին վրա դժգոհ ակնարկ մը ձգելով:

Տղան առանց այլևայլութեան կանչեց մանչը, վճարեց, ու աթոռներուն մէջեն դուրս ելան միասին:

– Ինչ էիր ըսդվեր նորեն մտածումներուդ մէջ, – խոսք առաւ Մինոե: – Երևի, նորեն մեծ ուղեղին թևերը կամ...

– Ո՛չ, այս անգամ բանաստեղծներուն ավելի սիրելի օրգանի մը թևերուան վրա կխորհեի:

– Այսինքն:

– Այսինքն սրտի մը. ան ալ որոշ սրտի մը. քո՛ւ սրտիդ: Քու անշնորհ, քու անպիտան, քու չար սրտիդ:

– Այդ ինչ քնքուշ անուններ ունիս եղեր քու ուղեղիդ թևերուն մէջ իմ սրտիս թևերուն համար: Եվ ինչ կմտածեիր, տեսնենք, այդ անպետք սրտի մասին:

– Կմտածեի որ... Իզուր տեղը բնութիւնը այդպես սիրուն պատեանի մը մէջ է դրեր այդ աստիճանի անշնորհք սիրտ մը:

Ու ձեռքի հարևանցի շարժումով մը աղջկան լանջը մատնանիշ ըրաւ քովնտի:

– Գուցե իրաւունք ունիս. բնութիւնը այդ կարգի սխալներ երբեմն կգործե: Ա՛յ, օրինակ, քու այդ ընդարձակ գանգիդ տակ մի՞թե ավելի օգտակար ու գործնական ուղեղ մը չէր կրնար գետնիլ:

Հրանտ խնդաց:

– Ոչինչ. այսօրվան մեր փոխադարձ հաճոյախոսութիւնները իրաւ որ պետք եղածեն ավելի չողոքորթիչ են:

– Կարելի է քու ըսածդ հաճոյախոսութիւն էր, չգիտեմ. բայց գոնե ես լուրջ կխոսիմ: Քանի՞ տասկ արժե այդ քու զարգացած գլուխդ, երբ տակն խեղ մը, ուրախութիւն մը չկա ո՛չ քուկիններուդ, ո՛չ քեզի սիրողներուն, ո՛չ ալ վերջապես քու ժողովուրդիդ:

Զսպված ժպիտով մը ու կծկած թարթիչներով տղան չնչա անոր կնայեր, և Մինոե կարծես ավելի գրգռվեցաւ.

– Ինչ քիմդ-բերանդ կծռմռես. ո՞ւմ է ըսածս: Առանց տասը ալ կարծես շատ մարդիկ կան մեր Հասարակութեան մէջ բանի մը պետք եկող, և ահա քեզի պես քիչ-շատ պատրաստված ուժերն ալ կձգեն կերթան ուրիշ ժողովուրդներու համար աշխատելու, կարծես Գերմանիան քեզի շատ կարող է մնացեր, քեզիպեսները լեցուն են հոն.

քու ընելիքդ համեմատաբար հոն ոչինչ է, իսկ Հայ Հասարակութեան մէջ ահագին դեր կրնաս խաղալ դուն:

Թեև այս բոլորը աղջկան սովորական խոսելու ու դատելու եղանակին չէր նմաներ, բայց և այնպես Հրանտի համար մեծ անակնկալ մը չեղաւ: Մասնաւոր սրատեսութեան մը կարիք չկար գուշակելու համար, որ այդ ազգասիրական արշաւանքը ինքնին երկրորդական խնդիր էր ու միայն ճամփա կրնար եւևէն գալիքին. նոր նպագի մը նախելրդը:

Բայց և այնպես Հրանտ լռել չկրցաւ և լուրջ շեշտով մը պատասխանեց.

– Ինքդ ալ անշուշտ համոզված ես, սիրելի՛ս, որ ատոնք թեև հնչուն, բայց անտեղի դատողութիւններ են միայն: Ես մեր Հասարակութեան համար մասնաւոր օգուտ մը չունիմ, շիտակ է, սակայն հոս ո՛չ առաւելութիւն կա, ո՛չ պակասութիւն. եթե Հասարակութեան անունով ինծի մեղադրելու ես ելեր, պետք չէ մոռնաս, որ այդ Հասարակութիւնը չի կրնար իմ ուժերս ու ընդունակութիւններս գործադրել. ամեն մարդ ամեն բանի պիտանի չէ. ինծի հետաքրքրողը, ինծի պաղեցնողը իմ մասնագիտութիւնս է. հո՛դ է, որ ես ուժ մըն եմ, ուր ես որևէ գործ տեսնել կրնամ. իսկ մեր ազգը ո՛չ կարողութիւն, ո՛չ ալ կարիք ունի իմ բնախոսութեններն օգտվելու. դեռ շատ ավելի տարրական պահանջներ կան հոս պակաս:

– Իմ ըսածս ալ ճիշտատ էր. ա՛յդ կարգի գիտական գործի մը ձեռնարկե. ինչո՞ւ անպատճառ բնախոսութիւն, ի՞նչ նեղ մասնագիտութիւն է ատիկա:

– Չգիտես ինչ կխոսիս, Մինո՛:

Ու լռեց. լռեց աղջիկն ալ խոժոռած:

Ճամփան նեղցավ. մեկ կողմը բնդարձակ պարտեզի մը հինգեկ պատն էր, մյուս կողմը՝ ծովու բարձր ժայռոտ եզերքը, ուր մեկ-երկու փայտե ձողով վանդակ էր շինված վտանգի առջևը առնելու համար: Եվ այդպես պատի ու ծովու դատարկութեան մեջ սեղմված ճամփան հողոտ կուտար՝ գլուխը ջուրին մեջ երկնցուցած հրվանդանի մը երիզը կազմելով:

– Ուրեմն մասնագիտութիւնդ այդ ատոիճան կսիրե՞ս, – հարցուց

Հանկարծ Մինե՝ կանգ առնելով ծովուն դեմ ու բռնեց վանդակի կվաստուա փայտին:

– Ինչ հարցնելու բան է. առանց իմ աշխատանքին ինչ խորհուրդ ունի կյանքս:

– Եվ ո՛չ մեկ ուրիշ աշխատութեան հետ չե՞ս փոխեր:

– Փոխե՞լ. չասլիկ չէ, հոպի՛ս: Տարիներու ուսումնասիրութիւն, կեդրոնացում, ազնուրութիւն. ինչպե՞ս թե փոխեմ, և ինչո՞ւ:

– Ուրեմն և ո՛չ մեկ պայմանով:

Հրանտ միայն քննող աչքերով նայեցաւ անոր:

Ան և չկար այլևս. հրդեհ մը կար միայն ոսկի բոցերով վերը՝ ամպերուն մեջ, հրդեհ մըն ալ վարը, խոր, ծովու հատակին վրա:

Իրենց բարձունքեն աչքերը ծովու այդ հնոցին հառած՝ Մինե անշարժ մնաց ակնթարթ մը:

Իր բոլոր մտքերը մեկ հարցի մը վկին էր վազարած հիմա. լարված, կծկված հարցի մը, որ աստիճ լարումեն Հանկարծ փրթող զսպանակի մը պես իր պատասխանն դուրս ցատկեց.

– Ո՞չ ալ իմ երջանկութեանս համար, ի՞մ ու քու:

Աղջկա դեմքն ալ հրդեհ կար. վարդե բոցեր կայրեին հոն վառ, կվառեին և աչքերը:

Հրանտ ավելի մոտեցաւ, ափը կամաց մը դրաւ Մինեի ճողը բռնած ձեռքին վրա և հուզումեն դողացող ձայնով մը կցնց.

– Մինե՛, պարզ խոսե՛ տեսնեմ, ինչ կուզես ինծմե:

Աղջիկը սիրտ առաւ, ամբողջ դեմքովը դարձաւ տղուն ու աղաչող շեշտով մը վրա տվաւ.

– Հավատա՛ ինծի, Հրանտ, դիտութիւնը գիտութիւն է վերջապես իր բոլոր ճյուղերուն մեջ, և ամեն աշխատանք ալ՝ աշխատանք: Այս ձեռով չեղաւ՝ թող ըլլա մյուս ձեվի տակ. այդ փոքրիկ գոհը դուն կրնաս բերել ինծի. ատիկա դեռ գոհ ալ չէ. Կովկաս դուն կրնաս յուրջ գործ գտնել, դիրք ալ, դեր ալ: Եվ փոխարենը պահանջի՛ ինծմե, ինչ որ կուզես. ամեն գոհ պատրաստ եմ ես քեզի. միայն մի՛ հետացներ ինծի իմ բեմես, ձեռք մի՛ տար արվեստիս. այդ անկարելի է:

– Գիտեի. և ճիշտ ատոր համար ալ այս բոլոր խոսակցութիւնը ավելորդ է: Արդեն ատ էր պատճառը, որ ես մինչև վերջը ամեն կերպ

աշխատեցա քեզի հետ այդ մասին խոսք բանալ խուսափելու. նավակին մեջ իմ վարմունքս տղայամտութիւն էր: Կուզեն ու կուզին կես-լուրջ, կես-կատակ. առկե անդին անցնելու չէ՛ինք իմ հիմարութիւնս: Լաւ՛, Մինե՛, մեր մեջ եղած կապին արգելքը ո՛չ իմ արտաստահման ապրելու անհրաժեշտութիւնն է, ո՛չ ալ քու հոս կամ Կովկաս կապված ըլլալդ. այդ արտաքին դժվարութիւնները որևէ կերպ հարթելը անհնարին չէր:

– Ուրե՞մն ... – բացականչեց աղջիկը հուսս առած:

– Միակ իսկական արգելքը քու դերասանուհի մը ըլլալդ է. դերասանուհի մը չեմ կրնար կյանքիս ընկերը ընել, ատիկա իմ կարողութենես վեր է:

– Ա՛հ, ուրեմն դո՞ւն ալ. նույնիսկ դո՞ւն, – պոռաց աղջիկը թևերն ու աչքերը բանալով:

Բայց իսկույն թուլցած, դառն չեշտով մը ավելցուց.

– Իհա՛րկե, անպատիվ, ինկած, ստորին արարածի մը հետ. դերասանուհի...

– Է՛, Մինե՛ս, գոնե այս վայրկյանիս դերասանութիւն մի՛ ըներ: Դուն չատ աղեկ գիտես իմ թեր ու դեմ հայացքներս քո՛ւ ալ, քու գեղարվեստիդ մասին ալ. ուրեմն պարապ խոսքերը մեկդի: Սակայն ինչքան ալ որ այդ ամենը գնահատել կարողանամ, ինքս անձամբ չեմ կրնար դերասանուհիի հետ կապվիլ:

– Այո՛, զո՛ւտ, զուտ ասիական գաղափարներ. հիմա կհասկնամ: Բայց ատոր համար այսքան տարիներ Եվրոպա թափառելու բնավ պետք չունեիր:

– Անվանե՛, ինչպես որ կուզես. բայց ես չեմ կրնար տեսնել քեզի բեմին վրա ամենքի դիտակներուն տակ և քուլիսներուն ետևը չարունակ այդ դերասաններու ու «հարդող» պարոններու շրջանակին մեջ, որոնց մասին եթե չատ իդեալական գաղափար մը չունիմ, անշուշտ ինծի չես մեղադրեր: Գուցե ծիծաղելի է այս խանդոտութիւնս. գուցե նույնիսկ ասիական, ինչպես կըսես, ու կիրթ զգացումներու չի վայլեր. չգիտեմ. այդ բոլորը ես ալ եմ խորհած, բայց խորհելեն ոչինչ չեյլեր, ժառանգական բնազդներու է փոթթված:

Մինե հառած հայացքով կնայեր վար՝ ժայռերու խումբի մը մեջ, ուր երկու գլխաբաց փոքրիկներ մինչև ազդրերը հագուստնին վեր

ժողված՝ մտեր էին ջուրին մէջ ու բաներ մը կփնտրեին: Մինչեւ անոնց կնոջերը անհամբեր, առանց ոչինչ տեսնելու:

Հրամա՛ն չարունակեց.

– Եվ վերջապես քանի բեմի վրա ես, քու ուշադրութիւնդ, տենչերուդ ու զգացումներուդ մեծագոյն մասը Հոն է ու Հո՛ն պիտի ըլլա: Իսկ ես, ո՛չ, չեմ կրնար բավականանալ սրտի մը մնացորդ բեկորներովը ու կրքերու կիսատ թափթփուկովը. իմ կազմս այդպես է անգամ մը, իմ էութի՛ւնս: Եվ ճիշտ այդ կեսով ու քիչով չբավականանալս է պատճառը, որ ես մինչեւ հիմա ապրեր եմ միս-մինակ: Կհասկնա՞ս դուն ինչ ըսել է՝ խաղար քաղաքի մը անկյունը կոճղի մը պես միայնակ: Եվ հիմա, երբ սիրոս հոգով, երջանկութեան երազներով քու դիրկդ կվազեմ, ահա՛ դուն կուգաս ու այդ դերասանութեանդ խրամիլակը թեւերուս մէջ կնետես: Եվ կրանս, թե ինծի կսիրես. սիրե՛լ. այդպե՞ս կսիրե կինը: Չ՛, մինչեւ հիմա ես ալ կկարծեի, որ անառարակույս բանես պիտի պարգած ձեռքս. ինչ յաւէտ վարանում կրնա գոյութիւն ունենալ սիրող կնոջ մը համար իր սիրած տղուն ու արվեստի մը մէջ: Բայց հիմա... հիմա ալ պարզ է ինծի. քու սիր ըսածդ զգացումներու խաղ մըն է միայն, ժամանց մը գուցե. դուն չես կրնար սիրել. հաւիշտակվելու, բռնկելու ու ձոնվելու կանացիութիւնը նվազեր, մարեր է սրտիդ մէջ՝ ավելի ուժ ու դիմացկունութիւն տալու համար քու արվեստի ձգտումներուդ. կինը հալեր է քու մէջդ, ու այդ հալվածքին ձուլվեր է դերասանուհին...

– Ա՜հ, ինչ անգութ ես, – լսվեցավ աղջկան շշուկը իր սեղմած ծնոտներուն մէջեն:

Հրամա ակամա կտրեց խոսքին թելը, ու չնչառութիւնը ճնշվեցավ: Առանց դեմքը ծռվեն դարձնելու, բոլոր մկաններըը կծկած անշարժ կեցավ:

Երկնքի բոցերը Հանգեր էին արդեն. ու գորշացած ամպերը վերը մոխրակույտ մըն էր հիմա, նախորդ հրդեհին մնացորդը. մոխրակույտ մըն ալ վարը՝ ծովուն խորքը:

Մինչ, որ նորէնսկսա անշարժ կեցած էր՝ իր ներքին վոհմորիկը սեղմած ակռաներուն տակ զսպել չանալով, Հանկարծ ծռեցավ, ժողվեց փիշերը ու անդրատ հապճեպով կուգեր հեռանա:

– Ո՞ւր:

Ու ազան ոստումով մը հասավ, բռնեց պինդ անոր թեւեն:

– Ձգե՛ ինծի, թո՛ղ, – չընդունեց աղջիկը՝ թևը ազատել փորձելով:

– Վչտացա՞ր, Մինե՛. ի՞նչ ըսի որ. ներե՛, հավատա՛, որ սրտիս ցավն է միայն: Ներե՛, Մինե՛, մի՛ երթար. ալ չեմ խոսիր, ալ չեմ վշտացներ:

Աղջկան պրկված թևը թուլցավ. թեք ինկավ թեթեւ մը պատին, կախեց գլուխը, հայացքը գամեց գետին. վերջը քիչ մը բարձրացուց նորեն ու ըսավ անշեշտ ձայնով մը, կարծես, երապի մեջ ինքզինքը խոսելով.

– Իրավունք ունիս, բոլորովին իրավունք ունիս. այր-մարդիկդ արդեն միշտ իրավունք ունիք. դո՛ւն ալ, եղբայրդ ալ. գոհը մենք պիտի տանք, մի՛ այլ մենք. ալ կվախնամ ես քեզմե. դուն խելքե հանես պիտի ինծի. ա՛խ, դուք ոչինչ, ոչինչ խնայել չգիտեք, ոչինչ հասկնալ չեք ուզեր:

– Անգի՛նս, թո՛ղ պարապ խոսքերը մեկզի. ի՞նչ գոհ. սերը փոխադարձ նվեր մըն է միայն. և ամենաթանկագին նվերը, որ մարդ կրնա ընել. ինքզինքը, իր անրջած երջանկությունը, իր սրտին թփրտուքը: Ա՛ռ, Մինե, ա՛ռ այդ բոլորը քեզի, քեզի ընդմիշտ ու եղի՛ր իմս:

Ու անոր մյուս ձեռքն ալ խլելով՝ սկսավ բոլոր ուժովը սեղմել.

Հովանոցը վար սահեցավ Մինեի անուժին տակեն: Թևերը հանձնած տղուն, աչքերը տղու բոցոտ ու տենչոտ հայացքին մեջ մագնիսացած՝ Մինե կդողար ու կժպտեր իր կամքին հակառակ, տեսակ մը վերացած ժպիտով: Ու իր խառնակ, իր ալ դժվար խլրտող մտածումներուն մեջեն միայն մեկը դեռ որոշ կգիտակցեր.

«Պետք է փախչիլ»:

«Փախչի՛լ, փախչի՛լ», – կկրկներ դեռ ան իր մտքին մեջ անընդհատ, երբ Հրանտ, աղջիկը կրծքին քաչած ու պինդ փարած անոր մարմնին, անձրևի պես համբույր կտեղար այտին ու շրթունքներուն:

– Դուն իմս ես, Մինե՛, իմս. ալ չեմ թողներ քեզի թևերուս մեջեն, – կփսփսար իր տաք շունչովը անոր դեմքին:

Աղջիկը հանկարծ սկսավ հեծկլտալ:

Ու Հրանտ անմիջապես ազատ ձգեց իր դրկեն, դունատ ու խճճված կանգ առավ դեմը՝ թևերը անոր պարզած, առանց ինչ ըսելը գիտնալու:

– Մինե՛... – հնչեց վերջապես իր վախցած, աղաչող ու շվար ձայնը:

Ու Մինե արագ, վճռական շարժումով մը սրբեց աչքերը ձեռքով:

– Լսե՛, Հրաշտա, ես քու սիրուդ արժանի չեմ. ձգե՛ հեռանամ: Համոզվե՛, որ ես չունիմ քու սպասած քաջութիւնը՝ այսքան ժամանակ վայելեալ ձգտումներս, ոգևորութիւնս անհողդողդ ձեռքով մեկզի նետելու. և ստիկա վատութիւն, զոր կըլլար վերջապես ինքս ինծի, իմ անուրջներուս դեմ: Ո՛չ: Ձգե՛ հեռանամ, պետք ունիմ առանձին ամփոփվելու. դուն իմ մտածելու հիմքերս անգամ տակնուվրա պիտի ընես. ձգե՛, ձգե՛...

– Ո՞ւր սակայն. և արդեն մութ է, գոնե...

– Կաղաչեմ, Թո՛ղ, եթե կաթիլ մը հարգանք ունիս դէպի ինծի:

Տղան քարի պես մնաց պատին տակ. ու խելառ արտահայտութեամբ կնայեր աղջկան եւևէն, որ երկու ձեռքով կրծքին սեղմած գետնեն վերցուցած Հովանոցը՝ արագ կհեռանար. ու շուտով ալ աներևութի եղավ պատին կորութեանը հետև:

Մութը արդեն իր մանվածքը փաթթելու էր սկսեր պատեն վեր կախված թզենիի մը լայնատերև ճյուղերուն մեջ: Որոնց տակը կեցած էր Հիմա Հրանտ՝ ամբողջ թիկունքովը պատին կռթնած. ո՛չ շարժում մը, ո՛չ ծպտուն. զգայունները՝ բնկուն ու խառնակ, մտածումները՝ ցրիվ ու անորոշ:

Ծերուկ մը իր գավազանին հետ՝ ծանր քայլերով եկավ անցավ անոր առջևեն անընդհատ հազալով. ու հեռացավ:

Ծառեն կախվող մութին թելերը խոտացան, խճճվեցան ու հալեցին իրենց մեջ տղուն մարմնին գծերը:

Ու ծոմն էր միայն վարեն, որ թանձրացող խաւարի խորհրդաւորութեան մեջ կուգար իր կիսաձայն տրտունջները մռայլ ժայռերու ծերակույտին ուղը դնելու:

Ը

– Մինե՛:

Ու որքևայրին, ա՛լ անհամբեր, սանդուղներեն չոտապեց վեր, ետ հրելց Մինեի սենյակին դուռը:

– Աղջի՛կ, խուլցե՞ր ես. ժամ մըն է՝ քեզի կկանչեմ վարեն:

Մինչ հոգնած չարժումով մը կուրծքը բարձրացուց քիչ մը բազմոցին վրայեն և այ արմուկին կռթնելով՝ հարցական դէմքով մը դարձավ դէպի դուռը:

– Ի՞նչ ես փուվեր նորեն քիթիդ-բերնիդ. ատ ալ նոր մոդա՞ հանեցիր: Քալե՛. չուտ վա՛ր, նայե՛ ով է եկեր. պիտի ուրախանաս:

– Ո՞վ, – պոռաց աղջիկը վախի ու հուզման բացականչութիւնով մը: Ու մեկ ոստումով ցատկեց ոտքի՝ գույգ ձեռքով ձախ ստինքը սեղմած:

– Ինչո՞ւ վախցար. խեղճ է այս աղջիկը: Պարոն Գրիգորիկն է. նամակ է բերեր քեզի: Շուտ իջի՛ր վար. ես գործ ունիմ ներսը:

– Ա՛խ, – ըրավ աղջիկը՝ խոր շունչ մը առնելով, կե՛ս մը հանդարտած, կե՛ս մը հիասթափ:

Եվ չփակին մեկ-երկու քակած կոճակները կոճկելով՝ սանդուղներեն վար իջավ:

– Ա՛, բարև՛ Ջեզի, ազնի՛վ օրիորդ, երևի խանգարեցի. կներեք:

– Ամենևին, – պատասխանեց աղջիկը անտարբեր:

– Է՛, մի՛ ծածկեք, օրիո՛րդ, Ձեր դժգոհութիւնը: Ձէ՞ որ ես ինքս անձնական փորձառութիւնեմբս գիտեմ. մուսաններու այցելած պահուն մահկանացուներու այցը ավելի քան անտանելի է: Ես գիտեմ այդ թանկագին վայրկյանները գնահատել. ուզեցի Ձեր նամակը թողնեմ ու հեռանամ, բայց բոլոր չանքերս ապարդյուն անցան Ձեր տիկին մորաքույրը համոզելու, որ Ձեր զբաղումը չվրդովե: Ահա՛ ատ ալ նամակնիդ. Պետիդտրակեն է:

Ու ծոցի գրպանի դեզ մը թուղթերուն մեջեն փոքրիկ նամակ մը հանելով՝ ներկայացուց անոր:

– Կներեք, – ըրավ Մինե ծրարը պատռելով:

– Խնդրե՛մ: Խնդրե՛մ:

Ընթերցումը երկար չտևեց:

Մինե նամակը ծալեց նորեն, անցուց ծրարին մեջ ու նետեց կից սեղանին վրա:

– Հատ երևույթին, դժգոհ մնացիք, – նկատեց տղան:

– Ո՛չ. ընկերուհի՛ մրն է, – պատասխանեց աղջիկը անփույթ՝ դեմքն ու ուսերը կնճռելով:

– Համենայն դեպս չէր արժեր երևի, որ Ձեր աշխատանքը ընդհատեիք:

– Իմ աշխատանքս, – հեգնեց Մինե:

– Եթե վիտնաք, օրիո՛րդ, որչափ կհետաքրքրվիմ այդ մասին. կարելի՞ է հարց մը տալ. քանի օր է Ձեզի տեսնելու բախտը չեմ ունեցած. ինչո՞վ եք հիմա զբաղված:

– Ինչո՞վ եմ զբաղված:

Վայրկյան մը սիրտ նայեցավ սեղանին վրա ինկած նամակին. և վերջը դառն երգիծանքով մը ավելցուց.

– Նոր դեր մը կսորվիմ:

– Նո՞ր. մի՞թե. ի՞նչ դեր է ատիկա և որո՞ւ երկը:

– Ա՛խ, հեղինակը երկրորդական է, իսկ խաղը ինքը՝ բավական արտառոց բան մը: Երևակայեցե՛ք դերասանուհի մը, որ կսիրահարի. կսիրե ճշմարի՛տ, ո՛չ թե այնպես միայն բեմին վրա, հանդիսականներուն զվարճալիքյան համար, այլ կսիրե իր, իր սեփական զգացումներուն հագուրդ տալու համար. հիմարություն չէ՞: Բայց գավեշտը հոն է, որ միևնույն ժամանակ իր արվեստին ալ չուզեր ճեղք վերցնել. իսկ ատիկա կպահանջեն իրմեն:

– Հը՛, կըմբռնե՛մ. փոտած հայացքներու ներկայացուցի՛չ մը՝ իր սիրեկանը. վե՞րջը:

– Վե՞րջը. ալ կրնաք Ձեզի պատկերացնել այն անվերջ երկսայրի, հակասական ու ջլատող զգացումները, որ կհաջորդեն անվերջ իրարու, կճնշեն, տակնուվրա կրնեն կուրծքս:

– Ձե՞ր կուրծքը, – հարցուց երիտասարդը կե՛ս զարմացած, կե՛ս սրախոսելով:

– Այո՛, խաղի պլխավոր դերը իմ վրաս է: Մտածեցե՛ք անգամ մը այդ բոլոր հիմանդոտ տեսարանները, այդ ներքին երկվությունը, այդ չվար ու պատակոտած մտատանջումները, այդ ապուշ, վարան ու անհետևանք տատանումը մեկ ա՛չ, մեկ ձա՛խ: Բայց Դուք ի՞նչ գիտեք այդ անտանելի չարչարանքը. մարդ կրնա խելագարիլ, իսկ հասկցող ո՛չ ոք. ոչ մեկը իր պիմացինի հոգին ըմբռնել չուզեր: Վայրենի, տմարդի, անխիղճ բան է՝ բռնել մեկը այսպես ու շիտակ դժոխքին մեջը նետել. դժոխքի՛, դժոխքի՛...

Ու երկու ձեռքով դեմքը գոցած՝ չոր հեծկլտուքով մը քովի ամուսին վրա ինկավ:

– Օրիո՛րդ... օրիո՛րդ Մինե, ի՞նչ ունիք, ի՞նչ եղավ Ձեզի. կուգե՞ք կանչեմ Ձեր մորաքույրը, – կկմկմար տղան բոլորովին չփոթի ու վախցած:

Մինե հանկարծ ցնցվեցավ, ձեռքերը իջեցուց ու սկսավ ամբողջ կրծքովը խնդալ. ջղուտ, բռնապրոսիկ, ուժասպառ ծիծաղ մը:

– Մորաքույրս կանչելու պետք չկա, բարեկա՛մս. միթե չև՞ք տեսներ, որ դերս կխաղամ. տեսարաններեն մեկեն կտոր մըն է ասիկա, հիվանդոտ բան չէ՞:

– Բայց գիտե՞ք, օրիորդ, Դուք երկնքի պարգևած չնորհները չարաչար կգործածեք, – եղավ տղու կարկամ պատասխանը:

Մինե բուռն չարժումով մը ոտքի թռավ նորեն:

– Արդյոք չէի՞ք ցանկար փոքրիկ պտույտ մը ընել հետս. ամբողջ օրը տունեն դուրս ելած չունիմ. սիրտս նեղ է սաստիկ:

– Սակայն ամենայն սիրով, օրիո՛րդ, Ձեր այդ առաջարկը ինծի համար պատիվ մըն է, փա՛ռք մը, երջանկությո՛ւն մը:

– Կներե՛ք, ուրեմն, որ քանի մը վայրկյան Ձեզի առանձին ձգեմ Ձեր երջանկության մեջ. քանի որ առանց գլխարկի ու դուրսի զգեստներու այդ պատիվն ու փառքը Ձեզի չնորհել չեմ կրնար:

– Ա՜հ, Ձեզի համար պատրաստ եմ սպասելու մինչև աշխարհիս գոյության վերջը:

– Ձէ՛, այդչափ չեմ ուշանար:

– Իսկ ես այդ միջոցին կաշխատիմ մտքիս մեջ որոնելու չրջակայքի ամենեն գեղեցիկ վայրը, ուր Ձեզի առաջնորդելու արժանի գտնեմ:

– Ուղեղնիդ իզուր անհանգիստ մի՛ ընեք. կերթանք դեպի Մուսա. այն կողմերը ես ավելի կսիրեմ, – վճռեց աղջիկը կտրուկ ու սենյակի սեմեն դուրս սլացավ:

Կես ժամու չափ վերջը Մինե ու Գրիգորիկ ծուռ ու մուռ փողոցներուն մեջեն դեպի Մուսայի ծովեզր կդիմեին:

Աղջիկը իր լայն պխարկին ու թանձր քողին մեջ կորսըված գլուխը քիչ մը առաջ հակած՝ կքալեր տղուն քովեն. տեսակ մը խիստ լուրջ: Մինչ Գրիգորիկ զվարթ ու զոհ, հիանալի տրամադրության մը մեջ՝ բոլորովին լեզու էր կտրեր:

Փողոցին ծայրը ծովը երևնալուն պես խոսքը ծովուն վրա դարձավ.

– Ծո՛վը. ա՛, այդ իմ մոլութիւնս է, օրիո՛րդ: Ամսապահի խշրտուն խիճերուն մեջ ես կսկիծով լուռ թափառիլ՝ աչքերս սևեռած ծովի ծավի ծալերուն, մինչ ալյակներուն չողոքորթ ծուխը ականջներս կդդվե: Ջիխոմ. կարծես մոքերս բռնկիլ կսկսին հո՛դ, բո՛ց առնել, բո՛ց ու թևեր. ու կսավառնին հեռու ու բարձր կյանքի չնչին հոգիներեն, տասիակ իրականութեյան ժանգոտ ու պատ չղթաներեն, կցնդին օրվա մանր հաչիվները, պրասիոյակին տատասուկը ու տետրակներուն թվերը: Վե՛ր, վե՛ր՝ դեպի երևակայութեյան եթերն գավառները, ուր իրեղեններն են, ուր գիղեցկութեյունն է ու պոեզին. դեպի այդ անորոշ, տարտամ, խուսափուկ պատկերները, դեպի անրջանքներու օրորուն, հմայիչ աշխարհը, ուր քնքուշ ու անուշ պատրանքներուն ոսկիները կշրջին հովիկի մը պես թեթև, տերևի մը պես անկշռութե: Հեռո՛ւ, հեռո՛ւ այս առօրյա չոր ու անհրապոյր բուսական կյանքեն: Էֆ, երանի ձեզի, օրիո՛րդ, որ չարունակ գեղարվեստի մեջ կապրիք ու չարունակ գեղարվեստի համար:

Մինե ժպտերես՝ կողմնակի կարեկցոտ հայացք մը ձգեց իր ընկերակցին վրա:

Ու եկան Մոտայի արճաճանին առջևը.

– Եկե՛ք այս կողմ, երթանք դեպի վեր, – ըսավ աղջիկը անտարբեր հնչել ուզող ձայնով մը ու նախորդ օրվան Հրանտի հետ անցած ճամփան բռնեց:

Տղան խոսքի թափին տարված՝ առանց այլևայլութեյան հետևցավ անոր:

– Եթե գիտնաք՝ ինչպե՜ս կնախանձիմ Ջեզի. կնախանձիմ ու կհիանամ. ունիք գեղարվեստ մը, գեղարվեստներու թագուհին, մարդկութեյան ամենալրիվ պատկերացումը, մեր կյանքի հայելին. և ընդունակութեյուններ, որ բնութեյունը իր ամենաշռայլ վայրկյանին թափեր է Ձեր վրա. գերատանի մը կի՛րքը, ճի՛րքը...

– Թողե՛ք, խնդրեմ. ինչ ճիրք, ինչ բան. քիչ մը պատրանք, քիչ մը ջիղերու դրդում ու քիչ մրն ալ իրական կյանքը վայելելու անընդունակութեյուն, ուրիշ ոչինչ:

– Սակայն, օրիո՛րդ, ինչպե՞ս կրնաք Ձեր բախտը այդպես արհամարհել. և ինչպե՞ս Ձեր չնորհները գնահատել չգիտեք: Կըմտանեմ՝ առա-

տուֆյան հագեցում. իսկ ես, որ բախտի երես տված զավակը չեմ, կպաշտեմ Ձեզի, Ձեր ընդունակությունների, Ձեր տաղանդը:

– Ա՛խ, – ըրավ աղջիկը ձեռքի հատու ու դժգոհ շարժումով մը:

Եվ հանկարծ կես հեգնոտ, կես քոքեթ ավելցուց.

– Ինծի՞, ինչո՞ իմ տաղանդը:

Դրիգորիկ ժպտեցավ. այլայլեցավ ինչոր մը, ձեռքերը դնելու տեղ մը սկսավ փնտրել անհանգիստ ու վերջապես պատասխանեց:

– Այդ երկուքը անբաժան են, օրիո՛րդ:

Հասած էին ճիշտ այն կետը, ուր առջի իրիկունը Հրանտի հետ էր կեցած: Մոտեցավ եզերքի փայտին, հայացք մը ձգեց շուրջը ու ակամա թաղվեցավ մտածման մեջ:

– Քալեցե՛ք, օրիո՛րդ. քիչ մը անդին ավելի սիրուն է ծովուն տեսքը:

– Հոս ալ աղեկ է: Հա՛, բայց Դուք իմ հարցիս պատասխան չտվիք, – ըսավ աղջիկը տեսակ մը սթափվելով:

Ուժով մը ցնցեց ուսերը, կարծես վրան խուժող մտածումները թափ տալ կուզեր ու շարունակեց.

– Կեցե՛ք, ես Ձեզի օգնեմ: Կհիշե՛ք դեռ քիչ մը առաջ մեր տունը Ձեզի պատմած նոր պերս. հիմա ենթալրենք, թե իմ սիրահարիս դերն ալ Ձեր վրան է, և Դուք գիտեք, որ ես ինկած եմ Ձեր սրտին ու արվեստիս մեջտեղը վարան, և որ Ձեզմե է կախված զոհել Ձեր զգացումները իմ տաղանդս ազատելու համար. կամ չորցնել իմ արվեստս ինծի ունենալու համար. ո՞րը կընտրեք:

Տղան պլուխը կախեց:

Ջղուտ լարումով մը սկսավ դաշտազանին ծայրովը մեկը մյուսի հետևեն անդին ցատկեցնել քարի փոքրիկ կտորները ճամփուն վրայեն, որոնք վայրկյան մը օդին մեջ կխաչդրյան մը կգծեին արագ ու պզտիկ ճոպիյունով մը կճանկեին ծովուն անխորշում երևալը:

– Նո՞ւ, ո՞րը կընտրեիք:

Դրիգորիկ վճռաբար բարձրացուց դեմքը, ցոլուն աչքերը գամեց աղջկան ու հանդիսավոր, ոգևորված, վսեմ չեշտով մը ըսավ.

– Ես... ես կպատեմ Ձեր արվեստը:

– Վա՞յ. ուրեմն ինծի՛, իմ կանացիությունս, իմ իրական գգա-

ցումներս կնեռնք անդին իբրև չնչին բան մը. այսինքն ինչ որ ես իսկապես եմ:

– Մի՛ մոռնաք, խնդրեմ, Ձեր պայմանը: Միայն Ձեր տաղանդը փրկելու համար: Այո՛. եթե խելագարի պես ալ սիրահարված ըլլամ, հավատացո՛ւք ինծի, իմ երջանկութիւնս ալ, իմ կեանքս ալ, բոլորը պատրաստ եմ զոհ բերելու: Է՛, ի՞նչ արժե իմ հուզումն ու երջանկութիւնը. մինչդեռ իմ զոհս Ձեզի ավելի կքաջալերացնե, կդառնա խթան մը ավելի վեր տալառնելու: Եվ ի՞նչ ավելի վսեմ ու մաքուր, քան այն գիտակցութիւնը, թե զոհեր ես ինքզինքդ բարձրացնելու համար սիրած էակդ դեպի մարդկային ուժերու գերագույն արտահայտութիւնները, դեպի աստվածութիւնը:

Մինե խանդաղատանքի ջերմ արտահայտութեամբ մը տղոս Հայացքին մեջ տուզվեցավ. վերջը ակնթարթ մը գոցեց աչքերը. բացավ, կարեկցորեն նայեցավ անոր ու հանկարծ տեսակ մը բարկացած չեշտով վրա տվավ.

– Դեռ տղա եք Դուք, ու պատանեկան տհաս զգացումներն են, որ Ձեր չրթունքներովը կխոսին: Մեկ-երկու տարիեն կդառնաք այլ. այն ատեն ձեր բերնովը Ձեր իսկական ևսը պիտի խոսի. այն ատենակա, կտպիա, անգութ, անխնա ևսը: Այն ատեն, բարեկա՛մս, ալ չկարծեմ, որ պատերնիդ զոհել հանձն առնեք Ձեր սիրած աղջիկը աստվածութեան մոռեցնելու համար, ինչպես որ կըսեք: Ձեր ամբողջ մտածման եղանակը բիչ մը ավելի գործնական կդառնա: «Ի՞նչ օգուտ ինծի, – մտածեք պիտի,– անոր աստվածութեան մոռենալեն. միթե ավելի խելացի չէ՞ փոխանակ աստվածութեան՝ ինծի մոտեցնեմ. վերջապես աստված մըն ալ ես ինքս...»:

– Սակայն, օրիո՛րդ...

– Այո՛. այո՛. և չատ չուշանար. կտեսնե՛ք:

– Ո՞վ այդպես անզգա ու ամբարտավան ըլլալ կրնա, օրիո՛րդ:

– Ո՞վ...

Ու լուց: Անշարժ աչքերը հառած պատի այն կտորին, որուն կից նախորդ իրիկունը այս ատեն, Հրանտի ամուր թևերուն մեջն էր ինկած, անոր կիպիչ ու անհագ համբույրներուն տակ:

Շուրջը ամեն բան սկսավ իբար խառնվիլ ու չփոթվիլ վուալին նուրբ ցանցին մեջ. ալ պատ չէր դիմը, այլ ամպերու կույտի պես բան մը,

անորո՛շ, փափո՛ւկ, գգվո՛ղ, չոյո՛ղ. ու գաղտուկ ձայն մը, որ իր տաք շունչովը անոր ականջն ի վար կփսփսար.

«Դուն իմս ես, իմս, իմս...»:

Կրքի՛, ուժի՛, հափշտակութեան ջերմ ու անուշ այն ինքնավստահ փսփսուքը, որ չոչափելի հյութի մը պես, նորեն հոսեցավ աղջկա բոլոր անդամներուն մեջեն ու թուլցուց անոր մարմնին հոդերը:

Մինչ բնազդաբար բռնեց ճամփու եզերքի փայտեն, քթթեց արտևանունները՝ նայեցավ ընկերակցին ու անրջոտ ժպիտով մը ավելցուց կիսաձայն.

– Բայց ինչո՞ւ կվրդովիք... գուցե նուչնիակ, ո՞վ գիտե, ճիշտ հող՝ այդ ուժի, այդ պահանջկոտութեան մեջն է այր մարդու հրապույրը, ձգողութիւնը:

Կրկին լռութիւն մը հաջորդեց, որ սկսավ տղուն վրա անախորժ տպավորութիւն ընել: Ու հանկարծ բսաւ տհաճ.

– Բայց երթա՛նք, օրիո՛րդ, քիչ մըն ալ մյուս կողմը:

– Ո՛չ, հո՛ս. ի՞նչ կարիք կա. հո՛ս ավելի սիրուն է, հո՛ս, հո՛ս...

Ձայնը, որ բուռն չեչտով մը սկսեր էր, նախադասութեան հետ հետզհետե թուլցավ, ցածցավ ու վերջին վանկերը արդեն հազիվ լսելի շշուկով մը մեռան շրթունքներուն վրա:

Փայտե ձողը բռնած ձեռքը ղղուտ կծկուռմով ավելի պինդ գալարեցավ, և թարթիչներուն ճեղքերը ավելի փոքրացան:

«Դուն ի՛մս ես, ի՛մս, ի՛մս...»:

Մինչ երիտասարդը զարմացած կեցեր էր քովը ու անվճռական ղիրքով կսպասեր:

[9]

Բոլոր վարագույրները ձգված էին, որոնց իրարու քսվող եզերքներու նեղ անցքեն արևի պայծառ ճառագայթները հատակին վրա ոսկի տողեր կգծեին:

Մեծկակ սիրուն սենյակ մըն էր ննջարանը: Բայց հովահարներու, լուսանկարներու ու ժապավէններու տմբողջ յանցով մը բոլոր պատերը

բռնված: Ջարդի սեղան մը անկյունը՝ լոլոլովին կորսված ժանյակներու, կեռիկներու, աուվիներու, անուշահոտ սրվակներու ու պչրանքի ուրիշ մանր-մունր իրերու ահագին կույտին տակ, որոնց վրա ծռեր էր խոշոր ու հետաքրքիր աչքի մը նման պատեն չեղ կախված ճվաճև հայելին:

Մինչ շուրջը սենյակի մնացած բոլոր կահերուն ու գետնի փոքր գորգին վրա թափված էին անխտիր ներքին ու արտաքին հագուստի կտորներ՝ պխարկ, կոշիկ, գուլպաներ, քորսե. շրջապգեստ մըն ալ կախված մահճակալի գունդեն:

Ու այդ նեղ ու բարձր մահճակալին մեջ, փափուկ ու ճեփ-ճերմակ բարձերուն վրա, մինչև մեջքը հագիվ վերմակին տակ, ինկած էր Արուսյակ կռնակին, թևերն ու կուրծքը հղանի, մազերը խառնակ:

Թևին մեկը, որ գիրք մը բռնած էր, կախված էր հիմա անկողնեն վար, իսկ մյուսը՝ նետված գլխուն վրա, մազերուն մեջ: Մինչ լարված ու մտասույզ դիմագծերուն մեջեն ակնարկը առաստաղին մեկ ճեղքը կշնչեր համառ:

Դուրսը թեթև աղմուկ մը լսվեցավ: Մեկը վեր վազեց սանդուղ-ներեն, առանց այլևայլութեյան ետ հրեց սենյակին դուռը ու նետվեցավ աղջկա ննջարանը. բայց քայլ մը ընելուն պես կանգ առավ իսկույն:

– Ո՛հ, սոկալի՛. սա ի՞նչ խեղդված օդ է. դեռ անկողնին ալ մեջը. ի՞նչ սենյակ, ի՞նչ անկարգութեյուն:

Ու Մինեն չտապեց բացավ պատուհաններեն մեկը՝ առանց վարագույրները բարձրացնելու:

Արուսյակ փոխանակ պատասխանի՝ ձիգ տվավ թևերը, կատվեցավ ու նորեն թմբլցած ու խոժոռ՝ անշարժ մնաց բարձին վրա:

– Ձի՞ս ամչնար դուն, չուտով կեսօր է ըլլալու. ի՞նչ խայտառա-կութեյուն. մարդ չնորհքով կհիվանդանա. առանց ատոր ալ դեմքիդ վրա դուն չէ մնացեր արդեն:

Ընկերուհին կրկին չպատասխանեց:

Սև մազերու խճճված կոհակներուն մեջեն անոր դեմքին ու վզին նայրբ մորթը կապույտի կարմնող թեթև երանգ մըն էր ստացեր, ու մատա չրթունքները սկինդ կծկած՝ փոքր բթոցը անհանգիստ կշնչեր:

Անկողնին քովը արձանացած՝ Մինեն դիտեց ակնթարթ մը լուռ այդ կենսալից առատ մարմինը:

– Ջհոսի՞ս. ի՞նչ ես դեմքդ թթվեցուցեր, – բացականչեց վերջապես չհամբերելով:

Արուսյակ, ունքերը կիտած, անոր կնայեր միչտ մունջ, երբ հանկարծ թափով մը բարձրացավ իր փուված դիրքեն, հենեց մեկ արմուկը բարձին ու չոր կտրուկ շեչտով մը ըսավ.

– Գիտե՞ս, Մինե՛, ես խենթենամ պիտի. ճշմարի՛տ խենթենամ պիտի. ալ ասիկա պա՛րզապես անտանելի է:

– Ի՞նչ է պատահեր նորեն:

– Պատահե՞ր. ոչինչ. ի՞նչ պիտի պատահի. ցավն ալ ճիչտ հո՛ղ է. ինչպես երեկ, այնպես ալ այսօր, այնպես ալ վաղը:

Ուժով մը ձեռքի գիրքը նետեց մահճակալի գլխուն մոտիկ դրված փոքր կոմոդին վրա. ու քիչ մը ավելի մեղմ ձայնով չարունակեց.

– Երբեմն անսովոր հանդգնություն մը կուգա վրաս: Կմտածեմ՝ թքնեմ բոլոր շրջապատիս վրա, կտրեմ քեզի պես բոլոր կապերս, ելլեմ երթամ ուրիշ աշխարհ մը, ուրիշ մարդոց մեջ. ինչ կուզե ըլլա. թող անոթի՛ մնամ, թո՛ղ չարքաշ ապրիմ, միայն թե բա՛ն մը ապրիմ: Այդ վայրկյաններուն եթե գիտնաս՝ մեջս ինչ կզառնա. բացատրելը դժվար է. ամբողջ էությունս նորության, հուզման ու չարժման կձգտի. կուզեմ վազեմ, պոռամ, սեղմեմ. կարծես ամեն չունչ առնելուս բանի մը կսպասեմ, որ անպատճառ պիտի գա, որ ինքս ալ որոշ չգիտեմ ինչ է, որ չի գար... Ու կսկսի հակազդեցությունը. կզգամ իսկույն իմ անզոր, անկամք, իմ միայնակ ու ողորմելի վիճակս. և արցո՛ւնքը, այդ ապո՛ւշ արցունքը անմիջապես կհոսի սրտիս տագնապն ու պապակը մարելու. և ջուրը թաթխած լաթի կտորի մը պես, թուլցած, ճմռթկած, ինքս իմ վրա փակած՝ կիյնամ անկյուն մը վար:

Մինե կարեցությամբ բռնեց անոր ազատ ձեռքը. նստեցավ կամաց մը անկողնի եզերքին, դեռ գլխարկը գլուխը, դեռ ձեռնոցները չհանած, ու խորհրդավոր ժպիտով մը հարցուց.

– Բնավ մտքեդ անցած չէ՞, թե այդ տակնուվրայությանդ հիմքը ինչ է:

– Ինչպե՞ս չէ. եթե ես ինքս չհասկնամ, նա՛, այդ գրքերը գաղտնիք պահել չեն սիրեր: Որ ներս մտար, նորեն այդ սեսակ տաք կետի մը վրա էի. այդ վեպերը մեղի պես սքրյուպյուլներ չունին, հոգի՛ս. կկարդամ

ու կնախանձիմ. աաեւլու չափ կնախանձիմ այդ եվրոպական կյանքին, այդ նկարագրված աղջիկներուն: Մենք, վո՛ւ, մենք սիրե՛լ մը անգամ չենք կրնար. չէ՞ որ անպարկեշտություն է. ասոր համար ալ ո՛ւժ պետք է ու համարձակությո՛ւն. ուրկե՞ է մեզի այդ քաջությունը. տունը ու հասարակությունը կաթիլ-կաթիլ դուրս է քամիր մեզմե ամեն ինքնուրույնություն, սրտի ամեն ազատ չարժում: Նաեւ՛ անկյունը ու ապասե՛, մինչեւ որ ազգականներդ «չնորհքով գործի տեր» մարդ մը գտնեն քեզի համար ու դնեն չալակը: Լ՛: Իսկ դուն սիրա՞ծ ես, Մինե՛. իհա՛րկե. ազատ աղջի՛կ, գեղեցի՛կ, դերասանուհի՛. չիտակ ըսե՛, ո՞ւր, ե՞րբ, շա՞տ:

Մինե պահ մը լուեց ակամա ու գլուխը դեպի կուրծքը հակեցավ, վերջը ժպտեցավ ընկերուհիի դեմքին ու տարիքը առած, ապրած կնոջ մը մայրական չնչտուվը ավելցուց.

– Լ՛, անուշի՛կս, իմ գործս ուրիշ է. ինծի մեկ կողմ դի՛ր: Իսկ դուն շա՞տ կցանկաս սիրել:

– Ակ ինչի՞ եմ պետք, եթե սիրել ալ չի ցանկայի: Ցանկա՛լ, ի՞նչ բառ է ասիկա. ես կայրվիմ. եկեղեցին սուրբին առջեւը վառ մոռցված կանթեղին պես, ինքս իմ մեջս, անպետք ու առանձին: Դուն ըսածս չե՛ս հասկնար, իհա՛րկե. դուն սիրա՛ծ ես. և վերջապես քու կյանքդ ալ ուրիշ է. մի՛շտ պրպտված. իսկ ո՞րն է իմ ընկերական շրջանս, իմ պաշտումս. նա՛, այդ վեպե՛րը. կարդա՛, երապե՛ ու տանջվե՛ք:

– Գիտե՛ս, Արուսյա՛կ, գուցե աղեկ չես ըներ չարունակ այդ փրանսական վեպերուն հետ:

– Թո՛ղ, հոգիդ սիրես, իմ միակ զվարճությունս ինծի: Եվ ըսենք՝ դիրքն ալ որ ձեռքես խլես, սիրտս վերջապես չես կրնար կրծքես դուրս քաշել. մենք՝ աղջիկներս, այլպես ենք՝ կրնա՞ս ու բանալ. սե՛ր, սե՛ր ու կարո՛տ ու ծարա՛վ ու ապատո՛ւմ. որու համար ամեն բան զոհելու պատրաստ ենք մեր սրտին խորքը:

Մինե խոհուն՝ դեմքը աղջիկին դարձուց. ու սև ձեռնոցով ցուցամատը բարձի եղերքի ժանյակին վրա սահեցնելով՝ հարցուց զսպված ձայնով մը, առանց ընկերուհիին նայելու:

– Ուրնմն իրա՞վ կկարծես, որ աղջիկ մը ամեն բան զոհելու պատրաստ է:

– Ինչ հարց. ալ ինչի՞ս է պետք աչխարհը, երբ սերե զուրկ պիտի մնամ, երբ կյանքը վայրել պիտի չկրնամ:

– Բայց, հոգի՛ս, շատ նեղ կմտածես. կյանքի վայելքը միայն սիրո մեջ չէ. մի՛միայն սերը ի՞նչ է ինքնին և ինչքա՜ն պիտի տևե:

– Ես այդ տեսակ հաչիվներ ընել չեմ կրնար. ու կկարծեմ բոլոր կիներն ալ ինծի պես են. իհա՛րկե, խոսքս չորցած սրտով աղջիկներու մասին չէ. ինքդ ըսե՛, այդպես չէ՞: Ո՞վ է հարցնողը ինչուն ու վերջը. թող ըլլա վերջը, ինչ որ կուզե. ամենեն գեշը՝ նախանձ, կռիվնե՛ր, պառակտո՛ւմ. չէ՞. ավելի աղեկ. մարդ դռնե հուզումներ կունենա, կիրք ու վիշտ. ինչի՞ է նման անշարժ ջուրի վրա լեղիի պես նստած այս կյանքը:

Մինե ճնշվող կուրծքին տակ հետզհետե ավելի դժվար կշնչեր. կարծես մեկը հեծեր էր անոր ծոծրակին. իրանը քիչ-քիչ կկորանար վար:

Իսկ ընկերուհին պահ մը լռեց. ակնթարթ մը հառած ու մտաստւյգ նայեցավ ձեռքը բռնած իր մազի երկար մեկ փունջին, ձգեց բարձին, շփեց մեքենաբար իր այտն ու վիզը և հանկարծ պոռաց.

– Մինե՛, Մինե՛, հուզում կուզեմ ես, հուզում, կյանք, աղմուկ, իրարանցում. ես կուզեմ սիրեմ: Տե՛ս այս մարմինը, որ ամենքը գեղեցիկ կգտնեն, ինչո՞ւ, ինչո՞ւ համար է ասիկա. մինակուկ սենյակին անկյունը թոռմելու համար. և երբ կմտածեմ, որ կյանքիս ամենաթարմ, հասուն ու ամենեն գրավիչ տարիներն են, որ այսպես անխորհուրդ կսահին կանցնին... Մինե՛, չգիտես, չգիտես՝ ինչպես սիրել կրնամ. ա՜ա՜...

Ու մերկ թևերովն ու լանջովը փարեցավ ընկերուհիին վիզը, մկաններուն բոլոր ուժովը քաշեց իրեն՝ ուժգին համբույր գամելով անոր դեմքին կրքի անզուսպ թափով մը:

Բաց ծոցեն հոսող կանացի բույր մը, լեցուն կրծքին մերկ շոշափումը ու այդ դողդոջ-կպչուն շրթունքները Մինեին հակակրանք ազդեցին, կանացի հակակրանք մը կանացի կրքոտության դեմ. և ինքզինքը ազատել չկրնալով՝ ոտքի ելավ անկողնեն.

– Կամա՛յ, կամա՛յ, խե՜նթ, պլխարկս բզկտեցիր:

Արուսյակ քակեց թևերը, քիթ ու բերնին ինկավ նորեն անկողնին վրա ու ղեմքը պինդ թաղած բարձին մեջ՝ սկսավ բարձր հեկեկալ:

Մինե մոտեցավ, աշխատեցավ հանգստացնելու., չուր տվավ, որ

խմե. և երբ քիչ մը հանդարտեցավ, օգնեց անկողնեն ելլելու, գործ պատրաստեց ու մեկնեցավ:

Դուրսը պայծառ օր մըն էր, տաք:

Մինե կքալեր առանց որ կողմ երթալը դիտնալու:

Ինքզինքը մոռնալու, իր մտածումներու կաշկանդող շրջանակեն կերպ մը դուրս գալու համար եկեր էր ընկերուհիին, և հիմա այդ ընկերուհին էր, որ աչքերուն դեմեն չէր հեռանար. անոր թևերուն կծկումը կզգար դեռ վզին շուրջը ու շոշափումը անոր ուժեղ շրթունքներուն:

«Ահա՛ ինչպես կսիրեն. ահա՛ ով է կինը. ահա՛ կինը ինչպե՛ս կսիրե», – կկրկներ շարունակ մտքին մեջեն:

«Զո՛ր սիրա, չո՛ր»: Է՛, արդեն ինքը կին չէր որ. այդ կետին վրա ամենքը համաձայն էին իր դեմ. ամենքը. չէ՞ մի օր ինքը «արվեստի աղջիկ մըն էր միայն. արվեստի...»:

Ու սկսավ լեզի ծիծաղով մը բարձրաձայն խնդալ փողոցին մեջ: Իսկույն տակայն իր խնդուքեն ինքը անդրադարձավ, վախցած նայեցավ շուրջը՝ միպուցե տեսնող մը ըլլա, և քայլերը արագացուց դեպի ծանոթ ընտանիք մը, ուր չորս-հինգ աղջիկներ կային, ուր աղմուկն ու իրարանցումը անպակաս էր. պետք է ցրվիլ, ցրվիլ:

Հապիհապ էր անոնց տեսնեն առքը ներս դրևը, որ աղջիկները չորսը միասին «արտիստուհիին» վրա թափեցան, ու Մինե իսկույն ողողված էր արդեն անոնց անդադրում շաղակրատանքին ու աղջկային քրքիջներուն տարափին տակ:

Ճաշի մոտերն էր, որ վերջապես տուն վերադարձավ տեսակ մը անասնոր հանդարտությամբ ու խնամ ծանր քալվածքով:

Դուռը դեռ չզարկած՝ ներսը բակեն խոսակցություն լսեց. կանացի օտար ձայն մը:

Զանգը կտիելուն պես դուռը բացվեցավ:

– Ա՛խ, դուն ես, Մարիա՛մ. ես ալ կմտածեի՝ աս ո՞վ է:

Հրանտեենց սպասուհին էր՝ տասնյոթ-տասնութ տարեկան գավառացի միամիտ ու պրպիր կախ աղջիկ մը՝ կարմիր թշերով, պխտրտուց, ուրկի մուրի պես սև, հաստ ու երկար հյուսք մը թիկունքին վար կսողսողկեր:

Դեռ նոր էր եկած տնային հանձնարարությամբ մը:

Որբևայրին գնաց հանձնարարութիւնը կատարելու:

– Տունը ինչպե՞ս են, – հարցուց Մինե հանդարտ ձեռնոցները հանելով:

– Ադե՛կ են. բարև ըրին. տիկինս ըսաւ, որ այս քանի օր է՝ ինչո՞ւ մեղի չես գար նորեն: Այգիի հավողն ալ արդեն հասունցեր է դրեթե. անցած իրիկուն...

– Իսկ ի՞նչ բանի է Հրանտը, տո՞ւնն է:

– Ջէ՛, ան վերջին աաեննները ամեն օր Պոլիս կիջնե և ուշ ալ կվերադառնա. այնպես տեսակ մըն է. տիկինս երեկ կըսեր, որ երևի գործերուն մեջ բան մը կարգին չէ:

Մինե կախեց գլուխը, կատարյալ լրջութեամբ սկսաւ ձեռնոցին յուրաքանչյուր մատը ձիգ տալ, վերջը երկու ձեռնոցները դրաւ իրարու վրա ճիշտ իրար համաչափ, անգամ մըն ալ սկսաւ մատներեն քաշել գուլդը միասին և վերջապես կամաց մը դրաւ սեղանին վրա:

Բարձրացուց գլուխը, նայեցաւ շուրջը և խոսակցին.

– Մարիա՛մ, այդ ի՞նչ աղմոր մազեր ունիս. այդպես սև՛, առա՛տ, երկա՛ր, – ըսաւ հանկարծ առանց որևէ կապի ու քայլ մը առաջ եկաւ մոտիկեն դիտելու:

Սպասուհին նախ թեթև մը չիկնեցաւ, վերջը ուզեց բան մը ըսե՝ չհամարձակեցաւ, սակայն ինքզինքը երկար զսպել չկրցաւ, ու հարցը դուրս թռաւ շրթունքներեն.

– Եթե այդչափ երկար մազեր կսիրես, ինչո՞ւ համար քուկիններդ կտրեր ես:

Աղջիկ մը մանչու մազերով. Մարիամ արդեն առաջին օրեն խելքը հասցնել չէր կրցած այդ «անճոռնիութեան» և հիմա ներքուստ ուրախ էր այսքան ժամանակ սրտին վրա ծանրացածը անգամ մը արտահայտած ըլլալուն:

Մինե նախ քիչ մը լուրջ մտածեց:

– Ե՞ս. ես ի՞նչ պիտի ընեմ երկար մազերը. մազը աղջկան համար է, աղջկան չնորհքը:

– Է՛հ, դուն աղջիկ չե՞ս, – խնդաց Մարիամ:

– Ե՞ս... է՛ս, իհարկե ո՛չ. ես դերասանուհի եմ:

Եվ դիմացինի միամիտ ու ապշած արտահայտութենեն զվարճու-

թյուն զգալով՝ հարցուց իսկույն, կարծես ավելի խառնակելու համար:

– Գիտե՞ս՝ ինչ բան է դերասանուհին:

Աղջիկը նախ ամչցավ պատասխանելու, վերջը ըսավ կե՛ս մը պարտավի շեշտով, կե՛ս մը քաշվելով.

– Լսեր եմ, որ երեսնին զանազան գույներ կքսեն և ուրիշ մարդիկներու ձևեր կընեն:

– Նո՛ւ. քիչ մը նաստուրալիստական է թարգմանված, բայց ոչինչ:

– Իմչ:

Մինե գրգռված քանի մը անգամ գնաց-եկավ բակի երկայնքովը. վերջը եկավ կեցավ Մարիամի չիտակ դիմացը ու վրա տվավ կարծես իր մտածումները շարունակելով, զայրացկոտ, դառն ու արհամարհանքով:

– Ուրիմն դուն չգիտեիր, հա՞, որ ես աղջիկ չեմ: Ահա՛ միակ միամիսը, որ այդ աստիճան պարզ բանը չի տեսներ: Աղջի՛կ. աղջիկը շատոնց է մեռեր իմ մեջս. աղջի՛կը՝ իր կանացի բնական զգացումներով, հակումներով, մտածելու ու ցանկալու եղանակով: Եվ այդ բոլորի փոխարեն վիտե՞ս ինչ է դերասանուհիի մը ներքը. ահագին հավաքածու մը զանազան տարիքի, վիճակի ու բնավորության կանացի դիմքերու, բայց, իհա՛րկե, բոլորն ալ նկարված, ոչ իսկական, ան ալ կտորտանք, թերի կամ պատռած. եռևը վոշոտ սենյակի մը մեջ իրարու վրա նետած քուխներու պահածու դեպի մը պես, ուրկե նայելով՝ օրվան պետքին մեկ-երկու հատը դուրս կքաշես, կսրբես քիչ մը վրայի փոշին ու կդնես բեմին վրա հանդիսականներու զվարճության համար: Օ՛, հանդիսականներու զվարճությունը. ամենաէականըատ է: Աղջի՛կ... ո՞վ ըսավ քեզի. քուխներու ժողովածո՛ւ:

Ու ձեռքերը կոնքերուն՝ ծռեցավ սպասուհիին վրա.

– Է՛, ինչ այդպես ապուշ-ապուշ երեսս կնայիս, պատասխան չտա՞ս, – պոռաց հանկարծ ինքն իր վարմունքեն նեղսրտած՝ բարկությունը դիմացինեն առնելով:

– Ինչ կըսես. չեմ հասկնար քեզի. ինչո՞ւ բարկացար, – կմկմաց խեղճը վախցած դիմագծերով:

– Չե՛ս հասկնար. ա՛յ քեզի երջանիկ արարած:

Ու սկսավ խնդալ:

– Մինե՛, ի՞նչ բանի ես հոդ. ինչ կընես խեղճ աղջկանը հետ, – լսվեցավ որբևայրիին ձայնը սանդուղին վերեն:

Մինե ծիծաղը կտրեց, նայեցավ վեր և զգվանքի արտահայտութեամբ մը հծծեց.

– Դերասանուհյո՛ւն, մորաքո՛ւյր:

Դանդաղ ձեռքերով վերցուց սեղանին վրայեն ձեւնոցները ու ծանր քայլերով իր սենյակը բարձրացավ:

ժ

Թանձր ու թուխ ամպերը առեր էին երկինքը: Եվ իրիկունը թեև այնքան ուշ էր դեռ, բայց պարտեզը՝ ծառերուն տակ, մութի նուրբ քող մը տարածված էր արդեն ամպերեն ծորող. մանավանդ հսկա չինարի երկար ու խիտ ոստերուն ներքև:

Հոդ՝ ճիշտ ծառի բունին կից, լայն գորգի մը վրա ծալապատիկ կուչ էր եկեր պառավը ու հնար եղածին չափ ինքն իր վրա կքած՝ ձեռքի խաղի թուղթերը կանոնավոր տողերով իրարու տակ կչարեր դանդաղ, լուռ, լուրջ, խորհրդավոր ու թեթև մը դողացող ձեռքով:

Թուղթ կբանար:

Իր աջ կողմը ամբողջ հասակովը դեմքին վրա փուվեր էր Հրանտ և թև ու կրծքով բարձի մը մեջ խրած՝ ուշադիր կհետևեր մորը ձեռքերուն:

– Նայե՛, բախտը նորեն թևիդ տակ ինկավ, – նկատեց կինը նոր բացած թուղթը մատնանիշ ընելով: – Բախտավո՛ր տղաս. մինակ պչխուդ վրան քիչ մը նեղութիւն կա. ատ աղվոր չէ. մեյ մըն ալ չեմ հասկընար՝ սա երկու չեկերը քեզմե ի՞նչ կուզեն. սա չեկ մարդը ու սա չեկ կինը, որ ձախ կողմեդ չի հեռանար. չեկերեն զգո՛ւյշ եղիր, մա՛նչս. ամեն կնկան ականջ մի՛ կախեր. Աստված պահե քեզի անոնց վորձանքեն:

Հրանտ ժպտեցավ. շատ աղեկ կհասկնար մորը ակնարկները:

– Իսկ ճամփորդելու մասին ոչինչ չե՞ն ըսեր թուղթերդ, – հարցուց Հանկարծ:

– Ի՞նչ ճամփորդել, – դարձավ կինը զավկին՝ չեչտ անոր դեմքին դամելով աչքերը:

– Նա՛, չպիտե՞ս. դեպի չեկերու աչխարհը:

– Ջէ՞ որ դեռ երկու-երեք ամիս ժամանակ ունիմ՝ կըսեիր:

– Այո՛. բայց, է՛, ո՞վ գիտե, զործիր կրնան պատահիլ, անակնկալ պատահարներ. մարդ կատիպվի չտապկելու...

Բայց նչմարելով, որ մայրը անհանգստանալ սկսավ, իսկույն փոխեց լեզուն.

– Իմ հարցուցածս ալ ա՛տ է միայն, մայրի՛կ. կուզեի գիտնամ տեսնենք՝ Թուղթերդ ի՞նչ կըսեն:

– Ճամիա՛ղ, ճամփադ դեռ չատ հեռու է. նայե՛, չարքին մյուս ծայրը, – ըսավ պատասխանը Հատատատ ու վճռական:

– Հա՞, ուրեմն աղե՛կ:

Մայրը չարելը ավարտեց, երկու ձեռքերը իրարու վրա գոգը դրած՝ պահ մը լուռ սկսավ դիտել խորին ուշադրությամբ առջևը փռված Թուղթերուն գաղտնիքը և քիչ մը վերջը սկսավ նորեն Հատիկ-Հատիկ մեկնել.

– Ինչպես ըսի, գլխուդ վերի ղին չատ մոմտուք կա. մոմտուքը սիրտ կմաշե, ճահիլի բան չէ. և այդ մոմտուքն ալ, նայե՛, հեռուներեն կուգա վրադ. ա՛խ, եթե անգամ մը ձեռք վերցնեիր այդ հեռուներեն: Ուրիշ բան մըն ալ որ չեմ հավնիր, տե՛ս, չորս դիդ բոլոր ուրիշ գույնի Թուղթեր են. կարծես օտար, պաղ չրջանակի մը մեջ, որ քու գույնիդ չի հարմարիր:

– Ի՞նչ վնաս ունի, մայրի՛կ, ավելի աղեկ. զանազան գույները իրարու քով ավելի սիրուն կերևան:

– Կերևան, այո՛: Ա՛խ, պավո՛կս, մի՛ խաբվիր. մարդ իր չրջանակեն դուրս գալու չէ: Երջանիկը ան է, ով իր գույնի մարդոց հետ, իրեն սովորական չրջանակին մեջ կդառնա: Իր չրջանակեն դուրս չատ բան սիրուն կրնա երևալ. միայն, հավատա՛, ո՛չ իրեն համար: Ամեն մարդ իր գույնին մեջ:

Հրանտ, որ մինչև հիմա անփույթ, ժամանցի համար մորը կլսեր, վերջին խոսքերուն ակամա բարձրացավ քիչ մը բարձեն ու աչքերը համառ սևեռեց մորը Հանդարտ ու տխուր դեմքին, ուր վշտերն ու անցյալը հարմարվելու ու համակերպելու անջինջ դրոշմը զարկեր էին:

Առանց որդուն չարժմանը ուշ դարձնելու՝ կշարունակեր ան իր

գուշակութիւնները, որը ավելի իր սրտին, քան թուղթերին կկարդար: Բայց Հրանտ ալ չէր լսեր ոչինչ:

Ամպերու ու ծառերու խորհրդավոր կես-մութին տակ, շուրջի գաղջ ու ճնշող օդի լռութեան մէջէն մորը Հատու, Հատակ ու տրտում չեչտերը պատգամի մը պես իր ուղեղն էր թափանցեր:

«Երջանիկը ան է, ով իր գույնի մարդոց հետ, իրեն սովոր շրջանակին մէջը կդառնա...»:

Շը՛չշ. տաք հովը հարձակեցաւ հանկարծ ծառի թաւ ճյուղերուն մէջը, ու կիսաչոր, դեղնակարմիր տերևներու անձրև մը տեղաց վար. քանի մը հատը երերտկալով ու դողդոջ եկան նստեցան թուղթերուն վրա, հատ մըն ալ պառավի քթան մազերուն:

Հրանտ ցատկեց ոտքի:

– Մայրի՛կ, լավ է ներս երթանք. կարծես փոթորիկը փրթի պիտի:

– Գնա՛ Մարիամը ինծի ղրկե՛, սա լաթերը ժողվենք, – պատասխանեց կինը՝ անդին երկար պարանի մը վրա փռված ճերմակեղենները մատնանիշ ընելով:

Հրանտ կատարեց մորը պահանջը. ծանր ու մտախոհ բարձրացաւ դեպի իր աշխատանոցը, որ վերջին ժամանակները շատ քիչ էր եղած, ան ալ միշտ պատահաբար, առանց աշխատելու:

Ու սեմին վրա կանգ առաւ վայրկյան մը՝ բոլորովին թաղված իր մտքերուն մեջ:

«Այս շրջանակեն դուրս շատ բան կրնա սիրուն երևիլ, միա՛յն ուրիշներուն համար, ո՛չ իրեն...»:

Եվ ինքը խենթ մը, որ կարծեր էր, թե ինքն ալ իրավունք ունի ուրիշ գույնի, ուրիշ բնավորութեան մարդոց ուրախութիւնները ունենալու: Ինքը լուրջ պիտութիւններու նվիրված աշխատավոր մը, ի՞նչ կհարմարեր իր դպացումներուն եղել սիրահարիլ տասնութը տարեկան պատանիի մը պես, ան ալ Մինեի նման արտիստի անկայուն ու թռուցիկ բնույթի տեր աղջկան մը վրա: Հիմարութիւն էր, այո՛, իսկ հիմարութիւն վայելել գիտնալն ալ ամեն մարդու բան չէ: Ամեն մարդ իր գույնին համեմատ, իր շրջանակին մեջ...

Ու երկու դանդաղ, վարանոտ քայլերով մտավ այդ շրջանակեն ներս, մոտեցավ պրասեղանին, հենվեցավ թեթև մը ու կեցավ:

Փոքրիկ պնակի մը մեջ պատրաստված գունավոր հեղուկը ցամքեր էր բոլորովին, խիցի կտորին վրա ալրկված թաղանթը՝ չորցեր ու կծկվեր, ու նուրբ ապակիները թափվեր էին չուրջը աղատոտ, ոմանք պինդ իրարու փակած, իրենց մեջ ճգմելով կանկլիի չորցած փտոր մը, և այդ բոլորի կեդրոնը՝ մանրադիտակը, որուն վրա փոշիի բարակ խավ մը նստեր էր:

Երիտասարդը Հանկարծ ցավի, խղճի խայթի պես բան մը զգաց. այսպես մոռնալ, այսպես լքել իր ջանքերուն աշխատակիցը, իր ճգտումներուն հավատարիմ օգնականը, իր ընկերը...

Բուռն թափով մը դուրս քաշեց գրպանեն թաշկինակը, տաթօրինակ ակնածանքով մը վերցուց, սկսավ մաքրել դործիքը. ու տեսակ մը դուրգուրանքով դրավ նորեն զգույշ սեղանին վրա:

Նույն եռանդով ալ սկսավ արագ մաքրել ու քիչ մը կարգի բերել չուրջը: Վերցուց գրքերեն մեկը, բացավ նշան դրած տեղը: Վերջը ծռեցավ իր կեսը գրված, կեսը նկարված ճեռագիրներուն՝ չանալով հիշել, թե ո՞ւր էր իր աշխատանքը ընդհատվեր:

Եվ զգաց, որ վառ հաճույք մը մեջը չրջան առնել սկսավ, հաճույք մը աշխատելու կարողի, հաճույք մը աշխատելու կարողության: Ո՛վ ըսավ, թե ինքը այլևս չնորհք չուներ. ո՛վ ըսավ, թե իր սրտի անխորհուրդ ու անհետևանք զգացումներուն ճեռքը կապված սորուկ էր:

Ո՛չ: Պետք էր վեթռուել այդ ոսկի անմիտ չղմաները, որոնք որչափ ճիգ տան, այնքան մարմնիդ մեջը կկորին. պետք էր թափ տալ ուսերեն վար այդ ամբողջ անիմաստ պատմությունը:

Ցնցվեցավ, արագ վազեց դուրս, թարմ չուր բերավ, պոլիպներեն մեկուն չիչը մոտ քաշեց, շարեց իրարու քով պետքի ասեղներն ու գործիքները, մաքրեց մեկ-երկու փորձի ապակիկ. թարմ պրեպարատ պատրաստել կուգեր:

Ու ինքն իր ոգևորությենեն ուրախացած՝ սկսավ սուլել: Սակայն սույլը ընդհատվեցավ հանկարծ, ընդհատեցան ակնթարթ մը և սրտին գարկերը. ճեռքը չիչին՝ քարացած մնաց. ճանչած էր վարեն Մինեի ձայնը:

Սանդուղը թիրտաց հապճեպ ու թևեթև քայլերու տակ, ու աղջիկը հևալով նետվեցավ սեմեն ներս.

– Բարև՛:

Տղան համառ, անթարթ աչքերով կնայեր անոր. ո՛չ բառ մը, ո՛չ շարժում:

– Բարև՛. չե՞ս լսեր. երևի աս ալ նորագույն քաղաքավարութիւն է:

– Ի՞նչ գործ ունիս հոս, – հարցուց վերջապես տղան կտրուկ ու խեղդված ձայնով մը:

– Ատ ի՞նչ անխելք հարցում է, – խնդաց Մինե:

Քայլ մը ետ գնաց, բազուկները դրաւ աթոռի մը թիկունքին, կուրծքն ալ վրան ու գլխարկին զարդերուն տակեն ինքն ալ լուրջ նայվածք մը չինեց՝ դիտմամբ տղուն ձևովը, տղուն նման:

Հրանտ աչքերը փախցուց, ձեռքի փոքրիկ ունելին զայրույթով նետեց սեղանին ու մեկեն դիմեց խոսակցին.

– Գիտեմ, եկար նորեն աշխատութիւնս խանգարելու: Ինծի նայե՛, հերիք է, դուն ու ես տարբեր գույնի մարդիկ ենք. դուն ինծի ոչինչ տալ չես կրնար, գոնե ունեցածս ձեռքես խլելու մի՛ հետապնդեր. հանգի՛ստ թող ինծի իմ չրջանակիս մեջ. ալ ես քեզմե ուրիշ ոչինչ չեմ սպասեր:

– Հրա՞նտ, չե՞ս ամչնար. ամո՛թ քեզի: Միթե իրա՞վ չես ըմբռներ, որ վարմունքդ կատարյալ երեխայական է. ահագին մարդ պիտի ըլլաս. ան ալ դրքտոր, ան ալ մասնագետ, ան ալ ջղային կեդրոնի...

Խոսքին հետ հետզհետե թևերն ու կուրծքը բարձրացուց աթոռի թիկունքեն ու ամբողջ հասակովը չտկվեցավ:

– Իսկ ես կամչնամ. դեռ ավելին, այդ բոլոր հիմարութիւնները ինծի ուղղակի կնվաստացնեն. կըմբռնե՞ս, կնվաստացնեն: Մենք չենքչնորհք կվախնանք իրարմե ու կփախչինք. և ինչո՞ւ. որովհետև կհամակրինք իրարու, իրար կհասկնանք, մեկմեկու սիրտ տալ ու իրարու մոտիկութենեն օգտվիլ կրնանք. մանավանդ մեր այս տափակ շրջապատին մեջ: Լսե՛, ես ալ չեմ կրնար հանդուրժել, որ մենք իրարմե խոյս տանք, որ դուն երեսիս նետես, թե ես կխանգարեմ քեզի: Ո՛չ. ո՛չ թե քեզի խանգարել, այլ քու աշխատութիւնդ թև տալ կուզեմ ես. կուզեմ, որ իմ մոտիկութիւնս ու զգացումներս քու օգնականդ ըլլան, դրդիչդ, քու մուսադ: Ա՛խ, դուն իրավ մուսայի հետ գործ չունիս. նա՛, ինչպե՞ս կրսեն ձեր բնախոսական ժարգոնով:

Ու ժպիտը աչքերուն, գլուխը քիչ մը թեքած ուսին՝ մոտ եկավ տղուն:

– Բայց, Մինե՛, սիրելի՛ս...

Հապիվ էր տղան բերանը բացեր, որ աղջկան ձեռքը բարձրացավ իսկույն ու ափովը դուցից անոր չրմունքները:

– Ո՛չ Մինե, ո՛չ սիրելիս. ո՛չ մեկ առարկութիւն. վերջացո՛վ. ալ ո՛չ մեկ խոսք այդ ամենու մասին. կհասկնա՞ս: Դե՛, հիմա լենժի ըսե՛ նայիմ՝ ի՞նչ կըննես հոգ. դուն հանգիստ քու գործդ շարունակե՛. ա՛յ, ես ալ քեզի կօգնեմ. կկարծես չեմ կրնար. դուն ցո՛ւյց տուր միայն, թե ինչ պիտի ընեմ:

Հրեց աթոռը գրասեղանին առջևը, նստեցավ, մանրադիտակը քաշեց իրեն ու ծռեցավ վրան:

– Հապա ոչինչ չերևար մեջը, – բացականչեց Հանկարծ խնդումներես՝ տղան դառնալով:

Հրանտ սափրվեցավ ինքն ալ ժպտելու, այնքան միամիտ էր այդ բացականչութիւնը:

– Իհա՛րկե. քանի որ տակը տեսնելու առարկա չկա: Կեցի՛ր, պատրաստներեն քեզի բան մը ցույց տամ:

Մոտը խոշոր տուփ մը բանալով՝ արդեն պատրաստ, փակցուցած հին օբյեկտներեն ապակիկ մը պատեց, անցուց մանրադիտակին տակ ու գործիքին պտուտակը բռնելով՝ ծռեցավ խողովակին վրա՝ տեսողութեան ամենեն պայծառ դիրքը բերելու:

Աղջիկն ալ նորեն ծռեցավ քիչ մը: Հրանտ նախ անոր ուսը թևթևմը իր ուսին զգաց, վերջը աղջկան դիմարկին փետուրը, որ իր մազերուն քամեցավ, և աղջկա զանգուրներեն ոտր մը, որ իր ճակտին ինկավ: Հրանտի պտուտակը կառավարող ձեռքը դողաց, պտուկերը փախավ խողովակին մեջեն, տղան խածավ շրմունքը, գլուխը քիչ մըն ալ թեքեց իր կամքին հակառակ, ու երկուքի ալ այրող այտերը իրարու էին փակած պինդ...:

Վայրկյան մը միայն:

Երիտասարդը ետ քաշվեցավ Հանկարծ, բռունցքը պայրացկոտ զարկավ սեղանին ու հեռացավ երկու քայլ:

– Ահա՛ այդ բոլոր սիրուն ֆրազներուն եղրակացութիւնը: Սիրուն բառերով մենք իրարու համկն չենք տպատիր, պարապ բան է, պետք է

ամենեն գործնական ու կտրուկ միջոցին դիմել. ես նույնիսկ այս չաթիու կմեկնիմ Գերմանիա. արդեն այսչափ կազդուրվիլն ալ հերիք է:

Եվ «կազդուրվիլը» չեչոված էր մասնավորապես պառն:

Մինե դուխը վար կախած՝ դրքի մը թերթերը կդարձներ ջղաձգորեն: Երբ տղան լռեց, առանց իր դիրքը փոխելու հարցուց հատու չեչոով մը.

– Որոշումդ հաստա՞տ է:

– Այո՛, այո՛:

– Ուրեմն ըսե՛ պատրաստութիւն տեսնեմ:

– Ի՞նչ պատրաստութիւն:

Մինե աթոռին վրա կես մը դարձավ դեպի տղան ու հստակ, հանդիսաո չեչոով մը կցեց.

– Ճամփորդելո՛ւ. քեզի հե՛տ:

– Թո՛ղ անհամ կատակներդ մեկդի. ես այլևս ամենևին սիրտ չունիմ կատակելու, և եթե ակնթարթ մը իմ հոգեկան վիճակս մտնել կարողանայիր, դուն ալ կկորսնցնեիր կատակելու ցանկութիւնդ:

– Ես չե՛մ կատակեր, – եղավ աղջկան կարճ ու լուրջ պատասխանը:

Հյանա զարմանքով անոր նայեցավ չեչտ: Աղջիկը իր բոլոր ուժովը սեղանին մեկ սուր անկյունը սեղմած ու զսպած իր չնչառութիւնը՝ տղուն կնայեր անկեղծ ու պայծառ հայացքով:

– Մինե՛, – ըսավ վերջապես տղան: – Եթե միտքդ խաղի ելլել չէ, հավատա՛, որ ինքզինքդ կխաբես: Հետս չես գար դուն. չես կրնար գալ. այդ երագին արթնցած եմ ես արդեն վերջնականապես: Մենք իրարու մեկ բանով մը միայն կրնանք օգնել. հնար եղածին չափ կտրուկ անջատվիլ իրարմե:

Մինե կապված չարժումով կամաց մը բարձրացավ աթոռեն. ձեռքը դեռ սեղանին՝ չիփ-չիտակ կեցավ տղուն դեմ և նույն անսովոր ծանր ու լուրջ խոսվածքովը պատասխանեց.

– Կկարծե՞ս: Սակայն դիացի՛ր, որ քու բոլոր ջղային կնդրոհներուդ հետ միասին չատ ձախորդ հոգեբան ես: Կկրկնեմ քեզի. կուզե՞ս այս վայրկյանիս ճամփա ելլենք. կուզես մինչև Գերմանիա. կուզես մինչև դժոխք:

Դեմքի, պիրքի ու ձայնի այդ լրջութեան ու վճռականութեան դեմ

տղու պարմանքը իր գագաթնակետին հասավ. Հանկարծ իր կամքին հակառակ՝ նոր հույս մը պլպլաց սրտին մեջ, պլպլաց ու իսկույն մարեցավ, և Հրանտ լեղի ժպիտով մը կցեց.

– Իսկ դերասանուհյո՞ւնդ. երևի այսօր տո՞ւնն ես մոռցեր:

– Թո՛ղ, – բացականչեց աղջիկը ակռաներուն մեջեն:

Ու մինչև հիմա գոպած զգացումներուն ու ձայնին մեկեն ափսո ընթացք տալով՝ առաջ նետվեցավ, դիմքը հրահրած, բուռն չարժումներով ու խոսվածքը մոլեգնոտ.

– Դերասան, դերասան, ո՛ր կողմը դառնամ՝ միևնույն բառը երեսիս կնետեն. ուրիշները ամենքը մարդ են, զգացումներ ունին, կապրին. իսկ ե՛ս միայն դերասան, մի՛չտ, ամեն տեղ, ամենքի՛ համար: Ո՞վ լսավ. ո՞վ լսավ քեզի, որ իմ մեջս բնությունը մեռեր է, որ արվեստն է միայն մեջս, որ այդ արվեստին ամեն բան զոհեմ պիտի, ա՛, արվեստ: Արդեն պետք եղածեն ավելի ես զոհած եմ անոր՝ իմ երիտասարդությունս, իմ թարմ երիտասարդությունս, և փոխարենը ի՞նչ է տված ան ինծի:

Դողդողացող լանջովը խոր շունչ մը առավ:

– Լսե՛, չուտով քսանվեց տարեկան կդառնամ և մինչև հիմա ես չեմ գիտցած, թե ի՞նչ բան է սերը, թեև բեմին վրա չարունակ նույն զգացումն է, որ ներկայացուցած եմ ուրիշներու քեֆին համար. ուրիշնե՛ր, մի՛չտ ուրիշներու. իսկ ինքզինքիդ, քու սեփական պահանջներուդ համար՝ ոչինչ: Դուն չես կրնար երազել անգամ, թե ի՞նչ հրայրք, ի՞նչ ծարավ ունիմ սիրվելու. մինչ շրջապատողներս կա՛մ ապուշ հաճոյախոսություններ են շռայլած ինծի, կա՛մ լկտի նայվածքներ բուլիսներուն ետևը, բուդուարին դռան մեջ: Չէ՞ որ դերասանուհի եմ՝ հաճույքի, գլարճության առարկա՛ մը, խաղալի՛ք մը բեմին վրա, բոլորին համար, բեմին ետևը՝ մեկ-երկու մասնավորներու: Ծո՛ւ, այդ գարշելի դեմքերը, այդ հայրաս նայվածքները. ահա ի՞նչ սեսակ սեր են առաջարկած ինծի, ի՞նչ սեսակ սիրով են հալածած ետևես, փողոցն փողոց, բառիս բուն նշանակությամբ:

Ու զգվանքի ծամածռություն մը դեմքին՝ դադար առավ նորեն շնչառությունը կանոնավորելու:

– Հրանտ, ես ապրի՛լ կուզեմ. ապրի՛լ քիչ մըն ալ ինծի համար,

ապրի՛լ իմ տենչացած հուզումներովս: Մտի՛կ ըրե, դեռ ո՛չ մեկ տղա չէ մոտեցած ինծի քու զգացումներուդ այդ մաքրությամբը, քու մտածման եղանակիդ այդ ազնվությամբը, ուժովը. ես ո՛չ մեկ տղու դեմ չեմ զգացած, ինչ որ հիմա ինծի դեպի քեզի կհրե: Ի՞նչ կարիք կա քաչքչվելու. պիտցի՛ր, պիչերները երբեմն ամբողջ ժամերով քու համբույդ եմ անրջած միայն. ալ հերի՛ք է, որչափ ինքս իմ հակումներս կուտրել ջանացի. ալ չե՛մ ուզեր դիմադրել. ո՛չ. ալ հոգնեցա. և ինչո՞ւ, որո՞ւ համար: Հրաշնտ, ա՛ռ, քաչե՛, տա՛ր ինծի, ուր որ կուզես, ըրե՛ ինծի հետ, ինչ որ կուզես. ես ապրի՛լ կուզեմ. ես կուզեմ սիրվի՛մ, սիրվիմ քու ամբո՛ղջ սրտովդ, երիտասարդի քու բոլո՛ր կրքերովդ: Ա՛ռ, քաչե՛, տա՛ր ինծի, քու սիրուհի՛դ, քու սարո՛ւկդ, կի՛նդ...

– Ի՞նչ կկռվտիք նորեն իրարու հետ, – լսվեցավ դուրսեն մոտեցող տիկնոջ ձայնը, որ դանակի պես Մինեի թափը կտրեց ու Հրանտի հափշտակված կաչկանդումը:

– Հերի՛ք լեզվի տվիք. քալեցե՛ք վար, մայրիկը պտուղ է չոկեր ձեզի, – ավելցուց կինը՝ սենյակի սեմին վրա կանգ առնելով:

– Ի՞նչ, ո՞վ, – Հարցուց աղջիկը ցրված:

Ու չառաջունած դեմքը չփելեն վերջը կոտրած ձայնով մը կցեց.

– Ա՛խ, ո՛չ. ես երթամ պիտի. գործ ունիմ, չեմ կրնար:

– Չէ ի՞նչ, – բացականչեց կինը: – Սա ի՞նչ գալս էր, ի՞նչ երթալ. քալեցե՛ք վար:

– Ինծի քիչ մը տեղ ճամփու կդնե՞ս, – դարձավ Մինե երիտասարդին:

– Մեյ մը դո՛ւրս նայե, աղջի՛կ, ինչպե՛ս խավարեր է. ուր որ է հիմա անձրևը կսկսի, – առարկեց տիկինը:

– Ոչի՛նչ. Հրանտը ինծի կառք մը կճարե:

– Լ՛, դուն խենթ ես, – ըրավ կինը ձեռքի հուսահատ չարժումով մը:

– Խենթ էի, – չեչտեց աղջիկը:

Ծանոթարհը կձղվեր հոս ու հոն ցանցնած ամուսանոցներու զույգ շարքի մը մեջեն, որոնց կհաջորդեր հաճախ պարտեզի մը երկար կիսափուլ պատը կամ ընդարձակ խոպան տարածություն մը, որ գալիք շենքերու տեղը կփուվեր:

Երկինքը սևցած էր բոլորովին. կապարե ամպերը վար էին կախվեր կովի հսկա ծիծերուն պես՝ կաթկթելու սպառնալիքով. հովը հարավեն կատաղի կփչեր, որուն դիմ պարտեզի պատեն փոդոց կախված ծառերը իրենց գլուխները կերերցնեին հուսահատորեն:

Արդեն սակավաթիվ անցուդարձը դադրեր էր բոլորովին: Ու այդ մինակութեան մեջ Մինեն ու Հրանտ Թև Թևի կքայեին արագ: Հովը կփչեր եռևնուն ու ակամա քայլերնին ավելի կարագացներ:

Աղջկա գլխարկը հովեն պատապարելու համար Հրանտ բացեր էր հովանոցը իրենց ուսին, որուն տակ երկուքը հնար եղածին չափ իրարու սեղմված, կուրծք կուրծքի, դեմք դեմքի, ոտքի նույն չափովը կհառաջանային:

Կցկտուր, խառնակ, տաք, իրար ընդհատող, իրարու հյուսվող փսփսուք մը հովանոցի խավարուտ փոնին մեջ, որ մեջընդմեջ համբույրի մը խորհրդավոր լռութեամբը կմիջակիտվեր:

Այդպես ալ գտան, առանց ոչինչ նշմարելու, տեղ հասնելին իրենց հափշտակութեան, հովի թափին ու հովանոցին տակ, եթե հանկարծ փոթորիկը անսանձ շունչով մը գետնի ամբողջ ավազն ու փոշին օդը չհաներ: Պահ մը ստիպվեցան կենալու՝ կարելիին չափ հովանոցին եռևը պաշտպանվիլ փորձելով ու ոտքերնին պինդ գետնին դիմ տված: Հովանոցին ճառագայթները կորացեր էին փրթիլու աստիճան:

– Ալ չարունակել անկարելի է, – նկատեց տղան: – Փաշայի պարտեզին քովը կառքեր կըլլան կեցած սովորաբար. քալե՛ քիչ մը ավելի առաջ. հիմա կհասնինք:

Ու Թևեվ մը գրկած ընկերուհիին մեջքեն՝ սկսավ վազել հովի հրումին տակ, փոշիի ամպի մը եռևեն, որ անոնց առջևը ճամիան կտվեր:

Տղան սխալած չէր. երկու կառք կար հոն կեցած՝ խոշոր ընկուզենիի թաղ ճյուղերուն տակ պատապարված սպասնացող անձրևեն:

Երբ գույգը այն կողմ ուղղվեցավ, առջևի կառապանը սանձերը վերցուցած էր արդեն:

Հրանտ իսկույն բացավ կառքի վռնակը, օգնեց աղջկան նստելու, ինքն ալ մեկ ոտքը կառքի եզակին՝ ծռեցավ նելու:

– Վայը առաու. իհարկե կսպասեմ քեզի, – նկատեց Մինե՝ տղու ձեռքը իր երկու ափին մեջ առնելով:

Համբուրվեցան:

– Դե՛, ալ այս գիշեր համբույրս անրջելու պետք չունիս, – խնդաց տղան:

Աղջիկը փոխանակ պատասխանի՝ թաթը ծեփեց անոր բերնին ու հոգատար չեչտով մը կցեց.

– Դուն ալ մյուս կա՛ղքը վերցուր. բավական ճամփա ունիս:

– Է՛, ինծի կա՛ղքը ինչ, – բացականչեց Հրանտ ձեռքի ուժգին ու բախտավոր չարժումով մը:

Ամուր մը գոցեց կառքին դռնակը ու առույգ ու զվարթ ձայնով մը պոռաց կառապանին:

– Հա՛յդե, չո՛ւտ:

Մինե հազիվ կրցավ օդե համբույր մըն ալ ձոնել ապակիին եւևեն, որ ձիերը չափ առին:

Դուրսի հովի գալարումներեն ու ոռնումեն ապահով, անիվներու դղրդումեն խուլցած ու զսպանակի անընդհատ ցնցումներուն մեջ օրորուն, Մինե ինկեր էր թուլլ մը անկյունը, աչքերը գոց, հեշտանքի անծիր ողողման տակ: Իրեն կթվեր, թե կտրված էր գետնեն ու վերը՝ օդի ու ամպերու տարածութեյան մեջեն կսլանար. մինա՛կ ու երջանիկ, մինակ իր զգացումներուն հետ, իր զեղած սրտին ու Հրանտի համբույրներուն, որոնք իր չրթունքներուն վրա դեռ կայրեին...

Ը Ա

– Արդեն վերադարձա՞ր, – բացականչեց որբևայրին, երբ աղջիկը կառքեն դուրս ցատկելով՝ ոտքը սեմեն ներս դրավ:

– Փոթորիկը որ սկսավ՝ ուշ մնալ չուզեցի. մե՛կ ալ փոթորիկին հետ թռչիլը, ա՛, հիանալի է, մարդ կարծես թև կառնե. չատոնց է որ այդպես սքանչելի հով ու ադմուկ եղած չուներ:

– Արդեն քու ո՞ր ըսածիդ մարդու խելքը կհասնի. հովին սքանչելին ո՞րն է. այս դժոխքի իրարանցումին սքանչելին էր պակաս. Ննջարանիդ պատուհանն ալ բաց ես ձգեր, զարկավ ապակին ու կոտրեց. գիշերը բացը պառկե՛, որ հասկնաս փոթորիկի սքանչելին:

– Ննջարանի՞ս, իրա՞վ, – բացականչեց աղջիկը կարծես ալ ուրախանալով: – Ավելի աղեկ. և ճի՛շտ ժամանակին:

– Գնա՛, քեզի հետ խոսիլ կարելի չէ, – դժգոհեցավ մորաքույրը՝ դիմքը յուսկատ անդին դարձնելով:

Մինե բարձր սկսավ խնդալ, հարճակվեցավ կնոջ վրան, երկու ձեռքով կախվեցավ անոր ուսերեն՝ հծծելով:

– Մորաքո՛ւյր, ձեր ննջարանն ալ օդանցք մը բանալ տուր Հովին. այդպես աղեկ է. թա՛րմ, թա՛րմ օդ. նո՛ր, կհասկնա՞ս, նո՛ր:

– Ի՛հ, – ըրավ կինը տրտունջի չեչտով ու Մինեի ձեռքերը ուսերեն վար թոթվելով: – Դուն ինծի ան ըսե՝ ինչպե՞ս են քույրս, մայրիկը:

– Աղեկ են, ամենքն ալ շատ աղեկ. ի՞նչ հարցնելու բան է:

– Իսկ սերկևիլներուն համար ի՞նչ ըսավ:

– Ի՞նչ սերկևիլ. հա՛ա, հարցնելու ժամանակ չեղավ:

– Ի՛հ, բանի պետք չես: Ժամանակ չէ եղեր. այսքան ատեն է աչքկապո՞ւկ խաղացիր:

Ու դժգոհ մտավ քովի սենյակը:

«Աչքկապո՞ւկ խաղացիր»:

Մորաքրոջը այս անսովոր արտահայտությունը Մինեին շատ ծիծաղելի եկավ. շրթունքներուն մեջեն քանի մը հեղ կրկնելով՝ ելավ իր սենյակը:

Իր սենյակը առաջին աչքին ինկածը փոշոտած արվեստական ծաղիկներու խոշոր զամբյուղ մը եղավ, որ վերջին ներկայացմանն էր նվեր ստացեր:

Վրան տարօրինակ տպավորություն մը ըրավ այդ կեսը թափթփած, չորցած, թուղթերը դունաթափիլ սկսած զարդը, որ առհասարակ հագիվ իր ուշքը կզրավեր ուրիշ առեն:

«Անույշալի մը ավելցակը», – մտածեց ժպտելով:

Ու հայելիին դեմը անցած՝ անփույթ շարժումով մը սկսավ գլխարկը հանել: Միայն կամքին հակառակ՝ քանի մը անգամ ստիպվեցավ հայելիին մեջ հայացքը զամբյուղին անկյունը ուղղելու, տեսակ մը գողունի, որ կարծես մարդ չտեսնեն:

Վերջը հանկարծ կրունկին վրա դարձավ, մոտեցավ գրասեղանին, որուն վրա խառն ինկած էին իր դիերերը պարունակող քանի մը

տեսրակները, թատրոնական մեկ-երկու ամսագիր ու դեզ մը լուսանկարներ, գլխավորապես հռչակավոր դերասաններու: Նայեցավ պահ մը, մտածին ծայրովը քանի մը հատը չարժեց զգուշ ու անշարժ մնաց՝ աչքերը իր տեսրակներուն:

Նախ տարտամ անհանգստութիւն մը եկավ վրան, վերջը սենյակը խորթ թվեցավ իրեն ու անախորժ, կահերը, գորգը, սեղանը: Ու այդ ամենը աչքեն հեռացնելու համար մոտեցավ պատուհանին, սկսավ դուրս դիտել:

Պատուհանեն չեղակի կերևար ծովը, որ հիմա գայրույթեն գունաթափ մարդու մը պես դեղներ էր ու դեմքին բոլոր մկաններովը կցնցվեր ամբողջ ընդարձակ տարածութեյան վրա:

Աչքերը անթարթ ջրի այդ ջղուտ կծկումներուն հառած՝ կմտածեր: Ու իր հիշողութեյան մեջեն արագ կվազեին այդ տեսրակներուն ու զամբյուղին կապված տեսարաններ, խոսքեր, բեմ, քուլիս, ընկերներու դեմքեր՝ ցիր-ցան ու ոստոստուն:

Աղջիկը բոլորովին տխրեցավ, դեմքին կենդանութեյունը թռավ վերջնականապես, ճակատը փակցուց ապակիին, ու աչքերը գոցվեցան:

«Ջմտածել, չմտածել, մինչև կամաց-կամաց վարժվիմ», – փսփսաց լսելի ձայնով, չտկվեցավ, գնաց-եկավ սենյակին մեջ մեկ-երկու անգամ ու վճռեց բանով մը ինքզինքը զբաղեցնե:

Սենյակը արդեն մթնած էր, ու հովը դուրսը կաղմկեր: Վառեց ճրագը, դրասեղանին առջևը անցավ, տետրակ, գիրք ու նկարներ տենդոտ չարժուումով մը ժողվեց լեցուց անդին՝ սեղանին մյուս ծայրը, բացավ վեպ մը, գտավ իր նշան դրած տեղը, բայց կարդալ չկրցավ. գիրքն ալ նետեց ու քաշեց սեղանին գզրոցը, սկսավ հոն թափված հին նամակները քրքրել. ասիկա զբաղեցուց:

Սակայն հազիվ քանի մը հատը արագ ու թեթև աչքե էր անցուցեր, որ մեկուն վրա կանգ առավ լուրջ: Թիֆլիսեն էր, ընկերուհիե մը, որ իբրև սիրող երկու-երեք անգամ նույնպես եղած էր բեմի վրա:

Այ ու ձախ սմեն տեսակ նյութերու մեջ խառն կգրեր, թե հիմա ինքն ալ որոշած է լրջորեն գործին հետևելու և հույս ունի տևականապես միանալու նոր խմբին, որ քանի մը աչքի իյնող դերասաններ կազմելու վրա էին: Ու երկար-բարակ կպատմեր, թե ինչպես մեկ-երկու հարուստ

երիտասարդներ տրամադիր էին դրամագլուխ մը դնել իրարու փոնդ, և մեկ այս անգամ գործը Հավանորեն քալելու էր. արդեն կմտածեին նոր ուսերտասարդի, բեմային արհեստագիտական նորամուծմունեներու մասին. նույնպես և ջանքեր կընեին քիչ-շատ Հայոնի դերասանական ուժերը միացնելու և, ինչպես ինքը լսած էր, հրավիրելու էին և Մինեն:

Նամակը վերջացած էր շատոնց, բայց ան դեռ միշտ թուղթը ձեռքին, աչքերը վերջին տողերուն՝ նստած էր խորասուզված. կարծես կկարդար դեռ, սակայն իրաք ո՛չ կկարդար, ո՛չ ալ նույնիսկ կմտածեր: Ծմրող, քարե զգացում մը կրծքին վրա, անդարձ կորուստի մը բուռ պիտակցությունը զլխուն մեջ՝ արձանացեր էր:

Հովը ուժգին թափով մը զարկավ Հանկարծ. պատուհաններուն ապակիները սարսռացին, ու հծծող ձայներու ամբողջ ոհմակ մը շրջանակի ճեղքերեն ներս սուլեց:

Մինն սթափեցավ կաշկանդումեն, թևերը քիչ մը բարձրացուց ու ծիծաղի նմանող վայրի ձայնով մը.

– Ծախեցի՛, արվեստս ծախեցի, – ծվաց ակռաներուն մեջեն ու ձեռքի նամակին հետ միասին դեմքին վրա ինկավ սեղանին:

Ամենմարթ մը:

Իսկույն ցատկեց ոտքի, նամակը նետեց գդրոցը, կզպեց, հագուստին դարակեն դուրս քաշեց Հավըոքը, հագավ արագ ու մինչև ոտքերը Հասնող կոճակներու մինչև վերջինը կոճկելով՝ վար իջավ սանդուղներեն:

Հայտնեց մորաքրոջը, որ մինչև ընթրիք նորեն կվերադառնա. բասիշոնը անցուց գլուխը ու նետվեցավ փողոց, ուժեղ Հովին մեջեն պետի ընկերուհիին տունը:

«Պետք չէ մտածել, պետք է մոռնա՛լ. այդ բոլորը մեկ անգամ ընդմիշտ պլսեն դուրս վանելու է. մեկ անգամ ընդմիշտ»:

Դուռը բացողը Արտ այակի մայրն էր:

– Դո՞ւն ես: Ա՛յ, իմիչ անսանելի Հով. չո՛ւտ գոցե դուռը: Եկուր նայե՛, ներսը ուրիչ Հյուր ալ կա, – ըսավ կինը ու նորեկը առաջնորդեց փողոցի դռան կից փոքրիկ սենյակը, ուր Արտայակ ապատոդական պլրքով դեպի մուտքը կնայեր, մինչ անոր դեմ՝ լամպը կրող սեղանին մոտիկ, նստած էր Գրիպորիկ՝ ծունկերուն դրած գրքի մը Հետ խաղալով:

– Վա՞յ, Դուք նորեն Հոս եք, – Հարցուց Մինն տեսակ մը չնչտող կատակով:

– Շոգենավեն կդառնայի, օրիորդը պատուհանը գոցելու վրա էր, դուրսն ալ գարշելի հով, հանդիպեցա վայրկյան մը, – կարկոտեց տղան՝ ձեռքը անոր մեկնելով:

– Գարշելի հովը, իհարկե. բոլոր հանցանքը անորն է, – վրա բերաւ Մինե ծիծաղելի լրջութեամբ մը ու քապիշոնը գլխեն ուսերուն ձգելով: – Այդ գարշելի հովին ձեռքեն արդեն անկարելի է այս ծովափեն հանդիստ անցնիլը. ամեն բան տակնուվրա կընե՝ հապո՛ւստ, մազե՛ր և, ըստ երևույթին, նաև սրտեր...

– Բախտակից մարդիկ իրար կփնտրեն. զարմանալու ի՞նչ կա, – հարեց Արուսյակ՝ մելամաղձոտ, հոգնած անփութութեամբ մը բազկաթոռին մեջ տեղավորվելով: – Աննպատակ ու ճամփեն չեղած կյանք մը իմս, այդ տեսակ գծեն ելած կյանք մըն ալ պարոն Գրիգորիկինը. արդեն ճիշտ այդ մասին կխոսեինք, երբ դուռը զարկիր:

– Ուրիշ խոսքով՝ ձեզի խանգարեցի, – ժպտեցավ Մինե՝ վերջին բառը բուն աղջկային չարամտութեամբ մը ընդգծելով:

– Բնա՛վ:

– Սակայն կհետաքրքրվեի գիտնալու՝ ատ ինչպե՞ս է, որ պարոն Գրիգորիկի կյանքն ալ այդպես հանկարծ «գծեն ելած» է դարձեր: «Քու գծեն ելած» կյանքիդ պատմութիւնը շատ եմ լսեր, բայց պարոն Գրիգորիկինը նորութիւն է ինծի համար:

– Ձեզի համար գուցե, բայց դժբախտաբար ո՛չ ինծի համար, – պատասխանեց ինքը տղան՝ վերին աստիճանի հուսահատ դեմք մը առնելով:

Գլխակոր, ձեռքի դիրքը քիչ մը այս ու այն կողմը դարձուց ծունկերուն վրա ու վշտաբեկ ձայնով մը ավելցուց.

– Է՛, օրիո՛րդ Մինե, Դուք գտեր եք Ձեր կյանքի չիտակ ուղին ու հաստատ քայլերով առաջ կերթաք. Դուք ի՞նչ գիտեք հոգեկան վարանումի, նեղքին ինքնիրմե դժգոհութեան խոշտանգիչ զգացումները. դեռ ավելին. ուղղակի դավաճանութիւնը դեպի իր եսը, դեպի իր ուժերը, իր տաղանդը: Մարդ զգա, որ ինքը ձիրք ունի ու չնորհք, որ ստեղծված է գեղարվեստներու պաշտամունքին համար և տեսնե, թե ինչպես, իր կամքին հակառակ, կանցնին օրերը ապարդյուն կյանքի չնչին գործերուն մեջ. ուժերը կմնան առանց գործադրութեան, և աստվածային կայծը, որ

Հոգիիդ խորքը կպլպլա, չի՛ արծարծեր ո՛չ մեկուն զգացումները. և նևրշնչմանդ մտքերը, որ մթնշաղի առանձին վայրկյաններուն Հոգիիդ եթերին մեջեն կզիդպպեն, անդառնալի ու անհետ կկորչին անօգուտ. անօգուտ մարդկութեան համար, հառաջադիմութեան համար, անօգուտ ապագային համար:

Ու ընդոստ չարժումով մը գիրքը դրաւ սեղանին՝ չարունակելով դառնասիրտ.

– Դուք կրնա՞ք ըմբռնել այն անտանելի կյանքը, որ ես կվարեմ: Մտածեցե՛ք անգամ մը. ամբողջ օրը փոշոտ, տաք ու նեղ գրասենյակին մեջ, անվերջ հաչվեհատերուն վրա կքած. թվանշաննե՛ր, հավիտենական թվանշաններ, որոնք Հոգիիդ ոչինչ չեն խոսիր. մինչ միտքդ իր ամբողջ թարմութեյամբը, իր բովանդակ բանաստեղծական գերադրդռտութեյամբը լա՛ցը կձգտի՝ մարգագետնի առավակներուն անդադրում վեճերը վճռելու, անտառներու շրշյունին մեջեն բնութեյան սրտին գաղտնիքները կարդալու: Հաչվապահ մը, որ բթացած ուղեղով ամեն իրիկուն տուն կդառնա՝ հոն ավելի ազատ գիտակցելու համար, որ իր պոետի վսեմ կոչումեն օր մըն ալ կորսնցուց անդարձ:

Մինե, ինքն ալ չգիտեր ինչո՞ւ, սկսավ սրտնեղիլ:

– Ձնմարիտ դեռ չհասկցա՝ ինչո՞ւ համար է այդ բոլոր տանջանքը. ապե՛ր, ինչո՞ւ ուրեմն չեք հետևիր ձեր «պոետի վսեմ կոչումին», ինչպես որ կըսեք:

– Արգելքներ, անվերջ արգելքներ, ապնի՛վ օրիորդ, որոնք մեր անճոռնի իրականութեյան մեջ տաղանդներուն առջև պատնեշ կքաչեն:

– Պարա՛պ խոսքեր, տաղանդը իր ճամփան կբանա. իսկական ուժը պատնեշներ չի ճանչնար, բարեկա՛մ. տաղանդի դեմ արգելք չկա, – բացականչեց Մինե ինքն ալ տաքնալով:

– Ախ, օրիո՛րդ, կան, դժբախտաբար, տաղանդի համար ալ արգելքներ կան, – հծծեց տղան մելամաղձոտ՝ գլուխը երերցնելով:

Մինեի կռնակն ի վար կարծես հանկարծ պաղ ջուր լեցուցին, ցնցվեցավ ու շրթունքը խածած՝ աչքերը ճգեց գետին:

Անդրադարձեր էր իր վիճակին վար:

Այդ տղան իրավունք ուներ. արգելքներ կային: Ջէ՞ որ ինքն ալ հիմա իր արվեստի վաճառանոցեն կուգար:

«Վաճառանոցե՞ն...»:

– Այսինքն, գոնե ընդհանրապես առած, – շարունակեց երիտասարդը նույն կոտրված չեչոտվը: – Բացառիկ ուժեր կան իհարկե, բացառիկ ընդունակություններ, որոնք անխտիր ամեն բան ոտքի տակ տալ կրնան իրենց կոչումին ծառայելու համար. բայց ատիկա ամեն մարդու բան չէ, ամեն տաղանդի ալ բան չէ: Ես կհասկնամ Ձեզի. Դուք ինքզինքնիդ աչքի առաջ ունիք, երբ այդպես վստահորեն՝ արվեստը արգելք չի ճանչնար՝ կըսեք. բայց Դուք, օրիո՛րդ, հազվագյուտներեն եք, մի՛ մոռնաք:

– Իմ մասին չխոսինք, – ընդհատեց աղջիկը կոչտ:

– Մի՛ վրդովիք. ես Ձեր այդ հպարտ համեստությունը անշուշտ վիրավորել չեմ ցանկար. սակայն և անկարող եմ չկրկնելու, որ Դուք արդեն միշտ իմ զարմանքիս ու հիացումիս առարկան եք եղած. Ձեր արվեստը, Ձեր հոգեկան ուժը, կամքը ես իբրև չնաչխարհիկ երևույթ մը կնկատեմ, որուն առջև մարդ ակամա խոնարհի պիտի:

Մինչ ծնոտները սեղմած՝ ձեռքի դժգոհ ու զայրացկոտ շարժում մը ըրավ. երիտասարդը ստիպվեցավ իր ներբողը ընդհատելու, ժպտեցավ ու կցեց.

– Իսկ սովորական մահկանացուներս թուլլ էակներ ենք. կյանքի մանր պետքերուն ու ընտանեկան կապերուն տակ ա՛լ ավելի չղթայված: Կյանքի հոսանքը ուժեղ է. տնային պետքեր, հոգեր, քույր, մայր կկաշկանդեն, կխեղդեն տաղանդն ալ, արվեստն ալ: Մարդ նախ դիմադրել կմտածե, վերջը կստիպվի քիչ մը տեղի տալու: Մեյ մըն ալ կտեսնես՝ ինկեր ես հոսանքին ճիշտ մեջտեղը, որ իր անագորույն ալիքներուն վրա վար կքչե քեզի ալ մյուս հազարավորներուն հետ, մյուս հազարավորներուն պես:

Եվ աթոռին վրա չտկվելով՝ փոխված ու կատակող չեչտով մը ավելցուց իսկույն.

– Բայց, է՛, մարդ ամեն բանի վերջապես կչարժվի. այդպես ալ հոսանքն ի վար, երբ մանավանդ օրիորդ Արուսյակի նման վիճակակցի մը ընկերությունը ունի իր հետ. չէ՞, օրիո՛րդ: Օրիորդ Մինեն չի հասկրնար, թե ինչ ըսել է գծեն ելած. բայց Դուք ու ես, մենք իրար կհասկնանք. այնպես չէ՞:

– Այո՛, դժբախտաբար, – պատասխանեց Արուսյակ կեղծ հառաչանքով մը ու նահատակուհիի մը դեմքը հագնելով:

Հանկարծ վայրկեի աչք ծակող ճերմակ լույսը ողողեց ակնթարթի մը սենյակը, և հաջորդող խլացուցիչ որոտը տան պատերը դողացուց:

– Հիսո՛ւս Քրիստոս, – բացականչեց Արուսյակ սարսափած:

Մինեն ալ ցնցվեցավ:

– Ա՛խ, օրիո՛րդ, խոսքի բռնվեցանք, իսկ տունը հիմա ինծի կապասեն. չտապեմ, քանի անձրևը չէ սկսեր, – ըսավ երիտասարդը ոտքի կկենալով:

– Այո՛, այո՛, ե՛ս ալ, – կցեց Մինե արագ իր մտածումներուն մեջեն, տեսակ մը ցրված ու մեքենաբար, չարժումներն ալ, խոսվածքն ալ:

Փողոցի դռան ներսը իրարու ձեռք տվին:

Գրկպորիկ կուզեր ընկերանալ օրիորդին մինչև տուն, բայց աղջիկը բացարձակապես մերժեց՝ պնդելով, որ ինքը այդ վողոցներուն մեջ առանձին երթալու փույթ չըներ, և որ ընդամենը քանի մը քայլ ալ տեղ է:

Ու սպացավ դռնեն դուրս դեպի ձախ, մինչ տղան ծռեցավ դեպի աջ, որուն եռևեն հովը իր ամբողջ թոքերովը կփչեր: Հագիվ երկու քայլ ըրեր էր վողոցին մեջ, որ հանկարծ ոտքը դեմ տվավ գետնին, կեցավ, դարձավ ետ ու պոռաց խոր մութին մեջ.

– Կտեսնե՞ք, օրիո՛րդ Մինե, ինծի հովը ինչպես կքշե. որ կըսեմ, չեք հավատար: Ես միշտ հովերուն հետ, որոնք ինծի վա՛ր կհրեն, տո՛ւն, դեպի ընտանիք. իսկ Դուք, Դուք միշտ հովերուն հակառակ, հապա՛:

Ու սրախոսութենեն կատարյալ գոհ՝ գլուխը կծկեց օձիքին մեջ ու սկսավ գրեթե վազել հովի թևին տակ:

Մինե ծանր կքալեր. ստիպված էր ծանր քալելու: Շենք-չնորհք կռիվ մըն էր Մարմարայի հարավեն իր վրա գլոհ տվող օդի վիթխարի հոսանքին հետ, որ իր հազարավոր խառնակիչ ձեռքերը աղջկան հագուստներուն մեջը խրած՝ ետ-ետ կմղեր:

Մինե մեկեն հաճույք զգաց այդ վայրագ դիմադրութենեն, սիրտը սկսավ արագ բաբախել, գլուխը ավելի ծռեց հովին դեմ հարու տալու դիրքով մը ու չունչը հրահրած՝ կրկնակի ուժ տվավ քայլերուն:

«Հոսանքին դե՛մ, հոսանքին դե՛մ...», – կիսափսար իրարու գամված ծնոտներուն մեջեն:

Իրմեն երկու քայլ աջ ծովն էր, որ նույնպես հովին հետ կռվի բռնված՝ զայրույթեն կոռնար, կգալարեր բոլոր մկաններովը անոր քմայքին չենթարկվելու համար ու իր կատաղությյան լորձունքը խոշոր փերթերով կնետեր դուրս՝ քարափին վրա, մինչև աղկան ոտքերուն տակ:

Ու վե՛րն ալ մեկը հերստած կմռլտար ամպերուն մեջ խո՛ւլ, հեռավո՛ր ու սպառնալից որոտումով մը:

Ամեն քն ալ թաղված հոծ խավարին մեջ, որը մեղմել չէին կրնար հոս ու հոն տնկված լապտերները իրենց փոշոտ ու մրոտ ապակիներուն ետևեն և լույս տալու փոխարեն իրենք կզողդղային իրենց թրթռացող ապակիներովը, երկյուղեն ակռաները իրարու զարնող վախկոտի մը պես:

Մինե թեքվեցավ ձախ ու իրենց փողոցը մտնել կուզեր, որ հարկադրվեցավ պատը բռնելու ու քայլ մը ետ առնելու: Փողոցեն ու ծովու բացեն փչող հովի երկու հոսանքները հոդ իրարու ձուլվելով՝ անդիմադրելի թափ մը առեր էին, որուն դեմ աղջիկը հանկարծակիի եկավ:

Իր այդ ակամա նահանջեն ալ զայրացած՝ սեղմեց բռունցքները կրծքին, կծկեց բոլոր մկանները ու ամբողջ ծանրությամբը հովի առաձգական լանջին վրա ինկած՝ փորձեց այդ անկյունեն անցնելու դիպի դիմացի պատը:

Ջկրցավ:

«Անցնի՛մ պիտի, ես անցնի՛մ պիտի», – պոռաց կատղած, վայրի, համառ չեչոտով մը հովի դեմքին. ու կամքի գերագույն ճիգով մը կծկվեցավ, ավելի խոնարհեցավ վար, հրե՛ց, ոտքին մեկը փոխած էր արդեն. քա՛յլ մը, քա՛յլ մըն ալ...

Անցած էր...

ԺԲ

Մազերը խառնակ, անխնամ հագուստով, ձեռքերը մեջքին՝ անվերջ կերթևեկեր Մինե փոքր սենյակին երկայնքովը, չարունակ դուռնեն մինչև պարտեզի վրա նայող բաց պատուհանը, ուրկե արևի պայծառ լույսին

Հետ առատ ներս կխուժեին թաց հողեն բարձրացող նուրբ գոլորշին ու անձրևեն լվացված ծաղիկներուն արթնցող բուրումը:

Մինե կքալեր չրթուններները պինդ սեղմած, ճակատը կնճռոտ ու կեղրոնացած մտածման մը վրա: Ամեն անգամ վարը տան դուռը զարնվելուն՝ կանգ կառներ չնչարգիլ ու ականջ կդներ լարված, սարսափեն սրտատրոփ. միգուցե եկողը Հրանտը ըլլար. թեև տենդոտ անհամբերությամբ միայն անոր կսպասեր ժամերե ի վեր:

Ամբողջ գիշերը մաքառումի, կշռելու, ինքզինքը համոզելու, ցավի ու հուսահատ արցունքներու անընդհատ շղթա մըն էր եղած: Եվ այդ լեղի տանջանքի երկունքեն ծներ էր վերջապես առտվան լույսին հետ իր հին վճռի անողոք վավերացումը միայն, թե անցյալի ճգտումներեն վերջնորեն ձեռք վերցնել իր բանը չէ՛ր, թե իր ու Հրանտի մեջ եղած կապը ոչինչ բախտավոր բերել չէր կրնար ո՛չ իրեն, ո՛չ տղուն. պետք էր խզել:

Դուռը զարկին. վա՛րը: Սարսուռ անցավ աղջկա մարմնեն:

Կեցած տեղը արձանի պես քարացած՝ լսեց, թե ինչպես մորաքույրը խոհանոցեն դնաց դուռը բացավ, ճանչցավ Հրանտի ձայնը, որ կնոջ հետ պահ մը խոսքի բռնվեցավ: Խոսակցությունը կտրվեցավ հանկարծ, ու Մինե որոշեց տղուն քալվածքը, որ հիմա սանդուղներեն վեր կելլեր:

Սիրտը կեցավ ակնթարթ մը զարնելե:

– Ո՞ւր ես: Բարև՛, Մինե՛, ի՞նչ կընես հոդ:

Հնչեց տղու զվարթ ձայնը դեռ հազիվ սենյակի սեմին վրայեն, ու թևերը առաջ մեկնած՝ չտապեց դեպի աղջիկը:

– Կեցի՛ր, կեցի՛ր, մի՛ մոտենար...

Անճանաչ, հուսահատ հնչյուն մըն էր, որ Մինեի շրթուններեն դուրս թռավ:

Հրանտ ցնցվեցավ, կեցավ ու նոր նկատեց աղջկան գունատ ու սյալակերպ դեմքը:

– Մինե՛, դուն հիվա՞նդ ես. ի՞նչ է պատահեր, – բացականչեց տղան տարտամ նախազգացումով մը, ինքն ալ գույնը թռցնելով:

– Ոչինչ, ոչի՛նչ... ինծի լսե՛, Հրա՛նտ. երեկ քեզի ինչ որ ըսի, ինչ որ մեր մեջ անցավ, իհա՛րկե, պիտես դուն, վայրկյանի խուսափուկ տրա-

մաղրուէյուն մըն էր միայն. անշուշտ լուրջ կարևորութիւն չե՜ս տար այդ բոլորին. ատիկա անկարելիութիւնն է:

– Մինե՛... – միայն կրցավ արտասանել երիտասարդը, այնքան անսպասելի էր կրած հարվածը:

Իսկ աղջիկը վրա տվավ իսկույն՝ ամբողջ մարմնով դողդոջուն.

– Լռե՛ ու մի՛ դժվարացներ գործս. չգիտեմ՝ կրնա՞ս երևակայել, թե հիմա ինչ կդառնա մեջս: Բայց, է, կրնաս թե ոչ՝ նո՛ւյնն է վերջապես. այս ամբո՛ղջ, ամբողջ գիշերը խորհեր եմ ես. խնդրի ամեն կետը, ամեն կողմը. չկա՛, ուրիշ ելք չկա՛. և հավտա՛, նույնիսկ քու օգտիդ: Լսե՛, Հրանտ, եթե հիմա արվեստս թողած քու ետևեդ ալ գամ, ես երբեք սրտանց քեզի ներել պիտի չկրնամ. ու գուցե քիչ-քիչ պարզապես հափշտակիչ մը, ընդունակութիւններս բռնաբարող մը դառնաս աչքիս, տեսակ մը բռնավո՛ր, բանտապա՛ն: Մինչ դո՛ւն, Հրանտ, դուն իմ միակ սերս ես, ու իմ այդ զգացումս պետք չէ, որ իյնա ու լղճի: Ես կընտրեմ քեզմե հեռո՛ւ, մի՛շտ հեռու, բայց սիրտս քեզմով լեցուն ու մտքերս ալ միշտ հափշտակված դեպի քեզի: Կտեսնե՞ս, պե՛տք է, որ դուն ինծի հասկնաս. պետք չէ մեղադրես ինծի:

Հրանտ կեցած էր մեկ ձեռքով քովի աթոռին հենած, գլխարկը դեռ ձեռքը, տարօրինակ ժպտուն-ապուշ դեմքով մը, որ հետզհետե խոժոռ արտահայտութեան մը տեղի տվավ. ունքերը հավաքվեցան, շրթունքներուն երկու անկյունները կախվեցան վար. աղջկա աչքերուն դեմ կարծես տասնյակ մը տարի ծերացավ:

Երբ Մինե լռեց, տղան առանց ոչինչ առարկելու գլուխը քիչ մը ավելի բարձրացուց, չտկվեցավ, դարձավ ետ ու դեպի դուռը:

– Հրա՞նտ... – պոռաց աղջիկը խելագար ձայնով մը:

Տղան ակամա կեցավ ու նայեցավ ետ:

Լո՛ւռ...

Մինե երկչոտ, դողդոջ ու վարան երկու քայլ մոտ եկավ:

– Կուզես այսպես ձգես ու երթա՞ս. առանց ինծի բառ մը ըսելո՞ւ:

– Ի՞նչ կուզես, որ ըսեմ:

Լսվեցավ տղու փոխված ձայնը չոր ու խեթ շեշտով մը, որուն իսկույն կծու երգիծանքը հաջորդեց.

– Դուն արդեն ըսիր պետք եղածը. գուցե և պետք եղածեն ավելին:

Հիմանդ ժպիտ մը եկավ դեմքը, ու կուզեր նորեն դեպի դուռը:

– Հրա՜նտ, Հրա՜նտ, սպասե՛. եթե ինծի կսիրես, եթե ինծի... Այսպես ձգես երթա՜ս. անկարելի՛ է. ես կվհենթամամ: Սպասե՛, դուն պետք է ինծի հասկնաս, դո՛ւն... Ձե՛ռքդ, ձե՛ռքդ տուր ինծի...

Ու անհամարձակ քնքուշութեամբ մը երիտասարդի ձեռքին դպավ:

– Թո՛ղ, հոգիդ սիրես, այդ դերասանական ձևերը մեկդի. չնորհքդ պահե՛ բեմին. ալ ի՞նչ կուզես ինծմե: Մի՛ վախնար, դուն չե՛ս խենթենար:

Ու արդեն ձգած եկած էր սենյակեն:

Այդ արհամարհանքը լախտի հարվածի մը պես իջավ աղջկա գլխուն: Շշմած ու անշարժ մնաց իր կեցած տեղը՝ երկու ձեռքը դեռ առաջ մեկնած, բան մը բռնել ուզողի դիրքով, ծնոտը կախված, դեմքը երկար, բերանը բաց ու աչքերը անխնամ փայլով մը:

Երբ վարի դռան դոցվիլը լսեց, սոսկալի ցավ մը ծակեց սիրտը, կաշկանդումը լուծվեցավ, ու մե՛կ պաղափար մը միայն գոռալ գանգին տակ. վազե՛լ, հասնի՛լ տղուն եւևէն...

Դողացող ձեռքերով, բոլորովին մեքենաբար գլխարկը չոտպ մաղերուն անցուց ու կրկնոցը ուսերուն նետելով՝ սլացավ սանդուղներեն վար:

– Ո՞ւր այդպես նորեն խենթի պես: Հրանտը ինչո՞ւ չի մնաց, – հնչեց խոհանոցեն մորաքրոջ ձայնը, երբ Մինե արտորալով տան դուռը կբանար:

Աղջիկը ոչինչ լսեց. դոցեց դուռը ուժով մը:

Ո՛չ փողոցի ցեխը, ո՛չ լճացած ջուրերը, ոչինչ չնչմարելով՝ աճապարից դեպի նավամատույց, ուր կառքերը կկենային: Ցառկեց առաջին հանդիպած դոց կառքին մեջ, որուն դուռը վերեն կառապանը արդեն բացեր էր:

– Շո՛ւտ, չո՛ւտ, արա՛գ, – պոռաց մարդուն կռնակին:

– Ո՞ւր, – հարցուց կառապանը՝ իր նստարանեն դեպի կառքին ներսը ծռիլ ուզելով:

Ո՛ւր...

Եվ իրավ, ո՞ւր. ո՞ւր պիտի գտներ տղան, տո՞ւնը. Մինե վախցավ Հրանտի մորը երեսը նայելու գաղափարեն անգամ. ի՞նչ էր ըսելու

տնեցիներուն. և ինչ պիտի ըսեր վերջապես տղուն, ինչ կրնար ըսել. ինչ խորհուրդ. չէ՞ որ ալ ամեն բան վերջացած էր, կորա՛ծ, կտրվա՛ծ...

– Բայց ո՞ւր, – կրկնեց կառապանը վերեն, արդեն դժգոհ ու անհամբեր:

– Ինչ՛. մե՛կ է. ո՛ւր որ կուգես. միայն հեռո՛ւ, հեռո՛ւ, քաղաքեն դո՛ւրս:

Ան այլևս հրաման չէր, բևեռված, թույլ, ուժասպառ աղաչանք մը միայն:

Կառապանը ճերմկոտած երկայն պեխերուն տակեն ակամա ժպտեցավ, իր բարձունքեն զարկավ պոցեց կառքին ղուռը, կասկածոտ երկմտութեյամբ մը շարժեց գլուխը, իր աչխետ ձիերուն փաղաքչանք մը մռլտաց ու սանձերը թոթվեց:

Եվ կառքը աջ ու ձախ ցեխի անձրև մը սրսկելով՝ ծովուն գուգընթաց վար սլացավ:

Մինե անկյունը հինկած, դեմքը թաչկինակին մեջ, կուլար:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1892 թվականին Շանթը գնում է Գերմանիա և Լայպցիգի, Ինսբրուկի ու Մյունխենի համալսարաններում ուսանում է բնական գիտություններ, մանկավարժություն, հոգեբանություն, գրականություն և գեղարվեստի պատմություն: Նրա ուսուցիչն էր աշխարհահռչակ հոգեբան Վունդտը:

19-րդ դարի 80-ական թվականները բնական գիտության հաղթանակի տարիներն էին: Շանթը տարվում է բնական և սեռական ընտրության, Դարվինի գոյության պայքարի ուսմունքով, Նիցշեի գերմարդու փիլիսոփայությամբ և անհատապաշտ Իբսենով: Շանթը յոթ տարի ապրել և ուսանել էր էջմիածնի Գևորգյան հոմարանում: «Սա մի միջավայր էր ազգային մտածումի և զգացումի, ուր ներչնչում էին բոլորանվեր անձնուրացություն հանուն ազգի և հանրության չահերի» (Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ.1, Բեյրութ, 1959, էջ 78): Սակայն «Գրական և իմաստասիրական» նոր «Հոսանքների և բնական գիտությանց զորավոր ազդեցության տակ քայքայվում են Շանթի բարոյական ըմբռնումները: Իր մեջ չնչավում են անհատն ու անձը և բարոյական սկզբունքները արժևորվում են այդ տեսակետից» (նույն տեղում):

Մինչև 1904 «Թվականի իր բոլոր գրվածքներուն մեջ բացահայտ է մեկ բան, որ այդ բոլորին մեջ տիրապետողը միտքն է և անհատը՝ իր եսական ձգտումներով... Հեղինակին ամբողջ համակրանքը կկենդրոնանա իր այն տիպարներուն վրա, որոնք կամք ունին դիմագրավելու..., որոնց մեջ գործավոր է հան ու անհատականությունը» (Գասպար Իփեկյան, Շանթի գրական վաստակը, «Ակոս», 1952, թիվ 2-3, էջ 49):

Պատահական չէ, որ Շանթի այս շրջանի գործերի մեջ առանձնապես հիշատակվում են Սպենսերի, Դարվինի, Նիցշեի, Իբսենի անունները:

Գերմանիայում 1894-98թթ. ստեղծվում է նրա քառյակ վեպերի չարքը՝ «Դուբսեցիները», «Վերժին», «Դարձ» և «Դեպատանուհին»:

ԴՈՒԲՍԵՑԻՆԵՐԸ (էջ 5)

Վիպակը գրված է Լայպցիգում 1894թ.:

Առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրում, Թիֆլիս, 1895, թ. 11, էջ 1351-1380, թ. 12, էջ 1556-1591, 1896, թ. 1, էջ 27-59, թ. 2, էջ 181-218: Այնուհետև առանձին վիպակով՝ «Մուրճից», Թիֆլիս, տպ. Ռոսինյանցի, 1896թ.:

Շանթի կենդանության ժամանակ վերջին անգամ հրատարակվել է «Լևոն Շանթի երկերի» Ա հատորում, Բեյրութ, 1946թ.:

Սույն հրատարակության համար հիմք է հանդիսացել 1946թ. հրատարակությունը:

Էջ 33, տող 2: Ծաղկազարդ (եկեղ.) – Զատկի նախընթաց կիրակին, որ համարվում էր նոր կանաչի՝ ծիլ ու բողբոջի տոն. ծառազարդար:

Էջ 33, տող 3: Դռնբացեք (եկեղ.) – Ծաղկազարդի երեկոյան եկեղեցու վարագույրը բանալու արարողությունը:

Էջ 33, տող 3: Խթում (եկեղ.) – Մննդյան տոնին և Զատկին նախորդող պասը լուծելու օրերը. նավակատիք:

Էջ 46, տող 14 ն.: Տորիչելյան դատարկություն – ունայնություն:

Էջ 49, տող 2 ն.: Կիկերոնի «Ճառ հաղագս բարեկամության» – Ցիցերոն Մարկուս Տուլիոս (մ.թ.ա. 106-43), հին հռոմեական հռետոր, փիլիսոփա, քաղաքական գործիչ, պահպանվել է 58 ճառ՝ քաղաքական, դատական, փիլիսոփայական, բարոյագիտական: Ցիցերոնը քննում է առաքինության, բարոյական պարտքի և անձնական օգուտի հակասության հարցերը, կոչ է անում հետևելու մարդու մեջ ներարկվա բնությանը:

Էջ 49, տող 1-2 ն.: Մխիթար Այրիվանեցի – Մխիթար Երևանցի (ծն. և մահ. թթ, անհայտ են), XIII դարի հայ մատենագիր, պատմիչ, բանաստեղծ, մանկավարժ, եկեղեցական գործիչ, երաժիշտ, գրիչ: 1279-ից գլխավորել է Այրիվանքի ուսումնագիտական կենտրոնը (կրթական օջախ Գեղարդի վանքում): Գրել է «Նոր պատմություն» երկասիրությունը, որտեղ ներկայացված է հայ ժողովրդի պատմությունը մինչև 1289-ը: Գրել է գանձեր, տաղեր, աղոթքներ, «Ճառընտիր» գիտական ժողովածուն:

Էջ 50, տող 1: Ռընան – Ռենան Ժոզեֆ Էռնեստ (1823 – 1892), ֆրանսիացի գրող, պատմաբան, բանասեր-արևելագետ: Ուսանել է կաթոլիկ սեմինարիայում, սակայն կորցնելով հավատը քրիստոնեության դոգմանների նկատմամբ՝ հրաժարվել է քահանա դառնալուց: «Գիտության ապագան» աշխատության մեջ փառաբանում է գիտական իմացությունը: Միաժամանակ Ռենանը հռչակում էր կրոնական հաշվատի «բարոյական անհրաժեշտությունը»: Գրել է փիլիսոփայական ղրամաներ՝ «Կալիբան», «Կենաց ջուր», «Քահանան Նեմիից», «Քրիստոնեության առաջացման պատմությունը» 8 հատորով, «Իսրայելի ժողովրդի պատմությունը» և այլն:

Էջ 50, տող 2: Սպենսեր Հերբերտ (1820 – 1903)-անգլիացի սոցիոլոգ և հոգեբան, պոզիտիվիստ, էվոլյուցիոն բարոյագիտության ներկայացուցիչ: Սպենսերը համաշխարհային գարգացման գաղափարը տարածում էր բնության և հասարակության վրա: Բարոյականությունը դիտում էր որպես

բոլոր կենդանի օրգանիզմներին բնորոշ իրողություն: Նրա հիմնական բարոյագիտական երկերն են «Սոցիալական ստատիկը» և «Բարոյագիտության հիմունքները»:

Էջ 50, տող 2: Լաստիվկոյի Արիստակես (ծն. և մահ. թթ. անհայտ են) – XI դարի հայ պատմիչ: Ծնվել է Արծն քաղաքի մոտերքում գտնվող Լաստիվեր գյուղում: Եղել է վարդապետ: Գլխավոր աշխատությունն է «Պատմությունը», գրված 1072 – 79-ին, որը XI դ. կարևորագույն սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների համար:

Էջ 50, տող 3: Շահազիզ Սմբատ (1840 – 1907) – հայ բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս, հայ նոր պոեզիայի հիմնադիրներից:

Էջ 50, տող 3: Զոլա Էմիլ (1840 – 1902) – ֆրանսիացի գրող, նատուրալիստ:

Էջ 58, տող 15: Սոկրատ (մ.թ.ա. 469 – 369)– հին հույն փիլիսոփա, գարգացրել է «բարոյական փիլիսոփայության» ուսմունքը: Սոկրատը ոչինչ չի գրել, նրա ուսմունքի մասին կարելի է դատել միայն ըստ Պլատոնի և Արիստոտելի վկայությունների: Սոկրատը գտնում էր, որ փիլիսոփայության հիմնական խնդիրը բարոյագիտությունն է, իսկ իմացությունը՝ ինքնաճանաչողությունը՝ «ճանաչիր քեզ»:

Էջ 71, տող 1-2: «Էչ ծանեաւ զմսուր իւր, և Իսրայել զտէր իւր ոչ ծանեաւ» – էշը ճանաչում է իր մսուրը, իսկ Իսրայելը իր տիրոջը չի ճանաչում. Աստվածաշունչ, Հին կտակարան, Եսայիի մարգարեությունը. Ա. 3:

ՎԵՐԺԻՆ (էջ 113)

Գրել է Լայպցիգում 1896 թվականին:

Առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրում, Թիֆլիս, 1897թ., թ. 9, էջ 1151-1177, թ. 10, էջ 1313-1350, թ. 11-12, էջ 1479-1514, 1898թ., թ. 1, էջ 9-50: Այնուհետև արտատպվել է «Մուրճից», Թիֆլիս, տպ. Ռոտինյանցի, 1897թ., չապիկի վրա՝ 1898: Առանձին հատորով տպագրվել է Պոլսում 1911թ.: Շանթի կենդանության ժամանակ վերջին հրատարակությունը եղել է «Լևոն Շանթի երկերի» Բ հատորում, Բույրում, 1946թ.:

Սույն հրատարակության համար հիմք է ընդունվել 1946թ. հրատարակությունը:

Էջ 136, տող 2-3: Աքոթ Վալտեր (1771 – 1832) – անգլիացի գրող, պատմավեպի ժանրի հիմնադիրը:

Էջ 155, տող 5 ն.: Մավի – ծովագույն, երկնագույն:

Էջ 158, տող 9: Ջփակ – մինչև մեջքը հասնող և առջևից կոճկվող կանացի կարճ, սեղմ վերնազգեստ:

Էջ 166, տող 1 ն.: Մինթան – վերնազգեստ:

Էջ 169, տող 8 ն.: Վենուս (Վեներա լատ.) - հռոմեական դիցաբանության մեջ Վեներան հունական Ափրոդիտեն է: Ծնվել է ծովի փրփուրից: Էրոսի մայրը, սիրո, գեղեցկության աստվածուհին: Համարվել է նաև պտղաբերության աստվածուհիներից մեկը:

Էջ 189, տող 14: Իբսեն Հենրիկ (1828 – 1906) – նորվեգացի դրամատուրգ, ռեալիստական դրամայի հիմնադիրը: Գրել է լիրիկական, պատմական, փիլիսոփայական դրամաներ, փիլիսոփայական-սիմվոլիստական, դրամատիկական պոեմներ, բանաստեղծություններ, հոդվածներ: 1880-ական թթ. սկսած Իբսենի անունը ամբողջ աշխարհում եղել է ռեալիստական արվեստի, մարդու ներքին ազատության և ամբողջականության համար պայքարի խորհրդանիշ:

ԴԱՐՉ (էջ 213)

Վիպակը գրված է Մյունխենում 1897 թվականին:

Առաջին անգամ հրատարակվել է «Մուրճ» ամսագրում, Թիֆլիս, 1898թ., թ. 10-11, էջ 1369-1401, թ. 12, էջ 1641-1700: Այնուհետև արտատպվել է «Մուրճից», Թիֆլիս, տպ. Ռոսինյանցի, 1898թ., չապիկի վրա՝ 1899: Առանձին հատորով հրատարակվել է Պոլսում, 1924թ., Բյուրատ: Շանթի կենդանության օրոք վերջին անգամ հրատարակվել է «Լևոն Շանթի երկերի» Բ հատորում, Բեյրութ, 1946թ.: Սույն հրատարակության համար հիմք է հանդիսացել 1946 թվականի հրատարակությունը:

Էջ 228, տող 17: Դարվին Ջարլզ Ռոբերտ (1809 – 1882) – անգլիացի բնագետ, օրգանական աշխարհի պատմական զարգացման տեսության հիմնադիրը:

Էջ 228, տող 17: Հյուքսլեյ-Հեքսլի Թոմաս Հենրի (1825 – 1895). անգլիացի բնագետ. Դարվինի բարեկամն ու հետևորդը: Գրել է աշխատություններ կենդանաբանության, համեմատական անատոմիայի, հնէաբանության և մարդաբանության վերաբերյալ:

Էջ 257, տող 7-8: Միաբանություն մը չատ ավելի ապգային, քան Վիեննան ու Վենետիկը – Մխիթարյան միաբանությունը հիմնադրվել է Մխիթար Սեբաստացին 1701թ. սեպտեմբերի 8-ին Կ.Պոլսում հոգևոր,

ուսումնակրթական, դիտական և մշակութային գործունեություն ծավալելու նպատակով: 1706-ին տեղափոխվել է Մեխոն (Հունաստան), որը ենթակա էր Վենետիկի Հանրապետությանը, 1717-ից հաստատվում է Վենետիկի մոտ գտնվող Ս.Ղազար կղզում: 1772-ին Ս.Մկրտչյանի (1717 – 1799) արեւահայրության ժամանակ Միխիթարյան միաբանության անդամների միջև անհամաձայնություն եւ վեճ է ծագում կանոնադրության փոփոխման կապակցությամբ, և միխիթարյանների մի խումբ՝ Ա.Բաբիկյանի (1738 – 1825) գլխավորությամբ թողնում է Վենետիկը և 1773-ին հաստատվում է Տրիեստում, 1811-ից՝ Վիեննայում:

էջ 257, տող 17-18: ...Մեր եկեղեցին... հիմնված երկու առաքյալների ձեռքով... – Հայաստանում Ավետարանը քարոզել և նահատակվել են Թադեոս (Ղևոնդ) և Բարդուղիմեոս (Նաթանայել) առաքյալները:

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ (էջ 291)

Գրել է Մյունխենում 1897-98-ին:

Առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրում, Թիֆլիս, 1899, թ. 10, էջ 1137-1168, թ. 11-12, էջ 1301-1362: Այնուհետև արտատպվել է «Մուրճից», Թիֆլիս, տպ. Ռոտինյանցի, 1899, չապրիլի վրա՝ 1900: Հաջորդ տպագրությունը եղել է Շամտանճյանի «Ազատան» ամսագրում, Պոլիս: Առանձին հատորով հրատարակվել է Պոլսում, 1924թ., Բյուրատ: Շանթի կենդանության ժամանակ վերջին անգամ հրատարակվել է «Լևոն Շանթի երկերի» Բ հատորում, Բեյրութ, 1946թ.:

Սույն հրատարակության համար հիմք է ընդունվել 1946թ. հրատարակությունը:

էջ 303, տող 11: ...Յովհաննեսներու գանգլի-հանգույցներ... – գանգլիոններ (հուն.-հանգույց), նյարդային բջիջների, նյարդաթելերի և հարակից հյուսվածքների մեկուսացված կուտակումներ: Ունեն մարզը, մյուս ողնաշարավորները, նաև որոշ անողնաշարավորներ:

էջ 308, տող 4: Ֆրանսուա Կոպե (1842 – 1908) – ֆրանսիացի գրող, բուրժուական շրջաններում հայտնի բանաստեղծ: Գրել է բանաստեղծություններ, նովելներ, վիպակներ, հեքիաթներ, պատկերել է Փարիզի մանր ռանտիեների, խանութպանների, թևթևաբարո կանանց սենտիմենտալ պատմությունները:

«Մուրճ» ամսագրի էջերում 1890-ական թվականներին թարգմանաբար տպագրված են Կոպեի բանաստեղծությունները, նովելները:

Էջ 309, տող 13: Ամազոններ – կին ռազմիկների առասպելական ժողովուրդ, բնակվել են Մեոտիս լճի (Ազովի ծով) ափերին կամ Փոքր Ասիայում: Արու զավակներին վերադարձնում էին հայրերին, իսկ աղջիկներին՝ դարձնում ռազմիկ: Դիցաբանության մեջ հանդես են եկել որպես Արտեմիս աստվածուհու ուղեկիցներ:

Ամազոնների մասին զրույցը տարածված է եղել միջին դարերում, հատկապես աշխարհագրական խոշոր հայտնագործությունների ժամանակաշրջանում, երբ ամազոնների թագավորությունը փնտրել են Ամերիկայում՝ Ամազոն գետի ափերին:

Էջ 310, տող 10: Պոլ Վեռլեն (1844 – 1896) – ֆրանսիացի բանաստեղծ: Սկսել է գրել պառնասցիների, ռոմանտիկների, հատկապես Շ.Բոդլերի ազդեցության տակ: Ժ.Ա.Ռեմբոյի և Ս.Մալարմեի հետ միասին սիմվոլիստական ուղղության հիմնադիրներից է:

Էջ 310, տող 10: Նիցշե Ֆրիդրիխ (1844 – 1900) – գերմանացի փիլիսոփա, իռացիոնալիստ, կյանքի փիլիսոփայության ներկայացուցիչ: Նիցշեն գտնում էր, որ «բարձրագույն արժեքները կորցրել են իրենց արժեքը», և ժամանակակից եվրոպական մշակույթը կանգնած է ճգնաժամի առաջ: Այդ դրության ստեղծման մեջ հատուկ դեր են խաղացել կրոնը և ավանդական բարոյականությունը, որոնք հավասարեցնելով բոլոր մարդկանց՝ ուժեղներին զարձնում էին թույլ, իսկ թույլերին՝ ուժեղներ: Եվ Նիցշեն զարգացնում է «գերմարդու» իր տեսությունը, որը կանգնած է «բարուց և չարից անդին» և կարող է «պատռել» սահմանված բարոյական կանոնների «հորիզոնը»: Զարգացման համընդհանուր ուժը «դոյության պայքարն է», որը վերածում է «իշխանության կամքի»: Հիմնական երկերն են «Այսպես խոսեց Զրադաշտը», «Բարուց և չարից անդին», «Բարոյականության ծագման չուրջ», «Իշխանության կամք: Բոլոր արժեքների վերաարժևքավորման փորձ»:

Էջ 310, տող 10: Դոստոևսկի Ֆ.Մ. (1821 – 1881) – ռուս գրող:

Էջ 311, տող 2: Վիկտոր Հյուգո (1802 – 1885) – ֆրանսիացի գրող, ֆրանսիական ռևոկրատական ռոմանտիզմի առաջնորդ ու տեսաբան:

Էջ 337, տող 1: ...Այնքան խիստ չեն իրենց նամեհրամը պահելու – Արևելքի կանանց մուտ տանից դուրս գալիս երեսները ծածկելու... և չորի մեջ փաթաթվելու սովորույթ:

Էջ 353, տող 1 ն.: Սքրյուպյուլներ (Ֆր.) – բծախնդրություն:

Էջ 361, տող 11: Քթան մազերուն – քաթան, սպիտակած, սպիտակ:

Էջ 366, տող 6 ն.: ...Հայրատ – ցանկասեր, վավաշոտ:

Էջ 372, տող 15 ն.: ...Հավրլոք – անջրանցիկ վերարկու:

* * *

Բազմակ վիպակների 1946թ. հրատարակության մեջ, համեմատած «Մուրճ» ամսագրում հրատարակված նախնական տարբերակների հետ, կան բնագրային որոշ տարբերություններ: Փոփոխված են առանձին բառեր, նախադասություններ, նույնիսկ հատվածներ, երբեմն տեքստից հանված են ամբողջական նախադասություններ, պարբերություններ:

Յուրաքանչյուր վիպակից բերենք տեքստային տարբերությունների մի քանի օրինակներ՝ փաստելու իրողությունը:

«Դուրսեցիները», «Մուրճ», 1895, թ. 11, էջ 1354-1355 (ներկա հրատ., էջ 9-10):

Ու սկսավ ամբողջ մարմնովը խնդալ:

– Կատակը թեև ագեղ, բայց բոլորովին սխալ չէր: Քեզի հիմա միայն այս չափը ըսեմ, սիրելի՛ս, որ կնոջ ազդեցությունը մարդու հոգեկան զարգացման մեջ ահագին է: Կոճղի մը պես սենյակի մը անկյունը մեծնալը ուրիշ է, աղջիկներու շրջանին մեջ, կանացի չփման տակ, ինքնող, հոգածու, փափուկ ձեռքի մը խնամիներուն տակ ապրիլը ուրիշ է: Այդ սրտի քնքշացում ըսել է. զգացումներու նրբացում, ազնվացում ըսել է: Ինձի նայե՛, մենակ մտածող գլուխ մը ունեցող մարդը ինձի համար մարդու իդեալ չէ. մարդ տրամաբանական մեքենա մը չէ՛. զգացո՛ւմ պետք է մեզի. արդեն չա՛տ չորե կյանքերնիս. ճաշա՛կ պետք է մեզի. բնությունը ճաշակել, կյանքը ճաշակել պետք է գիտնալ. աչխատիլ ու ճաշակել՝ այդ է կյանքը: Նայե՛ չորս դիդ, ինչ կուշտություն, ինչ չահամոզություն, ինչ կոպտություն, ինչ անաղնվություն է. աոոնց մեկ մեծ մասին պատճառը, ինձի համար, մեր անզգայությունը, մեր անճաշակությունն է, մեր մեջ եղած կնոջ դիրքն է: Պետք է, պետք է կռվիլ աոոնց դեմ ալ. մի՛ մոռնար, որ սերը դեռ ամոթի կարգն է մեր հասարակության շրջաններուն մեջ. սե՛րը, որ կյանքի բարձրագույն հպարտությունն է:

– Տղա՛ս, գլխուս բան մի՛ հասկցներ. ես քնավ չեմ զարմանար, որ հոս ես եկեր: Իրա՛վ, այս ճոխ ու փափուկ բաները շատ չեմ սիրեր, բայց ուրիշ հարց է աղջիկները: Երիտասա՛րդ, արբուն քոց աոենը. իրավունք ունիք. ձեզի մեղադրողը ո՞վ է: Մինակ կզարմանամ, Բագրա՛տ, երբ գործը իդեալական, զգայական, ճաշակագիտական և չգիտեմ ալ ինչական ցնդի-փնդի նրբություններով վերարկվել կուզես, երբ պարզ իրողությունը կեղծել կուզես:

– Հերի՛ք է, – ընդհատեց Բագրատ ձեռքի հպարտ շարժումով մը: – Ես քու առջևդ կեղծելու բնավ կարիք չունիմ: Ես կըսեմ այն, ինչ որ կմտածեմ. մանավանդ ընկերական շրջանի մեջ. դուն կուզես հավատա՛, կուզես ո՛չ, այդ քու գիտնալիք բանն է, մեայն այս չափը աղեկ հասկցի՛ր, որ այդ խոսքերդ ինծի վիրավորել կրնան:

ԷՋ 1358 (ԷՋ 12-13):

– Այդ տեսակ մարդը բաներ. ո՛հ, այդ է ինծի կատղեցնողը, է՛, – պոռաց Բագրատ ոտքի ցատկելով, բռունցքը սեղմած: – Գիտե՞ս, դեռ երկու ամիս չեղավ Պոլիս ոտք դնելու, բայց իմ համոզումներես քանի այդպես մարդ բաներ ծալլեցի ու մեկդի դրի, ի՞նչ, կտարակուսի՞ս, անշուշտ այս ալ ծալլեմ պիտի...

– Ինչ ընենք, սիրելի՛ս, հարմարվելու է տեղին, ժամանակին:

– Հարմարվի՛լ, հարմարվի՛լ. տեղին, ժամանակին. ուրիշ խոսքով՝ թաւիել մեջեդ այն, ինչ որ սուրբ է քեզի համար. մաքրութիւնդ, ազնվութիւնդ, սկզբունքներդ. նետել վրայեդ մեկիկ-մեկիկ, մինչև որ հասնի կատարյալ հարմարումը, կատարյալ նույնացումը, մինչև որ դուն ալ կդառնաս այն հազարավոր բարի մարդիկներեն մեկը, որոնցմով կվխտա մեր հասարակութիւնը, որոնք խլուրդի չափ կամք չունին, ո՛չ ալ մուկի մը չափ սկզբունք: Է՛, խեղճ երազներս. իսկ ես կկարծեի, թե մեջս ուժ կա:

– Խե՛ղճ, խեղճ երազներս, – կրկնեց Վասակ կեղծ արտասվող ձայնով մը, բայց չկրնալով ծիծաղը զսպել՝ սկսավ փռնգտալ:

ԷՋ 1359-1360 (ԷՋ 14):

– Այո՛, ես ալ հիմա ճիշտ այդ կմտածեի. ուրիշ տեղ դժվար էր այս բոլոր պայմանները իրարու կից գտնելը: Լո՛ւրջ, լո՛ւրջ գործ տեսնելու է, և որքա՜ն ընելիք կա. ուսուցիչները պատրաստել, առաջնորդել անոնց, աշակերտներուն հոգի տալ, կամք առաջացնել, ոգևորել, ծրագիրները պատրաստել, կազմել դասերը, մատենադարանը հոգալ, ընթերցանութիւնը, շարադրութիւնը. ա՛, ոչինչ, ոչինչ չի կա, ամեն բան ծայրեն պետք է սկսել: Ո՛ւհ, վերջապես. մեկ գործի մեջ նետվիմ. ոտքով, գլխով, առտվնե մինչև իրիկուն չարժման, կյանքի, ներշնչման ու աշխատանքի մեջ. որ կմտածեմ՝ ուրախութենես սիրտս կցատկե: Նետվիլ այդ անմեղ, մոմե սրտերուն մեջ, սիրել, սիրվիլ ու մարդ պատրաստել, մարդ, անհատական մարդ, ամուր մարդ, որոշ ձգտումներով, կյանքը վայելելու և ուրիշներուն վայելցնել տալու տենչանքովը բռնկած, ա՛, ո՛ր մեկը ըսեմ:

Էջ 1366 (էջ 20):

Այս և սրան հաջորդող մի ամբողջ հատված հանված է 1946թ. հրատարակությից:

Գևորգ իր արածը չէր հասկնար. այդ կյանքը, որ կվարեր, երազ մը կթվեր իրեն, անո՛ւշ երազ մը, և ան ո՛չ կմտածեր, ո՛չ ալ պետք կզգար այդ երազին արթննալու: Երբեմն ալ ըրածներեն ինքն էլ կզարմանար ու կամչնար: Օր մը Հայելիին առջև աղջկան մեղալիոնը գտավ, որ աղջիկը սովորաբար վիզը կկրեր, առավ ձեռքը ու տեսակ մը նախանձով սկսավ երկար դիտել և այդ անչունչ, մինիկիկ առարկան իրմեն չատ ու չատ ավելի երջանիկ կհամարեր և վայրկյան մը բոլոր սրտեն ցանկացավ, որ ինքն ալ հանկարծ գերբնական զորությամբ մը այդ փոքրիկ մեդալիոնին վերածվեր ու աղջկան վզին կախվեր, բայց իսկույն ինքը իր մտածման վրա խնդաց ու գարդը ձեռքին վար դրավ: Անգամ մըն ալ աթոռ մը բերելու համար աղջկան սենյակը մտնելով՝ մահճակալին վրա ինկած գտավ աղջկան քորսեն, անդիմադրելի հետաքրքրությամբ մը վերցուց ու սկսավ ուշադրությամբ դիտել պալեննները, կարվածքը, եզերքի ժանյակները, ծիծերուն դուրս փորվածքը: Քորսեն բուրող հոտ մը սկսավ ջիղերը գրգռել. Գևորգ ավելի լավ հոտ մը տալու համար մոտեցուց դեմքին և հանկարծ իր կամքին հակառակ՝ բոլոր ուժով սեղմեց ու իսկույն ետ քաշեց. վախով նայեցավ շուրջը, կարմրեցավ, նետեց քորսեն անկողնին վրա, խլեց աթոռը ու սենյակեն դուրս փախավ:

Բնագրային տարբերությունների մի քանի օրինակներ «Վերժին» վիպակից:

«Մուրճ», 1897, թ. 9, էջ 1151-1152 (էջ 115):

...Օրորուն խլրտուքովը անվերջ կչոփեր:

Սրան հաջորդող հատվածը հանված է 1946թ. հրատարակության մեջ:

– Առաջնյ բնական գիտությունները հիմնական ծանոթության, – շարունակեց Արշակ իր խոսքին թելը, – առանց մեզ շրջապատող ու մեր գոյությունը եղող ուժերը ճանչնալու, առանց մեր կազմը ու այդ կազմի բնական ընթացքն ու ֆունկցիաները հասկնալու, մյուս կողմեն՝ զուրկ մեր ընկերական կյանքի ֆիզիկական ու հոգեկան երևույթներու ուսումնասիրությենեն, զո՛ւրկ անտեսական, քաղաքական գործոններու լայն ու խոր ըմբռնումեն, ահա՛ թե ինչ տեսակ մարդիկ են եղեր մեր հասարակության միտքն ու զգացումները անուցանելու. և՛ ինչո՞վ. վերացական ուսուցիչ դաստղություններ ու տրամաբանական աննյութ վարժություն-

ներ. այդ չէ՞ մեր դպրոցներու, մեր լրագրութեան, մեր գրականութեան մեջ. ո՞ւր է իրերու, կյանքի ու զգացումներու լուրջ ու սիստեմատիկ վերլուծումը:

Նորեն լռեց:

Ոտքը նետեց ոտքին վրա, ձեռքերը իրարու կապեց գլխուն ետևը ու սկսավ մտածել:

ԷՋ 1152 (ԷՋ 115):

Այս հատվածը փոքր-ինչ փոփոխված է և կրճատված 1946թ. հրատարակութեան մեջ:

...Եվրոպական դրախոսի մը մեկ թռուցիկ եզրակացութիւնը, խոչորանուն փիլիսոփայի մը միակողմանի տեսութիւնը, ան ալ իհարկե երկրորդ բերնե հափշտակված, կամ վերջապես վեպի մը կամ բրոշյուրի մը հարձակումներեն սեփականացած հայացք մը ընկերական այս ու այն հարցին վրա. ահա՛ բոլորը. պատահական ցանուցիր կրթութիւն մը, բրոշյուրի կրթութիւն: Մինչ մեզի և մասնավորապես մեր գործի գլուխ կեցած մարդիկներուն միա՛յն ու միա՛յն հիմնական, սիստեմատիկ ու լուրջ պատրաստութիւն պետք է. դիտական կրթութիւն, ժամանակակից բնական ու ընկերական գիտութիւններու բարձրութեան վրա կեցած ինքնուրույն ուղեղներ և ոչ թե...

ԷՋ 1155 (ԷՋ 118):

Այս հատվածում կան փոփոխութիւններ:

...Առաստաղեն կախված լամպը առատ լույս կթափեր:

– Ո՛չ, դուք հո՛ս եկեք, իմ քովս, պարո՛ն Տիրան, – ըսավ աղջիկը իր քովի աթոռը մատնանիշ ընելով ժպտերես: – Եկե՛ք, հիմա ալ ես Ձեզի քոմպլիմաններ ունիմ ընելիք Ձեր տպած վերջին պատկերի առիթով, որ շատ սիրուն էր: Ճշմարիտ չեմ հասկնար, ո՞ւրկե Ձեր միտքն է եկեր այդ տարօրինակ նյութը: Բայց, է, եթե հասկնայի, ես ալ բանաստեղծ կլինեի արդեն, չէ՞:

Ու թեթև պչրանքով մը գլուխը թեքած՝ սկսավ խնդալ տղու դեմքին:

– Իրա՛վ, պարո՛ն Տիրան, – մեջ ինկավ բժիշկը,– մանավանդ գյուղացիին այն փիլիսոփայութիւնը շատ օրիժինալ է.

– Ի՞նչ, պարո՛ն բժիշկ, ուրեմն իմ պատկերս կարդալու պատվին ալ արժանացուցեր եք, Դո՛ւք, որ, ինչպես կըսեք, բժշկական էնսիկլոպեդիեն զատ երեք տարի է՝ ձեռքերնիդ գիրք առած չունիք:

էջ 1166-1167 (էջ 126):

Այս հատվածը 1946թ. հրատարակության մեջ կրճատված է և մշակված:

– Այդ Դուք չեք կրնար գտնել: Ձեր «Եվրոպական նամակները» ես միշտ մեծ սիրով եմ կարդացած. ո՛չ, հաճոյախոսություն չէ ըրածս, այդ նամակներուն մեջ ինծի ամենեն ավելի գրավողը անոնց պարզ, բայց ու անկեղծ տոնն է: Բացի այդ իբրև կին մասնավորապես չնորհակալություն պիտի հայտնեմ, Ձեր մեկ հոդվածի համար. «Կանանց դերը ժողովրդի կրթության գործին մեջ», կարծեմ այսպե՛ս էր վերնագիրը:

– Կարծե՛մ. միայն դժվար թե այս հարգանքին արժե արդեն չատոնց մոռցած հոդվածս: Կհիշեմ, անցած ձմեռ էր. այն միջոցին այդ հարցով ես շատ էի ոգևորված ու նատեցա գրեցի: «Բայց, է՛, ինչ օգուտ», – կմտածեմ հիմա, հիմա, հիմա մեզի լուրջ, սիստեմատիկ ու դրական գործ պետք է, ոչ թե ցան-ցիր ու ոգևորված հոդվածներ, որոնք կյանքի մեջ ոչինչ հետք չեն թողուր:

– Այդ ճիշտ չէ, – նկատեց քույրը կտրուկ:

– Այնպես չէ՞ օրիո՛րդ, – վրա նետվեցավ Վերժին ու ավելցուց, – պետք չէ նաև մոռնաք, որ մեր կանացի այս անչարժ միջավայրին մեջ կնոջ դիրքով ոգևորված և անոր պարտքը եղող գործունեությունը նկարագրող գրվածք մը արդեն ինքնին օգուտ մըն է, իդեալի անուշ ձայն մը, հրապուրիչ վեպ մը:

Տղան զարմացած աղջկան նայեցավ:

– Թեև, իհարկե, – չարունակեց Վերժին, – կնոջ գործունեության մասին Ձեր ունեցած գաղափարները մեզի համար դեռ շա՛տ հեռավոր բաներ են. մեր կիներեն Ձեր ըրած այդ պահանջները մինչև անգամ տարօրինակ են:

– Ինչո՞ւ համար, – հարցուց տղան այնպիսի չեչտով մը, որ դիմացինի կարծիքը իմանալու վատ հետաքրքրությունը ինքզինքը կմատներ:

Սակայն Վերժին տաքցած էր ու անկարող այդ նշմարելու, ժպտելով դարձավ Մաննիկին.

– Հա՛, օրիո՛րդ, ինչպես կերևի, Ձեր եղբայրը մեր կանացի հասարակության դեռ չեք ծանոթացուցեր: Եթե ոչ, պարո՛ն, դուք շատ լավ պիտի դիտնայիք, որ հոս մե՛նք՝ աղջիկներս, ո՛չ ձգտումներ ունինք, ո՛չ նպատակ, ո՛չ ալ որևէ հասարակական խնդիր մեզ լրջորեն կհետաքրքրե. իհարկե, երբեմն կխոսինք ընկերական կամ դրական այս ու այն հարցին վրա, ինչպես, օրինակ, այս վայրկյանիս, բայց միայն բերանփոխի համար: Մենք մեր սեփական գաղափարներն անգամ չունինք. կկրկնենք, ինչ որ ստվար

մեծամասնութիւնը կըսի, եթէ կարծիքները բաժնված է՝ կլսենք: Գալով գործունեութեան, հասարակական դիրքի, աշխատանքի, ա՛յդ մասին խոսելն անգամ ծիծաղելի է: Դե՛, այս ամենը չափազանց կհամապատասխանեն, չէ՞ պարո՛ն, Ձեր երևակայական պահանջներուն:

էջ 1493 (էջ 162):

Ստորև բերված հատվածը հանված է:

Իրիկվան մը իր ընկերուհիին հետ միասին վերեն կուգային: Արշակ առանձին էր, ու անոնց քովեն անցած միջոցին, որոշ կերպով լսեց իր հասցեին ուղղված աղջկան խոսքերը. «Իզուր՝ այդչափ հպարտ»: Այդ կրակե աղջկան զգացումները հրահրած լինելու փոքրիկ հպարտութեամբ մը ժպտեցավ Արշակ ու անցավ, անտարբե՛ր. ալ բոլոր աղջիկները կարծես դաղրած էին անոր համար իրենց աղջկային հրապոյրն ունենալե:

էջ 1493 (էջ 162):

Հետևյալ հատվածը փոփոխված է:

Աղջի՛կ, ա՛յն մտքով, ինչպես որ թարմ երիտասարդ մը այդ կհասկնա, Արշակի համար միայն մեկը կար հիմա, և այդ մեկի պատկերն էր, որ ան ամեն կերպ մոռնալու կաշխատեր. այդ մեկի համար կլջանար անտարբերութիւն ձեռք բերելու: Բայց գիտակցութիւն կամ կամքի թուլլ վայրկյան մը – և ահա՛ սիրուն հուշերը կխոսեին իսկույն իր վրա: Այդ վայրկյաններուն տղան կզայրանար ինքն իր դեմ ու անմիջապես կփրցներ այդ անուշ մտածումներու գրավիչ շղթան: Ջո՛ւր. ակնթա՛րթ մը, ու շղթան կապված է նորեն:

Տեքստային տարբերութիւնների մի քանի օրինակ «Դարձ» վիպակից:
«Մուրճ», 1898, թ. 10-11, էջ 1376 (էջ 222):

– Եվ ի՞նչ է ձեր այդ խումբի գծած նպատակը կամ ծրագիրը:

– Գիտե՞ք, պարո՛ն, այդպես որոշ գրված-չափված ծրագիրներ պետք չէ, որ երևակայեք. մեզմե յուրաքանչյուրի ձգտման մեջ այս կամ այն անհատական գիծը կրնա չեչտված լինիր. բայց ա՛յն, որ ամենքիս ընդհանուր է ու ամենքիս տենչը – այդ է նորոգե՛լ, բարձրացնել մեր ինված հոգևորականութիւնը. կողոպուտ, կաշառք, անառակութիւնն ու տգիտութիւնը վերցնել ժողովրդին առաջնորդ դասակարգին մեջեն:

– Ժողովուրդին առաջնորդո՛ղ, – գործը ձիգ տվավ Քանյան երգիծանքի ժպիտը շրթունքին:

Է՞ 1377 (էջ 222):

– Հոգևորականներու դարը անցած է, բարեկա՛մս, հիմա մտքերն ու պիտույքները կառավարողը ո՛չ միայն հավատքն ու աստվածաբանական փաքյուլտեները չեն, այլ ճիշտ հակառակը, կյանքի դրական, նյութական, փորձնական հայացքները հիմա այլևս ժողովրդի առաջնորդողները հոգևորականները չեն, ինչպես քիչ մը առաջ միամտորեն կպնդեիք, այլ ա՛յն մարդիկը, որոնք ժամանակակից դիտույթներուն ու քաղաքակրթության արդի ըմբռնումներուն վրա կրթնած՝ խոսքի, օրինակի, մամուլի ու ընկերական ցնցումներու միջոցով ժողովուրդը ժամանակի պահանջներուն ու հոսանքին մեջ կվարեն: Ով կեցած չէ դարուս հայացքներու բարձրության վրա, ան կրնա դուցե ժողովուրդ մը ետ քշել, բայց առաջ՝ երբեք:

Է՞ 1378-1379 (էջ 224):

Հետևյալ հատվածը ամբողջությամբ հանված է 1946թ. հրատարակության:

...Այն ատեն դուք ալ խոչընդոտ մըն եք ժողովուրդի հաստնացման:

– Ախ, պարո՛ն, եկեք այդ բոլորը մեկ կողմ դնենք: Մեր ժողովուրդի դիրքը պետք չէ որ մոռնաք. մեր արդի պատմական պայմանները այնպես են ձևակերպված, որ մեր ներքին հատարակական չատ մը գործեր սերտ կապված են հոգևորականության հետ կամ ուղղակի անոնց ձեռքն են. նորոգի՛նք, բարձրացնի՛նք մեր հոգևորականությանը, որ մեր հատարակական կյանքն ալ բարձրանա:

– Նախ՝ չատ նեղ մտածում է, պարո՛ն Սիրաքյան Ձեր այդ վերին բարենորոգելու սիստեմը. ճշմարիտ բարենորոգումը, իրական բարձրացումը արմատեն կսկսի՝ ժողովուրդեն. եթե կրնաք, ժողովուրդի տնտեսական պայմաններուն բարենորոգմանը աշխատեցի՛ք. հոգ է զարգացման բանալին: Եվ երկրորդ՝ ճշմարիտ տարօրինակ է Ձեր այդ միամիտ հավատը, որով կերևակայեք, թե հոգևորականությունը նորոգելու, բարձրացնելու պիտի հաջողեք: Դժբախտաբար, կամ ավելի ճիշտը՝ բարեբախտաբար, այդ անկարելի է:

– Մի՞թե, և ինչո՞ւ:

– Բնական մահվան դեմ բժշկություն չի կա: Կընդունիմ, որ այս կամ այն անհատը բնածին գործնականության ու բնավորության ուժի միջոցով հատարակության որևէ օգուտ կրնա տար նաև իրեն. հոգևորականն, ինչպես նաև ուրիշ ո՛րևէ կոչման մեջ պիտի տար, և, հավանորեն, չատ ավելի

արդյունավետ կերպով: Բայց այդ ցան-ցիր անհատական ուժերը ինչ ալ որ լինին, հոգևորականությունը իբրև ամբողջություն մը առած վնասեն զատ օգուտ չունի մեզի. ալ անկե խեր չի կա մեզի:

ԷՋ 1397 (ԷՋ 240):

1946թ. հրատարակության մեջ այս հատվածը փոփոխված է:

– *Երևի՛: Ա՛, եթե գիտնաք, օրիո՛րդ Մելինյան, թե բնությունը ինչպես կսիրեմ. լեռներ, այս ձորերը, այս չէչոտ ժայռերը, այս աղմկոտ խելագար գետակը. վե՛րը դաշտերուն հարթությունը, արտերուն ծածանուտ ծովը. և, է՛հ, իսկական ծովը. ապրա՞ծ եք ծովու հետ. կարծեմ չորրորդ տարին է այս, որ ծովու երես տեսած չեմ, ու եթե գիտնաք ինչպես կարոտ ունիմ: Դեռ. աղեկ միտքս է մանկությունս. մեր տունը ծովեն հեռու չէր, մինչև վերջը ափն էի կամ ավազին մեջ ընկերներուս հետ, կամ քիչ մը հեռուն սպառաժներու խոռոչին մեջ, ուր փոթորիկի ատեն տեսնելու եք ինչ սոսկալի իրարանցում է. և այնպես դրոշմված է այդ ամենը ուղեղիս մեջ: Իմ մխիթարությունս, իմ հաճույքս ու ինծի սիրտ տվողը բնությունն է արդեն. երբ կոտրած է սիրտս, կամ մաղձոտ կերթամ անտառ, ու ծառերու չշուվիին տակ թափառուն չգիտեմ, կհանգստանամ կարծես, չէ՛, խենթի պես կսիրեմ բնությունը:*

ԷՋ 1399 (ԷՋ 242):

Այս հատվածը փոփոխված է և կրճատված:

– *Աղե՛կ. ուրեմն խնդրեմ չվիրավորիք, եթե հայտնեմ, որ Ձեր անձնազոհությունը իմ աչքիս վերին աստիճանի տգեղ վարմունք է և նույնիսկ անբարոյական:*

Տղան ցնցվեցավ, բարձրացրեց գլուխը, ու կեղծ ժպիտ մը փակավ դեմքին:

– *Այդ ինչպե՞ս:*

– *Մեկդի դնենք այն հարցը, թե արդյոք իրավ իրական օգուտ պիտի տա՞ Ձեր այդ զոհը, և եթե նույնիսկ վայրկյան մը ենթադրենք, որ պիտի տա, արդյոք այդ բերած արդյունքը Ձե՛ր ըրած զոհը արժե. բայց այդ հիմա մեկդի: Միայն այն փաստը, որ Դուք Ձեր մարդկային անհատական ամենեն սուրբ զգայումները ոտքի տակ կուտաք. երբ միևնույն ժամանակ ինքներդ ա՛յդ բոլորը անբնական կանվանեք, որ Դուք Ձեր ժամանակի և ուժերի մեկ խոշոր մասը կնվիրեք դատարկ ծեսերու ու արարողություններու, երբ միևնույն ժամանակ ինքներդ այդ բոլորին բնավ չեք հավտար. չէ, այդ*

գիտակցության և գործունեության կատարյալ հակասությունը ես չեմ կրնար հաշտարար. գործել ա՛յն, ինչ որ գիտես՝ պետք չէ գործել. ոչ մեկ նպատակ այդ չարդարացներ. այդ ճամփան վա՛ր, չատ վար կրնա տանիլ, բայց վի՞ր, օ՛, երբե՛ք, չհավատաք:

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

Բնագրային տարբերությունները քիչ են «Դերասանուհին» վիպակում, որտեղ հիմնականում փոփոխված են սոսկ առանձին բառեր և ոչ նախադասություններ:

«Մուրճ», 1899, թ. 10, էջ 1152 (էջ 307):

– Բժիշկ չեղավ. ըսենք, հոս՝ փողոցը թաւիված բժիշկներ լեցուն. հիմա բժշկութենեն ալ խոր չի կա: [Վերջը մոռացեցինք թողնենք իր խելքին. հոս գար՝ ի՞նչ ըներ, հրապարակը այսպես խախուտ, մնջտեղ գործ չի կա:] (Նախադասությունը հանված է):

էջ 1157 (էջ 312):

...Ինչպես քիչ մը առաջ այդ սիրուն երևխան կըսեր: [Եվ անոր համակարծիք են անշուշտ մեր բոլոր մյուս մտքի երեխաները. այսինքն մեր արդի գրութեն ամբողջ դրական հրապարակը:] (Հանված է):

էջ 1159 (էջ 313):

...Դեմքին մյուս կեսը խիտ ստվերի մեջ թաղելով (փոխել է՝ պահելով):

էջ 1163 (էջ 317):

–[Է՛, Արուսյակ, թողնենք այս:] (Հանված է): Ան ըսե դուն ինծի՝ ինքդ ինչ բանի ես:

էջ 1163 (էջ 318):

Ա՛հ, ինչ սիրուն է լինելու մինչև վերջը ծովուն վրա... (փոփոխված է): Վերջին հրատարակության մեջ՝ Ա՛հ, ինչ սիրուն կյանք. մինչև վերջը ծովուն վրա...

Էջ 1164 (էջ318):

Հետևյալ հատվածը հանված է երկխոսությունից:

...Ոչ ալ չնորհք տնային գործերու: [Իսկ տունին ի՞նչ կըսեհաճես, որ ընեմ. անցած օր պարոն Վահանը հոս էր. կճանչնաս. դաստո՛ւն. ելեր է գլխուս «հասարակական գործունեություն» կըսարոգն. նախ այդ գործերեն խելքս բան չի կտրեր, երկրորդ՝ այս չափը գոնե կհասկնամ, որ պետք է կարողություն, պատրաստություն ունենալ. իսկ իմ կրթությո՞ւնս. դե՛, ամենքին հայտնի բան է, մեր բոլորիս ջանքը հնար եղածին չափ փառավոր դիպլոմ մը առնելն էր ու լեզուները սորվելը. սորված լեզուս մկներն ուտեն, իսկ դիպլոմը առի, քիչ մը պարծեցա ու դրի գզրոցը. ալ ասկե ավելին ի՞նչ պահանջես իմ դպրոցը ուսանես:

Մինչև հառած ընկերոջը կնայեր անծպտուն:

– Ինչո՞ւ զարմացած երեսս կնայիս, կկարծեիր՝ այդ բոլորին իմ խելքս չի՞ հասնիր, հա՞: Գործիս անունը ինչ է մինչև իրիկուն. մարդ ակամա մտածելու կստիպվի:]

Էջ 1166 (էջ 319):

Նախադասությունը հանված է:

...Իր գիմնազ մտնելը ու պանսիոնի աշխույժ, արագահոս ընկերական կյանքը: [Այդ ամենը սկսան թեթեւ իրարու հաջորդել անոր լեզվին ծայրը, ու աղջկան խոսվածքը ավելի թափ ու ավելի ջերմություն առավ:]

«Մուրճ», 1899, թ. 11-12, էջ 1302 (էջ 323):

...Ու դուրսերը չէիր քաշ գար (բառը փոխել, դարձրել է քաշքշվեր):

Էջ 1318 (էջ 339):

...– Որ ատոնք թեև սիրուն, բայց անտեղի դատողություններ են միայն: «Սիրուն» բառը դարձրել է «Հնչուն»:

Էջ 1319 (էջ 340):

– Զարմանալու ի՞նչ կա. առանց իմ աշխատանքիս ալ ի՞նչ խորհուրդ ունի կյանքս: 1946թ. հրատարակության մեջ դարձրել է՝

– Ի՞նչ հարցնելու բան է. առանց իմ աշխատանքիս ինչ խորհուրդ ունի կյանքս:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դուրսեցիները 5
Վեցժին 113
Դալռ 213
Դիրաստանուհին 291
Ծանոթագրություններ 383

Խմբագիր՝ Ա. Հովակիմյան
Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 204
Հանձնված է արտադրության՝ 20.01.2008 թ.:
Չափսը՝ 60 x 84 $^{1}/_{16}$: Թուղթ՝ օֆսեթ N 1:
25 տպագր. մամուլ: Տպաքանակը 500 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
Երևան, Բաղրամյան 24գ:

[2.500円]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045345

ЦЕНА
А II
93230